

101

LTn  
340







1999. ■



# ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ե Ի

## ՆՈՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

ԳԻՐՔ ՄԱԿԱՅԱՅԵՑԻՈՅ

ԵՒԹԱՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՅԻ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ԵՒ ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ

ՀԱՆԳԵՐԶ ԳԻՏՈՂՈՒԹԵԱՄՐՔ, ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄՐՔ ԵՒ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԵԱՄՐՔ

Գ Ր Ե Ա Յ

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՅԻ

«Որքան կարեմ՝ զայն առնեն».

Տ Փ Ղ Ի Ս  
 ԱՐԵՎԵՏԻՊ ՏՊԱՐԱՆ ՄՆԱՅԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅ  
 Միքայելեան խողոց, տուն 81  
 1900

Дозволено цензурою. Тифлисъ, 11 юня 1899 г.

4 340-60

28 343



ԱԻՐՀՆԵԱԼ, ԵՂԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ

**ՏԻԿ. ՍԵԼՄԱՅ ՅԱԿՈԲՍՈՆԻ ՆՈՐԱՅՐ**

†

REPORT OF THE BOARD

OF THE UNIVERSITY OF CALIFORNIA

1930-31

## Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

ՅԱռաջին Թարգմանչաց ժամանակէն երեք մատենագրութիւնք հասած են առ մեզ, երեքեան եւս նիւթ ունելով զՊատմութիւն Հայոց: Ի սոցանէ երկուքն յօրինեալք են յօտարազգեաց Դ դարու, յորոց մին Ազաթանգեղոս, ազգաւ Հռովմայեցի, կը խօսի զվերջին ամաց թագաւորութեան Խոսրովու Ա-ոյ, զթագաւորութենէ որդոյ նորա Տրդատայ եւ զդարձէն Հայոց ի քրիստոնէութիւն ի ձեռն Գրիգորի. միւսն Փաւստոս Բիւզանդ, Յոյն յազգէ, կը պատմէ դանցս աշխարհին Հայոց յաւուրս Խոսրովու Բ-ի, Տիրանայ Բ-ի եւ Արշակայ Բ-ի, մինչեւ յերկփեղկ թագաւորութիւն Արշակայ Գ-ի եւ Խոսրովու Գ-ի՝ ընդ գերիշխանութեամբ Պարսից թագաւորին եւ Յունաց կայսեր: Իսկ երրորդ պատմիչն՝ բուն Հայ Ե դարու, Կորիւն, կը ճառէ զվարուց եւ զգործոց Մաշտոց Վարդապետի, կողմնակի եւ զՍահակայ կաթողիկոսի:

Հանդիսութիւն ոճոյ երեցունց պատմագրացս վրիպած չէ յաշաց մերազնեայ բանասիրաց, որ ուզած են Կորիւն Վարդապետի վերագրել զթարգմանութիւնս Ազաթանգեղի եւ Բիւզանդայ: Անդստին յամէ 1784 չ. Միքայէլ Զամչեան իւր Պատմութեանն Հայոց խօսելով զԱզաթանգեղեայ, յետ ասելոյ ի Յառաջարանին (Չ. Ա. երես 10), «Իսկ թէ յոր լեզու շարագրեալ իցէ սորա զգիրս իւր, արդեօք յունարէն թէ Հայերէն, տարակոյս է. ոմանք ասեն, թէ յօրինեաց հայերէն՝ յոյն գրով. եւ ոմանք՝ թէ յունարէն, եւ ապա թարգմանեալ եղև ի մերս՝. բստ որում ցարդ գտանի ամբողջ Պատմութիւն նորա ի յոյն լեզու», կը յաւելու ի նմին հատորի յերես 669. «Մարթ իսկ է ասել, թէ սա ինքն Կորիւն իցէ թարգմանեալ զգիրս Ազաթանգեղոսի ի հայէ ի յոյն, և կամ ի յունէ ի հայ»: Զանորոշ բանս Զամչեանի քիչ մ'աւելի որոշած է չ. Յովսէփ Գաթրճեան յա-

1. Զգիտեմ թէ ո՞վ են այդ ոմանք եւ ոմանք, որ նախ քան զԶամչեան ենթադրած են՝ թէ՛ կամ Ազաթանգեղ ինքնին յօրինած է զիւր Պատմութիւնն հայ լեզուաւ եւ յոյն գրով, կամ գրած է յունարէն՝ եւ ապա յայլոց փոխեալ է ի հայերէն:

մին 1849, որ ի բայ թողով զառաջին ենթադրութիւն նորա («ի հայոյ ի յոյն» թարգմանութեան Ազաթանգեղի ի ձեռն Կորեան), կը ձայնակցի երկրորդին, հաւանական թարգմանիչ սոյն գրոց ի հայ բարբառ համարելով զԿորիւն՝ առանց հաստատելոյ զյոյնութիւն ընազրին, եւ կ'ըսէ այսպէս ի *Տիեզերական Պատմութեան* (Հ. Ա. երես 94). «Վազ իսկ քան զնա (այս ինքն՝ քան զՄովսէս Խորենացի)՝ հիթէ ոչ ինքն Ազաթանգեղոս (100 ամօք կանխագոյն քան զնա) գոնեայ թարգմանիչն որպէս հաւանութեան թուի՝ Կորիւն (յամի իբրեւ 445) տայ իմն Հայկայ՝ զսեպհականութիւն ինչ ուժգնութեան եւ քաջութեան»: Ընդ մէջ հեղինակացոյ *Պատմութեանն Հայոց եւ Տիեզերական Պատմութեան*՝ Հ. Մկրտիչ Ազեբեան յամին 1836 ի Նոր Բաղդիրսն Հայկազեան շեզուի (ի Յուցակին մատենից եւ մատենագրաց, յանունն Բուզլանդ), թարգմանիչ պատմաբանիս կը վարկանի զԿորիւն, ըսելով. «*Թարգմանութիւնն է քաջ հայկարան*. մինչ զի բառքն են գովելի քան զբանն. եւ աներկբայ աշխատասիրութիւն է Առաջին Թարգմանչաց կարգելոց ի Սբբոյն Սահակայ եւ ի Մեսրոպայ, եւ ըստ իմումն քանի՝ երկասիրութիւն Կորեանն»: Հուսկ յետոյ յամին 1866 Գերապատաւ մատենագիրն *Քննական Բերականութեան*, Հ. Արսէն Վարդապետ Այաթնեան, թէպէտ եւ թարգմանիչ Ազաթանգեղի եւ Քիւզանդայ չի կոչեր զԿորիւն, սակայն համագրի գրութիւնս կը դաւանի (ինչպէս յայտ է ի վկայութեանցն նշանակելոց Բ գլխագրով) ոչ միայն զՎարս Մաշտոցի Կորեան, զԱզաթանգեղ եւ զՔիւզանդ, այլ եւ զգիրս Մակարայեցոց<sup>2</sup>, որք առ հասարակ «կարծես թէ մէկ զըչէ ելած են», կ'ըսէ<sup>3</sup> (*Քնն. Բեր.* երես 54, ծան. 9):

2. Գաթրըճեան կ'ակնարկէ յԱզաթանգեղի հետեւեալ հատուածն. «Արդ առեալ սկայագարն (Տրդատ) հայկաբար զուժ արձանս՝ ի վերայ իւրոց թիկանցն զայն զնէր, ըստանձնեալ բերեալ ի վկայարան տաճարացն». երես 576:

3. Կուանդէ Հ. Գար. Ա. (*Բազմապէս*, 1851, երես 234 ա) թէ Մակարայեցոց զիրք ըստ բազմաց հմտից թարգմանեալք են ի ձեռն եղիչէի՝ պատմագրին Վարդանանց. «Ձհայ թարգմանութիւնն (Մակարայեցոց), զոր նորուն սրբոյ եղիչայի շարագրած բազումք ի հմտիցն կարծեցին»: Անտաբակոյս նոյն հմտաք՝ որ եւ զԵւսեբեայ ժամանակագրութեան եւ զՔրոնիկոնին թարգմանութիւն վերագրած են Մովսէսի Խորենացոյ:

4. Նոյն Գեր. Այաթնեան կը գրէ եւ ի *Բերականութեանն* 2ալ.—Այ-



Ձկնի վերայիշեալ րանասիրաց եւ աւասիկ կու գամ հոշակել զԿորինթացի թարգմանիչ Ագաթանգեղի, Բիւզանդայ, եւ եւ Մակարայեցոց, հանդերձ եւթադիւ զորմէ այլք կը տարաձայնին<sup>5</sup>, ընդարձակ ցուցմամբք ինով զպակասութիւն իմ նախորդաց՝ որ ոչ ինչ փաստս բերած են ի հաստատութիւն իւրեանց կարծեաց<sup>6</sup>: Իմ ցուցմունք կը յառաջագային ի Համեմատական ուսումնասիրութենէ ընագրաց, նախ զուզակչաելով զՎարս Մաշտոցի ընդ շորեստան թարգմանութիւնսդ, եւ ապա զթարգմանութիւնսդ ընդ միմեանս, հաւաքելով զբովանդակ նմանութիւնս եւ նոյնութիւնս հինգ ընագրացդ, եւ առննթեր զնելով զտարբե-

առն. յերես 510—511. «Հարագատ եւ բնիկ հայերէնի ընտիր օրինակներն են . . . ճոխ եւ պերճ (բոս մասին զարտուղի) ոճով Մակարայեցոց երեք գրքերը, Կորին, Բուզանդ, Ագաթանգեղոս, Հարանց վարուց քանի մը մասերը, եւ այլն: Վերջին բանիւրդ Այտընեան կ'իմանայ զՎարս Յովհաննու Թնգրացոյ եւ զՊատմութիւն Հարանցն Եգիպտացոց, զորս եւ ի Քընշական Անրականութեան կը դասէ ի Կորեան կարգի գրութիւնս. բայց ըստ իս՝ Հարանց Վարուց այդ մասունք են ի դասուէ Կիրդի Երուսղեմացոյ. (տես յերես 33 մատենիս):

5. Ըստ Հ. Գոր. Զ. ի (Մտնդը. երես ԻԵ) եւթադի գրուածոց թարգմանութիւնն՝ կրտսերագոյն (իմն երկրորդ) Աշտկերտաց զործ է, ընդ մէջ 466—480 ամաց, խառն ընդ Գիոնեսիոսի Թրակացոյ Անրականութեան եւ ընդ Պորփիրի Ներածութեան (!)։—Քոռնեան Հ. Քաղէոսի համար (Հատ. Ընթերց. երես 21 ի ստորէ, եւ երեսք 407—416) եւթադի Յառաջարանն Պաւղոսի Թըթոց, (որով եւ միւս զրուածք նորս), զբոս մասին առաջիններէն (իմն յեղեղեանց) կը տարբերին՝ առանց միւս երեք դասերուն (իմն Կիրդի Երուսղեմացոյ, Ագաթանգեղի եւ Եփրեմի) վերաբերելու:

6. Առաւելապէս Ազգերեանի պարտքն էր մանրախուզի հետազօտել եւ նշանակել զամենայն նմանութիւնս վարուց Մաշտոցի եւ Բիւզանդայ, որովհետեւ նա գիւղանդ միայն կը զնէ թարգմանեալ ի Կորինէ: Ընթերցողք երկասիրութեանս կը տեսնեն թէ որչափ թերի է յայսմ մասին Նոր Բաղդիթըն Հայկազեան լեզուի: Իսկ զնմանութեանց վարուց Մաշտոցի եւ Ագաթանգեղի, Մակարայեցոց, եւթադի, ինչպիս նաեւ Ագաթանգեղի, Բիւզանդայ, Մակարայեցոց, եւթադի, աւելորդ է ըսել թէ որչափ անկատար զազափար կու տայ նայն Բաղդիթըն: Այլուստ յայտնի է թէ ինչ նպատակաւ գրեալ են Քընշական Անրականութեան 61—120 երեսքն. առաջիկայ երկասիրութիւնս զատ զիստան ունի ամենեւին, եւ հազիւ յերկու տեղիս կը շօշափէ զգրեալսն ի Գեր. Այտընեանէ. (տես Քըն. Անր. երես 79, ծան. 37—Գոր. եւ Ագաթ. թիւ 71, եւ երես 101, ծան. 88—Ագաթ. եւ Բիւզ. թիւ 200, Գոր. եւ Ագաթ. թիւ 115):

ըութիւնս ան մատենագրաց Ոսկեղարու, որպէս է տեսանել ի յաջորդ հռապատիկ հետազօտութեանց.

Առաջին. Կիրարկութիւն բառից եւ ասացուածոց՝ որ դուն ուրեք կը պատահին յայլ գրութիւնս Ոսկեղարու, բայց Կորին գողցես թէ իւրացուցած դայնոսիկ՝ թէ յաճախ կը գործածէ, թէ պէսպէս առմամբբ: Զոր օրինակ ի բառից՝ Այրարատեան<sup>7</sup>, Դեսպան (յորմէ եւ Դեսպանութիւն, առ Բիւզանդայ), Նիգակակից. եւ յասացուածոց՝ \*Առանց յապաղելոյ, Ասացեալքն մարգարէին, \*Գործ պատերազմի (յորմէ եւ Անծամբ լճարեմ՝ զգործ պատերազմին, Բիւզ. եւ Մակարայեցիք), Հայաստան աշխարհ (զոր Ագաթանդեղ եւ Բիւզ. կ'ըսեն նաեւ Հայաստան երկիր, Երկիր Հայաստան աշխարհին), Սինէական լեառն (ըստ որում Թաքորական լեառն, Կոր. Նպատական լեառն, Ագաթ. Բիւզ.), Տուն Թորգոմայ (ըստ որում Ասքանազեան ազգ, Կոր., զի Թորգոմա եւ Ասքանազ եղբարք էին ըստ Սուրբ Գրոց): Այս տեսակ նոյնութիւնք՝ համեմատութեանցս ամենափոքր մասն են:

Երկրորդ. Ասացուածք եւ դարձուածք՝ որոց կէսն եւեթ կամ բառքն առանձին առանձին կը գտնուին առ ան յայլ մատենագիրս Ոսկեղարու: Զոր օրինակ, երբ Ագաթ. եւ Բիւզ. կ'ըսեն Զարհուրեալ դողացեալ յերկիր կործանիմ<sup>8</sup>, եւ Ագաթ. եւ Մկր.<sup>9</sup> Զարածողով լինէր տալ մարտ պատերազմի, այլուր զատ զատ ընդ առաջ կ'եննեն մեզ Զարհուրեալ դողացեալ, Եերկիր կործանիմ<sup>8</sup>, Զարածողով լինիմ<sup>8</sup>, Տամ մարտ պատերազմի: Գարձեալ երբ Կոր. եւ Ագաթ. կ'ըսեն Ազգ \*երկրածնաց, եւ Ագաթ. ու Եթ. Ի կեանս երկրածնաց, Ազգ, Կեանք, Երկրածին սովորական բառեր են, բայց այնպէս լծեալք ինչպէս յառաջ բերի՝ յատուկ են Կորեան: Ըստ այսմ եւ \*Իքրեւ զպատերազմասէր նահատակս կամ նահատակ, Հուր չըրդեհի, Ագաթ. Բիւզ. Ընդ \*կոյսս կոյսս հարկանիմ<sup>8</sup>, Ագաթ. Զկոյսս կոյսս հարկանեմ<sup>8</sup>, Բիւզ.— Ժանաւթ կացուցանեմ<sup>8</sup>, Կոր. Ագաթ. հակառակն Անծանաւթ կացուցանեմ<sup>8</sup>, Մկր.—

7. Ես ի գտանել զտեղիս ամենայն օրինակացս՝ բաւ է նայել ի Գումարութիւն յետկուսէ մատենիս. յառաւել դիւրութիւն՝ աստղանշանիս(\*) կ'որոշեմ զօրոննիսն:

Աստուածեղէն կրանք, Կոր. Բիւզ. եւթ. Աւրինաւոր կրանք,  
 Եզաթ. Մկր. եւթ.—Բուն զեւղ. Կոր. Բիւզ. Բուն զունդ, Բուն  
 սինք, Եզաթ. Բիւզ.—Ղէս ազգն \*Հայոց, Կոր. Բիւզ.—Ի նոյն  
 հոգս կամ խնդրուածս \*դառնամ, Կոր. Մկր.—Առաւել կամ  
 Աւելի քան զկար մեր \*գրաւել, Ըստ Բըխտոսի \*հետոցն  
 վարիմ, Կոր. եւթ.—\*Հանեմ զոր յայսց կենաց, Եզաթ.  
 եւթ. Կարճեմ զոր յայսց կենաց, Մկր.—Ունէին գ\*ճակա-  
 տուն տեղի, Յանձանձեմ մխիթարեմ, Բիւզ. Մկր.—Որոյ  
 \*անուն ճանաչէր, Կոր. Եզաթ. Բիւզ. Որում անուն կոչէ-  
 ին, Կոր. Բիւզ. (այլ մատենագիրք Որում կոչէին, Որում  
 անուն կոչէր, Որ կոչէր.)—Հրամանին \*հասելոյ, Կոր. Պա-  
 տուհասին հասելոյ, Եզաթ. Թշուառութեանն հասելոյ, Բիւզ.  
 Մկր. (այլք Եկեալ հասեալ ճշմարտութեանն, Եկելոց հասե-  
 լոց հարուածոցն, Չարեացն եկելոց հասելոց.)—Ասպատակ  
 դնեմ, Եզաթ. Մկր. Ասպատակ սիոնեմ, Եզաթ. Բիւզ. Մկր.  
 Ասպատակ տամ, Բիւզ. Մկր. Ասպատակ առնեմ, կապեմ,  
 Բիւզ. (այլք Ասպատակեմ, Արշաւեմ.)—Ամփոփեցաւ փո-  
 քըրկացաւ, Եզաթ. Բիւզ. (այլուր Ամփոփեաց եւ փոքրկացոյց  
 զանձն իւր, կամ լոկ Փոքրկացաւ.)—Հրովարտակս \*տամ,  
 Բիւզ. Մկր. Տամ թուղթս, եւթ. (այլք Առաքել հրովար-  
 տակս, թուղթս.) հանդերձ այլովք բազմօք: Թէ միոյ զբշի ծը-  
 նունդք են Վարքն Մաշտոցի եւ չորեքեան թարգմանութիւնքն,  
 մանրամանք դէպք անգամ յայտ յանդիման կը քարոզեն. Անդ  
 ցուցեալ, Կոր. Եզաթ. եւթ. (յայլ գիրս Անդ ցուցանէ, Անդ  
 ցուցանեն.)—Զբերեալ կտակարանսն, Կոր. Զբերեալ պա-  
 տախանին, Եզաթ. Զբերեալ պարգեւացն շնորհս, Ի բերեալ  
 հողոյն, Բիւզ. կամ Զտուեալ սպասս կայսերն, Եզաթ. Զտը-  
 եալ հրամանս նորա, Բիւզ. (այս կրկին ձեւք կան եւ առ այլ  
 մատենագիրս, բայց ոչ Բերեմ եւ Տամ բայիք.)—\*Իբրեւ կար-  
 գեալ, Կոր. Իբրեւ զգացեալ, Իբրեւ տեսեալ, Եզաթ. Իբրեւ  
 լուեալ, Իբրեւ գիտացեալ, Բիւզ. փոխանակ դիմաւոր բայիւ՝  
 Իբրեւ կարգեաց, եւ այլն. (այլուր հաղի ուրիք կը պատահի  
 այս ձեւ, ու Յորժամ մակրայիւ. Յորժամ շնչեալ, փոխանակ շըն-  
 չիցէ:) նոյնպէս դիտելի են Լինէր կերակրեալ՝ յեփրեմ, եւ  
 այլով դասաւորութեամբ՝ Կերակրեալ լինէր, Եզաթ. Կերա-  
 կրեալ լինէին, Բիւզ.—Բարձրութիւն հրամանացն յոսկերե-

րանի Մատթեան Մեկնութեան, և Հրամանացն քարձրութիւն, Պատգամացն քարձրութիւն, Կոր. Ծճմարտութեանն քարձրութիւն, Ագաթ. \*Շնորհացն քարձրութիւնք կամ քարձրութիւն, Կոր. Ագաթ.—Ըստ նորա արժանաւորութեանն՝ ի Քարսեղ, և Ըստ \*արժանաւորութեան նորա, Ագաթ. Քիւզ.—2է պարտ դմա կեալ՝ ի Գործս Առաքելոց, և \*2է պարտ կեալ դմա, Ագաթ. Քիւզ.:

Երբորդ. Քառք, ամանցմուսք, քարդութիւնք և ասացուածք որ Կորեան սեպհական են և այլ մատենադրաց Ռսկեղարու բոլորովին անծանօթ: Սոյն կարգի նմանութիւնք և նոյնութիւնք զբեկասիրութեանս կարեւորագոյն մասնն կը կազմեն, քանզի սոքօք առաւելապէս յերեւան կու գայ Կորեան ընիկ ոճն, այս ինքն՝ իւրուրոյն բանիւք և դարձուածովք զիւր զաղափարս արտայայտելոյ եզանակն: Տես օրինակի համար Խորհրդանոց, Անարգամեծար, Ամենակեցոյց (և Աշխարհակեցոյց, Քրիստոսակեցոյց), Գեւարան, Կոր. Ագաթ.—Մարգարէագէտ և առաքելածանալթ, Կոր. Տիրագէտ և հրեշտակածանալթ, Ագաթ.—Ժիրանափառ, Կոր. Սպիտակափառ, Ագաթ.—Արուեստախաւսեմ, Կոր. Ագաթ. Եւթ.—Տաւնախմբեմ, Կոր. Եւթ. և Զար տաւնին խմբեմ, Ագաթ. Քիւզ. (2եռադիրն Աբրահամ Երիցու<sup>3</sup> ունի յԱգաթ. Զարն տաւնախմբեմ, համեմատ Կոր. Եւթ.)—Արքունատուր, Կոր. (այլ է և Արքայատուր, Կոր. Ագաթ.), և Տէրունատուր, Քիւզ.—Կղեր, Քիւզ. Կղերական, Կոր. Կղերիկոս, Ագաթ. Քիւզ.—Տեղապահ, Կոր. Ետեղապահ, Քիւզ.—Խոտաբուտ, Կոր. Մկր., և Ընդաբուտ, Քիւզ.—Արդիւնակատար, Կոր. Եւթ.—Ատրուշան, Պառական, Հաճոյակատար, Ագաթ. Քիւզ.—Խեցակարկատ, Ագաթ. Քարակարկատ, Քիւզ.—\*Կանոնք մշտնջենակարգք, Ագաթ. Առաքելակարգ կանոնք. Քիւզ.—Գումարտակ, Քիւզ. և Գումարտակ առնեմ, Ագաթ. Մկր.—Գղեակ ընրդ, Ագաթ. Մկր.—Միջնաբերդ, Քիւզ. Մկր.—Առնազէն, Ագաթ. Մկր.—

8. Զայս պատուական 2եռադրէ, յորում քաց յայլոց պատմադրութեանց կան Ագաթանգեղ և Քիւզանգ՝ բազում ընտրելագոյն ընթերցուածովք, տես ի Ստ. Առողիկ. հրատ. ի Պետրբուրգ, 1885, Ցառաջարան, երեսք չգ—ւ: Տրնթացս գործայս 2 սկզբնադրով կ'որոշեմ զընթերցուածս 2եռադրիս յԱգաթ. և ի Քիւզ.:



ԿԱՍԱԿԱՂԷՆՑ. Ազաթ. Քիւզ.—Հեղեղամաց, Ազաթ. Ծովամաց,  
 Մկր.—Բարենշան ըարենամբաւ, Միաբան շմիահաւան,  
 Քիւզ. Մկր. (այլք ունին լոկ Բարենշան, Միարան.)—Նրկնաշու,  
 Ամպաշուեմ, Ազաթ. Նաւաշու, եւթ. Կ՛Նժոյգ, Գաղտազո-  
 դանք, Ուտեստ, Կարթեմ, Քիւզ. Մկր.—Առաքելագործ  
 մատենան, Կոր. Ազաթ. (այլք՝ Գործք Առաքելոց, Գործք երկո-  
 տասան Առաքելոց, Պրակք Առաքելոց, եւ սոսկ Պրակք.)—Ազոս-  
 տական, Կոր. Ազաթ. (այլք՝ Սերաստեան.) Բարըարոսական<sup>10</sup>,  
 Կոր. Ազաթ. (այլք՝ Բարրարոսիկ, Բարրարիկ, Խուժական.) Նպխ-  
 կոպոսական աթոռ կամ կայեան, Ազաթ. Քիւզ. (այլ ոմն՝ Աթոռ  
 եպիսկոպոսութեան.) Կ՛Լեռնական, Կոր. Ազաթ. Քիւզ. (այլուր՝  
 Որ ի լերինսն բնակեալ իցէ, Որ ի լերինս երթեալ դադարեալ  
 իցէ, Վանական որ ի լերինսն իցէ.) Կ՛ Մարտիրոսական խորան  
 կամ բնակութիւն, Կոր. Ազաթ. Քիւզ. (այլք՝ Մարտիրոսութեան  
 պսակ, մահ, արիւն.) Տիբերական ծով, Կոր. Ազաթ. (այլք՝  
 ծով Տիբերեայ, Տիբերիադայ.) առ հասարակ սոյնպիսի ածանց-  
 մունք սիրելի են Կորեան, ինչպէս կը ցուցանեն եւ Չինուորա-  
 կան, Հայրապետական, Յարութիւնական, Սիւնուորոսա-  
 կան, Վկայական.—Աւազանի, Կոր. Ազաթ. Քիւզ. Մկր. Կ՛Ա-  
 նանի, Ազաթ. Քիւզ. Ազատանի, Գլխանի, Քիւզ. (անի յոգ-  
 նականակերտ չգիտեն միւս մատենագիրք բաց ի թարգմանչէն  
 Ոսկերերանի Մեկնութեանց Պաւղոսի՝ որ—միտ դիր պարագայ-  
 իս—«մի անգամ եւեթ» ըսած է Կանանի՝ առնելով յԱզաթան-  
 դեղէ եւ ի Քիւզանդայ. սմին նման եւ Լ՛նկերանի, «մի անգամ»  
 առ Մարութայի. Կորեան ուսումնակիցք գիտեն եան, Գրեան,  
 Խողեան, Խորղեան. եար, Բարձկնեար. որայ, Կարթայ. ստան,  
 Այգեստան, տի. Մանկտի, (ըստ որում եւ յԱզաթ.՝ Ոսկրտի.)  
 ուի, Չնուի, այս ինքն՝ Չունք. կամ պարզապէս Աւազք, Ազատք,  
 Կանայք, Գլուխք.)—Ծակակախիթ լինիմ, Կոր. Ծառակախիթ լի-

9. Խաշանչանի բառքդ ի Կորեան գրութեանց անցեալք են յՈսկերե-  
 րանի Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի. տես ի մատենիս Տեղեկութիւնք  
 եւ Լուսարանութիւնք, թիւ 15:

10. Կոր. եւ Ազաթ. կըսեն Բարրարոսական կողմն, կողմանք, ըստ  
 որում եւ Չինուորական կողմն, Հիւսիսական կողմանք. տես եւ Հրէական  
 կողմն, Ազաթ. եւթ.:

նիմ, Ագաթ. Ամրախիթ առնեմ, Մկր. (բարդութեանցս երկրորդ արմատն է ի Խթիմ բայէ, որ կայ ուրեք՝ Խթիմ ընդ քարիւ. Կորիւն անշուշտ պիտի ըսէր *Քարախիթ լինիմ*. այլ ոմն փոխանակ *Ծակախիթ*, ըսած է Ծակամուտ.)—Աստուածակարգ, Կոր. Ագաթ. (այլուր՝ ՅԱստուծոյ կարգեալ. եւ ներդործարար՝ Աստուծոյ կարգեալ.)—*Բարեացապարտ*, Կոր. *Չարեացապարտ*, Մկր. (երկրորդ բառիս մտօք եզնիկ ունի՝ Պարտ չարեաց.)—*Բրածեծ գան*, Ագաթ. (որ կըսէ եւ *Ոգորածեծ առնեմ*.) *Բրածեծ լինիմ*, Բիւզ. (այլ ոմն՝ *Բբաւք ծեծեմ*, զոր Կորիւն պիտի ըսէր *Բրածեծ առնեմ*.)—*Ըստանձնեմ*, Ագաթ. Բիւզ. (այլք՝ *Առնում ըստ անձին*, Բառնամ ըստ անձին, Ունիմ ըստ անձին.)—*Միահաղոյն*, Ագաթ. Բիւզ. (այլք՝ *Միանգամայն*.)—*Խոտաճարակ լինիմ*, Ագաթ. Բիւզ. *Խոտաճարակ շրջիմ*, Մկր. (այլք՝ *Խոտ ճարակիմ*, *Խոտ ուտեմ*.)—*Անդէն մատալուտ*, Ագաթ. Մկր. (այլք՝ *Անդէն ի մատոյ*, *Անդէն ի հոյոյ*.) եւ *Անպիտոյ*, *Առիծարար*, *Կաշառաքեկ կաշառակուրծ առնեմ*, *Կուսաստան*, *ԿՉեռական*, *Միասնական Երրորդութիւն*, *Նախավկայ*, *Վերնագաւառք*, ի գրոց Ագաթանգեղի, Բիւզանդայ, Մակարայեցոց, եւթաղի: Նկատմամբ *Անպայման*, *Աստուածագործ*, *Աստուածամուխ*, *Համաշխարհ* եւ *Չեռնասուն* բառից՝ որ—միտ դիր եւ այսմ—«մի մի անգամ» կը դանուին յմակերերանի Մեկնութեան ծայեայ եւ ի ձառս Սերբրիանոսի, թուի ինձ թէ երկոցունց բնագրացոյ թարգմանիչն ընթերցած է զԿորեան գրութիւնս:

Յետ այսքան եւ այսպիսի հաւանութեանց կարծեմ անհնար է չընդունել թէ Ագաթանգեղ եւ միւս երբեակ բնագիրքն՝ Կորեան թարգմանութիւնք են հաւաստեալ, եւ ոչ այլոյ ուրուք յուսումնակցաց նորա. խիտ առ խիտ օրինակք հաստատեցին առաւելովք թէ ինչպէս *Վարքն Մաշտոցի* եւ չորեքեան թարգմանութիւնքն միաձոյլ զանգեալք՝ կը տարբերին ի հայկաբանութիւնէ այլ Առաջին Աշակերտաց, եւ թէ ինչպէս Ագաթանգեղ, Բիւզանդ, Մակարայեցիք, եւթաղ, ձեռն ի ձեռն կ'երթան կը խառնուին ի *Վարս Մաշտոցի* իբրեւ հարազատ եղբարք ի զիրկս միոյ եւ նորին հօր: Անհնար է դարձեալ ենթադրել թէ *Մաշտոցի Վարուց* եւ յիշեալ գրոց լեզուական նմանութիւնն՝ պարզուղիղ յառաջ եկած է ի ստէպ ընթերցանելոյ Կորեան զայնո-

սիկ<sup>11</sup>, կամ թէ կորենք ըսենք՝ Կորին բանտքադուժեամբ վարուած է, օտարաց փետրովք պաճուճուելով առակին ճային պէս: Կորին չկարէր բանաքաղել յԱզաթանգեղէ եւ ի Բիւզանդայ, քանզի շատ հաւանական է որ երկու պատմագիրքդ թարգմանեալք են յետ յօրինման կենսագրութեանն Մաշտոցի: Կը մնան եւթաղ եւ Մակարայեցիք. համարինք թէ Կորին զ'Անուանակիր, զ'Աստուածամերձ, զ'Աստուածեղէն կրանք, զ'Արուեստախաւսեմ, զ'Կենդանատուր, զ'Յանձնարարութիւն, զ'Տանախլըմբեմ՝ ուստ յեւթաղէ, զ'Աւագանի, զ' Բարեացապարտ(=Չարեացապարտ), զ'Մոտաբուտ ի Մակարայեցւոց, եւ ստրկօրէն ընդօրինակեց \*Բազում՝ եւ ազգի ազգի վշտաց տարեալ, Բաղջրուսոյց ընթերցուածք յառաջնոյն, եւ Դայեկաբար սնուցանեմ, Յանձն առնեմ զնուսա եւ զանձն Աստուծոյ յերկրորդէն: Եթէ այսու մեկնուին նոյնութիւնք Վարուց Մաշտոցի եւ երկոցունց բնագրացդ, հարկ է ապա հարցանել. իսկ այնչափ անչափ նոյնութիւնք եւ նմանութիւնք Վարուց Մաշտոցի, Եզաթանգեղի, Բիւզանդայ ի միոջէ կողմանէ, եւ ի միւսմէ կողմանէ՝ շորեցունց թարգմանութեանցն, ուստի են. զիմրդ եւթաղին Անուանակիր, Աստուածամերձ, Արուեստախաւսեմ, Կենդանատուր, Տանախլըմբեմ, Բաղջրուսոյց՝ արտաքոյ Վարուցն Մաշտոցի կը պատահին ճշդիւ եւ յեզաթանգեղ, Աստուածեղէն կրանք, Չար տանին իմբեմ ( =Տանախլըմբեմ) ի Բիւզանդ, եւ Մակարայեցւոցն Աւագանի՝ ոչ միայն Մաշտոցի կենսագրին ծանօթ է, այլ եւ Եզաթանգեղի ու Բիւզանդայ որ ստէպ ստէպ կը յեղեղեն զայն եւ կ'ըսեն նոյն օրինակ Կանանի, Ազատանի, Դլխանի. զիմրդ Մոտաբուտ բառ Մակարայեցւոց սպրդեալ է նման ձեւով եւ ի Բիւզանդ՝ Ընդա-

11. «Եզաթանգեղոսի եւ Բիւզանդայ գրոց հետ շատ նմանութիւն ունի Կորեան այս գիրքը (Վարր Մաշտոցի), մանաւանդ առջինին. ուսկից ամբողջ խօսքի հատուածներ մէջ կը բերէ: Վասն որոյ ոմանք համարեցան թէ այն գրոց թարգմանիչն եղած ըլլայ Կորին, եւ այն է պատճառը այնչափ նմանութեան: Բայց մտք որովհետեւ այն կարծիքն ունինք թէ Եզաթանգեղոս ն Բիւզանդ սկզբնաղիւր երկասիրութիւնք են, ուստի անոնց շատ ընթերցմանը արդիւնք կը սեպենք այն նմանութիւններն»: Հ. Գարեգին Զ., Հայկ. Հին Դար. Պատմ. երես 294: (Ելլալիսի ինչ կ'ըսուի անդ, երես 345, եւ զնոյնութեանց Գրիգորի Նազիանզացւոյ Արձանականին ի Մեկիտոս եւ Մոգեսի Խորենացւոյ Աղոցնն):

բուտ, եւ Պոտանճարակն նոյնութեամբ յԱզաթանդեղ եւ ի Բիւզանդ. որո՞վ գարմանայի զիպուածով եւթաղ եւ Մակարայեցիք եւեթ կ'ըսեն \*Այն ինչ լինէր նմա անդր հասանել, եւ Այն ինչ լինէր նոցա ի կողմն քաղաքին հասանել,—եւթաղ, Մակարայեցիք, Ազաթանդեղ՝ Աւրինատր կրունք,—եւթաղ, Ազաթանդեղ, Բիւզանդ՝ Նախապկայ, այլովքն հանդերձ. թող զբազմապատիկ ասացուածս եւ բառս՝ յորս կը միարանին մասնաւորապէս Վարքն Մաշտոցի, Ազաթանդեղ եւ Բիւզանդ, Ինչպէս կը տեսնուի՝ հնգեակ մատենագրութեանցդ աղերսն այնպիսի է որ մեք հարկաւարեալ եմք նկատել զայնոսիկ անբաժան յիրերաց, իբր միոյ անձին սեպհականութիւնս. անմարթ է ուրեմն ըսել թէ Կորիւն բանաքաղած է յօտարաց, երբ օտարք—միւս մատենագիրք Ոսկեղարու—չգիտեն ընաւ իսկ ամենեւին եւ ոչ զմի ի բանից երրորդ տեսակին, եւ յերկրորդ տեսակին՝ թէ եւ զբառն գիտեն, ոչ նովին խառնուածովք եւ կազմութեամբք կը շարագրեն, ոչ նովին գաօաւորութեամբք. այլ Կորիւն ինքնին է որ կը խօսի ծայրէ ի ծայր ի Վարս Մաշտոցի իւր յատուկ բառերով եւ ձեւերով՝ յորոց զոմանս արդէն ի կիր արկած էր յեւթաղ եւ ի Մակարայեցիս, ինչպէս յԱզաթանդեղ եւ ի Բիւզանդ կը զրէ համանման ոճով Մաշտոցի Վարուց, եւթաղի, Մակարայեցոց: Առացելոցս ճշմարտութեան կը վկայեն մանաւանդ ամենահասարակ նոյնարանութիւնք, ուր բոլորովին անճահ է իբր գոյ ամբաստանել զհոյակապ հայկարանն. երբ օրինակի համար Կորիւն կ'ըսէ զոյգ ընդ եւթաղի՝ Չորեքտասանքումբք թղթովք, Համարէն գունդք սրբոց, Ի միասին \*գումարելովք, եւ ընդ Մակարայեցիս՝ Երթամ յանդիման լինիմ թագաւորին, զոր երկիցս կը կրկնէ եւ ի Բիւզանդ, երկիցս ըսելով անդ եւ Յանդիման լինիմ թագաւորին, ըստ որում երկիցս եւ յԱզաթանդեղ: Տես եւ զյաջորդ աննշան անպաճոյճ ասութիւնս. Որոյ գլխաւորին \*անուն, Ի \*կողմանս Այրարատեան գաւառին, Կոր. Բիւզ. Ազաթ.—\*Բանգի կամ Զի Աստուծոյ բարերարի, \*Բանգի միոյն Աստուծոյ, \*Հանդերձ ամենայն շնչականաւք, \*Հանդերձ միաբանութեամբ, Երանելին Ղուկաս, Յայտնի է այսուհետեւ ասացելովքս, Զտարեալսն կամ Զտարեալն ընդ իւր, Զտուրս ուրախութեամբ անցուցանեմ, Մանաւանդ հայեցեալ, Փութայր



վաղվաղակի գճրամանն կատարել կամ Փութային կատարել վաղվաղակի գճրամանն (=Վաղվաղակի կատարէր գճրամանս, Բիւզ.), \*Ոչ իւիք անտեղեակ կամ անտեղեակք, Իրաց իրաց ինչ, Կոր. Ագաթ. — Դիպացն պատահելոց, Կոր. Բիւզ. (այլ ոմն՝ Իրացն պատահելոց, Իրաց դիպելոց.) — \*Կոտորէին կամ Կոտորեալ զամենայն զարսն Պարսից, \*Արկանէր ի սուր զզարս Պարսից, Ըստ \*արինաց թագաւորաց (=Ըստ արէնս թագաւորաց, Մկր.), \*Մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ կամ Սպանդարատ, Մեծ թագաւորն \*Հայոց, Մեծ թագաւորն \*Յունաց, Ի \*ճնոս ատար թըշնամեաց, Նշանաւքն տուելովք կամ եղելովք, Զի \*ճնոնադրեսցեն զՍուրբն Գրիգորիոս կամ Ներսէս, Անթիւ մարդիկ, Ագաթ. Բիւզ. — \*Անդրէն արշաւել ի կողմանս Պարսից կամ չրէտասանի, Որ ընդ իմով կամ մերով \*իշխանութեամբ, Ի \*կողմն Ազովտայ, Ագաթ. Մկր. — \*Անց ըստ գետն մեծ ըստ Կուր կամ Եփրատ, Հասանէին հարկանէին, Հասանէր սատակէր կամ Հասանել սատակել, \*Բերէին տային ի դուրս, Մինչ նա դեռ, Եկ տեսցուք զմիմեանս, Էր երթեալ նա, \*Իւրով զնդան, Երկոցունց \*զնդացն, Բիւզ. Մկր., այլովքն հանգերձ: Այս ամենայն նշանաւոր եւ աննշան, ձեւաւոր եւ ամենապարզ բանից կրկին եւ կրկին դառնալ զայն ընդ գրչաւ Կորեան՝ շատ բնական երեւոյթ մի է. այնու զի *ս* եւ *ից* է մատենագիր թէպէտ եւ ջանայ խորշել ի միակերպութենէ, թէպէտ եւ գիտնայ պէսպէս եղանակօր եւ կերպակերպ բացատրութեամբք ներկայացնել զայս ինչ կամ զայն իմաստ, — յայտնի է ճարտարութիւն Կորեան յայսմ մասին, — յաճախ կը հեռեւի յանգէտս իւր ընդերկական ոճոյն եւ իւր սիրական խօսիւք կը նոյնարանէ ի գանազան տեղիս, կամայ աւիամայ ծրագրելով զիւր գրութեան կերպին որոշիչ նկարագիրն՝ որով կը գատուի յօտար մատենագրաց: Վերջին փաստ իմ կարծեաց ստուգութեան. Ոսկեզարու հատորաւոր մատենից մէջ չկան այլ բնագիրք որ այնքան լուսաւորեն զմիմեանս, այնչափ ապահովութեամբ եւ յաճախութեամբ ուղղեն զիրերաց սխալմունս՝ գործեալս ի տղէտ կամ յանհաւատարիմ գաղափարողաց, որքան Վարքն Մաշտոցի, Ագաթանգեղ, Բիւզանդ, Մակարայեցիք, Եւթագ: Ո՛չ ապաքէն յայտնի նշան է այս թէ մի միայն գրչի վաստակք են հնգեքին մատե-

նագրութիւնքդ եւ թէ Կորինն է որ զԿորինն կը սրբազրէ կը յարգարէ. Աւասիկ շար մի սրբազրութեանց՝ լոկ ի վկայութիւնսն յիշատակեալս ի մատենիս, մեծաւ մատամբ իմ գիւտք, ըստ մասին՝ Չեռագրաց տուչութիւնք.

Ա. Վարուք Մաշտոցի կ'ուղղուին յԱզատանգեղ՝ 1. Առ կոմսի ումնմն՝ Աիկիանէս \*անուն կողեցելոյ, փոխանակ ըստ սուգարին՝ կողեցեալ. 2. Ծառախիթ լինիմ, փոխ. Ծառախիտ. 3. Քրիստոսատուր \*փրկութեանն հասանելոյ, փոխ. հասեալ, հասելոյ. 4. Խորհրդանոց, փոխ. խորհրդոց. 5. Զի \*կանոնք պահիցին, փոխ. պահիցեն. 6. Ի ներքսագոյն խորանացն, փոխ. սոսկ ներքսագոյն. 7. Հասանէին ի \*ժամադիրն կողմանս Այրարատեան զաւատին, փոխ. Հասանէին ի ժամադիրն ի կողմանց յԱյրարատ զաւատ. 8. Զկենդանարար մարմին եւ զարիւնն Քրիստոսի, փոխ. Զմարմին եւ զարիւն կենարարին Քրիստոսի. (Բիւզանդ եւս՝ կենդանարար մարմին եւ արիւն Քրիստոսի):

Բ. Ազատանգեղի կ'ուղղուին ի Վարս Մաշտոցի՝ 9. Դուռն Արչակունեաց. փոխ. Գաւառն. 10. \*Հանդերձ միաբանութեամբ, փոխ. միաբան. 11. Ծանալծս կացուցանէին, փոխ. Ժնունդս. (հաստատի այս եւ Մակարայեցուլք՝ Անծանալծ կացուցանեմ.) 12. \*Անդ ցուցեալ, փոխ. Անցուցեալ. (Եւթաղ եւս՝ Անդ ցուցեալ.) 13. Իրաց իրաց ինչ, փոխ. անիմաստ բանին՝ յերիցանց, իրաց ինչ. 14. Ի \*զինուորական կողմանէն, փոխ. կողմանն. 15. Մենակոխ մենամարտիկ, փոխ. լոկ մենամարտիկ. (Սուա-Կորիննն եւս՝ Մենակոխ մենամարտիկ):

Գ. Վարուք Մաշտոցի կ'ուղղուին ի Բիւզանդ՝ 16. (Թուի) Անկանէր այնուհետեւ Անդովկ ի ծուխս խորհրդոց, հարս հնարել, փոխ. Անկանէր այնուհետեւ Անդովկ ի հարս հնարել, եւ ի ծուխս խորհրդոց. 17. Ըստ ժամանակին՝ \*ղիպացն պատահելոց միտս ազտակարս դնել, փոխ. Ըստ ժամանակին ղիպացն պատահելոյ՝ միտս . . . :

Դ. Բիւզանդաւ կ'ուղղուին ի Վարս Մաշտոցի՝ 18. Աշակելտութեան \*վիճակ տեալ, փոխ. Աշակերտութեամբ. 19. \*Գոհութիւնք բարձրանային ի փառս Աստուծոյ, փոխ. Գովութիւնք. 20. Պատուակալ, փոխ. Պատուական. 21. Պատեհ պատեհ տեղիք, փոխ. լոկ Պատեհ. (տես եւ Ամուր ամուր տե-

դիք, Բիւզ. Մկր.) 22. \*Արտաքոյ իւրեանց սահմանացն. վերջին բառդ կը պահասէ ի տպագրին:

Ե. Վարուք Մաշտոցի կ'ուղղուի ի Մակարայեցիս՝ 23. Ամբախիթ առնեմ, փոխ. Ամբախիտ:

Զ. Մակարայեցւոյք կ'ուղղուի երկիցս ի Վարս Մաշտոցի՝ 24. Հոդ ի \*միտ արկանէր, փոխ. ի մտի:

Է. Վարուք Մաշտոցի կ'ուղղուի յեւթադ՝ 25. (Թուի) Ընդ ուսումնասէր փոյթ քոյոյ սիրոյդ զարմացեալ, փոխ. Ընդ ուսումնասէր եւ ընդ փոյթ<sup>12</sup> . . . 26. Ըստ Քրիստոսի \*հետոցն վարիմ, փոխ. Ընդ:

Ը. Եւթադիւ կը պարզուի սխալ կիտաղրեալ հատուածն Վարուց Մաշտոցի՝ 27. «Թէպէտ եւ էի կրօնբազոյն եւ առաւել քան զկար մեր. զբուեալ անաշառ հրամանին հասելոյ». ջնջէ զմիջակէան եւ կարդա՝ «. . . առաւել քան զկար մեր \*զբուեալ անաշառ հրամանին հասելոյ»<sup>13</sup>:

Թ. Ազաթանգեղի կ'ուղղուին ի Բիւզանդ՝ 28. (Թուի) Ծինութիւն մարդաշատութեան, փոխ. Ծինութիւն, մարդաշատութիւն. 29. Մարտ խստութեան, փոխ. խստութեամբ. 30. \*Արձակեաց յիւր աշխարհն, փոխ. աշխարհէն. 31. Ասպետութիւն, փոխ. Ասպարապետութիւն. 32. Այլ ոչ \*թողից քեզ զվրէժ նախնեաց իմոց, փոխ. զքեզ. 33. Ախոյեան ելանէր Մանուելի, փոխ. Մանուէլն. 34. Յընչաց քերեաց, փոխ. Յընչացք եբաց. (կայ մի անգամ եւ յեզնիկ Յընչաց քերեմ.) 35. (Թուի) Թագադիրքն, փոխ. Թագաւորքն:

Փ. Բիւզանդաւ կ'ուղղուին յԱզաթանգեղ՝ 36. Ընդ \*կոյսս կոյսս հարկանելոյ, փոխ. Ընդ կոյսս. (կը հաստատէ զայս եւ Յոհան կաթողիկոս, սր կ'ըսէ առեալ յԱզաթանգեղէ Ընդ կոյսս կոյսս հարեալք.) 37. Առ \*գաւրս գաւրութեան իւրոյ, փոխ. իւր. 38. \*Ինքն իսկ կայսրն, փոխ. Ինքն կայսրն. 39. Առ \*քում՝ քարերարութիւնդ, փոխ. Առ քո քարերարութեանդ. 40. \*Կերակրոյ աւուրն ոռճկին, փոխ. ոռճիկ. 41. Մախաւկայ, փոխ. Վկայ. (Եւթադ եւս Մախաւկայ.) 42. Աւժութիւնընկա-

12. Տես ի Գումարութեանն «Տուտայից»:

13. Թերեւս Եւթադիւ ուղղելի է եւ բանն Վարուց Մաշտոցի՝ «Հայրենակատար մեծարեալ պայմանաւ, որ». տես ի Կոր. = Եւթ. զկնի 16 վկայութեանն:

լու, փոխ. Աւծութեանն անկու. 43. Պահ արկելոցն եւ զգու-  
շացելոցն, փոխ. Պահարկելոցն եւ գուշակելոցն. 44. Յան-  
պիտոյիցս, փոխ. Յանպիտոյիցն. 45. Առաքեալքն՝ \*բուն սիւնքն,  
փոխ. Բուն Առաքեալքն՝ սիւնքն. 46. Կատարիչ ամենայն  
բարութեանց, փոխ. Տաճար. 47. Յայնժամ դեռ եւս, փոխ.  
Դեռ եւս յայնժամ, Յայնժամ եւս դեռ. 48. \*Անդուտ յու-  
ղարկեցին, փոխ. երկիցս յղարկեցին. 49. Հանոյակատար,  
փոխ. Հանոյական. 50. Ի \*լնուլ կիտին եղելոյ, փոխ. կետին.  
51. \*Հայոց Մեծաց աշխարհին, փոխ. մեծութեան. 52. Աշ-  
խարհաքնակք, փոխ. Աշխարհականք, Աշխարհք:

ժԱ. Ազաթանգեղիւ կ'ուղղուին ի Մակարայեցիս՝ 53. Զի  
ամենայն այր պատերազմոյ զկնի նորա \*փողեցեան, փոխ.  
Զամենայն զայր. 54. Վասն առն եւ ծիոյ՝ ճանապարհին,  
փոխ. առնուծիոյ. 55. Զմեծամեծս աւագանւոյն, փոխ. յա-  
ւագանւոյն. (Բիւզանդ եւս՝ Մեծամեծք նախարարացն, եւ ոչ  
ի նախարարացն):

ժԲ. Մակարայեցուք կ'ուղղուին յԱզաթանգեղ՝ 56. Ի զը-  
ղեակ բերդն, փոխ. բերդին. 57. Զքաղաքամէջսն \*լցին, փոխ.  
Զքաղաքամէջն. 58. \*Ժիր մանուկն մարգարէն Երեմիա,  
փոխ. Ժիր մարգարէն մանուկն Երեմիա. (կը հաստատէ զայս  
եւ Ստ. Ասողիկ, առեալ յԱզաթանգեղէ, Ժիր մանուկ մարգա-  
րէն Երեմիա):

ժԳ. Բիւզանդաւ կ'ուղղուին ի Մակարայեցիս՝ 59. Կարի  
առնէին վասն առնն մահուանն, փոխ. Կարի առաւել. (կը  
հաստատեն զայս եւ Պտմ. Հարանցն եգիպտ., եւ Ոսկ. Երբ.) 60.  
(Թուի) \*Առաջնորդ ի ձեռին ունէր, փոխ. ի ձեռն. 61. (Թուի)  
Տարապայման, փոխ. տար պայման, տալ պայման:

ժԴ. Մակարայեցուք կ'ուղղուին ի Բիւզանդ՝ 62. \*Անց ըստ  
լու սահմանն ըստ գեան մեծ ըստ Կուր, փոխ. ընդ գեան մեծ  
ընդ. 63. \*Անդէն սուր զնել ի վերայ, փոխ. Անդրէն. 64. Կա-  
շառաքնկ, փոխ. Կաշառաւնկ. 65. Զ\*զունդս ըովանդակել, փոխ.  
վանդակել. (Ազաթ. եւս՝ Զուրս ըովանդակել.) 66. Ընդ սյլ  
\*կարթեալ, փոխ. կարթել. 67. \*Նտ սերտ խոնարհութեամբ  
հրովարտակս. փոխ. Նդ սիրտ՝ խոնարհութեամբ հրովարտակս. 68.  
Յանձանծէր եւ միթիթարէր, փոխ. Յանձն առնէր. 69. Կապիալ



յըռժղութեան և յազահութեան, փոխ. *յըռժղութեան*. (կը հաստատէ զայս և Ռսկերերանի Մատթէի Մեկնութեան Ռիժդ բանն):

ԺԵ. Եւթաղի Կուղղուի յԱզաթանգեղ՝ 70. \*Գիրս մատնաւարել, փոխ. *Զիրս մատնաւարել*<sup>15</sup>: Այսպէս հինգ բնագրացդ համեմատութեամբ յոյժ կը գիրանայ մեզ ընտրել յայլեւայլ Ձեռագրաց զհարազատ ընթերցուածսն, զոր օրինակ տեսանք (ի ծան. 15) յեօթնուտասն անդիս, յորոց վերայ կը յաւելում և զայստսիկ. Ձեռագիր մի Մակարայեցոց սրեք կը զրէ Ամմարդի հասուցանեն, այլոր Ամմարդի կացուցանեն, իսկ այլ Ձեռագիր՝ երկիցս կացուցանեն. մարթ էր տատամնել, եթէ Բիւզանդ չերաշխարհէր թէ Ամմարդի կացուցանել է ուղիղն. ընդ հակառակն, երբ ի Բիւզանդ կէս օրինակք կը կարդան մինչ նա դեռ, կրկնէր լինէր զաւրածողով, և Երբհամ երիցու Ձեռագիրքն՝ նա մինչդեռ, կրկին լինէր զաւրածողով, Մակարայեցիք յօղնութիւն կը հասնին առ ի վստահացնել զմեզ թէ առաջին ընթերցուածքն են ուղիղք: Թող և զվրիպակս կիտաղրութեան, Բիւզանդայն Սուրբ, երաննլի և Գեղեցիկ, զանազան՝ սրբագրուելով ըստ Ազաթանգեղի՝ Սուրբ երաննլի, Գեղեցիկ զանազան, այլովքն հանդերձ:

Կը բաղձայի ամենայն մասամբք կատարեալ զորժ մի ընծայել Հայ բանասիրութեան. բարեմիտ և արդահատող անձինք ներն ինձ, զի քան զայս աւելի չունիմ տալ ի Ստորհումէ<sup>16</sup>, յայտ

15. Ազաթանգեղի թիւք 1, 4, 6, 8 ուղղութիւնքն՝ համեմատք Վարուց Մաշտոցի, թիւքն 37, 38, 39, 40, 41, 44, 46, 47, 49, 52՝ համեմատք Բիւզանդայ, և թիւն 57՝ համեմատ Մակարայեցոց, են ըստ Ձեռագրին Երբհամ երիցու զոր յիշեցի վերազոյն: Բիւզանդայն թիւ 30՝ համեմատ Ազաթանգեղի, է ըստ Ձեռագրին Բիւզանդայ զըշազրելոյ ի նմին Երբհամէ. իսկ թիւն 67՝ է ըստ Հ. Երեսնի Բագրատունւոյ: Մակարայեցոց թիւն 59՝ համեմատ Բիւզանդայ, է ըստ Ձեռագրին՝ որում հետեւած է նոր Հայկազեանն: Մնացեալ յիսուն և երկու ուղղութիւնք՝ իմ դիւտք են:

16. Ինչպէս վազ ըսի ի *Քննասիրի*, Բ. երես 31, Մ. Խորենացոյ թարգմանութեանց և իւր Պատմութեանն համեմատութեանց առթիւ և որովհետեւ պատեհութիւն ունիմ խօսել զայսժ նիւթոյ, փութեմ ծանուցանել սր առ ի շրարգիւ զժախս հրատարակութեան *Քննասիրի* բանագրտեալ էի համառօտ քաղուած մի տալ յընդարձակ ուսումնասիրութեան, սր բաց ի Պատմութեանն նա և Պիտոյից զիւր և այլ մանր գրուածք

է թէ ինչ պատճառներով: Մեծապէս կը ցաւիմ որ չկարացի ուսումնասիրել ոչ զԿիրիլի Աղեքսանդրացոյ Մեկնութիւնս ութ գրոց Հին Կտակարանի, ոչ զԵւազրի Պոնտացոյ ձառս, ոչ զԵրեքտասան ձառս Ոսկերերանի Մեկնութեանն Յովնանու, մանաւանդ զի ի հատակատար վկայութեանց զիտեմ որ Կորեան գրութիւնք իւիք իւիք կը նմանին երկու յետին թարգմանութեանցդ: Կան եւ պէտպէս նմանութիւնք ի միջի գրութեանց Կորեան եւ Կանոնագրոց. օրինակի աղագաւ ի Վարս Մաշտոցի, երես 18. «Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին (Քորորիանոսքն), խորտակեալս, ապա խանձեալս մրեալս եւ գունակ գունակ խայտառակեալս, եւ յաշխարհէն կորդէին (կամ կորնչէին)». եւ ի Կանոնագրոս, «Չան արբցնն, խանձեացին մրեացին». եւ զարձեալ, «Որ լսկ զիւթ են, եւ ոչ կախարդեն, խանձել եւ մրել». (տես «Մրեմ» ի Նոր Հայկազեանն.) 2իք երկրայել թէ այս Մանձեմ՝ մրեմ՝ բառից զոյգ գործածութիւնն ի յիշեալ տեղիսդ ոչ է պատահական, այլ կամ Կանոնագիրք ի Կորիւնէ առած են, կամ Կորիւն ի Կանոնագրոց: Քերեւս առաջին ենթադրութիւնն է ստոյգն. քանզի (անտարակոյս նոյն) Կանոնագիրք ունին եւ այսպիսի հատուած մի. «Եւ շրջէին (Առաքեալքն) տեղի ի տեղուջէ եւ քարոզէին զԱւտարանն արքայութեան. որպէս յաշտարակէն ցրումս, նոյնպէս եւ ի խաչէն՝ ժողովումս».<sup>17</sup> արդ՝ այս բան առեալ է նոյնութեամբ յԱզաթանգեղէ. «2ի յառաջին աշտարակէն ցրումս եղև, իսկ ի խաչէս՝

Քերթողհոհոբն համեմատեալք են նախ ընդ թարգմանութիւնս Փիլոսի, Աուտ-Կալլիթիենեայ եւ Գր. Նագիանդացոյ, եւ ապա երեքեան թարգմանութիւնք ընդ միմեանս, ճիշդ առաջիկայ ուսումնասիրութեանս ձևով. թող եւ զհամեմատութիւնս մատենագրութեանց Խորենացոյ, զոր օրինակ Պատմութեանն ընդ Պիտոյից գրոց:

17. Տես Հանդէս Ամսօրեայ, 1893, երես 236 թ, ծան. 1, ուր յօդուածագիրն՝ Մեծ. Հ. Յակոբոս Տաշեան՝ կ'ըսէ թէ այս բանք յաւելեալք են ի հայ խմբագրողէն Կանոնագրոց: Ի նմին Հանդիսի, 1894, երես 78, Հ. Տաշեան կը գրէ՝ թէ վերոյեղեալ բանքդ «կ'երեւայ թէ ուրիշ աղբիւր չունին, բայց եթէ Ազաթանգեղեայ խօսքն, էջ 435, որ է. «Ընկալցաւ զՀոսրհայն հուր հոգին՝ որ այրեացն եւ փոյց զաշտարակն մարտութեան. նոյն շինեսցէ զմեզ հիմարք հաստատութեան հաւատոյ եւ անցէ զմեզ ի միարանութիւն թաշին իւրով»: Յօդուածագիրն չէ տեսած գրուն տեղիսն Ազաթանգեղի:

ժողով»։ 169.—«Եսկ յառաջին աշտարակէն ցրումն լեզուաց եղև. արգ ինքն Տէրն ժողովեաց զցրուեալս աղպացն, եւ բեւեռեաց ընդ մարմնոյ իւրոյ զսբ առ ի մէջ՝ ի փայտին զորմէ (2. իսկ ապ.՝ յոր ե) կախեցաւ»։ 170.—«Եսկ աշտարակն յուրեաց զարտմաութիւն բարկութեան Արարչին՝ ցրել զնոսա եւ խառնակել զեզուս նոցա. իսկ ի խաչէն ողորմութիւնք յուրեացան, ժողովել զցրուեալսն»։ 135։ 2եռապրաց տեսրք անշուշտ կը քննեն կը ստուգեն զայսպիսիս եւ կը լրացնեն զիմ ակամայ թերին։

Յաւարտման երկասիրութեանս զհետեղած եմ 25 Տեղեկութիւնս եւ Լուսարանութիւնս, որք յուսամ արժանի կը դանտին բանասիրաց առանձինն մտադրութեան, զլիսաւորապէս Մահակայ եւ Մաշտոցի մահուան ստոյգ թուականքն, հաւաստիք 2որբորդ գրոց Պատմութեանն Խորենացոյ, քննութիւնքն թարգմանութեանց Մնացորդաց գրոց, Եզրի եւ Նեհմնայ, Յայանութեանն Յովհաննու, Նախագրութեանց եւ Գլխակարգութեանց Հին եւ Նոր Կտակարանաց, եւ քննութիւնն Ոսկեբերանի Մեկնութեանց Պաւղոսի՝ որոց թարգմանիչն ընթերցած թուի զմատննագրութիւնս Կորնեան։

Որպիսի եւ վճիւ արձակէ քննադատութիւնն զմատննէս, կը համարձակիմ ըսել թէ միաձայնութեամբ պիտի վկայուի որ ի հրապարակ հանած եմ անկեղծ գործ մի, ուր հաւասար խնամով ամփոփեալ են իմ կարծեաց թէ նպաստաւորքն թէ աննպաստաւորքն. եւ մանր նշանակելով զտեղիս բոլոր կոչմանց՝ լիուլի զկերութիւն տուած եմ ընթերցողին որպէս զի ոչ ինչ ընդունի առանց անձամբ ստուգելոյ։ Հինգ ընագիրս Ոսկեղարու համեմատելով ընդ այլ քառասուն եւ երկու մատենագրութիւնս նոյն ժամանակին, 624 նմանութիւնք եւ նոյնութիւնք սճոյ համոզեցին զիս թէ Կորնու է թարգմանիչ Ագաթանգեղի, Բիւզանդայ, Մակարայեցոց, Եւթաղի։ Յայտնափ ստուար գումարութեանէ թերեւս ինչ ինչ յապաւի վերոյիշեալ գրուածովք Առաջին Աշակերտաց՝ որ ձեռագիր վիճակի մէջ առ հարկի անտես եղեն լինէն. թերեւս եւ ինչ ինչ վերիպած է ի հրատարակելոցն՝ իմ մոռացութեամբ. եթէ քանի մի մատուց կրճատին կամ յայլ կերպարանս գառնան, քաջայոյս եմ որ բովանդակ շինուածս՝ հիմնեալ ի վերայ Համեմատական ուսումնասիրութեան ընագրաց՝ չքայքայիր շտապալիր, ինչպէս անկործան կը մնան նոյն հիման վե-

բայ հաստատեալ կրկնակ ստուգութիւնքն՝ թէ վիճ կայ ընդ հայկաբանութիւնս Առաջին և երկրորդ Աշակերտաց<sup>18</sup>, և թէ նոյն իսկ Առաջին Աշակերտաց հայկաբանութիւնքն շոկ շոկ են: Այսչափ ինչ առ ժամս:

Այլում ժամանակի կը թողում զքննութիւն բնագրացն Ազաթանդեղի և Բիւզանդայ՝ զորոց ազգի ազգի կարծիս ունին բանասէրք, և զքննութիւն թարգմանութեանցն Մակարայեցոց ու եւթաղի: Ես հաւանեալ եմ որ ոչ Ազաթանդեղ և ոչ Բիւզանդ չեն մտացածին էակք, այլ կ'ընդունիմ զօտարի (զԱսորոյ) ձեռնամխութիւն ի գիրս նոցա, ինչպէս վաղ յայտարարած եմ այլուր<sup>19</sup>. Երկրքեան ևս են ազատ թարգմանութիւնք Կորեան (յասորոյն), ոչ ինչ ընդհատ քան զգիրս Մակարայեցոց՝ որ են ազատ թարգմանութիւնք: Նոյնպէս կը մնայ այլում ժամանակի՝ խօսել զազդեցութենէ այլ մատենադրաց Ռսկեդարու ի գրութիւն Կորեան, և զայն կարի մեծ ազդեցութենէն զոր սենեցած է ինքն Կորիւն՝ համօրէն Հայ գրականութեան վերայ, սկսեալ ի նախասճառեալ թարգմանութենէ Ռսկեբերանի Մեկնութեանցն Պաւղոսի:

Կը կնքեմ զրանքս վառագ մի յայանելով: Ի Հայկական Բառարննութեան, ի *Քննասիրի*, ի *Տեղեկութիւնսն յԱսորիկ*, և յառաջիկայ երկասիրութեան, ամենայն ուրիք երբ օգտուած եմ յայլոց գրուածոց՝ ոչ զմտանհազրին անուն լուծ եմ և ոչ զմատենին: Երբ և այլք կ'օգտուին յիմ դուզնաքեայ վաս-

18. Ուստի շարաշար կը սխալին այնքիկ որ զՄովսէս Խորենացի կը համարին մի ի թարգմանչաց Աստուածաշունչ մատենին, (տես *Քննասէր*, Բ. երես 31).—որ նմին Խորենացոյ կ'ընծայեն զթարգմանութիւն Եւսեբեայ ժամանակագրութեան և *Քրոնիկոնին*, (տես *Քննասէր*, Բ. երես 31.—A Carrière, *Moïse de Khoren et les Généal. patriarc.* երես 13, և այլ օտարագլխ հայալէտք).—որ զեղիշէ՛ զգաւմիշն Վարդանանց Պատերազմին՝ թարգմանիչ կը կարծեն Մակարայեցոց զրոց, (տես վերագոյն, ծան. 3.) —որ զթարգմանութիւն եւթաղի գրուածոց կը դասեն ի կարգի Գիսնեսիոսի Թրակացոյ *Քերականութեան* և *Պորփիրի Ներածութեան*, (տես վերագոյն, ծան. 5).—որ զնամակն Հայոց առ Միհրնեբոսէ՝ ի մէջ բերեալ յեղիշէ՛, Պատմ. Վարդան. Բ. երեսք 22—31, կը վերագրեն եղիկայ Կողբացոյ, (Հ. Բրտ. Թարգիսեան, *Ազաթանգեղոս*, երեսք 318, 405). հանդերձ այլովք սոյնպիսեօր:

19. *Քննասէր*, Ա. երես 37, ծան. 1, և երեսք 42—60:



տակոց, կը փափագիմ որ արժանի համարին յիշատակել զայնս՝ հանդերձ անուամբ վաստակողիս:

Ստորհում, 24 Յունուար 1895

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻԻՋԱՆԴԷՅԻ

7 Յունիս 1899.—Չորս տարիէն աւելի է որ զբուած է Յաւաջարանս: Փափագ ունէի ընդարձակել զայն եւ աւելի ոյժ տալ իմ փաստերուս. փափագ ունէի յաւելուլ նաեւ նորանոր Գիտողութիւնս, Տեղեկութիւնս եւ Լուսարանութիւնս. բայց տարւոյս Մարտի 18/30-ին ընդունած ահագին հարուածս՝ խորտակեց զիս բոլորովին: Օրհնեմալ ըլլայ Աստուծոյ ամենասուրբ կամքն:

Կը յաւելում միայն զհնաեւեալ քանի մի ծանօթութիւնս եւ փոփոխութիւնս.

—Յերես 30, 2-դ ձառն Սրբոյն Եփրեմի, Ի Յարութիւն Փրկչին մերոյ՝ է մասն Կցրդոց նորին Եփրեմի. տես Հ. Տաշեան, Յուցակ Հայ. 22. Մատենադարանին Մխիթարեանց Ի Վիեննա, երես 660 ք, թիւք իք եւ իգ. Հ. Տաշեան չէ իմացած զայս: Եփրեմի ձառքն 3, 4, 5, 6, թերեւ են նոյնպէս Ի Կցրդոց:

—Ի նմին երեսի, «թուի յատորոյն» ըսած եմ Բարսղի Վնջարէին թարգմանութեան համար: Զայս կարծիս վաղադոյն յայտնած եմ, նախ Ի Մասիս լրագրի, 14 Մարտ 1884, երրորդ երես, առաջին սիւնակ. յետոյ յամին 1887 յ'Բ Պրակի Բննասիրի, երես 33: Հ. Տաշեան եւս կը համարի յատորոյն. տես Յուցակ Հայ. 22 Մատենադարանին Մխիթարեանց Ի Վիեննա, երեսք 639 ա, 640 ա.

—Յերես 33, Պատմութիւն Հարանցն Եգիպտացոց է թարգմանութիւն Lausiaca Historia գրոց Պալլադիոսի (Palladius), որ էր եպիսկոպոս Հեղենուպոլիսի Բիւթանացոց, ընդ մէջ Գ եւ Ե դարուց: Պալլադիոսի անունն հարեւանցի կը յիշուի Ի Վարս Հարանց, Հ. Ա. երես 255, ծան. 1:

—Յերես 86, ծան. 1, գրած եմ թէ անվուեր է Եփրեմին «Ողն ըկեցաւ»: Ռամկախօս Պատմութիւնն Նոլիայի մարգարէին, հրատարակեալ Ի Թանգարան Հին եւ Նոր Մասիւնեաց, Ա. Վենետիկ, 1896, երեսք 333—342, եւ որ կ'առնու

ինչ ինչ ի Մեկնութենէ Քաղաքաց Սրբոյն եփրեմի, կը հաստատէ զիմ կարծիս. տես անդ յերես 338, «ընկաւ ողն նորա»:

—Յերես 95, ծան. 1, եւ յերես 290, թիւ 1, զ'հարանցամաց Կորեան համեմատած եմ ընդ հաւրամոյց Ազաթանգեղի: Ուղիղ են կարծիքս, զի յայլում Ձեռագրի Վարուց Մաշտոցի գրեալ է հարանցամոյն (=հաւրամոյն). տես Գալուստ Տէր Մկրտչեան, Ազաթանգեղոսի Աղբիւրներից. Յիշատակ դատակնքաց Գորիսա եւ Շմոնի վկայից, էջմիածին, 1896, կրեսք 18—19:

—Յերես 112, տողք 21—22, փոխանակ «Կայ մի անգամ ի Սդ. Թ. 20. Վիշխան ժողովրդեան եթող զնա», ընթեցցիր. «Իսկ զբան Սողոմոսին, Թ. 20, Վիշխան ժողովրդեան եթող զնա», պէտք է իմանալ «Իշխան[ն] ժողովրդեան եթող զնա». այս ինքն' արձակեաց ի բանաէն:

—Յերես 255, տող 7, գրած եմ՝ թէ «Առաքելարան. Ազաթ. 24, ուղղելի է Առաքելարար»: Այս «Առաքելարան» է ըստ կրթկնագիր Ձեռագրին Ազաթանգեղի Մխիթարեանց Վիեննայ. «Ո՛ր որ ուստեք որ զայս նորոգատուր զառաքելաբան շնորհս յանձին ցուցանելով, այնպիսին աստուածեղէն շնորհաւ երեսեցաւ». տես Հ. Գար. Զ., Հայկ. Հին Դպր. Պատմ. կրեսք 212—213: Նոր Հայկազեանն ուղիղ գրած է «Ձառաքելաբար շնորհս յանձին ցուցանելով». տես անդ Առաքելարար:

—Յերես 298, յաւել ի ԴԻՏ. «Նոյնպէս եւ Յոհան կաթողիկոս, Պատմ., կրես 24, Դղեակ-ընրդ հասկացած է, եւ ոչ Դղեակ ընրդի. «Իսկ միւսն (Գրիգոր) յետ . . . զհնգետասան ամ լինելոյ ի խոր վիրապին ի դղեակ ընրդին որ յԱրտաշատ, ելեալ ի խորսց թունաւորացն՝ արտափայլեցաւ ի փրկութիւն մեզ»: Տես եւ զյաջորդդ. «Կառարեցաւ Սուրբն Յովսէփ . . . մերձ առ սան լերինն մեծի Մասեաց, հանգէպ Արտաշատ քաղաքի եւ դղեակ ընրդի». Վկայութիւն Սրբոյն Յովսեփայ Նոր Վկայի. Արարատ, 1897, Յունուար, կրես 47 ը.

Առաջին թերթ սրբազրութեան մատենիս եհաս առ իս ի Ստորջնով ի 27 Յունիսի 1897. սրբազրութիւն 23-դ թերթին ի 26 Մայիսի 1899: Ջսրբազրութիւն մնացեալ թերթերուն պիտի կատարեմ թէ ոչ՝ Աստուած միայն զիտէ: Անշտփ շնորհակալ եմ Մեծարդոյ Տ. Գիւտ աւագ քահանայի Ազանեանց՝ որ ամենայն

ջանիւ եւ խնամով սրբազրեց զառաջին փորձս իւրաքանչիւր թերթի: Յերես 128, տող 14, եւ յերես 160, տող 9 ի ստորէ, փոխանակ «Հրաժարիմ»՝ կարդն «Հրաժարեմ»: Յերես 131, տող 2 ի ստորէ, փոխանակ «զրարերարն (տպ. զրարերարն)»՝ կարդն «զրարերարն (տպ. զրարերարն)»: Զայլ մանր վրիպակս տպագրութեան աւելորդ կը համարիմ նշանակել:

Մատենիս մէջ յիշատակեալ հայերէն գրոց համառօտագրութիւնքն յայտնի են բանասիրաց. ըսեմ միայն որ «Քեր. Զայլ.—Այտըն.» համառօտութեամբ կ'իմանամ զայն Քերականութիւն Հայկազնեան լեզուի՝ զոր յօրինած է Հ. Վրթանէս Զայլիսեան եւ սրբազրած Գեր. Հ. Արսէն Վ. Այտընեան, Վիեննա, 1885:

Սրտազին շնորհակալութիւնք առ Մեծապատիւ Տ. Աւարիլ Ծատուրեանց՝ որ պարզեւեց ինձ հազար փրանկ ի վարձատրութիւն երկասիրութեանս, հատուցանելով միանգամայն զծախս տպագրութեանն. — առ Վսեմական Տ. Կարապետ Եզեանց՝ որոյ միջնորդութեամբ ընկալայ զհազար փրանկն. — եւ մանաւանդ առ ՚՛ Սիրելին՝ որ կարողացոյց զիս ձեռնարկել յերկասիրութիւնս եւ հատուցանել զայն յաւարտ անզրաղ ի նիւթական հոգոց: Լուսաւորէ՛ Աստուած զհոգիդ, ս' Ամենաբարի եւ Ամենասիրելի:



**ԿՈՐԻՆ ՎԱՐՓԵՊԵՏ**

Է Ի

**ՆՈՐԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ**

**Փ Լ Ո Ի Խ Ա**

Նախաշաւիղ.—Կորին Վարդապետի վերայ տեղեկութիւնք, որչափ ունինք.—Միակ մատենագրութիւն Կորեան հասեալ առ մեզ՝ Վարք Երանելւոյն Մաշտոցի Վարդապետի, եւ միակ թարգմանութիւն Նորա յիշատակեալ ի նախնեաց՝ Սրբոյն Կիրղի Երուսաղեմացոյ Ապաշխարող կարգել եւ արձակել ի մեծի շինգաբաթին.—Քննութիւն Վարուցն Մաշտոցի պատմաբանական եւ լեզուաբանական հայեցմամբք.—Թարգմանութիւնք զորս եւ Կորեան կը համարիմ, Գիրք Մակաբայեցոց, եւ թաղ Աղեքսանդրացի, Ազաթանգեղոս, եւ Փաւստոս Քիւզանդ.—Ծրագիր զորոնս։

Տախաշաւիղ.—Ամենայն որ որ կը սիրէ զայն սրանչի շայ լեզուն՝ որով զրկցին Մահակ եւ Մաշտոց եւ իւրեանց ձեռնսուն աշակերտաց դասն, կը բաղձայ միանգամայն զիտել թէ ոչք եղած են արդեօք թարգմանիչ այն ասորի եւ յոյն ընագրաց՝ զորս մեք հայերէն կը կարդանք եւ կ'ուսումնասիրենք, եւ չենք յագնար ոչ կարդալով եւ ոչ ուսումնասիրելով։ Թարգմանութեան արուեստն այնչափ կատարեալ, եւ հայերէնն այնպէս զեղեցիկ է եւ համեղ, զլիսուորապէս ի յունէ թարգմանութեանց մէջ, որ աւելի մատե-



նագրութիւն եւ զերազանց մատենագրութիւն կոչելի են՝ քան թէ թարգմանութիւն՝ Սուրբ Գիրք մեծագոյն մասամբ, եւ Յոհաննու Ռսկերերանի բաղում Մեկնութիւնք: Մինչև ցայսօր շայտնուցաւ յիշատակարան մի՝ որ ծանուցանէր մեզ Տշղիւ, թէ զոր բնագիրս ի Հայ փոխեցին Սահակ եւ Մաշտոց, եւ զորս Առաջին Խմբից <sup>1)</sup> աշակերտքն, կամ Առաջին Թարգմանիչքն, Եգնիկ, Կորիւն, եւ ընկերք նոցա: Միայն Կարգաւորութիւն Արհմութիւնաբեր Յուցակի <sup>2)</sup> վերնագրով համառօտ գրուած մի ունինք արդ ի ձեռին, յորում նշանակեալ են եկեղեցական պաշտամանց քանի մի կարգք, յայտարարութեամբ անուան իւրաքանչիւր թարգմանչի: Բայ յայտմանէ, իբրև հաւանական՝ Սրբոյն Սահակայ կ'ընծայուի թարգմանութիւն Հնգամատենին, մարգարէութեանց եւ նոր Կառկարանին. մինչդեռ զԱռական զիրս կ'ըսուի թէ Սուրբն Մաշտոց թարգմանած է՝ օգնականութեամբ Յոհաննու Եկեղեցայնոյ եւ Յովսէփայ Պաղնացոյ (1) <sup>3)</sup>: Իսկ իբրև սասոյգ կը յիշատակուի եւեթ Աբրահամ Զենակացի (Խոստովանոյ), ընկերակիցն Սրբոց Դեօնոքեանց, որ յետ կիսոյ Հինգերորդ դարուն թարգմանած է յասորի լեզուէ զՄարութայի Պատմութիւնն Արեւելեան Վկայից, եւ զնորին ձառ ի Վկայսն Արեւելից: Առաւել քան դասս ոչ ինչ ոչ գիտեմք:

Ժամանակիս այն բանասիրաց՝ որ մասնաւոր իմն օրինակաւ Հինգերորդ դարու Հայ գրականութեամբ կը պարագին, եւ կը ցանկան նոյն դարուն բաղմաստուն թարգմանութեանց զոնէ զօմանց աշխատասիրողներն իմանալ, կը մնայ ուրեմն մի միայն հնարք. որ է մանր կրկտել զննել զո՞՞ և զյատկարանութիւնս (զգ. idiotisme) այս ինչ բնագրի՝ որոյ յայտ է մատենագիրն, և այն ինչ անանուն թարգմանութեան, և ի ծանօթէն զուշակել

1. «Մեսրոպայ կացեալ յանապատ եւ ի հովանաւոր տեղիսն՝ որ Ըաղզամքն անուանին, բովանդակեաց զվարդագիտութիւնս առաջին առելոց Խմբիցն»։ Մ. Խոր. Պատմ. Գ. կ. 541—542։

2. Զայս Յուցակ հրատարակած է Հ. Գար. Զ. ի Մտնդր. 246—248։ Տես եւ Հ. Միք. 2ամշեան, Պատմ. Հայոց. Հ. Ա. 768—769։

3. Յոյր թուանշանքդ Տեղեկութեանց եւ լուսարանութեանց համար են, զորս տես ի վերջ կոյս մատենիս։

զաննել՝ դանձանօթմն: Ըստ այսմ՝ Թոռնեան չ. Թաղէսոյ <sup>1)</sup> կարծեօք՝ Վիւրղի Եղեքսանդրացւոյ Սուրբ Գրոց Մեկնութեանց թարգմանիչն է եղնիկ Կարբացի, եւ շատ հաւանական է իւր կարծիքն: Ըստիկ իւր լիօտքերն. «Վիւրղի Եղեքսանդրացւոյ Մեկնութիւն Մովսիսի գրոց, Յետուայ, Գատաւորայ, Թագաւորութեանց եւ այլն: Ըստ եւ եղնիայ գրոց մէջ՝ եթէ իմաստից եւ եթէ մանաւանդ բաւերու եւ դարձուածներու նկատմամբ այնչափ մեծ է նմանութիւնը, որ կարծենք թէ երկուքը միեւնոյն գրչէ ելած են, ինչպէս վերջին ժամանակներս արդէն ստուգուած կը համարուին»:

Եյսպէս եւ ես յիս ցուցանելոյ Քննասիրի Բ. Գրական (երեսք 29—63) թէ յերկրորդ Աշակերտաց կարգէն քանի մի թարգմանութեանց, Սուս Գալլիսթենեայ Պատմութեանն Եղեքսանդրի կ'ըսեմ, Փիլոնի երբայցեւոյ Մեկնութեանց եւ ձառից, Գրիգորի Նաղիանդացւոյ ձառից, եւ Գրիգորի Նիսացւոյ ձառին ի Մանկունսն Բեթղէնեմի երկասիրողն է Մովսէս Խորենացի, առաջիկայ գործովս սլիտի ցուցանեմ թէ յԱռաջին Աշակերտաց ժամանակէն չորս պատուական թարգմանութիւնք՝ Կորիւն Վարպետի արդիւնք են:

Կորիւն Վարդապետի վերայ տեղեկութիւնք, որչափ ունինք.— Կորիւն <sup>2)</sup>, գորոյ ոչ գաւառն գիտանք եւ ոչ դժննդեան տեղին եւ զթուականն, Սրբոյն Մաշտոցի աշակերտաց Առաջին Խմբից մէջ «կրտսերագոյն» է, ինչպէս ինքն իսկ կը վկայէ զանձնէ <sup>3)</sup>: Յեա ուսանելոյ զասորի լեզուն—եւ թերեւս զպարսիկն—ըստ ամենայն հաւանականութեան առ ռոտ վարդապետին իւրոյ Մաշտոցի <sup>4)</sup>, զնացած է ի Կոստանդնուպոլիս հանդերձ Դեռնդիւ:

1. Հատ. Ընթերց. Առաջին Գատ, 20 (ի ստորէ):

2. Եյս անուամբ երկու անձինք միայն կը յիշուին ի գիրք մեր. մին ի Հինգերորդ դարու, զորմէ բանքս են. միւսն՝ ի սկիզբն Ռեթերորդին, Կորիւն Երծրունի, Նախարար, զոր սպանին Արարացիք. տես Դեռնդ Երէց, Պատմ. 34:

3. Վարք Մաշտոցի, 1:

4. Թէ Սուրբն Մաշտոց տեղեակ էր ասորի եւ պարսիկ լեզուաց, կը յայտնուի ի բանից Մ. Խորենացւոյ, Պատմ. Գ. խէ. 501. Ժբ. 517: Գիտենք եւ ի Կորիւնէ, Վարք Մաշտոցի, 6, (յորմէ և Դ. Փարպեցի, Պատմ.





բատ Մ. Խորենացւոյ <sup>1)</sup>: Յունական այլեւայլ ձեռագրաց հետ բերին Թարգմանիչքն նա եւ զԿանոնս ժողովոցն նիկիոյ եւ եփեսոսի <sup>2)</sup>, եւ զԹուղթս Գրողի՛ր՝ Կոստանդնուպոլսի հայրապետին, Կիւրղի Աղբսանդրացւոյ, եւ Ահակայ՝ Մելիտինոյ եպիսկոպոսին՝ առ Սահակ եւ Մաշտոց <sup>3)</sup>:

Ձկնի դարձին ի Կոստանդնուպոլսէ, Կորիւն հասած է վարդապետական աստիճանի (3), եւ իբր հաւատարիմ «արբանեակ» միշտ անընթեք գանուած երանելոյն Մաշտոցի <sup>4)</sup> մինչեւ ի մահնորին՝ որ հանդիպեցաւ յ' 17 Փետրուարի 439 ամին (4): Ազգարայ Փարպեցւոյ ստեպ ստեպ բնին Այրն ցանկաւրի Կորիւն, Այրն հոգեւոր Կորիւն, երանելի այրն Կորիւն, երանելին Կորիւն <sup>5)</sup>, կը ցուցանէ թէ յոյժ բարի համբաւ թողած էր Կորիւն իւր վարուց սրբութեամբ, որ մինչեւ անգամ տեսլան արժանացած կը համարուի ի Փարպեցւոյն. քանզի իստելով ի Պատմութեանն, և 119—120, զԿեանդէ Վանանդեցւոյ՝ կ'աւանդէ Ազգար, թէ «Յառաջագոյն ժամանակի կալով ի քուն սրբոյն (Կեանդի), այրն Աստուծոյ Մաշթոց, վարդապետն նորին, հանդերձ աշակերտաւք (տալ. հանդերձ եւ աշակերտաթ) իւրովք երանելեան Կորեամբ եւ Արձանաւ, տեսանէին արթնութեամբ՝ ճառագայթեալ շուրջ գնովաւ լոյս սաստիկ, որք անդէն եւ անդ ծանեան երանելի արքն Սուրբ Հոգւով զվախճան սրբոյն թէ նահատակութեամբ կատարի: Չոր թէպէտ եւ նմա ոչ յայտնեցին զսքանչելագործութեան զտեսութիւնն, սակայն ի բազում շնչին՝ պատմեալ հոչակեցաւ բան երեւմանս այսորիկ»: Յաճախ եւ սյլ մատենագիրք մեր երբ կը յիշեն զԿորիւն, շին մոռանար կցել նա եւ վերագիր մի՛ յայտարար իւր առաքինակրօն վարուց. օրինակ իմն, երանելի

1. Պատմ. Գ. կա. 547.

2. Կորիւն, անդ, 21: Մ. Խոր. Պատմ. Գ. կա. 547, միայն զԿանոնս եփեսոսի ժողովոյն կը յիշէ:

3. Մ. Խոր. Պատմ. Գ. կա. 546, 547.

4. Կորիւն, անդ, 28:

5. Պատմ. 25, 63, 119:

(ին Կորին 1), Սուրբն Կորին 2), Սքանչելի այրն Կորին 3):

Միակ ժատննագրութիւն Կորեան հասեալ առ մեզ՝ Վարք երանելոյն Մաշտոցի Վարդապետի, եւ միակ թարգմանութիւն նորա յիշատակեալ ի նախնեաց՝ Սրբոյն Կիրողի երուսաղեմացոյ Ապաշխարոյ կարգել եւ արձակել ի մեծի Հինդշարաթին.— Ժամանակն ոչ այլ ինչ հասուցած է մեզ յինքնագիր վաստակոց Կորեան՝ բայց եթէ զՊատմութիւն վարուց եւ մահուան սրբոյ առն երանելոյ Մաշտոցի 4) վարդապետի, մերոյ Թարգմանչի, արարեալ ի Կորին Վարդապետէ՝ յաշակեբտէ նորին. զոր համառօտելով կը կոչեմ ի սմին գրութեան Վարք Մաշտոցի: Արիչ պատմական գրուած մի եւս կը վերագրուի Կորեան ի Կիրակոսէ Գանձակեցոյ, որ կ'ըսէ ի Պատմութեան խրում, 17. «Եւ Կորին՝ զՊատմութիւն սրբոյն Մեսրոպոյ եւ այլ ժամանակաց»: Բայց կարելի է որ քանք Կիրակոսի արդիւնք են սխալ հասկացողութեան Թովմայ Երծրունոյ մի հատուածին (5), քանզի այլուր չյիշատակուիր այլ ժամանակաց Պատմութիւն Կորեան. Իսկ ի թարգմանութեանց՝ յահուան նշանակեալ կը գտնենք ի վերոյիշեալ Կարգաւորութեան Աւրնութիւնաբեր Տուցակի զՍրբոյն Կիրողի երուսաղեմացոյ

1. Ք. Երծրունի, Պատմ. 82:

2. Վերջ վարդապետ, ի Գանձին սրբոց Թարգմանչաց. «Տոմարի Գաղնացի, նորոն վարժակից եղնակ Կողբացի. Անյոզին Գաւթի, եւ սուրբն Կորին», տես Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, Հ. Ա. 326—327. Վերջոյ թուի ինձ Սկիւտացին կամ Լամբրունեցին յ'ՓԳ դարու, որ բաց ի Մեկնութեանցն ծայեայ եւ Գործոց Առաքելոց՝ գրած է «Եւ Գանձս յուրիս տունից տէրունականաց եւ սրբոց Աստուծոյ», տես Հ. Գար. 2. Հայկ. Մտնգիտ. 139: — Ի Գանձարանի գրելոյ յ'ՓԳ դարու, որ այժմ գտանի յԱզգային Մասնագորանի Պարիս քաղաքի, կայ Գանձ մի ի Հառաստն Վկայս, որոյ սկզբնատառն յօդն գտնուին «Վերջ Անեցի»:

3. Կիր. Գանձակեցի, Պատմ. 3:

4. Տղապիրն Մեսրոպոսայ. փոխեցի Մաշտոցի, զի Կորին ամէնուրեք Մաշտոց կը կոչէ զվարդապետ իւր Մաշտոց գրութիւնն լուսադոյն թուի ինձ քան զՄաշտոց, Մաշտոց. կայ գրեալ եւ Մաշտոց (Հ. Գար. 2. Մտնգր. 664):

«Այաշխարող արձակել»-ոյ կարգն, զոր թարգմանած է Կորին աջակցութեամբ Երձանայ, «Այաշխարող կարգել» եւ արձակել ի մեծի շինդարաթիւն Երանելոյն Կիրողի երուսաղեմացոյ գրեալ ի դուռն արքայն Սիոնի՝ ի քսան եւ մի ամի հայրապետութեան խրոյ 1), յառուրն յորում ընծայեցուցանէր զեղովմայեցիսն (կամ զԵգիպտացիսն) յԵսաուած. եւ Երձան եւ Կորին Թարգմանիչք բերին ի Հայտ՝ 2), անուշտ ի Հայ թարգմանեալ: Այս Այաշխարողարձակէից կարգն, որ մինչեւ ցայժմ կը գտնուի կարծեմ ի Զեազգիքս, անծանօթ է ինձ, եւ արտաքոյ կը մնայ իմ խուզարկութեանց:

Քննութիւն Վարուցն Մաշտոցի պատմաբանական եւ լեզուաբանական հայեցմամբը.— Մաշտոցի Վարքն, հիմն բովանդակ առաջիկայ գրութեանս, եւ զոր Կորին յորինած է իբր յամի 443—444, ի խնդրոյ աշակերտակցացն, եւ մասնաւորապէս՝ կաթողիկոսական տեղապահ Յովսէփայ Վայոյձորեցոյ 3), կը խ մատուցու ունի. ա. Յառաջարան (կամ ինչպէս մատենագիրն կ'անուանէ՝ նախակարգ բան, ե. 6,) վեց կրես. ք. Բուն կենսագրութիւն Մաշտոցի, քսանուերկու երես. գ. Վերջարան, կէս կրես: Կորին կը ներկայանայ մեզ յայսմ փոքրիկ մատենագրութեան իբր այր ծայրացեալ հոգեւորութեամբ, սնեալ եւ պարարեալ Սուրբ Գրովք, այլ յոյժ տկար՝ իբր Գառմարան: Անդէն ի գլուխ Յառաջարանին «առուել քան զկար իւր» կը համարի պատմել զվարս Մաշտոցի, եւ կը փութայ խնդրել ի սատարութիւն զաղօթս ուսումնակցացն, որպէս թէ քանի մի էջ բան գրելն՝ ստուգի մարդկային կարողութեանէ վեր ըլլար եւ աստուածեղէն շնորհաց օգնականութեան կա-

1. Այսինքն յամին 371. զի Սուրբն Կիրեղ հայրապետ կարգեցաւ երուսաղեմի յամին 350:

2. Տես. Հ. Գար. 2. Մանդր. 246: Փոխանակ Երձանոյ գրեալ է անդ Արշեւան. իսկ ի Հայկ. Հին Դպր. Պոմ. 277, Արշեւան կամ Արզեւան, որ աւելորդ թուի ինձ բոնին՝ թէ Կորեան ընկերակից Երձանն անշուշտ գատ է համարուել Երձան կամ Աղան Երձորունիէն՝ և այլն: Զամէն, Պոմ. Հայոց Հ. Ա. 769, կը գրէ Լ'նձակ. և զնոյն կ'երկրորդէ Հ. Գար. 2. յերես 291 իւր Հայկ. Հին Դպր. Պոմ.:

3. Վարք Մաշտոցի, 1:

բօա: Յետոյ դարմանալի երկիւղածութիւմամբ շհամարձակիր ձեռնարկել ի գործ իւր՝ մինչև որ Հին և նոր Կտակարանաց խիտ առ խիտ վկայութիւնք շքաջալերեն զինքն՝ թէ չիք ինչ անպատեհութիւն առ ի «գրով նշանակել զվարս արանցն կատարելոց», Ե. 2: Այս վկայութիւնք հինգ երեսէ աւելի տեղ կը գրուեն. և եթէ նկատենք որ Մաշտոցի բուն կենսագրութիւնն հազիւ քոստուերկաւ երես կը լեցնէ, կը ստիպուինք բոել թէ այսպիսի կարճառօտ գրուածոյ համար այնչափ երկայն Յառաջարանն՝ ամէն համեմատեմէնէ դուրս է: Ի գործ կը փափագինք հանդիպել ի կենսագրութեանն Մաշտոցի պէսպէս մանրամասնութեանց՝ որ մեզ վերջնոցս համար մեծ կարեւորութիւն ունին և իրաւամբք կը զարթուցանեն զմեր հետաքրքրութիւն Քանի ամաց էր Մաշտոց երբ մտաւ յարքունի դիւանն (Խորոզմայ Գ-ի) և սրչափ ժամանակ մնաց ի դիւանին, Ե. 6—7.— Ինչ էին առ Գանիելի Ըսորոյ գտնուած հին հայերէն նշանագիրքն՝ զորս ժամանակաւ գործածած էին Հայք, բայց իբր անշահ՝ վերջապէս մէկգլի թողած, Ե. 8, 9.— սէր հնարեց Երանելին զիւր նշանագիրս, և քանի էին այնոքիկ, երեսուն և վեց թէ տասնուչորս թէ եօթն, Ե. 10.— սր Ըսորի Սուրբ Հայր մատենագրութիւնք են, զորս Յովսէփ Պաղնացի և Եզնիկ Կողբացի թարգմանեցին յեղևսիտ յասորի լեզուէ, Ե. 20.— զորոց «հայրապետաց արբոց զճշմարիտ իմաստութիւնն» ի յունական բարբառոյն ի հայերէն դարձոյց Սուրբն Սահակ, և սչք են «չատմեկնութիւնքն Գրոց» զորս թարգմանեց լնգ Եզնրկայ, Ե. 21.— յորում տիտ վարձանեցաւ Սահակ «լցեալ աւուրքք երկայն ժամանակաւք», Ե. 25. նմանապէս Մաշտոց իւր «ձերունական (տպտէրունական) հասակին» սր տարւոյն մէջ ևլ յաշխարհէս, Ե. 26. և այլն և այլն. բնաւ ամենեւին այսպիսի էական խնդրոց վերայ չըսեր ոչ մի ինչ լիով, ոչ մի ինչ ճշգրտիւ, նա որ քաջ տեղեակ էր այսմ ամենայնի և պարաւր տեղեկացնել և գլխաբնս: Իսկ ժամանակագրութեան մասին,—բաց ի Վաւաշապհոյ թագաւորութեան հինգերորդ, եօթներորդ և ութերորդ տարիներէն, և քանի մի Սասանեան արքայից թագաւորութեան տարիներէն՝ որովք կը ծանուցանէ թէ երբ մտաւ Մաշտոց ի կրօնաւորական կեանս, երբ սկսաւ Հայոց Դպրութիւնն, և երբ ևլ յորում աւուր նաւասարդ և Մեհեկանի ամոց վարձանեցան երանելի ամուլքն



Սահակ եւ Մաշտոց,—գժամանակ այլոց ոչ ինչ նուազ կարեւոր դիպաց երբեք շնչանակեր հաւաստեալ, այլ բաւական կը վարկանի ըսել *Յետ այնորիկ, և. 7, 14, 18, 20, 25. Այնուհետեւ, և. 7, 8, 16. Զայս ամենայն առնէր ոչ սակաւ ժամանակս, և. 7. Յայնժամ, և. 12, 20. Յայնմ՝ ժամանակի, և. 12, 18, 25. Յորում՝ ժամանակի, և. 15. Յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, և. 15, 21. Առ որով ժամանակաւ, և. 20: Այսպէս բոլորովին անգէտ ենք թէ Մաշտոցի աւետարանութիւնն ի կողմանս Մարաց, և. 12,—ի Գողթն, ի Սիւնիս, ի Վիրս, ի գաւառս կէս ազգին Հայոց ի բաժնին Յունաց, և. 14—16,—յԱզուանս, և. 18—19, սր ամաց մէջ կատարուեցաւ. թէ յորում ամի գնաց Մաշտոց ի Կոստանդնուպոլիս առ Թէոդոս Բ կայսրն եւ առ հայրապետն Ատտիկոս, և. 17, եւ նոյնպէս Եգնիկ եւ ինքն իսկ Կորիւն ի նոյն քաղաք, և. 21. այլովքն հանդերձ:*

Ապաքին Կորեան նոպատակն եղած է զրկել լոկ զՊատմութիւն վարոց եւ մահուան իւր Վարդապետին. բայց Մաշտոցի կենսագիրն ոչ ինչ կը մեղանշէր եթէ ուրեք ուրեք ակնարկէր համառօտիւք այն մեծամեծ քաղաքական անցից՝ որ ի մահուանէ Վռամշապուհոյ մինչև ցտահ Սահակայ եւ Մաշտոցի պատահեցան ի Հայաստան աշխարհին: Արտաշէս Գ-ի իզգասիրութեան շնն հանգուրթեր սրբասէր—բայց *անմիտ եւ ազգատեւաց*—նախարարքն, եւ չարախօսելով զիւրեանց թագաւորէն առ Վռամայ Հինգերորդի՝ գնորին զահրնկեցութիւն կը խնդրեն. կը կործանի Արշակունեաց աթոռն. կաթուղիկոտական պատիւն կը յափշտակուի ի Սրբոյն Սահակայ՝ որ էր ի առնմէ Գրիգորի Լուսաւորչի, եւ կաթուղիկոս կը նստին առանց արժանաւորութեան՝ բանսարկու չերէցն Սուրմակ Արծկէացի, Բրբրիչոյ եւ Ջմուէլ վատթար Ասորիք: Մինչդեռ Հինգերորդ զարու յետնադոյն պատմիչք՝ Ղազար Փարպեցի եւ Մովսէս Խորենացի՝ ազիտզորմ սրտաւուչ բանիւք կ'ողբան կ'աւաղեն զբարձումն Հայոց թագաւորութեանն եւ զզրկումն մեծին Սահակայ, Կորիւն՝ ականտտես վկայ ժամանակին բոլոր թշուառութեանց՝ համբ եւ լեզուակապ կը մնայ. «ոչ մի բան եւ ոչ կէս բանի, եւ ոչ դոյզն յիշատակ ինչ»<sup>1)</sup> կը նուիրէ հայրենի

երկրին անլուր պիտից, հէք արքային դատապարտութեան, մանաւանդ մեծանուն կաթողիկոսին հալածման, որ թեբեւս աւելի քան զՄաշտոց հոգի ինձամ տարած էր իւր դատախարակութեան: Այս ամենայն ծանր ծանր թեբութիւնք կը պարտաւորեն զիս ըսել թէ Վարդը Մաշտոցի իբրև Պատմական գրուած չունի մեծ արժէս. ձառ մի է այն, եւ ոչ Պատմութիւն, եւ վասն այնորիկ մի ոմն յերկրորդ Աշակերտաց հարկ դատած է ի նորոյ գրել զՊատարեալ Պատմութիւն Սահակայ եւ Մեսրոպայ<sup>1)</sup>:

Եկեսցուք արդ ի լեզուարանական: Ճռում, պերճ, վեհմ, աւասիկ Պոսեան հայերէնն ի Մաշտոցի կենսագրութեան: Ինչ յորդութիւն քաջահնչիւն բառերու. որպիսի ճախարակեալ պարբերութիւնք (շղ. période). ո՞րքան դարդք, ո՞րչափ ձեւք. եւ պէսպիսութիւն ասացուածոց. ինչպէս ձայնդ կը հանդչի յաւարա մէն մի նախադասութեան՝ որպէս թէ ոգորկ ստանաւոր մի կարգայիր. միանգամայն իւր պաճուճարան առատութեան հետ՝ ինչպէս լաւ գիտէ գերբայներով հատու եւ սեղմ դարձուած առ իւր զարգացարաց արտայայտութեան, եւ ո՞րչափ մեծ արուեստիւ կը զուգէ մատենագրական բարձր լեզուին յատուկ ձեւոց եւ շարուածոց՝ ընտանեկան խօսից ձեւեր եւ շարուածներ:

Սակայն անաչառ քննադատին պարտքն է գովելով հանդերձ զմատենագրին առաւելութիւնս՝ խօսել նա եւ զպակասութեանցն եթէ կան: Եւ որովհետեւ ս եւ է մատենագրի առաւելութիւնք կամ

1. Տես Ամուստը, Պրակ Բ. 17—18:—8. Ցարութիւն Ըմաւոնեան յիւրում Ազդարար ամսագրին, Մաղբաս, 1795, ի Յանկին Մատենագրութեանց եւ Բարգմանութեանց նախնեաց, երեսք 188—192, կը գրէ. «Սուրով Թարգմանիչ, որ է Պատմ. Սրբոյն Սահակայ հայրապետին», (տես չ. Գր. Գալմբեարեան, Պատմ. Հայ Լրագր. Ե. 206. տես եւ չ. Գար. 2. Հայկ. Հին Դար. Պատմ. 278, որ կը նշանակէ զՍուրովայ Պատմ. Սրբոյն Սահակայ, բայց ըստ իւր եղբերի սովորութեան՝ շքեք թէ ուստի կ'առնու զտեղեկութիւնց, եւ տարակուսանաց կը մատնէ զչ. Յ. Տաշեան, Հանդէս Ամսօրեայ, 1892, 258 ա. ծան. 5): Կիբակոս Գանձակեցի երկիցս կը յիշէ ի Պատմութեան իւրում, Ե. 3, 16, զՍուրով ի շքեք Հայ Պատմչաց: 2դրանմ թէ մի եւ նոյն է յիշատակայն ի Ըմաւոնեանէ Պատմութիւն Սըրբոյն Սահակայ հայրապետի յօրինեալ ի Սուրովայ Թարգմանչէ, եւ Կատարեալ Պատմութիւն Սահակայ եւ Մեսրոպայ՝ յոր կ'ակնարկէ գրիչն Բ. հասորոյ Հայկական Սոփերաց, Ե. 37:

պակասութիւնք ի համեմատութենէ ընդ այլում մատենագրի լաւ եւս կը յայտնուին, յայտ մասին բախտաւոր ենք, որ զԿորնան ինքնագիր *Վարս Մաշտոցի* կարենք կռակ ընդ ինքնագիր *Ճառս ընդդէմ Աղանդոց* եղբրկայ Կողբացոյ: Եղնիկ և Կորին ոչ միայն ժամանակակիցք են, այլ եւ սննդակիցք և ուսումնակիցք. բայց ոճով կը զանազանին մեծապէս: Զարդագիր են եւ երկրբին, այսու տարբերութեամբ որ եղնիկ ոչ կրնք կ'ախորժի «սիժեւսիժել» տուժելով զյատակութիւն (զգ. clarté) մինչդեռ Կորեան զարդերն կ'աղօտացնեն յաճախ զմիտս բանին: Աստճինն՝ ի սկզբանէ ցկատարած իւր գրութեան՝ կը նմանի հեղատան վտակի, որոյ ակտեակիտ ջրերուն միջէն պայծառապէս կը տենենք զյատակն, իսկ երկրորդն՝ շատ անգամ կարծես սոլի մի է որ կը հոսի ծածկեալ ծաղկներով, և այս պատճառաւ աչք մեր չկարեն թափանցիկ լինել ընդ խորութիւնն: Աս եղբրկայ միշտ կանոնաւոր է քերականութիւնն<sup>1)</sup>. Իւրաքանչիւր մասն բանի՝ որոշ պաշտօն մի կը կատարէ և անայժմաք ի նպատակն կը դիմէ. իւր ամէն բարդութիւնքն՝ յայտնի նշանակութիւն ունին. կարճ բան, ի վերջակիտէ ի վերջակէտ՝ բայ, գոյական, վերագիր, ձեւ, դարձուած, ամենայն ինչ վճիտ է իրրե զվանակն (զգ. cristal): Այսորիկ աղագու անաշխատ կը հասկանանք զիւր զիրան, և դիւրաւ կարող ենք թարգմանել յամենայն արեւմտեան բարբառս: Իսկ առ Կորեան չեն պակասիր ասացուածք որ չըլլան կամ անկանոն կամ տարտամ (զգ. vague), բացատրութիւնք և բարդութիւնք զորս անհնար է նոյն իսկ աշխարհաբար հայերէնի դարձնել, թող թէ օտար լեզուի: Այդ բացատրութեանց և բարդութեանց իրր օրինակ նշանակեմ. «Յիշատակարանս ծաղկեցուցանել, և. 1. Արուեստախաւսել, 2. Աստուածամերձ աստուածամուլս կեանք, 2. Հաճոյական արուեստ, 2. Աստուածաիրուն արուեստականք, 4. Քրիստոսամեծար ասոյնջական, 5. Շնորհապատում զրեալք, 6. Թեւամուլս միջամուլս [լինել] յատուածատուր հրամանացն հանգամանս, 7. Ի ձեռն առնուլ աստուածագործ մշակութեամբ դաւտարանական արուեստն, 12. Աւետարանագործ վարդապետութիւն, 15. Հոգևոր

1. Ոչ սակաւ անքերական ասացուածք ի մատենկան չքննող հայկաբանիս՝ վերագրելի են անհմուտ ձեւագրողաց: (Ի տարբերէ) Կատարեմ

սիրոյն եռանդամբ զաղա եւ զժանդ շարաւահոտ դիւացն ի բաց [քի-  
րել], 15. Աշխարհամուտ դուռն, 17. Ժողացուցանել զվարդապետու-  
թեանն զխորութիւն, 18. Վայելի ի հիւթ եւ ի պարարտութիւն  
վարդապետութեանն, 20. Պատկահամբար (տպ. պատկահաս) քրիս-  
տոսադիր կէտ, 23. Ամենայն անտուածեղէն զանձուցն վայելչու-  
թեամբբ լցեալք պարարտացեալք, 24. Վայելչացեալ անտուածա-  
րեր պողոցն բարութեամբբ», 25. Ապա շին ինչ զարմանք երբ  
Գերմանացի ոմն, Բ. Վելտէ (B. Welte), յիւր աղղային լեզու  
փոխելով զՎարս Մաշտոցի՝ կը ստիպուի բազում ուրեր շեղիլ ի  
հաւատարմութենէ եւ կրճատել ու յաղաւել զընագիրն <sup>1</sup>։ Գար-  
ձեալ շին ինչ զարմանք երբ մերազգին Յոհաննէս Ռափայէլ էմին,  
յորդորեալ ի Վիկտոր Լանգլուայէ սր թարգմանէ զայն ի գաղղիե-  
րէն, յանհաւարին զժուարութենէն պրծանելոյ այլ հնարս չգտներ՝  
բայց եթէ զվաւերական Կորիւնն իրբ խտտան ի միակողմն թողուլ  
եւ Սուտ—Կորիւն <sup>2</sup> մի ընտրելագոյն հաժարել։ Յայանի շէ  
թէ սի է հեղինակ այս Սուտ—Կորեան. թուի վարդապետ ոմն ԺԱ  
կամ ԺԲ զարու, որ տեսնելով թէ սակաւուց հասկանալի է Կորեան  
բնագիրն՝ ջանացած է պարզել զայն, եւ միանգամայն՝ ըստ իւր  
խելաց՝ կատարելագոյն Վարք Մաշտոցի մի ապ մեզ ի վայելումն,  
քաղելով ի Պատմութենէն Մ. Խորենացոյ, եւ զանջրպետս  
երկու բոլորովին աննման մտանապրացոյ լեցնելով իւր կարկա-  
տանօր։ Թէ սրջափ այլանդակ երեսոյթ կ'ընծայեցնէ յայսպիսի

1. «Il existe une traduction allemande de la «Vie de Mesrob» par Gorioun, due à M. le Dr. B. Welte, et qui fut publiée à l'occasion du vingt-cinquième anniversaire de l'avènement au trône de Wurtemberg, du roi Guillaume I-er (*Gorioun's Lebensbeschreibung des hl. Mesrop . . .*, Tübingen, 1841, in—4°, 52 pages). Cette traduction, qui fut entreprise sur le texte publié en 1833 par les Mèkhitaristes de Venise, est enrichie de notes nombreuses. Seulement nous ferons observer que cette version n'est pas toujours très-fidèle, et que l'auteur a fait, à plusieurs reprises, des suppressions qui nuisent à l'intelligence du texte». V. Langlois, *Introduction (à la Biogr. de Mesrob, par Gorioun)*, Collection etc., t. II p. 4 a.—Ջգերմանական թարգմանութիւնդ Բ. Վելտէի եւ սեսած շեմ։

2. Նբատարակեալ ի Սոփերս Հայկականս, Հ. ԺԱ. 5—7, Գաղղիերէն թարգմանութիւն Սուտ—Կորեանդ ի ձեռն Յ. Ռ. Էմինի՝ կը գտնուի ի Վ. Լանգլուայի Collection եւ այլն, Հ. Բ. 9—16։



«հակառակ եւ չհամազգի երիվարաց լծեալ կանքն»<sup>1)</sup>, հայագէտք միայն կ'ըմբռնեն: Բայց նոյն իսկ այս պարզեալ Սուս—Կորեան թարգմանութեան մէջ կը գտնուին այնպիսի հատուածք՝ որ Գաղղիացոյ համար զուս galimatias են (6):

Նկատմամբ մթութեանն՝ որով առաւել կամ նուազ պատեալ է Վարքն Մաշտոցի յայլեայլ տեղիս, կարելի է որ յանցանքն զլիսաւորապէս տգէտ ընդօրինակողաց ըլլայ, որք անկարող հասնելոյ ի բարձրութիւն մատենագրին՝ խանգարած են բազում հատուածս: Յայդոցիկ զոմանս յաջորած եմ դարձնել ի ընկի կերպարանսն՝ այնպէս ինչպէս ելած են ի գրչէ Կորեան 1450 տարի յառաջ. այլք կը մնան անլուծանելի, եւ չգիտեմ թէ դո՞վ մեղադրեմ, զԿորիւն թէ զիւր տիմար գրագիրս:

Բաղձալի էր նա եւ որ ասացուածոց պէսպիսութեան միտ զնոց մատենագիր մի՝ որպիսի է Կորիւն, խորչէք ի միակերպութենէ կամ ի նոյնաձայնութենէ ի յաջորդ բանսդ. «Երանկիաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաւատարութիւն, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն, սքանչելական կենացն պայծառութիւն», եւ 2. կամ «Ռմն ընդունելի պտտարագաւ արդար կոչեցեալ: Եւ այլ ոմն հաճոյական արուեստիս (տպ. արուեստին)՝ ի վերայ ամենակույ մահուանն կենաւք երեւեալ: Եւ միւս ոմն . . . հանդերձ ամենայն շնչականաւք՝ տարեւոր ժամանակաւք նաւակաց պահեալ: Եւ միւսոյն յանկարծագիրս հաւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուածախալս գտնաւոր կատարեալ, եւ զուտիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ»: անդ. Զիարդ եւ իցէ, հանդերձ իւր քանի մի խճրճելի մասամբք, Վարքն Մաշտոցի է եւ պիտի ըլլայ միշտ երկրորդ հոյակապ յիշատակարան ինքնագիր մատենագրութեանց մեր Ռսկեղարուն, տուաճութեան պարծանքն մնալով ձառիցն ընդդէմ Աղանդոց: Փոքրիկ է Եղերկայ մատենիկն, եւ Կորեանն՝ փոքրագոյն, այլ երկօրին եւս բարձրը նշանակութիւն ունին Հինգերորդ դարու գոսական գրականութեան համար (406—462), եւ մեզ կը մատուցանեն կարի մեծ

1. Եղերկայ յիշատակարան մեզ շտապ — ստորագրող զգրագիր

2. Երանկիաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաւատարութիւն

3. Երանկիաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաւատարութիւն

1. Եղերկայ, ժառոք ընդդէմ Աղանդոց, 17, 18:

օգուտ իրր մի մի փորձարար՝ առ ի ճանաչել զզանազանութիւն  
պէտպէս թարգմանութեանց նոյն շրջանին։

Քարգմանութիւնք զորս եւ Կորեան կը համարիմ.  
Գիրք Մակարայեցւոց, եւ թագ Աղեքսանդրացի, Ազաթանգեղոս,  
եւ Փաւստոս Բիւզանդ. — Երդ ոմն՝ որ ուշի ուշով կը կարդայ  
զՎարս Մաշտոցի, քաջ միտ զնելով Կորեան գրական արուես-  
տին, եւ յետոյ կ'անցնի ի քանի մի թարգմանութիւնս Բակե-  
գարուն եւ զնոյն արուեստ ի նոսին կը գտնէ յար եւ նման, — այ-  
սինքն նոյնութիւն քերականական ձեւոց, զարդուց եւ աւելագրու-  
թեանց, նոյնութիւն բանից եւ բարդութեանց, բացատրութեանց  
եւ զարձուածոց, եւ առաւել քան զայդոսիկ՝ նոյնութիւն մանր  
մանր պատառիկներու երեք, չորս եւ հինգ բառերով, — ինչ  
պէտք է հետեւցնէ։ Պատասխանն յայտնի է եւ բնական, այսինքն՝  
թէ Վարդն Մաշտոցի եւ այն թարգմանութիւնք մի եւ նոյն ան-  
ձին են, որ ամէնուրեք ի կիր արկած է սեպհական բառս, ձեւս  
եւ բացատրութիւնս՝ անձանօթս այլ Առաջին Աշակերտաց, ըստ  
որում տեսանք ի Յառաջարանի գրոցս մանրամասնարար։ Յետ  
տեղեկանայոյ սերտ կառկանցութեան թարգմանութեանց ընդ Կո-  
րեան ընագրին՝ եթէ եւ ընդ միմեանս համեմատանք զայնուսիկ ու  
զանենք որ տարբեր տարբեր հեղինակներ իրօք կը նոյնանան  
լեզուաւ շատ եւ շատ անգամ, կարծեմ այլ եւս երկրայանաց տեղի  
չմնար թէ թարգմանիչն Կորիւն է թէ ոչ։

Եյս թարգմանութիւնք են հետեւեալքդ.  
ա. Մակարայեցւոց երեք գիրք.

բ. եւ թագի Աղեքսանդրացւոյ Յառաջարանք եւ Գլուխք Գոր-  
ծոց Առաքելոց, Թղթոցն Կաթողիկեայց եւ Պաւղոսի Թղթոց,  
Յիշատակարան եւ Աղերս.

գ. Ազաթանգեղայ Պատմութիւն զարձի Հայաստան աշ-  
խարհին.

դ. Փաւստոսի Բիւզանդայ Պատմութիւն Հայոց։

Ծրագիր գործոյս. — Յառաջ քան զձեռնարկել ի ցուցանել  
թէ վերոյնշանակեալ չորս մատենագրութիւնքդ թարգմանեալք  
են ի Կորիւն Վարդապետէ, կարեւոր կը համարիմ խօսել նախ

(Գլուխ Բ.) զայլեւայլ հայկաբանութեանց Առաջին Աշակերտաց, որպէս զի յաջորդ քննութեանց եւ համեմատութեանց մէջ լաւ տեսնուի թէ յորում կը զանազանի Կորեան լեզուն ի լեզուէ երկրորդոյն ընկերաց իւրոց, եւ թէ ինչպէս Մակարայեցիք, եւ թաղ, Ազաթանգեղոս եւ Բիւզանդ կը կապուին գեղեցկապէս ընդ Վարս Մաշտոցի եւ ընդ միմեանս: Յետոյ (Գլուխ Գ.) զշորեսին թարգմանութիւնսդ կ'առնում համեմատել ընդ Վարս Մաշտոցի առաջին՝ զԱզաթանգեղոս, որ կարեւորագոյնն է քան զայլսն. երկրորդ՝ զԲիւզանդ. երրորդ՝ զՄակարայեցիս. չորրորդ՝ զԵւթաղ: Ապա (Գլուխ Դ) կը համեմատեմ ընդ իրեարս զշորս թարգմանութիւնսդ. առաջին՝ զԱզաթանգեղ ընդ Բիւզանդայ. երկրորդ՝ զԱզաթանգեղ ընդ Մակարայեցիս. երրորդ՝ զԱզաթանգեղ ընդ Եւթաղի. չորրորդ՝ զԲիւզանդ ընդ Մակարայեցիս. հինգերորդ՝ զԲիւզանդ ընդ Եւթաղի. վեցերորդ՝ զՄակարայեցիս ընդ Եւթաղի. թէ Գ եւ թէ Դ պիտոց մէջ ըստ կարի մանրախօսչիւ նշանակելով թէ իւ իւր կ'օտարանայ Կորիւն յեզնրկայ եւ յայլոց (յաճախագոյն), եւ յորում իմիք կը միաբանի ընդ նոսա (սակաւագոյն):

**Գ Լ Ո Ւ Խ Բ.**

Այլեւայլ հայկաբանութիւնք Առաջին Աշակերտաց.  
 — Բաժանումն Առաջին Աշակերտաց ի շորս Դասս, եւ  
 նկարագիր իւրաքանչիւրոց ոճոյն.— Առաջին Դաս, եզնը-  
 կեան. մի միայն բնագիր, եւ թարգմանութիւնք.— Երկ-  
 րորդ Դաս, եփրեմեան, լոկ թարգմանութիւնք.— Երրորդ  
 Դաս, Կիրդեան. լոկ թարգմանութիւնք.— Չորրորդ Դաս,  
 Կորիւնեան. մի միայն բնագիր, եւ թարգմանութիւնք.

Այլ եւ այլ հայկաբանութիւնք Առաջին Աշակերտաց.  
 — Կարի նորանշան երեւոյթ մի է ի մեր Ոսկեդարու գրակա-  
 նութեան (406—462)՝ որ Առաջին Աշակերտաց հայերէնն «թէ եւ  
 բստ էութեան նոյն՝ սակայն սճոյն եւ կերպին նկատմամբ իրար-  
 մէ որոշ աստիճաններ կամ այլ եւ այլ դասեր կը կաղմէ»<sup>1)</sup>:  
 Եթէ զմանց ասորաբանութիւնս (Եւսերեայ Եկեղեցւական Պատ-  
 մութեան) եւ զայոց յունարանութիւնս (նորին Եւսերեայ ժա-  
 մանակագրութեան եւ Քրոնիկոնին) ասորի եւ յոյն բարբա-  
 ոոց ազդեցութեան վերազրնք, կայ մնայ ընդհանուր նկարագիր  
 (զգ. caractère) մի եւ մասնական կիրառութիւն բառից, ասա-  
 ցուածոց եւ դարձուածոց՝ որով որիչ որիչ սահմանագծութեամբ  
 կ'անջատուի մի դասն ի մրւամէ. (թո՛ղ զմանք մանր տարբերու-  
 թիւնս մի եւ նոյն կարգի Թարգմանչաց.) այնպէս որ մեր յ' ժԹ  
 դարուս՝ կարող ենք գրեթէ անվրէպ ըսել թէ այս նիշ թարգ-  
 մանութիւն որ դասուն կը պատկանի: Ուստի է այս բաւական  
 մեծ այլակերպութիւն ի շարագրութիւնս ժամանակակից եւ ու-  
 սումնակից անձանց: Երդեօք զանագանութիւն կայր ի հայկաբա-

1. Գեր. Հ. Արսէն Այտընեան, ՔՆՆ. ԸԵՐ. 53:

նութեան Սահակայ եւ Մաշտոցի, եւ այս պատճառաւ այլեւայլ ոճոյ տէր եղան այն պատանիք՝ որ լոկ առ ոտս Սրբոյն Սահակայ դեզերեցան, եւ այնք՝ որ միայն Սրբոյն Մաշտոցի աշակերտեցան, եւ վերջապէս այնորիկ՝ որ կէս ի Սահակայ եւ կէս ի Մաշտոցէ ընկայան զիւրեանց ուսումն (7): Երդեօք Թարգմանիչքն, Հայաստանի զանազան գաւառաց զաւակք, զասական հայերէն լեզուի վարժելով հանդերձ՝ մուտ տուած են յիւրեանց զիրս նաև իւրաքանչիւր գաւառական տարեր: Յուսալով որ թերեւս ժամանակն յաջողի զոհացուցիչ պատասխան տալ այս հարցմանց՝ առ որ անբաւական են մեր այժմու կցկտուր տեղեկութիւնք, անցնինք տեսնել թէ ի քանի դասս կը բաժանուի Առաջին Աշակերտաց հայկաքանութիւնն, եւ թէ ինչ է իւրաքանչիւր ուրուք նկարագիրն:

Բաժանումն Առաջին Աշակերտաց ի շորս Դասս, եւ Նկարագիր իւրաքանչիւրոց ոճոյն.—Վերագոյն (յերես 2, ծան. 1) վկայութիւն մի ի մէջ բերի ի Մ. Խորենացոյ, յորում Առաջին Աշակերտք (Սահակայ եւ) Մաշտոցի բազմաբար կը կոչուին Առաջին Խումբք <sup>1)</sup>. եւ զարձեալ (յերես 3) նշանակցի զվկայութիւն մի Կորեան՝ որ ի մէջ ուսումնակցաց իւրոց կրտսերագոյն կ'անուանէ զանձն: Յայս կրկին վկայութիւնս յեցեալ՝ նախ յերկու խումբս կ'որոշեմ զԱռաջին Աշակերտս, յերիցագոյնս եւ ի Կրտսերագոյնս՝ և ապա ստորաբաժանելով զերիցագոյնսն

1. Գիտողութեան արժանի են նա եւ Կորեան հետեւեալ բանքն. «Եսկ աշակերտասէրն վարդապետին (Մաշտոցի)՝ զտարեալսն ընդ իւր (յերեսիս եւ յԱմիգ) յերկուս բաժանեալ, զոմանս յԱռօրի զպրութեանն կարգէր (յԱմիգ), եւ զոմանս [ի] Յունական զպրութիւնն՝ անտի (այսինքն յԱմգայ) ի Սամուսատական քաղաքն զուժարէր»: Ե. Զ. (տղ. սխալ կրտսերած է, որով եւ հատուածիդ իմաստն կը մնայ անհասկանալի. տես Մնասէր, Գրակ Ա. 12—17: Անգ, 15, զբաժ հմ թէ ի թարգմանչաց ոմանք յԵղեսիս գետեղեցան յուսումն ասորերէնի, եւ թէ յԵղեսիոյ ի Սամուսատ յեցան այլքն՝ որպէս զի յունարէն ուսանին. այժմ զօրատր պատճառս ունիմ կարծելոյ թէ առաջինքն յԱմիգ գետեղեալ են, եւ թէ յԱմգայ ի Սամուսատ յուղարկեալ են երկրորդքն.)—եւ զարձեալ. «Գումարել ի կողմանս <sup>2)</sup> զաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին՝ զասս զասս զաշակերտեալսն ճամբատութեանն». անգ, 13:



յերիս եւ զԿրտսերագոյնսն ի մի միայն՝ կը դնեմ ընդ ամէնն Չորս Գասս, որք են այսորիկ։

Եւ աջին Գասն է (յերիցագունից) եզըրկեան, յանուն եզըրկայ Կողբացոյ՝ որ պարագլուխ է այս Գասուս եւ թողուցած է մեզ անգին մատենիկ մի, ձառք ընդդէմ՝ Աղանդոց, «հայերէն լեզուի բովանդակ գեղեցկութեանցն ու յատկութեանց զանձ, եւ ամենայն նկատմամբ հայկաբանութեան կիրթ ճաշտիկի օրինակ <sup>1)</sup>»։ եւ օրովհետեւ եզնիկ գլխաւոր գործակիցն եղած է Սրբոյն Սահակայ ի թարգմանութեան Աստուածաշունչ մատենին <sup>2)</sup>, իրաւամբ կարենք համարել զիւր ոճն՝ նորին ինքեան Սահակայ ոճ։ Կանոնաւոր, գաշնակաւոր, յընտրութեան եւ ի շարուածս քառից ամենաճարտար, ասացուածովք, բացատրութեամբք եւ նոյնանշանօք շատ հարուստ, մերթ պարզ՝ բայց այնպիսի պարզութեամբ յոր քաջ արուեստագէտք միայն կը հասնին, մերթ զարդարուն առանց բռնազրօտութեան, եւ ի վեր քան զամենայն՝ յոտակ (զգ. clair)-ահա նկարագիր այս Գասու հայկաբանութեան։

Երկրորդ Գասն (յերիցագունից) — կը ցաւիմ որ չգիտեմ զոր ի Թարգմանչացն յակահէ — է եփրեմեան, յանուն Սրբոյն եփրեմի Խորին Ըսորոյ (8)՝ որոյ բազում մատենագրութիւնք թարգմանեալք են յասորոյն ի ձեռն այս կարգի Աշակերտաց, հանդերձ այլ քանի մի ընազրովք ի նմին լեզուէ։ Սոցա հայկաբանութիւնն է ընդհանրապէս հարթ եւ պարզ, բայց ոչ անմասն ի դարդուց եւ յաւելազրութեանց. միայն թէ ունին գլխաւոր թերութիւն մի՝ որ է յաճախ նիւթապէս թարգմանել զասորերէնն, օտարանալով յոգւոյ հայ լեզուի. այս է պատճառն որ շատ անգամ աշխատութիւն կը կրենք առ ի հասու լինել սոցա գրուածոց, եւ իւրեանց երկարարան ու ճապաղ ոճն ծանրատաղտուկ կը դառնայ մեզ։ Ինչպէս անհնար է հասկանալ զթարգմանութիւնս ի յունականէ երկրորդ Աշակերտաց ոմանց՝ Բ. Ներզինացոյ (եւ երբեմն Մ. Խորենացոյ)՝ առանց յոյն լեզուի գիտութեան, այսպէս եւ ի խելամտութիւն սոցա թարգմանութեանց, օրինակ իմն Եսեբեայ եկեղեցական Պատմու-

1. Թունեան, Հատ. Ընթերց. Առաջին Գաս, 19 (ի ստորէ)։

2. Կորին, Վարք Մաշտոցի, 21։

Թեան, անհրաժեշտ հարկ է դիտել զատորերէնն: Առաջին եւ երրորդ Դասք եւս ունին թարգմանութիւնս յասորւոյն, ինչպէս պիտի տեսնենք ի կարգին. բայց անտրտտ պահած են զագնուութիւն եւ զվայելչութիւն հայերէնի:

Երրորդ Դասն (յերիցագունից)—կը ցուիմ նոյնպէս որ շփտեմ զոր յականէ ի Թարգմանչաց այս կարգիս—է Կիրողեան, յանուն Սրբոյն Կիւրղի Երուսաղեմացոյ՝ որոյ Կոչումն Ընծայութեանն զրոյ թարգմանութիւնն ներկայացուցիչ է սոյն Դասու հայկաբանութեանն: Սորա հաւասար են Առաջին Դասուն իւրեանց ճոխ եւ ընդարձակ լիզուաւ, այլ կ'առաւելուն զարդար եւ մանուանդ աւելագրութեամբք, եւ ընդ հակառակն ուրեք ուրեք կը նուագին յստակութեամբ (զգ. clarté):

Չորրորդ Դասն է (ի Կրտսերագունից) Կորիւնեան, յանուն Կորիւն Վարդապետի՝ որ զսոյն կարգ կը ներկայացնէ միայնակ՝ իւր համառօտ գրութեամբն Վարք Երանելւոյն Մաշտոցի եւ իւր չորս թարգմանութեամբք: Ինչ որ ըսի ի վեր անդր (երեսք 9—12) զհայկաբանութեանէ Վարուցն Մաշտոցի, պատշաճ է իմանալ նա եւ զթարգմանութեանցդ: Եւ աստ եւ անդ մի եւ նոյն Կորիւնն է՝ իւր յաճախութեամբ զարդուց ի Մակարայեցիս, ծաղկալից լիզուովն յեւթաղ, պերճութեամբն եւ վեմտութեամբ յեզաթանդեղ, առատութեամբն ի Բիւզանդ. բայց եւ նոյն թերութեամբք, զլիսաւորապէս ի մասին զարտուղութեանց եւ անկանոնութեանց՝ որ կը գտնուին ի զիրս Մակարայեցոց, Եզաթանդեղի եւ Բիւզանդայ: Վերջին երկու մասննիցդ մէջ կան եւ շատ մթութիւնք. այլ ոչ ինչ ընդհատ ի Վարուցն Մաշտոցի՝ եւ աստ յանցաւորն ոչ այնչափ Կորիւն է կարծեմ որչափ ձեռագրողք եւ տպագրողք. եթէ կը պակասին մեզ լաւ եւ ընտիր օրինակք, ուշագրութիւնն կարող է անհամար ապականութիւնս ուղղել, ինչպէս ընթերցողն պիտի տեսնէ ինչ ինչ ուղղեալ յընթացս գործոյս: Զեզնըկայ հայկաբանութիւնն համարեցայ (յերես 18) նոյն ընդ հայկաբանութեան Սրբոյն Սահակայ. նկատելով որ Կորիւն կը կոչէ զանձն «սաընթերակաց, յտղ, արբանեակ» Սրբոյն Մաշտոցի (Վարք Մաշտոցի, 28), զոր եւ «հայր իմ» կ'անուանէ (անդ), հաւանական թուի ինձ թէ եւ Կորիւն յամենայն տեղիս իւր զրուածոց ուր շիք ինչ արատ՝ կը պատկերացնէ յատկապէս զոճն Մաշտոցի:

(Վաղագոյն քան զիս Թոռնեան իւր պատուական Հատ-  
ընտիր Ընթերցուածոց մէջ (Յառաջարան, 12—13 ի  
ստորէ) ի չորս Դասս բաժանած է «զմատենագրութիւն կամ  
զթարգմանութիւնս օսկեղէն դարուն», եւ համառօտիւ նշա-  
նակած զնկարագիր իւրաքանչիւր Դասու: Ես հետեւած եմ  
իւր բաժանմանն, փոքր ինչ փոփոխելով զկարգաւորութիւնն  
եւ զանուանակոչութիւնս: Իմ Առաջին Դասս, եզնըկեան,  
է նոյնպէս Առաջին առ Թոռնեանի, եզնկայ. իմ Երկրորդ  
Դասս, Եփրեմեան, է նորա 2որրորդն, Եփրեմի. իմ Եր-  
րորդ Դասս, Կիրողեան, է նորա Երկրորդն, Կիրողի. իմ  
2որրորդ Դասս, Կորիւնեան, է նորա Երրորդն, Ազաթան-  
գեղեայ: 2սոյն բաժանումն ի չորս Գեր. Այտընեան ամփո-  
փած է յերիս՝ յիւրում Քննական Քերականութեան.  
զԹոռնեանի Առաջին եւ Երկրորդ Դասս, եզնկայ եւ Կիրողի»  
(որ է իմ Առաջին եւ Երրորդ, եզնըկեան եւ Կիրողեան,) Այտընեան կ'որոշէ աստղանշանի (երես 64), եւ անխտիր կը  
կոչէ պէտպէս անուամբ. «առաջին կարգի բարձր գրու-  
թիւնք» (57, ծան. 12). «հին մատենագրական հայերէն»  
(62). «հին գրաւոր լեզու» (64, ծան. 2). «հին մատենագրա-  
կան լեզու» (66. եւ 94, ծան. 71). «ճշգրտոյն մատենագրա-  
կան ոճ» (66). «ճիշդ եւ ծանր գրաւոր» (67). «բարձրագոյն  
գրութիւնք» (67, ծան. 10). «ազնիւ մատենագրական լե-  
զու» (81). «բարձրագոյն գրաւոր ոճ» (87). «ճշդիւ գրաւո-  
րական» (96). «բուն եւ ճիշդ մատենագրական լեզու» (108,  
ծան. 100). «հին ճիշդ գրաւոր» (110). «ճշդիւ գրաւոր ոճ»  
(110). «բարձրագոյն մատենագրութիւն» (113, ծան. 108.  
եւ 114, ծան. 109): 2Թոռնեանի Երրորդ Դասն, Ազա-  
թանգեղեայ, (որ է իմ 2որրորդ, Կորիւնեան,) Այտընեան  
կը կոչէ Բուզանդայ կարգ, եւ կ'որոշէ Բ զլլսագրով  
(անդ, 54, եւ ծան.). իսկ զ2որրորդ Դասն Թոռնեանի, Եփ-  
րեմի, (որ է իմ Երկրորդ, Եփրեմեան,) Այտընեան կ'ան-  
ուանէ 2գօնի կարգ, եւ կ'որոշէ 2 զլլսագրով (անդ, 54,  
եւ ծան.): Գեր. Այտընեանի շատանայն աստղանշանի եւ  
Բ ու 2 զլլսագրօք՝ փոխանակ առանձին առանձին նշանա-

կելոյ զտեղիս վկայութեանցն, քար զայթազողութեան եղած է Հ. Գար. 2. ի (9):

Այս է ընդհանուր բաժանումն հայկարանութեան Առաջին Աշակերտաց. կըսեմ ընդհանուր, վասն զի յաճախ մի եւ նոյն Դասու Թարգմանիչք մանր մանր զանազանութեամբք կը տարբերին, ինչպէս արդէն ակնարկեցի (և. 16)<sup>1</sup>: Ես բաւական կը համարիմ ձեռնարկութեանս զընդհանուր բաժանումնն, եւ չեմ ուզեր ի մանունս իջանելով՝ անգր քան զչափ ստուարացնել զայս մատեան:

Աւասիկ բնագիրք եւ թարգմանութիւնք միոյ միոյ Դասու՝ որչափ ես գիտեմ.

Առաջին Դաս, եզնրկեան. մի միայն ընագիրք, եւ թարգմանութիւնք.—Քնազիրն է եզնրկայ Կողբացոյ ճառք ընդդէմ Աղանդոց. Իսկ թարգմանութիւնքն են.

ա. Աստուածաշունչ Գիրք. ի յունէ, Այսինքն ի Հին Կտակարանէն՝ Ծնունդք, Ելք, Ղեւտական, Թիւք, Երկրորդ Աւրէնք, Յետու, Դատաւորք, Հուրթ, շորք գիրք Թագաւորաց, Եսթեք, Յուդիթ, Տովբիթ, Սաղմոսք, Առակք, Ժողովոյ, Երգ Երգաց, Իմաստութիւն, Սիրաք, Յովք, Երկոտասան փոքր Մարգարէք, Եսայի, Երեմիա, Բարուք, Աղբք, Դանիէլ, Եզեկիէլ: Ա եւ Բ Միացորդաց թարգմանութիւնն արժանի է մասնաւոր քննութեան (10): Ա եւ Բ Եզր, ու նեմեր՝ այս Դասուս թուին. բայց բաղում ուրեք կը տեսնուի Երկրորդ եւ Չորրորդ Դասուց ոճն (11): Մակարայեցոց երեք գիրք Չորրորդ Դասուն են:—Ի նոր Կտակարանէ՝ Առաջին Դասուն են Աւետարանք, Գործք Առաքելոց, Կաթնուղիկեայց եւթն Թուղթք, Պաւղոսի շորեքտասան Թուղթք: Յայտնութիւնն Յովհաննու աներկրայ թարգմանութիւն է այս Դասուս. բայց մեր այժմու օրինակն խանգարեալ է (12): Այս Դասուս են նա եւ Անկանոնականքն (ի Յաւելուածի Աստուածաշունչ մատենին)՝ Աղութք Մանասէի, Թուղթ Երեմիայ, Թուղթ Կորնթացոց առ Պաւղոս եւ սորա Գ Թուղթն առ Կորնթացիս, Հանգիստ Երանելւոյն Յովհաննու:—Եւթագի Յառաջարանք եւ Դլուխք, Յիշատա-

1. Տես եւ Թոռնեան, Հատ. (Չթեքց. Առաջին Դաս, 15 (ի ստորէ))



կարան և Աղերս՝ Չորրորդ Գատուն են,—Սրբոյն Եպիփանու Կիւրացւոյ նախադրութիւնն Սաղմոսաց և Յանկ Դաւթայ՝ մարգարէութեանն՝ է Երկրորդ Աշակերտաց թարգմանութիւն։—Ամենայն անանուն նախադրութիւնք և Դուրք Հնդամասնին, Յետուայ, Կատաւորաց, Հուսթայ, Թաւաւորաց, Մնացորդաց, Եզրի, նեւմնայ, Եսթերայ, Յուդթայ, Տովրիթայ, Մակարայեցւոց, գրոցն Սողոմոնի, Յովբայ, մարգարէութեանց, չորից Աւետարանաց, Յայտնութեանն Յովհաննու, և ամենայն նախադրութիւն իւրաքանչիւր Թղթոյն Կաթողիկեաց և իւրաքանչիւր Թղթոյն Պաւղոսի՝ շարագրեալք կամ թարգմանեալք են յԵրկրորդ Աշակերտաց, և բաղում ուրիւր ասորական բնագիր մի կը նշմարուի (13):

բ. Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւնն *եսայեայ մարգարէի*. Ի յունէ:

գ.—նորին Մեկնութիւնն Մատթէի Աւետարանին. Ի յունէ: [Հրատարակիչն, կարծեմ Հ. Արսէն Բագրատունի, կը գրէ ի Յառաջարանին, Ե. 6. «Հայ թարգմանն, որ անշուշտ մի ի գլխաւոր աշակերտաց սրբոցն է Սահակայ և Մեսրոպայ, թուի ինքն բաժանեալ գմտանանն յերիս գիրս կամ հատորս, և Եղեալ առ իւրաքանչիւրսն զցանկ ճառից, որ չերեւի ի յոյնն»: Հնար է թէ իբօք թարգմանիչն՝ յերիս (մանաւանդ թէ ի շորս, կամ թերեւ ի հինգ) բաժանած ըլլայ զՄատթէի Մեկնութիւնըն. բայց ցանկքն որ կը գտնուին ի գլուխ իւրաքանչիւր հատորոյ, («Յայտարարութիւն գլխոց յԱւետարանիչն Մատթէոս՝ Ծննդոց գրոցս». Ա. 13—16.—«Յայտնութիւն գլխոց յԱւետարանիչն Մատթէոս՝ Կափառնաում գրոցս». Բ. 403—404.—«Յայտնութիւն գլխոց յԱւետարանիչն Մատթէոս՝ Կեսարացւոց գրոցս». Գ. 11—12), ոչ են թարգմանչին և ոչ այլոյ ուրուք յԱռաջին Աշակերտաց (14):

դ.—նորին Մեկնութիւնը թղթոցն Պաւղոսի (առ Հոովմայեցիս,) առ Եփեսացիս, առ Փիլիպեցիս, առ Կողոսացիս, առ Թեսաղոնիկեցիս Ա և Բ (Հատուածք), առ Եբրայեցիս (Հատուածք), առ Տիմոթէոս Ա և Բ, և առ Տիտոս. Ի յունէ:—Հոովմայեցւոց Թղթոյն Մեկնութեան այժմու օրինակն՝ խանգարեալ է յօտար ձեռաց, կամ «վիրաւորեալ» ըստ բացատրութեան Գեր. Հ. Արսենի Այառնեան՝ զոր լսած եմ ի



նորին բերանոյ ի Կոստանդնուպոլիս յամին 1869: Գեղեցիկ է  
Եյարնեանի կարծիքն, եւ ինձ ամենայնր ընդունելի. Թղթոյս  
Մեկնութեան հայկաբանութիւնն բոլորովին նոյն է Պաղտսի միւս  
Թղթոց Մեկնութեանց հետ, եթէ ի բաց հանենք բազում բառս  
եւ ասացուածս՝ զորս ոչ միայն Եղնրիեանք շէին ճանաչեր, այլ  
եւ ոչ այլ որ ի միւս Դասուց Առաջին Աշակերտաց. տես Աղաւ-  
թեմ<sup>1)</sup> (173, 184, 185 երկրորդ, 211, 213). Բացառչեմ (20).  
Գերագանց (71). Գերագանցեմ<sup>2)</sup> (116, 177). Երկաբանչիւրք (159,  
232). Հրաշափառ, Հրաշափառագոյն (129, 151, 173, 212). Վե-  
րագոչեմ (216). Վերաձայնեմ (233). Վերառաքեմ փառս (238.  
որ յերես 8 կ'ըսուի Փառս առաքեմ. իսկ ի Սերբեր. է. 156, Փառս  
ի վեր առաքեմ. եւ յնսկ. եփես. 863, Փառս հանեմ). Տասնեակ<sup>3)</sup>  
(251). Տեսակ<sup>4)</sup> (30, 58). ի Տեսակ անեմ (74). Յուցակ (35). եւ  
այլ մեծամեծ ապականութիւնք:—Թարգմանչին Մեկնութեանց  
Պաղտսի Թղթոցն ընթերցած թուի զԿորեան Վարս Մաշտոցի  
եւ զնորին թարգմանութիւնս (15):—[Ի հրատարակութեան Հա-  
տուածոց Թղթոցն Պաղտսի (Գ հատոր Մատթէի Մեկնութեանն  
յնսկերերանէ, 149—148), կը գտնուի ցանկ մի Ե—ԾԲ զլիսովք  
(147—148)՝ վերնազրեալ «Յայտարարութիւն զլիսոց ի Թողթս  
Պաղտսի Առաքելոյ»: Այ ինչ պակաս ի ցանկից Մեկնութեանն  
Մատթէի՝ եւ այս ցանկ ոչ է թարգմանչին Մեկնութեանցն  
Պաղտսի (16):]

Եւ.—նորին եւթն ձառք. ի յունէ. 1. Վասն Պարոց եւ  
Աղաւթից. «Երեւելի եւ վայելուչ է տանս»<sup>5)</sup>. (ձառք Յովհ.

1. Անհարգատ թուի Աղաւթեմ եւ յնսկ. Երբ. 543. յերկրորդ Դասէ՝  
յնփր. Սամ. 359. յերրորդ Դասէ՝ ի Վարս ՅԵԾ. Թեզր. 112. եւ այլն:

2. Կայ Գերագանցեմ եւ ի Մեկնութեան Կողոսացոց Թղթոյն, Ե.  
Յորդ. 582. այլ ոչ է թարգմանչին. տես Հայկ. Բառարձն. Ե. 48:

3. Միայլ է Եւթնեակ ի Սերբեր. Ե. 126. ուղիղն է ըստ 2 հազարին  
Եւթնեան. տես Հայկ. Բառարձն. Ե. 52:

4. Ի Բարդի Վեցարեւելին՝ Ականատեսակ կամ Նկնատեսակ, եւ Աղ-  
կիոնի տեսակ աւուրք՝ սխալ ընթերցուածք են. տես Հայկ. Բառարձն. Ե. 64:

5. Ի ապագրին Վեհետեոյ բազմաբզիւնն Հ. Ներսէս Մարգարեան այլ  
թարգմանութիւն մի հրատարակած է սոյն ձառիս «Պայծառ մեզ այսօր  
տօնս» սկզբնաւորութեամբ եւ կարի անհամ, զոսկիղէն թարգմանութիւնն  
ամփոփելով մանրագիր ի ստորեւ երեսացն՝ այսպիսի ծանօթութեամբ.

Ոսկեք. 26—45. և Թոռնեան, Հատ. Ընթերց. 447—456, քաղելով, մինչև ի բանն «զի յորմէ ոչ կարացին ազատել թագն և ծիրանիքն, յաղթեցին և ապրեցուցին քուրձն և մոխիրն». տպ. Վենետիկ, 40: Թոռնեանի հրատարակութիւնն ունի բազում ընտրելագոյն ընթերցուածս.)—2. Վասն Ապաշխարութեան. «Տեսէք յառաջնումն կիրակէին». (անդ, 46—56. և Թոռնեան, Հատ. Ընթերց. 442—447. քաղելով, մինչև ի բանն «Եւ իբրեւ լսէր զայս Աքաար, յոյժ սգայր և տրամէր վասն մեղացն և ճանաչէր զյանցանսն, և Աստուած անցուցանէր ի նմանէ զպատուհասն». տպ. Վենետիկ, 52: Ընտրելագոյն են բազում ընթերցուածք հրատարակութեանն Թոռնեանի.)—3. Ի Խաչելութիւն Տեառն. «Այսար Տէրն մեր ի խաչին, և մեր տանս առնեմք». (անդ, 202—213.)—4. Վճիռ Քանանացի կնոջն. «Յոյժ են խռովութիւնք, այլ զձեր յաւժարութիւն փութոյն չկարաց արգելու». (անդ, 370—385.)—5. Ի Տեսիլ սերովքէիցն. «Հազիւ ուրեմն վասն Ազիայհատար անցաք զանդնդալից ծովուն զլայնութիւնն». (անդ, 412—422.)—6. Խաւսք վասն Հերովդէադայ. «Դարձեալ Հերովդիսս մուկնեալ յանդզին». (Բ հատոր Մեկնութեանց Թղթոցն Պաղոսի, 613—620.) 7. Ի սուրբ Խաչն Քրիստոսի. «Զինչ ասացից կամ զինչ խաւսեցայց». (անդ, 762—769. և Թոռնեան, Հատ. Ընթերց. 438—442, մինչև ի բանն «զի որ այսպիսի է՝ նա Աստուած է, և որ ոչ է այսպէս՝ նա չէ Աստուած». տպ. Վենետիկ, 765: Անհամեմատ լուազոյն է Թոռնեանի հրատարակութիւնն:) Այս Դատուս են և կրկին անընազիր ճառքն ի նմին հատորի, Յանդամալոյժն, «Յետ այսորիկ տան էր Հրէիցն». 848—854. և Վասն Ապաշխարութեան, «Յորժամ երիտասարդն էիր». 861—864. բայց ոչ թուին Ոսկեբերանի, այլ Սրբոյն Եփրեմի. ի Մատենադարանին էջմիածնի, (ըստ Մայր

---

«Ստորեւ եղեալս մարթ էր երկրորդ թարգմանութիւն կոչել, եթէ անխտոր և ճշգրիտ զլարս իմաստիցն պահէր ընդ վերնոյն համաձայն եղիւոյ ընդ յոյն բնագրին. այլ յայտնապէս երեւի զի պարզաբանութիւն է նորա հանդերձ յանկուածով ուրեք ուրեք, Թէպէտ և ոչ յետին դարուց յօրհնուած (!), յորմէ կայ երկաթագիր օրինակ մի հնազոյն, և այլ շորք բոլորագիր»: Տես և Հայկ. Բառարան. Ե. 50—51:

Յուրազակի Յակոբայ Կարենեանց, Տփղիս, 1863,) ի Զեռագիրսն թիւ 893, ճժթ, ե. 67, թիւ 894, ճիւղ, ե. 73, եւ թիւ 920, մժբ, ե. 115, երկրորդ «Յարժամ երիտասարդն էիր» յանուն Եփրեմի մակագրեալ է:—Ընթերցողն այս ամենայն ձառից եւ այլեւայլ մանր մատենագրութեանց՝ որ ձառնետրաց միջոցաւ հասեալ են առ մեզ, պէտք է ի մտի ունենայ զհետեւեալ բանս թողնեանի. «Յուլճաննու Ոսկեքերանի Ճատերը շատ խանդարուած էին, ինչպէս ձառնետրաց մէջ զանուող սոյնալիսի գրուածները սովորաբար կ'ըլլան, որովհետեւ իրբու հասարակաց ինչք համարուած են, եւ ամէն մարդ ուզածին պէս կը գործածէ՝ փոխելով, աւելցնելով, պակսեցնելով, պարզելով», եւ այլն. (առաջին սպ. Հատ. Ընթերցուածոց, Առաջին Դաս, 32 (ի ստորէ): Տես եւ Հայկ. Քառարնն. ե. 51:

գ. Սերերիանոսի Եմեսացոյ ձառք. ի յունէ: Այսինքն ձառքն Ա—Թ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԵ. Ժ ճառն յայլոց վերագրեալ է Սրբոյն Քարսղի Կեսարացոյ. (տես զայդ ի յաջորդ թիւղ.) իսկ ԺԳ ձառն, «Ըկն տեսանելով ծառ ծաղկազգեաց», 205—211, որ յայլոց Ոսկեքերանի վերագրեալ է, օտար է ի հայկերանութենէ Առաջին Աշակերտաց: Ենոյնպէս եւ այն ճառ՝ մակագրեալ «Սեւերիանոսի Գարադացոց եպիսկոպոսի ճառ ի վերայ բանին՝ թէ Հուր եկի արկանել յերկիր», որոյ սկիզբն է «Զմի ունելով ազրիւր՝ ջրոյ բընութիւն, յորովից եւ զանազան կենդանեաց զբժշկութիւն ծարաւուն շնորհէ», եւ զոր հրատարակած է Մսեր Մսերեանց ի Մոսկուս յամին 1853, ի մատենկանն Տեառն Յուլճաննու քահանայի Վանանդացոյ ձառ ներըողական ի սուրբ խաշն Քրիստոսի եւ Պատմագրական առասացութիւն ի սուրբ Նշանն Վարազայ, ե. 105—118, չէ թարգմանութիւն Առաջին Աշակերտաց <sup>1)</sup>:

է. Սրբոյն Քարսղի Կեսարացոյ ձառ ի Հրաւիրեալս ի մկրտութիւն. «Ո զի իմաստուն էք Մողոմն, ըստ իրս աշխարհիս կենաց զժամանակս յայտնի արար». սաստիկ սխալոտ. ի յունէ: Այս ճառ հրատարակեալ է ի մատենին Սերերիանոսի, 183—

1. Հ. Գար. Զ. ի Մ'տնդը. 681—688, շիշատակեր զայս ճառ Սերերիանոսի:

197, մակագրաւ «ձառ Տասներորդ. նորին սրբոյն Սերերիանոսի ի հրաւիրեալս ի մկրտութիւն». բայց յայլոց կ'ընծայուի Սրբոյն Բարսղի Կեսարացոյ, եւ ի նորին անուն կրկին թարգմանեալ է յամենէ Երկրորդ Աշակերտաց, որպէս թուի, այսպիսի մակագրաւ. «նորին սրբոյ Բասղի եպիսկոպոսի խաւսք յորդարակք ի մկրտութիւն». եւ կը սկսի. «Եմաստունն Սողոմոն ըստ կենցաղոյս իրաց զժամանակս բաժանելով». (17):—Մի եւ նոյն թարգմանչի զորժ թուի Ոսկերբանի *Մեկնութիւնն Եսայեայ, Մեկնութիւնն Մատթէի, Սերերիանոսի ձառք, եւ սոյն ձառ Բարսղի Կեսարացոյ, Իսկ թարգմանութիւնք Ոսկերբանի Մեկնութեանցն Պաղոսի Քղժոց թուին այլոյ ուրուք զորժ:*

բ. Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացոյ *Մեկնութիւնք Սուրբ Գրոց, այսինքն Արարածոց, Ելից, Ղևաացոց, Թուոց, Երկրորդ Աւրինաց, Յեսուայ, Գասաւորաց եւ Թագաւորաց. ի յունէ: Թարգմանիչն է Եզնիկ Կողբացի, ըստ կարծիոյ Թոռնեանի. (տես վերագոյն յերես 3): Անսիպ. Հատուածք միայն հրատարակեալ են ի Հատ. Անթելոց. Թոռնեանի, 297—327:*

թ. Եստերեայ Կեսարացոյ *Ժամանակագրութիւն, եւ Ժամանակական Կանոնք (կամ Քրոնիկոն). ի յունէ:*

ժ.—նորին Քուղժ առ Կարպիանոս, վասն Համաքարըտոյն Աւետարանաց. «Եստերի՛ Կարպիանոսի սիրելի եղբար, ի Տէր ողջոյն: Ամոյնի Աղեքսանդրացոյ բազում աշխատութեամբ». ի յունէ: Հրատարակեալ ի *Քազմավիպի, 1877, երեսք 206—207. մասամբ եւ ի Հ. Գար. 2. Մտնդր. 179:*

ժա. Սրբոյն Յերոնիմայ Յառաջաբան Ատուածաշունչ Գրոց, որ ի յափնն վերնագրեալ է Hieronymi Prologus Galeatus, իսկ ի մեր շեռագիրս՝ առանց անուան մատենագրի՝ *Վասն ի քսան եւ յերկուս գիրս առ ի Հերրայեցոց զպատմութիւնսն ըստանելոյ. «Ձի քսան եւ երկու նշանագրաւք վարին Երրայեցիքն՝ Ասորոց եւ Քաղղէացոց լեզուն նշանակէ». ի յունէ: Ժ. եւ ժա թարգմանեալ թուին ի թարգմանչէ Եստերեայ Ժամանակագրութեանն եւ Քրոնիկոնին:—Յերոնիմայ Յառաջաբանս հրատարակեալ է առաջին անգամ յԱրշալոյս Արարա-*



տեան լրագրի Զմիւռնոյ, 5 Օգոստոս 1867, ի ձեռն Ա(րքահամ) Մուրատեանի<sup>1)</sup>։ Երկրորդ անգամ ի Քաղմարտի, 1877, երեսք 202—203, մասամբ եւ ի Հ. Գար. 2. Մտնդր. 134—135: Ոսկան յիւրում Աստուածաշնչին՝ կրկին թարգմանած է ի լատին լեզուէ, վերնագրելով *Ջերօնիմոսի Առաջաբանութիւն Սաղաւարտեալ*, որ եւ կը սկսի այսպէս. «Զքսան եւ երկուս տառս գոլ առ Երրայեցիս՝ եւ եւս Ասորոց լեզուս եւ Քաղգէացոց վկայի»:

Ժբ.—Նորին Վարք Պաւղոսի Անապատականի. «Առ բազումս բազում անգամ խնդիր լինէր՝ եթէ յում ումիքէ դառաջինն» (Վարք Հարանց, Հ. Ա. 1—16.) ի յունէ: Մատենագրին յիշատակարանն է, անդ, 16. «Եւ արդ ես աղաչեմ զամենայն որ որ ընթեանու զայս՝ զԵրօնիմոս զմեղաւոր յիշել, որ կատարն Աստուծոյ զպարեզաւան Պաւղոսի երանելոյն կամէի հաւատովն նորա՝ բան զԹաղաւորաց ծիրանիսն հանդերձ պատուով նոցա. ի վառս Ամենասուրբ Երրորդութեանն»:

Ժգ. *Ճառ* (այսինքն Պատմութիւն վարուց) Պաւղայ Միայնակեցի. «Պաղ էր այր հողագործ» (Վարք Հարանց, Հ. Ա. 82—88, սովորական գրովն, եւ ոչ մանրագիրն). ի յունէ:

Ժդ. Պատմութիւն Մակարայ Եգիպտացոյ. «Սկիզբն արացոյք պատմել զվարս երանելոյն Մակարայ» (Վարք Հարանց, Հ. Ա. 89—97). ի յունէ:—Գեր. Այարնեան, Քնն. Քեր. Ե. 99—100, ծան. 82, վկայութիւն մի ի մէջ կը բերէ յայս Պատմութենէս Մակարայ, «Մի անգամ մտանեմ տեսանեմ, եւ ելանեմ գնամ աստի. եւ ասնն, երգուիր մեզ որ ելանես», (Վարք Հարանց, Հ. Ա. 91,) եւ կ'ըսէ թէ «Ե դարէն քիչ ետքը գրուած կ'երեւայ»: Եւ յերես 64, ծան. 3, կը նշանակէ ի վկայութիւնս Բուզանդայ կարգին, «Ջառ նեղութիւնք հասանեն», (Վարք Հարանց, Հ. Ա. 96):

Ժե. Վարք Յոհաննու Գբացոյ. «Վին սմն քրիստոսասէր»:

1. Հ. Գր. Գալմբիարեան, Պատմ. Հայ Լրագր. երես 55, ծան. 1: Չնորհակալ եմ սոյն պատուական Միթիթարեան վարդապետիս՝ որ հանկու յղել ինձ զընդօրինակութիւնս թէ Մուրատեանի հրատարակութեանն եւ թէ Ոսկանայ թարգմանութեանն:



(Վարք Հարանց, Հ. Ա. 113—125). Ի յունէ:—նոյնպէս եւ ի թարգմանութենէ աստի վկայութիւն մի ի մէջ կը բերէ Գեր. Այտընեան, ՔՆՆ. Քեր. ե. 86, ծան. 56, «Մի գմի իջուացուք», (Վարք Հարանց, Հ. Ա. 123,) եւ կ'ըսէ. «Ե գարէն քիչ ետքը գրուած կ'երևայ»:

Ժգ. Սրբոյն Աթանասի Աղեքսանդրացոյ Վարք Անտոնի Միայնակեցի. (Վարք Հարանց, Հ. Ա. 17—80). Ի յունէ.— Յամին 1871 տեսած եմ ի Կոստանդնուպոլիս առ Յոհաննու Տէրոյնցի Ոսկիփորիկ մի գրեալ ի թուին ՊԾԲ (Քրիստոսի 1403), յորում կայր այս Վարք Անտոնի Միայնակեցի լաւագոյն ընթերցուածովք, եւ այսպիսի յիշատակարանաւ. «Վարք սուրբ հաւրն մեր Անտոնի Անապատականի: Քարքմանեցաւ գիրս այս ի սուրբ քաղաքին յերուսաղէմ յամի ն որդի Ծ երորդի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամին յորում հանգեաւ քաջընթաց երանելին Մաշդոց»<sup>1</sup>). բայց Քրիստոսի 450 տարին եւ Մաշաոցի մահուան թուականն (17 Փետրուար 439)՝ անհնար է որ միարանին:—Կան ի սմին թարգմանութեան այլեայլ նմանութիւնք ընդ Կորեան գրութիւնս:—է եւ այլ օրինակ մի Վարուցս Անտոնի նշանաւոր տարբերութեամբք, զոր կը ճանաչեմ ես ի հատակոտոր վկայութեանց նոր Հայկազեան Քառարանին: 2գիտեմ թէ յայս կ'ակնարկէ արդեօք Հ. Մատաթիա Գարագաշեան (նկարագիր, Ուսմանց, Վիեննա, 1845, ե. 38,) երբ խօսելով զերկրորդ Աշակերտաց՝ կ'ըսէ. «Գարձեալ բազում թարգմանութիւնս գտանեմք, որք, որպէս հաւանութեան թուի, յայնմ ժամանակի թարգմանեցան, որպէս Վարք Անտոնի, Յառաջարան Դաւթի մեկնութեան արարեալ Աթանասայ, նեղոսի խրատք, այլովքն հանգերձ, որ ի յոյնութենէ անտի այնր ժամանակի սղատ են»:

Ժէ. Գատմութիւն վարուց Սրբոյն Խեղդեայ. (Վարք եւ Վկայաբանութիւնք Սրբոց, Հ. Ա. 513—531). յասորոյն:—Կան այլեայլ նմանութիւնք ընդ գրութիւնս Կորեան:

Ժբ. Վկայութիւն Սրբոյն Իգնատիոսի Անտիոքայ հայրապետի. (Սոփերք Հայկականք, Հ. ԻԲ. 141—185). Ի յունէ:

Ժթ. Վկայութիւն Սրբոյն Ապողոնի. (Վարք եւ Վկա-

1. Չայս յիշատակարան հրատարակած է եւ Հ. Գար. 2. ի Մանդր. 286:

յաքանութիւնք սրբոց, Հ. Ա. 138—143):—Ըստ Մեծ. Հ. Յ. Տաշեանի (Հանդէս Ամսօրեայ, 1893, երես 341 ա.) վկայաբանութիւնս «Առաջին Թարգմանչաց զպրոցին լեզուի կնիքը չի կրեր իւր վրան»:

ի. Սրբոյն Արիստիդեայ Աթենացոյ Ջատագովութիւն քրիստոսական կրանից. ի յունէ: Հրատարակեցաւ լատին թարգմանութեամբն հանդերձ ի Ս. Ղազար Վենետկոյ, 1878. այլ ես ունիմ միայն զիմ ձեռագիր օրինակն:

իա. Մարութայի Պատմութիւն Արեւելեան Վկայից. յասորւոյն: Թարգմանիչն է Արբաշամ Ձենակացի (Թոստովանոյ), որ եւ թուի թէ ամբողջապէս թարգմանած է զայն. բայց սկզբնասրութիւնն միայն՝ Վկայութիւն Չմաւոնի եպիսկոպոսի՝ հրատարակեալ է ի Սոփերս Հայկականս, Հ. Ի. 7—54 (18):

իբ.—Նորին ճառ ի Վկայսն Արեւելից. յասորւոյն: Նայնպէս եւ այս թարգմանութիւն է Արբաշամու Ձենակացոյ: Տպագիրն Ս. Ղազարու (Սոփերք Հայկականք, Հ. Ի. 55—155) թերի է սկզբանէ, ի միջոյ եւ ի վերջէ, զոր կը լրացնէ Պարիս քաղաքի Ազգային Մատենադարանի Ձեռագիրն:—Արբաշամ ընթերցած է զգրութիւնս Կորեան (18):

Երկրորդ Դաս, Եփրեմեան. լոկ թարգմանութիւնք.— Ամենայն թարգմանութիւնք այս Դասու եւ յասորի լեզուէ.

ա. Սրբոյն Եփրեմի Մեկնութիւնք Հին Կտակարանի, այսինքն Արարածոց, Ելից, Դեւտացոց, Թուոց, Երկրորդ Աւրինաց, Յեսուայ, Դատաւորաց, Սամուելի (=Ա եւ Բ Թագաւորաց), Թագաւորաց (=Գ եւ Դ Թագաւորաց), Ա եւ Բ Մնացորդաց:

բ.—Նորին Համաքարքառ Աւետարանաց:

գ.—Նորին Թարգմանութիւն Աւետարանի:

դ.—Նորին Մեկնութիւնք չորեքտասան թղթոցն Պաւղոսի, բաց ի Թղթոյն առ Փիլիմոն. չորեքտասաներորդն է Գ Կորնթացոց Թուղթն:

ե.—Նորին վեց ճառք. 1. Յապաշխարութիւն Նինուէացոցն. «Ահա հրաման հասեալ առ մարգարէն Յովնան քարոզել Նինուէի». (Դ հատոր Մատենագրութեանց Սրբոյս, 107—124): Այս ճառ գեղեցիկ օրինակ է ասորական բանաստեղծութեան, եւ

Թուի ինձ թէ ոտանաւոր է բնազիրն.—2. Ի Յարութիւն Փռըկչին մերոյ. (անդ, 61—62).—3. Ի յիշատակի սրբոց Մակարայեցոցն. «Արար Աստուած զերկինս, զերկիր եւ զամենայն որ է ի նոսա», (անդ, 125—128).—4. Յորդորումս պահոց. «Պահք յայտնիք՝ ծածուկ պահովք բովանդակին»։ (անդ, 179—183).—5. Վասն քնոյ եւ արթնութեան. «Մի տայք իշխանութիւն քնոյ թագաւորել յանդամս ձեր»։ (անդ, 211—212).—6. Վասն հակողաց. «Ժուժեցայք փոքր մի, առաքինիք, բառնալ զծանրութիւն խաւարի»։ (անդ, 213—214):

գ. Եւսերեայ Կեսարացոյ Պատմութիւնք Եկեղեցւոյ, «զորս ետ թարգմանել երանելի Վարդապետն Մաշտոց ի Հայ լեզու»։ Մ. Խոր. Պատմ. Բ. Ժ. 183:—Թարգմանութիւն գրոցս կարծի յառաջ քան զգիւտ հայ գրոյն, կ'ըսէ հրատարակիչն Վենետիկեան տպագրին (Յառաջարան, երես ե.), որ թուի թէ է Հ. Գար. 2. վասն զի սա ինքն է որ եւ զԱզատանկեղ եւ զԲիւզանդ կը համարի գրեալ հայերէն ի 2որրորդ դարու յառաջ քան զգիւտ հայ գրոյն:

է. Ափրատայ 2գուն Պարսկի ձառք, որ առ մեզ վերագրեալք են Սրբոյն Յակոբայ Մծքնացւոյ (19):

ը. Լարուբնայ Վարդապետութիւն Աղէի, որ ի հայ 2եւոպիրս վերնագրեալ է Թուղթ Աբգարու թագաւորի Եղեւսեայ քաղաքի, որ է յասորի լեզու Առհայ, որդւոյ Մանուկայ:

թ. Սրբոյն Իգնատիոսի Անտիոքայ հայրապետի Թուղթք:—Հ. Գար. 2. (Մտնդր. երես Իե) Երկրորդ Աշակերտաց թարգմանութիւն կը համարի:

Երրորդ Դաս, Կիւրդեան. լոկ թարգմանութիւնք.

ա. Սրբոյն Կիւրդի Երուսաղեմացւոյ Կոչումս Ընծայութեան. թուի յասորոյն:

բ. Սրբոյն Բարսղի Կեսարացւոյ ձառք վասն Վեցարեայ արարչութեան. թուի յասորոյն:

գ. Սրբոյն Յովհաննու Ոսկերերանի Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու. երեքտասան ճառք ի սկզբանէ. յասորոյն:—Կիրակոս վարդապետ, աշակերտ Գրիգորի Բ Վկայասիրի ի ՅԱ դարու, կ'աւանդէ ի յիշատակարանի նորոգ թարգմանութեան

գրացս՝ թէ գերեսուն եւ գերիս ճառս Մեկնութեանն Յովնան-  
նու Աւետարանին «Բազում յուզիւք յԱռաջին մեր Թարգմանչացն  
գտաք թարգմանեալ, ի սկզբան երեքաստան ճառ յասորի լի-  
գուէ, քանքն իսկ ցուցանեն, իսկ զքսանն ի յունականէն, որք  
լինին երեսուն եւ երեք ճառք: Բովանդակն էր գիրքն լեալ թարգ-  
մանած ի հայս, եւ ի ծուլութենէ եւ յանփոյթ առնկոյ՝ այլքն  
կորուսեալ եւ եղծեալ էին յարինակս հինս՝ ուր եւ կայր»<sup>1</sup>): Ես  
տեսած չեմ ոչ զՉեռագիրս Մեկնութեանն Յովնաննու Աւե-  
տարանին, եւ ոչ զտարագիրն Կոստանդնուպոլսի 1717 տարոյն:  
Կիրակոս վարդապետի յիշած քսան ճառքն թարգմանեալք ի  
յունականէն «յԱռաջին մեր Թարգմանչացն» անծանօթ են ինձ:  
Իսկ գերերտասան ճառսն՝ որ են թարգմանեալք «յասորի լիգուէ,  
քանքն իսկ ցուցանեն», մասամբ կը ճանաչեմ, Հատուածք հրա-  
տարակեալ լինելով յ'Բ հատորի Մեկնութեանց «ՂԹոցն Պաւ-  
ղոսի յԱսկերերանէ, Ե. 579—596<sup>2</sup>», սկսեալ ի բանիցն «Ի հան-  
դիսի աստ արտաքին աշխարհականք», մինչեւ «որք զբթցն եւ  
խնթկն եւ խածանն եւ արացն» ոչ մարդոյ է, այլ անասնոց:  
Կիրակոսի ըսկն՝ թէ բովանդակ Մեկնութիւնն Յովնաննու վաղ  
իսկ «էր լեալ թարգմանած ի հայս», շատ ուղիղ է. քանզի  
Վաթաներսոյ շորթորդ ճառն, (որ է Մեկնութեանդ Բ գրոց Ու-  
թեւտասաներորդն,) սկսեալ ի բանիցն «Յիսուս ամբարձ գաշս իւր  
յերկինս, եւ ասէ. Հայր իմ, գոհանամ զքէն», մինչեւ «քանզի եւ  
զբաղաքն բարձին, եւ զազգն ջնջեցին զճրէիցն» (անդ. 596—  
—609), բուն Առաջին Թարգմանչաց հայկարանութիւն է:

դ. Եւագրի Գոնտացոյ Մատենագրութիւնք: Անտիպը-  
կը ճանաչեմ միայն պատասիկս՝ որ կը գտնուին ի Նոր Հայկա-  
ղեան Բառարանին եւ ի Մտնդր. Հ. Գար. 2.-ի: Գայ եւ հա-  
տուած մի հրատարակեալ ի Գաթրքեանի Հանգամուսկ հաւատոյ

1. Հ. Գար. 2. Մտնդր. 612.

2. Ինչպէս ամօք յառաջ գրած եմ ի Հայկական Բառարանութեան,  
Ե. 50, բարեյիշատակն Հ. Ներսէս Սարգսեան Հին Թարգմանութիւն կար-  
ծած է զՊիլիկեանն, եւ զպատուոյ տեղին՝ նմին շնորհած, իսկ զՈսկի  
Թարգմանութիւնն Հինգերորդ դարու՝ Կիլիկեան Թարգմանութիւն կոչելով՝  
ամփոփած է մանրագիր ի ստորեւ երեսացն մինչեւ յերես 596, եւ ոչ մին-  
չեւ յերես 609», ինչպէս գրած եմ անուշադրութեամբ ի Հայկ. Բառարան.:



և այլն, 22—23. Ի դէմ առ դէմ համեմատութենէն Գաթրընեանի՝ եւզըրի հատուածիդ եւ Սահակայ ու Մաշտոցի Պատասխանոյն Թղթոյն Պրոկղի (տես աստէն զթիւն 2), թուի ինձ թէ մի եւ նոյն անձին են այս Գասուս թարգմանութիւնքն զ. ե. զ. է. ք. եւ թ.:

ն. Պրոկղի՝ Կոստանդնուպոլսի հայրապետի՝ Թուղթ առ Սահակ եպիսկոպոս Հայոց եւ առ սուրբն Մաժուրոց. «Երանի որ հանապազորդ լինիցին ի քաղցրահայեաց տեսիլ երեսացդ. եւ զի ասեմ հանապազ, այլ զոնեայ յաւուրս կամ յամիսս կամ ի տարեկանս»<sup>1)</sup> եւ այլն. ի յունէ:—Անտիպ. պատասխիկս միայն ունիմ նշանակեալ յիմում Հայերէն Բառարանի:

զ. Սահակայ եւ Մաշտոցի սուրբ վարդապետացն Հայոց Պատասխանի Թղթոյն Պրոկղի. «Առ ճշմարիտ եւ աստուածատէր պատուական տէր մեր եւ հայր՝ սուրբ եպիսկոպոս Պրոկղոս, ի Սահակայ եւ ի Մաշտոցէ ողջոյն: Ճառագայթք մշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ» եւ այլն. (Սոփեբրք Հայկականք, Հ. Բ. 137—149). ի յունէ, Լաւազոյն օրինակք խնդրելի են:

է. Ակակայ՝ եպիսկոպոսի Մելիտինացոց՝ Թուղթ առ Սահակ Հայոց հայրապետ. «Որ ամենայնիւ աստուածատէրդ ես եւ լի սրբութեամբ, տէր իմ եւ զործակից, ըստ նմանութեան միոյ մարմնոյ յաւապատեալս»<sup>2)</sup> եւ այլն. ի յունէ: Անտիպ:

ը. Տեսա՛ն Սահակայ Պատասխանի Թղթոյն Ակակայ. «Առ ճշմարիտ եւ աստուածատէր տէր մեր՝ սուրբ եպիսկոպոս Ակակ, ի Սահակայ ի Տէր ողջոյն: Ճառագայթք մշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ» եւ այլն, զրեթէ նոյն ընդ Պատասխանի Թղթոյն Պրոկղի. (Սոփեբրք Հայկականք, Հ. Բ. 150). ի յունէ:

թ. Նորին Ակակայ՝ եպիսկոպոսի Մելիտինացոց՝ Թուղթ ի Հայս. «Պատուական եւ առաքինի նախարարք Հայոց՝ սիրելիք եւ ծառայք Քրիստոսի, մեծամեծք եւ փոքունք, յԱկակայ եպիսկոպոսէ Մելիտինեայ (տպ. Մելիտինէ)՝ ի կրտսեր ծառայէ՛ խոնարհութեամբ եւ սիրով ողջոյն: Վասն զիմադարձացն ճշմարտու-

1. Հ. Գար. 2. Մանգր. 665, 664:

2. Հ. Գար. 2. Մանգր. 288:



թեան՝ որ զինի գնացին ամբարշտութեանն նեստրի եւ Գէորգո-  
րի, եւ ոչ հեղգացան զովիչք լինել ամբարշտութեան նոցա, եւ  
մինչ ի սահմանս ձեր փութացան առաքել ղթունաւոր եւ զապա-  
կանիչ վարդապետութիւնն»<sup>1)</sup> եւ այլն. ի յունէ: Ընտիպ:

Ժ. Վարք Յոհաննու Թեգրացոյ (Վարք Հարանց, Հ.  
Ա. 97—112):

Ժա. Պատմութիւն Հարանցն եգիպտացոց: (Վարք  
Հարանց, Հ. Ա. 207—270): Թարգմանութիւնք ժ եւ ժա մի  
եւ նոյն անձին թուին:—Գեր. Այտրնեան ի Քննական Քերա-  
կանութեան զայս երկու թարգմանութիւնս կր զնէ ի Քուզան-  
դայ Կարգին, (որ է Թոսնեանի երբորդ Գան, Ազաթանզե-  
ղեայ, իսկ իմ Չորրորդ, Կորիւնեան,) ինչպէս յայտ է ի վկայու-  
թեանցն զորս ի մէջ կը բերէ:

Չորրորդ Գաս, Կորիւնեան. մի միայն բնագիր, եւ  
թարգմանութիւնք. — Բնագիրն է Կորիւն Վարդապետի Վարք  
Երանելայն Մաշտոցի: Նոյն Կորեան են եւ թարգմանութիւնք.  
ա. Մակարայեցոց երեք գիրք:

բ. եւթադի Աղեքսանդրացոյ Յառաջաբան եւ Գլուխք  
Գործոց Առաքելոց. «Որք միանգամ ճշմարտի եւ կարևոր աս-  
տուած ամբնձ եւ աստուածատէր անմահութեանն իցին ցանկացողք».  
(Աստուածաշունչ Գիրք, 1047—1049). ի յունէ, ինչպէս եւ հե-  
տեւեալք: Եւթադ՝ որ ծագկած է ընդ մէջ Չորրորդ եւ Հինգե-  
րորդ դարուց՝ գրած է զայս Յառաջաբան ի ինդրոյ Աթանասի  
ուրումն, («եղբայր սիրելի Աթանասիէ». անդ, 1048 ա.) զոր ոմն  
ի մեր յիշատակադրաց կը կոչէ «թագաւորազն կրունաւոր»<sup>2)</sup>:

—Նորին Յառաջաբան եւ Գլուխք եւթանեցունց Թըղ-  
թոցն Կաթուղիկեայց, ի ինդրոյ նախահառեալ Աթանասի,  
(«եղբայր պատուական Աթանասիէ». անդ, 1079 ա.)<sup>3)</sup> «Ի փարունս  
փորումբք ինչ յանդակելոց՝ չէ առանց կասկածանաց» (Աստուա-

1. Հ. Գար. 2. Մանգր. 288—289:

2. «Չործոցս եւ զԿաթուղիկէից (ցանկս արար եւթադ) ի ինդրոյ  
թագաւորազն կրունաւորին Աթանասի համահասակի», տես Հ. Գար. 2.  
Մանգր. 174:

3. Տես եւ զնախընթաց ծանօթութիւնն:

ճաշունչ Գիրք, 1079). իսկ գԳրութիւնն տես անդ ի սկիզբն իւրաքանչիւր Թղթի:

— նորին Յառաջարան եւ Գրութիւնը չորեքտասան Թրդ-թոցն Պաւղոսի: «Ընդ ուսումնասէր եւ բնդ վայթ քոյոյ սիրոյդ զարմացեալ, ս հայր պատուական». (Աստուածաշունչ Գիրք, 1107—1110). իսկ գԳրութիւնն տես անդ ի սկիզբն իւրաքանչիւր Թղթի: Հայս Յառաջարան՝ «ի խնդրոյ մեծի հաւրն Թէոփիլոսի», ըստ վերասացեալ յիշատակագրին<sup>1)</sup>, գրած է եւթաղ յամի Տեանն 396, ինչպէս ինքն իսկ կը ծանուցանէ, (անդ, 1110 թ). «Կատարեցաւ սուրբ Ասաքեանն (Պաւղոս) իւրով վիլայութեանը, ի վաթմաներորդի եւ յիններորդի ամի Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեանն զալստեան: Եւ արդ է ամենայն ժամանակն յորմէ հետէ վկայեացն Պաւղոս, երեք հարիւր եւ երեսուն ամ. մինչեւ ցշորրորդ հիւլատին Արկադեայ, եւ ցերրորդ հիւլատին Անտրեայ<sup>2)</sup>, երկուց եղբարց ինքնակալաց Ալգաստից թագաւորաց: Քրիստոսի զալստեան 69 թուականին վերայ՝ յորում կատարեցաւ Պաւղոս Ասաքեալ, յունելով 330 տարի՝ ի մահուանէ Առաքչոյն մինչև ի ժամանակն յորում գրած է եւթաղ զՅառաջարանդ, կ'ունենանք զՓրկչական տարին 399. որ է մեր սովորական (սխալ) հաշուով 396<sup>3)</sup>: Այս 396 տարիս է ստուգիւ Արկադեայ չորրորդ հիւլատոսութեան, եւ Անտրեայ երրորդ հիւլատոսութեան տարին<sup>4)</sup>: Սխալ են եւթաղի Յառաջարանից գրու-

1. «Տաւուրս Արկադեայ եւ Անտրեայ սուրբն եւթաղի Աղեքանդրոցի արար զչանկ Ասաքեոյոս (Պաւղոսի) ի խնդրոյ մեծի հաւրն Թէոփիլոսի»: տես չ. Գար. 2. Մտնդր, 174:

2. Տօյագիրն սխալ կ'իտաղբած է «մինչև ցշորրորդ՝ հիւլատին Արկադեայ, եւ ցերրորդ՝ հիւլատին Անտրեայ»: Հիւլատի կամ Հիւլատի, (յոյմէ ի հիւլատոջն՝ առ այլ մասեննագիրս.) է յոյն բուն *hlypateia*, զգ. *Consulat* որ կ'ըսուի առ մեզ եւ հիւլատոսութիւն, հիւլատոսութիւն կամ Բղեշխութիւն, ինչպէս եւ ի Յոճ. կթ. Պատ. 40, եւլարքի—յսմարէն *eparchia*, զգ. *Préfecture*, *Province*. տես հիւլատի եւ յմեկ. երբ. (15):

3. Յայտնի է թէ մեր հասարակ թուականին հայրն՝ Գիսնեսիոս Փոքրիկն (Denys le Petit)՝ սխալ հաշուով 3—4 տարի անագանեցուցած է գննունդ Փրկչին:

4. «L'année 396 commença par une fête brillante: Honorius entraît dans son troisième consulat». Lebeau, *Hist. du Bas-Empire*,

Թեանն համար նշանակեալ 458 — 490, եւ 490 կամ 462 տարի-  
ներն ի շ. Գար. 2. Մտնդր. հ. 118 եւ 177: Վերջին տեղոյս  
մէջ կ'ըսուի ի ծան. 1. «Ուղղագոյն կ'երևնայ մեր ձեռագրաց մէջ  
յիշատակուած Թուականն, ՆԾ (410) եւ թողի աղեքսանդրացի  
յօրինեաց զցանկ Առաքելոցն եւ զԳործոց». եւ ոչ աւելի կը յարմա-  
րի ժամանակի հայկական Թարգմանութեան սուրբ Գրոց»: Հաւաս-  
տեաւ գիտենք որ եւ թաղ նախ գրած է զՅառաջարան եւ զԳը-  
լուխս Թղթոցն Պաւղոսի յամին 396, եւ ապա զՅառաջա-  
քանս եւ զԳըլուխս Գործոց Առաքելոց եւ Կաթողիկեայց  
Թղթոց, ինչպէս ինքնին կը վկայէ ի Յոջք. Գծ. 1047 ա. «Նախ՝  
աւասիկ իմ իսկ գառաքելական գիրս (այս ինքն զԹուղթս Պաւղո-  
սի) առն առ տուն ընթերցեալ եւ գրեալ, կանխագոյն առաքելի  
առ ոմն ըստ Քրիստոսի ի հարցն մերոց՝ սակաւ ինչ իմովսանն  
տկարութեամբ ջանացեալ». եւ սուղ ինչ յետոյ. «Արդ վաղագոյն ի  
մաւտոյ՝ որպէս յառաջագոյն ասացի՝ զգիրսն Պաւղոսի ընթերցեալ,  
եւ անդէն առ նմին զԳործոցս Առաքելոց, միանգամայն եւ զԿա-  
թողիկեայց Թղթոցն Առաքելոց, զշարաթ մի ողջ ջանացեալ,  
այժմ առ քեզ առաքելի»: Այս բանք եւ թաղի կարծել կու տան  
ինձ որ նա եւ վերոյիշեալ Թուականդ 410 բաւական ուշ է «Առա-  
քելոցն (Յակովբայ, Պետրոսի, Յովհաննու, Յուդայի,) եւ Գործոց»  
Յառաջարանից եւ Գլխոց յօրինմանն համար:

— Նորին Յիշատակարան, ի կատարած Փիլիմոնի Թղթոյն.  
«Գրեցի եւ կարգեցի ըստ կարի ստիքերովն զգիրս Պաւղոսի Առա-  
քելոյ» եւ այլն (20):

— Նորին Աղծրս. «Ամենայն ուրեք ամենայն իրիք ժամանակ  
է». (Աստուածաշունչ Գիրք, 1223):

գ. Աղաթանգեղայ Պատմութիւն դարձի Հայաստան  
աշխարհին:

դ. Փաւստոսի Բիւզանդայ Պատմութիւն Հայոց:

Յետ այս ամենայն ընդհանուր տեսութեանց՝ յորս յերկարել  
կարեւոր համարեցայ յաջորդ քննութեանց լաւ հասկացմանն հա-  
մար, կը մտնեմ այժմ ի խորս բուն ինդրոյն:

Տ. Ե. 117: եւ ի ծանօթութեան կը յաւելու Սէ.—Մարտէ. «C'était en  
même temps le quatrième consulat d' Arcadius».

Ք Լ ՈՒ Խ

Վարդապետի Վ ա ր ք Ե ր ա ն Ե Լ Ե ո յ ն  
Մ ա շ տ ո ճ ի համեմատեալ ընդ Ազաթանզեղի, Բիզան  
դայ, Մակաբայեցոց եւ Եւթաղի.— ա. Կորին եւ Ազա  
թանզեղ.— բ. Կորին եւ Բիզանդ.— գ. Կորին եւ Մակա  
բայեցիք.— դ. Կորին եւ Եւթաղ:

ԿՈՐԻՆԻՆ ԵՒ ԱԳԱԹԱՆԳԵՂ  
ԿՈՐ. «ՉԱՅՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԳԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՂԽԱՐԻՆ

դաստուածապարզեւ գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մա  
տակարարեցաւ» 1.—«Եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն».  
11.—«Ի կողմանց [կողմանց] եւ ի գաւառաց [գաւառաց] Հայաս  
տան աշխարհին յորեւալք եւ զրդեալք հասանէին ի բացեալ  
ազրբիւրն գիտութեանն Աստուծոյ» 13.—«Դէպ լինէր ոմանց եզ  
բարց ի Հայաստան աշխարհէս՝ զիմեղ իջանել ի կողմանս Յու  
նաց» 21.—«Յայնմ ժամանակի բերեալ երևեցան [ի] Հայաստան  
աշխարհին զիրք սուտապատուք առն ուրումն Հռոմի» 25:  
Այլուր. Աշխարհ՝ Հայոց. 6,12,16,21. Երկիր Հայոց. 9,16,28:

ԱԳԱԹ. «Իրեւ լուսաւորք ծագեցին փարատել զմէզ խաւ  
րի ի Հայաստան աշխարհէս» Յոջք. 20—21. եւ 24,26,41,  
եւ այլն: Այլուր. Հայաստան երկիր. 657 երկիցս. Աշխարհ՝ Հա  
յոց. 21,47,48, եւ այլն. Երկիր Հայոց. 21,25,42, եւ այլն.  
Հայք. 587,637:

ԲԻԻԶ. «Մտքա շորք մատնանք, . . . յիշեցուցիչք Պատմու



Թեանց ազգացն Հայաստան աշխարհին որդոց թորգոմաց. Գ. Խոտար. 1. և այլն: Այլուր. Աշխարհ Հայաստանի. Գ. Իգ. վերնագիր. 141. Հայաստան երկիր. 23—24, 55, և այլն. Աշխարհ Հայոց. 2, 9. Երկիր Հայոց. 2, 3, 16. Հայք. 14, 15, 57.

Տես և «Երկիր Հայաստան աշխարհին» յԱզգաթ. — Բիւզ. Թիւ

85:

— ԳԻՏ. Հայաստան աշխարհ կը գտնուի մի անգամ և յԱռաջին Դասի. «Զնոյն ձեւ ըստ Մովսիսի սրտմութեանն վիպագրեաց (Բերոսոս), և վասն արկղակերտ տապանին՝ որով նովրոս նախնին մերոյ ազգիս ապրեցաւ, և երթեալ զադարէ ի գլուխս լեռանց Հայաստան աշխարհին» ևւ. Ժմ. 31: Սոյն գրոց Թարգմանիչն կ'ըսէ նա և Հայոց աշխարհ, 18 երկիցս, կամ Աշխարհ Հայոց, 25. և պարզապէս Հայք, 18, 24: Այսպէս և այլուր ի սմին Դասի. «Ազրամկէք և Սարասար որդիք նորա (Սենեքերիմայ) սպանին զնա սրով, և ինքեանք զնացին փախըտական ի Հայս». ևւ. ԼԵ. 38. — «Լեւրինք» Հայոց». Տալրիթ. Ա. 24. Ոսկ. Ա Թես. Ը. 452: Յերկրորդ Դասի, ևւ. Եկեղ., Թէպէտ և Հայք կը կոչուի ազգն, Թ. ը. 688, 689, այլ Հայոց երկիրն կը կոչուի Արմենիա<sup>1)</sup>, (—ասորերէն Արմէն, Արմէնի, Արմէնիա. P. Smith, *The Syr.* Ուլափ, 391, 392). «Գրեաց թուղթ (Դիոնիսոս) զբնիս և առ այնոսիկ որ էին յԱրմենիա, զի էր նոցա եպիսկոպոս Մհերուժան». Զ. խե. 517: — Հանգոյն Հայաստան աշխարհի և Հայաստան երկրի կ'ըսուի նա և Պարսկաստան աշխարհ, Ոսկ. Ես. Գ. 25, Հրէաստան երկիր, Յովհ. Գ. 3, կամ Երկիր Հրէաստանի, Գ Թագ. ԻԴ. 2. ևւ. Ժմ. 93. ևւ. Եկեղ. 49, 51. Աշխարհ Հրէաստանի, Մքկ. Ա. 5, Փրնիկկաստան զաւաոր, ևւ. Ժմ. 32. Երկիր Ասորեստանի, Բիւզ. 206. Երկիր Խուժաստանի, անդ, 174, 202: Քայց մինչդեռ կ'ըսուի լոկ Պարսկաստան<sup>2)</sup>, ևւ. Ժմ. 35, 164. Հրէաստան

1. Տես և «Արմենու պատատոմք» ի մնացորդս բանից Պետրոսի Սինեաց եպիսկոպոսի (Զ դար), Սա. Ուսպ. Թ. 20. Մ. Դաղանկ. Հ. Ա. 205:

2. Թոռնեան, Հաս. Անթերց. 54, ծան. 11, կը գրէ. «Գրուի միշտ՝ Հայոց աշխարհ. Պարսից աշխարհին. ի Յունաց աշխարհէ, և այլն. կամ նաև ի Հայս. ի Պարսս. ի Հնդկս, և այլն. և ոչ՝ լոկ Հայաստան, Պարսկաստանի, ի Յունաստանէ, ի Հնդկաստանէ, Այլ տես լեւ. Ժմ. 35. «Թա»



տան, Ա. Քաղ. ԻԴ. 3. Յովհ. Է. 1,3. Եւս. Եկեղ. 51,90. Ասորիկստան, Քիւղ. 133, և այլն. Խուժաստան, անդ, 205. (Տաճկաստան, Ազաթ. 159, և Մկր. բազում ուրիշ,) շրուիր Հայաստան, այլ միշտ Հայաստան աշխարհ, Հայաստան Երկիր, կամ Աշխարհ Հայաստանի:

2

ԿՈՐ. «Որպիսի արամբ այնպիսի նորոգատուր (նոր Հայկղ. նորատուր) աստուածեղէն շնորհս Երեւեցաւ». 1:

ԱԳԱԹ. «Զի զամենեսան արժանիս արասցէ նորապարգեւն՝ նորատուրն՝ նորարերն (2. իսկ տպ.՝ նորապարգեւ նորատուր նորարեր) շնորհի Աստուածութեանն». 501:

3

ԿՈՐ. «Վասն նորին լուսաւոր վարդապետութեան . . . դմտաւ ամեկով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանեւ». 1:

ԱԳԱԹ. «Քանդի և Առաքելոցն . . . թուղթու հոպեպատումս և աստուածութիւնս (2. իսկ տպ.՝ հոպեպատումս առաքելութիւնս) ծաղկեցուցեալ». 524:

— ԴԻՏ. Յիշատակարանս կամ թուղթու ծաղկեցուցանեւ կը նշանակէ փոխարեւարար. Գրել, կամ «ի լոյս ընծայել շարագրութեամբ», ինչպէս կը մեկնէ նոր Հայկղ. ի Ծաղկեցուցանեմ՝ ուր միայն զԿորեան վկայութիւնն կը յիշէ: Այլ է «Ծաղկեցուցանէր զազնուականութիւնս». Կոր. 4.— «Ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն». անդ, 20.— «Զիրաւունս ծաղկեցուցանեւ». Ազաթ. 413.— «Զրանն կենաց . . . յարութիւնական յուսովն ծաղկեցուցեալ». անդ, 518:

4

ԿՈՐ. «Եւ մինչդեռ անդէն ի խորհրդանոցի մտացս (տպ. մտացն), վասն յուշ արկանելոյ միայնագործ (միայն գործ?) հոգացայ». 1:

զացեալ Գիւրոս ի Պարսկաստանէ գուրուք բազմաբք»: Տես անդ ի Պարսկաստանէ և 164:

ԱԳԱԹ. «Քան այնուհետեւ (տպ. այսուհետեւ) երանութեանն հասեալքն ի խորհրդանոց (2. իսկ տպ.՝ խորհրդոցն) հոգւոյն Սրբոյ». 523:

5

ԿՈՐ. «Ըստեւ քան զկար մեր գրաւեալ անաչտո հրամանին հասելոյ». 1. (տպ. սխալ կիտադրած է, զոր տես ի Կոր. 1):

ԱԳԱԹ. «Խնդրէին զբժշկութիւն գտանել զհարուածոցն պատուհասին հասելոյ». 548.— «Զի եւ ի ձէնջ պատուհարք վերացին, եւ լիցի ի խոռովութենէդ հասելոյ վաղվազակի խաղաղութիւն». 541.— «Վասն կենսատուր փրկութեանդ հասելոյդ ձեզ յԱստուծոյ». 614: Այլուր. «Փրկել զնոսա ի փորձութենէն՝ որ հասեալ էր ի վերայ նոցա». 116.— «Ոչ այլ ինչ գոյ բժշկութիւն հարուածոցդ (2. իսկ տպ.՝ հարուածոցն)՝ որ եկին հասին ի վերայ ձեր, կթէ ոչ . . . » 166:

ԲԻԻԶ. «Լու եղի այս ամենայն կործանումն գոժի շարեացն յանկարծարէն թշուառութեանն հասելոյ». Գ. ի. 53. «Մեծաւ փութով . . . ի խնդիր ելանէր իրին հասելոյ». Գ. իա. 54.— «Յախտա եւ ի խնդրուածս լինէին վասն ճարկութեանն հասելոյ». Գ. թ. 100:

ՄԿԲ. «Վասն յանկարծակի թշուառութեանն ի վերայ ազգին հասելոյ». Գ. դ. 10. (համեմատէ ընդ առաջին վկայութեան Բիւզանդայ): Այլուր. «Գրեցաք զայս առ ձեզ ի նեղութեանն որ հասեալ էր ի վերայ մեր». Բ. ա. 7. (համեմատէ ընդ շորրորդ վկ. Ագաթ.):

— ԻԻՏ. Կայ յԱռաջին Դասի. «Յիշեցուցանել . . . զիտակացն եւ հասատելոցն եկեալ հասեալ ճշմարտութեանն». Բ Պետր. Ա. 12.— «Հնարս ինչ ամենեւին ոչ գտանէին եկելոց հասելոց հարուածոցն». Ոսկ. Մտթ. Ա. դ. 85.— «Զի մի եւ յոյն զերծանելոյ գտանիցէ՝ ի շարեացն եկելոց հասելոց». անդ, Ա. Ժդ. Յորդ. 206: Կորին իւր սովորական ոճով պիտի ըսէք՝ ճշմարտութեանն հասելոյ, հարուածոցն հասելոց, ի շարեացն հասելոց:

ման զամապ շտամբուսա . րո 6 շտամբուսա մա՞ . 9343  
մայրա՞ (մորթղոյա՞) . րո րո 2) քանարդոյա՞ կ մշյամա՞

400. «եկեալ հասանէր առ իս հրաման . . . փութանալի  
և առանց յապաղելոյ դառալի եղեալն մատենագրել» . 1—2.  
— «Եսկեհեր եւ առանց յապաղելոյ» . 22:

— անս ԵԳԸԹ. «Պարտ է ձեզ զԳրիգոր վիճակեցուցանել առանց  
յապաղելոյ ի քահանայութիւն» . 596: Այլուր. «Առանց յա-  
պաղանաց՝ ամենայն արարածք սպասաւորականք զհրամանս  
կատարիցեն» . 208:

— ՄԳԲ. «Զի առանց յապաղելոյ պատրաստեացէ (զփիղան)  
զինեզէնս խնկալիցս» . Գ. և. 1:  
(Քիւզանդ կըսէ. «Եւ ինքն ի նմին աշխատեալ ղեզերել՝  
զինդրելին տեսանել առանց յապաղութեան» . Գ. Ժ. 22.

— «Զքրիստոսեան լուծն առանց ամենայն յապաղութեան  
ձգէր մինչև ի վախճան» . Գ. և. 12.— «Եւ զվերալացութիւնս  
աշխարհի . . . առանց . . . ամենայն յապաղութեան տա-  
նէր մինչև ի վախճան իւր» . Գ. դ. 79: Այլուր. «Վաղվաղակի  
փութացի զալ առանց դանդաղանաց» . Գ. ը. 96: Վերջնոյս  
նման եւ եւթադ. «Զայս իմ առանց դանդաղութեան մտա-  
դիրութեամբ արարեալ» . Յոջր. Գծ. 1048 ա. (Համեմատէ ա-  
ռանց դանդաղանաց եւ առանց դանդաղութեան, Բիւզ.  
եւթ. — առանց յապաղանաց եւ առանց յապաղութեան,  
Ազաթ. Բիւզ.)

[Ա Դատ] †<sup>1</sup>) «Փութագէտ, ասէ, արձակեցի առ ձեզ: Զմնչ  
իցէ փութագէտ. առանց յամելոյ եւ յապաղելոյ» . Ոսկ. Փիլիպ.  
Թ. 448:

— ԳԻՏ. Գայ մի անգամ եւ յերկրորդ Գատի. «Եսէ ցնոսա,  
զի դադարեցուցն զհալածանսն քրիստոնէից առանց յապա-

1. Ետաջին Դատու այն վկայութեանց առջեւ՝ որ առնալք են յսակե-  
րերանի Մեկնութեանցն Պաւղոսի եւ ի Մարութայի մատենագրութեանց եւ  
Կորնան հետ կը մխարանին, կը ղեկս զնշանդ ՚: Պաւղոսի Մեկնութեանց  
Թարգմանելն՝ ըստ ամենայն հաւանականութեան, եւ Մարութային՝ հաստ-  
տեալ, ընթերցած են զԿորնան գրութիւնս եւ այնոցիկ կը հետեւին ուղղակի  
կամ միջնորդաւ, օտարանալով յիւրեանց դասակցաց ոճոյն: Թէ ինչ կ'իմա-  
նամ «ուղղակի կամ միջնորդաւ» ըսելով, ընթերցողն կարէ տեսանել ի 15:

ղելոյ»։ Եւ. Եկեղ. Ը. Ժէ. 664է Կայ եւ յԱռաջին Դասի մի անգամ՝ արտաքայ Ոսկերիերանի Մեկնութեանցն Պաղոսի. «Եւ Բիւռոս առանց յապաղելոյ արար զոր հրամայեաց նմա ծառայն Աստուծոյ Յովհաննէս»։ Հանգ. Յովհ. Զ. 1222 ա. բայց Գաթր-ճեան յիւրում տպագրին, 44, ունի ըստ լաւագոյն օրինակաց առանց հնդգանալոյ։—Փոխանակ առանց յապաղելոյ, միւս Դասքն ունին կերպակերպ ասացուածս՝ յորոց կը նշանակեմ քանի մի. «Ոչ ինչ յապաղեցի, այլ . . . հրամայեցի ածել զայրն»։ Գործք Առաք. Ին. 17. — «Զի մի դանդաղեցի զուլ առ նոսա»։ անդ, Թ. 38. — «Նա իբրեւ լուսա, ոչ ինչ հնդգացաւ, այլ զգէնն ի բաց ընկէց վաղվաղակի»։ Պատմ. Հար. Եգիպտ. 238. եւ 261. «Զխորհուրդսն Սատանայի անդէն վաղվաղակի ի սկզբան անդ վարել կարճել»։ անդ, 234. — «Նա փութով վաղվաղակի դիմեաց ի նա»։ անդ. 220։ Տես եւ Անդանդաղ. Առակք Զ. 11։ Բրս. Վեց. Թ. 187, եւ այլն։

7

ԿՈՐ. «Փութանակի եւ առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել»։ 1—2։ Ելլուր. «Որ զիրս առաջի եղեալս՝ գրով ցուցանէր կայսերն»։ 16. (տպ. առաջի եղեալ գրով՝ ցուցանէր կայսերն)։

ԵԳԵԹ. «Այլ զի ցուցցէ թէ միտկամ ընդ Հար զառաջի եղեալն գործէ»։ 342. — «Մանաւանդ թէ ազգեցութեամբ Հոգւոյն շարժեալք՝ յառաջի եղեալն յաջողեցեան»։ 523—524։ Ելլուր. «Առաջի եղելոյն ազատեցուցիչ յուսոյն ամենեքեան սպասէին»։ 264։

—ԳԻՏ. Փոխանակ Որ յարարերուկանաւ եւ դիմաւոր բայիւ ըսելու «Եկեալ հասանէր առ իս հրաման . . . փութանակի . . . զոր առաջի եղեալն էի (կամ զայն զոր առաջի եղեալն էի) մատենագրել», Կորին զեղչելով զյարարերականն եւ շատանալով անցեալ դերբայի՝ կ'ըսէ. « . . . փութանակի . . . զառաջի եղեալն մատենագրել»։ Որ Եգիպի կը գրէ, 5. «Զի յայն զոր առաջի եղ՝ հասանել կարասցէ», Կորին պիտի գրէր. «Զի յառաջի եղեալն հասանել կարասցէ»։ (տես զերկրորդ վկ. Ագաթ.)։



8

ԳՈՐ. «Ոչ ի մէնջ արուեստախաւսեալ մերոյն կարծեց վիճարանելով»։ 2:

ԵԳԵԹ. «Նախ թեթեւագոյն ըստ աշխարհակիր (տպ. աշխարհագիր) կարգաց առակարանեալ եւ արուեստախաւսեալ»։ 520. (համեմատէ Արուեստախաւսել վիճաքանել, եւ Առակաքանել արուեստախաւսել)։—«Ոչ ատարագոյնս ի միմեանց արուեստախաւսեալ»։ 525—526:

ԵԻԹ. «Զգիւրացոյցն զգիւտս մեղէն իսկ արուեստախաւսեալ բովանդակեսցուք»։ Յսջր. Պաւլ. 1109 ա.

9

ԳՈՐ. «Յաւրինակացն տուելոց զընդդիմակացն բարձրացուցանել»։ 2:

ԵԳԵԹ. «Ապա վասն յանկարծակի եւ արագահաս գալլստեան իւրոյ նշանակէ՝ հանդերձ արինակաւրն տուելովք»։ 346:

10

ԳՈՐ. «Քանզի Աստուծոյ քարերարին այսպէս բարի խորհնալ (տպ. բարեխորհնալ) զիւրոց սիրելեաց»։ 2:

ԵԳԵԹ. «Զի Աստուծոյ քարերարի զամենայն արարեալ կարգս (2. իսկ տպ.՝ արարեալ, ի կարգիս) լինելութեան հաստատեալ»։ 198:

11

ԳՈՐ. «Զի անցաւոր ժամանակաւքս մատենապատում երկնաբերձ պայծառացուցեալ, զհոգեղինացն եւ զմարմնականացն առ հասարակ փայլիցեն»։ 2. (տպ. այլազգ կիտաղբած է, զորտես ի յաջորդ թիւդ 12):

ԵԳԵԹ. «Յորում միակեաց վայելչութիւն ամենայն տրժաւաւոր բանաւորացն, հոգեղինացն եւ մարմնականացն, առ ինքեան սպարաստեալ զեանդեսցէ»։ 538:

12

ԳՈՐ. «Զի անցաւոր ժամանակաւքս մատենապատում երկ-



և արեւձ պայծառացուցեալ, զհոգեղինացն եւ զմարմնականացն առ հասարակ փայլիցեն»։ 2. (տպ. «պայծառացուցեալ զհոգեղինացն եւ զմարմնականացն, առ հասարակ փայլիցեն»։ փոխեցի ղկիրտադրութիւնն ըստ հատուածիդ Ագաթանգեղի)։

ԱԳԱԹ. «Զոր եւ արէնքն մովսեմազիրք ամենայն իրաք զհանդերձելոցն նշանակեալ փայլէին»։ 260։

13

ԿՈՐ. «Յայտնի է երանելեաց արանցն աղնուականութիւն»։ 2։ Այլուր. «Եւ զայս աւճան ընկալեալ ի Տեառնէ երանելի Առաքելոցն»։ 4. — «Ժողովել զաշխարհանոց խորհուրդն երանելի միաբանելոցն»։ 8։

ԱԳԱԹ. «Քաղմացուցանէր ղփառաւորութիւն յիշատակաց երանելեաց մարտիրոսացն (տպ. երանելեացն մարտիրոսացն. իսկ 2.՝ երանելեաց մարտիրոսաց)»։ 647։

— ԻԻՏ. Նովին համաձայնութեամբ կայ եւ յերրորդ Դասի. «Սկիզբն արասցուք պատմութեան զսրբոց զերանելեաց զմեծաց միայնակեցաց ղկարգ վարուցն»։ Պոմ. Հար. Եղիպտ. 210։ Իսկ փոխանակ երանելեաց մարտիրոսացն Ագաթանգեղի՝ կը զըտնենք յերկրորդ Դասի. «Բայց զարմանալ է ընդ ժոժեկալութեանն որ ոչ յողողղէր վկայիցն երանելեաց»։ Ես. Եկեղ. Ը. է. 631։ Տես եւ զյաջորդ. «Ի ձեռաց երանեալ մարգարէից»։ Եփր. Գ. Կոր. 123. որ ի Թղթին, 55, է այսպէս. «Ի ձեռաց երանելի մարգարէիցն»։

14

ԿՈՐ. «Յայտնի է երանելեաց արանցն աղնուականութիւն, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն»։ 2. — «Աստուածամերձ աստուածախաւս զաշխար կատարեալ (Աբրահամ)»։ անդ. — «Իսկ մեծին (իմա կամ ընթերցիր՝ զմեծին) Մովսեսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն ամենայն եկեղեցական Գրով (Գրովք? Գրոց?) նշեցուցեալ»։ 3—4։

ԱԳԱԹ. «Մշտնջենաւորական եւ աստուածամերձ կենացն վայելչութեամբ»։ 191. — «Աստուածամուխ կենացն լինել

ժառանգորդ» . 193. — «Առ ի յարգարելոյ ի գիտութիւն աստուածամերձ» . 243. — «Առ ի ծանուխ ասնելոյ աստուածամերձ գիտութեանն» . անդ . — «Զի մերձաւորս եւ աստուածամոխս . . . պատրաստիցէ» . 250. — «Մերձաւոր եւ աստուածամոխս լինել աստուածական վայելչութեան» . 262. — «Զայր իւրաքանչիւր աստուածամոխս կենալն . . . յսկանէ ծանուցանէր» . 546—547. — «Զնոյն կեանս վարուցն քաջութեան աստուածամոխս կենացն անձին մատուցանէր» . 632. Ըստ այսմ եւ «Առեալ հոգելից եւ հոգեմոխս աստուածատեսացն զաստուածատուր տեսիսն» . 525:

«Քրիստոս» . «Որք միանգամ ճշմարտիւ եւ կարեւոր աստուածամերձ եւ աստուածատէր անմահութեանն իցեն ջանկացողք» . Յոջր. Գծ. 1047 ա. — «Պրաստ ըստ Աստուծոյ միաբանութեանն» . եւ աստուածամոխս կենաց» . Գլուխք Փիլիպ. Գ. 1156 բ.

— ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի Աստուածամոխս. «նոյնպէս եւ բանն Աստուծոյ յորդորէ զոգիս պողարերս լինել աստուածամոխս զգաստութեանն» . Սերբեր. Թ. 157: Այսպէս եւ Մարդամոխս. «Բանդի ասաց եթէ մարդացաւ մարդամոխս եղել, ապա համարձակագոյնս իսկ զլոնարձագոյնսն բարբառի» . Ոսկ. Փիլիպ. է. 424:

15

ԿՈՐ. «Զի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալ, եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ (տպ. արուեստին) ի վերայ ամենակող մահուանն կենալք երեւեալ» . 2:

ԱԳԱԹ. «Բանդի միայն եւ անժառայական անձամբ միղացն՝ սպան (Բրիստոս) զգաւրացեալ մահ աշխարհակողուլ» . 354: Այսպէս եւ «Ասացեալ ի Հարէ . . . լինել լոյս, եւ անդէն եղեալ լոյսն համասիրտ, խաւարակողուլ, տրարեր» . 196: Այլուր. «Զի զհնացեալ եւ զմահակողուլ աշխարհ» . . . եկեալ յերկնից նորոգեցէ (Բրիստոս)» . 293:

— ԴԻՏ. Ամենակողուլ, Աշխարհակողուլ, Խաւարակողուլ կը նշանակեն Որ կլանէ զամենայն, զաշխարհ, զխաւար. իսկ Մահակողուլ՝ Կլեալ ի մահուանէ: Փոխանակ «Աոյս խաւարակողուլ», տես լեփր. Բ Կոր. Գ. 93, «Աոյս մաշիչ եւ սպառիչ խաւարի» . եւ

ի Բրա. Վեց. 2. 127, «Բաւարահաճ ախ», եւ փոխանակ Մա-  
նակուլ՝ տես ի Կիւր. Կոչ. ժԳ. 290. «Գրծանէին արդարքն ամե-  
նայն զորս կլեալն էր մահու», նովին ոճով եւ յնով. Մաթ. Բ.  
խգ. 688, զոր կլեալ էր Սատանայ:— Կան յնաջին Դասի.  
«Զինչ շահ իցէ ի յարիննել նախ, եթէ նաւափարն ծովակուլ  
լինիցի». Ոսկ. Մաթ. Ա. ի. 328.— «Թէպէտ եւ համառուա սա-  
տակեաց զԶրհեղեղակուլն, սակայն ոչ ինչ զոյր քան զայն  
մեղմագոյն». Ոսկ. ես. ԽԶ. 332. բայց թուի ինձ թէ ուղիղ ըն-  
թերցուածքն են ծովակուլ, զԶրհեղեղակուլն, ինչպէս կ'ե-  
րաշխատրեն յաջորդ սեղիբդ. «Իսկ անբաւ բարեբարութիւնն Աս-  
տուծոյ . . . զիւր ծառայսն . . . զհանապազորդ սովամահն  
վասն նորա, զկապեալն եւ զծովակուլն, . . . անպսակ թո-  
ղուցու». Ոսկ. Մաթ. Ա. ժգ. Յորդ. 194.— «Բանդի որք զանբժը-  
կական ախտսն ախտանայցեն՝ զնոսա մասնէ ի մահ, որպէս եւ  
Զրհեղեղակուլքն եւ Սողոմացիքն (տպ. Զրհեղեղակուլքն եւ  
զՍողոմացիսն) որք ոչ կամեցան զալ ի բժշկութիւն (տպ. ի բժը-  
կութիւնս)՝ ստատկեցան». Ոսկ. ես. ԼԱ. 193.— «Զհողեղէն բնու-  
թիւնս երկնաւոր կատարեաց, եւ զգերեզմանակուր հողո՞ մասն  
(հողոյ մասն?) յերկնից բնութիւնս հաստատեաց», Աբրեք. Գ. 27:  
Այսպէս եւ Վաճառակուր, անդ. Ը. 151, եւ Վաճառակուր առ-  
նեմ, լինիմ. Ոսկ. Մաթ. Բ. իգ. Յորդ. 709, ք. 508, եւ այլն:  
Իսկ յնով. երբ. ԻՊ. 527, ուղիղ թուի «ծովակուլ կորուսաք»  
(15): նոր չայկդ. կը յիշէ յերբորդ Դասէ, «Հոգիք դժոխակուլք».  
Եւազր, Լ. (այսինքն՝ Կլեալք ի գժոխոց), զոր չկարեմ ստուգել:

16

ԿՈՐ. «Եւ միւս ոմն (այսինքն նոյ) . . . հանդերձ ամե-  
նայն շնչականաւք՝ տարևոր ժամանակաւք նաւակաց պահալ».  
2. (Նաւակաց կը նշ. Կացեալ կամ կալով ի նախի):  
ԵԳԵԹ. «Առնուլ զնոյ ընտանեւքն հանդերձ եւ ամենայն  
շնչականաւքն ի տապանն». 227:

17

ԿՈՐ. «Որով զվարձահատոյց մխիթարութիւն ընկալան յա-

մենապարգևեղէն Աստուծոյ». 2: Այլուք. «Որում պարգևէք իսկ փճակ յամենաշնորհողէն Աստուծոյ». 10:

ԱԳԱԹ. «Եւ ձեզ քառութիւն շնորհի աստիկ ձերով պաշխարութեամբ յամենապարգևէն Աստուծոյ». 185.— «Խնդրէք յամենապարգևէն Աստուծոյ». 550: Տես եւ «Ամենապարգև չողոյն զաւրութիւն». 526:

18

ԿՈՐ. «Իսկ իբրև հայեցեալ ի բազմահաւուռն զուսարութիւն, արդարեւ դտակաւուցն զանուանս յայտ առնէ». 3: Տես եւ «Բազմահաւուռն արգասիք». 28:

ԱԳԱԹ. «Որ եւ զեղան հեղան (2. իսկ տպ.՝ որ հեղան) շնորհք չողոյն Սրբոյ [ի] յետին ժամանակիս, սփռեցան ի վերայ բազմահաւուռն զուսարութեան ժողովրդոցն (2. իսկ տպ.՝ ժողովոյն)». 500:

19

ԿՈՐ. ա. «Սոյն արիւնակ եւ ամենայն Գիրք հոգեպատուժ նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զաւրաց». 3:

ԱԳԱԹ. «Սոյն արիւնակ տեսանե՛ք՝ հարկ վտանգի հասեալ ստիպեաց զմեզ». Յոջր. 11.— «Սոյն արիւնակ եւ մեր, սչ յանդգնութեամբ . . . ի ներքս անկանել անմտաբար հոսեցայ (հոսեցաք?). 12. եւ 225, 306, 382 երկիցս, 422, 442, 462, 480, 498, 627.— «Զի զոր արիւնակ ի ձեռն կուսին առաջնոյ եւայի մահ հմուտ յաշխարհ, սոյն արիւնակ եւ ի ձեռն այսր Կուսի կեանք մտցնն յաշխարհ: Զի սոր արիւնակ ի ձեռն ծննդեան եւա ի դՊայէն անէ՛ծք եւ քրտունք . . . մտին յաշխարհ, սոյն արիւնակ եւ [ի] ծնանելոյ Ողբոյ քոյ ի Կուսէն՝ հանգիստք . . . մտցնն յաշխարհ». 70: Տես զոր արիւնակ . . . սոյն արիւնակ եւ 508. իսկ ալուք. «Որպէս ի զրախտի անդ . . . սոյնպէս եւ աստ». 115:

Քիի2. «Սոյն արիւնակ բազմութիւնք կրանաւորաց». Գ. դ. 76.— «Սոյն արիւնակ եւ որ միանգամ ի կողմանս (2. իսկ տպ.՝ ի կողմանն) յայն էին նախարարքն, . . . զամենեսեան զըլխատէր». Ե. Ժե. 211.— «Իբրեւ աւձի քարբի . . . սոյն արիւ-



նակ եւ զու խցեր զականջս». Գ. ժե. 119.—«Որպէս արար ի Սարարազ լերին. սոյնպէս եւ . . .» Գ. ժ. 24.—Չոր արինակ . . . սոյնպէս. Գ. ժդ. 33:

ՄԿԲ. «Սոյն արինակ եւ թագաւորն վասն նոցա ի մեծի տաճարին ժամ տուեալք». Գ. դ. 24.—Որպէս . . . սոյնպէս. Բ. ր. 10.—Չոր արինակ . . . սոյնպէս. Բ. ժե. 40:

ԱԳԱԹ. ր. «Նա եւ ամենայն մարդիկն որ ի քաղաքին էին՝ նոյն արինակ դիւարախք մոլեզնէին». 165. եւ 231, 244, 245, 307, 314, 383.—«Զի զոր արինակ ի հունձս ընտրեալ գործմնն ի ցորենոյն՝ ի հուր արկանիցեն, նոյն արինակ . . .» 389: Այլուր. «Զի որպէս անդն ասաց, թէ . . . նոյն արինակ եւ աստ (բատ 2.) ասացեալ . . .» 210. եւ 307, 491: Այլուր. «Որպէս նայն (խնկանոցն) լի էր հոտով անուշութեամբ (տպ. լի էր խոտտովանութեամբ), նոյնպէս եւ Կոյն Հոգւով Սրբով». 319. եւ 390: Այլուր. «Չոր արինակ անդ . . . նոյնպէս եւ աստ . . .» 363:

ԲԻԻԶ. «Ժրբեւ դայս ամենայն լէր թագաւորն Յունաց, նոյն արինակ եւ նա դիւր զուրսն զումարէր». Գ. իա. 55: Այլուր. «Ըս հասարակ զնոյն արինակ ասելի հրամայէր յամենայն աշխարհս». Գ. դ. 75.—«Մերութանն դիւր զզէնն եւ զարդ եւ զնշանն ստղաւարտին՝ բազմաց եղեալ էր զնոյն արինակ». Ե. խգ. 253.—«Որպէս Հայրն՝ նոյնպէս եւ Որդի». Գ. ե. 80:

ԵԻԹ. «Նոյն արինակ յիւրեանց ազգականաց շարշարանս կրեալ ասէ՛ որպէս եւ նոցա յիւրեանցայոցն». Յոջր. Պաւղ. Ը. 1108 ր. (= «Չնոյն շարշարանս շարշարեցայք եւ զուր ի ձերոց սոզականաց՝ որպէս եւ նոքայն ի Հրէից». Ա. Թեա. Բ. 14.)—Չոր արինակ . . . ըստ նմին արինակի. Յոջր. Գծ. 1048 ա. Յոջր. Կթդ. 1079 ա:

Ա. Դաս) չ. «Նա աւանիկ նոյնպէս ամեցուցանելով զքարոգուծիւնն եւ նոյն արինակ ուսուցանելովն եւ նորին նման աշակերտս ասնելով, ջանային զրգուել զթագաւորն». Ոսկ. Փիլիպ. Բ. 364.—«Չոր արինակ ծառայ քր . . . հպարտանալ ինչ այնու զոր չպարտի, նոյն արինակ եւ ոչ այնպիսոյ պարտ է մեծամտել». Առն. Ա. Տիմ. Ա. Յորդ. 12.—«Չոր արինակ ի տան



ուրեք . . . ունի շնորհ հաղարապետ որ տեսան, . . . նոյն  
 արիննակ եւ սաս». անդ, Գ. 25: Այլուր ամենուրեք Ձոր ար-  
 իննակ . . . նոյնպէս. Եփես. Թ. 773 երիցս. եւ այլն:

— ԳԻՏ. Արտաքոյ մի վկայութեանդ նոյն արիննակի՝ որ  
 կայ յՍոկերերանի Մեկնութիւնս Պաւղոսի, Սոյն արիննակ եւ  
 նոյն արիննակ մի մի անգամ կը գտնուին ի գիրս Առաջին Դա-  
 սուն. «Յիշատակեալ պատմագիրս . . . զՋրհեղեղէն սոյն արի-  
 նակ գրէ». Եւս. Ժմ. 24.—«Նորա ամենայն անշնչոց շունչ կար-  
 ծեն, եւ սորա նոյն արիննակ զնոյն իմանան». Եղիկ, 117:  
 Սոցա սովորականն է Ձորն արիննակ, Ջնոյն արիննակ. Ըստ  
 սմին կամ ըստ այսմ արիննակի, Ըստ նմին արիննակի,  
 (Ջնոյն արիննակ, Ըստ նմին արիննակի, կան եւ ի գրու-  
 թիւնս Կորեան. տես զվերջինս ի Վարս Մաշտոցի, 25.) Սոյն-  
 պէս, նոյնպէս. «Ջայտպէս գոյն արիննակ (գրէ) Մանեթովս». Եւս.  
 Ժմ. 112.—«Քանզի եւ նա ի Կանոնսն գոյն արիննակ  
 բանից գրէ զնոցանէ». անդ. 40.—«Հեռացեալք եւ մաւտեալք՝  
 զնոյն արիննակ վտանգէին». Իմաստ. ԺԸ. 12. տես Ջնոյն ար-  
 իննակ անդ, եւ ՓԳ. 7, ԺԸ. 11. եւ Եփես. Գ. 17. Ոսկ. Մտթ.  
 Բ գ. 442. Ոսկ. Ես. 12. 223. Եւս. Ժմ. 7. եւ այլն.—«Ըստ  
 այսմ արիննակի առնէին ամենայն Իսրայելի որ գային զոհել». Ե  
 Թագ. Բ. 14.—«Եւ էին հասարակ ի ներքուստ. եւ ըստ նմին  
 արիննակի հասարակ էին ի գլխոյ կողմանէ». Ելք, 12. 29: Իսկ  
 փոխանակ Ձոր արիննակ . . . սոյն արիննակ, Ձոր արի-  
 նակ . . . նոյն արիննակ, (տես ի վեր անգր յՍոկերերանի Մեկ-  
 նութիւնս Պաւղոսի Ձոր արիննակ . . . նոյն արիննակ եր-  
 կիցս.) կ'ըսեն. «Ձոր արիննակ ոչ զի մեռան, այլ զի խաչեցան՝  
 այն աւելի են զարմանք, . . . ըստ սմին արիննակի եւ զժը-  
 նրնդենէն է ասել». Ոսկ. Մտթ. Ը. գ. 33.—«Ձոր արիննակ որ  
 ի մտաց անկեալ իցեն՝ բազում անգամ զբժիշկան կոչկոճիցեն,  
 սոյնպէս եւ նորա». Ոսկ. Ես. Գ. 29.—«Ձոր արիննակ անաւթ  
 մի ջաղձախ անպիտան . . . , այսպէս են եւ զիքն նոցա». Թուղթ  
 Երեմ. 15.—«Ձոր արիննակ պատուիրեաց Տէր Մովսի-  
 սի, նոյնպէս արարին որդիքն Իսրայելի». Յեսու, ՓԳ. 5.—«Ձոր  
 արիննակ թէ մաղ որ կլանէ՝ այնպէս ուտէ եւ ըմպէ. Եռակք,  
 ԻԳ. 7.—«Որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ, սոյնպէս

պարտ է քեզ եւ ի չնսովմ վկայելք. Գործք Առաք. ԻԳ. 11.—«Որպէս պղինձ ժանգոտ է, այսպէս եւ շարութիւն նոցա». Սիրաք, ԺԲ. 10.—«Զի որպէս կորոյս մարդ զթշնամին իւր, սասպէս կորուսեր զտէր մերձաւորին». անդ, ԻԷ. 20.—«Եթէ իցէ քո ծառայ, կալ զնա իրրեւ զեղբայր. զի որպէս անձին քո, այնպէս կարաւտասցիս նովաւ». անդ, ԼԳ (տպ. Լ). 31.—«Որպէս քացախ՝ վիրի անաւգուտ է, նոյնպէս հասեալ ցարք մարմնոյ տրամեցուցանեն զսիրտ». Առակք, ԻԵ. 20.—«Որպէս նոքա աստուածս բազումս ասնն, նմանապէս եւ սոքա». Եզնիկ, 252.—«Որքեւ զտերեւ դալար յոստախիտ ծառ, . . . այսպէս աղզ մարմնոյ եւ արեան». Սիրաք, ԺԳ. 19.—«Որքեւ ցեց հանդերձի եւ որդն փայտի, նոյնպէս տրամութիւն վնասակար է սրտի առն». Առակք, ԻԵ. 20.—«Որքեւ զինդ օսկի ի քիթ (ի քիթս?) խոզի, այնպէս կննջ շարաբարոյի գեղեցկութիւն». անդ, ԺԸ. 22:

Երկրորդ Դասն չունի Սոյն ւարինակ, Նոյն ւարինակ, այլ կ'ըսէ. «Զսոյն իսկ ւարինակ բանից ասացին Գիրք առ Նա, որպէս եւ առ սայս ասացին». Եւս. Եկեղ. Ա. ր. 11.—«Զնոյն ւարինակ գործեաց եւ Արքեղատոս». անդ, Ա. դ. 35.—«Զնոյն ւարինակ եւ ի թղթի անդ գրեաց նա առ Դոմետիանոս». անդ, Է. Ժա. 547.—«Որպէս լուեալ էր նորա վասն Յիսուսի՝ զնոյն ւարինակ ետես արդեամբք ի ձեռն Թագէտոսի». անդ, Ա. Ժգ. 65.—Որպէս . . . սոյնպէս. Եփբ. Հս. Գ. 19. Որպէս . . . այսպէս. անդ, Ե. 21. Զոր ւարինակ . . . սոյնպէս. անդ, Գ. 19. Ըստ ւարինակի . . . սոյնպէս. նոյն, Ա ԹԵՍ. Գ. 180:

Երրորդ Դասն բոլորովին նման է 2որրորդին. «Սոյն ւարինակ եւ աթոռ Դաւթի իրրեւ ասէ, մի զփայտեղէն խնդրեր». Յիւր. Կոչ. ԺԲ. 222.—«Նոյն ւարինակ եւ սոքա ի վերայ երեսաց իւրեանց անկեալ՝ երկիր պագանէին Փրկչին». Գտմ. Հար. Եգիպտ. 238.—«Զոր ւարինակ անդ . . . սոյն ւարինակ եւ աստ». Յիւր. Կոչ. ԺԲ. 228.—«Զոր ւարինակ նոքա սպասեն գարշապարին, նոյն ւարինակ եւ դուք զնոսա կոխան արարեալ՝ զգուլսն խորտակեսչիք». անդ, Զ. 119: Այլուր. Զոր ւարինակ . . . սոյնպէս. անդ, ԺԸ. 406:

Իսկ փոխանակ Դոյն ւարինակի՝ որ կը գտնուի ի գիրս

երկրորդ Աշակերտաց, Առաջին Աշակերտք կ'ըսեն Ըստ դմին  
արիննակի. Դուկ. 2. 23:

20

ԿՈՐ. «Սոյն արիննակ եւ ամենայն Գիրք յոգեպատումք  
նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զարաց». 3.—«Անդ  
կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց յոգեպատում Դրոց». 23:

ԱԳԱԹ. «Անդ էք այնուհետեւ քննելի յոգեպատում մա-  
տեանքն մարգարէականք». 292—293: Տես եւ «Հոգեպատում  
բարբառ, 296, 526.—երգող, 353.—թուղթք, 524.—մարգարէ,  
619 —պատգամք». 546:

—ԳԻՏ. Պատում՝ արմատով բարգուծիւնք սիրելի են Կո-  
րեան, ինչպէս կը վկայեն եւ յաջորդք. «Այնպէս միջամուկս եղեալ  
հանդամանաք արիննակատում՝ պատգամացն».) 12.—«Սկը-  
սեալ երանելոյն Մաշտոցի ճառս յաճախագոյնս, զիրապա-  
տումն (Ազաթ. 657, դժուարապատումս) . . . կարգել եւ յա-  
րինելք». 21—22. Ծճմարտապատում. (տես աստէն, թիւ 148.)  
—«Զի անցսուոր ժամանակաքս մատենապատում՝ երկնաբերձ  
պայծառացուցեալք. 2.—«Ունիմք եւ զկանոնական յաջորդեալ  
յԱռաքելոցն անտի զՆորնապատում՝ զրեալսն». 6.—«Որոց մեր  
իսկ ականատես եղեալ կերպարանացն, . . . եւ լսող շնորհա-  
պատում՝ վարդապետութեանն». 28.—«Իբրով աւետարանական  
եւ ողջունապատում՝ (ըստ 2, Ազաթ. 628. իսկ տպ. Կորեան՝  
ողջապատում) գնացիրն». 22.—«Գիրք սուտապատումք . . .  
սան ուրումն հոռոմի». 25.—«Ոչ սուտապատում՝ ճարտարա-

1. Տպ. օրինապատգամացն. պատշաճ համարեցայ փոխել արիննա-  
պատում պատգամացն, զի կան առ Ազաթ. «Որով ածեալ ի կատարումն  
զյառաջապատում պատգամս ետայեայ». 365.—«Հոգեպատում պատգա-  
մացն ընդիս եւ ծանաթս կացուցանէք». 516.—«Քանդի միոյն Աստու-  
ծոյ արէնք եւ արիննապատումք՝ առաջին եւ երկրորդն ճանաչէք». 521:  
ես եւ յԱռաջին Գասէն ունինք Արիննապատում. «Իսկ բարձր պնդին որ-  
պէս թէ ճշմարիտ իցէ բան՝ եզրի զզրի եւ արիննապատմի . . . այլ նշա-  
նագիրս երբայեցուց ցուցանել». Յերոն. Յոջք.—«ՅԱռաջին զիրս եզրի կ'ը-  
սուի Պատմիչ արիննաց, Ը. 21. Թ. 39, 42, 50:

խաւս եղեալ». 28.—Առ Ազաթ. Անպատում՝ արքայութիւն, 426, 552. և այլ բաղում ուրեք. Անպատում՝ լինել (այսինքն 2 պատմել). 246. Աշխարհապատում՝ մեծն մարդարէլիցն (Մովսէս). 192. Աշխարհապատում՝ լինել. 236. Աշխարհապատում՝ արարչութիւն. 546. Աստուածապատում՝ իմաստութեանն նուազք. 491. Աստուածապատում՝ անաբեր վարդապետութիւն Միածնին. 523. Աստուածապատումն (Յոհ. Անտարանիչ). 534. Արինապատում. 521. Բարձրապատում՝ հնչեցուցանել. 367. Բարձրապատումն հռչակեցուցանել. 534. Ընդնապատում՝ աննել. 242, 371. Ընդնապատում՝ լինել դյանցանայն. 216—217. Թառնապատում՝ շարել (այլ շարժել). 346. Կարճապատում՝ շարել. 368. Ծշմարտապատում՝. (տես աստէն, թիւ 148.) Մանրապատում՝ նշանք. 193, 345. Յառաջապատում՝ լինել, շարշարանք, պատգամք. 293, 348, 365. Յատկապատում՝ աննել. 546. Իրիտոսապատում՝ անտիրք. 366.—Առ Բիւզանդայ կան միայն. «նա և բաղում զարուժիւնս անպատումն յանձին իւրում բարձեալ բերէք». Գ. դ. 74.—«Եւ յանպատում՝ ուրախութեան ուրախ լինէին». Գ. ժդ. 124.

Միւս Դասուց մէջ կը գտնուին, յԱռաջին Դասի. Անպատում՝ պարգեւք. Բ. Կոր. Բ. 15. Անպատում՝ Աստուած. Սերբեր. Ա. 2. և այլն. Արինապատում. Յերոն. Յոջք. (տես զվկայութիւնն յերես 50, ծան. 1). Դժուարապատում՝ դատաստանք. Իմաստ. ժէ. 1. Դժուարապատում՝ ի մեկնել բանք. Երբ. Ե. 11. Ըղճապատում. Զար. ժ. 2. Երեմ. ԻԹ. 8. Յերկարապատում՝ բանք. Աթ. Անտ. 33. Վիպապատում՝ մատան, մատենագիրք. Եւս. ժմ. 9, 30:

Յերկրորդ Դասի. Անպատում<sup>1)</sup> ճաշակք. Եփր. Համար.

1. Յեփրեմի Մեկն. Բ. Արինաց, 283, սխալ է «Եւ զի ասէ նախանձեցուցիցից՝ զձեզ յազգս անպատումս». (այսպէս և նոր Հայկ. ի բռան Անպատում.) ուղղելի է ապատոմն. Համեմատէ. «նախանձեցուցից զձեզ յազգս ապատոմն». Զգաց, ժԱ. 202. ժԳ. 253. ժԵ. 266, 276. ժԸ. 307. որ է բանն Երկրորդ Արինաց, ԼԲ. 21. «նախանձեցուցից զնոսա շազգաւ». («նա նախանձեցուցից զձեզ ոչ ինչ ժողովրդեամբ». Հա. ժ. 19.—«նախանձեցուցից զձեզ յոր ոչ ժողովրդի իմ». Եփր. Հա. ժ. 39.—«նախանձեցուցից զձեզ շնչին ազգաւ». Ոսկ. Հա. ժԸ. 258.)



53. Անպատում՝ նեղութիւնք. եւս. եկեղ. Բ. իդ. 137. Բազմապատում՝ բանք. եփր. Յոջր. Մեկն. Թղթ. Պաղ. 5. Դժուարապատում՝ ի պատմել շարիք. եւս. եկեղ. Բ. դ. 88:

Յերբորդ Դասի. Անպատում՝ պտակք. Կիւր. Կոչ. Դ. 60. Անպատումք. Բրս. Վեց. Բ. 23. Աստուածապատումն Յովհաննէս (Աւետարանիչ). Կիւր. Կոչ. ԺԲ. 201. Դժուարապատում՝ զարմանալիք. Բրս. Վեց. Բ. 36. Մեծապատում՝ ճառք, առաւելութիւն. անդ, Ա. 1. Բ. 23:

## 21

ԿՈՐ. «Եւ զոմանց ըստ աշխարհակիր (տպ. աշխարհագիր) կարգաց<sup>1</sup>) զմարտից եւ զպատերազմաց (տպ. զպատերազմողաց) արութիւնսն». 3. Տես եւ «Մերկանայր այնուհետեւ զաշխարհակիր (տպ. զիշխանակիր) ցանկութիւնսն». 7.— «Յամենայն աշխարհակիր զբաւանաց առանձինն սահմանել». 24:

ԵԳԵԹ. «Նախ թեթեւագոյն ըստ աշխարհակիր (տպ. աշխարհագիր) կարգաց առակարանեալ եւ արուեստախաւսեալ». 520: Տես եւ «Նաւեալք ընդ մըրկեալ [ծոյ] աշխարհակիր մեղացն». Յոջր. 16:

## 22

ԿՈՐ. «Եւ ոչ այսչափ միայն. այլ եւ ճոզեկան ազգին ճրեշտակութեամբ զովեալ զսրբոցն (տպ. զսրբոյն) զաւրութիւն». 3. (Թեթեւ «ճոզեկան ազգին ճրեշտակութեան». այսինքն ճրեշտակաց. վերացեալ ճրեշտակութիւն, փոխանակ թանձրացելով ճրեշտակք. որ է ոճ ասորի:)

ԵԳԵԹ. «Ճշմարտագոյն համարիմք այսուհետեւ ճոզեկան ազգին զամենայն մարդակերպ նմանութիւնս առ մարդիկ եղեալ». 245:

## 23

ԿՈՐ. «Որպէս զհիւրամեծարին Արրահամու, ճրեշտակաբն հասելովք զծառայական հաւասարութիւնն յայտ արարեալ». 3:

1. Խոր. Պոմ. Ա. դ. 14, բոսժ է ըստ աշխարհաւրէն կարգաց:



ԱԳԱԹ. «Որպէս եւ առ Ղովտ եկելովքն Հրեշտակաւքն,  
պատեհազոյն է եւ դայրոցն իմանալ». 263:

24

ԿՈՐ. «Պատմելով նմա՛ յետ անտեսացն ընկալելոց՝ զինչ  
ի Սողոմն էր գործելոց». 3:

ԱԳԱԹ. «Զհետ երթեալ (տպ. երեւեալ) նրամանացն ըն-  
կալելոց». 660:

25

ԿՈՐ. «նոյնպէս եւ զքաջի նահատակին Յորայ՝ . . . առա-  
ջի պատերազմականին յաւրինէ՛ զգովութիւն». 3:

ԱԳԱԹ. «Զի ի տղծազունդ այսոցն եւ ի պատերազմական  
դիւսացն՝ աստուածակարգ անուշահոտ ողիքն՝ զազգս մարդկան  
աներկիւղ պահեսցեն». 242—243:

—ԳԻՏ. Պատերազմականն գոյական է, եւ կը նշանակէ  
զՍատանայ պատերազմող ընդ մարդկան. իսկ Պատերազմական  
դեւ՝ ածականաբար առեալ է:

26

ԿՈՐ. «Իսկ մեծին (իմա՛ կամ ընթերցիլ՝ զմեծին) Մովսեսի  
զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն ամենայն եկե-  
ղեցական Գրով (Գրովք? Գրոց?) նշեցուցեալ». 3—4.—«Մեծ-  
նայն եկեղեցիք նշեցուցանէ՛ զընտրելոցն զազնուականու-  
թիւն». 5:

ԱԳԱԹ. «Վասն որոյ եւ բարձրապատում նշեցուցանէ ի  
սկզբանն տիեզերախաւս Աւետարանին, ասելովն՝ թէ՛ Կամ եղև  
ինձ» եւ այլն. 367.—«Զբանն կենաց նշեցուցեալ». 518:

—ԳԻՏ. Նշեցուցանեմ՝ կը նշանակէ ի տեղիսդ՝ Հռչակ  
հարկանեմ, Հռչակեմ, Հռչակեցուցանեմ, Քարոզեմ, գղ. Proclaimer.  
«Քարձրապատումս . . . սկսան նշակեցուցանել զպատիւ . . .  
Միածնին». Ազաթ. 534. զոր համեմատէ ընդ առաջին վկ. նորին:

27

ԿՈՐ. «Եւ ոչ միայն զյառաջազունիցն, այլ եւ զկնի եղե-  
լոցն զՄիածնի Որդւոյն Աստուծոյ Փրկչին (Միածին Որդին Աս-

տուծոյ Փրկիչն?) ամենեցուն՝ ի լուսարեր Աւետարանին իւրում ծաղկեցուցանէր զաշնուակահուիթիւնս»։ 4:

ԵԳԷԹ «Ապրիլ ամենեցուն լուսարեր եւ կենսատու մղըր-տուիթեամբն»։ 304. — «Յառաջագոյն հրաւիրեաց յակնկալուիթիւն լուսարեր յարուիթեանն»։ 357: Յեաինս այլուր կ'ըսուի «լուսա-տոր յարուիթիւն»։ 353, 356. այսպէս եւ ՅՏԽ.<sup>1)</sup> «Մահ ոչ էր, մինչ մեղք ոչ էին. եւ այժմ լուծեալ է լուսատր Քրիստոսի յարուիթեամբն»։ 2. 48:

28

ԿՈՐ. «Յայց ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել եւս զթե-թեւագոյնսն՝ բարձրագոյնս անարգամեծարն<sup>2)</sup> Քրիստոս յար-գէ»։ 4. (բառզ «յարգէ» ի տպագրին խախտեալ է յիւր տեղոյն, որով եւ իմաստն մթացեալ):

ԵԳԷԹ. «Զինա անարգամեծար տէր է, եւ նա ինքնին պա-հեսցէ զմեզ զաղախնեայս իւր յամենայն մեղաց»։ 147—148. (հա-մեմատէ. «Հեղուիթիւն անարգամեծար տէր է»։ ՅՏԽ. ԺԸ. 110):

29

ԿՈՐ. «Ընալիթ ընտրուիթեան անուանեալ (զԳաւդոս), ա-նուանակիր յաշխարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ»։ 4. (Եկ-

1. Ես կարծեմ թէ Յաճախապատում ճարն՝ Ոսկերերանի Հոսփ-մայեցոց Քղթոյն Մեկնութեան զժրախտուիթեանն հանդիպած են. (տես վե-րագոյն, է. 22—23): Բազմապատիկ խանգարմանց ներքեւ՝ ի շատ տեղիս Առաջին Աշակերտաց լեզուն կը նշմարուի. հին եւ պատուական բառք եւ ասացումք՝ որ կը գտնուին եւ առ եզնըկայ եւ ի Մեկնութիւնս Ոսկերերա-նի. թող գանթիւ նմանութիւնս ընդ Ազաթանզեղի: Ամէնորք կը նշանա-կեմ ի մտաներս գնմանութիւնս մեր արդէ Յաճախապատմին եւ Կորեան գրուիթեանց, թողով այլում ժամանակի զլիտկատար համեմատութիւնն: («Էմ կարծեք՝ Յաճախապատում ճարնց ունեցած ենք հնարոյն թարգ-մանութիւն, եւ զայս թուին հաստատել մանրիկ նոյնութիւնք եզնըկայ եւ մեր արդի Յաճախապատմին, իբր ի նտարեկութենէ զերծեալ նշխարք»։ Իմ թուղթ առ Մեծ Տ. Գր. Կալէքթարեան, 20 Սեպտեմբեր 1893):

2. Սոյն բառի կազմութեան համեմատ բառ է Գրեզորիոս Արչա-բունի (է գար) յիւր Մեկնութեան Անթերցումոց, գլ. 17. Արժանաւարե-ցար ընու զփափոզ սիրոյ զոր ունէար առ տէր, եւ հատուցանել զպարտս ծառայամեծար տէրութեանդ»:

նարկէ ի բանն Գործոց Առաքելոց, Թ. 15. «Եսէ ցնա (ցԱնանիա) Տէր. Երթ դու, զի անաթ ընտրութեան է ինձ նա, կրնի զանուն իմ՝ առաջի հեթանոսաց եւ թագաւորաց եւ որդւոցն Իսրայելի»:

ԱԳԱԹ. «Խորհուրդ առեալ համագունդ՝ երկնաբերձ աշտարակ շինելոյ, անուանակիր առ ի յիշատակ մշտնջենաւոր, փոխանակ յախտենականին Աստուծոյ». 224:

ԵԻԹ. «Մանր պատմեցից զգեղեցկանուն զհռչակաւորն անուն, զանուանակիրն աստուածեղէն պատգամացն». Յռչբ. ԳԺ. 1047 բ. — «Եւ զնոյն իսկ զանուանակիրն Ստեփանոս, եւ զայլս նորատունկս ընդ նմա». Յռչբ. Պաղ. 1109 ա.

### 30

ԿՈՐ. «Վասն որոյ Երանելոյն (Պաղոսի) հայեցեալ ի շնորհացն բարձրութիւնսն». 4. Այլուր. «Մանաւանդ հայեցեալ ի տեառնարարբաւ նրամանացն բարձրութիւնն». 12. — «Աստուածեղէն պատգամացն բարձրութիւնն». անդ:

ԱԳԱԹ. «Զի ակնատես իսկ փայլեցուցէ զշնորհացն բարձրութիւնն». 373. Այլուր. «Զի . . . յիրացն կատարելոց առեալ տանիցիս զճշմարտութեանն բարձրութիւն (տպ. զճշմարտութիւնն բարձրութեանն)». 372:

— ԴԻՏ. Կորեանն նրամանացն բարձրութիւնն կը գրանուի մի անգամ եւ յԱռաջին Դասի այլով շարուածով. «Թէպէտ եւ տաղակալ պարտ էր ընդ ծանրագոյն բանսն, եւ տաղտապիլ ընդ բարձրութիւն նրամանացն». Ոսկ. Մտթ. Ա. ին. 390:

### 31

ԿՈՐ. «Ի վերայ այնորիկ ապա եւ զճամարձակագոյնն բերէ (Պաղոս), թէ Ո՞ կարէ բիծ գնիլ ընարելոց Աստուծոյ». 4. (— «Ո՞ ի իցէ որ մեղադիր լինիցի ընարելոց Աստուծոյ». Հս Ը. 33:)

ԱԳԱԹ. «Տեսանես զի շեթող ինչ ի միջի գոտուածագէտ իմաստութեանն զպայման. այլ միանգամայն գրովանդակն բերէ ասելովն, թէ էր ի սկզբանէ, եւ առ Աստուած էր». 527: Այլուր. «Բերէ ի սոյն եւ Պաղոս, թէ Ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զէանախն հաւասար Աստուծոյ». 535:

32

ԿՈՐ. «Զոմանց ի սուրբ Աւետարանին, եւ զոմանց ի Գործս Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագրեալ»։ 5:

ԱԳԱԹ. «Մանաւանդ զի առնթեր եւս ունիցիմք . . . զերանելին Ղուկաս»։ 366—367.—«Որպէս երանելոյն Ղուկայ ի սկզբան Աւետարանին յայտ արարեալ»։ 532:

33

ԿՈՐ. «Այլ սրբոյն Պաւղոսի առաւելագոյնս ճանաչի շորեք-տասանեքումբք թղթովք պատմել զիւր առաքելակիցս եւ նիզակակիցս, եւ ուրախակիցս իւր առնել»։ 5. (տպ. «եւ իցենն որ ի կաթուղիկէս առաքելոցն առաւելագոյնս ճանաչին: Այլ սրբոյն Պաւղոսի շորեքտասանեքումբք թղթովք պատմէ զիւր առաքելակիցս, եւ նիզակակիցս եւ ուրախակիցս իւր առնէ»։ պատշաճ թուեցաւ ինձ փոխել ըստ վերոյեղելոյդ գլխաւորապէս խանգարեալ հատուածդ: Կայ առ Ազաթ. 247. «Ի բարբառոյն եւ ի հրամանացն ճանաչի՝ եթէ մարդակերպ երեւեալ (է Աստուած մարգարէիցն)»: Յերկոսին եւս տեղիսդ ճանաչի կը նշ. յայտնի է, յայտնի տեսանի):

ԱԳԱԹ. «Արդ նոցին բարեխաւսութեամբ հաճեցարուք ընդ Աստուծոյ, ըստ խրատու սոցին առաքելակցին ձերոց առաքելոցս՝ մեծին Պաւղոսի»։ 424. (իմն կամ ընթերցիր՝ «ըստ խրատու սոցին ձերոց առաքելոցս առաքելակցին՝ մեծին Պաւղոսի»։ համեմատէ. «նոցին Առաքելոցն ճգնակիցք»։ Բիւզ. Գ. Ժդ. 39.)— «Զոր եւ երանելին (2. իսկ տպ.՝ Զոր երանելին) Պաւղոս՝ առաքելակից ձերոց առաքելոցս (2. իսկ տպ.՝ Առաքելոցն)՝ մեկնեաց ի թղթին մխիթարականի, որով եւ զԹեսսաղոնիկեցիսն սփոփէր»։ 451:— Ճ. Բ. Սարգիսեան սխալ կը հասկնայ զնշանակութիւն բառիցդ «ձերոց առաքելոցս» յառաջին վկ. Ազաթանգեղի (21):

34

ԿՈՐ. «Այլ սրբոյն Պաւղոսի առաւելագոյնս ճանաչի շորեք-տասանեքումբք թղթովք պատմել զիւր առաքելակիցս եւ նիզակակիցս, եւ ուրախակիցս իւր առնել»։ 5. (տպ. այլադգ. տես ի նախընթաց թիւդ 33):



ԱԳԱԹ. «Եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի թի-  
կունս աւգնականութեան՝ նիզակակիցք զործոյն պատերազմի».  
32—33.—«Գիտութիւն լիցի եղբայրութեանդ քում նիզակակցի  
մերում»։ 124. հրովարտակ Գիտկղեւտիւնոսի առ Տրդատ։

ԲԻԻԶ. «Եւ նիզակակիցք զաւրավարին Հայոց, որ էին  
Բագարատ (տպ. Բագրատ) Բագրատունի, Մհհունդակ եւ Գարե-  
գին Ռչտունիք, . . . հասանէին հարկանէին սատակէին զգաւրսն  
(տպ. զօրսն) Ալանացն» Գ. է. 17.—«Եւ էր Բարիկ նիզակակից  
(Մանուելի) զամենայն աւուրս կենաց նորա»։ Ե. խբ. 250.—«Ապա  
խաւսել սկսանէր սպարապետն Մանուէլ ընդ իւրում նիզակա-  
կցին Բարկան, եւ ասէր»։ Ե. խգ. 253.—«Եւ անդէն նիզակա-  
կիցն Մանուելի Բարիկ՝ տէր գաւառին Սիւնեաց՝ հասանէր»։ անդ,  
254։

ՄԿԲ. «Զի եւ ձեզ եւս կամ լիցի գրել ձեզ զմեզ նիզակա-  
կիցս եւ բարեկամս»։ Ա. բ. 20.—«Ընդէր ծանրացուցանէք զլուծ  
ի վերայ պարանոցի նիզակակից բարեկամաց մերոց»։ անդ, 31.  
տես եւ Ժ. 6, 47. Ժա. 33. Ժբ. 3, 7, 8, 14. Ժդ. 40. Ժե. 17. Բ.  
Ժդ. 17.—«Համարձակ յարձակէին՝ նիզակակից զերկնաւորն  
ողորմութեամբ իւրով յանձինս ընկալեալ»։ Բ. Ժա. 10։

[Ա. Գաս]՝ «Ո՛ւր արդեւք էին նիզակակիցքն եւ կապար-  
ձակիրքն, որ ի ժամ իրին եւ պատերազմին զզէնն եւ զգարգն  
վաղվազակի առ նոսա հասուցանէին՝ յաւուրն շարի եւ կորստեան»։  
Մար. Ի Վկ. Արեւ. 127։

—ԳԻՑ. Կայ նիզակակից մի անգամ եւ յԵրկրորդ Գասի.  
«Եւ ոմն քաջայերեալ զաւրանայ, եւ քաջայերին ի նմանէն եւ նի-  
զակակիցք ընկերք իւր»։ Եփր. Աւետ. 318։ Այս բառս կը նշա-  
նակէ, 1. առ Կորնեան եւ առ Ագաթանդեղի (առաջին վկ.)՝ Գոր-  
ծակից, Վաստակակից, Օգնական, զգ. Auxiliaire, Coopérateur.  
(«Զամենայն գործակցաց իւրեանց գրով նշանակել զքաջութիւնս».  
Կոր. 4—5)։ 2. Առ Բիւզանդայ՝ Օգնական կամ Խորհրդակից զօրա-  
գլխի, իրր զգ. Adjudant, ճիշդ Համհարզ (=Պրս. Հէմրազ,  
Խորհրդակից) բառի մտօք՝ զօր Մ. Խորենացի կը գործածէ ի  
Սուտ—Կալիթութեանայ Պատմութեանն Աղեքսանդրի (Ե. 33,  
90, 152, 153), եւ ըստ նմանէ Եղիշէ ի Պատմութեան Վար-  
դանանց։ 3. Ի վերջին վկայութեան Մակարայեցոց՝ Պատերազ-

մակից, Մարտակից. (սերթայր այնուհետև մկրտէր (Պաւղոս),  
 եւ անճառ խորհրդոցն լինէր խորհրդակից, եւ պաշտպան եւ  
 հմուտ մարտակից քարոզութեանն. եւթ. Յսձք. Պաւղ. 1107  
 բ.) 4. Առ Ազատանգեղի (երկրորդ վկ.) եւ ի միւս յամենայն  
 վկայութիւնս Մակարայեցոց՝ Դաշնակից, գգ. Allié. 5. Առ Մարտակից  
 (եթէ չիցէ գրելի շնորհակալիրքն եւ կապարճակիրքն)՝  
 Զինակիր, գդ. Ecuyer, Valet d'armes. 6. Առ եփրմայ՝ Զինուորակից:

Առաջին Դասուն մտանազիրք՝ բաց ի Մարտակից թարգմանչէն՝ չգիտեն Նիզակակից բառ, այլ Զինակիր. Ա թագ. ժէ. 7. Վարձանակիր. անդ, 41. Կապարճակիր Դաս. Թ. 54, եւ այլն: Իսկ ուր Կորիւն Նիզակակից կը կոչէ զգործակիցս Պաւղոսի, ի Թուղթս Առաքելոյն կը գտնենք Գործակից, (Հա. ԺԶ. 3, 9, 21. Ա Կոր. ԺԶ. 16. Փիլիպ. Բ. 25, Դ. 3. Կղզս. Դ. 11. Փիլիմոն, 1, 24.) Վաստակակից, (Ա Կոր. ԺԶ. 16.) Զինուորակից, (Փիլիպ. Բ. 25. Փիլիմոն, 2.) Պատերազմակից, (Հա. ԺԵ. 30): Նայնպէս եւ յերկրորդ Դասի. Քիւրք էին նորա (Պաւղոսի) ազնականք, որպէս եւ ինքն անուանէ զնոսա՝ գործակիցք էին նորա ընդ նմա յԱւետարանի անդ. Եւս. Եկեղ. Դ. դ. 149—150.—Քնքն իսկ Պաւղոս վկայէ վասն նորա (Գղմենեայ) եթէ ազնական եւ գործակից էր նորա. անդ, 151.—Քնա էր ազնական նորա յԱւետարանի անդ. անդ, Դ. ժե. 180.—Քանզի նորա մարտեան եւ կցորդ եղեն պատերազմին իմոյ՝ որ յԱւետարանի անդ էր. եփր. Փիլիպ. Դ. 162: Եւ յերրորդ Դասի. «Զպատերազմակիցն Պաւղոս ի Տարսոսնէ յԱնտիաք առեալ ընդ իւր սձէր (Քառնարաս)». Կիւր. Կոչ. ժէ. 386: Նիզակակից բառի 2դ նշանակութեան համազօրն չգանուիր ի գիրս միւս Դասուց: 3դ նշանակութեամբ կ'ըսուի Պատերազմակից Յուդիթ, Դ. 7. Սերեր. Դ. 65, եւ այլն. Մարտակից Յեսու, Ա. 14, եւ այլն. Կոռակից. Մեմնոն եւ Ամագոնք (տղ Ամագոնք) Պրիամայ կըռուակից եղեն. Եւս. Քր. 74: 4դ նշանակութեամբ՝ «Եւ նա (Արամ) էր բնակեալ առ կաղնեան Մամբրէի Ամովրացոյն՝ եղբարն Եսրողայ եւ եղբարն Անանայ, որ էին դաշնատորք Արամու. ԺՆն. ԺԴ. 13:

## 35

ԿՈՐ. «Զի արինակ եւ կանոն զկնի եկելոցն պաշտօցի»։ 5: ԵԳԵԹ. «Զի կանոնը մշանջնակարգք աշակերտելոցն պաշիցին (տպ. պահիցեն)»։ 524.— «նոյն կանոն եւ Առաքելութիւն պաշտեցաւ (2. իսկ տպ.՝ պաշտեցան)»։ 521:

## 36

ԿՈՐ. «Բարեաց գործոց նախանձատրս լինել ամենեցուն ստիպէ»։ 5:

ԵԳԵԹ. «Բարեաց գործոց նախանձատր եղևալ»։ 632: Ելլուր. «Բարեաց գործոցն ժառանգաւոր լինել»։ 595.— «Ընդ բարեաց գործոց՝ շնորհս գտանել ի բարերար Տեառնէն»։ 201: ԲԻԻԶ. «Նախանձատր լինէր գործոց բարեաց»։ Գ. դ. 75:

[Ե Դաս] Կ «Եւ մեք բարեաց գործոցն նախանձատր լիցուք»։ Ոսկ. Ե Տիմ. Ե. Յորդ. 13:

— ԳԻՏ. Բարեաց գործոց նախանձատր լինել առեալ է ի Թղթէն Տիտոսի, Բ. 14, ուր կը կարդանք. «Զի . . . սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական՝ նախանձատր գործոց բարութեան»։ Եյսպէս եւ յՈսկ. Մտթ. Բ. իդ. Յորդ. 711. «Զայս ամենայն զմտաւ ածեալ՝ նախանձատրք լիցուք գործոց բարութեանց»։ Սոյնպէս եւ յերրորդ Դասի. «Ծնցիս զու ինձ անդ ժողովուրդ սեպհական՝ նախանձատր գործոց բարութեան»։ Պամ Հար Եզիպտ. 231: Իսկ բարեաց գործոց կը գտնուի ի նմին Թղթին Տիտոսի, Գ. 8, 14. «Զի փոյթ արացեն բարեաց գործոց վերակացու լինել . . . : Ուսցին եւ մերքն եւս՝ բարեաց գործոց վերակացու լինել»:

## 37

ԿՈՐ. «Հանգոյն սմին եւ Ղուկաս յսկիզբն Առաքելագործ մատենին զնէ»։ 5: Ղերագոյն ի նմին երեսի. «Եւ զոմանց ի Գործս Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենադրեալ»:

ԵԳԵԹ. «Որպէս եւ Պետրոս յԱռաքելագործ մատենին ասէ»։ 299.— «ՅԱռաքելագործ մատենին առական մեկնէր (Քրիստոս)»։ 345: Ելլուր. «Սկիզբն զնէ (Ղուկաս) Առաքելագործ

զրոյն» 367: Տես եւ «Զամենայն առաքելաբան (տպ. առաքելարան) առաքելագործ վարեալ (Գրիգորիոս)» 660, —ԳԻՏ. Միւս Դասուց սովորականն է Գործք Առաքելոց, որ յեփր. երբ. 196, եւ Բ Տիմ. 255, եւ ի Կիւր. Կոչ. Գ. 71, ըստած է նա եւ Գործք երկոտասան Առաքելոց: Կայ եւ ուրեք յԱռաջին Դասի Պրակր, (Ոսկ. Կոզս. Թ. 624,) եւ այլուր յերրորդ Դասի՝ Պրակր Առաքելոց (Բրս. Վեց. Թ. 196), ի յունականէն *práxeis*—Գործք:

38

ԿՈՐ. «Յայտնի է այսուհետեւ ասացելովքս, եթէ գովութիւն ամենայն աստուածատէր ընտրելոցն ի Տեառնէ» եւ այլն. 6: ԵԳՄԹ. «Եւ արդ յայտնի է այսուհետեւ ասացելովքս, թէ եւ նախաստեղծ մարդոյն» եւ այլն. 249:

39

ԿՈՐ. «Առն[ն]՝ զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, . . . էր Մաշտոց անուն» 6:

ԵԳՄԹ. «Եկեալ . . . Որդին Աստուծոյ՝ կատարել զխորհուրդ նախակարգ յաւիտեանցն» 279:

ԵԻԹ. «Յառաջարան Պաղոսի Առաքելոյ նախակարգեալ ի գլուխ զրոցս». Յռչր. Պաղ. 1107:

—ԳԻՏ. եւթադի նախակարգեալ բառն կը գտնուի եւ ի վերնադրի Սրբոյն Յերոնիմայ Յառաջարանին Աստուածաշունչ Գրոց (տես վերագոյն յերես 26, ժա). «Յառաջարան նախակարգեալ Թագաւորութեանց». այլ չգիտեմ՝ թարգմանչի՞ն է բառդ թէ ընդօրինակողաց Աստուածաշունչ մատենին: Յառաջարան բառի համար ալ տես ի Բիւզ.—Եւթ. թիւ 2:

40

ԿՈՐ. «Ի մանկութեան արնն վարժեալ (Մաշտոց) Հեղինական դպրութեամբն». 6.—«Եւ անդէն ի նմին քաղաքի զրիչ ոմն Հեղինական դպրութեան, Հռովանոս անուն, գտեալ». 10.—«Որ եւ ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ Հեղինական լեզուին». 21: Ելլուր. «Իսկ աշակերտատէրն վար-»



դասակարգին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յԱսորի դպրութեանն կարգէր, եւ զոմանս [ի] Յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն զուժարէր»։ 9. (տպ. սխալ կիտաղբաժ է. տես աստէն ի թիւն 58, ԳԻՏ.) — «Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական Գրոց զուժարութիւնն՝ կանխաւ [ի] Յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ»։ 21։

ԱԳԱԹ. «Եւ զնոսա (զորդիս քրմացն) յերկուս բաժանեալ, զոմանս յԱսորի դպրութիւն կարգեալ, եւ զոմանս ի Հելլէն», 626. (դժուարին է գիտիլ թէ իրօք կանչ այս բան ի բնագրին Ազատականցի, թէ Կորիւն մուծած է զայն յիւր Պատմութենէ վարուցն Մաշտոցի. տես զչորրորդ վկ. Կարեան:) Ելլուր. «Ըստ Յունականին՝ որ է ինքն Ափրոզիտէս»։ 607. — «Յունական աշխարհական դպրութիւն»։ 643. — «Յունական ճարտարութիւն»։ 660. — «Ի Յունականաց այտի»։ 44. — «Հոռոժարէն եւ յունարէն ուսեալ դպրութիւն»։ Յոջր. 19։

ԲԻԻԶ. «Բայց միայն սակաւ ինչ որք զհանգամանս գիտէին Հելլէն կամ Ասորի դպրութեանց»։ Գ. Ժգ. 33։ Ելլուր. «Յունական դարբ»։ Գ. ի. 131. — «էր սա ազգաւ Յոյն»։ Ե. իե. 218. — «Կարգէր եւ ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն եւ ասորերէն յամենայն գաւառս Հայոց»։ Գ. դ. 77. եւ այլն։

— ԳԻՏ. Հելլենական եւ Հելլէն իբր անական բառք՝ անձանօթ են միւս Դասուց, որ կ'ըսեն Յունական, Յոյն, Յունարէն. «Յունական սուր», Երեմ. ԽԶ. 16. Ծ. 16. «Յոյն լեզու». Եւս. Ժմ. 93. Եփր. Ա. Կոր. ԺԳ. 77. Եւս. Եկեղ. Է. իդ. 579. Բրս. Վեց. Զ. 110. «Յունարէն լեզու». Եւս. Ժմ. 56. «Յունարէն գիր» Դուկ. ԻԳ. 38. տես եւ Յունալեզու, Ոսկ. Եփես. Պատճառք, 673. Յոյնութիւն, Եփր. Ա Կոր. ԺԳ. 77. իսկ Հելլենագիր, զոր կը յիշէ նոր Հայկդ. իբր յՈսկերերանի Մատթէի Մեկնութենէն, ոչ է թարգմանչին Մեկնութեանդ, այլ Հ. Արսնի Բագրատունոյ։ Կայ միայն յԱռաջին Դասի Հելլէնք եւ Ելլենացիք իբր ազգի անուն, փոխանակ Յոյնք. «Եւ անտի կարգեալ հասանէր . . . զորժ դրաւագործութեան . . . ի Հելլէնս, որ են Յոյնք»։ Եղնիկ, 206. — «Եւ Հելլէնք կոչին Յոյնք»<sup>1)</sup> յառնէ միտջէ, որում Հեղինոս ա-

1. Հակառակ եզնրկայ ըսելուն «Հելլէնք, որ են Յոյնք», «Հելլէնք կո-

նուն էր յԵլլադացոց աշխարհին»։ անդ, 207.—«Յեղննոսէ որդւոյ Դեկադիոնի եւ Պիււեայ՝ Եղղէնր անուանեցան, որք են Եղղէնացիք»։ Եւ. Քր. 56.—Այլ եւ յԵլլենացոց խմատնոց ոմն տաց, թէ՛ Երզարն խոշտանգեացի»։ Վկ. Եպող. 142.—«Այլ եւ այժմ եւս պարծին Ելլենացիք ի վերայ այնպիսի պղծութեանց եւ մտրդադոհուիթեանց»։ Վկ. Իգն. 159—160: Սոյն Դասս կ'ըսէ նա եւ Ելլադա, Եւ. ԿԶ. 19. Գործք Առաք. Ի. 2. եւ Ելլադացոց աշխարհ, Եղնիկ, 207. Ոսկ. Մտթ. Բ. ք. 509. Եւ. ժմ. 104, փոխանակ աշխարհ՝ Յունաց կամ Յոյնք. Ելլադացիք, Եւ. ժմ. 154. Ոսկ. Բ Տիմ. Գ. 208. եւ Ելլադական բարբառ, Եւ. ժմ. 107:

41

ԳՈՐ. ա. Դուռն Արշակունեաց. «Եկեալ հասեալ (Մաշտոց) ի դուռն (տպ. ի գաւառն) Արշակունեաց, թաղաւորաց հայոց Մեծաց»։ 6:

բ. Դուռն կայսեր Յունաց. «Եւ մտեալ (Մաշտոցի) առաջի պատուակալ (տպ. պատուական. իսկ Եղաթ. 651, պատուակալ) աթոռոյն, յանդիման լինէր աստուածակարդ թաղաւորացն, եւ հայրապետին սրբոյ՝ կաթուղիկոսին աշխարհամուտ դրամնն, որում Ատտիկոս կոչէին»։ 17:

գ. Դուռն թագաւորին Աղուանից. «Եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացու իւրեանց (Եղուանից) կացուցանէր, հանդերձ արամք քահանայի արքունականն դրամնն, որում անուն (տպ. անունն) Յովնաթան կոչէին»։ 19:

չին Յոյնք»։ ի Զենոբայ Ասորոյ Պատմութեանն Տարանոյ, 31, կը գտնագանին Ելլենացի եւ յոյն. «Ջայս գրեցին ասորի եւ Ելլենացի եւ յոյն գրով, եւ իսմայելացի նշանաւ»։ (այսպէս 2. եւ 2 օրինակք տպագրին. իսկ տպ. ոմնի. «Ջայս գրեցին ասորի եւ Ելլենացի գրով, եւ յոյն եւ իսմայելացի նշանաւ») նոյնպէս ի Գր. Նորեկացոյ Մեկնութեան Երզոց Երզոյն, 359. «Երգ [ի] Յառաջարանի գրոցս ասացի, թէ ոչ գոյ յարմարանք մարգարէականք, զի ի ըզգմաց լեզուաց է առեալ փոփոխումն, յիբրայեցոյն ի Ելլենացի, եւ ի Ելլենացոյն ի յոյն եւ յասորի, եւ այլա ի հայ»։ նոյնպէս եւ ի Յիշատակարանի ուրեք Չորսուանելի Մամիկանեայ՝ գրելոյ յամին 1079. «Եւ Չորսուանէլ Մամիկանեան . . . տեսի զայս զիբ սահմանաց գրեալ Ելլէն եւ յոյն գրով ի Լուսաւորչէն մերմէ սրբոյն Իրիգորէ Գարթիէ, եւ թարգմանեցի ի հայ գիրս»։ տես Հ. Բ. Սարգիսեան, Ազաթ. 296, ծան. 4:

ԱԳԵԹ. ա. Դուռն Արշակունւոց. «Եւ ի վերայ այսոցիկ հասեալ ի դուռն Արշակունւոց (22) (սպ. Արշակունւոյ)». ՅճՂբ. 19.—«Զայնպիսին՝ կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռաւք եւ կապեալ պարանոցաւ ի դուռն արքունի ածցին». 109.—«Եւ զԱղբիանոս, դայր Տշմարիտ եւ աստուածասէր, վերակացաւ թողոյր արքունական զրանն բանակին». 630—631.—«Յայնմ (2. իսկ սպ.՝ Ի յայնմ) ժամանակի լու եղև այս յերկիրն Հայոց Մեծաց, ի դուռն թագաւորութեանն Արշակունւոց (22) (սպ. Արշակունւոյ. իսկ 2.՝ Արշակունեաց), առ Տրդատ՝ արքայ Հայոց Մեծաց». 649:

բ. Դուռն կայսեր Յունաց. «Մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ, առեալ դայնկացն փախուցեալ ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց»: 42.—«Գոյ աստ այր մի ի դրան քում, (ասէ Լիկիանէս ցարքայն Յունաց,) զի իրքդ այդ նովաւ վճարին. Տրդատէս ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին». 47:

ԲԻԻՁ. ա. Դուռն արքային Հայոց. «Զի որ լիցին հայրապետ Հայոց, նա դրանն արքունի իշխեսցէ». Ե. իթ. 226.—«Առաջնորդեաց (Ասպուրակ) դրանն Խարսուու». 2. դ. 264: Յորմէ Դրան եկեղեցի. «Զոր (զկիսամահն Յուսիկ) բարձեալ պաշտանէիցն դրան եկեղեցոյն ի Բնաբեզ բերդէն արքունի՝ Մեծ ծովաց գաւառին, եկին բերին ի գաւառն Գարանաղեաց ի գեւղն Թորգան». Գ. ժբ. 32. յորմէ եւ Վրէջ դրան արքայի», կամ «Դրան երէց արքունի», անօրէնն Մրջիւնիկ. Խոստումն Դ Գպր. Գլ. ժե. 61, եւ Գ. ժե. 123:

բ. Դուռն կայսեր Յունաց. «Ապա մատուցեալք առ թագաւորն (Վաղէս) աւագք իւրոյ դրանն եւ խորհրդականք». Գ. Ե. 87.—«Ետան զնա (զՊապ) պանդանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց». Գ. ժե. 122:

դ. Դուռն թագաւորին Պարսից. «Ի մէնջ ի մերմէ ի դրանէ աստի Լին, ասէ (Չապուհ Բ), որք փախուցին դայրն դայն զԱրշակ». Գ. ի. 135.—«2ոգան հասին . . . ի դուռն թագաւորին Պարսից». Ե. լբ. 245:

ՄԳԲ. «Վասն այնորիկ իսկ եւ երկորին ի միասին ի դուռն կոչեցան». Բ. դ. 28. (յոյնն՝ «կոչեցան յարքայէ».)—«Փղապետն զանողորմ գաղանսն զինեզէնս խնկալիցս զայրացուցեալ՝ ընդ առաւառն ի դուռն թագաւորին հասուցանէր». Գ. Ե. 5.—«Հասեալ

ի դուռն փղապետին, աշաբ ցուցանէր զպատրաստութիւն վղացն, սրպէս փառեալ պատրաստեալ ի դուռն հասեալ էր. անդ, 14:

— ԳԻՏ. Դուռն արքայի կամ արքունի, Արքունական դուռն, կը գտնուին եւ յԱռաջին եւ յերկրորդ Դասս. «Եւ Դանիէլ էր ի դրան արքային». Դան. Բ. 49.— «Եւ մի ոմն, որում անուն էր (տպ. է) Փրոնտոն, եւ նա էր յարքունական դրանէն, եւ ունէր ախա զճնդակ». Աթ. Անտ. 57. (տես Արքունական դուռն ի Կոր. երրորդ վկ. եւ յԱգաթ. երրորդ վկ.)— «Համան Համթագեանց մինչդեռ ի տան թագաւորութեանց Արշաւրի արքային էր, պատուական եւ փառաւոր էր. եւ Մուրթքէ առ դրան արքունի նստէր հանապազ վասն Եսթեբայ սանու իւրոյ . . . եւ Մուրթքէ կանխէր հանապազ եւ նստէր ի դրանն արքունի<sup>1)</sup>, . . . եւ ամենայն մարդ՝ որ էր ի դուռն արքունի, անկանէր ի խոնարհ երկիր պագանէր, իրրեւ տեսանէր զՀաման». Զգաւն, Գ. 54. (զվերջին մասն հատածիս համեմատէ ընդ զըրոցն Եսթեբայ, Գ. 2. «Եւ ամենեքին որ միանգամ էին ի տան թագաւորին՝ երկիր պագանէին նմա (Համանայ)».)— «Քարձրացեալ վերանայ նա (ղինուորն) յաշտիճանի իւրում, եւ կայ անդրէն (անդէն?) ի դրան արքունի. Եփր. Աւետ. 319—320.— «Եւ առին ածին զնա (զՅիսուս) ի դուռն, եւ հառն ի ձեռս Պեղատոսի. եւ նորա ոչ մտին ի ներքս ի հրապարակն, զի մի պղծեցին». Խոյն, Համար. 217. (համեմատէ. «Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին» եւ այլն. Յովհ. ԺԸ. 28.) ՅԱռաջին Դասի կայ մի անգամ եւ բազմաբար Դրունք արքունեաց. «Ձոր աւրինակ եթէ ոք զմահապարտ եւ զզոզ եւ զշուն ի մահ տանիցի, եւ հրաման տայցէ թագաւորն դարձուցանել զնա անդրէն ի դրունս<sup>2)</sup> ար-

1. «Եւ գրան արքունի նստէր . . . նստէր ի դրան արքունի» ստորաբանութիւն է, եւ կը նշանակէ in aula regia serviebat. տես P. Smith, *Thes. Syr.* Յող, 1642, ի բռուն իթէր (այսինքն նստաւ), Ի զիրս Եսթեբայ, Բ. 18, գրեալ է. «Եւ Մուրթքէ դարձանէր եւ կազմէր զտունն թագաւորին»:

2. Կայ եւ ի Ղ. Փարպեցի Դուրք. «Ձիմոց զնախնեացն զհպատակութիւն եւ զգաստակ, զոր յայս դուրս եւ առ ձեր թագաւորութիւնդ արբեալ է». Պատմ. 92.— «Եւ զքեզ պատուով այնպէս արձակեմ ի Հայս, զի Հայոյ ուրուք ի մեր դրացս պատիւ եւ շքեղութիւն այնպիսի շեցէ գտեալ, որ պէս զու գտանես». անդ, 198:



քուննացն, չկարիցէ ընդ ար նայել այնուհետեւ, թէպէտ եւ ի պատժոցն աղատեցաւ»։ Ոսկ. երբ. ԺԳ. 508:

42

ԿՈՐ. ա. «Եկեալ հասեալ (Մաշտոց) ի դունն Երշախուննաց, թագաւորաց Հայոց Մեծաց»։ 6 — «Ե ինցերորդ ամի Վոսմաշապոյ՝ արքային Հայոց Մեծաց»։ 11:

բ. «Յարուցեալ այնուհետեւ հասանէր (Մաշտոց) առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն Տանաշէր Սահակ»։ 8:

գ. «Եւ ինքն բազում տշակերաւք գայր անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց»։ 18. — «Ենքն դասնայր ի կողմանս Հայոց Մեծաց»։ 20:

դ. «Վահան . . . յազգէն Բեմտունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց»։ 27:

ԵԳԵԹ. ա. «Յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց»։ 606. — «Տրդատէն, թագաւոր Հայոց Մեծաց»։ 614. Արքայ Հայոց Մեծաց. 27, 49, 106, 110, 123, 649. — Արքայութիւն Հայոց Մեծաց. 49:

բ. «Նստաւ (Ռոստակէս) յաթառ կաթողիկոսութեան Հայոց Մեծաց»։ 643:

կ. Աշխարհ Հայոց Մեծաց (տպ. մեծութեան). 624. — Երկիր Հայոց Մեծաց. 600, 649:

զ. Սպարապետ ամենայն դուրացն Հայոց Մեծաց. 641:

է. Ժողովորդք Հայոց Մեծաց. 614:

ԲԻԻԶ. ա. «Թոսրոզ, թագաւորն Հայոց Մեծաց»։ 28. — «Թագաւորն Հայոց Մեծաց Երշակ»։ 104:

բ. Կաթողիկոս Հայոց Մեծաց. 25, 59. — Կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց. 44, 45, 72: Ելլուր. Եղիսկոպոսապետ Հայոց Մեծաց. 72:

դ. Մեծ հազարապետն ի հազարապետութեանն իսկ ի տոհմ ամենայն Հայոց Մեծաց Վաղարշ. 29. (տպ. սխալ կիրարկած է):

կ. Աշխարհ Հայոց Մեծաց. 18. Աշխարհք Հայոց Մեծաց. 29:

գ. Սպարապետն զտրափարն Հայոց Մեծաց. 124, 131, 168: Այլուր. Զտրափար Հայոց Մեծաց. 16, 20, 26.— Ստրատելատ Հայոց Մեծաց. 189:

ը. եկեղեցիք Հայոց Մեծաց. 36:

թ. Նախարարք Հայոց Մեծաց. 156:

ժ. Սահմանք Հայոց Մեծաց. 74. Տեղիք Հայոց Մեծաց. 76:

— ԳԻՏ. Հայոց Մեծաց պատուանունն է, ինչպէս կը կարծէ եւ Ինճիճեան (Հնախ. Գ. 298): Այլ է Մեծ Հայք աշխարհազրական բաժանումն՝ հակադրեալ Փոքր Հայոց. «Մեծ Հայք յիլից կալով Գապագովկիոյ եւ Փոքր Հայոց». Մ. Խոր. Աշխ. 606. (տես Փոքր Հայք եւ ի Միխ. Աս. 164, 378): Իսկ ուր կը կարդանք ի Պատմութեան Խորենացոյն, Ա. իթ. 121. «Եւ ժողովէ արքայն Հայոց (Տիգրան Ա.) . . զամենայն ընտիրս Հայոց Մեծաց եւ Փոքունց», հարադատ ընթերցուածն է լոկ Հայոց Մեծաց, համեմատ տպագրին Թովմայի Վանանդեցոյ՝ եւ Չեռագրի մի 1668 տարւոյն. նոյնպէս Սահահնեան Չեռագիրն ունի լոկ ի Հայոց Մեծաց. տես ն. Մառ, Յամատն. Ուղեւ. ժՁ. Ե. 51, ուսերէն բնագիր:

43

— ԳՈՐ. «Գացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր իրամանին». 6:

— ԱԳԱԹ. «Ոչ կարի ինչ ընդդէմ մարթացեալ դառնալ արքայատուր իրամանացն». 12:

— (Գայ ի Մկր. Գ. գ. 5, ոչ բողոքովին նման Ազաթանգեղի. «Իսկ որ ի քաղաքի անդ հեթանոսք էին, . . ազնիլ ինչ ոչ կարէին, եւ ոչ ընդդէմ՝ դառնալ իրամանացն արքունի»:)

44

— ԳՈՐ. «Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի

1. Տես ի տպագրին Վիստոնեանց, 70, ուր գրեալ է «Հայոց մեծաց, եւ փոքունց», այլ ի ծան. կը նշանակուի. «Desunt in Edit. (այսինքն ի տպագրին Թովմայի Վանանդեցոյ) եւ փոքունց»:

ճառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձնալ. 7:

ԱԳԱԹ. «Թողեալ զպաշտանն ունայնութեան սնտոեաց ձե-  
սագործաց կռելոցն արարելոց, եւ ի պաշտանն դարձնալ մար-  
դասիրին Աստուծոյ». 579:

45

ԿՈՐ. «Եւ առեալ զխաչն պարծանաց, ելանէր զկնի ամե-  
նակեցոյց Խաչելոյն». 7.—«Վասն որոյ զամենակեցոյց Հոգին  
ի թիկունս հասանել՝ անմոռնչ հեծութեամբ բարեխաւս գիտէ». 24: Ըստ այսմ եւ «Հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանան  
Քրիստոսի». 13:

ԱԳԱԹ. «Բայց ինքն իւրով կամաք արար զամենակեցոյց  
գալուստն իւր». 275.—«Եւ բացցէ զամենակեցոյց Տշմարտո-  
թեան վարդապետութիւնն իւր յայտնել աշխարհի». 311. —«Մի-  
այն, ասէ, առաջի այդր ամենակեցոյց նշանիդ երկիր պա-  
գանիցէք Տեառն Աստուծոյ Արարչին ձերոյ». 578: Այլուր. «Որով  
դուք արժանի լիջիք վերանալ խառնել աղաթարուղիս մշտնջենա-  
ւորք ի դաւրս բրիստոսակեցոյց գնդին». 617—618:

—ԳԻՏ. Ամենակեցոյց եւ Աշխարհակեցոյց կը նշանա-  
կեն Պեցուցիչ ամենեցուն, Պեցուցիչ աշխարհի՛. իսկ Զրիստո-  
սակեցոյց՝ Պեցեալ ի ձեռն Քրիստոսի, Ձոր Քրիստոս կեցոյց:

46

ԿՈՐ. «Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիս-  
տոսի խառնէր». 7. (Հաճիմ՝ հրամանաց կայ եւ յմսկ. Մտթ.  
Ա. ք. 113. «Ոչ համարս խնդրել, այլ հաճել հնազանդել հրա-  
մանացն որ տացին».)

ԱԳԱԹ. «Արդ բրիստոսագունդ եւ խաչակիր Առաքելոցն,  
որոց զիխաւորն Պետրոս» եւ այլն. 511:

1. Այս երկու բառից նմանութեամբ ըսած է Ղ. Փարպեցի Ժողովրդա-  
կեցոյց. «Ի ձեռն նախանձու գախոյեանաբեկ եւ զժողովրդակեցոյց զայն  
զԳաւթի՝ անհանգիստ որսայր Սուրու ի կորուսանելի». Թուղթ առ Վահ.  
Մամիկ. 574:

ԳՈՐ. «Չեռն արիսնէր զգաւառան (ապ. զգաւառոյն) հան-  
դերձ միամիտ սատարութեամբ իշխանին»։ 7:

ԵԴԻԹ. «Մի մի իւրաքանչիւր ամենայն բազմութեանն սա-  
տարութիւն ի ձեռն առեալ»։ 569.—«Առաւել եւս պայծառա-  
ցուցանէր զվարդապետութեանն սատարութիւն»։ 645:

ԵԻԹ. «Արդ ան առեալ զքո աղաթսդ տացես ինձ ի սա-  
տարութիւն»։ Յոջր. Գազ. 1107 ա.

(Բիւզանդ չունի Սատարութիւն, այլ միայն Սատար, եւ  
Սատար լինիմ'. «Ապա Տիրիթն . . . բազում վարձէր իւր ա-  
գնականս եւ սատարս, որով զիւր շարախաւսութիւնն յառաջ վա-  
րել կարացցէ»։ Գ. ժե. 116. «Որք միանգամ գործոյ սատարն  
լնալ էին»։ Ե. լէ. 244. (տպ. «Որք միանգամայն գործոց»։ իսկ  
2. «Որք միանգամայն գործոյ»։ տես եւ 2ալ.—Այտն. Քեր.  
303:) Ագաթ. փոխանակ Սատար լինիմ կ'ըսէ Սատարեմ'.  
«Եւ կանանոյն անգամ սատարեալ ըստ իւրեանց տկարու-  
թեան կանացի ուժոյն»։ 569.—«Մէն սակաւ սատարեալ շի-  
նեցին զվկայարանն»։ 608: Իսկ ի Մկր. կայ միայն «Սատարք  
անարէնութեան»։ Ա. գ. 6:)

—ԴԻՏ. Ի գիրս միւս Դասուց հանդիպած չեմ Սատարու-  
թիւն, այլ միայն Սատար. Եփր. Բ Արէնք, Բ. 278. Սատար  
ունել զրք. Ոսկ. Եփես. ԺԱ. Յորդ. 798. Սատար լինիմ'. Եղ-  
նիկ, 108. Ոսկ. Փիլիպ. ԺԳ. 502. Սատարեմ'. Ոսկ. Մտթ. Գ.  
Ժք. 46. նոյն, Փիլիպ. Գ. 372. Եփր. Համար. 257:

ԳՈՐ. ա. Կաթուղիկոս Հայոց. «Յարուցեալ այնուհետեւ  
(Մաշտոց) հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Մեծաց,  
որոյ անունն ճանաչէր Սահակ»։ 8.—«Եւ պատահեալ Սահակայ  
կաթուղիկոսի Հայոց, պատմէր նմա զողջութենէ (զյաջողութե-  
նէ?) եղելոցն»։ 16: Այլուր Սահակ կը կոչուի «սուրբ եպիսկոպոս»,  
11. «տէր եպիսկոպոս», 14:

բ. Կաթուղիկոս Կոստանդինուպոլսեան քաղաքին (այս ինքն  
Կոստանդնուպոլսի). «Հասանէին (Մաշտոց եւ ուղեկիցք իւր) ի



Թագաւորական քողարն Կոստանդինական, . . . եւ մտնայ առաջի պատուալայ (ապ. պատուական) ամբողջն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն, եւ հարստկեալն սրբոյ՝ կաթնուղիկոսին աշխարհամուտ գրանն, որում Ետտիկոս կոչէին: . . . Եւ երկիր պագեալ ծիրանափառ Ազոստականացն, եւ սրբոյ կաթնուղիկոսին, . . . Ել սնէին ի դեպակս ի կառս արքունատուրս». 17: Ետտիկոս ի նմին երեսի կոչի նա եւ «հայրապետ»:

ԱԳԵԹ. ա. Կաթնուղիկոս Հայոց. «Յայնժամ մեծ արքայն Տրդատ եւ սուրբ կաթնուղիկոսն Գրիգորիոս հանգերձեցին եւ արձակեցին ղերեստակէս», 656.— «Առաջի ղնէր (Ռբստակէս) թագաւորին եւ կաթնուղիկոսին սրբոյ (Գրիգորի)՝ զբերեալ արանդութիւնն», 657.— «Եւ յեա նորա (Գրիգորի) կալա (Ռբստակէս) զանղի հայրենացն. անղէն նստալ յաթոռ կաթնուղիկոսութեան Հայոց Մեծաց», 642—643: Ելուր կոչի Գրիգոր «քահանայապետ», 598. «սուրբ եպիսկոպոս», 605, 609. «երանկի եպիսկոպոս», 613. «մեծ արքեպիսկոպոս», 645, 650:

գ. Կաթնուղիկոս Կեսարիայ. «Քային հասանէին ի քաղաքն Կեսարացոց, եւ անղ տեսանէին զկաթնուղիկոսն սուրբ Ղեւոնդիոս». 603: Ելուր Ղեւոնդիոս կոչի «արքեպիսկոպոս», 600. «քահանայապետ», 603. «արքեպիսկոպոս մտարալոյիա», 614:

դ. Կաթնուղիկոս Հոովմայ. «Ապա հրածարեալ (Տրդատայ եւ սրբոյն Գրիգորի) ի ծիրանափառ Ազոստականացն, եւ ի սրբոյ կաթնուղիկոսն (Եւսեբիոսէ, զոր ապ. կոչէ Սեղբեսարոս), . . . երանէին յոսկիապատ կառս արքունատուրս», 655. (այս հատուած կարկատեալ է բանիւք Վարուցն Մաշտոցի. տես ի վեր անդր, Կորիւն, երրորդ վկ): Յերես 651—652 Եւսեբիոս կոչի «հայրապետն մեծ, արքեպիսկոպոսն աշխարհամուտ գրանն», նոյնպէս ի բանից Վարուցն Մաշտոցի:

ԲԻԻԶ. ա. Կաթնուղիկոս Հայոց. «Ռբստակէս, սրգի Գրիգորի սքանչելոյ՝ առաջի (իմն՝ առաջին) կաթնուղիկոսին Հայոց Մեծաց», Գ. Ժ. 25. Ելուր Գրիգոր կոչի «առաջին քահանայապետ», 1. «մեծ քահանայապետ», 6, 7, 15, 230. «մեծ հայրապետ», 29. «յառաջեպիսկոպոս», 36—37: Տես եւ Յուսիկ կաթնուղիկոս, 30. Փառէն կաթնուղիկոս, 44. Չահակ կաթնուղիկոս, 45. Ներսէս կաթնուղիկոս, 79, եւ այլ բազում ուրիշ. որ

և կոչի «եպիսկոպոս», Գ. դ. ի վերնագրին, 67. «եպիսկոպոսապետ», 72. «մեծ եպիսկոպոսապետ», 118. «արքեպիսկոպոսապետ», 118, 193. «հայրապետ», 110. 2-րդ կաթողիկոս, 123: Տես և Կաթողիկոսութիւն, 30. Կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց. 44, 45, 72. Հայրապետութեան կաթողիկոսութիւն, 45:

գ. Կաթողիկոս, ևս Կաթողիկոսաց կաթողիկոս Կեսարիայ. «Ջնոսա զամենեսին կազմեցին և արձակեցին . . . առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եւսերիոս յերկիրն Գամբաց, և ի մայր քաղաքացն նոցա ի Կեսարիա, զի ձեռնադրեցեն անդ զսուրբն Ներսէս(ի) կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց: Եւ եկին ամին նորա ցնծութեամբ և ուրախութեամբ (2. իսկ տպ.՝ ցրնծութեամբ ուրախութեամբ), և տեսին անդ զկաթողիկոսն կաթողիկոսաց, զսուրբն՝ զմեծանունն՝ զերանելին՝ զՆոյակայն՝ զքրանչելին Եւսերիոս». Գ. դ. 72. (տպ. սխալ կը գրէ «Ջնոսա զամենեսին կազմեցին և արձակեցին բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք կաթողիկոսաց առ կաթողիկոսն Եւսերիոս». յորմէ Հ. Բ. Սարգիսեան սխալ հետեւութիւն կը հանէ (23):) Այլուր Եւսերիոս կոչի «եպիսկոպոս», 96, 97, 98. «մեծ եպիսկոպոսապետ». 72.— «Եւ եկաց Բարսեղ յաթոռ կաթողիկոսութեանն Կեսարու». Գ. թ. 99. Այլուր Բարսեղ կոչի «արքեպիսկոպոս», 99, 103. «եպիսկոպոսապետ», 100, 226. «մեծ եպիսկոպոսապետ», 226. «հայրապետ», 226:

ե. Կաթողիկոս Վրաց և Աղուանից. «Վասն Գրիգորի (իմա՝ Գրիգորիսի) եպիսկոպոսի, որդւոյ Վրթանայ, եղբաւրն Յուսկան, որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց և Աղուանից». Գ. դ. 13:

—ԳԻՏ. Կաթողիկոս յունարէն բառ է, *catholicos*, և կը նշանակէ Տիեզերական, Համաշխարհական, Սոյն անուամբ կը կոչուէին հռոմէական կայսերութեան հարկահանքն, և այս է զոր կը յիշէ Եւսերիոս յիւր *Նկեղ. Պատմ.* Ը. ժա. 642—643. «Եւ էր այր մի (ի Փոսիզիա) պատուաւոր, որ ի Հոռոմոց ունէր զայն պատիւ, զի անուն էր նորա Աղակոսոս (տպ. Յգոսոսոս). և էր (2.

1. "Catholique; officier qui était chargé de la levée des impôts dans l'empire grec., É. Littré, *Dict. de la langue française* Ի բառ Catholicque, 3°.

խոյն տպ.՝ է) նա յիբեւելի մարդկանէ Խտալիայ (2. խոյն տպ.՝ յի-  
տալիոյ), որ վարեցաւ նա ամենայն աստիճանիւ պատուով՝ որ ի  
թագաւորէ տուեալ լինէին, որպէս զի եւ զոսոյն թիւնն հասա-  
րակաց, որ անուանեալ կոչլին ի նոցանէն՝ մազիտարտութիւն եւ  
կաթուղիկոսութիւն (2. խոյն տպ.՝ մազիտարտութիւն եւ կաթու-  
ղիկոսութիւն), առանց արատոյ վարեաց: Եւ այն (տպ. այլ)՝ որ  
այսու ամենայնիւ փառաբերեցաւ՝ յետոյ առաքինութեանն աս-  
տուածաշտութեամբ եւ խոստովանութեամբ որ վասն Քրիստոսի  
էր, մինչդեռ անդէն յաստիճանի կաթուղիկոսութեանն էր,  
համբեր պատերազմին՝ որ վասն աստուածաշտութեանն էր,  
եւ զարդարեալ պսակեցաւ վկայութեամբ: Եւ յայտարարեց ի վազուց հետէ Ըսորիք դայս յունական բառս *Կաթուղի-  
կոս սեպտականած* եւ իբրեանց ընդհանրական Պատրիարքին՝  
*Կաթուղիկո (catholicis)* ձեռով, ինչպէս կը կոչուի միշտ եւ նես-  
տորականաց Պատրիարքն. (P. Smith, *Theol. Syr. Hist.*, 3776): Ի  
*Վարս Սրբոյն Յակոբայ Սճընացոյ*, (որոյ զբիւն կը հա-  
մարուի աշակերտ ոմն Մարուղէի՝ Մաղաքիա կամ Զաղիսա ա-  
նուամբ, ի 2օրրորդ դարու), Ընտիրայատրի Պատրիարքն կը կո-  
չուի *Կաթուղիկոս*. «Արիք ելէք յԵմիդ (տպ. յԵմիթ), զի անդ ժո-  
ղով է եպիսկոպոսաց, եւ դայ անդ (տեսիլի էր՝ անդր) Պատրի-  
արքն Ընտիրայ. . . հանդերձ կաթուղիկոսան սկսան աղա-  
թել . . . ընկէց (Տէր) ափշութիւն ի վերայ կաթուղիկոսին . . .  
զարթեաւ կաթուղիկոսն . . . հրամայեաց նստուցանել զնա կա-  
թուղիկոսն» (տես *Վարք եւ Վկ. Սրբոց*, 2. Բ, 85, 86):  
2իք տարակոյս որ մեր նախնիք յԸսորոց առած են *Կաթուղի-  
կոս* կոչել զիբրեանց Հայրապետն կամ Քահանայապետն, եւ չ  
զիրն յայտնի նշան է այդմիկ, (ասորերէն կաթուղիկո, յունարէն  
կաթուղիկոս):

ԳՈՐ. «Յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթու-  
ղիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն նանաչէր Սահակ. 8.—  
«2օր եւ առեալ վարկադակի ամենայն հանդերձելովք՝ ձեռնա-  
շնամ կամքն յայդրով զամարտարս յի զի հարկոցով միբնո  
յով . . . 1. Տես 2. Բ. Սարգիսեան, Ազգթ. 238, ծան. 2: զպատասխանս յի

սուն աստուածաւր պաշտունելիցն իւրոց. որոց գլխաւորին Երեմիա անունն Գանաչէր»։ 25։

ԱԳՄԹ. «Իսկ որդի Պարթեւին՝ որ ի կողմանս Յունաց գաղթեաց, սնանէր եւ ուսանէր ի Կեսարիայ Կայսրապոլիացոց քաղաքին, . . . որոյ անունն Գանաչէր (սպ. ճանաչիւր) Գրիգորիոս»։ 42—43։—«Տրդուցն Եղամայ անդրանկանն Կայլն անունն Գանաչէր, եւ միւսումն Հարէր»։ 221.—«Տրոյ անունն Սէթ Գանաչէր»։ 222.—«Տրոյ անունն Մոխէս Գանաչէր»։ 233.—«Տրոյ Յեսու անունն Գանաչէր»։ 239.—«Երկու որդիս ստացեալ (Գրիգորի), որոյ առաջնոյն անունն Գանաչի Վրթանէս, . . . եւ երկրորդին՝ Ռըստակէս »։ 639.—«Իսկ այլ մի աստուած եղէն ազդեցութեամբն զարթուցեալ ամենեցուն երանելին՝ Արաճամ անունն Գանաչի»։ 229։

ԲԻԻԶ. «Եւ արձակեաց եւս զզանգանդան զԱրշակունիսն . . . , զի միումս անունն Գանաչէր Գնել, եւ միւսումն անունն Տիրիթ»։ Գ. Ե. 90.—«Քանդի երկու մնացեալք երկուսրիք երկու մանկունք, միումս Պապ անունն, եւ միւսումս Աթանազիէս Գանաչէի, ստահկք (սպ. Աթանազիսէս, ճանաչէին ստահկք) եւ անխրատք»։ Գ. Ժդ. 35։

ԳԻԻԸ. Միւս Դասուց անձանօթ է որոյ անունն Գանաչէր։ Իսկ ուր Եւսերեայ ժամանակադրութեան եւ Քրոնիկոնին թարգմանիչն կ'ըսէ. «Առ սոփաւ Արգիացոց տօրմիդ նաւայն, եւ Հերակղէս Գանաչէր»։ Ժժ. 48.—«Առ սոփաւ Եզր Երբայնցոց Սուրբ Գրոց զրազէտ՝ Գանաչէր . . . այլ եւ Նեէմիա տակառասպետ՝ Գանաչէր»։ անդ, 92.—«Արքիդորոս եւ Միմանիղէս Գանաչէին»։ Քր. 104. եւ այլն. իմա՝ ծաղիկք, պայծառանայր, ծաղիկին, պայծառանային։

50

ԿՈՐ. «Հանդերձ աղաւթիւք մեծաւր առ Աստուած կանխէին»։ 8։

ԱԳՄԹ. «Աւ երանելոյն Գրիգորի մեծաւ աղաւթիւք եւ ուժգին խնդրուածովք եւ պաղտանաւր խնդրեալ ճղնութեամբ եւ արտասուաւր վասն թագաւորին բժշկութեան»։ 580. (2. իսկ



տպ.՝ «աղօթի իւր եւ պաղատանօք խնդրեալ ուժգին ճգնութեամբ»  
եւ այլն»)

51

ԿՈՐ. «Հանգերձ աղաթիւր մեծուք առ Աստուած կանխէ-  
լին, վասն ամենայն ոգւոց բրիստոսաբեր փրկութեանն նա-  
սասնելոյ». 8:

ԱԳԱԹ. «Որով եւ աստուածաղիւր ժամանակն միշտեալ կայր՝  
ամենայն ումք բրիստոսատուք փրկութեանն նասանելոյ  
(տպ. հասեալ 2. հասելոյ)». 519:

52

ԿՈՐ. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն  
Ասորոյ՝ հպիսկոպոսի աղնուականի՝ Գանիէլ անուն կոչեցելոյ». 8:  
Այլուր առանց անուն բարի. «եկեալ հասանէր առ իս հրա-  
ման առն միոյ պատուականի՝ Յովսէփ կոչեցելոյ». 1.— «Մաշ-  
տոց . . . որդի առն երանհւոյ՝ Վարդան կոչեցելոյ». 6: Տես  
եւ «Հրտման ելանէր (ի Թէոդոսէ Բ է)՝ վայնուչ մեծարանաք  
զՍուրբն (Մաշտոց)՝ Աղուսիս անուն կոչելոյ». 16:

ԱԳԱԹ. «Արդ՝ երթեալ, սնեալ եւ ուտեալ Տրդատէս առ կոմ-  
սի ումնն Լիկիանէս անուն կոչեցելոյ (2. իսկ տպ.՝ կոչե-  
ցեալ՝)». 42:

(Բիւզանդ կ'ըսէ. «Եւ էր հպիսկոպոսն Տայոց Կիրակոս, որ  
ձանապ անուն կոչէր, այր ճշմարիտ աստուածապաշտ». 2. ժա.

1. Այսպէս եւ ի Մ. Խոր. Պատմ. Գ. ծր. 517. «Մատուցեալ առ արքայ  
(2. իսկ տպ.՝ արքայն) քահանայի որումն՝ Հաշէլ անուն կոչեցեալ», ուղ-  
ղիլի համարիմ կոչեցելոյ, ըստ Բ. դա. 379. «Յայնեմեցաւ ճգնաօրի ումնն՝  
Գանսիփ անուն կոչեցելոյ». ուղղական «քահանայ ոմն՝ Հաբէլ անուն կո-  
չեցեալ», սեռական «քահանայի ուրումն՝ Հաբէլ անուն կոչեցելոյ». տես ի  
վեր անդր գրիՏ. (տպ. Վիստանեանց, 297, ունի. «Մատուցեալ ոմն առ ար-  
քայն, Հաբէլ անուն կոչեցեալ». այսպէս եւ երկրորդ 2 հասարկ Կարենեան-  
ցի. տես Բաղդատուութիւն եւ այլն, 118:) Կայ եւ առ Ղ. Փարպեցւոյ, Պատմ.  
24. «Եւն միում ճշմարտի, Մաշեց աւնուն կոչեցելոյ».— Թ. Երժրունի, 53,  
կ'ըսէ. «Բնակ առ զարագարի ումնն եւ մոգի՝ Կերպրիսմ կոչեալ», փո-  
խանակ կոչելոյ կամ կոչեցելոյ, ինչպէս կը պահանջէ կանանն:

269. որ է ըստ Կոր. եւ Ագաթ. «Կիրակոս, Ջահապ անուն կոչեցեալ»:

— ԳԻՏ. Կայ յԱռաջին Գաթի անուն կոչեցեալ, (փոխանակ պարզապէս կոչեցեալ,) որոյ հոլովականն է անուն կոչեցելոյ. «Այր մի անուն կոչեցեալ Զակքէս»։ Դուի. ԺԹ. 2: Տես դարձեալ. «Եւ զարքունիսն՝ մատաղատունի անկովք ծառոց զարդարեաց (նարուքողոնոսոր), եւ անուն կոչեաց Կախաղանաւ Բուրաստանս (տպ. կախաղանարուրաստանս)»։ Եւս. Ժմ. 28:

53

ԿՈՐ. «Ժսկ արքային հանդերձ միաբանութեամբ (տպ. միաբան) սրբովն Սահակաւ եւ Մաշտոցիւ՝ ընկալեալ դնշանագիրքն ի Հարելէն, ուրախ լինէին»։ 9:

ԱԳԱԹ. «Ժսկ Թագաւորն Տրդատիոս հանդերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն տիկնաւ, եւ քերք Խոսրովիղըխտով, հրաման ետ ի ժողով կոչել» եւ այլն. 594.— «Հանդերձ միաբանութեամբ արքային (2. իսկ տպ.՝ հանդերձ արքային) Տրդատաւ»։ 657:

54

ԿՈՐ. «Ժսկ իբրեւ ի վերայ նասեալ թէ շին բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղորայս եւ զկապս հայերէն լիզուոյն, . . . յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային»։ 9. — «Ժսկ իբրեւ ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածապաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ դառնայր յերկիրն Հայոց»։ 16.— «Ժսկ իբրեւ նայեցեալ ի բաղմախուռն գումարութիւն, արդարեւ զսակաւուոյն զանուանս յայտ առնէ»։ 3: Այլուր Յորժամ՝ մակրայիւ. «Եւ յորժամ՝ ի նոսա դրանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց դաւառին՝ նշանք մեծամեծք երեւէին»։ 7:

ԱԳԱԹ. «Ժսկ իբրեւ զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի՝ թէ քրիստոսական պաշտամանն հաղորդ է, սկսեալ այնուհետեւ պատուհասակոծ առնէր զնա»։ 43.— «Ժսկ սուրբն Գրիգոր իբրեւ տեսեալ զայն, նշան տէրունական առնէր»։ 585:

ԲԻԻԶ. «Զոր իբրեւ լուեալ անդէն սպասաւորացն, կա-

աարեցին զգործ հրամանին վարվազակի». Գ. ժգ. 42.—«Զոր իբրև լուեալ, զրոզը բառնալով՝ դանձն անարժան համարեալ, չկամէր շանոյր յանձն». Գ. դ. 69.—«Զոր իբրև լուեալ արքային, ասէ». Գ. ժե. 122.—«Եւ ապա իբրև գիտացեալ թագաւորն Հայոց Արշակ, հասանէին ի վերայ դուրացն Պարսից». Գ. իգ. 145:

—ԳԻՏ. Փոխանակ դիմաւոր բայի ըսելու «Իբրև ի վերայ հասին, Իբրև կարգեաց, Իբրև զգաց, Իբրև ետես, Իբրև լուան կամ լուաւ, Իբրև գիտաց, Յորժամ սերմանեաց», Կորիւն կը դնէ անցեալ դերբայ. «Իբրև ի վերայ հասեալ, իբրև կարգեալ», եւ այլն. (համեմատէ. «Իբրև զգաց երմիմ» պատուհասել սկսաւ զնոսա». Մկր. Բ. բ. 7.—«Զոր իբրև լուաւ թագաւորն Արշակ . . . զարմացեալ լինէր». Քիւզ. Գ. ժե. 121.—«Եւ յորժամ բազումք ինոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կըթել». Կոր. 9.—«Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս լի առնէր զսուրբ Աետարան Տեառն, . . . խորհուրդ առնոյր այնուհետեւ վասն կէս ազգին Հայոց». նոյն, 16.) Իսկ յերրորդ վկայութեան վարուցն Մաշտոցի. «Իբրև հայեցեալ ի բողոքախուռն դումարութիւն», իմա իբրև հայիմք. Միւս դասուց մէջ գտած չեմ իբրև մակբայ ընդ անցեալ դերբայի. այլ կայ յԱռաջին Գասի ուրեք ուրեք Յորժամ մակբայի. «Յորժամ հարաւ շնչեալ, ասէք թէ խորշակ լինի». Դուկ. ԺԲ. 55. զոր եզնիկ, 186, եւ թարգմանիչն Բարդի վեցարէին, 2. 115, կ'ըսեն ըստ սովորականին. «Յորժամ հարաւ շնչոցէ, ասէք թէ խորշակ մեծ լինելոց է (կամ՝ եթէ խորշակ ընթանայ)». —«Յորժամ մի վճիւ պատժոցն տուեալ (փոխանակ տուաւ), ապա բիրապատիկ հնարէին եւ չկարէին ի պատժոցն ազատանալ». Ոսկ. Մատ. Բ. ժը. 626:

Տես աստէն եւ զթիւն 61, եւ յԱղաթ. —Քիւզ. զթիւն 9 եւ 95:

## 55

ԳՈՐ. «Եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս (տպ. երկուց) Ասորոց, որոց առաջինն եղեսիա կոչի, եւ երկրորդն Ամիգ անուն: Անդ դէպ (տպ. անուն: Ընդդէմ) լինէր՝ սուրբ եպիսկոպոսացն,—որոց առաջնոյն Բաբիլաս (տպ.

Բարիլա) անուն, եւ երկրորդին Ահակիոս, — . . . պատահել (ապ. պատահալ)» 9. — «Հանդերձ արամբք երկուք, աշակերտաւոյն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կրէին, . . . եւ երկրորդին՝ Յովսէփ անուն» 10. — «Հանդերձ այլովք եւս աւանականաքն. որոց առաջնումն Տիրայր անուն, . . . եւ երկրորդին՝ Մուշ, անուն» 14. — «Առ որս թողալ վերակացու հաւատացելոցն՝ զերկուս սմանս յւրոց աշակերտացն. որ առաջնոյն Ենովք անուն էր, եւ երկրորդին՝ Դանան» 18. — «Իէպ լինէր ոմանց կգբարց ի Հայաստան աշխարհէս՝ զիմել իջանել ի կողմանս Յունաց որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, եւ երկրորդին՝ Արիստոս 21. — «Եւ անուանը զյխաւորաց աշակերտացն ժողովելոցն՝ են այս. առաջնում՝ Յովսէփ, . . . երկրորդին՝ Թադիկ» 27. — «Ե զինուորական կողմանէն (ապ. կողմանն), առաջնումն Վահան անուն, . . . եւ երկրորդին՝ Հմայեակ» 27. — «Եւ զյխաւորս վերակացուս տեղապարսն յայտ արարեալ Հարցն կատարելոց. որոց առաջինն Յովսէփ՝ զյխաւոր ժողովոյն, եւ երկրորդն այլ աշակերտ Յովհան անուն» 28. (Տես Յորոց առաջինն . . . եւ երկրորդն եւ ի Կոր. = Եւթ. Թիւ 12): Յերկու տեղիս՝ միայն զառաջնոյն անուն կը գնէ. «Առեալ (ապ. Առաւել) երանելոյն Սահակայ զՄամիկոնեան որ եարն՝ ի վարժս վարդապետութեանն պարտալիցուցեալ, որոց առաջնոյն Վարդան անուն էր» 13—14. — «Որոց (եպիսկոպոսոսացն Վրաց) առաջինն Սամուէլ անուն» 16: Այլոր գերկրորդին անուն այսպէս կը ծանուցանէ. «Որոց զարձեալ դէպ լինէր կգբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորաց, . . . զՅովսէփ. զոր ի վերոյն յիշեցար, եւ երկրորդն Եզնիկ անուն» 20:

«Լ.Գ.Թ. Որ յաշախճան եպիսկոպոսութեանն էին արժանի կալոյ, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ. որ առաջնոյն՝ Աղբիանոս անուն . . . երկրորդին՝ Եւտապիոս . . . երրորդին՝ Բասոս. չորրորդն՝ Մովսէս ՚ինգերորդն. . . » եւ այլն. 630. (համեմատէ ընդ չորրորդ եւ ընդ հինգերորդ վկայութիւնս Գորեան. «որ առաջնոյն Ենովք անուն էր», եւ այլն.) — «Եւ որ առաքեցանն յարքայէն՝ զի ամցին զնոսս (զՎրթանէս եւ զԲրտատակէս), այսորիկ են. առաջնոյն անուն Երտաւազդ. . . եւ երկրորդին՝



Տաճառ անունն . . . Երրորդին՝ Դաս անունն». 641: Տես աստէն  
եւ ի Թիւն 49 զԵրկրորդ եւ զՎեցերորդ վկ. Ազաթանդեղի:

(Քիւզանդ դանուանս այլեայլ անձանց այսպէս կը ծանու-  
ցանէ. «Ապա բարձին զմարմին նորա (Դանիելի Ասորոյ) սուրբ՝  
սիրելիք իւր աշակերայ, որոյ զլխատորին անուն էր Չաղիտա,  
. . . եւ Երկրորդին անունն Եպիփան». Գ. ժդ. 42. — «Ապա միում  
անուն էր Մարգիս ի նոցանէ, եւ միւսումն Թէւդորոս». Դ. ժ.  
101—102. — «Արք (տպ. սրբ) երկու եղբարք ի Մամիկանեան աս-  
մէն, անունն միումն Մանուէլ, եւ անունն Երկրորդին՝ Գոմս». Ե.  
ժ. լ. 238—239. — «Քայց անուանք պատանեկացն Արշակու-  
նեացն, անունն Երիցուն՝ Ռշտի, եւ կրտսերոյն՝ Վաղարշակ». անդ, 244. — «Ժ տանէն Սիւնեաց պատանեակք (տպ. պատանեակ)  
Երեք. . . եւ անուանք նոցա՝ միոյն Բարիկ, եւ միւսոյն Սամ,  
եւ Երրորդին Վաղինակ». (2. իսկ տպ.՝ «միւսումն Բարիկ, եւ  
միւսումն Սամ, միւսումն Վաղինակ»). Ե. խբ. 250. — «Քայց էին  
եւ ի նոցունց այլք աշակերաք. . . որոց անուանք այս են. Վա-  
շակ, Արտոյտ» եւ այլն. 2. ժդ. 271—272: Տես աստէն եւ ի  
Թիւն 49 այլ երկու վկայութիւնս ի Քիւզանդայ:)

== ԳԻՏ. ՅԱռաջին Դասի կը գտնենք զհետեւեալոց. «Էւ առ  
Յոթոր, աներ Մովսիսի, . . . զԵրկուս որդիս նորա. յորոց միումն  
անունն էր Գերսամ. . . եւ անունն Երկրորդին՝ Եղիազար». Ելք,  
ժԸ. 2, 3. — «Էւ տաին իւրեանց (որդիք Նոոմինայ) կանայս Մո-  
վարացիս. անունն միումն Ռբիա, եւ անունն Երկրորդին՝ Հուլթ». Էստ.  
Յ. 4. — «Էւ էին նորա (Եղիանայ) երկու կանայք. անունն  
միումն Աննա, եւ անունն Երկրորդին Փեննանա». Ե. Թագ. Ե.  
2. — «Ըւ Առաքելոցն երկոտասանից էին անուանք այսորիկ.  
առաջին, Սիմովն՝ անուանեալն Պետրոս, եւ Անդրէաս եղբայր  
նորա» եւ այլն. Մատթ. ժ. 2: Յերկրորդ Դասի. «Երեք մարդք  
փառաւորեցան խոտտովանութեամբն Քրիստոսի ի Կեսարիա Պա-  
ղեստինացոց. . . միումն ի նոցանէ անունն Պրիսկիլա, եւ միւ-  
սում Մաղրոս, եւ միւսն Եղեքսանդրոս». Եւս. Եկեղ. Է. ժբ. 550:

56

ԳՈՐ. «Անդ դէպ (տպ. Ընդդէմ) լինէր՝ սուրբ Եպիսկոպո-  
սացն, — որոց առաջնոյն Բարիլաս (տպ. Բարիլաս) անուն, եւ

երկրորդին Ակակիոս, — հանդերձ կղերականաւքն եւ իշխանաւքն քաղաքին պատահել (ապ. պատահեալ)», 9:

ԱԳԱԹ. «Եւ անդ տեսանէին... զամենայն եկեղեցական գունդս գունդս սրբոցն կղերիկոսացն», 603:

ԲԻԻԶ. «Հրաման տայր, եւ բերին զհանդերձս կղերիկոսաց զգեցուցանէին նմա (Ներսեսի)». Դ. գ. 70. — «Վէսքն եպիսկոպոս էին յայլոց քաղաքաց, կէսք կղերիկոսք յայլոց եկեղեցեաց». Դ. գ. 91. — «Առեալ եպիսկոպոսն Եսեբիոս զկղերն զամենայն, եւ ի մեծ հոգս մտանէր. . : Երկին եւ կղերքն ամենայն ձեռնադիր աղաչանաց, զի մի ինչ զանգաղեսցի գալ (Բարսեղ)». Դ. ք. 96:

— ԴԻՏ. *Սղեր է յոյն բառն clericos, որ կը նշանակէ Վիճակ, Բաժին, Ժառանգութիւն, եւ եկեղեցական լեզուով՝ Դաս քահանայից, կամ Ուխտ քահանայութեան (Ազաթ. — Բիւղ. Թիւ 149). զգ. Clergé. նոյնպէս Սղերիկոս է յունարէն clericos, այսինքն Պաշտօնեայ եկեղեցւոյ, եկեղեցական, զգ. Clerc, Ecclesiastique. զոր Կորին ուրեք ի Վարս Մաշտոցի կըսէ կէս հայացմամբ *Սղերական, եւ այլուք Ժառանգաւոր*<sup>1</sup>. «Անանիաս, այր սուրբ եւ երեսելի՛ ի]հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ». 14—15. (համեմատէ. «Խրատէ (Աստուած) քահանայապետիւք եւ ժառանգաւորաւք *Եկեղեցւոյ*». ՅՏԽ. Ժ. 88.) Վերջին բառս կարծեմ ի Կորինէ անցած է յԱռաջին Դասն. «Ընդէր ոչ երբեք ուրեք գրէ (Պաւղոս) առ քահանայս, ոչ ի Հռոմ, ոչ ի Կորնթոս, ոչ յԵփեսոս եւ ոչ այլ ուրեք... եւ աստ առ քահանայս ժառանգաւորս գրէ». Ոսկ. Փիլիպ. Ա. 349. — «Եյսպէս կատարեցաւ սուրբն Ղմաւոն եպիսկոպոս... հարիւր արամբք ժառանգաւորաւք սուրբ եկեղեցւոյ». Մար. Պոմ. Արեւ. Վկ. 53—54:*

## 57

ԿՈՐ. «Իսկ աշակերտատէրն վարդապետին (այս ինքն Մաշտոցի)՝ զտարեալն ընդ իւր յերկուս բաժանեալ». 9:

ԱԳԱԹ. «Զոր անդէն իսկ յանդիման ցուցանէր կայսերն զտարեալն ընդ իւր զԳրիգորն». 652:

1. Իսկ Մ. Խոր. յՈրբն՝ Վիճակաւոր. 578:

58

ԿՈՐ. «Եսկ աշակերտասէլն վարդապետին՝ դտարեայն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոժանս յԱտորի դպրութեանն կարգէր, եւ զոժանս [ի] Յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն զումարէր»։ 9.— «Գումարել ի կողմանս, ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին՝ դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն»։ 13.— «Գումարել ըստ արժանաւոր եւ պատեհ [պատեհ] տեղեաց դասս դասս զպրաց (ապ. դպրոցաց)»։ 19:

ԱՅԸԹ. «Եւ յետ այսորիկ քրիստոսազունդ Առաքելոցն՝ Հնորհակարգութեամբ Հոգւոյն Սրբոյ զումարելոց ընդ ամենայն կողմանս՝ որ ի ներքոյ հրկնից»։ 518:

ԲԻԻԶ. «Զաւր զումարեցին ի վերայ Վարդանայ, զի երթեալք սպանցեն զնա»։ Գ. ժը. 128.— «Ապա զումարեաց թագաւորն Պարսից Չապուհ զՎինն ի վերայ արքային Հայոց Արշակայ չորեքհարիւր հազարաւ»։ Գ. իդ. 145:

ՄԿԲ. «Ասի ես դամենայն սպասն գայն գոսկույ եւ զարծաթոյ, եւ զաւրս եւս զումարեցի տարապարտուց ի վերայ նոցա ջնջել զնոսա»։ Ա. գ. 12:

— ԴԻՏ. Ինչպէս վաղ գրած եմ ի Քննասիրի, Պրակ Ա. 12—17, Կորեան հատուածն սխալ կիտաղրեալ է ի տպագրին. «եւ զոժանս յունական դպրութիւնն: Անտի ի սամուսատական քաղաքն զումարէր, եւ նորա» եւ այլն. եւ «զումարէրոց հասկացուած է կրաւորական կամ ձայնակրական բայ, իբր թէ ինքն Մաշտոց կը զումարուէր, այս ինքն՝ կ'երթայր իւրայովքն, ի Սամուսատ. («Գումարել. բայ կը. և ձ. երթալ իւրովքն. Andare insieme colla sua gente.» Հ. Ման. Զախջ. Բագ. Հայ—Իտալ.) մինչդեռ Կորիւն ըսել կ'ուզէ՝ թէ Մաշտոց զոժանս յաշակերտաց իւրոց կը զետեղէ յԱմիդ որպէս զի ասորերէն ուսանին, եւ զայս՝ յԱմդայ կը զումարէ, այսինքն կը յղէ, ի Սամուսատայ յունական դպրոցս. (տես վերադոյն յերես 17, ծան. 1): Գումարել՝ յամենայն վկայութիւնսդ ուրեմն կը նշանակէ Առաքել, արձակել խմբովին աշակերտս, զԱռաքեալս, զօրս. («Գումարել ուրեք զօրս. այսինքն Յղել. Mandar delle truppe.» Հ. Ման. Զախջ. անդ. զայս նշանակութիւն չունի նոր Հայկազեանն): Զոր Բիւզանդ յերկու տե-

զիս կ'ըսէ Գումարել ի վերայ, այլուր կ'ըսէ Առաքել ի վերայ, Արծաակել ի վերայ. «Ապա յիս այսորիկ առաքէր արքայն Պարսից ի վերայ արքային Հայոց դունդ կազմեալ». Գ. իէ. 146. եւ 147 երկիցս, 149 երկիցս, 150 երկիցս, 151, 192, 249 երկիցս. — «Կաղմէր պատարաստէր (Ըսպուհ Բ) գունդս բազումս . . . եւ արծակեաց ի վերայ նոցա (Հայոց)». 149—150. եւ 151, 169, 248: Իսկ ուր կ'ըսէ Քիւզանդ. «Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարն ըստ սովորութեան աւրինակին». Գ. ժբ. 29.— «Եւ յաւագաց գումարեն ընդ նմա զիշխանն Գարգմանաց Չորոյն». Գ. ժէ. 45.— «Եւ զամենայն նախարարն Հայոց ընդ նմա գումարեալ, զայր հասանէր ընդ առաջ զարացն Պարսից». Գ. լբ. 152. այս Գումարել զոր ընդ ումեր կը նշանակէ Ուղեկից կամ ընկեր տալ ումեր, զգ Adjoindre à quelqu'un.

Գումարել զաւրս կամ զաւր, Գումարել զաւրս ի վերայ կը գտնուի յայլեւայլ տեղիս Առաջին Դատուն, բայց ոչ իբր Առաքել, այլ իբր Ժողովել. «Զաւրս գումարեալ (Նարեկողրոսորոս) զայր առնոյր գերի զՀրեայս եւ զՓիւնիկեցիս եւ զԱսորիս». Եւս. ժմ. 22.— «Եւ կամ յորժամ հէն յաշխարհ արչաւիցէ, . . . մի զաւրս ժողովեացեն, եւ մի գունդս առ գունդս կազմեացեն՝ հանելոյ զհէն յաշխարհէ. . . այլ գումարելով զզաւրսն եւ հանելով զթշնամին յաշխարհէ, ցուցանեն՝ եթէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կոտորածքն զորժիցին». Եղնիկ, 162.— «Եւ զազանացի թագաւորն հարաւոյ, . . . եւ գումարեացէ զաւր բազում». Դան. ժԱ. 11.— «Յանկարծակի Մարք զաւր ի վերայ Բաբելոնի գումարէին ունել զնա». Եւս. ժմ. 19—20.— «Եւ գումարեաց գունդ Ովսէ որդի Ելայ ի վերայ Փակէի որդոյ Իոնիայ, եւ հնար զնա եւ սպան զնա». Գ. Թագ. ժԵ. 30: Միայն յնսկ. Եփես. Թ. 770, «Զայրացեալ, ի ցասման միայն եղևալ (թագաւորն Ասորոց)՝ հեծեալս եւ սպառազէնս գումարեաց երթալ օճնել զմարգարէն», թերեւս գումարեաց կը նշանակէ առաքեաց (15): Իսկ ի յաջորդ վկայութեանդ յերկրորդ Գասէ՛ չկարեմ որոշել թէ գումարէր ի վերայ ինչ կը նշանակէ, ժողովէր թէ առաքէր. «Զաւր առնէր, հեծելազաւր գումարէր ի վերայ նոցա. եւ իբրեւ ոչ ակն ունէին՝ յանկարծակի անկան



վերայ նոցա, եւ զբազումս ի նոցանէն ի սուրբ սուտերի կտոր-  
բցիցն»։ Եւս. Եկեղ. Բ. Ժա. 98: Եւ «դժնկի դմննաւ ի սխալաւ

59

ԿՈՐ. «Եւ նորա իւրովք հաւասարաւ զսովորականն առաջի  
եզեալ զաղաւթս եւ . . զխստամբերութիւնս»։ 9: «սոքոճճճճճճ  
ԱԳԱԹ. «Որք վասն արդարութեան զխստամբերութեանցն  
զփորձութիւնսն վասն սիրոյն Աստուծոյ տարան յանձինս ի-  
րնանց»։ 492: «Գրան մը յամբաստում մը լըլըլ մը» — 208 մըլա մ  
ճոյա ԲԻԻ. 2. «Ստապոյն եւ զժուարադոյն անհամարք ծանրաբեւն  
վարուցն կրթութիւնք խստամբերութեանս»։ Գ. զ. 13. «տես  
եւ ի Վարս Մաշտոցի, 26. «զժուարադոյն վարուց կրթու-  
թիւնն»։ — «Թու զփեսա» զճշմարտութեան «զճշմարտութիւն?»  
զվաստակոց զառնս զայսորիկ, զի խստամբերութեամբ վարի  
ի վարս վաստակոց իւրոց, եւ չիք հաւատք ի սմա»։ Ե, իք. 224:  
«[Ե. Գաս]† «Իսկ միւսն աղքատութեամբ կեայ եւ պահովք  
եւ այլ եւս խստամբերութեամբը»։ Ոսկ. հո. ԺԳ. Յորդ. 162:  
«— ԳԻՏ. Կայ խստամբերութիւն երկիցս եւ այլոր յԱռա-  
ջին Դասի. «Յուշ առնելով նմա . . զխստամբերութիւն առա-  
քինութեանն»։ ԱՄ. Անտ. 21. — «Վասն զի անհնարին ցաւէին  
նորա ստամորսն (2. իսկ սպ. ստամորսն) եւ կողքն ի խստամ-  
բերութենէն»։ անդ, 59. «Թարգմանիչն Ոսկեբերանի Մեկնու-  
թեանցն Պարոտիւ այլոր կըրթէ Վշտամբերութիւն, Վշտամ-  
բեր. «Եւ որչափ ինչ ի գէպ իցէ նոցա վշտամբերութեան տա-  
նիչ շէ մարթ բանիւք յայտ առնել»։ Բ Տիմ. Ա. Յորդ. 174. —  
«Չայնպիսի փափուկ աղջկանցն այնպէս լուայ, թէ յայնպիսի  
վշտամբերութիւն ետուն զանձինս»։ Եփես. ԺԳ. Յորդ. 815. —  
«Եւ զայն մի ինչ ասիցես, եթէ այնմ վշտամբերքն ժիտն հան-  
դարտեն. քանիկ բազումք բազում անդամ քան զվշտամբերսն՝  
մեծատունքն եւ փափուկքն ընկալան յանձինս զժանր ինչ եւ  
զխիստ վարս»։ անդ, 814: Այսպէս եւ Մատթէի Մեկնութեան  
Թարգմանիչն. «Վասն . . վշտամբերութիւն (տպ. վշտաբերու-  
թիւն) յանձին ցուցանելոյ»։ Ա. Ժ. 147. — «Գեանատարած ան-  
կողնովք, եւ այլովք նայնպիսի վշտամբերութեամբը»։ Ժա. Յորդ.  
170. — «Բազցի եւ աղքատութեան եւ վշտամբերութեան միտ

երկայ» Ժ. Տարդ. 229. — «Որ այնչափ համարձակութիւն ունէր, այնպէս վշտամբեր լինէր» Ժ. 147:

60

ՎՊՐ. «Յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես» 9—10: Այլուր Մարգարէականն, զոր տես աստէն, թիւ 84:

ԱԳԱՊ. «Զի կատարեսցէ զասացեալսն մարգարէին, թէ» եւ այլն. 352. — «Զի լցցին եւ ասացեալքն մարգարէին, թէ» 354: Ըստ այսմ եւ այլուր. «Պատմեալ դատաւորին զասացեալսն Բրիստոսի» 353. — «Լնծայեցուցանէր զամենայն ասացեալ զպատգամսն Հոզայն Սրբոյ» 547. — «Վասն որոյ յառաջագոյն կանխեաց յառաջադէտ մարգարէութիւնն զիրացն զհերոց ասացելոցն հաստատութիւն (2. իսկ տպ.՝ ասացելոց հաստել)» 412: Այլուր. «Լնույ. զասացեալսն ընթանովք մարգարէիցն (տպ. մարգարէին)» 500. — «Լցեալ կատարի ասացեալ ըսնն ուր ի Յովք» 349: Տես աստէն եւ Մարգարէականն, թիւ 84:

ԲԻԻԶ. (չունի Չասացեալսն մարգարէին. այլ կ'ըսէ նովին ոճով.) «Եւ զաւրովարն Վաչէ կատարէր վաղվաղակի զասացեալսն արքայի» Գ. ք. 18. — «Եւ կատարեալ հաւատարմացոյց զասացեալսն հրամանաց թագաւորին Յունաց» Գ. իա. 57. — «Մինչեւ հաստատէին ի միտս թագաւորին զհրեանց ասացեալսն» Գ. ժե. 117. — «Իսկ թագաւորն. . . մկթայր զնորա զասացելովքն» Գ. ժգ. 111: Այլուր. «Ըստաշխարէր (տպ. ապա աշխարէր) զասացեալսն, . . . մեծապէս ապաշխարելով զըզմամբ զասացեալ ըսնսն» Գ. ծգ. 167. — «Եւ զրո ըսնս աւագանին հաստատեն» Գ. ի. 134:

— ԳԻՏ. Փոխանակ բացառականաւ կրաւորական անցեալ դնելու՝ «որ զբարարի սովորականն է» (2ալ. — Այտըն. Քեր. 437). Կորիւն սեռական հօրով տալով բայի անունն՝ զբայն ներդործական անցեալ կը դնէ եւ կ'ըսէ Ասացեալքն եւ Չասացեալսն մարգարէին, (նման մեր աշխարհաբարին՝ մարգարէին ըսածները,) ուր ըստ սովորականին ասելի էր Ասացեալքն եւ Չասացեալսն ի մարգարէէն, մարգարէէն ըստածները: Տես յԱռաջին Գասէ. «Զի լցցի ասացեալսն ի մարգարէէն» Մտթ.

ժԳ. 35. — «Զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին՝ որ ասէ». անդ, Բ. 15. — «Յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամն ի սրբոց մարգարէից». Բ Պետր. Գ. 2: Կամ յարարերականաւ. «Զի լցցի որ ասացան ի Տեառնէ ի ձեռն Եսայիայ մարգարէի». Մատթ. Ա. 22: Եւ այլուր պէտպէս կերպիւ. «Զի լցցի ըսնն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայիայ մարգարէի». անդ, Գ. 14. — «Զի լցցի որ ասացան ի ձեռն Եսայիայ մարգարէի». անդ, ժԲ. 17. — «Կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ ասէ». անդ, Բ. 17. — «Զգոյշ կացէք, զուցէ եկեցցէ ի վերայ ձեր որ ասացեալն է ի մարգարէս». Գործք Առաք. ժԳ. 40: Բայց կայ ուրեք ուրեք հանդոյն Գորեան. յերկրորդ Դասի. «Եւ զամենայն ասացեալսն մարգարէիցն վասն Քրիստոսի՝ կարգէր առաջի նորս». Լարուր. 31. — յերրորդ Դասի. «Մատիւր դու քննել զմարգարէութիւնն զասացեալն Եսայիորու առ Յուդա». Կիւր. Կոչ. ժԲ. 216. փոխանակ զասացեալն ի Եսայիայ. — Եւ նոյն իսկ յԱռաջին Դասի. «Զնորս ասացեալսն հաստատէ յԱւետարանի». Եզնիկ, 279. փ. Զասացեալսն ի նմանէ: Եյլուր Երկրորդ Դասն կրնէ պարզօրէն. «Նշանաւք եւ արուեստիւք կատարեաց զըսնս մարգարէիցն». Եփր. Համար. 111. — «Այսար կատարեցաւ ըսն մարգարէին՝ որ ասաց» եւ այլն. Զգան, ժԲ. 351: Կայ ի Լարուրնա, 41, եւ «Յիշեցէք զգրեալսն մարգարէիցն», փ. զգրեալսն ի մարգարէիցն:

61

ԿՈՐ. «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ (փոխանակ՝ համբերէր) վասն իւրոյ ազգին բարեաց ինչ աւճան գտանելոյ». 10. — «Առաջի արկեսալ (փ. արկանէր, էարկ) նոցա զնշանագիրն աստուածատուր». 10. — «Եւ ի ձեռն առեալ (փ. առնուիւն) այնուհետեւ . . . զաւետարանական արուեստն». 12. — «ԶՄամիկոնեան որևարն ի վարժս վարդապետութեանն պարապեցուցեալ (փ. պարապեցուցանէր)». 13—14. — «Յիշխանաց եւ ի գաւառականացն պատուեալ (փ. պատուեալ լինէր, պատիւ գտանէր)». 16. — «Տես այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց եւ յիշխանաց աշխարհին. . . առ որս թողեալ վերակացուս». 18. (փ. հրաժարէր, թողոյր.) — «Սպա հարցեալ ի նոցանէ, առաջի

եղեալ (փ. դնէր) վասն որոյ եկեալն էր» 19.—«Եսկ նորա  
անցեալ դիմեալ ի կողմանսն (Վրաց)» 20. (փ. նա անցանէր  
դիմէր.)—«Ըրջնալ զամենայն աշակերտաւք, պատուիրեալ (փ.  
պատուիրէր) կալ ի ճշմարտութեանն» 20.—«Ղշխանին Տաշ-  
րացւոց՝ առն պատուախանի եւ աստուածայիրի. ի ձեռն  
տուեալ (տպ. տայր) նմա զանձն» 20. (փ. իշխանն Տաշրացւոց՝  
այր պատուական եւ աստուածաւր. ի ձեռն տայր.)—«Յորս  
բազում նմանութիւնս յերիւրեալ կազմեալ (փ. կազմէր)» 22.  
—«Ըստ նմին աւրինակի՝ եւ նորա ասպարեանլ (տպ. ասքր-  
պրեալ) զանձն եւ զմնացեալս՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ»  
25. (փ. նա ասպարէր.)—«Եսեիլ արանչելի. զոր ամենայն  
ուրուք ինքնատես եղեալ, եւ ոչ առն ընկերի (տպ. սոս յընկե-  
րէ) պատմեալ» 27. (փ. ամենայն ոք ինքնատես եղեւ, եւ ոչ  
այր ընկերի պատմեաց):

ԱԳԱՅԻ. «Առեալ զայեկացն (զՏրդատ) փախուցեալ (փ. փա-  
խուցանէին) ի դուռն կայտեր» 42.—«Արդ՝ երթեալ, սնեալ եւ  
ուսեալ Տրդատէս առ կոմսի ուսմմն» 42. (փ. սնանէր եւ ուսա-  
նէր. համմատէ. «Արդի Պարթեին. սնանէր եւ ուսանէր ի  
Կեսարիայ» 42.)—«Բեօպանս արծակեալ, պատուիրակս հա-  
նեալ ընդ աշխարհ, զի. . . » 114. (փ. արձակէին, հանէին.)—«Ըն-  
վաւ մարտուցեալ (փ. մարտնչէր) ընդ աստուածաշէն եկեղեցիս»  
115.—«Թողեալ զերկիր ծննդեան իւրեանց, զանձինս իւրեանց  
հրեշտակական զուարթական կարգաւ լուսաւորեալ (փ. լուսա-  
ւորեցին)» 122.—«Եղեալ որստուճն յերկնից սաստիկ անհնա-  
րին, զի ահարեկեալ զամենայն ամբոխն» 138. (փ. եղեւ, ահա-  
րեկեաց.)—«Եւ ոչ ուրուք կարացեալ (փ. ոք կարաց) յաղթա-  
հարել զնա» 151. եւ սյլ երեսունեւորս անգամ յիրեսն 196—  
363.—«Առաջի եղեալ նոցա զաւանդեալս մարգարեականս, որ  
վասն նորա վկայեալ: Յետ այսորիկ երեւեալ աշակերտացն առ  
Տիրերական ծովուն, եւ արարեալ նշանս առ ի հասարակոյ  
զնոսա, եւ յայտ արարեալ նոցա՝ թէ եւ ոչ (2. իսկ տպ. թէ  
ոչ) սակաւիկ ինչ կասեցուցեալ զերեզմանին զաստուածա-  
գործ զարութիւնն» 364. (տես «Առաջի եղեալ» փ. դնէր, ի  
Կոր. եթներորդ վկ.) զարձեալ քսանհամ անգամ յիրեսն 365—

վասն յամբոյ յամբոյս ալմմ—(զորոնկ զյգեանգր. . . )



647: նա եւ Հ. Արսէն Բաղրատունի, *Ջրգ. Քեր. և*, 537, գիր-  
տած է որ այս ձեւս կարի յաճախ է յԱզատականի:

Բի՛ի 2. Հինկ կայսրն մեծու շքեղութեամբ անուանի պեր-  
ճացեալ ի մէջ բանակին երեւեալ (փ. երեւէր), Գ. իա. 56.—«Եւ  
յայնմհետէ բնակեալք խազադութեամբ՝ վայելեալք» (փ. վայելե-  
լին) յիւրաքանչիւր յարարս իւրեանց». Գ. ա. 66.—«Իսկ եթէ ոք  
ուժեք ինչ պարտիցի, եւ որում պարտիցին՝ եկեալ (փ. եւ այն՝  
որում պարտիցի՞ դայցէ) յայն տեղին, առանց դատի եւ իրաւանց  
կալցին եւ ի դուքս տարցեն», Գ. ժբ. 106—107: (կիտադրութիւն  
հաստատածիս է ըստ Հ. Արսենի Բաղրատունայ.)—«Եւ կարգք վա-  
նականաց եւ ի շէնս եւ յանշէնս առ հասարակ ծաղկեալ (փ.  
ծաղկէին)», Ե. լա. 230.—«Եւ անդէն ընդ առաջ ելեալ նոցա  
Մերուժանայ (փ. եւ Մերուժան) իւրով դնդան», Ե. խգ. 253:  
Իսկ ուր կ'ըսէ. «Մ'ի՛ մեծ ինչ նախճիրս որոցց կոտորեալ առ  
ի ցոյցս առնելոյ. այլ վարկաբարդի արասցուք, առէ», Գ. ի. 51,  
ուղղելի համարիմ «Մ'ի՛ . . . կոտորել», այսինքն Մի կոտորես-  
ցուք. համեմատէ. «Եւ յայն ինչ աստատան մի՛ լինել (փ. մի լի-  
ցուք), այլ երկիցուք», Ասկ. Մտթ. Բ. ժբ. Յարդ. 633.—«Մ'ի՛  
բազում վարդապետս լինել (փ. մի լինիր. տես Ղ. Փրպ. Թուղթ  
առ Վահ. Մամիկ. 587), եղբարք իմ», Յակ. Գ. 1: (այսինքն  
ՄԳԲ. Քնացին ոմանք. . . արք անարէնք՝ պատմել թագա-  
ւորին, եթէ Յովնաթան մենքենայս կազմեալ շուրջ գրեթէ ան պա-  
տեալ՝ յառնուլ պատրաստեալ (փ. պատրաստի, կամ թերեւ՝  
պատրաստեալ է)», Ա. ժա. 621.—«Եւ որ միանգամ թշնամու-  
թեամբ կամ թէ արհամարհանալք յայն տեղի հասանէ, մեծամեծ  
հարուածովք հարեալ (փ. հարկանէ), եթէ արձակեցցէ եւեթ»,  
Բ. գ. 39:

—ԳԻՏ. Անցեալ դերբայ համըրեալ, փոխանակ գիմաւորին  
համըրէր: Այս ձեւս՝ որ կը գտնուի եւ ի գիրս միւս Դասուց,  
ցանցառ յերկրորդին եւ յերրորդին, քիչ մ'ուելի՛ յԱռաջնումն,  
նշանաւոր է առ Կորեան իւր յաճախութեամբ. (տես աստէն եւ  
ղթիւն 54, «Ճրբել ի վերայ հասեալ». եւ յԱզատ.—Բիւլ. զթիւն  
9 եւ 95, «Թէպէտ եւ լուեալ», «Բանկի հրաման արեալ»:) Առաջին Դաս. «Ի նոյն խարափ անկեալ եւ աղանդոցն (փ. ան-  
կան եւ աղանդքն), զոր թշնամին իրեւ զորոմն ի մէջ ցորենոյ

սերմանեաց». Եղնիկ, 111. (խակ անդ, 278. «Զինչ ինչ արարեալ՝ զի զկեանս յախանից ժառանգեցից», երկակի կարէ մեկնուիլ. կամ «Զինչ ինչ արարից զի ժառանգեցից»—«Զինչ ինչ, ասէ, արարից զի կեցից». Եփբ. Համար. 154. կամ «Զինչ ինչ արարեալ ժառանգեցից». զի աւելադրուի ինն.)—«Եւ զպատճէն հրովարտակիս այտորիկ յառաջ հանեալ՝ եղևալ եւ տարածեալ (փ. շիջիք եւ տարածեսցիք) ամենայն զգուշութեամբ, եթէ էջրէց վարել զիւրեանց արէնան». Եսթեր, ԺԶ. 19.—«Եւ իջևալ (փ. էջ) նորաք հանդերձ ի ակղի մի տափարակ». Դուկ. 2. 17.—«Իբրեւ զմբրիկ էք, որ առ սակաւ մի երեւեալ՝ եւ ապա տալականեալ (փ. ապականի). Յակ. Դ. 15.—«Թող լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ (փ. թաւալի). Բ Պետար. Բ. 22.—«Եւ այսպիսի բարութիւնք ոչ եթէ ի քաղաքս միայն, այլ առաւել եւս ընդ անապատս տարածեալ (փ. տարածեցան). . . : Եւ այս ոչ եթէ յարս միայն երեւեալ (փ. երեւեցաւ), այլ եւ ի կանայս առաքինիս». Ոսկ. Մտթ. Ա. ր. Յորդ. 120.—«Զինչ ազուտ իցէ, եթէ զաւրքն յոսկի համակիցեն, եւ զաւրավարն գերի գնացեալ (փ. գնայցէ)». անդ, Ա. ի. 328.—«Եւ զայն իսկ յայտ արարեալ ասելովն՝ թէ Փախերուք եւ մի երկնչիք». անդ, Բ. թ. 519.—«Զայս ասելով՝ յայտ արարեալ (փ. առնէ) զինքն Հուր միարան, եւ նոցա ոչ ինչ նոր գործ զործեալ (փ. եւ թէ նորա ոչ ինչ նոր գործ գործեն), եւ զծածուկս սրտից նոցա յայտնեալ». անդ, Բ. Ժբ. 625.—«Յորժամ ամենայն գործն կատարեցաւ, ապա փոյթ յանձին կալեալ (փ. կայաւ) զգործս մշակին ապականել». անդ, Բ. իա. 662.—«Եւ վասն էր արդեւք զամենայն կերպարանս շարեաց թողեալ, եւ զայս միայն ի ձեռն առեալ (փ. առնուցու)». Ոսկ. Ես. ԺԳ. 146:—Երկրորդ Դաս. Ողն բեկաւ՝ Ախարու, եւ

1. Տղ. բեկեցաւ, զոր Դեր. Այտրեան, Ընն. Ընք. Ե. 93, հարգատ կը համարի. իսկ նոր Հայկազեանն (ի բառն Ողն) կ'ուզէ ուղղել «Ողն-բեկեցաւ Ախար». մինչդեռ Հ. Երսէն Բաղըրասունի, Զրգ. Ընք. Ե. 538, համարձակ ուղղած է «Ողն բեկաւ Ախարու»: Յայլոց տեղեաց եփրեմի յայանի կը տեսնուի որ բեկաւ է վաւերական ընթերցումսն, եւ ոչ բեկեցաւ. «Բեկաւ խորտակեցաւ փշրեցաւ թշնամին». Մեկն. Արար. Բ. 16.—«Բեկաւ խորտակեցաւ աղաստանն Չաուղի». Մեկն. Մամ. Դ. 390.—«Ենդէն սասակեցան բեկան եւ ի պարտութիւն ժառանգան զանոն Երեւնեբեայ». անդ, Ե.

եկեալ (փ. եկն) ընդ առաջ եղիայի». Եփր. Թաղ. Բ. 436:—Եր-  
րորդ Գաս. «Զինարդ մանուկն ի հառակ աճեցեալ, ապա յերիտա-  
սարդութիւն փոփոխեալ, ապա յայր կատարեալ, ապա ի ծե-  
րութիւն դարձեալ». Կիւր. Կոչ. Թ. 156. (փ. փոփոխի, դառնայ):

62

ԿՈՐ. Վճանէր ի քաղաքն Սաճոստացոց, յորում մեծապա-  
տիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցոյն մեծարեալ լինէր». 10:  
Այլուր. «Եւ բազում պատիւ զտեալ, հասանէին ի թագաւո-  
րակաց քաղաքն Կոստանդինական». 17:

ԱՅԼԹ. «Եւ այսպէս մեծապատիւ յամենեցունց մեծա-  
րեալ՝ ըստ արժանաւորութեանն երանութեան վկայական անուան  
ստանալոյ». 603—604: Այլուր. «Եւ մեծարանաբ մեծարեալ  
յեպիսկոպոսաց աշխարհին եւ յիշխանաց եւ ի ժողովրդոց». 605:

Տես եւ «Մեծապատիւ մեծապարզեւ մեծարեմ» ի Բիւղ.—  
Մկր. թիւ 11. եւ «Մեծապէս մեծարիմ», անդ, թիւ 14:

—ԴԻՏ. Մեծապատիւ մեծարիմ եւ Մեծարանաբ մե-  
ծարեմ կը գտնուին մի մի անգամ եւ յԱռաջին Գասի. «Զի այս-  
պիսիք իսկ են ուրբք ամենայն. յորժամ մեծապատիւ մեծա-  
րիցին՝ յայնժամ առաւել խոնարհութիւն ցուցանեն». Ոսկ. Ես.  
Զ. 67.—Այն իսկ շէր բաւական՝ զի թոյլ ետ ելանիլ զերւոյն,  
այլ եւ մեծարանաբ եւս մեծարէր». անդ, ԽԹ. 355: Այլուր  
ի նմին Գասի. Մեծամեծար պատուով մեծարիմ. Ոսկ. Մտթ.

391: Ինչպէս կարելի է հաւատալ որ եփրեմի թարգմանիչն յառաջին կէս  
ն գարու բնկեցաւ զբաժ բլլայ, մինչդեռ ժբ գարու առմկախօս մատենա-  
գիր մի բեկաւ կը գրէ. «Եւ հա տեսանէր (Խաշիկ) զի տղայ որդի նորա  
զերծեալ լինէր յարգելանոցէն, եւ զայր ի պատերազմ. իբրեւ ետես Խաշիկ՝  
բեկաւ . . . : Եւ տեսալ Խաշիկ՝ բեկաւ ողն նորա, եւ անկաւ սուսերն ի  
ձեռաց նորա». Մտթ. Ուռ. 106: Եփրեմի բնկեցան ոչ է ուրեմն թարգ-  
մանչին, այլ զազափարողին՝ որ ի թուին 2ԽԸ (=1299) ընդօրինակած է  
զՄեկնութիւնս եփրեմի, եւ այդ ընդօրինակութեան համեմատ եղած է հրա-  
տարակութիւնն Ս. Ղազարու. (տես Ա հատոր Մասնազրուիթեանց Ս. Ե-  
փրեմի, Ցառաջարան, Ե. 6): Հարագատ բնկեցաւ կը գտնուի յԱռաջ Ապր-  
դանայ (ԺԳ կամ ժԳ դար). «Իմացեալ բղէզն, եմուտ ի մէջ ոտից նարա, եւ  
էխած զձայր երանաց նորա. եւ նա ի վեր վազեաց, եւ անկեալ բնկեցաւ  
ձունս:

Ա. իգ. Յորդ. 377. Մեծամեծար պատուիմ. նոյն, եկեա. Գ. 697. Մեծարեալ պատուիմ. նոյն, ես. Խ. 267. Մեծարանաւ պատուիմ. ես. Բր. 134: Եւ ներգործարար՝ Պատուեմ պատուով մեծաւ. Եսթեր, Ա. 20. Բազում պատուով պատուեմ. Գործք Առաք. ԻԸ. 10. Մեծամեծար (նոր Հայկղ. Մեծամեծարար) պատուեմ. Ոսկ. ես. ԽԸ. 284. Պատիւ արարեալ մեծարեմ. ես. Ժմ. 159. Մեծարանաւ մեծարեմ, զոր արգէն յիշեցի: Յերկրորդ Դասէ՛ Մեծարեմ պատուով մեծաւ. Արարուր. 12: Եւ յերկրորդ Դասէ՛ Ի պատիւ մեծ պատուեմ. Վարք Յոհ. Թեղր. 108: Կայ եւ Մեծապատիւ մեծարանք. Մար. Ի Վկ. Երեւ. 117:

63

ԿՈՐ. «Եւ այսպէս զբազում աւթեանաւք անցեալ առողջութեամբ, աշողութեամբ եւ հոգեկից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն». 11. (տպ. «Ճանապարհորդ լինէր. զօթեանօք անցեալ աշողութեամբ եւ հոգեկից». ուղղեցի ըստ Աղաթ. 606. «Եւ այսպէս զբազում (տպ. եւ 2. բազում) օթեանօք անցեալ՝ առողջութեամբ, յաշողութեամբ եւ հոգեկից»: Առողջութեամբ յաշողութեամբ թուի առեալ յ'Գ Թղթոյն Յովհ. 2. Միրեկի, վասն ամենայն իրաց քոց աշողութեան եւ առողջութեան՝ աղաթս առնեմ»: Տես եւ ի Բիւլ. Գ. Ժր. 30. «Եւ դարձան անդրէն մեծաւ խնդութեամբ, եկեալք առողջութեամբ, յաշողեալք հասանէին յԱյրարատեան աշխարհն»:

ԱԳԱԹ. «Թաղայր զնայր յԱյրարատ գաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ՛ անցանել ի սահմանս Յունաց. զանց առնէր զբազում աւթեանաւք մեծաւ ուրախութեամբ». 651:

(Բիւզանդ կ'ըսէ նոյն ոճով. «Եւ զբազում բերդաւք զանց

1. Խէ ուղիղ ընթերցումն է «զբազում աւթեանաւք անցեալ» կը հաստատուի ոչ միայն Աղաթեանդեղի ըսելովն յերես 651 «զանց առնէր զբազում աւթեանաւք», (որում նման է Բիւզանդայն), այլ եւ յաշորդ վկայութեամբրդ. «Զբազում աւթեանաւք անցեալ եկին ի Նրհորն մեծ ի Չորն Առնովայն. Գլուխք Թուոց, Խե. 118.—«Որոյ շունալ երթեալ անցեալ զբազում աւթեանաւք, եւ եկեալ հասեալ յաշխարհ իւր». Յոհ. կթ. Պոսմ. 159:



առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն. Գ. իդ. 142:)

64

ԳՈՐ. «Եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան զաւառին, առ սահմանաբ Նոր Քաղաքին». 11: Տես Այրարատեան զաւառ եւ 13, 20. եւ Այրարատեան Նոր Քաղաք, 26:

ԱԳԱԹ. «Եւ վաղվաղակի հասանէին ըստ հրամանին ի ժամադիրն կողմանս Այրարատեան զաւառին ի Վաղարշապատ քաղաք». 594. (տպ. «հասանէին ի ժամադիրն ի կողմանց ըստ հրամանին՝ յԱյրարատ զաւառ ի Վաղարշապատ քաղաքն». իսկ 2. «Հասանէին ի ժամադիրն ըստ հրամանին, ի կողմանս Արարատեան զաւառին՝ ի Վաղարշապատ քաղաք».) Տես Այրարատեան զաւառ եւ 612, 626. այլուր Այրարատ զաւառ, 33, եւ այլն:

ԲԻԻԶ. «Ի ժամադիր կողմանս Այրարատեան (տպ. յայրարատեան) զաւառին քանակ մեծ լինէր». Գ. է. 16: Տես Այրարատեան զաւառ եւ 16, 18, 37, 143, 265, այլուր Այրարատ զաւառ, 144, 262. զաւառ Այրարատու, 204. Այրարատեան աշխարհ, 30: Կայ եւ Այրարատեան տէրութիւն, 22. Այրարատեան զունդ, 131:

— ԳԻՏ. Այրարատեան բառն կը գտնուի մի անգամ յԱռաջին Դատի. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն եւ Աքանաղեան զնդին». Երեմ, ԾԱ. 27:

65

ԳՈՐ. «Եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, . . . առ սահմանաբ Նոր Քաղաքին». 11.— Եւ հասեալ ի Նոր Քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ. 18.— «Լինէր հանդերձ սրբով վարդապետու (տպ. վարդապետով) քանակն Հայոց յԱյրարատեան ի Նոր Քաղաք». 26:

ԱԳԱԹ. «Գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ զաւառ ի Վաղարշապատ քաղաք, զոր եւ Նոր Քաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց». 122—123. (տպ. «ի Վաղարշապատ,

զոր եւ նորաքաղաքն»։ իսկ 2. «ի Վաղարշապատ քաղաք, զոր Նոր Բաղար»։)

—ԳԻՏ. Նոր Բաղարդ Կորեան է նոյն ինքն Վաղարշապատ, ինչպէս յայտնի կ'ըսէ Ազաթ.։—Ի Գործս Առաքելոց, ԺԶ. 11, Նոր Բաղար թարգմանեալ է յունականն Սէւաստրիս, որ էր ծովեզերեայ քաղաք Մակեդոնիոյ, եւ այժմ կոչի Cavala.<sup>1)</sup>

66

ԳՈՐ. «Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն»։ 11։ Ըստ այսմ եւ այլուր. Թարգրական լեառն, 23. Սամուաատական քաղաք. 9. Կոստանդինական քաղաք, այս ինքն Կոստանդնուպոլիս, 17. Գարդմանական Չոր, 20. Տարսնական գաւառ, 6. Խորճնական գաւառ, 14. Պաղանական տուն, 10. Սինական աշխարհ, այս ինքն Սիւնիք, 14. (Եթէ շիցէ գրելի Սրական աշխարհ, ըստ գրելոն յերես 15. «Հասանէր ի գլուխ իշխանութեանն Սինեաց՝ քաջն Սրականն Վասակ»)։

ԱԳԱԹ. «Եւ անդ ի վեր ի Սինէական լերինն ամպայարկ աստուածամուտ խորան հարեալ»։ 234.—«Կոչեաց Տէր զՄովսէս ... ի գլուխ Սինէական լերինն»։ 318.—«Կամ գլխովին ժողովրդեանն ի Սինէական լերինն իջեալ ամպովն պատեալ երեւէր»։ 408. (Իսկ յերես 234, լեառն Սինեայ)։ Ըստ այսմ եւ այլուր. Նպատական լեառն<sup>2)</sup>. Անանտական դիր, 584, 591, փոխանակ նպատ լեառն, Անանիտ դիր. Եփրատական զեռ, 630, 632, փ. Եփրատ գեա. Տափերական կամուրջը, 40, որ

1. Տես E. Renan, *Saint Paid*, Paris, Michel Lévy, 1869, և. 139, եւ ծան. 1.—Վարդան Երեւեցի, Պատմ. 101, նոր Բաղար կը թարգմանէ Պէտաքաղաքն Վրաց. «Նոր Բաղար, զոր Վիրք Ախուրալաք ասեն»։

2. Սիսական աշխարհ հին անուն է Սիւնեաց գաւառին, որ կը զըսնուի բազում ուրիշ ի Պատմութեան Սահմանոսի Առաջերեան։

3. «Գայր հասանէր առ ստորտով նպատական լերինն» 613. ուր ապ. ունի նպատ. բայց Ինճիճ. Ստորգը. 403, կը գրէ նպատական ըստ հին տպագրին, «թղթ. յկգ. ուր ի ձեռագրի գրի նպատակ»։ նոյնպէս եւ Չեռագիրն Երբնամ երիցու ունի նրդատակ։ Տես եւ ի Պատմ. Ներսեսի, Մօփ. Հայկ. 2. 72, նպատակ, որ այլ 22. ունին նպատակ, որպէս յերես 73. եւ դարձեալ նպատակ, 113։

առ Բիւզանդայ կ'ըսուի կամորջն Տափերայ, կամ Տափերն կամորջ, 30, 172: (Ազաթանգեղին Նպատական լեառն կայ եւ ի Բիւզանդ, Ե. դ. 194. «Քաղաւորն Պապ. . . կլանէր նստէր ի վերայ Նպատական լերինն»։ որ կ'ըսուի նա եւ Նպատ լեառն, 192, 193, 195:— Ի գիրս Մակարայեցւոց՝ հանգոյն Անատական դիրք ասացուածայն Ազաթանգեղի՝ կը գտնենք Որմզղական դիրք, Բ. դ. 2. ժդ. 33. Գ. ր. 14, փոխանակ Որմիղդ կամ Արամաղդ. «Յանուն Որմզղական դիցն Ողոմպիացւոց». Բ. դ. 2. «Ողոմպիական դիցն Արամազղայ մեհեանն». Եւս. ժմ. 85—86:— Իսկ Եւթաղ կ'ըսէ լեառն Սինայի. Գլուխք Գծ. Ը. 1048 ք. Թարր լեառն. Գլուխք Բ. Պետր. Բ. 1090 ք.)

==ԳԻՏ. Սինէական լեառն կը գտնուի մի անգամ յերկրորդ Դասի. «Եւ Մոփսէս ի լեառն Սինէական, դիմեալ եմուտ յամպն մրրկախառն». Զգան, ժէ. 296: Այլուր լեառն Սինէանդ, Ա. 17. Եփր. Բ Արէնք, 283. լեառն Սինայ. Եփր. Բ Արէնք, 265, Դատ. 330: նոյնպէս եւ յերրորդ Դասի Սինէական լեառն քանի մի անգամ. Կիւր. Կոչ. 33, 101, 206, 211, 215. սոյն զրոց թարգմանիչն ըսած է նա եւ Որմզղական քաղաք, ժէ. 385, իբր Դիոսպոլիս, Diospolis, որ եւ Լիւզղա, Lydda. (համեմատէ ընդ Կորեանն Կոստանդինական քաղաք, փոխանակ Կոստանդնուպոլիս.) Իսկ Առաջին Դասն չգիտեր Սինէական լեառն, այլ կ'ըսէ ամէնուրեք. Սինէ. Սդ. Կէ. 9, 18. Սինա. Ոսկ. Մտթ. Ա. ժա. 162, լեառն Սինայի. Զեւտ. Իէ. 34. Ոսկ. Մտթ. Ա. ա. 2. լեառն Սինայ. Գործք Առաք. Է. 38. լեառն Սինայ. Ոսկ. Մտթ. Գ. դ. 9. նոյն, Ես. Բ. 6, եւ այլն:— Թարրական լեառն յատուկ է Կորեան. այլ Թարգմանիչք կ'ըսեն լեառն Թարրվր, կամ լոկ Թարր. Դատ. Գ. 6. Սդ. 2Ը. 13. Կիւր. Կոչ. ժՖ. 215, եւ այլն: Այնպէս զի ստանալովս ըստ իմ ամսագրիս լոյսն զ սա մամկնածայն սոսթ» . ԿԳԾ

67

ԿՈՐ. «Իրեանցակուռ (առ «Իրեանց կուռս», այլ ի նմին հատուածի առ Բիւզանդայ «Իրեանցակուռ», Գ. ժ. 23) ձուլածուին երկիր պաղանէին, եւ դնորին նրամանաբերն (առ Բիւ-





գիրս Առակոց, Բ. 18. Թ. 18: Կայ. եւ շեւեռեայ Կրօնիկոնին  
 Երկրածին՝ իբր գի. Fils de la Terre, անուն Հսկայից՝ ըստ  
 առասպելաց, «Առ սորաք Սիրոս պատմի լեալ Երկրածին. յորով  
 անուն կից եւ Սիրիա անուանեցաւ, որ են Ասորիք», 52.—Ասի  
 թէ Երկրածին էր Անտոնոս». 72: Իսկ Ազգք Երկրածնաց  
 կայ միայն առ Դորեան եւ առ Ազաթանդեղի: եւ Ե կեանս  
 երկրածնաց՝ միայն առ Ազաթանդեղի եւ առ Եւթաղի:

71

ԳՈՐ. ա. «Որոց առեալ զամենայն նախարարազունդ աւա-  
 զանուոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին Երանելոյն զա-  
 վամբ Ռահ գետոյն». 11:

ԵՅԱԹ. ա. «նա եւ նախարարք եւ մեծամեծք աւազա-  
 նուոյն ընթացեալք ի տեսանել՝ զմիմեամբք ելանէին» 130.—«նա-  
 խարարքն եւ մեծամեծք աւազանուոյն, որ Եկեալ էին չքաղիւք՝  
 պատիւ առնել նմա». 136.—«Թագաւորն եւ նախարարքն եւ մե-  
 ծամեծ աւազանին». 171.—«Հանդերձ մեծամեծ աւազանուոյն  
 եւ ամենայն ազատազունդ բանական». 594: (վերջին մասն հա-  
 տուածիս առեալ է ի Վարուցն Մաշտոցի, 13:)

ը. «նա եւ կանանուոյն ժողովեալ մատաղ մանկուտոսն ան-  
 մեղաւրն». 548.—«Ամենայն որ ձեռն ի դործ արկեալ, եւ կա-  
 նանուոյն անգամ սատարեալ ըստ իւրեանց տկարութեան կանա-  
 ցի ուժոյն». 569:

ԲԻԻ 2. ա. «Ինէք արկես (արքայն Խոսրով Բ), զի մեծա-  
 մեծ աւազանին... կայցեն առ արքային». Գ. ք. 20.—«Մեծա-  
 մեծ աւազանի, զարձեալ 26,30—31, 159, 256. (տես Մեծա-  
 մեծ աւազանի եւ յկաթ.) իսկ աւազանի լոկ, տես 20, 32,  
 42, 54, 134, 186, 189՝ երկիցս, 237: Սխալ թո՛ւի Աւազայնի  
 գրութիւնն, 186, 256:

1. Յերեւ 645. «ամենայն երեւելի աւգնականաւրն» գրուածն՝ ի 6  
 2 հոգիքս ինչ է աւազանօրն, ըստ որում ունի եւ նոր Հայկ. յՆաղապե-  
 այլ ուղիղ է աւգնականաւրն, զի բանն գ՛րբիգորէ է, եւ աւազանօրն բնա-  
 շպատշածիք: Համեմատէ. «Հանդերձ աւգնականաւր իւրոյք ի ջանէք ի քա-  
 ղաքն Սամստացոց». Աւարք Մաշտոցի, 10.—«Հրաժարեալք ի նոցանէն  
 հանդերձ այլոյք եւս աւգնականաւրն». անդ, 14:

բ. «Հրաման տայր (Չապուհ Բ) հորանել զամենայն ազատ կանանին. . . եւ ինքն. . . անցանէր առ կանանուիւն». Գ. ծր. 176. — «Եւ զազատ կանանին անդէն ի բերդեանն բաշխէր եւ թողոյր». անդ, 177. — «Եւ զիւրեանց կանանին ընդ նոսա արձակեալ, յամուր յողարկէին». Ե. խդ. 252. — «Եւ զմանուկն Արտաւազդ, որդի Վաշէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ». անդ. — «Ոչ հաւանեցաւ նա ընդ կանանին երթալ». անդ, 253: Այլուր բազմաբար կանանիք. «Ամենայն կանանաւրն, եւ հանդերձ տիկնանց տիկնան, եկն եհաս ի սահմանս Հայոց». Գ. խա. 55. ինչպէս Մանկաի եւ Մանկոտիք, Երեմ. ԽԳ. 6. Բիւզ. Գ. ծր. 177. Պամ. Ազեքս. 124. Ոսկ. Անտմ. Գ. 594 (ի հատորին ճառից). — Գրեան եւ Գրեանք, Եւս. Եկեղ. Ե. ը. 362. — Աւագանի եւ Աւագանիք, Ա. Փրպ. Պամ. 44, եւ այլն. — Որեալ եւ Որեալք. «Անոյր այնուհետեւ եւ զԱրշակունեացն տոհմի որեալս». Ազաթ. 587 (ըստ 2.). — «Եւ այնպէս անցեալ զնացին որեալքն». Պամ. Ազեքս. 124. Քաջ որեալք. անդ, 143. Ազատ որեալք. Ա. Փրպ. 168. Ազատագունդ որեալք. Յոհ. կթ. 123:

գ. «Եւ այլ մեծամեծք նախարարացն եւ աւագ տանուտեարք ազատանին (չէին անդ)». Գ. ի. 52. (մեծամեծք նախարարացն եւ 217, համեմատէ ընդ Ազաթ. մեծամեծք աւագանոյն.) — «Հայոց ազատանոյն արտոյնացն նիղակաւորացն ուղմ արարեալ յարձակեալ». Ե. Ե. 201:

դ. «Ոչ գոյր չափ զլիսանոյն արտոյնիցն՝ զոր բերեալ էր առաջի թագաւորին Հայոց Պապայ՝ զաւրաւարն Հայոց Մուշեղ». Ե. գ. 198:

ՄԿԲ. ա. «Աւագանին՝ որ թշնամութեամբ սխա պահէին Յուդայ, առաւել եւս շուրջ զայրացուցին զթագաւորն». Բ. ժդ. 11. — «Եւ ինքն յարախութիւն դառնայր բազում զաւրաւք, բարեկամաւք, մեծամեծ աւագանուի». Գ. Ե. 2. (տես մեծամեծ աւագանի յԱզաթ. եւ ի Բիւզ.) — «Մատուցեալ փղապետն՝ զմեծամեծս յաւագանոյն ի վկայութիւն տանէր». անդ 16. (թեբեւս զմեծամեծս աւագանոյն. տես առ Ազաթ. մեծամեծք աւագանոյն երկիցս, եւ առ Բիւզ. մեծամեծք նախարարացն.)

[Ա Դաս]† ք. «Եւ այն զինչ իցէ առ այժմու կանանուիւս». Ոսկ. Ա Տիմ. Թ. 72. (տպ. կանոնուիւս. եւ ի ծանօթութեան կը

նշանակէ թէ յոյն բնագիրն կ'ըսէ կանամբքս: Չայս սխալ տպագրին վաղուց ուղղած եմ ի Հայկ. Բառարնն. և. 43:)

Ե. Հիջեր մի՛ և հաներ ընդ քեզ բազումս, իբրև զցորենահատ՝ որ մեկնակ (տպ. մեկնակի) իջանէ միայն, և վերանայ պսակեալ բազում ընկերանեաւ: Մար. Ի Վկ. Արեւ. 70:

— ԳԻՏ. Արտաքոյ երկուց վկայութեանցդ Առաջին Դասուն՝ անի յովնականակնրտ վերջիւ բառ բնաւ չգանուիր ի գիրս երեցունց Դասուց: Գեր, Այտընեան, Ա՛նն. Բեր. և. 79, ծան. 37, միայն զԼ՛նկերանի նշանակած է: Հայկական Բառարննութեանս հրատարակութենէն քանի մի տարի յառաջ՝ երբ ըսի Վենետիոյ մի Մխիթարեանի թէ Ոսկերբրանին կանոնովս ուղղելի է կանանովս, շհաւանեցաւ, առարկելով թէ «Ոսկերբրանի Թղթոց Մեկնութեանց հայերէնն՝ Բիւզանդայ հայերէնով չկրնար ուղղուիլ»: Թող ուշադրութեամբ կարդայ նոյն Մխիթարեանն զ15:

72

ԿՈՐ. «Ի քաղաքն դառնային, և զաւուրս տաւնական՝ ուրախութեամբ անցուցանէին». 11:

ՄԵՇԹ. «Եւ զամենայն ժամանակս՝ ձմերայնոյն՝ ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչ հողմաշունչ սառամանեացն՝ անցուցանէին». 38:

73

ԿՈՐ. «Եւ զնոցա հարուստ ամացն (?)՝ ծնունդս՝ առեալ պարզախաւսս հոետորբարանս կրթեալս՝ աստուածատուր իմաստութեանն ծանախս կացուցանէին». 12. (տպ. «ծնունդս կացուցանէին»: դոր տես ի յաջորդ թիւդ 74:) Այլուր. Աստուածատուր աւանդութիւնք. 13. Աստուածատուր արէքք. 12. Աստուածատուր Գիրք. 21. Աստուածատուր հրամանք. 7. (տես աստէն և Արքայատուր հրաման, Թիւ 43.) Աստուածատուր նշանագիր. 10:

1. Տպ. կը նշանակէ յալմէ օրինակէ հարանց ամացն, զոր մարթի եւս կից ընթեռնուի հարանցամացն. տես «Հարամոյց» յԱղաթ. — Մկրթիւ 1, ԳԻՏ.

ԱԳԱԹ. «Գիտել ճանաչել իմանալ եւ իմիտ անուու  
 զաստուածատուր իմաստութիւնն». 200.— «Աստուծոյ պա-  
 տուիրանապահութեամբն՝ զնախանձելի զաստուածատուր իմաս-  
 տութիւն պահեալ», 212: Այլուր. Աստուածատուր արեւիք.  
 525. Աստուածատուր զարութիւն. 656. Աստուածատուր  
 շնորհք կամ շնորհ. 23, 601, 622: Ըստ այսմ եւ Բրիստոսա-  
 տուր փառք. 595. Բրիստոսատուր փրկութիւն. 519:

==ԳԻՏ. Աստուածատուր իմաստութիւն հանդիպած չեմ  
 ի գիրս միւս Դասուց. այլ կայ յԱռաջին Դասի՝ Աստուածատուր  
 արէնք. Ոսկ. Մտթ. Ա. դ. Յորդ. 58. (տես եւ ի Կոր.) Աս-  
 տուածատուր Գիրք. Եզնիկ, 79, 97, 153, 188 երկիցս, 214, 215,  
 218. Եւս. Ժմ. 21. (տես եւ ի Կոր.) Ըստ այսմ եւ Անճնատուր  
 վարդապետութիւն. Ոսկ. Մտթ. Բ. իդ. 725, 727, 729 երկիցս.  
 Դիւատուր խոդ. նոյն, Նքր, ԻԸ. 554. Հայրենատուր գնացք.  
 Ա Պետր. Ա. 18 (այս ինքն՝ տուեալ ի հայրենեաց—ի հարց, զոր  
 տես աստէն ի թիւն 151, ԳԻՏ):

74

ԿՈՐ. «Եւ գնոցա հարուստ ամացն (?) ծնունդս՝ առեալ  
 պարզախաւս հետորարանս կրթեալս՝ աստուածատուր իմաս-  
 տութեանն ծանալթս կացուցանէին». 12. (տպ. «ծնունդս  
 կացուցանէին». այլ ի նմին հատուածի առ Ագաթ. գրեալ է՝ «Ժա-  
 նալթս աւետարանական աւետեացն յարդարեալս ընդելս կա-  
 ցուցանէր»: 593.)

ԱԳԱԹ. «Զամենայն որ աստուածպաշտութեան ծանալթս  
 կացուցանելք. 511.— «Ժանալթս Աստուածութեանն կացու-  
 ցանել զամենեւին». 514.— «Հոգեպատում պատգամացն ընդելս  
 եւ ծանալթս կացուցանէր». 546: 81  
 (Նովին ոճով եւ ի Մկր. «Ի՞րր ոչ զիտէիք՝ եթէ անծա-  
 նալթ հրաման է զոտղիդ կացուցանել». Բ. ք. 7:)

75

ԿՈՐ. «Ի ձեռն արեալ այնուհետեւ աստուածագործ մշա-  
 կութեամբ զաւետարանական արուեստն». 12.— «Երկիր՝ որ համ-  
 բաւուցն անգամ աւտար էր կողմանցն այնսցիկ, յորում ամենայն



աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան». 13. (ի նմին հաստուածի առ Ազաթ. 581. «աստուածագործ սքանչելութիւնքն գործեցան».)

կայր՝ ամենայն ումք քրիստոսատուր փրկութեանն հասանելոյ  
(տպ. հասեալ. իսկ 2.՝ հասելոյ)». 519:

137

ԿՈՐ. «Եւ նովին հոգեկրան վարուք հասանէր Սրբոյն (Մաշ-  
տոցի) քրիստոսակոչ կատարումս». 26:

ԱԳՆԹ. «Գէտ եղեալ ինքեան (Գրիգորի) զամենայն աւուրս  
կենաց իւրոց քառասուն քառասուն աւր պահօք ձգել, մինչև  
յար քրիստոսակոչ նանգստեանն իւրոյ վախճանին». 638—  
639. (բառ առ բառ և ի Քիզ. «Արիտակէս հաւրն (իւրոյ Գրի-  
գորի) էր գործակից . . . զամենայն աւուրս կենաց իւրոց մին-  
չև յաւրն քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ. Գ. ր. 6):

138

ԿՈՐ. «Եւ համբարձեալ զձեռսն հանապազատարած  
յերկինս՝՝ զամէն մնացեալսն յանձն առնէր (Մաշտոց) շնոր-  
հացն Աստուծոյ. վասն նոցա աւգնականութիւն նայցէր». 26:

ԱԳՆԹ. «Համբարձեալ զբազուկսն հանապազատա-  
րածս յերկինս՝ ամենայն ժողովելոցն և թագաւորին բժշկու-  
թիւն նայցէր (Գրիգոր)». 574: Այլուր. «Զձեռս լի աղաթիւք  
յերկինս համբառնային». 130.—«Ողորմ ողորմ ձեռս նամ-  
բարձեալ յերկինս». 137:

---

1. «Եւ ամբարձեալ զհանապազատարած զձեռս իւր յերկինս՝ . . .  
աղաթեաց այսպէս, և ասէ». Վարք Յոհ. կամաւոր աղքատին. Վարք Հա-  
րանց, Հ. Ա. 134—135:

ՔԻԻԶ. «Եւ Սուրբն ներսէս զբազուկսն հանապազատա-  
րածս համբարօնալ յերկինս՝ խնդրէր ի Տեառնէ դի» եւ այլն.  
Ե. դ. 195: Այլուր. «Համբարօնալ զօնոս իւր եւ զաչս իւր  
ընդ երկինս, սասց» Ե. իդ. 218:

(ՄԿՔ. «Եւ ամենեքեան առ հասարակ աղաւթ ից բարբառով  
զօնոս համբարօնալ յերկինս՝ մատունս տատանէին» Բ. դ. 20.  
— «Զօնոս յերկինս բարօնալ՝ ի նշանադործ Տէրն կարդայր».  
Բ. Ժե. 21.— «Զօնոս յերկինս բարօնալ՝ զմեծ զամենաղաւթն  
Աստուած աղաչէին» Գ. Ե. 13.— «Քահանայքն՝ օնոս բարօնն  
յերկինս» Բ. Ժդ. 34:)

— ԴԻՏ. Կան յԱռաջին Դասի. «Եւ լինէր յորժամ ամբառ-  
նայր Մովսէս զօնոս իւր, զաւրանայր Իսրայէլ» Ելք, Ժէ. 11.  
— «Ոչ զաւաղան կարկառ (Քրիստոս հանգոյն Մովսիսի), եւ ոչ  
օնոս ընդ երկինս տարածեաց, եւ ոչ աղաւթ ից կարաւա-  
ցաւ» Ոսկ. Մտթ. Բ. դ. 439.— «Եւ միայն նափորտամբն կա-  
ցեալ՝ համբարօ զօնոս իւր ի վեր, եւ յաղաւթս կայր այս-  
պէս» Հանգ. Յովհ. է. 1222 ա.— «Յորժամ ամենայն ժողովուրդն  
բովանդակ կայցէ օնոս ի վեր համբարօնալ» Ոսկ. Փիլիպ.  
Գ. Յորդ. 381: Վերջնոցս նման եւ յերկրորդ Դասի. «Համբար-  
օնալ զօնոս ի վեր, եկաց յաղաւթս» Լարուր. 45.— «Յողոց  
ել, համբարօ զօնոս իւր ի վեր» Եւս եկեղ. Գ. դ. 160:— Միւս  
Դասքն՝ բաց ի Հանապազատուտ բառէն՝ որ կայ ի Թղթին  
առ Տիտոս, Ա. 12, շունին այլ բարդութիւնս Հանապազ մակ-  
բայի: Կորին Հանապազատարած բառին հետ ունի եւ Հա-  
նապազաբուխ որտասուք. Ազաթ. 644. Հանապազախաւս  
լինիմ. անդ, 237. Հանապազակիր գնոյն նմանութիւն յանձին  
պահել. անդ, 245. Հանապազատես յիշատակ. անդ, 231: Իսկ  
«Մշտարուիս արիւն», Ազաթ. 505, կայ եւ յեզնիի, 8. «Աղբերք  
մշտարուիս» նոյնպէս «Աղբիւր մշտնջենարուիս», Ազաթ. 508,  
կայ եւ ի Բրս. Վեց. Գ. 55, «Ակունք մշտնջենարուիս» որ յնսկ-  
Մտթ. Ա. դ. 45, բուած է «Մշտնջենական աղբերք».— Հա-  
մեմատէ ընդ Ազաթ. Հանապազակիր = Բիւզ. Մշտակիր. տես  
աստէն թիւ 140, առաջին վկ. Բիւզանդայ:

139

ԿՈՐ. «Ո՛ր զինուորական կողմանէն (տպ. կողմանն), առաջնումն Վահան անուն՝ յազգէն Ամատունեաց»։ 27:

ԵԳԵԹ. «Եւ ի զինուորական կողմանէն՝ (առնոյր Տրդատ) զշորեսին զահնրէցսն իւրոյ տաճարին, որ Բղեաշխքն կոչին»։ 650:

140

ԿՈՐ. «Վահան . . . եւ . . . Հմայեակ . . . , արք պատուականք, երկկիւղածք, Նրամանակատարք վարդապետական հրամանաց»։ 27: Այլուր. «Արդ այսունեաեւ եւ (այսունեաեւ?) խոստացեալն առաջի զիցի, եւ Նայրենակատարք մեծարեալ պայմանաւ որ առ ի մէնջ հաճեսցի»։ 6. (խանդարեալ թուի վերջին մասն հատուածիս. տես ի Կոր.—Եւթ. զկնի 16 թուոյն):

ԵԳԵԹ. «Սակայն արք արդարք ի մարդկանէ . . . յերկրպագութեան կամացն հնազանդեալ Նրամանակատարք»։ 190—191: Ըստ այսմ եւ «Քանդի եւ աւրէնքն իսկ ստուերազիր յաւրինակատարն Քրիստոս կորուսին զմահ»։ 260.—«Ասացեալ ի Հաւրէ առ խորհրդակալսն առ խորհրդակատարսն համագործս՝ լինել յոյս»։ 196.—«Եւ զկամակատարսն (2. իսկ տպ.՝ զկամարարսն) Հաւր՝ որ ինքն բնութեամբ Որդի է Միածին՝ արասցէ որդիս շնորհաւր»։ 437:

(Բիւզ. նման Հրամանակատար բառի. «Վասն տառապելասէր վարուցն (Սրբոյն Քարսիլիոսի), եւ պատուիրանակատար մշտակիր հանապազորդութեան նորա»։ Գ. է. 94: Այլուր. «Եւ զմշտակատար զսորա կենդանի յիշատակն ի վերայ կատարեալ, դառնային»։ Գ. ժա. 29:)

Տես եւ «Արդիւնակատար» ի Կոր.—Եւթ. թիւ 10, «Հաճոյակատար յԱզգաթ.—Բիւզ. թիւ 180:

—ԴԻՏ. Հրամանակատար, Արինակատար, եւ այլն, կը նշանակեն Կատարիչ հրամանաց, արինաց. Մշտակատար՝ Որ միշտն կատարի. իսկ Հայրենակատար կը մնայ անստոյգ: —Սխալ է Հրամանակատար յՈսկ. Տիտ. Գ. Յորդ. 316—317. «Զի զայնպիսի ծառայն զբարեբարն (տպ. զբարեբարն) եւ զբարեմիտ, . . . զովիցէ եւ զբուռաթիս տայցէ, եւ քան զամենայն զայսն՝

առաջ անցուցանիցէ, եւ ամենեցուն հրամանակատար կացուցանիցէ». ուղղելի է հրամանատար, ինչպէս կը պահանջեն միտք բանին, եւ ինչպէս կ'ըսուի յետոյ ի նմին երեսի. «Ամենայն ծառայից իւրոց հրամանատար կացոյց». տես անդ հրամանատար եւ 319 շորիցս. եւ յեփես. ԻՍ. Յորդ. 906, «հրամանատար կացուցանիցէ»:—*Կամակատար* կայ մի անգամ եւ յեղնիկ, 91. «Ասի հրեշտակ ոգի, այլ ոգի հարկաւոր, որ է հնազանդ եւ կամակատար». որ յերես 183 կ'ըսուի *կամարար*: Իսկ *Դժուարակատար*, Ոսկ. ես. 1. Գ. 206, կը նշ. Գժուարաւ կատարելի. նոյնպէս *Ինքնակատար*, Ոսկ. եփես. Ժ. 779, է Ինքնին կատարելի:

### 141

ԿՈՐ. «Եւ մինչդեռ ձեռք Սրբոյն (Մաշտոցի) ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման . . . երեսէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր». 27:

ԱԳԱԹ. «Զսիրելին քո զնոյ. . . ապրեցուցեր խաչանման փայտին ի ջուրցն հեղեղէ». 134: Այլուր. «Տարածեաց (Հռիփոսմէ) զբազուկս իւր ի նմանութիւն խաչին». 133. ընդ որում համեմատէ. «Եւ Թեկղ անցեալ կայր, եւ տարածեալ ունէր զձեռս իւր ի նմանութիւն խաչափայտին». Պտմ. Թեկղի, 526: Տես եւ զյաջորդդ. «Զդէր զձեռս իւր ըստ արիւնսակի նմանութեան խաչին». Ես. Եկեղ. Ը. է. 631—632:

### 142

ԿՈՐ. «Զոր (գտեսիլն խաչանման) ամենայն ուրուք ինքնատես եղեալ, եւ ոչ առն ընկերի (տպ. առ յընկերէ) պատմեալ». 27:

ԱԳԱԹ. «Վասն այնորիկ առեալ շրջեցուցեալ զնոսա (զորդիսն Իսրայելի) ընդ անապատն՝ ինքնատես ի լերինն լինելով». 238.— «Յետ որոյ քահանայիցն հանդերձ ծերովքն ինքնատես երեւէր (Աստուած)». 235:

—ԴԻՏ. Առ Գորեան *Ինքնատես լինիմ է Ինքնին տեսանել աշօք իւրովք, ականատես լինել. իսկ յԱգաթ. Ինքնատես լինիմ կամ երեւիմ՝ Ինքնին երեսել զէմ յանդիման:*



143

ԿՈՐ. «Եւ սոցա Սրբոյն (Մաշտոցի) (ապ. եւ սորա սրբոցն) զսէր եւ զմիարանութիւն աւանդեալ, զմերձաւորս եւ զճոռաւորս աւրննութեամբ պսակէր». 27: Այլուր. «Ի լուսարեբ Եւետարանին իւրում ծաղկեցուցանէր զազնուականութիւնս (նոցա Քրիստոս), մանաւանդ երանութեամբ իսկ պսակէր». 4. (համեմատէ զվերջինս ընդ ՅՃԽ. «Զի առցեն զանուն խոստովանողաց եւ վկայից սուրբ մարտիրոսաց՝ որ երանութեամբ պսակին». Ե. 38.—«Զի արգարեկորովքն՝ երանութեամբն պսակին... եւ վայելեն ի բարութիւնսն ըստ արժանաւորութեանն, եւ երանութեամբք պսակին». Է. 62. տես եւ Ժ. 93. ԺԵ. 111, 113, 114, 115, 118, 120, 122, 123:)

ԱԳԱԹ. «Եւ աւրննութեամբ պսակեալ ի ժողովոյն (Նիկիացուոց՝ կայսրն Կոստանդիանոս՝) զանուն յերկրի թողոյր, եւ զարդարութիւն յերկինս հաստատէր». 656—657:

—ԴԻՏ. Պսակեմ սովին առմամբ կը զանուի ի գիրս Սաղմոսաց. «Տէր, որպէս զինու հաճութեամբ քով պսակեցեր զմեզ». Ե. 13.—«Փառաւր եւ պատուով պսակեցեր զնա (զմարդն)». Ը. 7.—«Պսակէ զքեզ ողորմութեամբ եւ զթութեամբ». ՃԲ. 4:

144

ԿՈՐ. «Եւ ի ներքսագոյն խորանին զՍրբոյն (Մաշտոցի) հանգիստն յարինեալ». 27:

ԱԳԱԹ. «Եւ ի ներքսագոյն (2. իսկ տպ.՝ եւ ներքսագոյն) խորանացն կենդանազիր զերեզմանացն... կանգնեաց զսուրբ Նշան տէրունեան խաչին». 578:

145

ԿՈՐ. «Սպասս վայելուչս զունագոյնս պայծառատեսիլս՝... ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմնոյ եւ արեանն Բրիստոսի պատրաստեաց». 27:

ԱԳԱԹ. «Եւ բաշխէր անդ զկենդանարար մարմին եւ զարիւնն Բրիստոսի». 610—611 (ըստ 2. իսկ տպ.՝ «զմարմին եւ զարիւն կենարարին Քրիստոսի».)—«Կենդանարար մար-

մտոյն եւ քաւիչ արեանն *Քրիստոսի*». 617.—«Պարզեւեաց զկենդանարար մարմինն իւր եւ զարինն աշակերտացն». 362.—«Ուսեղ զմարմին Աստուածորդոյն, եւ ըմպել զարինն կենդանարար». 516. տես եւ 358, 622:

ԲԻԻԶ. «Սա (Վրթանէս) երթեալ կատարէր անդ . . . զպատարզն գոհութեան, . . . զկենդանարարն եւ զազատիչն զմարմին եւ զարինն Աստուածորդոյն՝ Տեառն մերոյ Յիսուսի *Քրիստոսի*». Գ. գ. 7:

==ԳԻՏ. Կայ յերկրորդ Դասի. «Կերակրեաց զնոսա (Քրիստոս) ի շահ անցաւոր հացին եւ զինւոյ, զի հասուցէ զնոսա ի շահ կենարար մարմնոյ եւ արեանն». Եփր. Համար. 121: Այլուր պարզապէս. «Էառ զմարմին եւ զարինն Տեառն մերոյ». Եւս. Եկեղ. Է. թ. 536:

## 146

ԿՈՐ. «Եւ ամենայն սրբովք ի միասին գումարելովք խաշակրան վկայիցն Քրիստոսի, հանդերձ երանելեան Մաշտոցի, ի հանգիստ խորանին փոխէ». 27:

ԱԳԱԹ. «Ուր եւ անդէն բազմութեան զաւրացն՝ մէն սակաւ սատարեալ, շինեցին զվկայարանն, եւ զուրբսն ի հանգիստ փոխեցին». 608.—«Եւ արդ եկայք շինեցուք զվկայարանն, փոխել զվկայսն ի հանգիստ». 568:

## 147

ԿՈՐ. «Եւ զնորին (Մաշտոցի) աշակերտ՝ Թաղիկ անուն, զայր զգաստ եւ բարեպաշտան, հանդերձ եղբարքք երանութեանն հասելոց՝ սպասաւոր սրբոցն ի փառս Աստուծոյ կարգէին». 27—28:

ԱԳԱԹ. «Դան այնուհետեւ (տպ. այսուհետեւ) երանութեանն հասեալքն ի խորհրդանոց (2. իսկ տպ.՝ ի խորհրդոցն) Հոգւոյն Սրբոյ». 523:

## 148

ԿՈՐ. «Եւ երկրորդն՝ այլ աշակերտ, Յովհան անուն, այր իսկ սուրբ, վարդապետատէր եւ նշմարտապատում». 28:

ԱԳԱՔ. «Զլսելիս ամենեցուն լնուլ ճշմարտապատում՝ վարդապետութեանն Քրիստոսի». 581.—«Զդոյն ինքն զԲրիգորդ մեզ հովիւ եւ տեսուչ եւ վարդապետ ճշմարտապատում՝ կացուցանել», 600:

Տես «Հոգեպատում» աստէն, թիւ 20:

149

ԿՈՐ. «Քաղում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց, մենակոխ մենամարտիկ երկապատական բռնութեանն ի Տիգրոն քաղաքի՝ վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ». 28. (տպ. շունի մենակոխ. այլ ունին Սուտ—Կորիւնն, 35, եւ Ազաթ. 21:)

ԱԳԱՔ. «Իսկ առ Յակոր . . . Տէրն ծանուցեալ երեւի, երբեմն իրրեւ դայր մի սոսկադոյն, եւ երբեմն գիշերամարտ մենակոխ». 231. (համեմատէ Մենակոխ մենամարտիկ եւ Գիշերամարտ մենակոխ:)

==ԳԻՏ. Կայ միայն Մենամարտիկ յՈսկ. Մտթ. Բ. Ե. Յորդ. 466. Եւս. Քր. 108. Ի Զգան, ժթ. 340. կայ եւ Մենամարտ կոխ յԵս. Քր. 146:

150

ԿՈՐ. «Վասն որոյ եւ զՄոստովանողական անուն ժառանգեաց (Յովհան՝ աշակերտ Մաշտոցի). ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց». 28:

ԱԳԱՔ. «Որ (Գրիգոր) արժանի եղև ի մեծ յեպիսոպոսական աթոռն հասանել, եւ զՀայրապետական անուն ժառանգեաց». Յռչր. 23: Ալլուր. «Ուստի եւ յետս երթալոյ՝ զհակառակաթէր զՍատանայ անուն ժառանգեաց». 213.—«Ուստի եւ նոյն տեղին խառնակութեան՝ զԲաքել անուն ժառանգեաց». 429. (համեմատէ ընդ ՅՏԻս. «Զանարգանաց անուն ժառանգել». Դ. 30.—«Այնպիսին զպիղծ եւ զաղտեղի անուն ժառանգէ». Ե. 36:)

==ԳԻՏ. ՂՄոստովանողական կամ զՀայրապետական անուն ժառանգեմ չիք յայլ գիրք. բայց Ազաթանգեղի միւս վկայութեանց նմանն կը գտնուի յԵրրորդ Դասի. «Ի սկզբան անդ

յԱրարչէն բարի ստեղծաւ (Սատանայ). բայց յիւրոց բարուց անտի բանսարկու եղեւ, եւ ի գործոց անտի իւրոց զանունն բանսարկութեան ժառանգեաց: Ձի հրեշտակապետ էր բարի, բանսարկու անուանեցաւ յետոյ, եւ ի բանսարկութենէ անտի ժառանգեաց զանունն»։ Կիւր. Կոչ. Բ. 12:

151

ԿՈՐ. «Իսկ բարեացապարտին Վահանայ՝ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր. որ աշխարհածնունդ (տպ. աշխարհածնին) հայրենեացն սեպհական որդի (տպ. ոգի) գտեալ շնորհաբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ մերձաւոր կենակից վայելէր»։ 28: (Խանգարեալ է այս հատուած Կորինն: Սուտ—Կորինն, 35, կ'ըսէ. «Իսկ բարեացապարտն Վահան յանկարծահաս կենաց, ասպընջական ցանկալի ամենայն սրբոց լինէր. որ աշխարհածնունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ շնորհաբն Քրիստոսի՝ մերձաւոր կենացն յաւիտենից լինէր»։—Ազաթանգեղ, Յոջր. 21—22. «Իսկ բարեացապարտն Տրդատ՝ յանկարծակամ կենացն ասպընջական ցանկալի ամենեցունցն լինէր. որ աշխարհածնունդ (տպ. աշխարհածունդ) հայրենեաց որդի գտանէր շնորհաբն Աստուծոյ՝ մերձաւոր կենաց վայելէր»։—Չորրորդ ընթերցուած մի կը մատուցանէ մեզ Մովսէս Կաղանկատուացի, Հ. Ա. 381, բանաբարելով յԱզաթանգեղէ. «Այսպէս հաւատացեալ (իշխանն Հոնաց) լուսափայլ վարդապետութեան նորա (եպիսկոպոսին Իսրայելի), աւր ըստ աւրէ պայծառանայր սիրովն Քրիստոսի, ասպընջական ցանկալի սուրբ հաւատոցն լինելով. աշխարհածնունդ հայրենեացն որդի գտանէր շնորհաբն (տպ. շնորհացն) Աստուծոյ՝ մերձաւոր կենարար կենացն լինելով»։)

ԱԳԱԹ. «Արդ հասեալ առ իս հրաման (տպ. հրամանի) ի մեծ արքայէն՝ Տրդատայ . . . պատմել նախ զհայրենեացն գործս քաջութեան՝ քաջին Խոսրովու»։ Յոջր. 20. —«Զհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց (Տրդատ), եւ զաւրացաւ ի վերայ սահ-

1. Համեմատէ. «եւ հասեալ հրաման ի Մեծէն Թէոդոսէ, ընդ կրունկըն դարձաւ քաջն Տերենաթանոս»։ Մ. Խոր. Պատմ. Գ. լԺ. 482.—«Ազնութիւնն հասեալ առ ի յԱստուծոյ, մինչեւ ցայսար կացի վկայեալ փոքու եւ մեծի»։ Գործք Առաք. ԻԶ. 22:



մանաց նորա» 49.—«Հարկանէր ի հարուածս զթշնամիսն (Տրդատ),  
և ի նոյն զքէնս վրիժուց իւրոց հայրեննացն» 104.—«Յևտ  
նորա (Գրիգորի) կալաւ (Ռքստակէս) զտեղի հայրեննացն. ան-  
դէն նստաւ յաթոս կաթուղիկոսութեան Հայոց Մեծաց» 642—  
643:

==ԳԻՏ. Յամենայն վկայութիւնսդ Հայրենիք է Հայր՝ (24),  
թէպէտ եւ ոչ մի Հայերէն Բառարան նշանակած է զայս: Այլուր  
առ Ազգածանգեղի Հայրենիք է Հարք կամ Նախնիք, 34, 233,  
599—600. եւ՝ Հայրենի երկիր, 229 երկիցս, 299:—Ի զիրս միւս  
Դասուց գտած չեմ Հայրենիք—Հայր. կայ միայն յԱռաջին Դասի  
Հայրենատուր—Տուեալ ի հարց կամ ի նախնեաց. (տես աստէն ի  
թիւն 73, ԳԻՏ.) Սոյն դասս ունի Հայրենիք իբր Հայրենի տուն.  
«Դուստր՝ հաւր գաղանի տքնութիւն է . . . յորժամ ամուսնացի,  
գուցէ ատիցի. ի կուսութեան՝ գուցէ պղծիցի եւ ի հայրենիսն  
իւր յղի լինիցի»։ Սիրաք, ԽԲ. 9, 10: Այլուր Հայրենիք կը նշա-  
նակէ Հայրենի ժառանգութիւն, զգ. Patrimoine. «Ընդ այնոսիկ  
(ե՛ն իմ բանք)՝ որք յիւրեանց արարսն վայելեցնն (վայելիցնն?),  
և այլոց շտայցնն. որք զհայրենիսն ընդ վայր ծախնն»։ Ոսկ.  
Մատթ. Բ. իգ. Յորդ. 693:²

## 152

ԿՈՐ. «Ոչ ի պատիւ ինչ օրրոցն Ատուծոյ, որք ամենա-  
պարծ եւ կենդանատուր խաշիւն ծանուցեալք յարգեցան» 28:

ԱԳԱԹ. «Որք ի լուսաւոր եւ ի կենդանատուր վարդապե-  
տութենէն թիկունս դարձուցեալ մոլորեցան» 348.—«Ակնար-

1. Նայնպէս եւ յայս բան Մ. Խորենացոյ. «Բայց հայր նոցին Գրի-  
գոր անցեալ գնաց առ Տրդատ, զհայրեննացն հատուցանել պարտես»։ Բ.  
ձ. 341. իմս զհաւր իւրոյ (զԱնակայ), ինչպէս կը գրէ թարգմանարար յե-  
րիւրոզն Զենոբայ Գլակայ Պատմութեանն Տարաւնոյ, 22, առեալ ի Խորե-  
նացոյ. «Եւ հայրն անցեալ գնաց առ Տրդատ՝ զհաւրն պարտան հատուցանել»:

2. Սերիոս (է գար) Հայրենիք եւ Մայրենիք ըսելով կ'իմանայ հօր  
կողմ, մօր կողմ. «Թէպէտ եւ ի հայրեննաց մեծագոյն (էր Որմիզ Գ օրդի  
Խորոզայ Սոյ), եւ առաւել մեծագոյն եւ զազանագոյն ի մայրեննաց կող-  
մանէ»։ 62. զոր համեմատէ ընդ Խոր. Պատմ. Գ. խը. 505. «Հանեալ զքեզ ի  
հայրեննաց քոց Կամսարականաց, եւ ի մայրենիս քո յիմս առեալ սղգ՝  
Երշակունի անուամբ պատուեցից»:

կեաց եւ վասն կենդանատուր Աւետարանին իւրոյ». 524. զոր այլուր կ'ըսէ. «Քարոզեցաւ Աւետարանն կենդանութեան ընդ տիեզերս ամենայն». 510: Փոխանակ կենդանատուր՝ Ազաթ. ունի նա եւ կենսատուր, կենսատու. «Վասն կենսատուր փրկութեանդ հասելոյդ ձեզ յԱստուծոյ». 614.—«Ապրիլ ամենն. ցուն լուսարեւ եւ կենսատու մկրտութեամբն». 304:

ԵՒԹ. «Եւ դարձեալ՝ քան զամենայն իմաստունս իմաստնագոյն եւ ամենարարի կենդանատուր, զամենայն ինչ կրթութեանն համարեցաւ». Յոջր. Գժ. 1047 ր.

—ԳԻՏ. կենդանատուր եւ կենսատուր կը նշանակեն Տուիչ կենդանութեան, կենաց: Առաջին բառը չգանուիր ի զիրս միս Դասուց. (անստոյզ է կենդանատու զոր կը յիշէ նոր հայկդ. իրր յսկերերանի Մեկնութենէն Ա Տիմոթեայ. «Վկայ զԱստուած ունի, որ կենդանատուն է ամենեցուն». չիբ այդպիսի ինչ ի տպագրին: Փոխանակ Ազաթանդեղի կենդանատուր Աւետարանին, զոր տեսանք նա եւ ըսուած Աւետարան կենդանութեան, կը գտնենք յերկրորդ Դասի. «Տալ ձեզ ոչ միայն զկենարար Աւետարանն, այլ եւ զանձինս մեր տուար ձեզ». Եփր. Ա Թես. Բ. 177.—«Ի ժամանակի իրրեւ հանապազաւր միշտ աճէր եւ բաղմանայր Աւետարանն կենաց». Եւս. Եկեղ. Բ. ա. 77.—«Ընդ ամենայն տիեզերս ծագեցաւ Աւետարանն կենաց». անդ, Բ. գ. 81: Եսկ կենսատուր կամ կենսատու կը գանուին մի մի անգամ յԱռաջին եւ յերկրորդ Դասու. «Յաւետուոր յիւր բարութիւնսն զաշխարհս ամենայն որսացաւ (Քրիստոս) կենսատուր քարոզութեամբն իւրով». Արիստ. Ջատագ.—«Եղիւ նա մեզ կենսատու յաւիտենից փոխանակ Ադամայ՝ որ եղիւ մեզ անհնազանդութեամբն իւրով մահատու». Եփր. Երր. Ե. 206: Առ հասարակ երեցունց Դասուցն ընտանեզոյն ասացուածն է Տուիչ կենաց. «Ձի ի կոտորածոյ զաւրացն բաղմաց՝ ծանիցեն կթէ նա է տէր մահու. եւ ի յաւիտոյ կենաց ի ժամանակս եղիկիայ՝ եթէ նա է իշխան եւ տուիչ կենաց». Ոսկ. Ես. ԼԸ. 238.—«Ձի թէպէտ եւ տուիչ իցէ նա կենաց, այնոցիկ աայ՝ որ հնազանդինն». Եփր. Երր. Ե. 207.—«Ձիանդ գտուիչն կենաց կարացուք պատմել . . . զիանդ գտուիչն ոգւոց պատմել մարթոգից». Կիւր. Կոչ. Զ. 93.—«Պատճառք կենաց մերոց՝ որ աստ են, եւ

տուիչ այնմ կենաց՝ որ հանդերձեայն է յաշխարհն մշտնջինակաց»։ Բրտ. Վեց. 2. 108: Կայ յԱռաջին Դասի ևւ Ամենատուր = Տուիչ ամենայնի. «Որք զբարին խորհին ևւ հաստատուն ունին զհաւատան առ Աստուած, յամենատուրն Քրիստոսէ պատրաստի նոցա արդարութեան պսակն»։ Վկ. Ապոդ. 138:

Չայլ նմանութիւնս Կորեան ևւ Ազաթանգեղի՝ տես ի Կոր. = Բիւզ. Թիւր 7, Յանկալի եղեալ. 15, Գործութիւնք բարձրանային ևւ Բարձրացուցանէին զաւրհնութիւն ի փառս Աստուծոյ. 17, Ի քաղաքն ևւ Յաւանն զաւանային. 19, Ազատագունդ ևւ Արբայագունդ բանակ. 22, Յանդիման լինիմ Թագաւորին. 38, Որոյ անուն զլիւտորին. 43, Կանթիղաւք վառելովք ևւ ջահիւք բորբոքելովք: Ի Կոր. = Եւթ. Թիւ 14, Քաղցրուտոյց: ՅԱզաթ = Բիւզ. Թիւր 92, Ամենատէրն. 115, Վերնագարդ ևւ Վերինն. 140, Մարտիրոսաբան ևւ Վկայարան. 156, Մարտիրոսական. 159, ԳիՏ. Աքանազեան ղզզ ևւ Տուն Քորգոմայ. 179, Անպայման. 191, Աշխարհակեաց. 192, Առանց իրիք զբազելոյ ևւ Անդրադապէս:

Բ. ԿՈՐԻՒՆ ԵՒ ԲԻԻՉԱՆԴ

1

ԿՈՐ. «Ուտի ևւ իմ մասնաւոր աշակերտութեան (տպ. աշակերտութեամբ) վիճակ առեալ»<sup>1</sup>:

ԲԻԻՉ. «Բայց սակայն ինքն (Գինդ) առեալ վիճակ ընակութեան ունէր զանապան»։ 2. Ժզ. 272:

— ԳԻՏ. Բիւզանդայն առեալ վիճակ ընակութեան ունէր կը գտնուի ճշգիւ յԵրբորդ Դասի. «Եւ ի սրբութիւն երանելի մարմնոյն իւրոյ վիճակ առեալ ընակութեան ունէր (Յոհ. Աւետ.) զերկիրն Ասիացւոց»։ Ոսկ. Յոհ. Ա. ր. 591:

2

ԿՈՐ. «Զոմանց ըստ աստուածեղէն կրանիցն զբարեյաղթութիւն, ևւ զոմանց ըստ աշխարհակիր (տպ. աշխարհակիր)

կարգաց՝ զմարտից եւ զպատերազմաց (տպ. զպատերազմողաց) արութիւնսն»։ 3.— «Զոր եւ մարգարէքն գործէին, սրբ ի լիբինս եւ յանապատս եւ ի փապարս վիմաց՝ զաստուածեղէն կրանիցն զծառայութիւնսն հարկանէին»։ 24:

ՔԻԻԶ. «Եւ բազում յաշխարհի ուղղեալ կացուցանէր կարգս մարդկան զաստուածեղէն կրանիցն»։ 2. Ժդ. 272:

ԵԻԹ. «Վասն պատշաճ տուջութեան աստուածեղէն կրանից»։ Գլուխք Բ Տիմ. Գ. 1187 բ.— «Գլխաւոր եմ, եւ աստուածեղէն կրանիցն վարդապետ»։ Յիշատ.:

### 3

ԿՈՐ. «Զորոց եւ Տէրն իսկ ամենայնի . . . ոչ միայն զյանդիմանական գործոցն (տպ. գործոյն), այլ եւ զծածուկ սրտիցն լուսաւորութիւնսն՝ առաջի Հրեշտակաց եւ մարդկան բերէ»։ 3:

ՔԻԻԶ. «Որք այժմ ի ծածուկ լուսաւորութենէն խորհրդագովքն տեսանեն (տպ. տեսանէին) զնա ըստ նորա կամացն, ապա ի վախճանի դէմ յանդիման երեւեսցի»։ Գ. ե. 85:

—ԳԻՏ. Ծածուկ լուսաւորութիւնք թուին շնանակել Գաղտնի խորհուրդք մտաց: Առ Կորեան՝ «յանդիմանական գործոց» կ'ընդդիմարժանին «ծածուկ լուսաւորութիւնք սրտի»։ իսկ առ Բիւզանդայ՝ «ծածուկ լուսաւորութեան խորհրդոց» կ'ընդդիմարժանի «դէմ յանդիման երեւումն»:

### 4

ԿՈՐ. «Արդ այսուհետեւ եւ (այսուհետեւ?) խոստացեալն առաջի դիցի»։ 6:

ՔԻԻԶ. «2որրորդ խոստովանութիւն . . . պատմութեանց զրուցաց. խոստումն խոստացելոցս»։ Յանկ Գ դպր. վերնագիր. 59:

ՄԿԲ. «Արդ աստի սկիզբն արասցուք բանիցդ պատմել խոստացելոց»։ Բ. բ. 33:

—ԳԻՏ. Խոստացեալն կա՛մ Խոստացեալքն կը նշ. Պատմելի իրն: Համեմատէ ընդ Մկր. զյաջորդ պարզ ասացուած թարգմանչին Եւս. Եկեղ. է. ա. 525. «Բայց ես աստի արարից սկիզբն բանիս այսմիկ»:



5

ԿՈՐ. «Խոստացեալն առաջի զիցի, . . . եւ նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զարդարեսցի»։ 6:

Քի՛՛Զ. «Եւ ցուցանէ զըարիատուր զերախտապարզեւ հատուցմունս վասն իւրոյ մարդասիրութեանն»։ Գ. դ. 93:

ԵՒԹ. «Վասն սիրոյ որ առ ընկերն, եւ առատատուր խնամոց»։ Գլուխք Ա Յովհ. Գ. 1094 ր. (համեմատէ. «Եւ արտասուալից աղաւթիւք եւ առատատուր ողորմութեամբ . . . զԱստուած ի հաշտութիւն ածել»։ ՅՃխ. ԺԲ. 131:)

[Ա Դաս]† «Չամենեսեան յառատատուրութիւնն յաւժարել»։ Ոսկ. Բ Կոր. (Նոր Հայկղ. ի բառն Առատաբարութիւնն):

— ԴԻՏ. Բաղցրատուր, Բարիատուր, Առատատուր կը նշանակեն Տուեալ քաղցրութեամբ, բարութեամբ, առատութեամբ: Միւս Դասքն չունին այսպիսի բարդութիւնս. տես զԴիտողութիւնսն ի Կոր.— Ագաթ. թիւ 73, «Աստուածատուր իմաստութիւն», եւ թիւ 152, «Վննդանատուր». տես եւ յԱգաթ.— Մկր. Թիւ 64, «Վանատուր»: Նոր Հայկազեանն կը յիշէ յՈսկեբերանի Մեկնութենէն Ա Տիմոթեայ. «Բարեզործ առ ամենեսեան, առատատուր (— առատութեամբ տուող) եւ սիրուն յամենայնի». չիք այդպիսի ինչ ի տպագրին, այլ կայ միայն. «Այս ամենայն նմա (Յովբայ) յայնմանէ եղեւ՝ զի առատն էր ի տուրս». Բ Տիմ. է. Տորղ. 243:

6

ԿՈՐ. «Առնն (տպ. Առն)՝ զոր ի նախակարգ բանին նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմեւոյ, էր Մաշտոց անուն»։ 6:

Քի՛՛Զ. «Նա եւ կարի իսկ զողորմածութեան կարգացն փոյթ արարեալ ցուցանելոյ»։ Գ. դ. 74: Այլուր. «Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել, յարինել շինել զամենայն զգերութիւնս յաւերածոյն եւ այրեցածոյն»։

Գ. իղ. 144:

— ԴԻՏ. Հանգոյն Բիւզանդայ երկրորդ վկայութեան եւ յայլ

գիրս. «Զի փոյթ արասցեն բարեաց գործոց վերակացու լինելէ. Տիտ. Գ. 8:

7

ԿՈՐ. «Յանկալի եղեալ (Մաշտոց) զինուորական արուեստին իւրոց զաւրականացն». 6. («Իւրոց զաւրականացն» ընթերցուածով այնպէս իմն կրնայ հասկացուիլ՝ որ Մաշտոց էր ի բարձրագոյն աստիճանի եւ ունէր ընդ իւրեւ զինուորս: Ինձ լաւագոյն թուի ընթեռնուի «Իւրոց զուզականացն», որպէս յերես 26. «Իսկ երանելի զուզականին լուեալ (զմահ Սրբոյն Մահակայ), զՄաշտոցէ ասեմ». կամ «Իւրոց զուզակցացն», համեմատ Բիւզանդայ առաջին վկայութեանն. որով Մաշտոց կրներ կայանայ իբր սոսկական զինուոր. մանաւանդ զի իւր հայրն Վարդան՝ լոկ շինական մի էր հացեկացի, եւ Կորին կրէր գարձեալ զՄաշտոցէ յերես 7. «Հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն»: Իսկ ի նմին երեսի «Մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն», ուղղելի կը համարիմ զաշխարհակիր. աշխարհ եւ իշխան բառերն ի դանազան տեղիս մատենագրութեանց նախնեաց՝ այլ ընդ այլոյ գրեալ են սխալմամբ. տես օրինակ իմն յԱզարթ.—Բիւզ. թիւ 159, ի չորրորդ վկ. Բիւզանդայ):

ԲԻԻՉ. «Յանկալի եղեալ (Ներսէս) իւրոյն համարուեստն զուզակցացն». Գ. 4. 68.—«Անձամբ զանձինս իւրեանց խոտորատուր՝ յարուեստն զինուորութեան զինեցան». Գ. ԺԵ. 43:

ԱԳԱԹ. «Յանկալի եղեալ (Տրդատ) արինապահն կալելք, եւ բարեաց արինակ ամենայն աշխարհի». 643:

8

ԿՈՐ. «Առեալ այնուհետեւ երանելոյն զնաւատացեալս իւր, զիմեալ իջանէր յանկորդ եւ յանդարման տեղիս Գողթան». 7: Այլուր. «Եւ արդ լինի համար նաւատոց երանելոյն ամբ քառասուն եւ եւթն (տպ. քառասուն եւ հինգ. տես 4) . . . եւ արդ առնու համար ամաց Սրբոյն (տպ. սրբոց) նաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արբայի». 29:

ԲԻԻՉ. «Եթող անդ (սուրբն Եպիփան) բազում եղբարս միաբանս միահաւանս, նաւատացեալս կրունաւորս». Ե. իր. 222:

Այլուր. «Զի որ միանգամ կուսանք եւ հաւատացեալք (կուսանք հաւատացեալք?) իցեն՝ անդր (ի կուսաստանն) ժողովեսցին . . . : Զայն աւերիլ հրամայէր Պապ թագաւորն (ապ. թագաւորին), եւ զկուսանն հաւատացեալս տայր հրաման ի խառնակութիւն պղծութեան». Ե. լա. 228:

— ԳԻՏ. Հաւատացեալ եւ Հաւատք կը նշանակեն յօրինակող Կրօնաւոր եւ Կրօնաւորութիւն. իսկ յերկրորդ վկ. Քրիստոսոսայ Կուսան հաւատացեալ՝ գղ. Religieuse. Հաւատացեալ = Կրօնաւոր կայ եւ յերկրորդ Գասի. «Ելին ընկալան զնա ոմանք յերարց հաւատացելոց, որք իբրեւ զհայր ընդ առաջ ելեալ ընդունէին զնա». Վարք Յոհ. Թեղր. 110: իսկ փոխանակ Կուսան հաւատացեալ, միւս Գասքն կ'ըսեն Հաւատաւոր. Զգան, 2. 114. Ոսկ. Մտթ. Ա. Ժէ. 269. Մար. Պամ. Արեւ. Վկ. 49. եւ կամ լոկ Կուսան.՝

9

ԿՈՐ. «Իսկ Երանելոյն վարկադակի՝ զաւետարանական արուեստն ի մէջ առեալք. 7:

ՔԻԻՁ. «Իսկ Երանելին Վրթանէս զրանն վարդապետութեանն ի մէջ առնոյր». Գ. գ. 8:

10

ԿՈՐ. «Եւ այնպէս արտմական հոգովք պաշարեալ եւ թակարթապատեալ, եւ անկեալ ի ծուփս խորհրդոց՝ նթէ որպիսի արդեւք ելս իրացն գտանիցէ». 8:

ՔԻԻՁ. «Անկանէր այնուհետեւ Անդովկ ի հնարս հնարել, եւ ի ծուփս խորհրդոց, գտանել պատճառս՝ զի ս գիտէ» եւ այլն. Գ. ի. 133. (լաւ եւս թուի ընթեռնուլ ըստ Կորեան հատուածին՝ «Անկանէր այնուհետեւ Անդովկ ի ծուփս խորհրդոց, հնարս հնարել, գտանել պատճառս» եւ այլն:)

— ԳԻՏ. Սոյն ասացուածս կը գտնուի յերկրորդ Գասի ներգործարար. «Հոգայ վասն մեր (Ատուած), զի մի արկիցէ զմեզ ի ծուփս խորհրդոց». Եփր. Աբար. Ա. 8: Այլուր. «Ի ծուփս մեծ անկայ ես, կերբքք, վասն ձայնին Յովնանու». նոյն, Յապաշխ. նին. 114:

11

ԿՈՐ. «Գիրս նշանագրոյ Հայաստանն ազգին հանել, բազում հարցփորձի եւ քննութեան դանձինս պարապեցուցեալ»։ 8. (տպ. «... ազգին, հասանել բազում հարց փորձի. եւ քննութեան»)։— «Ի տեղիս տեղիս Հայաստանն ազգին»։ 13։

ՔԻԻՉ. (նոսրին ոճով.) «Ընտրեաց իւր արս երկուս... իմաստունս [ի] Հայաստանն բանակէն»։ Գ. իա. 55.— «Ապա դառաջեք անկանէր Վասակ իւրով Հայաստանն զնդանն»։ Գ. լթ. 152.— «Յաղթահարէր զգաւրսն Պարսից զունդն Հայաստանն»։ Գ. խա. 153. եւ Ե. դ. 198. Ե. Ե. 202. որ ի վերջին տեղոջս կ'ըսուի նա եւ. «Երանի՛ որ Հայոց զնդին տէր իցէ, այնպիսի տիրատէր եւ միաբան միամիտ դաւրացն»։— «Ապա կարգէր կազմէր պատրաստէր դամնայն զգաւրսն Հայոց Վասակ... : Իրբեւ եկն ետես (Չապուհ Բ) զքաջութիւն զորժոյն Հայաստանն զաւրացն»։ Գ. ի. 131.— «Ամենայն որ յանձնիր տուն յաւրաքանչիւր տեղի դաւրէն բարուց Հայաստանն մարդկանն անձկացեալ էին»։ անդ, 133։

12

ԿՈՐ. «Ազգ առնէին ապա եւ զկանխազոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց՝ որոյ անուն կոչէր Վաւաճապուհ»։ 8.— «Յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել»։ 15. (համեմատէ ընդ ՅՃխ. «Եւ ի մատուցանել զահաւոր եւ զսարսափելի զփրկական զխորհուրդն... առցէ զխնդրելին»։ ԺԳ. 139.— «Հաւատան առնուլ զխնդրելին յամենեցունց Փրկչէն»։ անդ, ԺԶ. 159.) Այլուր կ'ըսէ Գորին. «Եւ արդ եկեալ յիշելին (այս ինքն Մաշտոց) մերձ ի թագաւորական քաղաքն»։ 11։

ՔԻԻՉ. «Եւ ինքն (Յակոբ) ի նմին աշխատեալ զեզերէր՝ զխնդրելին տեսանել առանց յապաղութեան» (այս ինքն դեռնայնի տապանն)։ Գ. ժ. 22։

— ԳԻՏ. Խնդրելի բայածականն ն զիմորոշ յօդի յաւելմամբ՝ գոյականօրէն առեալ է, եւ կը նշ. Խնդրեալ իրն։ Այլ է խնդրելի, Արժանի խնդրելոյ, քննելոյ. «Նա՛ որ խնդրելին է, այս է, զիւրոյ ոչ են հակառակ բանք մարգարէին եւ Աւետարա-



ներս»։ Գիրք. Կոչ. ժԳ. 245: Գոյականօրէն է նա եւ Յիշեփին, այս ինքն Յիշեալ այրն։

13

«Կար ԳՈՐ. «Եւ նա (Վառամշապուհ) առաքէր զսմն Վահրիմ անուն հրովարտակաւք առ այր մի երէց, որոյ անունն Հարէլ կոչէին»։ 8.—«Որում անունն Թէոզոս կոչէին»։ 16.—«Որում անունն Արաաշէս կոչէին»։ 18.—«Որում անունն Երեմիա կոչէին»։ 19.—«Որում անունն (տպ. անունն) Յովնաթան կոչէին»։ 19: ԲԻԻ 2. «Եկին հասին ի գեղ մի, որում անունն Դաւարիս կոչէին»։ Գ. ի. 52.—«Ի սակաւ անառակին, ի հացուտ պուրակին, որում անունն տեղոյն իսկ Հացեացն Դրախտ կոչեն»։ Գ. ժդ. 38:

==ԳԻՏ. Միւս Դասքն կ'ըսեն. ա. «Եւ կացուցին երկուս. զՅովսէփ՝ որում Բարսարայն կոչէին, որ անուանեցան Յուստոս, եւ զՄատաթիա»։ Գործք Առաք. Ա. 23.—«Այլ միւս եւս զաւրաղուխ հոռոմոց, զաքս կոչէին նմա, ի Դամասկոս Փրնիկեցոց յափշտակեաց եւ էաժ ի հրապարակէ կանայս պիղծս եւ աղտեղիս. եւս. Եկեղ. Թ. Ե. 679.—«Հնտանուոյ նըքարն իւրոյ Ահարովնի՝ աւծեալ կոչէր (Մովսէս)»։ Գիրք. Կոչ. ժ. 168:—բ. «Առ նովա երեւեալ զարձեալ ի Կարմիր ծովէ այլում ումեմն (զազանի) . . . , որում անունն կոչէր Ովգակոն»։ Եւս. ժմ. 7.—«Եւ իշխել ամենեցուն նոցա կնոջ միում, որում անունն կոչիցի Մարկայէ»։ անդ, 12:—գ. «Լեառն՝ որ կոչի 2 իմ հենեաց»։ Ղուկ. ժԹ. 29. կամ որ կոչէր. անդ, ԻԱ. 37.—«Մարիամ՝ որ կոչէր Մագդաղենացի»։ անդ, Ը. 2.—«Ունէր նա (կինն) այր անուանի՝ որ Պաւղոս կոչէր (տպ. եւ 2. կոչիւր)»։ Եւս. Եկեղ. 2. գ. 424:—դ. «2ար իմն էութիւն հակառակ բարւոյ գնեն, զոր հիւղն կոչեն»։ Եզնիկ, 9: Այս ամենայն կը գանուի եւ ի գրութիւնս Կորնեան. ա. «Եւ գլխաւոր աշակերտացն թողոյր զայն՝ որում Ղեւնդէոսն կոչէին»։ Կոր. 16. եւ 17, 19, 20.—«Եւ տեղոյն անունն եղեալ Դրունս Փոսից, առ տեղեան՝ որում Ոյժք (Եյժք) կոչէին»։ Ազաթ. 42.—«Այր ներքինի՝ շարասիրտ, շարախորհուրդ, շարագործ, որում Հայր կոչէին»։ Բիւզ. Գ. ժբ. 46:—Եւ այլն:—բ. «Ազգ առնէին ապա եւ ղկանխագոյն խնդրելին

իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վապաճապուհ».  
Կոր. 8. եւ 14, 17.—«Տղէին անդր նախարար զամն աւագ, որոյ  
անուն Աւառ կոչէր».  
Ազաթ. 167.—«Հայրապետն մեծ . . .  
որում անուն կոչէր Եւսերիոս (տպ. Սեղրեսարոս)».  
անդ, 651 —652.—«Ապա ինքն յայտնեալ երեւեցաւ առն սրբոյ շաղկերտին  
իւրում, որոյ անուն կոչէր Եպիփան».  
Քիւզ. Գ. Ժգ. 42. եւ այլն:—գ. «Ի լերինն՝ որ կոչի Մանայարք».  
Ազաթ. 642.—«Ի լերինն՝ որ կոչի Յլու Գլուխ».  
Քիւզ. Գ. է. 16. եւ այլն:—դ. «Բանակեցան առ ավին զետոյն՝ զոր Գայն կոչեն».  
Ազաթ. 49. եւ այլն.—«Ի դժուարս լերինն մեծի՝ զոր Արագածն կոչեն».  
Քիւզ. Գ. իդ. 144. եւ այլն:

14

ԿՈՐ. «Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ՝ հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանազիրս հայերէն լեզուին».  
10:

ՔԻԻ. 2. «Սա (Յուսիկ) զհեա հարն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջողէր, հայրական չափոցն նմանեալ ծնունդ».  
Գ. Ժբ. 30:

15

ԿՈՐ. «Վասն որոյ ըազում իսկ զոնութիւնք յեպիսկոպոսաց սրբոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ».  
10. (տպ. զոնութիւնք. եղի զոնութիւնք ըստ հատուածին Քիւզանդայ):

ՔԻԻ. 2. «Ար եւ ըազում իսկ եւ կարի յամենայն զոնութիւն ի փառս Աստուծոյ».  
Գ. Ժգ. 109:

(Ազաթ. «Եւ ամենեքեան զարմացեալք բարձրացուցանելին զաւրնութիւն ի փառս Աստուծոյ».  
621. համեմատէ ընդ Կորեանն. «զոնութիւնք . . . բարձրանային ի փառս Աստուծոյ»: Յայլ զիրս՝ փոխանակ Բարձրացուցանեմ զաւրնութիւն կ'ըսուի Աւրնութիւնս նմանեմ Աստուծոյ. Եւս. Եկեղ. Բ. Թ. 635:)

16

ԿՈՐ. «Հանդերձ շնորհատուր պարգեւաւրն . . . ճանապարհ»

հորդ լինէր». 10.—«Զոր եկեալ կատարեաց Ամենաիրկիչն Քրիստոս շնորհատուր հրամանան». 12.—«Քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ». 15. (համեմատէ ընդ ՅՏԻ. «Այլ երեւելիքս շնորհատուր զարութեանն (զարութեամբն?) Աստուծոյ ի նոցա նշխարս եւ ի սուրբ ժողովս զաներեւոյթսն իմասցուք». ԺԶ. 160:)

ՔԻԻԶ. «Շնորհատուր չնդոյն լցեալ զնա». Գ. Ժբ. 30: —ՔԻՏ. Շնորհատուր առ Կորեան կր նշ. Տուեալ ի շնորհացն Աստուծոյ, կամ շնորհա տուեալ. («Զկեանոն որ յեա քնոյ՝ շնորհա ետ նմա (Սաւուղի) Գաւիթ». Եփբ. Վասն քնոյ, 212. —«Զարեականի երկրատր թագաւորի զամենայն ինչ տալ, եւ հանգերձս եւ զկերակուր, եւ ոչ միայն շնորհա, այլ եւ ի հարկէ». Ոսկ. Փիլիպ. Թ. Յորդ. 450.) իսկ առ Բիւզանդայ՝ Տուող շնորհաց. («Գոհանային զտուողէն շնորհաց». Ազաթ. 473. որ յայլ գիրս կ'ըսուի Տուիչ շնորհաց. Կիւր. Կոչ. ԺԶ. 354. Ոսկ. շն. ԺԳ. 174:)

17

ԿՈՐ. «Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, . . . ի քաղաքն դառնային». 11:

ՔԻԻԶ. «Ապա ողջոյն տուեալք զցանկալի ողջոյնն միմեանց, . . . յեկեղեցին դառնային». Գ. Ժբ. 30:

(Ազաթ. «Եւ տուեալ (Քրիստոսի աշակերտաց իւրոց) զկենդանարար ողջոյնն, եւ բազում ուրախութիւն աշակերտացն բարեւար. 359.—«Եւ բազում ցնծութեամբ եւ ուրախութեամբ յաւանն դառնային». 613. համեմատէ. ի քաղաքն դառնային, յեկեղեցին դառնային:)

18

ԿՈՐ. «Վասն զիւական սատանայակիր բարուցն ճիւղաղութեան». 12:

ՔԻԻԶ. «Աբբ եւ կանայք պղծութեամբ ճիւղաղութեամբ պարուք զէմ ընդ զէմ հարկանելով . . . զմեռեալսն յուղարկէին». Ե. լա. 229:

19

ԿՈՐ. «Եւ իւրեանց անդէն զառընթերակաց արքունիան, հանդերձ ամենայն ազատագունդ ըանակիւն (տպ. բանակիւն) աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալք»։ 13: Այլուր. «Որոց առեալ զամենայն նախարարագունդ ապագանոյն ամբոխ, . . . պատահէին Երանելոյն»։ 11: 1001 24. «զարգանի

Քի՛՛Զ. «Տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ ըանակիւն զհետ լինել Տիրիթայն»։ Գ. ժե. 122.— «Ձայս ամենայն լուան ազատագունդ ըանակն հայոց»։ Գ. ժե. 170.— «Հայր մարդպետ, եւ ամենայն ազատագունդ ըանակն արքունիք»։ Ե. իդ. 218: Տես եւ «Պահէին զնոսա արձակ ի մէջ ազատագունդ փուշտիպան զարացն»։ Գ. ժգ. 164.— «Մուշեղ, որդի Վասակայ, ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն»։ Ե. ա. 185: Այլուր. «Գոյժ տային կայսերն ըագմագունդ ըանակիւն նախարարացն»։ Գ. իա. 55: Այլուր. «Հասանէր անկանէր (Վասակ) ի վերայ արքայազնդիւն»։ Գ. լա. 148: որ է գոյական, եւ կըսուի նա եւ Գունդ արքունական. Ե. լէ. 242:

(Ագաթ. նովին ոճով. «Եւ նորա տուեալ հրաման արքայագունդ ըանակացն՝ ամաւրեայ ժամանակաւք ի պահս եւ յաղաթս յամենայն»։ 619. համեմատէ ընդ Քիւղահոյայն արքայագունդ: Ըստ այսմ եւ Հրեշտակագունդ զարք, 537 (=Քիւղ. Ազատագունդ զարք). Պղծագունդ այսք, 242. Բրիտտոսագունդ Առաքեալք, 511; 518: Գոյական են Ներքնագունդ, 452. Սրորէագունդ, 242. Բրիտտոսագունդ, 516: Իսկ Գունդագունդ, 252. Համագունդ, 228. Միագունդ, 503, կան եւ ի գիրս միւս Գասուց»):

20

ԿՈՐ. «Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշտոց, որպէս զի տէր եպիսկոպոսն (Մահակ) ի կայննսկանսն, եւ նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն»։ 14:

Քի՛՛Զ. «Արհնեան, տէ՛ր եպիսկոպոս, զմեզ եւ զայգիսս»։ 2. թ. 268.— «Եւ ընդ բազում հեթանոս տեղիս չըջէին, յաշխարհս հեռաւորս եւ ի սփիւռս հեթանոսաց»։ 2. ժդ. 272:



(Սփիւրք հեթանոսաց առկալ է յԱւետարանէն Յովհաննու, է. 35.)

21

ԿՈՐ. «Ապա եւ զերկիրն Սիւնեաց դնսուք վանականաց լնոյր». 15:

ՔԻԻՁ. «Լնոյր զերկիրն Ծոփաց վանխր. . . լնոյր զերկիրն Աղձնեաց վաներոյն». Ե. ի է. 231. — «Եւ սուրբն Գինդ լնոյր զամենայն անապատս մենակեցաք, եւ զամենայն շէնս վաներոյ (տալ. վաներա)». Ջ. ժդ. 272:

— ԳԻՏ. Յայանի է թէ Հայոց աշխարհն ի հնգետասան քաժիկս որոշեալ էր, զորս Կորիւն մերթ երկիր կ'անուանէ, երկիրն Սիւնեաց, երկիրն Աղձնեաց, եւ մերթ գաւառ. (տես «Այրարատեան գաւառ» ի Կոր. — Ագաթ. թիւ 64.) իսկ Մ. Խորենացի Աշխարհագրութեան իւրում, 607, փորր աշխարհ. «Եւ ունի Մեծ Հայք փորր աշխարհս հնգետասան՝ որ են այսորիկ. Բարձր Հայք, . . . Աղձնիք, . . . Սիւնիք» եւ այլն: Կորիւն նա եւ զԾոփս ի 2որրորդ Հայս՝ երկիր կ'անուանէ, որ ըստ Խորենացոյ է գաւառ. «2որրորդ Հայք յերի կայ Բարձր Հայոց. եւ գաւառը են ի նմա ութ. Խորձեն, . . . Ծոփք» եւ այլն. անդ, 607: Կայ սոյն մտօք եւ առ Կորեան գաւառ. «Խորձենական գաւառ», 14. «Տարաւնական գաւառ», 6. յետինս այլուր կը կոչուի «Նահանգ Տարաւնոյ», 14. կամ «Նահանգ Տարաւն գաւառի». Քիւզ. Գ. ժե. 123: Ինչպէս կը տեսնուի՝ Կորիւն այս ամէն անուանակոչութեանց մէջ ուսումնական ճշդութեան հոգ չտանիր.

22

ԿՈՐ. «Եւ երթեալ յանդիման լինէր թազաւորին (Վրաց)՝ որում անուն էր Բախուր». 15: Այլուր. «Եւ հասեալ ի նոր Քաղաքն՝ յանդիման լինէր . . . թազաւորին Հայոց՝ որում անուն Արաաշէս կոչէին». 18. — «Եւ մտեալ առաջի . . . յանդիման լինէր աստուածակարգ թազաւորացն (Թէոդոսի Բ-ի եւ Նիգորսիայ)». 17:

ՔԻԻՁ. «Եւ երթեալ յանդիման լինէր թազաւորին Մազրթաց». Գ. դ. 14. — «Ամենայն մարդիկն երկրին Հայոց ստի-

պեցին բռնադրասեցին՝ դիւրեանց թագաւորն զԱրշակ եւ շապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Չապոյ»։ Գ. ծգ. 164.—«Ապա եկն հնաս Չապուհաբարդն երիւք հաղաբարն, եւ յանդիման եղև թագաւորին (Տիրանայ)»։ Գ. ի. 51.—«Եւ զայր յանդիման լինէր թագաւորին»։ Ե. դ. 204:

ՄԿԲ. «Յաւժարեցին ոմանք ի ժողովրդինէ անտի երթալ յանդիման լինել թագաւորին»։ Ա. ա. 14.—«Գնաց յանդիման լինել թագաւորին ի քաղաքն Պաղովազացոց»։ Ա ժա. 24:

ԱԳՆԹ. «Եւ Լիկիանէս յանդիման լինէր թագաւորին»։ 46.—«Յայնմ ժամանակի զայր հասանէր դեսպան առ Տրդատ արքայ Հայոց Մեծաց, եւ յանդիման լինէր թագաւորին»։ 123.—«Զի զարդարեցի (Հոփսիմէ), . . . եւ յանդիման լիցի թագաւորին»։ 132:

23

400. «Եւ հոգեւոր սիրոյն եռանդմամբ՝ զաղա եւ զժանգ

1. Տպ. բռնաբռնեցին, եւ ի ծանօթութեան կ'ըտէ: «Յօրինակի միում բռնաբռնեցին» նոյնպէս յերես 203 կը գրէ պատեղէնը, եւ ի ծանօթութեան կ'ըտէ. «Յօրինակի միում պատեղէնը»: Աւելի զարմանալիս այն է՝ որ 1889 տարւոյ երկրորդ տպագրութիւնն, յերես 168, անփոփոխ պահելով զտխմարական գրութիւնը բռնաբռնեցին, կը նշանակէ ի ծանօթութեան. «Յերիս (!!) օրինակս բռնաբռնեցին»: Անիմանալի է ինչ թէ ինչու հրատարակիչն՝ որ խղճած չէ ուղղել զայնպիսի սխալ գրութիւնս՝ յորս կը միաբանին ամենայն (հինգ) Չեռագիրք, (տես յերեսսն 16, 23, 49, 72, 96, 106, 129, 192, 198, 214, 237, 239, 242, 246, 258. — Նեմ ընդունիր զուղղեալսն յերեսսն 208, 219, 230,) իրքն անպիտան կը մերժէ զայնպիսի ուղիղ ընթերցուածս՝ զոր կու տան մի կամ երկու Չեռագիրք: Ի՞նչ բաննա եւ առանզոցն անյուր անզոյ բառին համար յերես 228, որ ի չորս օրինակս գրեալ է աւանդոցն. (տես յԱզաթ.—Բիւզ. թիւ 77.) այս բոլորովին հակառակ է բռնաբռնեցին եւ պատեղէնը գրութիւնները նախածեմար ընտրելոյ կանոնին. զի անզ երկիցս՝ չորս սխալագիր օրինակաց կը հետեւի հրատարակիչն՝ եւ կը խոտէ զմի ուղիղն, իսկ աստ կը նետուի մի սխալագիր օրինակի եւ կը խոտէ զչորս ուղիղս—Բռնաբռնեմ անճոռնի սխալն կը զանուի եւ ի Պատմութեան Ստեփանոսի Ուսպիլեան. ուր տպագիրքն (Չահնագոր, Հ. Բ. 173, եւ էմին, 312,) ունին, «Եւ բազում թախանձանօք բռնաբռնեաց գնա», Չեռագիր մի ժէ գարու կը գրէ բռնաբռնեաց:

շարաւահոտ դիւանցն եւ զննտիագործ պաշտամանցն ի բաց [բե-  
րէք]». 15. (տես ի Կոր. — Ագաթ. [Թիւ 91:]

Քի՛հ. 2. «Երանելի եպիսկոպոսպետն Հայոց Ներսէս . . . զճո-  
գելոր սիրոյն եռանդն ամէք առ ամենսին». Գ. դ. 79:

24

ԿՈՐ. Շնորհաբան ելանէք շրջէք դտեղեւք կարգելովք  
(տալ. կարգելեօք) եւ դպաւառքն աշակերտելովք աշխարհին Հայ-  
ոց, զուարթացուցանել, [կարեացուցանել,] նորոգել [եւ] հաս-  
տատել». 16. (տես Ագաթ. 643.)

Քի՛հ. 2. «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թա-  
գաւորութեանն Հայաստան երկրին». Գ. բ. 66:

25

ԿՈՐ. «Խորհուրդ ասնոյր այնուհետեւ վասն կէս ազգին  
Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց». 16.

— «Վասն մանկտուն յաշակերտութիւնն առ ի կէս ազգին Հայ-  
ոց ժողովելոյ». 17. — «Նրեշտակս արձակեալ այնուհետեւ ի դա-  
ւառս կէս ազգին Հայոց». անդ:

Քի՛հ. 2. «Յազազս ընդ երկու բաժանելոյ աշխարհին Հայոց,  
զի կէս ազգին Հայոց թագաւորեալ Երչակ հրամանաւ թա-  
գաւորին Յունաց, եւ կէս ազգին թագաւորեալ Խոսրով հրա-  
մանաւ թագաւորին Պարսից». Խոստար. 2. Գպր. գլ. Ա. 259:

26

ԿՈՐ. «Եւ զլիւսաւոր աշակերտացն թողոյր զայն՝ որում  
Ղեւոնդէոսն կոչէին». 16:

Քի՛հ. 2. «Եթող անդ բազում եղբարս . . . , եւ ի վերայ նո-  
ցա երէց մի զլիւսաւոր». Ե. իր. 222—223:

Տես եւ «Կերակացու թողում» ի Կոր. — Ագաթ. [Թիւ 105:]

27

ԿՈՐ. «Եւ զլիւսաւոր աշակերտացն թողոյր զայն՝ որում  
Ղեւոնդէոսն կոչէին». 16:

Քի՛հ. 2. «Ապա յականէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհա-

ժողով զարքն քազմութեան զայն՝ որ անուանեալ կոչէր ներսէս»։ Գ. գ. 68:

28

ԿՈՐ. «Եւ մտեալ առաջի պատուակալ (տպ. պատուական. իսկ Ագաթ. 651, ի նմին հատուածի՝ պատուակալ) աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն»։ 17:

ՔԻԻՁ. «Հարցն նմանեալ, ի մանկութեան՝ . . . զծերութեան պատին պատուակալ պատուականութեանն»։ Գ. ժք. 31:

29

ԿՈՐ. «Հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանովք կարգելովք»։ 17: Այլուր. «Գումարել՝ ըստ արժանաւոր եւ պատհ՛ [պատհն] տեղեաց՝ դասս դասս դպրաց (տպ. դպրոցաց), եւ ռոճիկս կարգել ի դարմանս»։ 19. (Թոխ՝ ռոճիկս կարգել եւ դարմանս. տես զերկրորդ վկ. Քիւզանդայ:) Այլուր. «Բազմութիւն մանկաւոյ ժողովել, եւ նոցին ռոճիկս կարգել ի պատհնագոյն տեղին»։ 17: ՔԻԻՁ. «Ընկնաց (նկրսէս) զամենայն աղքատանոցս ընդ ամենայն զաւառս, եւ կարգեաց նոցա անդէն դարմանս»։ Գ. դ. 77: Այլուր. «Եւ յամենայն աւանս էր շինեալ նորին ներսիսի եւ հիւանդանոցս, յամենայն կողմանց եւ ռոճիկս եւ դարմանս կարգեալս»։ Ե. լա. 228:

—ԴԻՏ. Կորեանն Ռոճիկս կարգեմ (երրորդ վկ.) կը գանուի եւ յԱւաջին Դասի. «Եւ կարգեաց նոցա թագաւորն ռոճիկս ար ըստ արէ ի սեղանոյ արքայի»։ Դան. Ա. 5.—«Եւ կարգեցաւ նմա ռոճիկ հանապազորդ, զոր տային յարքայէն Բաբելացաց ար ըստ արէ»։ Երեմ, ծԲ. 34: Գայ ուրեք եւ Ռոճիկը եւ դարմանը. (տես Կոր. եւ Քիւզ. երկրորդ վկ.) «Եւ եղև անդ (Հողոփեունէս) ամիս մի, ժողովել ռոճիկս եւ դարմանս զարաց իւրոց»։ Յուդիթ, Գ. 15:

30

ԿՈՐ. «Ելանէին ի դեսպակս ի կառս արքունատուրս»։ 17:



Քի՛՛Զ. «Արեգական մտանելոյ կային եղբարքն, եւ ապա տէրունատուր կերակրովն ուրախ լինէին». Գ. դ. 93:

==ԳԻՏ. Արքունատուր եւ Տէրունատուր կը նշ. Տուեալ յարքունուսա, ի տէրունուսա, ի բասիցն Արքունիք եւ Տէրունիք. «Եթէ. . . ի տէրունուսա զողանայցէ (ծառայն) եւ յիւր տունն խորիցէ, . . . վաղվաղակի գանձն հանդերձ ընչիւքն կորուսանէ». Ոսկ. Բ Տիմ. Ժ. Յորդ. 275. Իսկ Արքայատուր==Տուեալ յարքայէ, աես ի Կոր.==Ազաթ. Թիւ 43:

31

ԿՈՐ. «Եւ նորա հարցեալ եւ քննեալ զբարարոս զբանս Ազուանքէն լեզուին, առնէր ապա նշանադիրոս». 18:

Քի՛՛Զ. «Նորհուրդ ի մէջ առնայր, հարց եւ քնին առնել հրամայէր (տպ. առնել. հրամայէր) վերստին». Գ. Իա. 56:

ՄԿՔ. «Հարցանելն եւ փորձելն եւ քննելն, . . . որ առաջնորդ եղիւ այնց զպրոթեանց՝ ի նմանէ ինզրելի է». Բ. ր. 31:

[Ա Գագ] Դ «Իսկ եթէ նենդութեամբ դնայցէ, առէ. հարց քննեալ». Ոսկ. Եփես. ԺԳ. 819.—«Ես առաւել զմարդկան իրս շարտիս ի հարց եւ ի քնին արկանել եւ ոչ ի խոյզ եւ ի խնդիր մուծանել». անդ, ԺԹ. Յորդ. 872: Կայ եւ Հարցաքըննեմ, եթէ ստոյգ է զրութիւնն. «Եմուս յիս այժմ խորհուրդ մուլեոյն՝ որ զձնունդն զանմարմին հարցաքննեն գՔրիստոս». նոյն, Ա Քես. է. 448: Յայլ գիրս Առաջին Գագուն կ'ըստի ի քնին արկանեմ. Ոսկ. Մտթ. Ա. Ժէ. 280. Ի խոյզ եւ ի քնին արկանեմ. նոյն, Ես. ԽԵ. 318, 319. Սերբր. է. 132. Ի հարց եւ ի փորձ արկանեմ. Ոսկ. Մտթ. Ա. դ. 31. եւ այլն:

32

ԿՈՐ. «Տային եւս հրաման. . . բազմութիւն մանկանց յարուեստ զպրոթեանն ածել». 19:

Քի՛՛Զ. «Իսկ զիառութեամբն Աստուծոյ, զպրոթեան Գրոց Սրբոց արուեստան լի էր (Յուսիկ)». Գ. Ժր. 31:

33

ԿՈՐ. «Տային եւս հրաման. . . զուսարել՝ ըստ արժանաւոր

և պատեն [պատեն] տեղեաց՝ դասս դասողարաց (տպ. դը-  
պրոցաց)»։ 19. (զնշանակութենէ «Գումարեն» բայիդ՝ տես ի Կոր.  
— Ագաթ. թիւ 58)։

ԲԻԻԶ. «Յայտ արարիալ զպատեն պատեն տեղիսն զա-  
տուցանելի, շինել աղքատանոց»։ Գ. դ. 75։ Այլուր. «Զի Արեաց  
զնդին պատեն է դիպան ելանել դաւրացն Յունաց, իսկ ես իմով  
զնդաւ՝ Հայոց իշխանացն ելից»։ Ե. դ. 192—193։

Տես եւ «Պատենագոյն» ի Կոր. — Ագաթ. թիւ 102։

— ԴԻՏ. Պատեն տեղի, զոր Կորիւն եւ Բիւզանդ կրկնու-  
թեամբ կ'ըսեն ի յորձեականն՝ Պատեն պատեն տեղիք, (համե-  
մատէ ընդ «Ամուր ամուր տեղիք» ի Բիւզ. — Մկր. թիւ 88.) կը  
նշ. Պատշաճ տեղի, եւ կը գանուի մի անգամ եւ յԱռաջին Դա-  
սի. «Զըջեալ ընդ տեղիսն շուրջ զլեւամբն՝ եզիտ փոքր մի տե-  
ղի պատեն ի հողագործութիւն»։ Աթ. Անտ. 52։ Իսկ Բիւզան-  
դայն Պատեն է՝ կը նշ. Պատշաճ է. որու նման կ'ըսուի եւ յՍոկ.  
Հռ. Ժ. 84. «Վասն զի զայլ ընդ այոց տանջեալ (կամ տանջել)՝  
ոչ յոյժ պատեն թուի»։ նկատելի է որ բաց յերկու վկայու-  
թեանցս՝ այլուր յԱռաջին Դասի շգանուիր Պատեն, մինչդեռ  
շատ յաճախութեամբ կը գործածուին բացասականքն Անպա-  
տեն, Անպատենք (գոյական), Անպատենութիւն, Դժպատեն  
(Սիրաք, ԻԶ. 7. Գործք Առաք. ԻԷ. 12. Սոկ. Մտթ. Բ. Ժ. Յորդ.  
540), Դժպատենութիւն (Սոկ. Հռ. ԻԸ. 391). (կայ Դժպա-  
տեն եւ ի Կորիւն, 18)։— Յերկրորդ Դասի կը գաննըք մի անգամ  
Պատեն գոյականաբար, իբր Պատենութիւն. «Եւ ոչ ի գիշերի (2.  
իսկ տպ.՝ «և ոչ գիշերի») պատեն լինէր մեզ այսմ»։ Եւս. Եկեղ.  
Ե. ա. 343. զոր նոր Հայկզ. սխալ կը կարդայ «Եւ ոչ գիշեր ՚ի  
պատեն լինէր մեզ այսմ», եւ կը կարծէ թէ է ոճ Ի պատեն լի-  
նել։— Յերրորդ Դասի կայ մի անգամ Պատենութիւն. «Յամանս  
ընդունելեացն ըստ արարչութեան փոփոխեալ (անձրեւն), իւրա-  
քանչիւր ազգի պատենութիւնս ցուցանէ (կամ՝ դպատենութիւնն  
մատուցանէ, ըստ Նոր Հայկզ.)»։ Կիւր. Կոչ. ԺԶ. 344։

կցաւք իջնալ ի թիկունս զիւպացն պատահելոց, եւ վճարեալ զաւրութեամբն Աստուծոյ»։ 23:

Քի՛նք. «Վասն այսորիկ ոչ եթէ փոքր ինչ էր խնդիրն այնպիսոյն առն լինել, որ կարէր նոցա զաւզուտ խրատու իմաստութեան շնորհել, եւ ըստ ժամանակին՝ զիւպացն պատահելոց միտս աւզտակարս դնել»։ Ե. ա. 186. (տպ. «Է ըստ ժամանակին զիւպացն պատահելոյ» միտս. նոյնպէս եւ 2ալ.—Այտրն. Քեր. 392, «ըստ ժամանակի զիւպացն պատահելոյ», իրր թէ փոխանակ «ըստ ժամանակի պատահելոյ զիւպացն»։ բայց «օգնութեամբ Կորեան՝ կը տեսնենք որ Քիւզանդայ հատուածին թէ կիտազրութիւնն կ'ուղղուի, թէ պատահելոյ՝ կ'ուղղուի պատահելոց, եւ թէ հարկ շմար զգրեալն ըստ ժամանակին՝ փոխել ըստ ժամանակի: Քիւզանդ ըսել կ'ուղէ՝ թէ (Ներսէս) կարող էր... ժամանակին յարմար՝ պատահած զիւպաց նկատմամբ օգտակար խորհրդներ տալ»):

—ԳԻՏ. Փոխանակ զիւպացն պատահելոց՝ կը գտնենք յՍոսկ. Մտթ. «Եւ թէ զինչ ինչ առակ կայր անդ, նախ յանուանէ մանկանն պարտիմք ուսանել, . . . եւ ապա յիրացն պատահելոց»։ Ա. դ. 35.—«Զչքնադից եւ արտաքոյ քան զյոյս եւ զակնկալութիւն իրաց զիւպելոց սովոր է ասել»։ դ. 47.—«Վասն այսորիկ ասէ յառաջ քան զծնունդն (Քրիստոսի) զիրացն՝ որ զիւպելոցն էին»։ անդ, 49: Տես եւ Ե. 70, երկիցս. «ըստ զիւպելոյ իրաց ինչ»։ «ըստ իրացն զիւպելոց»։

35

80

ԳՈՐ. «Ուտի եւ յայտնի իսկ է եւ առանց խուզելոյ, եթէ՛ ոչ վասն անձին Ամենաաւերն, այլ համաշխարհի յօտուան դայն գործէր»։ 23—24:

Քի՛նք. «Իսկ թագաւորն Տիրան, եւ այլ մեծամեծ աւազանին նախարարացն, համաշխարհն (տպ. կամ աշխարհն) ամենայն, ոչ ինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ գնացեալ լինէին»։ Գ. ժբ. 30—31.—«Արարին զամենայն ժողովուրդս երկրին հայոց իրրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի»։ Գ. դ. 75.—«Համաշխարհ ամենայն

որ իւրաքանչիւր՝ Տեառն Աստուծոյ զեղեալ ուխտս կատարէին».  
Գ. ժգ. 109:

Տեա եւ «Համաշխարհի խնդրուածք» ի Բիւզ. — Մկր. թիւ 44:  
«ԳԻՏ. Կայ մի անգամ եւ յԱռաջին Գասի. «Զի եթէ զերկիրս ես արարի, յայտ է եթէ ի համաշխարհուն (նոր Հայկդ. ի համաշխարհական) Աստուած եմ». Ոսկ. Ես. ԽԵ. 329:

36

ՎՈՐ. «Եւ այնպէս յառաջ՝ ամենայն աստուածեղէն գոնձուցն վայելչութեամբք լցեալք, պարարտացեալք, խաղացեալք գային ի բազում ժամանակս՝ նովին ի նոյն կանխեալք՝ ի նմին հաւապագորդեալք». 24:  
ԲԻԻՉ. «Եւ զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, եւ նմին հաւատացեալք, եւ ի նոյն հաւապագորդեալք». Գ. ժգ. 33:

37

ՎՈՐ. «Եւ նոցա (Սահակայ եւ Մաշտոցի) ճշմարտանէր փութով զայն «ի միջոյ՝ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց [տարմանացն] մերժեցին (զգիրս Թէոդորոսի)». 25:  
ԲԻԻՉ. «Զհետ հալածէին զմնացեալսն՝ փախուցեալ (2. իսկ տպ.՝ զմնացեալսն փախուցեալսն) արտաքոյ իւրեանց սահմանացն». Գ. իգ. 143.— Եւ զսինքրոսն (տպ. սինքրքն) արտաքոյ իւրեանց սահմանացն հալածեալ տանէին». Գ. իթ. 147:

38

ՎՈՐ. «Զոր եւ առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելովք՝ ձեռնասուն աստուածաւէր պաշտանէիցն իւրոց, որոյ զլիսաւորին Երեմիա անուն ձանաչէր». 25:

ԲԻԻՉ. «Ազա բարձին զմարմին նորա սուրբ՝ սիրելիք իւր աշակերտք, որոյ զլիսաւորին անուն էր Հաղիտա». Գ. ժգ. 42.  
— «Ետուն հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն զլիսաւորին Մարի». Գ. ժգ. 125:

ԱԳԱԹ. «Յայնմ ժամանակի եկեալ գտանէին ի քաղաքին Հոսմայեցոց՝ արգելալանս մի կուսանաց. . . որոյ անուն զլիսաւոր



ըին Գայիանէ»։ 113։ Այլուր. «Արդ՝ քրիստոսագունդ եւ խնայակիր Առաքելոցն, որոց գլխատրն Գետրոս»։ 511. կամ «որոց առաջինն Գետրոս»։ 343։

39

ԿՈՐ. «Բարձեալ զՍուրբն (Սահակ) սաղմոսիք եւ արճնութեամբ . . . , յետ սակաւ ինչ ատուրց ընդ տիւ եւ ընդ գիշեր՝ ի Տարաւն հասուցանէին, մինչ ի բուն խնկ գիւղն Յաշտիշաւ»։ 25։ ԲԻԻ. 2. «Եւ ետ զաւանն եւ զբուն զահոյից զելուն նահապետին Մանաւազենից՝ եպիսկոպոսին Ազրիանոսի»։ Գ. դ. 9—10. — «Զբուն զելուն Որդունուոց, որոյ անուն էր ՈրդսրուՅ, անդ, 10. — «Եւ բերին յանապատէն զմարմին սորա (Առսոսոմայ), թաղեցին ի բուն ի գելուն հայրապետին Ներսեսի, որում անուն Եմաւքն կոչի»։ 2. դ. 265։

40

ԿՈՐ. «Կնքեալ քրիստոսազրոշմ կնքովն (զարկղն)՝ յորում հանգուցին զմարմին Սրբոյն Սահակայ), եւ զաւրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ»։ 25—26. — «Եւ անդ ի մարտիրոսարանն մատուցեալ (զմարմին Սրբոյն Մաշտոցի), զաւրինաւոր յիշատակն կատարեալ»։ 27։ ԲԻԻ. 2. «Եւ անդ առ մեծ ի հայրապետին Գրիգորի՝ զսորա (զՎրթանայ) սուրբ զոսկերսն հանգուցանէին. եւ զմշտակատար զսորա կենդանի յիշատակն ի վերայ կատարեալ՝ զառնային»։ Գ. ժա. 29։

41

ԿՈՐ. «Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրեւ զոգեւոր եռանդն ածէր, . . . հասանէր Սրբոյն (Մաշտոցի) քրիստոսակոչ կատարումն»։ 26։ ԲԻԻ. 2. «Երանեցի եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս . . . զոգեւոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեկին»։ Գ. դ. 79. (խնկ «Մերձաւորաց եւ հեռաւորաց զոգեւոր եռանդն ածէր»։ Գ. դ. 13. կարկատեալ է ի բանից Վարդուցն Մաշտոցի՝ որ յերես 26։)

ՄԿԲ. «Եւ այնպէս իմն եռանդն ածէին՝ սկիզբն արարեալ  
այլազգութեան»։ Բ. դ. 13։

42

ԿՈՐ. «Լինէր հանդերձ սրբով Վարդապետաւ (տպ. վարդա-  
պետով) բանակն Հայոց յԱյրարատեան ի նոր Քաղաք»։ 26։ Այլ-  
ուր. «Եւ հասեալ ի նոր Քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիս-  
կոպոսին Սահակայ, եւ թաղաւորին Հայոց՝ որում անուն Երտա-  
շէս կոչէին, եւ ամենայն բանակին»։ 18։

ԲԻԻԶ. «Հանդերձ ամենայն բանակաւն Հայոց, մեծամեծ  
աւագայնովն նախարարաւքն երթեալ (տպ. երևեալ) հասանէր ի  
զաւանն Կարնոյ»։ Ե. իդ. 256։

Տես աստէն եւ «Ազատագունդ բանակն Հայոց» թիւ 19։

43

ԿՈՐ. «Ձոր (զմարմին Մաշտոցի) առեալ Վահանայ եւ Հմայ-  
եկի . . . հանդերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք եւ արհն-  
նութեամբ, եւ հոգեւոր ցնծութեամբք, կանթեղաւք վառե-  
լովք եւ ջահիւք բորբոքելովք . . . յԱշականն կլանէին»։ 27։ Այլ-  
ուր. «Քարձեալ զՍուրբն (Սահակ) սաղմոսիւք եւ արհնու-  
թեամբ եւ հոգեւոր բարբառով»։ 25։

ԲԻԻԶ. «Եւ առեալ զմարմին Սրբոյն ներսեսի . . . տարան ի  
Թիլն յաւանն յիւր զեղն, հանդերձ սաղմոսիւք եւ արհնու-  
թեամբ, կանթեղաւք վառելովք եւ մեծաւ պաշտմամբ (տպ.  
մեծապաշտմամբք. իսկ 2.՝ մեծամեծ պաշտմամբք)»։ Ե. իդ. 218.  
— «Եւ մեծաւ պաշտմամբ, սաղմոսիւք եւ կրգովք հոգեւորաւք,  
կանթեղաւք եւ մոմեղինաւք եւ խնկածու հոտովք, արքունական  
կառաւք զՍուրբն Վրթանէս . . . յուղարկէին»։ Գ. ժա. 28—29.  
— «Եւ արտասուաւք եւ ըսաւ արժանի սաղմոսիւք եւ արհնու-  
թեամբ, կանթեղաւք եւ մոմեղինաւք լուցելովք զմեռեալսն  
յուղարկէին (յաւուրս ներսեսի)»։ Ե. լա. 229։

ԱԳԱԹ. «Եւ անտի ելեալ . . . սաղմոսիւք եւ արհնու-  
թեամբք, կանթեղաւք վառելովք, եւ մոմեղինաւք լուցելովք,  
եւ ջահիւք բորբոքելովք . . . ի տէրունական տունն դասնային»։  
621—622. (տես «կանթեղաւք վառելովք եւ ջահիւք բորբոքելովք»

յառաջին վկ. Կորեանն) Այլուր. «Եւ զՍուրբն Գրիգոր պատուեալ  
. . . կանթեղաւք եւ սաղմոսիւք եւ երգովք հոգևորաւք փառա-  
ւորէին»։ 603. (տես զերկրորդ վկ. Բիւզ.)—«Ըիննցցին կաղմեցին  
գտեղիսն, եւ զարդարեցին ոսկի եւ արծաթի կանթեղամբք լու-  
ցելովք, եւ լապտերաւք վառելովք, եւ աշտանակաւք բորբոքե-  
լովք»։ 570:

Տես «Կանթեղաւք եւ մոմեղինաւք լուցելովք» յԱզաթ. = Բիւզ.  
թիւ 183:

= ԳիՏ. «Սաղմոսիւք եւ արհնութեամբք, եւ երգովք հո-  
գևորաւք», առեալ է ի Թղթոցն Պաւղոսի, Եփես. Ե. 18. Կորոս.  
Գ. 16: Կորեանն եւ Բիւզանդայն Սաղմոսիւք եւ արհնութեամբք  
յուզարկել զմոռեալն՝ կր դանուի եւ յայլ զիրս. «Եւ այնպէս պա-  
տեալ զմարմինն (Պաւղոսի անապատականի) եւ յառաջ բերեալ  
սաղմոսիւք եւ արհնութեամբք ըստ աւանդութեան քրիստո-  
նէից պաշտամանն»։ Յերոն. Վարք Պաւղ. Անապ. 14. իսկ կան-  
թեղաւք վառելովք եւ այն՝ յատուկ է Կորեան գրուածոց:

#### 44

ԿՈՐ. «Եւ զլիսաւորս վերակացոս տեղապարսն յայտ արա-  
րեալ Հարցն կատարելոց. որոց առաջինն Յովսէփ՝ զլիսաւոր ժո-  
ղովոյն, եւ երկրորդն՝ այլ աշակերտ, Յովհան անուռն»։ 28: յանդ  
Բիւզ. «Յաղագս Խաղայ եպիսկոպոսի Բագրաւանդացոց,  
զոր էր ձեռնադրեալ եւ թողեալ էր Ներսեսի Ետեղապարս յիւր  
տեղի»։ Գ. ժք. վերնագիր, 105.—«Եթող զսա իւր փոխանակ  
Ետեղապարս, եւ զնաց»։ անդ, 105—106.—«Ես, ասէ, Ետեղա-  
պարս եմ, եւ ոչ ինչ առանց այնորիկ՝ որ թողն զիս Հայրն՝ ու-  
նիմ իշխանութիւն գործել ինչ»։ անդ, 107.—«Ի վերայ հասա-  
նէր (Ներսէս) իւրում Ետեղապարսին սրբոյն Խաղայ, զի էր կա-  
ցեալ ի ճշմարտութեան եւ յուղղութեան»։ Գ. ժգ. 110:

#### 45

ԿՈՐ. «Որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, . . .  
եւ նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն»։ 28:  
Բիւզ. «Յաւգուս աշխարհին եւ ի շահ մշակութեան Եկեղե-  
ցեաց յաւետարանական հրամանացն սղասաւորել»։ Գ. Ե. 11:

յամբ. — ԴԻՏ. Յայլ զիրս կայ Աւետարանական, այլ ոչ ընդ հրամանը քառի: զիրքս մ գոյսնուտս մ գարն(մայ)...

միջնորս միջն(միջ) — (բոլոր թի բոլորեցիք սեռ) 200. միջն(այ)

2այլ նմանութիւնս Կորեան եւ Բիզանդայ՝ տես ի Կոր. — Ագաթ. թիւք 1. Հայաստան աշխարհ. 5, Հրամանին եւ Թշուռուսի հասելոյ. 19, Սոյն աւրինակ. 34, Նիզակակից. 36, Բարեաց դործոց նախանձաւոր լինիմ. 40, Հելլենական եւ Հելլէն. 41, Դուռն արքային Հայոց, եւ այլն. 42, Թագաւորը Հայոց Մեծաց, եւ այլն. 48, Կաթողիկոս. 49, Որոյ եւ Միումն անունն ճանաչէր. 54, Իրբեւ հասեալ եւ իրբեւ լուեալ. 56, Կղերական եւ Կղերիկոս, Կղեր. 58, Գումարեմ. 59, Խստամբերութիւն. 60, Զասացեալն մարգարէին եւ Զասացեալն արքայի. 61, Համբերեալ եւ երեւեալ (փոխ. համբերէր, երեւէր). 64, Կողմանք Այրարատեան գաւառին. 71, Աւազանի. 75, Ատուածագործ. 79, Յառաջակարգ եւ Յառաջակարգութիւն. 82, Քահանայապետ (քրիստոնէից). 84, Առաքելականն, Տէրունականն. 85, Հայրաբարոյ. 86, Փոյթ ի վերայ ունիմ. 87, Եպիսկոպոս տեսուչ եւ Տեսուչ եպիսկոպոս. 93, Կենաց ճանապարհ. 100, Ժամադիր կողմանք. 105, Թողում վերակացու. 106, Որում անուն. 114, Գամ երեւելով եւ Գամ երեւեալ. 115, Զրեւեալ կտակարանն եւ Զրեւելալ զնորհս. 117, Յարութենական եւ Ամուսնութիւնընկալ. 119, Լեռնական. 131, Զեռնասուն. 134, Հրաժարիմ (— Մեռանիմ). 138, Համբարձեալ զձեռն կամ զբաղուն հանապազատարածս յերկինս. 140, Հրամանակատար եւ Գառնիրանակտար. 145, Կենդանարար մարմին եւ արիւն Քրիստոսի. Ի Կոր. — Մկր. թիւ 5, Խոտարուա եւ Ընդարուտ. ՅԱգաթ. — Բիւզ. թիւք 92, Ամենաաւերն. 115, Վերնապարգեւ եւ Վերինն. 140, Մարտիրոսարան եւ Վկայարան. 156, Մարտիրոսական. 159, ԴԻՏ. Ասքանաղեան ազգ եւ Տուն Թորգոմայ. 179, Անպայման. 191, Աշխարհակեաց. 192, Առանց իրիք զբաղելոյ եւ Անզբաղապէս:

1. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10. 11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19. 20. 21. 22. 23. 24. 25. 26. 27. 28. 29. 30. 31. 32. 33. 34. 35. 36. 37. 38. 39. 40. 41. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 54. 55. 56. 57. 58. 59. 60. 61. 62. 63. 64. 65. 66. 67. 68. 69. 70. 71. 72. 73. 74. 75. 76. 77. 78. 79. 80. 81. 82. 83. 84. 85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93. 94. 95. 96. 97. 98. 99. 100. 101. 102. 103. 104. 105. 106. 107. 108. 109. 110. 111. 112. 113. 114. 115. 116. 117. 118. 119. 120. 121. 122. 123. 124. 125. 126. 127. 128. 129. 130. 131. 132. 133. 134. 135. 136. 137. 138. 139. 140. 141. 142. 143. 144. 145. 146. 147. 148. 149. 150. 151. 152. 153. 154. 155. 156. 157. 158. 159. 160. 161. 162. 163. 164. 165. 166. 167. 168. 169. 170. 171. 172. 173. 174. 175. 176. 177. 178. 179. 180. 181. 182. 183. 184. 185. 186. 187. 188. 189. 190. 191. 192. 193. 194. 195. 196. 197. 198. 199. 200.



գ. ԿՈՐԻԻՆ ԵՒ ՄԵԿԱՐԱՅԵՑԻՔ

1

ԿՈՐ. «Նոյնպէս առաւել հոգ ի միտ արկանէր՝ զհամաշխարհականս սփոփելոյ (տպ. սփոփելով)»։ 8.—«Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի միտ արկանէր սիրելին Քրիստոսի՝ եւ վասն բարբարոսական կողմանն»։ 15. (տպ. երկկցս «հոգ ի մտի արկանէր»։ այս սխալս կը գտնուի եւ յայլ գիրս. «Խորհուրդ շար ի մտի արկի»։ Ղ. Փրպ. Պտմ. 240.—«Զխորհուրդս զայս ի միտ արկեալ»։ անդ, 292.—«Խորհուրդ վատ ի մտի արկեալ»։ Եր. Լատով. Պտմ. Ե. 21.—«Խորհուրդ իմն անվայելուչ ի միտ արկանէր»։ անդ, ԻԵ. 113: Եյլ է «հոգ ի մտի սնեւր»։ Եթ. Անտ. 52. «Դնել ի մտի ուրուք»։ Երեմ. 1,2. 25. Բիւզ. 42, 231, եւ այլն։)

ՄԿՔ. «Թլոգոստոս ոմն անուն՝ զործ ի միտ արկանէր, առնոյր զունդ մի որ ընդ իւրով ձեռամբ էր»։ Գ. ա. 2:

2

ԿՈՐ. «Եսկ իբրեւ ի վերայ հասեալ՝ թէ չնն բաւական նշանադիրքն (Դանիելի Ասորոյ) ողջ ածել զսիւղորայս եւ զկապս հայերէն լեզուոյն, . . . դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային»։ 9:

ՄԿՔ. «Եւ զաւրջ քաղաքին անդրէն ի նոյն խնդրուածս դառնային»։ Գ. ա. 12:

3

ԿՈՐ. «Եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել<sup>1</sup> եւ խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ (տպ. եպիսկոպոսս տեսուչս) եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս»։ 14:

1. «Ո՛վ Տէր, իբրեւ ընդ մանկունս խաւիս, իբրեւ տղայոց կաթն ջամբես. մայրաբար ծնանիս, եւ դայեկաբար սնուցանես»։ Մամբրէ, Ի Տար. Ղազ. 39.—«Զարդարեցեր բանի (զմարդն), . . . ծնար հայրաբար, սնուցօր զայեկապէս»։ Գր. Նարեկ. Աղաւթք, Ե. ր.

ՄԿՔ. շիրիսի դայեկաքար սնուցանել զամենայն կողմանս Ստորին Ասորոց եւ Տաճկաստանի». Գ. գ. 9:

4

ԿՈՐ. «Յանձն առնելով զնոսա եւ զանձն՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ». 19—20.—«Ապսպարեալ (տպ. ապսպրեալ) զանձն եւ զմացեալս՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ». 25: Այլուր. «Զորս յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ անդէն դեակէր». 18.—«Զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ». 26: եւ այլուր. «Որով յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ, երթեալ իջանէր յառասակն (տպ. առաստ տանն) Գողթան». 14. (տես զբառը Առաստակ ի Հ. Գ. Ալիշան, Այրարատ, 204 ա.)

ՄԿՔ. «Յանակ հարկանէր (Յուգա), զնշան բաշխէր, յանձն առնէր Աստուծոյ զանձն եւ զզաւրսն եւ զյաղթութիւն զնդին». Բ. ժգ. 15:

—ԳԻՏ. Յանձն առնել Աստուծոյ զանձն եւ զայլս գտած շեմ այլուր. Կայ միայն ի Գործս Առաքելոց. «Եւ արդ յանձն առնեալ զՕնգ Աստուծոյ». Ի. 32.—«Աղալթս արարեալ հանդերձ պահովք, յանձն արարին զնոսա Տեառն». ՓԻ. 22.—«Ինացին յԱնախոք, ուստի էին յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ ի գործն զոր կատարեցին». անդ, 25.—«Եւ Պաղոսի ընտրեալ զՉիղա՝ ել, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց անտի». ՓԵ. 40:

5

ԿՈՐ. «Լեռնակեաց սորամուտ ծակախիթ եղեալ, զառարէական զկերակուրն խոտաբուտ ճարակարն վճարէին». 22. (տպ. «խոտաբուտ ճաշակօքն». զոր տես ի Կոր.—Ազաթ. [Թիւ 121:]

ՄԿՔ. «Փայստեայ լինէր (Յուգա), յանապատ ելանէր, զազանակեաց կեանս ի լերինս անցուցանէր. եւ այնպէս զնգուն որ ընդ նմա էին՝ խոտաբուտ կերակուր կերակրեալ անցուցանէին զժամանակն». Բ. Ե. 27:

(Բիւզանդ հանգոյն Խոտաբուտ բառի՝ ունի Ընդարուտ՝.

1. Այս երկու բառից հետևողութեամբ ՅոՏ. Մանդակունի բառն է

«Վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ էին մեկնեալ, ի յանապատս  
րնակեալ, . . . զգաստացեալք, խոտածարակք, ընդաբուտք, ար-  
մատակերք, գաւրէն գազանաց ի լերինս շրջէին»։ 2. Ժգ. 271։)

— ԳԻՏ. Միայն Բուտ արմատն կը գտնուի երկու անգամ  
ի գիրս միւս Գասուց. «Բուտ եւ բիր եւ բեան՝ իշոյ»։ Սիրաք, Լ.  
25. — «Ընտղորկ բուտ»։ Եւագր, Ը. (Նոր Հայկղ. ի բառն Ընտղորկ։)

— Բիւզանդայն *Ընդաբուտ՝ յԱգաթ. 113 կ'ըսուի Ընդակեր.*  
«Յայնմ ժամանակի եկեալ գտանէին ի քաղաքին Հոռմայեցւոց՝  
արգելադմանս մի կուսանաց, միանձնական, լեռնական, ընդա-  
կերս, զգաստացեալս»։ համեմատէ «ընդակերս, զգաստացեալս»  
Ագաթ. — «զգաստացեալք . . . ընդարուտք»։ Բիւզ.։ ՅԱգաթանգեղէ  
*Ընդակեր անցած է յԱռաջին Գասն. «Գունով են մարմինք ըն-  
դակերաց, եւ յստակ միտք ջրարուաց, իրբեւ զմիտս Գանիելի  
եւ ընկերացն ի Բարելովն»։ Մար. Ի Վկ. Արև. 147. զոր համե-  
մատէ ընդ յաջորդագ. «Եւ տունն Անանիայ թէպէտ եւ ունդս  
ուտէին, սակայն ոչ կարացին ապրեցուցանել զորդիս ժողովրդ-  
դեան ազգին իւրեանց յերկրպագութենէ անտի պատկերին»։ Եփր.  
Ղևտ. Ա. 206. — «Տացեն մեզ ունդս՝ եւ կերիցուր . . . եւ տայր  
ունդս շորեցունց մանկանցն»։ Գան. Ա. 12, 16։*

6

ԿՈՐ. «Ժոկ ըարեացապարտին Վահանայ՝ յանկարծահաս  
կենաց ամենեցուն լինէր»։ 28. (խանդարեալ հատուած, զոր տես  
ի Կոր. — Ագաթ. թիւ 151։)

ՄԿԲ. «Ըրջեաց զմիտս նորա, զամենայն շարեացապարտ  
Մենեղաւոս՝ արձակել ի պարտեաց անտի»։ Բ. դ. 47։ Այլուր.  
«Յայն արկանէր զվնասակար տաճարին, եւ կամ զպարտ ալոց  
մեծամեծ շարեաց»։ Բ. Ժգ. 6։

*Խոզարուտ. «Մտանք ի նոցանէ խոտարուտ ճարակաւքն եւեթ շատացան,  
. . . ոմանք խոզարուտ եղջերան միայն գտազնապ քաղցին գաղաբեցու-  
ցանէին»։ Գ. 32։*

1 նման «զամենայն շարեացապարտ Մենեղաւոս» ասացումիս,  
փոխանակ զամենայն շարեաց պարտ, կամ զշարեացապարտն ամենայնի,  
(2ալ.— Այտրն. Քեր. 447, ծան. 2.) կայ ուրիշ յետ Ոսկեղարուն, որպէս  
թուի. «Ամենայն բարեաց պատճառ, ամենայն քարեացապարտն Մարիամ», . . .  
ձ. Գ. (տես Բարեացապարտ ի Նոր Հայկղ.։)

==ԳԻՏ. Բարեացապարտ, Չարեացապարտ, չկան ի զիրս միւս Գասուց: Երկրորդ բառիս նշանակութեամբ ըսած է եզնիկ, 125. «Ոչ միայն հայրն՝ որ թագաւորեցոյց զշարն՝ է պարտ չարեաց, այլ եւ որդին՝ որ կամակից եղիւ հարն եւ համարձակիչ շարին»:

Չայլ նմանութիւնս Կորեան եւ Մակարայեցոց՝ տես ի Կոր. ==Ազաթ. թիւք 5, Հրամանին եւ Թշուառութեանն հասելոյ. 6, Առանց յապաղելոյ. 19, Սոյն արինակ. 34, նիզակակից. 41, Գուռն թագաւորի. 58, Գումարեմ. 61, Համբերեալ եւ Պատրաստեալ (փոխ. համբերէր, պատրաստի). 71, Աւազանի. 74, Ծանալթ եւ Անծանալթ կացուցանեմ. 75, Աստուածազործ. 105, Թողում վերակացու եւ Պահապան թողում. 122, Ծակախիթ լինիմ եւ Ամբախիթ աննեմ, Ի Կոր.==Բիւզ. թիւք 4, Խոստացեալն եւ Խոստացեալքն. 22, Երթեալ կամ Երթամ յանդիման լինիմ թագաւորին. 31, Հարցանեմ եւ քննեմ. 41, Եռանդն ածեմ:

դ. ԿՈՐԻԻՆ ԵՆ ԵԻԹԱՂ

1

ԿՈՐ. «Հասանէր առ իս հրաման առն միոյ պատուականի՝ Յովսէփ կոչեցելոյ, . . . — թէպէտ եւ էի կրսերագոյն, եւ առաւել քան զկար մեր զբաւեալ անաշառ հրամանին հասելոյ, — փութանակի եւ առանց յապաղելոյ դառաջի եղեալն մատենադրել»։ 1. (տպ. սխալ կիտադրած է՝ «առաւել քան զկար մեր. զբաւեալ» եւ այլն):

ԵԻԹ. «Աղաչեմ յոյժ շլինել մեղազիր ի վերայ երկոցուն յանդգնութեանս իմոյ եւ ժպրհութեան, . . . զի անտի զմեզ հայրենի հրամանն յանդգնել աւելի քան զկար մեր զբաւեաց»։ Յռջր. Գժ. 1047 ա—բ.

2

ԿՈՐ. «Զորս եւ մեր համարէն աղաչեալ երկախառնել ընդ մեզ ազալթիւք՝ յանձնարարութեամբ աստուածեղէն շնորհացն»։ 2:



ԵՒԹ. «Յանձնարարութիւն Ռնեսիմայ ծառայի փախուցելոյ». Գլուխք Փիլիմոնի, Բ. 1194 ք.

[Ա Դաս]† «Քրքրէ զմիտս նոցա յանձնարարութեան աղաթիւքս առ զուխս իւր». Ոսկ. Երբ. (նոր Հայկղ. ի բառն Յանձնարարութիւն):

### 3

ԿՈՐ. «Հգար թագաւորացն խրատիչք էին (Յովսէփ եւ Դանիէլ), զաշխարհական (տպ. զաշխարհակալ) կենցաղոյս զհանգամանսն ցուցանէին». 3:

ԵՒԹ. «Եւ իբրև զքազում իրաց զհանգամանս եցոյց (Պաւղոս), ապա հրամայէ (Տիմոթեայ) առ ինքն գալ». Յոջր. Պաւղ. 1109 ա.

==ԴԻՏ. Դատաւորութիւն բանիցն ճշդի նոյն է եւ յ'երկոսին վկայութիւնսդ. զ նախդիրն կրկնեալ, զաշխարհական, զհանգամանսն—զքազում, զհանգամանս. ածականն յառաջ քան զգոյականն, զաշխարհական կենցաղոյս—զքազում իրաց. բայն ի վերջ նախադասութեանն, զհանգամանսն ցուցանէին—զհանգամանս եցոյց:

### 4

ԿՈՐ. «Այլ Սըբոյն Պաւղոսի առաւելագոյնս ճանաչի չորերտասաներումքք թղթովք պատմել զիւր առաքելակիցս եւ նիգակակիցս, եւ ուրախակիցս իւր առնել». 5. (տպ. այլազգ. տես ի Կոր.—Ազաթ. թիւ 33:)

ԵՒԹ. «Եւ ամենեւին քնաին իսկ չորերտասաներումքք թղթովք այսորիւք զմարդկան նկարեաց (Պաւղոս) զառաքինութիւն». Յոջր. Պաւղ. 1108 ա.

==ԴԻՏ. Այլուր կը գտնենք առանց համաձայնութեան. «Պիտի եւ այլ բաղում ի կաթուղիկէ թղթոց անտի, եւ ի Պաւղոսի չորերտասան թղթոց անտի». Կիւր. Կոչ. ԺԷ. 380.—«Արգ ոչ բաւական լիցի ինձ ժամանակս, եթէ կամիցիմ պատմել զբաղմացեալ զաւրութիւն Հոգւոյն Սըբոյ՝ Պաւղոսի ի չորերտասան թղթոյ անտի». անդ, 392. Կորիւն պիտի բւէր ի չորերտասանեցունց թղթոց:

5

ԿՈՐ. Վարձեալ փութայ (Պաղոս) ամենեքումբը հանդերձ ըստ Բրիստոսի հետոցն վարել. Հայեցարուք, ասէ, ի զաւրագուլին հաւատոց, եւ ի կատարիչն Քրիստոս. 5:

ԵԻԹ. «Վասն համերութեան ըստ (տպ. ընդ) Բրիստոսի հետոցն վարելոյ». Կուխք երբ. ժէ. 1172 թ. (ժէ գլխակարգութիւնդ կը համապատասխանէ երբայեցւոց Թղթոյն ժՅ գլխոյն 1—14 տանց. ուր յՉդ տան կ'ըսէ Առաքեալն. «Հայեցուք ի զաւրագուլին հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս». եւ այս վկայութիւն է աւասիկ՝ զոր ի մէջ կը բերէ Կորինն:)

6

ԿՈՐ. Վսկ ցանկալի Տեառնեղբայրն Յակոբոս, զհամաւրէն իսկ զգունդս սրբոցն՝ հանդերձ սրբասէր Տերամբն՝ յաւրինակ առեալ ի թղթին իւրում, ասէ». 6—7. (տպ. «զգունդն սրբոց». այլ առ Բիւզանդայ ի նմին տեղւոջ, «զգունդս սրբոցն», Դ. դ. 78, համեմատ եւթաղի:)

ԵԻԹ. «Ածեալ յաղբերս զԱստուած վասն մեր, համաւրէն զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի, սրբոցն զնդիւք ի միասին զումարելովք, առնել աղաւթս անդադար վասն մեր, եւ լինել բարեխաւս». Յռջբ. Կթդ. 1079 թ. (Թիւրքու ուղղելի ըստ Կորեան հատուածին՝ «Ածեալ յաղբերս զԱստուած վասն մեր, զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի, համաւրէն սրբոցն զընդիւք ի միասին զումարելովք, առնել աղաւթս» եւ այլն: Իսկ «զամենայն մարդիկ . . . առնել աղաւթս, եւ լինել բարեխաւս» թէպէտ եւ չէ սխալ, բայց կարելի է որ թարգմանչին բուն գրածն ըլլայ՝ «զի ամենայն մարդիկ . . . առնել աղաւթս, եւ լինել բարեխաւս», այս ինքն «զի ամենայն մարդիկ . . . առնիցեն աղաւթս, եւ լինիցին բարեխաւս». տես յԱզաթ.—Բիւզ. Թիւ 60, «Չի ընկենու:»)

7

ԿՈՐ. «Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ եւ թա-

կարթապալատեալ, եւ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի արդեւք ելս իրացն գտանիցէ»։ 8։

ԵԻԹ. «Զմիջամուխ իմաստութեան ղմշաակոխս որոճումնն՝ որ ցանկ յաճախէ ի քեզ, ո՞վ քրիստոսասէր, որ զշուրջ (ղի շուրջ?) զքեւ թակարդապալատեալ կայ, . . . ծաղկալից ծաղկաւէտ հաստատեալ կաս»։ Յսջր. Գժ. 1047 ը.

— ԳԻՏ. Թակարթապալատիմ՝ արտաքոյ այս երկու անդեաց՝ ալյուր հանդիպած չեմ։ Կայ միայն Թակարթապալատ անեմ՝ յերրորդ Գասի. «Թակարթապալատ արարեալ զքեզ՝ քոյին խորհրդովքն շարեալ պատեալ, ի խորխորան շարեաց կործանեսցէ զքեզ»։ Կիւր. Կոչ. Բ. 11. զոր Առաջին Գասն ըսած է Պատեմ՝ թակարդաւր. «Եւ յարեան ի վերայ նորա ազգք . . . եւ պատեցին զնա թակարդաւր յապականութիւն»։ Եղեկ. ԺԹ. 8. — «Այսպէս ասէ Տէր Տէր. պատեցից զքեզ թակարդաւր իմովք եւ ժողովովք զաւրաց բազմաց»։ անդ, 1, Բ. 3։

8

ԿՈՐ. «Ի վերայ հասեալ՝ թէ չեն բաւական նշանագիրքն (Գանիկի Ասորոյ) ողջ ածել՝ զսխալորայս եւ զկապս հայերէն լեզուոյն»։ 9։

— ԵԻԹ. «Փոխելոյ նկարագրի թղթոյս (Երբայեցւոց) յայանի են պատճառք. զի առ Երբայեցիսն՝ նոցին բարբառովն գրեալ (Պաղոսի), յետոյ ասեն թարգմանեցաւ, ոմանք թէ ի Գուկայ, եւ այլք թէ ի Կղեմայ, զորոյ եւ զնկարագիրն իսկ ողջ ածէ»։ Գլուխք Երբ. 1171 ա—ը.

— ԳԻՏ. Կայ յմսկ. Մտթ. Ա. ա. 14. «Զորհրտասան ազգ ասաց, եւ յերկրորդում մասինն ոչ ածէ ամբողջ զթիւն»։

9

ԿՈՐ. «Ուստի եւ ըսրբատուր ցնծութեան եւ երգովք հոգեւորաւր . . . ի քաղաքն զառնային»։ 11։

1. Յորմէ եւ ի նախադրութեան Մնացորդաց, 355 ա. «Հաւանիմ ի նմին Մովսիսէ աւանդութեամբ ընկալեալ գանունն (Կայնանայ) ի կարգս հարցն. զոր ոչ վասն պատուոյ եզ պատմագիրս, այլ վասն զկարգս հարցն ողջ ածնլոյ»։

եւթ. «Նոցա կէտ աղնուական սահմանեայ անձանց դառա-  
ջինան, . . . զցայգ եւ զցերեկ գանձեն գանձ անձանց իւրեանց  
ճշմարտի *ցնծալից քարքառովք*». Յոջր. Գծ. 1047 ա.

— ԳԻՏ. Ագաթ. կըսէ. «Եւ թագաւորն Հայոց դառնայր ի  
մեծ կոտորածէն . . . *ցնծալից ուրախութեամբ*». 33.— «Եւս  
քան զեւս ի հաւատսն հաստատեցան մեծաւ *ցնծալից քեր-  
կրութեամբ*». 618: Գայ եւ յեփր. Յապաշխ. Նին. 120. «Իրեւ  
եաեո Յովնան զթագաւորն եւ զգաւրսն իւր *ցնծալից ուրա-  
խութեամբ*, արտմեցաւ արտմութիւն մեծ», նոյնպէս եւ ի Մար-  
ի Վկ. Արեւ. 63. «Սիրով եւ *ցնծալից ուրախութեամբ* հա-  
սանիլ ի յարութիւնն ճեպէին»:

10

ԳՈՐ. «Ուստի եւ երանելի Հարցն մերոց համարձակութիւն  
առեալ, յուսալից փութով եւ երեւելի եւ *արդիւնակատար* ըստ  
Աւետարանին զիւրեանց մշակութիւնն ցուցանէին (տպ. ցուցա-  
նեն)». 12. (համեմատէ ընդ *արդիւնակատար մշակութիւն.*  
«Որպէս Աստուծոյ գործավարք եւ իմաստուն մշակք *արդիւ-  
նակատարք՝ ժողովել (զարդիւնսն) յըշտեմտրանս*». Յճխ. ԻԳ.  
214. որ յերրորդ Դասի ըսուած է. «Գեղեցիկ է այս եւ յոյժ բա-  
րիօք, զի *արդիւնատր մշակ է պատուիրանաց*». Վարք Յոճ.  
Թեգր. 111:

եւթ. «Զի ընդելատէր է եւ զթատէր, եւ առաւել խնամոտ  
եւ *արդիւնակատար*<sup>1</sup>, զիւրաքանչիւր աւգուտս վաստակոց շա-  
փեալ միշտ». Յոջր. Գծ. 1048 ա. (համեմատէ *միշտ մակբայ ի  
վերջ նախադասութեանն. չափեալ միշտ. եւթ.*— «Զի ճշմարիտ  
գիտութիւն իմաստից կենարար շահիքն *լցուցանէ միշտ*». Յճխ.  
Դ. 28. «Զի վերաբերեալ ի հեղգութենէ՝ յառաքինութեանն վարս

1. եւթողի չորք բառքդ Զի . . . *խնամոտ եւ արդիւնակատար* կը  
գանուին ճշգիւ եւ ի Գանոնս Սրբոյն Սահակայ. «Եկեղեցի . . . ունելով յին-  
քեան նաւապետ կարագետութեան գտեսուչ եպիսկոպոսն, զի *խնամոտ եւ  
արդիւնակատար* կամաւք անշարժ ունիցի դասման իւրոյ կարգին». Սոփ.  
Հայկ. Բ. 117: Սահակայ Գանոնքդ ոչ են «սկզբնազիր երկասիրութիւնք»  
մեծի կաթուղիկոսին, ինչպէս սխալմամբ կը համարի Բազմազէպն, 1853,  
252 բ. այլ թարգմանեալք ի յունէ ի ձեռն այլոյ ուրուք (տես ի նմին Սո-  
փերի, 115, Յիշատակարան Գրչին), թուի ի կատարած ե դարուն:



փութասցուք միշտ»։ անդ, 29.—«Անբաւկ մնալ ի սէրն որ առ  
Եստուած է՝ ամենայն սրբութեամբ, հոգւով եւ մարմնով՝ ասեմ  
միշտ... անարատ երախտեւք սիրոյն՝ կալ ի մտերմութեան  
միշտ։ եւ այս ամենայն յարինուածք իրաւանց եւ արդարու-  
թեան կայ եւ մնայ Արարչին առ արարածս միշտ»։ անդ, Բ.  
5. եւ այլ բազում ուրեք։)

11

ԿՈՐ. «Մանաւանդ զի ունէին պատուիրանս զգուշացուցիչս  
յաստուածակարգ պատգամաւորացն»։ 21։

ԵԻԹ. «Եւ զլիսաւոր ընդ խազմարարսն երեւեալ (Պաւղոս)՝  
ամենայն ուրեք ջանայր զԱստուածութեանն պատգամաւորսն  
չիջուցանել»։ Յռջր. Պաւղ. 1107 ա.

12

ԿՈՐ. «Մանաւանդ զի ունէին պատուիրանս զգուշացուցիչս  
յաստուածակարգ պատգամաւորացն. յորոց առաջինն հրա-  
մայէ, թէ... եւ երկրորդն՝ հանգոյն պատուիրէ, թէ...»։ 21։

ԵԻԹ. «Եւ յետ այսորիկ առ Տիմոթէոս կարգեցան երկու  
թուղթք. յորոց առաջինն ունի զվարդապետաց զգուշութիւն  
... եւ երկրորդն առ նոյն գրեալ, ունի ըստ աճմանն գովու-  
թիւն»։ Յռջր. Պաւղ. 1108 ք. (համեմատէ «ըստ աճմանն գո-  
վութիւն», եւ «Վեցերորդ կարգեալ է Փիլիպեցւոցն, ըստ աճ-  
մանն հաւատացելոց»։ Եւթ. անդ, 1108 ք.—«Հեղութիւն՝ ման-  
կանց Եկեղեցւոյ սնունդ է, եւ յորդորիչ ըստ աճմանն զգա-  
տութեան եւ ճշմարտութեան»։ ՅՏխ. ԺԱ. 109։)

Տես «Որոց առաջինն... եւ երկրորդն» եւ ի Կոր.—Եզաթ.  
թիւ 55։

13

ԿՈՐ. «Եւ զամենայն միանգամայն յաստուածպաշտու-  
թեան պայման փոխեաց»։ 22. (տպ. «պայման անդ փոխեաց».  
ուր անդ յայտնի սխալ է փոխանակ անդր. բայց ես ընտրելա-  
գոյն կը համարիմ զԵզաթանգեղի ընթերցուածն ի նմին հա-  
տուածի, 629. «յաստուածպաշտութեան պայման փոխեաց», հա-

մեմատ եւթադի: 2. Ազաթանդեղի ունի՝ «յաստուածպաշտութեանն պայմանեաց»:

ԵՒԹ. «Եւ նայնժամայն զհրամանս մոլորութեանն ի բաց ընկեցեալ (Պաւղոսի)՝ ի պատգամատրութեան պայման փոխւէր, եւ դՔրիստոսի աստուածպաշտութիւնն խոստովանէր».  
Յոջք. Պաղ. 1107 բ.

— ԴԻՏ. Առ Կորեան Եաստուածպաշտութեան պայման փոխեմ, ներգործական, է Դարձուցանել յաստուածպաշտութիւն Իսկ առ եւթադի Դ պատգամատրութեան պայման փոխիմ, շէզոք, է Դառնալ ի վիճակ Առաքելութեան: Յերկոսին եւս տեղիսդ միտ դիր Աստուածպաշտութիւն բառին:

14

ԿՈՐ. «Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում Դրոց» 23:

ԵՒԹ. «Ըստ նմին արինակի եւ մեզ գիպլցի քաղցրուսոյց ընթերցուածոցն վաճառաշահութիւն».  
Յոջք. Դժ. 1048 ա.

ԱԳԱԹ. «2ի քաղցրուսոյց վարդապետութեամբ ածիցէ զվրիպակսն ի հաւատոցն ճշմարտութիւնն».  
355:

15

ԿՈՐ. «Եւ ամենայն սրբովք ի միասին զումարելովք խաչակրան վկայիցն Քրիստոսի, հանդերձ Երանելեան Մաշտոցի, ի հանդիստ խորանին փոխէ».  
27. (յորմէ եւ Ազաթ. 577—578:) Այլուր. «Փողովրդովքն զումարելովք».  
24:

ԵՒԹ. «Աձեալ յաղերս զԱստուած վասն մեր, համարէն զամենայն մարդիկ եկեղեցւոյ Քրիստոսի, սրբոցն զնդիւք ի միասին զումարելովք, առնել աղաթս անդադար վասն մեր».  
Յոջք. Կթգ. 1079 բ. (տես աստէն ի թիւն 6 գԴԻՏ.)

16

ԿՈՐ. «Յովհան (Խոստովանող) . . . որում գէպ լինէր յեա վախճանի Սրբոյն (Մաշտոցի)՝ քազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց . . . վասն Քրիստոսի յաղթու-

Թեամբ տարեալը. 28: Հ. Բ. Սարգիսեան սխալ կը հասկանայ զայս հատուած Կորեան (25):

Եիթ. «Բազում եւ պէսպէս շարշարանս կրեալ (Պառոս) ժուժկալութեամբ վասն Գրիստոսի հաւատոցն, տարեալ բազում եւ ազգի ազգի վշտաց, զորս ինքն մի ըստ միոջէ գրէ»։ ՅճՅր. Պաղ. 1108 ա.

==ԳԻՏ. Բազում եւ ազգի ազգի կայ առանձինն ի Սեբեր. 2. 106. «Լոյսն այն . . . բազում եւ ազգի ազգի ճառագայթս բարեբարութեան արձակէ»։

Գան եւ երկու տեղիք, յորոց մին առ Կորեան խանդարեալ թուի՝ եւ եւթադիւ ուղղելի, միւսն առ եւթադի խանդարեալ՝ Կորեամբ ուղղելի։

ա. Կորեան հատուածն է. «Եւ հայրենակաաար մեծարեալ պայմանաւ, որ առ ի մէնջ հաճեսցի, եւ նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զարդարեսցի»։ 6: Եւթադ կ'ըսէ ի ՅճՅր. ԳԺ. 1048 ա. «Ըրդ որպիսի աւրինակաւ պարտ իցէ ընթերցուածասէր լինի, եւ աննիադ զնորին պարտն մեծարել»։ նկատելով Մ եւ Տ, Ո եւ Ս նշանադրաց յաճախակի շիոթիլն ի Չեռադիրս, կարծեմ թէ Կորեան հատուածն ուղղելի է ըստ եւթադի. «Եւ հայրենակաաար մեծարեալ պարտ՝ անաւսր՝ առ ի մէնջ հաճեսցի» եւ այլն: Հաճեսցի՝ է հատուցցի. (համեմատէ. «Յիրեանց շահիցն բերելոցն հանել զպարտս վտանդին»։ Ագաթ. ՅճՅր. 7.—«Ըստ վտանդի տարակուսանաց զհարկսն հանելոյ»։ անդ, 8.—«Իժամանակի հանելոյ (զիոթին), յապագեսցէ զժամանակի, եւ հատուցէ բննս կսկծելիս»։ Սիրաք. ԻԹ. 6.—«Զի . . . զպարտսն Բերշարեայ . . . հանեսցէ»։ Եփր. Թաղ. 417—418, եւ այլն:) Իսկ անաւսր առ ի մէնջ հաճեսցի» թուի նշանակել՝ սակաւ ինչ առ ի մէնջ հատուցցի. թէպէտ եւ Անաւսր

1. Ստուգութիւն չունիմ Կորեանց Պայմանաւ, որ ընթերցուածին ուղղելի լինելոյ Պարտ անաւսր. բայց անաւ, որ շատ նման է գրութեանն ահաւոր՝ որ կայ այլուր փոխանակ անաւսր. ընդ հակառակն կայ գրեալ անաւսր փոխանակ անուր: Գիրքին է զուշակել թէ ինչ ճիւղ կը ծնանի երբ այսպիսի օպականեալ տեղիք նոյնութեամբ կը թարգմանուին յօտար լեզու:

բառի վկայութիւնք զորս ունինք յԱռաջին Աշակերտաց՝ իբր ածական կը նշանակեն Գոյննազիւտ, Սակաւազիւտ, գդ. Rare, եւ իբր մակրայ՝ Սակաւ ուրեք, Գուն ուրեք, գդ. Rarement.

Ը. Եւթաղի Յռչր. Գաւղ. կը սկսի այսպէս, 1107 ա. «Ընդ ուսումնասէր եւ ընդ փոյթ քոյոյ սիրոյդ զարմացեալ, ո՛ հայր պատուական, . . . ընդ նեղ եւ ընդ նուրբ ծերպս պատմութեան դանձն ի ներքս արկի». որ յայլում Չեռագրի գրեալ է. «Ընդ ուսումնասէր եւ փոյթ ընդ քոյոյ սիրոյդ զարմացեալ» եւ այլն. (տես Ստեփան Կանայեանց, Յուցակ Հայերէն Չեռագրների Թիֆլիզի Ներսիսեան հոգեւոր Դպրանոցի, Թիֆլիզ, 1893, ե. 20 ա.) Չունիմ զԵւթաղի բնագիրն առ ի ստուգել զընթերցուած տեղոյս, բայց թուի ինձ թէ ուղղելի է «Ընդ ուսումնասէր փոյթ ընդ քոյոյ սիրոյդ զարմացեալ», ինչպէս Կորիւն կ'ըսէ Նշմարտասէր փոյթ, քրիստոսասէր փոյթ. տես Կոր. = Եգաթ. թիւ 78:

Գարձեալ՝ սկզբնաւորութիւն եւ կատարած Վարուցն Մաշտոցի թուի գրեալ հետեւողութեամբ Եւթաղի:

ա. Կորիւն նաւարկութեան կը նմանեցնէ զմատենագրել իւր զվարս Վարդապետին իւրոյ, եւ կը խնդրէ զաղօթս աշակերտակցացն՝ որպէս զի ուղիղ ընթանայ իւր նաւն. «Զորս եւ մեր համարէն աղաչեալ երկախառնել ընդ մեզ աղաւթիք՝ յանձնարարութեամբ աստուածեղէն շնորհացն, զի կամակարագոյնս եւ ուղղագոյնս նաւիցեմք զհամատարած ալեքն վարդապետական ծովուն». 2: Համեմատէ ընդ Եւթաղի. «Արդ՝ ան առեալ զքո աղաւթսդ տացես ինձ ի սատարութիւն, եւ ըստ աւրինակի նաւացն թեւոց թռուսցես զիս նոքաւք առ Աստուած . . . զի եւ իմ խոստափեալ յաւրական այսոցն ի վերայ յարուցելոց, ուղղեալ զմակոյդ բանին՝ զիմեցից յապահով եւ ի խաղաղ նաւահանգիստ». Յռչր. Գաւղ. 1107 ա.

Բ. Կորիւն առ ի նշանակել թէ քանի ամս տեւեց Մաշտոցի կրօնաւորական կեանքն (զոր ինքն կ'անուանէ հաւատք. տես Կոր. = Յիւզ. թիւ 8) կ'ըսէ. «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն՝ ամբ քառասուն եւ եւթն (տպ. քառասուն և հինգ. զորմէ տես ի 4) . . . Եւ արդ ասնու համար ամաց Սրբոյն (տպ.



սրբոց) հաւատոց ի չորրորդում՝ ամէն Կրմանայ արքայի՝ մինչեւ ցառաջին ման երկրորդ Յագկերաի որդայ Վաւմայ»։ 29: Եյս եւս կը յիշեցնէ զԵւթաղի յաջորդ տեղիդ. «Եւ արդ է յիննուտասներորդէ ամէ՛ Տիրեւեայ կայսեր՝ յորմէ քարոզել զԼեւտարանն սկսաւ՝ մինչեւ ի քսաներորդն երկրորդ՝ ամբ չորք . . . : Եւ արդ է ամենայն ժամանակ քարոզութեանն Պաղոսի՛ քսան եւ մի ամ՝»։ Յոջր. Պաղ. 1109 բ.

Զայլ նմանութիւնս Կորեան եւ Եւթաղի՛ տես ի Կոր.== Ըզաթ. թիւք 8, Արուեստախաւսեմ. 14, Ատուածամերձ, Ատուածամուխ կեանք. 29, Անուանակիր. 39, Նախակարգ եւ Նախակարգիմ. 47, Սատարութիւն. 99, Ազոստական եւ Ազոստ. 113, Անդ ցուցեալ. 117, Յարութեանական եւ Փրկութիւնագործ. 118, Դիւրահասոյց եւ Դիւրահաս. 133, Տանախմբեմ. 152, Կենդանատուր: Ի Կոր.==Բիւդ. թիւք 2, Ատուածեղէն կրանք. 5, Քաղցրատուր եւ Առատատուր:

Այստ ան ազուն զճգապա որսործնուն ան արդ 9343  
ճիւղ մի յամսա՛ յամիւն— 9348 անմկտորս քիթ  
9350 անմկտորս անմկտորս  
9351 անմկտորս անմկտորս  
9352 անմկտորս անմկտորս  
9353 անմկտորս անմկտորս  
9354 անմկտորս անմկտորս  
9355 անմկտորս անմկտորս  
9356 անմկտորս անմկտորս  
9357 անմկտորս անմկտորս  
9358 անմկտորս անմկտորս  
9359 անմկտորս անմկտորս  
9360 անմկտորս անմկտորս  
9361 անմկտորս անմկտորս  
9362 անմկտորս անմկտորս  
9363 անմկտորս անմկտորս  
9364 անմկտորս անմկտորս  
9365 անմկտորս անմկտորս  
9366 անմկտորս անմկտորս  
9367 անմկտորս անմկտորս  
9368 անմկտորս անմկտորս  
9369 անմկտորս անմկտորս  
9370 անմկտորս անմկտորս  
9371 անմկտորս անմկտորս  
9372 անմկտորս անմկտորս  
9373 անմկտորս անմկտորս  
9374 անմկտորս անմկտորս  
9375 անմկտորս անմկտորս  
9376 անմկտորս անմկտորս  
9377 անմկտորս անմկտորս  
9378 անմկտորս անմկտորս  
9379 անմկտորս անմկտորս  
9380 անմկտորս անմկտորս  
9381 անմկտորս անմկտորս  
9382 անմկտորս անմկտորս  
9383 անմկտորս անմկտորս  
9384 անմկտորս անմկտորս  
9385 անմկտորս անմկտորս  
9386 անմկտորս անմկտորս  
9387 անմկտորս անմկտորս  
9388 անմկտորս անմկտորս  
9389 անմկտորս անմկտորս  
9390 անմկտորս անմկտորս  
9391 անմկտորս անմկտորս  
9392 անմկտորս անմկտորս  
9393 անմկտորս անմկտորս  
9394 անմկտորս անմկտորս  
9395 անմկտորս անմկտորս  
9396 անմկտորս անմկտորս  
9397 անմկտորս անմկտորս  
9398 անմկտորս անմկտորս  
9399 անմկտորս անմկտորս  
9400 անմկտորս անմկտորս

**Ք Լ ՈՒ Խ**

Համեմատութիւն չորեցունց լծարգմանութեանց Կո-  
րին Վարդապետի ընդ միմեանս.—ա. Ագաթանգեղ եւ  
Բիւզանդ.—բ. Ագաթանգեղ եւ Մակարայեցիք.—գ. Ագա-  
թանգեղ եւ Նւթադ.—դ. Բիւզանդ եւ Մակարայեցիք.—ե.  
Բիւզանդ եւ Նւթադ.—զ. Մակարայեցիք եւ Նւթադ.

ա. ԱԳԱԹԱՆԳԵՂ ԵՒ ԲԻՒԶԱՆԴ

**1**

ԱԳԱԹ. «Նորա եւ ուղեզնացք աշխարհի. նորա եւ ճաշ-  
կիչք աւգտութեան». Յնջր. 10.—«Եկեալ հասեալ էին ուղե-  
զնացքն յուսարութեամբ». 618:

ԲԻՒԶ. «Ապա եպիսկոպոսապետն ներսէս յորժամ երթայր  
յուղեզնացութիւնն յերկիրն Յունաց, ձեւնադրեաց զայս Խող  
յեպիսկոպոսութիւն Բագրաւանդայ եւ Երշարունեաց». Դ. ժր. 105:

[Ե Դաս]† «Ուղեզնացութեան պէտս ունէր (Քրիստոս),  
եւ ոչ ուրեք երեւին ձիք եւ ջորիք». Ոսկ. Հն. ԻԴ. Յորդ. 349.  
—«Վասն այնորիկ ասաց թէ Չորջ, որպէս զի մի զուղղորդ զու-  
ղեզնացութիւնսն միայն իմանայցես, այլ զամենայն իսկ զհա-  
րաւային կողմանսն եւ զԱսիացւոց զաշխարհն զմտաւ սնձ. անդ,  
ԻԹ. 400:

—ԴԻՏ. Կայ ժաննապարնազնաց ի Զգան, ԺԹ. 372—  
373. «Դուք էք որդիք աջոյ թեւին, ճաննապարնազնացք ընդ  
նեզ եւ ընդ անձուկն»: Այլուր Ուղեւոր, Ուղեւորութիւն, Ծա-  
նապարհորդ, Ծաննապարհորդութիւն:

**2**

ԱԳԱԹ. «Ոչ որ է այն ամենեւին ի մարդկանէ՛ որ կարող է

այսպիսի ջան վաստակոց քրտնալից աշխատութեամբ (աշխատութեան?) անձամբ անձին մատուցանելը»։ Յոջր. 11: Այլուր. «Եւ մեր բանքս եւ ճառքս եւ ջանքս եւ վաստակս ձեզ յազոտ սերմանեսցիք»։ 181:

ԲԻԻԶ. «Եւ ի բարձուէն նայեսցիս, եւ տեսչիր զջան վաստակոց պատերազմին մերոյ»։ Ե. դ. 194: Յորմէ եւ «Ջանայր հանապաղ եւ վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին»։ Ե. ի. 213.— «Ջանալ եւ վաստակել, եւ ալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց»։ խղ. 256:

ԵԻԹ. «Քանզի ոչ իսկ այնպէս յանդուզն եւ փլիր էի, եթէ զայոյ ջան վաստակոց յիս առեալ՝ անխնայ թշնամանէի . . . զընթեքցուածոցն բնորութիւնս»։ Յոջր. ԳԺ. 1047 ա.

[Ա Դաս] Կ «Եւ շատաց եթէ տես զուղղութիւնսն քո, տես զջան վաստակոյն քո, այլ եթէ զԵստուծոյ զմարդասիրութիւնն»։ Ոսկ. Հո. ԺԹ. 283:

— ԴԻՏ. Ջան վաստակոց կայ եւ այլուր յԱռաջին Դասի. «Իսկ սակայն Տէր եւ յոյսմիկ ոչ մտապառ զջան վաստակոց նահատակութեանն Աստուծայ»։ Աթ. Անտ. 26.— «Թէպէտ եւ ի Թերայիդս կցես, . . . երկպառիկ առաւել եւս ջան վաստակոյ քեզ լիցի»։ անդ, 51: Սոյն Դասուս սփորտական է Ջան եւ վաստակ. «Ջանիւ եւ վաստակով զցայգ եւ զցերեկ զորձէաք՝ փասն շճանքանալոյ ումեք ի ձէնջ»։ Բ Թեւ. Գ. 8.— «Ո՛ր ջանս եւ ի վաստակս, ի տքնութիւնս բազում անդամ»։ Բ Կոր. ԺԱ. 27.— «Յիշեցէք (նոր Հայկ. ի Ջան՝ Յիշէք), եղբարք, զվաստակն մեր եւ զջան»։ Ա Թեւ. Բ. 9.— «Եւ կրանատրութիւնն լինէր բարի պտուղ եւ ջանոյ եւ վաստակոյ»։ Աթ. Անտ. 63: Կայ եւ յԵրրորդ Դասի. «Ոչ կարես դու առանց ջանոյ վաստակոց ստանալ՝ եթէ ոչ դու զանձն քո որոշեալ յաշխարհէս ուրացեալ զսանկցիս»։ Պտմ. Հար. Եղիպտ. 222: Իսկ Բիւզանդայն Ջանամ՝ եւ վաստակեմ՝ կայ եւ առ միւս Դասսն. Սիրաք, ԺԱ. 11. Զգան, ԺԹ. 374. Կիւր. Կոչ. Ե. 82. եւ այլն:

3

ԱԳԱԹ. «Որք եւ մեծ աշխատանաւք (աշխատութեան?) երկայն Աննապարհացն զթոշակն բաւեցուցին»։ Յոջր. 14.

(երկրայական թուի Աշխատանք, զի այլուր ամէնուրեք Ագաթ. կ'ըսէ Աշխատութիւն. 11, 14, 26, 70, 276, 382, 498 երկիցս, 499.)

ԲԻԻԶ. «Խաղաղութեամբ արձակէր (Արշակ Թագաւորն) զմեծ նահապետն (Վարդան) ի տուն իւր, զի երթիցէ հանգիցէ յաշխատութենէն յերկայն ճանապարհէն (երկայն ճանապարհին?)». Գ. Ժբ. 127:

[Ա Դաս] Կ «Ետ քեզ (Աստուած) ծով, զի նաւարկեալ շքրջիցիս, եւ շխոնջիցիս աշխատութեամբ երկայն ճանապարհաց». Ոսկ. Փիլիպ. Ժ. Յորդ. 468: Այլուր. «Ոչ ժամանակ (կարէ գամազիտ լինել), ոչ ճանապարհաց երկայնութիւն». նոյն, Կողոս. Ա. Յորդ. 528. ըստ որում եւ յՈսկ. Մտթ. Ա. դ. 87—88. «Եւ զառաջնորդէն ասէին (մողքն), եւ զերկայնութիւն ճանապարհին պատմէին».

4

ԱԳԱԹ. «Եւ եւ զաղքատս լցուցանեն, թաւթաւիսն բարձրացուցանեն յաղբեաց». Յռչբ. 14. (առեալ է ի Մաղմուսէն ձԺԲ. 7. «Տարուցանէ զաղքատս յերկրէ, եւ բարձր առնէ զտառապետս յաղբեաց»: Տես եւ յաղթս Աննայի, Ա Թագ. Բ. 8:)

ԲԻԻԶ. «Զձեզ կեցուցեալ զամենեսեան եւ յաղբոյ թաւթաւիս է (ազգին Արշակունեաց). Գ. Ժա. 162:

5

ԱԳԱԹ. «Յամս քաջի առարինուոյ ուժեղ եւ պատերազմող Տրդատայ». Յռչբ. 19:

ԲԻԻԶ. «Թագաւորեաց Խոսրով Կոտակ, . . . որդի քաջի եւ առարինուոյն Տրդատայ արքայի». Գ. դ. 6:

6

ԱԳԱԹ. «Ընդ շքրջումն տէրութեանն փոխելոյ, ընդ կոյսս կոյսս հարկանելոյ». Յռչբ. 20. (տպ. «ընդ կոյսս հարկանելոյ». զոր ուղղեցի ըստ Բիւզանդայ, եւ ըստ Յոհ. կթ. Պատմ. 185. «Եւ այն ար սակաւ ինչ ընդ կոյսս կոյսս հարեալք ընդ միմեանս».)

ԲԻԻԶ. «Զբազում կոյսս կոյսս հարկանէր մեծաւ պա-



տերազմաւ», Խոստ. Ե դպր. 41. Ը. 181: Այլուր. «Ձնոյն արինակ առնել հրամայէր . . . ի կողմանս կողմանս, ի կոյսս կոյսս (տպ. ի կոյս կոյս), ի խորչս խորչս սահմանացն Հայոց»: Գ. դ. 75:

7

ԱԳԱԹ. «Ձայս ամենայն . . . պատմեսցուք, վարդապետութեամբ Սրբոյն (Գրիգորի), որ արժանի եղել ի մեծ յեպիսկոպոսական աթոռն հասանել, եւ զհայրապետական անուն ժառանգեաց». Յոջր. 23:

Քի՛հ. 2. «Ելանէր (Հայր մարդպետն) յեպիսկոպոսական կայանէն յապարանիցն մինչեւ ի վկայարանս սրբոցն». Գ. ժդ. 114:

— ԳԻՏ. Փոխանակ Եպիսկոպոսական աթոռ՝ կայ յԵւս. Եկեղ. 2. իթ. 478. «Առին եւ նստուցին զնա յաթոռ եպիսկոպոսութեան»:

8

ԱԳԱԹ. «Արժանի եղել ի մեծ յեպիսկոպոսական աթոռն հասանել, եւ զհայրապետական անուն ժառանգեաց». Յոջր. 23:

Քի՛հ. 2. «Եւ նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական». Գ. ժր. 30.— «Ձի նստցի նա յաթոռն հայրապետական». ժդ. 38.— «Եւ նստաւ Փառէն յաթոռ հայրապետական սակաւ ժամանակս». ժդ. 44. (համեմատէ եպիսկոպոսական աթոռ. Ազաթ. — աթոռ հայրապետական. Քիւզ. :) Իսկ Գ. ժ. 23. «Որ մինչեւ ցայտար նշանակ սրանչելութեանն կայ պահեալ առ նոսա՝ երևոյթ փայտն հայրապետական նոյեան տապանին», կը նշ. նահապետական, զի բանն է զնոյէ:

9

ԱԳԱԹ. «Այլ թէպէտ եւ վաղ լուեալ զբաւթն (Խոսրով թագաւորն Հայոց), ոչ ինչ ժամանեաց հասանել յամբով զործոյն պատերազմի». 30:

Քի՛հ. 2. «Ձի թէպէտ եւ տեսեալ հարուստ զնդաւ եկեալ զգաւրաւարն (տպ. զօրաւարն) Պարսից, . . . ոչ ինչ խիթացեալ զգուշաւ անկասկած լինէր». Գ. ի. 52:

(Մկր. ըստ սովորականին. «Ապա թէպէտ եւ զհետ եղել

նոցա, չկարաց հասանել, քանզի անցեալ էր նոցա ընդ գետն  
Աղատ». Ա. ժբ. 30):

==ԴԻՏ. Թէպէտ եւ լուեալ, տեսեալ, փոխանակ լուաւ,  
ետես: Տես ի Կոր.—Ազաթ. զթիւան 61 եւ 54, ԴԻՏ. տես եւ  
աստէն զթիւն 95:

## 10

ԱԳԱԹ. «Ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն  
պատերազմի». 30.—«Եւ որ ուստեք ուստեք եկեալ հասեալ  
էին ի թիկունս աւանականութեան՝ նիզակակիցք գործոյն պա-  
տերազմի». 32—33:

ԲԻԻՁ. «Իբրեւ վաթսուն հազար ընտիրք եւ պատերազմողք,  
որ միամիտք եւ միասիրտք էին միարանութեան գործոյն (տպ-  
գործոցն) պատերազմին». Դ. իդ. 143.—«Նայէր տեսանել՝ թէ  
սվ ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս աւանականութեան յա-  
զազս գործոյ պատերազմին». ի. 130. (համեմատէ ընդ եր-  
կրորդ վկ. Ազաթ. «ի թիկունս աւանականութեան . . . գործոյն  
պատերազմի»:) Տես գործ պատերազմի եւ 18—19, 130, 131  
երիցս, 150, 195, 200, 205, 251. գործ նակատու, 192. գործ  
նակատու պատերազմի, 149:

ՄԿԲ. «Ընդէր զայդչափ զաւրս կոտորեցեր, զի ոչ ինչ գոյր  
ի միջի գործ պատերազմի». Ա. ժբ. 44:

Տես եւ «Անձամբ վճարեմ զգործ պատերազմին» ի Բիւզ.—  
Մկբ. թիւ 118:

==ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի. «Եւ կազմեցին  
եւ եղին անդ զգարմանս ի գործ պատերազմի». Յուդիթ, Դ. 4:

## 11

ԱԳԱԹ. «Սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազ-  
մել եւ զաւրս բովանդակել». 30:

ԲԻԻՁ. «Գունդ կազմէր բազում յոյժ». Գ. է. 16.—«Ապա  
զաւրաւարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց պատրաստեաց». Ե. ա.  
187.—«Մուշեղ զգունդ իւր կազմէր». անդ, 188.—«գունդ կազ-  
մեաց, եւ զաւր բազում առ ինքն կուտեաց». Ե. լր. 247.—«Զգուն-  
դըն կազմէր, եւ զարսն (զգարսն?) պատրաստէր». անդ, 248:

ՄԿԲ. «Երբևս դայն լուա Յուդա՝ գունդ կազմեաց վաղ-  
վաղակի»։ Ե. Ե. 28: Այլուր. «Գունդ գործէին, մարտի պա-  
տրաստէին»։ Բ. Ժ. 15:

==ԳԻՏ. Կայ յեղնիկ, 162. «Եւ կամ յորժամ հէն յաշխարհ  
արշաւիցէ՛ . . . մի դուրս ժողովեցնն, եւ մի գունդս առ գունդս  
կազմեցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ»։ զոր նոր Հայկդ. ի Գունդ՝  
գունդ՝ կը գրէ. «մի գունդս առ գունդս գործեցցեն»։

12

ԱԳԱԹ. «Ջնջել ի միջոյ. ի բաց կորուսանել, . . . համարէր  
բառնալ դարէնս տէրութեանն Պարսից»։ 31.—«Անյիշատակ առ-  
նել (զշատուածոն), Ջնջել ի միջոյ»։ 583—584.—«Զամենայն  
դաւակ պղծալից թագաւորացն հեթանոսաց Ջնջէր ի միջոյ»։ 646:  
ԲԻԻԶ. «Հարկանէր եւ սատակէր, Ջնջէր զնոսա ի միջոյ»։  
Ե. խ. 249:

ՄԿԲ. «Ժորհուրդ խորհէր ննկութեամբ ի վերայ Չմաւոնի  
եւ որդւոց նորա՝ Ջնջել զնոսա ի միջոյ»։ Ե. Ժգ. 13.—«Այսպի-  
սի արհասաւ հրամայեցին դանաւրէն Չիմոն (յոյնն՝ Մենեղաւոս)  
ի միջոյ Ջնջել»։ Բ. Ժգ. 7: Այլուր. «Առ հասարակ բառնալ ի  
միջոյ՝ Ջնջիլ զազգն Հրէից»։ Բ. ք. 9. (յայտմ վկայութեան թուի  
թէ Ջնջեմ սասակագոյն նշանակութիւն ունի քան զԲառնամ ի  
միջոյ, մինչդեռ թարգմանիչն Ոսկ. Կողոս. Զ. 589, նուազագոյն  
կը համարի զՋնջեմ. «Քան զթողուլն՝ Ջնջիլն մեծ է, եւ քան  
զՋնջիլն՝ ի միջոյ բառնալն»։ Հատուածն Մկր. թերեւս գրելի է  
ըստ երկրորդ վկ.՝ «Առ հասարակ բառնալ՝ ի միջոյ Ջնջել» եւ  
այլն):

==ԳԻՏ. Առաջին Գասն կըսէ ուրեք. «Մի Ջնջեցի անուն  
հաւր մերոյ ի միջոյ ցեղի իւրոյ»։ Թիւք, Իէ. 4:

13

ԱԳԱԹ. «Վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազ-  
մութեամբ ժիր եւ քաջ առն եւ ծիրոյ . . . Աղուանք, Լփինք եւ  
ձիղպք»։ 31: Այլուր դարձեալ. «Լինէր առաջնորդ առն եւ ծիրոյ  
դաւրացն Յունաց»։ 104.—«Բազմացեալ կառաւրն, եւ սպառազէն  
առն եւ ծիրոյն՝ նիզակաւք եւ անթիւ երկվարաւքն վառելովք ի

Հուրան կորնչելը». 422.—«Ուր եւ երեւեալ կերպարանաւք զիւացն՝  
ի նմանութիւն առն եւ ձիոյ». 584:

ԲԻԻԶ. «Եւ որ հասին ի ժամանակի անդ ի ձեռս (տպ. ի  
ձեռն) նորա՝ տասն հազար հեծեալ, ընտիր ընտիր եւ քաջ այր  
եւ ձի». Գ. իդ. 140—141: Այլուր դարձեալ. «Եւ ոչ որ էր՝ որ  
մնացեալ էր առ թագաւորին, եւ ոչ զունդ եւ այր եւ ձի». Գ.  
ի. 52.—«Չամենայն այր եւ ձի գումարեալ՝ խաղացոյց ընդ  
ինքեան». Ե. է. 205: Տես եւ Հեծելազար. Գ. իա. 137:

ՄԿԲ. «Ի գալուստ ամին միւսոյ՝ զաւր հատանէր, այր եւ  
ձի առնէր». Ա. դ. 28.—«Ձեր ինքնին լուեալ իցէ վասն առն եւ  
ձիոյ ճանապարհին». Գ. գ. 9, (տպ. «Վասն առնուձիոյ», փոխե-  
ցի առն եւ ձիոյ, ըստ որում կ'ըսէ Ազաթ, չորրիցս. զի ուղղա-  
կանն է Այր եւ ձի, եւ ոչ Առնուձի): Այլուր Այրուձի, Ա. դ. 38.  
Բ. ժ. 24, կը հոլովի այրուձիոյ. Ա. ժ. 73: Կայ եւ Հեծելա-  
զարք, Հեծելազար. Ա. ժե. 41. Ժգ. 7. Հեծեալք. Գ. ա. 1.  
եւ այլն:

—ԳԻՏ. Միւս Գասուց սովորականն է Հեծեալք կամ Հեծե-  
լազար. բայց կը գտնուի յԱռաջին Գասի քանի մի անգամ Այր-  
ուձի, այլ ոչ Այր եւ ձի. «Բարձից ի միջոյ քումմէ զթագա-  
ւորս, եւ ցրուեցից ի քեզ զայրուձի նորա». Երեւ. ԾԱ. 21.—  
«Սեթոս, որ եւ Ռամեսէս. որ զայրուձին եւ նաւական ունէր  
բազում զաւր», Եւս. Ժմ. 111.—«Եւ ելեալ փութապէս յԵրուսա-  
ղէմ եւ ի չրէաստան մեծաւ զաւրութեամբ եւ այրուձիով՝ ար-  
գելին եւ խափանեցին զչրեայսն ի շինելոյ». Եղբ. Բ. դ. 23: Կայ  
եւ յԵրրորդ Գասի. «Չոր արինակ որ զայրուձիդ առնեն, զայր  
ընտիր զէն ընտիր ժողովեն, զհասակս եւ զանդամս զաւրակա-  
նացն ընտրեն». Կիւր. Կոչ. Ա. 3. (տպ. զայրուձիդ. եղի զայր-  
ուձիդ ըստ նոր Հօրաժողով առնել. տես Այր  
եւ ձի առնեմ ի Մկր. առաջին վկ.):

14

ԱԳԱԹ. «Հնազանդեցան եւ ի ծառայութիւն մտին համ-  
բարձելոյ թագաւորութեան Ստահրացոյն». 32:

ԲԻԻԶ. «Պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից  
Չապուհ, զի ես մտից նմա ի ծառայութիւն». Ե. դ. 203.—



«Ոչ կարեմք հեթանոսաց ի Պարսկաց ի ծառայութիւն մտանել, եւ թշնամի առնել զթագաւորն Յունաց»։ 14. 234:

[Ա Գաս]† «Եթէ ի հնոց ջեռուցեալ արկանէր որ զմեզ վայր մի, ո՛չ ապաքէն զամենայն ինչ խոռտանայաք տալ վասն ապրելոյ, եթէ զինչս վատնել, եւ ի ծառայութիւն մտանել»։ Ոսկ. երբ. ԻԱ. 520. զոր համեմատէ. «Եկեալ յաշխարհ մի աւտար՝ այլում թագաւորի տային զանձինս ի ծառայութիւն»։ նոյն, Մտթ. Ա. դ. 81:

— ԴԻՏ. Կայ յերրորդ Գասի. «Ասէ Պաւղոս. Արդ իրրեւ ազատեցաք ի մեղաց անախ, ասէ, եւ ընդ ծառայութիւն մտար Աստուծոյ, ունիմք զպտուղս զայս ի սրբութիւն»։ Կիւր. Կոչ. ԺԼ. 422. որ ի թղթին Հոռովմայեցոց, 2. 22, գրեալ է. «Քայց արդ ազատացեալք ի մեղացն եւ ծառայեալք Աստուծոյ» եւ այլն:

15

ԱԳԱԹ. ա. «Զի էր Խոսրովու եւ ղեսպան արարեալ՝ զի իւրեանց տոհմայինքն ի թիկունս եկեցցեն»։ 32.— «Հրաման տայր ընդ կողմանս կողմանս ղեսպանս արձակել, հրովարտակս աննել»։ 33—34.— «Հրովարտակս եւ ղեսպանս առնել առ իշխանս եւ զաւրս զաւրութեան իւրոյ (2. իսկ տպ.՝ իւր), զի ուր եւ իցեն՝ առ նա հասցեն (2. իսկ տպ.՝ հասանիցեն) վաղվաղակի»։ 45:

բ. «Դեսպանս արձակեալ՝ պատուիրակս հանեալ ընդ աշխարհ, զի ամենեքեան աւժտարեր ընծայատար լիցին մեծի հարտանեացն»։ 114.— «Ի կողմանս կողմանս . . . ղեսպանս արձակէին, թիրուս ուրեք գտանել կարացցեն (զՀոփոսիմէ)։ Յայնմ ժամանակի զայր հասանէր ղեսպանս առ Տրդատ»։ 123.— «Դեսպանս արձակէր ընդ կողմանս կողմանս, զի ուր եւ գտցեն՝ ի մէջ ածցեն վաղվաղակի»։ 127:

ԲԻԻԶ. ա. «Մա (Փիտակ) ղեսպան գնացեալ (2. իսկ տպ.՝ ղեսպանաղնացեալ) էր առ Վարաղշապուհ, զոր թողեալն էր սահմանապահ արքային Պարսից յԱտրպատական աշխարհին»։ Գ. ի. 49.— «Ապա յայնմ ժամանակի Վարաղն արձակէր ղեսպանս առ արքայն Հայոց, ի հաշտութիւն խաղաղութեան զաւով խաւսել ընդ նմա»։ անդ, 51.— «Մինչդեռ ղեսպանքն երթեալք յիրկրէն Հայոց ի կայսերական պալատն՝ չեւ էին անդրէն յիւրեանց աշ-

խարհն դարձեալ» . իա. 55. — «Ձառ ինքն եկեալն ղեսպանսն արձակէր յիւրմէ (Թագաւորն Պարսից)» . անդ, 57: Տես եւ 104, 135, 136 երկիցս, 170 երկիցս, 191, 203, 204, 232, 246, 247, 262: Յորմէ եւ Դեսպանութիւն . «Ձորմէ յերթալն իւրոյ ղեսպանութեանն (ղեսպանութեամբն?)՝ սննկապետն արքային Փխակ մատնեաց զձին Վարադայ» . Գ. ի. 49. — «Զի այս արքէին՝ որ շոգան առ նա ղեսպանութեամբ յառաջնում նուագին», Գ. իա. 55. — «Սորա շոգան ղեսպանութեամբ ի սէր միարանութեան առ կայսրն Վաղէս» . Գ. ժա. 104:

բ. Առաքեալ դու ղեսպանս յերկիրն Հայոց, եւ սուր բերել անտի հող . . . եւ կահոյր մի ջուր: . . . Ապա Թագաւորն Պարսից . . . արձակէ ի Հայս արս զճողոյ եւ զճրոյ» . Գ. ծդ. 166:

— ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յերկրորդ Դասի . «Կարի յոյժ պակասութիւն եւ յափշտակութիւն եղև նոցա (քրիստոնէից) ի ղեսպանից» . Եւ. Եկեղ. Թ. ժա. (ժ. ըստ յոյն բնագրին.) 706. ուր յոյնն կ'ըսէ *officialis*, որ է լատինականն *Officialis*, Պաշտօնեայ . իսկ առ Ագաթանգեղի եւ Բիւզանդայ՝ բառիս առաջին նշանակութիւնն է Հրեշտակ, Պատգամաւոր, ինչպէս կ'ըսեն սովորաբար միւս Դասքն, զգ. *Envoyé, Messenger, Ambassadeur* . երկրորդ նշանակութիւնն է՝ ըստ Հ. Արսենի Բագրատունոյ՝ Ար եւ է առաքեալ զգործոյ՝: Ոչ ուրեք կը գտնուի Դեսպան ի գիրս Առաջին եւ Երրորդ Դասուց: Սխալ է ղեսպան գրութիւնն ի ձառս Սեբերիանոսի, 2. 114 չորիցս, փոխանակ ղեսպակ<sup>2</sup>. (տես Հայկ. Բառարանն. Ե. 52:) Դեսպան բառի երկրորդ նշանակութեամբ կ'ըսէ Կորին ի Վարս Մաշտոցի . «Եւ հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի դաւառս կէս ազգին Հայոց՝ յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկաւոյ ժողովել» . 17. իսկ առա-

1. Սովին երկրորդ նշանակութեամբ կ'ըսէ նա եւ Ղ. Փարպեցի, Պատմ. 151. «Յետ այսորիկ ղեսպանս հրամայէր առնել Թագաւորն Յագկերտ . . . յազազս երանելոյ եպիսկոպոսին Բասենոյ Թաթկայ, . . . եւ հրամայէր սպանանել անգէն»:

2. Հակոռակ սխալն, ղեսպակ փոխանակ ղեսպան, կը գտնուի ի Յոհ. կիմ. «Եսկ ոստիկանն Ոգրա իրբև լուա զմահ սրբոյն Սահակայ, վազվազակի առաքեաց ղեսպակս, հրամայէ օշ Թաղել զնա՝ մինչ զի ինքն իսկ երթիցէ» . տպ. Էմին, 55. տպ. Երուս. 123. կարգան ղեսպանս:

ջին նշանակութեամբ կ'ըսէ այլուր Քիւզանդ. «Հզար թագաւորի եւ մեծի տեառն ճրեշտակը են». Գ. Ե. 87.—«Դեսպանը եւ ճրեշտակը երկուց թագաւորացն, Յունացն եւ Պարսից». Զ. ա. 262.—«Իսկ Վարդանն, . . . գայր հասանէր ճրեշտակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ». Գ. ժը. 127. եւ այլն.—«Դեսպանն ձիով զբազումս յղէր զհետ թագաւորին Հայոց, . . . եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն թագաւորին Պարսից». Գ. ի. 135: Ի Մկր. ամենուրեք Հրեշտակս արձակեմ. Ա. ա. 46. Ե. 10. Է. 10. Ժգ. 14. Հրեշտակս յղեմ. Ա. Ժգ. 21. Հրեշտակս առնեմ. Ա. Ժգ. 14. Ժգ. 18, 24. Բ. ր. 8. Հրեշտակութիւն. Բ. դ. 11, 21: Տես եւ յԱռաջին Դասի Հրեշտակ. Ծնն. ԼԲ. 6. Առաքեմ ճրեշտակս. անդ, 3. Դատ. ԺԱ. 12. Ա թագ. ԺԶ. 19. Հրեշտակս արձակեմ. Դատ. Է. 24. Հրեշտակ յղեմ. Ոսկ. Փիլիպ. Թ. 449. Հրեշտակութիւն առաքեմ. Ղուկ. ԺԳ. 32. Պատգամաւոր. Եո. 4Գ. 9. Պատգամաւորիմ. Եփես. Զ. 20. եւ այլն:

16

ԱԳԱԹ. «Զհետ մտեալ կոտորէին զամենայն զարսն Պարսից». 33:

ՔԻԻԶ. «Կոտորեալ առ հասարակ ընդ սուր հանէր զամենայն զարսն Պարսից». Գ. իգ. 145.—«Զամենայն զարսն Պարսից կոտորեալ՝ անմի արարեալ սպառեցին». լա. 148. եւ այլն: Այլուր կ'ըսէ զզարսն ամենայն Պարսից. 143, 149, 152. բայց յերկրորդ տեղուց՝ 2. ունի զամենայն զարսն Պարսից: Տես եւ «Գումարեաց ի մի վայր զզարսն ամենայն Հայոց». Ե. Ե. 200:

17

ԱԳԱԹ. «Ապա հրաման տայր . . . յեւթն քազինս մնննիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման». 33—34:

ՔԻԻԶ. «Յերկրին Տարանոյ (տղ. Տարօնու), ուր նշանաբն եղելովք կործանեցան քազինք մնննիցն». Գ. գ. 7.—«Յաւուրս յորում կործանեաց (Գրիգոր) զքազինս մնննիցն Հերակլեայ, այս ինքն Վահագնի». Ժգ. 37:

18

ԱԳԱԹ. «Նա եւ հինգերորդ եւս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց»։ 34:

ԲԻԻԶ. «Սոյնպէս եւ ամենայն զաւրացն տային բաշխել՝ ի մեծամեծ աւարացն ածելոցն»։ Ե. ր. 190:

19

ԱԳԱԹ. «Գումարտակ առնէր, . . . ասպատակ սիռեալ զկողմամբն Ըսորեստանի»։ 34—35.— «Զաւրածողով լինէր, խաղայր զնայր, ասպատակ սիռէր զկողմամբ չայաստան աշխարհին»։ 41: Այլուր. «Բազում տեղիք այն են՝ որ իմ խաղաղութեամբ հասեալ է. եւ բազումք այն են՝ որ մարտիւ պատերազմաւ աւարի ասպատակեալ»։ 159.— «Ի միտ արկ թագաւորն գումարտակ առնել, անգրէն արշաւել ի կողմանս Պարսից»։ 38—39. (տպ. «Ի միտ առ թագաւորն. գումարտակ առնէր անգրէն» եւ այլն. իսկ Պարսիսեան 2.՝ «եւ ի միտ արկեալ թագաւորին՝ գումարտակս» եւ այլն:)

ԲԻԻԶ. «Ապա գայր ելանէր Վինն, ասպատակ սիռէր ընդ ամենայն երկիրն սահմանացն Հայոց»։ Դ. իգ. 145.— «Եւ ապա ընդ ցիրն ասպատակ սիռեալ Հայացիքն»։ լա. 148.— «Ընդ ամենայն երկիրն ասպատակ սիռեալ՝ գամենայն այլ ի չափ հասեալ՝ կոտորէին»։ ԺԵ. 172: Այլուր. «Նոցա առաջնորդ կախալ

1. Տպ. *բաշխիչ*, գոր նոր Հայկզ. կը մեկնէ. «որպէս ոմկ. *պաշխիչ*, պրս. *պաշխիչ*, այս ինքն Պարզն, կամ մասն եւ բաժին ի բարեաց»։ յորմէ եւ այլ ամենայն Հայերէն Բառարանք, Զախմախեանի, Առձեռն, Զազրճեանի, Ամբրոսիոս Գալֆայեանի՝ որ զգ. կը գնէ Pourboire. Նոյնպէս Գեր. Այտրենեան կը գրէ ի Ջնն. Ջեր. երես 182, Ժան. 23. «Պաշխիցիք. բաշխիչք. պարգեւք»։ Իսկ Հ. Արսէն Բազրատունի ուղղելի կարծած է գերիզանդայ տեղիդ՝ «ամենայն զաւրացն տային ի Բախիչ»։ այս ինքն որ էին ի Բախիչն. տես ի Բիւզանդ Բախիչն, տեղի անծանօթ, յերես 188 եւ 192: Հարգատ ընթիւնցուածն է «տային բաշխել ի մեծամեծ աւարացն»։ համեմատէ. «Զաւար հզարաց բաշխեսցէ»։ Ես. ԾԳ. 12.— «եւ զաւար եւ զկապուտ եւ զստացուածս բաշխեսցէ նոցա»։ Դան. ԺԱ. 24.— «Զաւար նոր բաշխեսցէ»։ Դուկ. ԺԱ. 22.— «Զամենայն դանձս քո բաշխեցիցի յաւարի»։ Երեմ. ԺԷ. 3.— «Ընդ լիբ յափշտակող, ուր որչափ եւ յափշտակիցես՝ չպակասէ ինչ, եւ ոչ յաւարի բաշխի»։ Ոսկ. Բ ՏԻմ. Ժ. Տորդ. 275. յորմէ եւ Աւարաբաշխ. Դատ. Ե. 30:



զՄերուծանն՝ ընդ այլ կարթեալ ասպատակ յաշխարհն Հայոց առնէին»։ Դ. իդ. 141. (տպ. «ընդ այլ կարթեալ»։ զոր տես ի Բիւզ.—Մկր. թիւ 73.)—«Կամէին ասպատակ առնել յերկիրն Հայոց»։ լթ. 152.—«Եւ եկեալ զաւրբն Պարսից ասպատակ առնէին եւ ի միջնաշխարհն Հայոց»։ Ն. դ. 192.—«Ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին»։ Դ. իդ. 142: Տես եւ Ասպատակեմ. 138, 139, 140. Արշաեմ. 14, 138 երկիցս, 142, 153:

ՄԿԲ. Ասպատակ սիրէր ընդ աշխարհն ամենայն Եստիրոս»։ Ա. ա. 20: Այլուր. Ասպատակեմ. Բ. ժգ. 19. Արշաեմ. Ա. դ. 35. թ. 69:

Տես եւ «Ասպատակ դնեմ» յԱզաթ.—Մկր. թիւ 2. «Ասպատակ տամ» ի Բիւզ.—Մկր. թիւ 74:

—ԴԻՏ. Ասպատակ սիրեմ, առնեմ, կապեմ, դնեմ, տամ, անծանօթ են միւս Դասուց: Կայ եւեթ մի անգամ յԱռաջին Դասի. «Դիմեալ ի վերայ Ասորեստանեաց՝ որ յայնժամ հոյակապն էին, ի ցանկութիւն մտարբերէր յայտալսի թագաւորութեանն (թագաւորութեան?) վերայ ասպատակ արծակելը»։ Նւ. ժմ. 108. զոր նոր Հայկազեանն ի Մտարբերեմ՝ սխալ կը գրէ ասպատակ սիրելը: Այլուր ամէնուրեք կ'ըսուի Ասպատակեմ. Ա Թագ. Ժէ. 53. Իէ. 8. Լ. 1. եւ այլն. Արշաեմ. Ա Թագ. ԻԳ. 27. Իէ. 10.—«Վողողեսոս արքայ Պարթեւաց ի Հոսմայեցոց վայրս արշաեաց»։ Նւ. Բր. 160. եւ այլն:

## 20

ԱԳԱԹ. «Եւ ամս տասն . . . աւերէին զամենայն երկիր սահմանացն՝ որ ընդ Պարսից թագաւորութեամբ եւ իշխանութեամբ էր»։ 35.—«Հասանել նմա բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց Մեծաց (տպ. մեծութեան) աշխարհին»։ 624:

ԲԻԻԶ. «Ալազ գայր ելանէր Վինն, ասպատակ սիրէր ընդ ամենայն երկիրն սահմանացն Հայոց»։ Դ. իդ. 145: Այլուր.

1. Այս տասցուած շղտնուիր ի նոր Հայկազեանն: Ի Սա. Շողիկ, Բ. դ. 120, ծան. 1, գրեալն ի 2. «Եւ մեծ մասն զաւրուն ասպատակ ամպեալ [յ] աւարի առին զՄարս, զԴողթն, զՆախճաւան», ուղղելի է ասպատակ կապեալ:

«Զվեց ամ գմիմեանց զհետ անբէր զաշխարհ սահմանացն Յունաց», Դ. ժա. 105:

## 21

ԱԳԱԹ. «Յերկրորդական գահ՝ իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր». 36. (համեմատէ. «Հանէր նստուցանէր դնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն». 38. = «Զոր (զհաման) յերկրորդ աթոռս իմում նստուցեալ պատուեցար». Եսթեր, ժԶ. 11. տես անդ եւ ժԳ. 3:) Ըստ այսմ եւ «Վկայեցին զմիասնական տէրութիւնն Երրորդական. 178.— «Յայտ արարեալ զմիարուն Երրորդական զաւրութիւնն». 311:

ԲԻԻԶ. «Եւ իրբեւ զեզրայր որպէս զորդի գրգեալ եղեւ ի նմանէ (Արշակ ի Չապհոյ), եւ երկրորդական զմեծ տունն տայր նմա յԱտրպատական աշխարհին». Դ. ժգ. 124:

=ԴԻՏ. Երկրորդական եւ Երրորդական կը գտնուին եւ յԱռաջին Դասի, այլ շթուին հարազատ. «Եւ զի ասէ. Յամին երկրորդի զմնացեալն (կերիցես), թուի ինձ եթէ հացամոլ իմն լինելոց էր. զի այնչափ բերիցէ երկիրն՝ զի եւ երկրորդական եւս բաւական լինիցի». Ոսկ. Ես. Լէ. 230. ուղիղ ընթերցուածն թուի երկրորդ ամին, հանգոյն Գէորգայ Սկեւոացոյ Մեկնութեանն նսայեայ. «Թուի ինձ, թէ հացաշատ իմն լինելոց էր տարին, զի եւ երկրորդ տարւոյն բաւական լիցի». (տես Հացաշատ ի նոր Հայկդ.)— «Զի զխուժաղուժ ազգին նինուէացւոց ուցիս զարուեստ, որք երրորդական աւուրբքն կարացին զայնպիսի մեղաց բարկութիւն ցածուցանել». Ոսկ. Վասն Պահոց եւ Աղաւթից, 30—31. Թոռնեան կը նշանակէ ի Հատ. Ընթերց. 451, ծան. 3, թէ այլ օրինակ ունի «երեք (կարգն երիւր) աւուրբքն»:

## 22

ԱԳԱԹ. «Եթէ միայն զայդ նախանձ խնդրեցես միամտութեամբ, զընակուժիւնն Պարթեւական՝ զձեր սեպհական Պայհան ի ձեզ դարձուցից». 36.— «Իբրեւ ի հայրնի ընակուժիւնն

1. Յորմէ եւ Մ. Խոր. Պատմ. երկրորդական գահ. Բ. ժա. 181. խդ. 260. խէ. 267. կր. 300. երկրորդականն. Բ. ժթ. 201. երկրորդական պատիւ. Բ. ձր. 367:

դարձեալ լինէր (տպ. էր. տես Կոր.—Ազաթ. թիւ 113), բազում գործս արութեանն քաջութեանն եւ անդ ցուցեալ». 144—145.—«Զի զՅունաց աշխարհն եւ զՀռոմոց քաջ դիակեմ, եւ զմեր Պարթեաց կողմանն, վասն զի *ընակութիւն* (2. իսկ տպ.՝ *ընութեամբ*) իսկ է մեր». 159.—«Եւ անդր հայեցուցեալ զտեսողն ի Հայրն ի գլուխն Քրիստոսի, եւ *ընակութիւն* ցուցանիցէ». 360.—«Եւ զհամբերութիւն նահատակեալ վկայիցն քաջութեան, եւ որ գործք գործեցան, եւ սրպէս *ընակութիւն* դաւրութեան նոցա». 652:

ԲԻԻԶ. «Թառնեաց զձեզ ի *ընակութիւն* կենդանութեան ընտանութեան վարդապետութեանն իւրոյ». Գ. ժդ. 39.—«Հասանել մարտնչել ի վերայ որդւոց եւ կանանց իւրեանց, . . . եւ ի վերայ աշխարհին գաւառացն *ընակութեանն*». Գ. իդ. 143.—«Զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, եւ զՅուրն ցանել ի վերայ նորա. եւ զկէսն՝ ի նոյն հողն զիւրոյ *ընակութեան* երկրին թողուր». ժդ. 166:

ՄԿԲ. «Զի իբր *ընակութեամբ* իմն հասեալ կայր ի տեղի անդր ինքնին Անսիոքոս եւ որ ընդ նմա բարեկամքն էին՝ առնուլ զգանձսն ամենայն». Բ. ա. 14.—«Զի մի հողոյ եւ մի պատանաց յիւրում *ընակութեան* աշխարհին մի արժանի լիցի». ժդ. 8:

—ԳԻՏ. Յօրինակսդ *Բնակութիւն* շնչանակեր Բնակելն կամ Բնակարան, գդ. Habitation, այլ Որ ինչ բնակ կամ բնիկ է ումեք, Սեպհականութիւն, գդ. Propriété. որով եւ Աշխարհ բնակութեան, Բնակութեան երկիր կամ աշխարհ՝ նոյն է ընդ Բնակ կամ բնիկ աշխարհ, երկիր, գդ. (Son) propre pays. զոր Ազաթ. կը կոչէ նա եւ Բուն աշխարհ, 32, 39: Զվերջին *ընակութիւնն* Բիւզանդայ համեմատէ ընդ յաջորդսդ ի նմին մատենի. «ուր *ընակ* իսկ իցէ հողն». 166. «ի վերայ ըուն գետնոյն». 168:

## 23

ԱԳԱԹ. «Յայնժամ տայր նմա պատիւ ըստ *աւրինաց* թագաւորաց». 38.—«Գալ կատարել առ հասարակ ամենեցուն զաւրէնս արքայական փեսային՝ *ըստ աւրինաց* (2. իսկ տպ.՝ *ըստ օրինացն*) *թագաւորաց*». 114:

ԲԻԻԶ. «Եւ էարկ նմա (Դրաստամատ՝ Արշակայ) բազմականս,

և րաշմեցոյց զնա. և եղ առաջի նորա ընթրիս ըստ արի-  
նաց լծագաւորաց, և եղ առաջի նորա զինի՝ որպէս արէն  
էր թագաւորացն». Ե. է. 207:

ՄԳԲ. «Եւ արարին հարսանիս մեծաւ պարաստութեամբ՝  
մեծաւ փառաք ըստ արէնս լծագաւորաց». Ա. Ժ. 58: Այս-  
պէս և այլուր. «Եւ զնոսա զրգել ըստ արէնս նախնեաց  
խրեանց». Բ. Ժա. 25:

## 24

ԱԳԱԹ. «Յանկարծ յեղակարծումս ժամանակի զէնս վե-  
րացուցեալ՝ զթագաւորն (Խոսրով) զիթաւալ կացուցեալ յերկիր  
կործանէին». 39:

ԲԻԻԶ. «Անկանէր ի վերայ բանակին թագաւորին Պարօից ի  
գիշերի յեղակարծումս ժամանակի». Գ. իդ. 143: Այլուր. «Զի  
կազմ կայցեն գործոյն, հարկանել յանկարծաւրէն յանպատրաս-  
տից յեղակարծումս ժամու՝ ի վերայ Մուշեղի». Ե. լե. 237.

— «Յանկարծ յեղակարծումս տարակարծի՝ քառասուն հազար  
զաւրսն Հայոց միանգամայն կոտորէին». Գ. ը. 19.— «Յանկար-  
ծաւրէն յեղակարծումս զաւրավարն Հայոց Մանուէլ հասանէր  
անկանէր ի վերայ բանակին Սուրենայ». Ե. լը. 247: Այլուր զար-  
ձեալ. «Զաւրն դարանակալ յանպատրաստից յանկարծաւրէն յայ-  
լակարծուց զնոսա յանկարծուստ յւրաքանչիւր բաղմականի ի  
վերայ հասեալք ըմբռնէին». Գ. ի. 52:

ՄԳԲ. «Յանկարծակի յաղեկարծում՝ (նոր Հայկդ. ի Յեղա-  
կարծ՝ յեղակարծում) ժամու զամենայն քաղաքն ի բունն ար-  
կանէր». Ա. Ե. 28:

— ԴԻՏ. «Յեղակարծումս ժամանակի չիք յայլ գիրս: Կայ  
ևեթ յերկրորդ Դասի մի անգամ. «Զի այսպէս յաղեկարծում  
ժամու՝ յարիցէ նա». Եփր. Աւետ. 334: Յեղակարծ է ի բա-  
ւիցն յեղ և կարծ, (յորմէ և Յեղափոխ). իսկ Աղեկարծ թուի

1. «Յանկարծաւրէն իբրև յեղակարծումս ժամու... զիմեալ յար-  
ձակէին». Մ. Խոր. Պիտ. Թ. ք. 535:

2. «Եւ այնպէս յանգես, առէ, աղէկարծումս ժամանակի՝ մերկ  
զնէ (այս ինքն՝ զկինն) իւրումն մարտակցին ցուցանէր». Մ. Խոր. Պիտ. Գ.  
ք. 377:



ի բառիցն այլ եւ կարծ, յորմէ եւ յԱյլակարծոց. (անս զվերջին վկ. Բիւղանդայ): *Յեղակարծ հանդիպած շեմ ի մտանազրուի ինս Առաջին Աշակերտաց. այլ կայ երկիցս Աղնկարծ. «Դարձաւ եմուտ այսն պիղծ յիսրայէլ, այն՝ որ ժամանակս բազումս կրթեցաւ նմանութեամբ ճշմարտութեանն, աղնկարծ եղև նա նոցա՝ յորժամ եկն Տէրն նմանութեանց».* Եփբ. Համար. 128. — «Որ . . . դամենայն շարիս պատրաստ իցէ զործել, *աղնկարծն, կեղակարծ, շարիմաց».* Ոսկ. Եփես. ԺԵ. 831:

25

ԱԳԱԹ. «*Չէնս վերացուցեալ՝ զթագաւորն դիթաւալ կացուցեալ յերկիր կործանէին».* 39:

ԲԻԻԶ. «*Չէն վերացոյց, եմուտ ի ներքոյ փղին, հարկանէր զներստ փղին».* Գ. իբ. 139. (նոյն պատմութիւն է՝ զրիթէ մի եւ նոյն բառերով եւ ի Մկր. «*Չոգաւ մինչեւ եհասս ի փիղանդր նշանաւոր, զէն վերացոյց եւ եմուտ ի ներքոյ, եհար եւ անդէն կործանեաց».* Ա. գ. 44—45:) Բիւղանդ կ'ըսէ այլուր. «*Չէն (տպ. զէնն) ի վեր առեալք».* Գ. Ժբ. 47. ըստ այսմ եւ «*Մտրակ ի վեր առեալ. Ե. խգ. 253. — «Ի վեր առեալ զսուսերն».* Գ. Ժգ. 125:

26

ԱԳԱԹ. «*Տաւն մեծ ուրախութեան առնէր զաւրն զայն (Արտաւան). եւ բազում ուխտ ատրուշանացն կատարէր».* 41:

ԲԻԻԶ. «*Նախ ես, ասէ, շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին, այս ինքն՝ տուն կրակին պաշտելոյ».* Գ. իգ. 140. — «*Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, եւ զմարդիկ հնազանդէին արիւնացն Մազղեղանց. եւ բազում յիւրեանց սեպհականն շինէին ատրուշանս».* Ժթ. 179. — «*Իսկ Մուշեղ զաւրավարն Հայաստանեայց շրջէր ընդ երկիրն, եւ աւերէր զատրուշանսն Մազղեղանցն».* Ե. ա. 188:

— ԴԻՏ. *Ատրուշան, ինչպէս կը մեկնուի առ Բիւղանդայ, է Տուն կրակի պաշտելոյ, այս ինքն՝ զկրակ պաշտելոյ՝.* գգ. Temple

1. Իսկ առ Սանփանոսի Ուսպելեան, Պատմ. Միւննաց, ԺԷ. 41, 42 (տպ. Էմին), Ատրուշան կը նշանակէ Չարժական սեղան հրոյ:

du feu. դոր եղիշէ ի Պատմութեան Վարդանանց կը կոչէ եւս  
 Կրակատուն: Երմատք Ատրուշան բառի են պարսկերէն Ատէր  
 կամ Ազէր=Գրակ, հուր, եւ սանսկրիա Ուշ=Այրեմ, Վառեմ,  
 (ush, brûler. տես Ustion ի Լիարէ, *Dict. de la langue française.*)  
 Սխալ է Վիկտոր Լանդուայի տուած ստուգարանութիւնն ի *Col-  
 lection* եւ այլն, շ. Բ. 186 ը. ծան. 4. «Le mot *adrouschan*,  
 dont se servent les Arméniens pour désigner les temples ou  
 chapelles où les *mobeds* entretenaient le feu sacré (*adéran*),  
 est la transcription du mot *Atesch-dan*, c'est-à-dire le «vase  
 qui contient le feu», եւ այլն:—Ատր արմատն կը գտնուի նա  
 եւ յանուան Ատրպատական<sup>1</sup> գաւառի, եւ ի բառն Ատրագոյն=  
 Հրագոյն՝ յերրորդ Դասի. «Հուրս այս ի թանձրութիւն մտեալ եր-  
 կաթոյն՝ ի ներքուստ եւ արտաքոյ իբրեւ հրագոյն գործէ. եւ որ  
 ցուրտն յառաջ էր՝ այն եռանդուն լինի, եւ որ թուին յառաջ էր՝  
 այն *ատրագոյն* եղեալ շողս արձակէ». Գիւր. Գոչ. ժէ. 375.—  
 «Յափշտակեաց ի միջոյ հրոյն *ատրագոյն* շիփնեալ դերկաթն  
 ձեռամբացի». Պատմ. Հար. Եղիպա. 216. որ յայլում օրինակի  
 գրեալ է. «Յափշտակեաց ի միջոյ հրատին *ատրաշիկագոյն* (տպ.  
 արտաշիկագոյն) գերկաթն եռացեալ՝ ձեռամբն»:

27

ԱԳԱԹ. «Անդ ոմն պրծեալ սպրեցուցանէր ի հինէ անտի  
 յորդուցն Խոսրովու՝ թագաւորին Հայոց՝ *մանկիկ մի փոքրիկ,  
 անուն Տրգատ*». 41—42:

ԲԻԻԶ. «Բայց յազգէն յայնմանէ (Կամսարականաց)՝ *մանկիկ  
 մի փոքրիկ, անուն Սպանդարատ, թաքուցեալ սպրեցուցանէր  
 սպարապետն զաւրափարն Հայոց Վասակ*». Գ. ժթ. 129, Այլուր.  
 «Սակայն զՎաշէի զաւրավարի *փոքրիկ մանկիկ մի՝* գնորուն  
 գորդի՝ ի հայրենի բարձ գահուն մատուցանէին». Գ. ժա. 28:

—ԴԻՏ. Կայ առանձինն *Մանկիկ ի Տովբիթ*, ժ. 7. կայ

1. Ըստ Ստրաբոնի (Գիրք ժԱ. գլ. ժգ. հտժ. ա.) յանուանէ *Atropa-  
 tès*=Ատրպատ նախարարի կոչեցաւ Ատրպատական: Այլ նոյն իսկ Ատրպատ  
 անուանդ արմատն է Ատր:

և Մանկուկ յոսկ. Երբ. Իէ. 544, եթէ շիցէ գրելի Մանկիկ կամ Մանուկ:

28

ԱԳԱԹ. «Եւ զայլ մարդիկ երկրին խաղացոյց, և զաշխարհն յինքն գրաւեաց». 42.—«Զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն». 49:

ՔԻԻԶ. «Յինքն գրաւել զաշխարհն Հայոց». Զ. ա. 261:

29

ԱԳԱԹ. «Արդ՝ երթեալ, սնեալ և ուտեալ Տրդատէս առ կոժսի ումեմն՝ Լիկիանէս անուն կոչեցելոյ (2. իսկ տպ.՝ կոչեցեալ. տես Կոր. — Ագաթ. թիւ 52): Իսկ որդի Պարթեւին (Գրիգոր)՝ . . . սնանէր և ուսանէր ի Կեսարիայ Կապադովկացոց քաղաքին». 42:

ՔԻԻԶ. «Ի տղայութենէ սնեալ և ուտեալ (ներսէս) ի Կեսարացոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետաք». Գ. գ. 68.—«Պատրաստեցեր զիս տառապեալս սնանել և ուսանել ընդ ձեռաք. . . ներսիսի՝ քո պաշտանէլին». Ժէ. 175:

30

ԱԳԱԹ. «Ուտեալ ևս (Գրիգորի) զքրիստոսական դպրութեան նանգամանս». 42—43:

ՔԻԻԶ. «Որք զնանգամանս զիտէին Հելլէն կամ Ասորի դրպրութեանց». Գ. ծգ. 33:

31

ԱԳԱԹ. «Պատգամս յղէր արինակաւս այսուիկ, եթէ և և այլն. 44.—«Մինչդեռ խորհէր Տրդատիոս խաւսել և այլ որոքով ընդ նմա, և յղել պատգամ և խոստանալ կեանս և պահիս». 101:

ՔԻԻԶ. «Պատգամ յղէր առ կին մեռելոյն. ասէ և այլն. Գ. ծե. 121.—«Պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն». անդ, 122.—«Պատգամ յղէր սպարապետն . . . առ թագաւորն». Ե. լէ. 240.—«Թագաւորն պատգամ յղէր պատասխանւոյն առ

զարբափարն», անդ, 241.—«Ետուն նմա զյղեալ պատգամնն հնազանդութեան», լր. 245: Այլուր. «Զայսպիսի պատգամն առաքէր Տիրիթն». Գ. ժե. 121:

[Ա Դաս]† «Հասին իրքն յարքայ. յղեաց առ նա պատգամ, եւ ասէ». Մար. Պամ. Արեւ. Վկ. 32: Այլուր. «Առաքեաց պատգամ առ արքայ, եւ ասէ». 19:

—ԳԻՏ. Հանգոյն Մարութայի երկրորդ վկայութեանն կըրտուի եւ այլուր յԱռաջին Դասի. «Զարհուրեալ կին դատաւորին (Պիղատոսի) յանուրջն՝ առաքէր պատգամն առ այր իւր». Սեբեբ. ժԳ. 214. (սր ի Մտթ. ԻՅ. 19, զրեալ է. «Առաքեաց առ նա կինն իւր, եւ ասէ»:) Իսկ թարգմանիչն եւս. ժմ. կըսէ. «Պատգամնաւորէր (Յեփթայէ) առ թշնամիսն դայս արինեակ բանից. եւ այժմ դու լուս ինչ իցես, ասէ, քան զԲագակ». 81.—«Պատգամնագնաց լինէր, դաշինս կռէր, թողուլ զերկիրն եզիպտացոց՝ յուպէտ յուկամ առանց վնասու գնալ». 110:

## 32

ԱԳԱԹ. «Ես աւատիկ ախոյեան ելանեմ՝ քեզ ի մերոց զարաց աստի». 44:

ԲԻԻԶ. «Իսկ յորժամ զայն լսէր Մերուժանն, . . . յառաջ խաղացեալ՝ ախոյեան ելանէր Մանուելի (տպ. Մանուէլն)». Ե. խգ. 254.—«Թագաւորն Վարազդատ եւ սպարապետն Մանուէլ զնիղակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին». լէ. 241: Այլուր. «Հայոց գնդին Պապայ արքային՝ ես ինձէն ելից իմով գնդաւս (տպ. գնդովս) նահատակ». Ե. դ. 192:

—ԳԻՏ. Բիւզանդայն Սահատակ ելանեմ՝ կայ եւ ի վերնագրի վերջին Սաղմոսին՝ որոյ սկիզբն է «Փոքր էի ես յեղբարս իմ». «Այս սաղմոս ինքնագիր Դաւթի արտաքոյ թուոց. ի ժամանակի՝ զի ել նա նահատակ ընդդէմ Գողիազու»:

## 33

ԱԳԱԹ. «Հրաման տայր հրովարտակս եւ դեսպանս առնել առ իշխանս եւ զաւրս զաւրութեան իւրոյ (2. իսկ տպ.՝ իւր)». 45:

ԲԻԻԶ. «Արար ընդ նմա գամենայն զզաւրս զաւրութեան իւրոյ». 2. ա. 261:



34

ԱԳԱԹ. «Առեալ եւ Լիկիանէ զբուն զունդն՝ որ ընդ խրով ձեռամբն էր»։ 45:

ԲԻԻԶ. «Երթայր գտանէր գՄանէսան թագաւորն Մազքթաց բուն զնդանն»։ Գ. է. 16:

35

ԱԳԱԹ. «Յայնժամ ետուն կազմութիւն մարտի՝ առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ»։ 47:

ԲԻԻԶ. «Եւ յետ այսորիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել»։ Ե. լէ. 241:

— ԳԻՏ. Բիւզանդ կ'ըսէ այլուր. «Ապա [սմա] եւս պատահէր պատերազմաւ Վասակ՝ ամենայն զաւրաքն Հայոց»։ Գ. խր. 154. որում նման եւ ի Մկր. «Իբրեւ հետս նիկանովր եթէ յայտնեցաւ խորհուրդս նմա, խաղաց պատահել նմա պատերազմաւ ի կողմանս Փարսալայ»։ Ա. է. 31: Կայ այս եւ յԱռաջին Դասի. «Զի ի Տեառնէ կարծբանային սիրտք նոցա պատահել պատերազմաւ Իսրայելի՝ զի սառակեցին»։ Յետո, ԺԱ. 20:

36

ԱԳԱԹ. ա. «Հրաման ել ամենեցուն՝ թէ ինքն իսկ կայսրն (2. իսկ սպ.՝ ինքն կայսրն) իցէ»։ 47—48:

բ. «Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր զնայր ի ձմերոց»։ 103. — «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր ամենայն զաւրաքն հանդերձ . . . յԱրտաշատ քաղաք»։ 584: Ըստ այսմ եւ այլուր. «Զոր եւ ինքն իսկ մարզարէն՝ զմուտս Աւեհայոյն երգէր»։ 296. — «Ապա եւ ինքն իսկ մեծն Գրիգորիոս ելանէր զտեղեւքն (տպ. զտեղօքն) կարգելովք»։ 643. (կարկառեալ ի Վարուցն Մաշտոցի, Ե. 16:)

ԲԻԻԶ. ա. «Եւ այսպէս հանդերձ նորաք ինքն իսկ կայսրն . . . մտանէր ի բանակն Պարսից»։ Գ. խա. 55:

բ. «Ինքն իսկ թագաւորն Արշակ երթայր ընդ առաջ նորա (Ներսիսի)»։ Գ. Ժգ. 110:

— ԳԻՏ. Ինքն իսկ կայսրն, թագաւորն համար չիմ յայլ

գիրս: Կայ ի Յովհ. Գ. 44. «Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց, եթէ մարգարէ յիրում գաւառի պատիւ ոչ ունի», Կայ եւ յմակեփեա. Գ. Յորդ. 702. «Ինքնին իսկ թագաւորն եկեալ հասեալ է ի սեղանն, եւ դու կաս եւ յաւրանչես եւ ձգախոս»:

37

ԱԳԱԹ. «Մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն՝ ի միմեանս հասանէին», 48:

ԲԻԻԶ. «Հասին մերձեցան ի միմեանս զունդքն երկոքեան». Ե. դ. 193:

ՄԿԲ. «Հասին ճակատքն երկոքեան ի միմեանս». Ա. է. 42.—«Եւ իբրեւ մտրան սաստկացաւ, զունդքն ի միմեանս հասին». Բ. ժբ. 11. (համեմատէ ընդ Քիւզանդայ.)—«Իբրեւ կողմանք զաւրացն երկոցունց ի միմեանս հասանէին». Ժե. 20:

—ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի. «Յաջորդէր զպատերազմն՝ զորմէ ասացան իսկ՝ Դեմետրիոս, որ էր որդի Դեմետրի: Եկեալ հասեալք ի միմեանս Դեմետրի ի Սելեւկիայ<sup>1</sup>, եւ Անտիոքայ՝ որդւոյ Աղեքսանդրի՝ յԱտրուց եւ յԱնտիոք քաղաքէ, յաղթէր Դեմետրիոս». Եւս. Ժմ. 166:

38

ԱԳԱԹ. «Թագ կապեալ ի գլուխ նորա, եւ ծիրանեք զարդարեալ մեծացոյց զնա». Այլուր. «Եւ թեզ թագ եղեալ փառաւորեցից». 36:

ԲԻԻԶ. «Կապեաց թագ ի գլուխ նորա, եւ ետ նմա կին զքոյր իւր զԶրուանդուխտ». Զ. ա. 261:

—ԴԻՏ. Միւս Դասքն հունին Թագ կապեմ՝ ի գլուխ ուրուր, այլ Թագ կապեմ ումեր. «Մերն զոր էառ նա՝ պա-

1. Սխալ է ի տպագրին Դեմետրի Սեղեւկեայ, եւ սխալ հասկացած է հրատարակիչն՝ Չ. Մկրտիչ Ազեքեան՝ «Դեմետրի որդւոյ Սելեւկիայ», ինչպէս կը թարգմանէ եւ յատիներէն. «(Itaque) Demetrio Seleucis, եւ այլնն Ուղիղ ընթերցումսն է Դեմետրի {Ի} Սելեւկիայ, այս ինքն՝ ի Սելեւկիայ քաղաքէ: «Դեմետրիոս, որդի Դեմետրի», կամ «Դեմետրիոս Դեմետրի», ինչպէս կ'ըսէ Եսեբիոս, Ժմ. 166, 170, է Դեմետրիոս Բ նիկանովը, որդի Դեմետրիոս Ա Սոսերի, որդւոյ Սելեւկոս Գ Փիլոպատովրի:

տառով նստի, եւ թագ կապեաց նմա, եւ նստոյց ընդ արքայի».  
Զգան, Զ. 123.—«Եսոյր բեհեզեայ թագ կապեացէ նմա, եւ  
մանեակ ոսկի ի պարանոցի նորա».  
Ա. եղր, Գ. 6: Իսկ չէզոքա-  
բար՝ կ'ըսեն. «Աղբատ՝ որ թագ կապէ իւր, սպանանէ զնա  
թագաւոր».  
Զգան, Թ. 181.—«Կապեաց նա թագ մտանկ  
յարբայութիւն անդրանկանն».  
Եփր. Համար. 90. (սոյնպէս եւ ի  
Մկր. «Թագ կապեցին իւրաքանչիւր յետ մահու նորա».  
Ա. ա. 10.) կամ թագ դնեմ. Սիրաք, ԺԱ. 5. Եւս. Ժմ. 111. Թագ  
դնեմ ի գլուխ. անդ, 94. Առնում զթագն. անդ, 92. Թագ  
առնում. անդ, 112. Քր. 140. Եփր. Աետ. 297. Թագ ի գլուխ  
առնում. Ոսկ. Մտթ. Բ. իէ. Յորդ. 745. (տես Դնել զթագ  
նախնեաց իւրոց, զԱսիացոցն, եւ ի Բիւզ. Ե. լէ. 241. Մկր. Ա.  
Ժա. 13. Դնեմ թագ. Մկր. Ա. ժր. 39. Թագ առնում. Մկր.  
Ա. ք. 14. Բ. Ժ. 11): Այլուր կ'ըսուի ներգործարար. «Ի նմին  
ժամանակի (Գայիոս) ետ թագ Ագրիպպայ, եւ կացոյց զնա  
թագաւոր ի վերայ թշնամոյ նորա».  
Եւս. Եկեղ. Բ. դ. 83—84.  
—«Եւ հաճոյ թուեցաւ ետթեր արքայի յոյժ, . . . եւ եղ ի վերայ  
գլխոյ նորա զթագ կանանցն».  
Ետթ. Բ. 17:

39

ԱԳԱԹ. «Գումարեաց ի ձեռս նորա դաւրս բազումս յազնա-  
կանութիւն նմա, եւ արծակեաց յիւրական աշխարհն Հայ-  
ոց».  
48:

ԲԻԻԶ. «Եւ զինքնին Տիրան՝ թագաւորն Պարսից հանդեր-  
ձեաց. . . , եւ արծակեաց յիւր աշխարհն (2. իսկ տպ.՝ աշ-  
խարհէն) յերկիրն Հայոց».  
Գ. իա. 57: Այլուր. «Արծակէի զնա  
խաղաղութեամբ յիւր աշխարհն».  
Գ. ծդ. 166.—«Տասուցեալ  
ընդ նոսա . . . արծակեաց զնոսա յերկիրն իւրեանց».  
Ե. լէ. 239:

40

ԱԳԱԹ. «Ասէ Գրիգորիոս. Ես քեզ միամտութեամբ վաւ-  
տակեցի».  
52:

ԲԻԻԶ. «Հայր սորա ի վերայ հաւրն իմոյ մեռաւ, եւ սա միա-  
մտութեամբ մինչեւ ի մահ վաստակեալ է».  
Ե. դ. 199.—  
«Միամտութեամբ եւ արդար վաստակով ջանայր հանապաղ եւ

վաստակէր ի վերայ թագաւորութեանն». ի. 213.—Քոխանակ  
ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր . . . միամտութեամբ  
առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք». լէ. 240:  
ՄԿԲ. «Աչ հատոյց նմա ըստ միամտութեան վաստակոց  
նորա». Ա. ժա. 53:

==ԳԻՏ. Միամտութեամբ վաստակեմ, Միամտու-  
թեան վաստակը կը նշ. Հաւատարմութեամբ ծառայել, Հաւա-  
տարիմ ծառայութիւն:

41

ԱԳԱԹ. «Այլ ոչ թողից քեզ զանարգանս զիցն զոր թըշ-  
նամանեցեր զնոսա». 56:

ԲԻԻԶ. «Այլ ոչ թողից քեզ (տպ. եւ 2.<sup>1</sup> զքեզ) եւ որ-  
դոց քոց զվրէժ նախնեաց իմոց». Գ. ծղ. 167:

42

ԱԳԱԹ. «Եւ Հրեշտակքն այն են՝ որ սպասաւորքն են նո-  
րա մեծութեանն եւ աստուածութեանն». 58: Տես անդ դարձեալ.  
«Եւ անպակաս ուրախութիւնքն այն են՝ յորժամ զիւր սիրե-  
ցեալսն . . . անմահացուցէ . . . : եւ զալուսան այն է՝ յորժամ  
զայցէ առնել զայս ամենայն»:

ԲԻԻԶ. «Եւ խոստովան եղև (Մերուժան Արծրունի)՝ թէ  
աստուածք այն են՝ զոր թագաւորն Պարսից պաշտէ». Գ.  
իգ. 140:

43

ԱԳԱԹ. «Եւ յետ եւթն ւաւորն ետ հրաման եւ լուծին զնա ի  
շարաշար եւ ի դառն կապանացն». 62:

ԲԻԻԶ. «Յայնժամ ի դառն կապանացն պատուհասէն մե-  
ռանէր եպիսկոպոսն Եսեբրիոս ի ներքս ի բանտին». Գ. ը. 98:

==ԳԻՏ. Կայ յեւս. Եկեղ. «Իբրեւ ի շարաշար տերանց ազա-  
տեցան, եւ արձակեցան ի իւրտ կապանաց». Բ. գ. 82.—«Դա-  
տաստանքն Աստուծոյ ժամանեցին ի վերայ նորա, եւ իբրեւ ի հար-  
կէ կապեցին զնա ի շարաշար կապանաց անտի». Է. իը. 593:



ԱԳԱԹ. Հիրբե զէշ եւ իրբե զջորի՝ այնպէս ըստանձնեալ (տպ. ըստանձեալ) բնոինս պահեցերս. 62.—«Արդ՝ առեալ սկայազարն (Տրդատ) հայկաբար զուժ արձանսն . . . ստանձնեալ բերեալ ի վկայարան տաճարացն». 576:

ԲԻԻԶ. «Ապա Կոմս եղբայր իւր ըստանձնեալ առեալ բառնայր (զՄանուէլ), եւ տանն տանն խրատախ բերէր ըստ անձին զայնչափ այրն զանհեղեղ դանարի». Ե. լէ. 239:

—ԳԻՏ. *Ըստանձնեմ*, ի բառիցն Ըստ եւ Անձն, է Չալակել, գգ. Charger sur son dos. Այս բառ թուի հնարեալ ի Կորին Վարդապետէ, զի Առաջին եւ Երկրորդ Դատուց մասնագիրք կ'ըսեն յաճախ Առնում ըստ անձին, Բառնամ ըստ անձին, Ունիմ ըստ անձին, (տես եւ ի Բիւզ. Բերեմ ըստ անձին,) այլ *Ըստանձնեմ* չիք ի նոցա գրութիւնս: Տես յԱռաջին Դատի. «Չտեսանիցէք զնոսա՝ որ Հնդամարտիկքն կոչին, յորժամ չգուցէ ախոյեան ի միջի, զիւրդ զշմրոցն լնուն աւազով եւ առնուն ըստ անձին, զի այնու զրնաւ ոյժն փորձիցնն». Ոսկ. Մտթ. Բ. ք. Յորդ. 513.—«Ժսկ առ անդամալուծան՝ մահիճքն (տպ. մահիճսն) զոր երարժ ըստ անձին՝, կարէին հաւանեցուցանել (զՉրեայս)». անդ, ԺԵ. 592.—«Եւ զի չէին տեղեակ առնն, նշան տայր նոցա՝ որպէս մարգարէն Սաւուղայ. Գտանիցես, ասէ, զոմն՝ զի ելանիցէ եւ տիկ ունիցի ըստ անձին». անդ, Գ. իք. 98. (—«Գտցես անդ երիս արս . . . միոյն ըարձեալ ուլս երիս, եւ միոյն ըարձեալ երիս ամանս հացի, եւ միոյն ըարձեալ տիկ մի զինուոյ. Ա Թագ. Ժ. 3.)—«Արդ առեալ այրն (անդամալոյժն) զմահիճսն ըստ անձին՝ երթայր ընդ մէջ բազմացն». Ոսկ.

1. Զարմանք է որ Դ. Փարպեցի՝ յետ ընթեռնւոյ զԱզաթանզեղ եւ զԲիւզանդ՝ չըսեր *Ըստանձնեմ*, այլ *Բառնամ ըստ անձին*. «Եւ ի նմին Ժամու ըարձեալ ի մէնջ զմի մի ըստ անձին՝ տարաւ հեռի». Պատմ. 216.—Եւ այլ մտանազիրս յետ Ոսկեզարուն՝ կարի յաճախ կը զտեսի *Ըստանձնեմ*—Չալակել. կայ եւ *Ըստանձնեմ զպատասխանատուութիւն*, որ է գգ. Assumer la responsabilité. ի Դէորգայ Սկեւացույ Մեկնութեան Գործոց Առաք. Գ. Բարոյական, 43: Գր. Մագիստրոս ըսած է *Ըստանձնեցուցանեմ ումեր*, գգ. Charger sur le dos de quelqu' un.

(եփրեմ?), Յանդամայոյձն, 851: եւ յԵրկրորդ Դասի. «Բարձ (Սամփսոն) զգրունս քաղաքին՝ սեմովքն եւ դռնափակաւքն հանդերձ, առ ըստ անձին, եւ բարձ գնաց տարաւ եհան ի վեր ի լեառնն»։ Եփր. Դաս. Գ. 343.—«Այլ զի ցուցցէ եթէ զկատարեալ առողջութիւնն ետ նմա (անդամալուծին), եւ զմահիճանն եւ առնուլ ըստ անձինն»։ նոյն, Համար. 134.—«Ասեն (Հրեայքն). Ով հրամայեաց քեզ առնուլ զմահիճանն ըստ անձին ի յաւուր շարաթու. . . սի, ասեն, հրամեաց քեզ առնուլ զմահիճս քո ըստ անձին: եւ զի կամեցան նորա . . . պատահասի զայն՝ որ այդ մահիճանն իւր ըստ անձին, յայտնապէս քարոզեաց զբժշկութիւն նորա»։ անդ, 135: Ի Յովհաննու Աւետարանին կ'ըսուի պարզապէս. «Ա՛ն զմահիճս քո», Ե. 8—12:

45

ԱԳԱԹ. «Վերացուցեր զնա (զԵնովք) . . . յանմահութեան վիճակն»։ 67.—«Վերացուցեալ զնա (զԵնովք) կենդանոյն յանմահութեան վիճակն»։ 225: ԲԻԻԶ. «Զի անմահութեան վիճակին հասուցես զմեզ»։ Ե. դ. 197:

46

ԱԳԱԹ. «Եւ միահաղոյն ածեալ լինէր զարքայութիւն քո, զոր պատրաստեցիր կանխաւ ի փառս մեր՝ մինչ չեւ էր աշխարհ»։ 67.—«Զի ինքն Որդին Աստուծոյ . . . միահաղոյն երարձ զմեզս աշխարհի»։ 503: ԲԻԻԶ. «Անունդ առնել միահաղոյն զտոհմն (տղ. զտոհման) Ռըշտունեաց եւ զտոհմն Արժրունեաց»։ Գ. ժբ. 46.—«Միահաղոյն իսկ յիւր վտարել զսահմանս Հայաստան երկրին»։ Իա. 55.—«Կամէր հալածանս՝ տանջանս՝ շարշարանս միահաղոյնս (միահաղոյն?) յարուցանել»։ Գ. ը. 96.—«Միահաղոյն եկն սատակումն ի վերայ նոցա»։ Ժգ. 112.—«Զամենայն որումն . . . միահաղոյն վախճանեաց»։ անդ, 113.—«Միահաղոյն ապտամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ»։ Ժ. 159.—«Յաղագս կոչելոյ կրկին անգամ Չապուհ արքայի զԱրշակ արքայ Հայոց, եւ նորա երթալոյն, եւ միահաղոյն կորնչելոյն նորա»։ Ժգ. վերնագիր.

164. (որ յերես 64 գրեալ է միհանգոյն կամ միահանգոյն։)

— ԳԻՏ. Միահաղոյն, ի բառիցն Մի եւ Հաղ, է Միանգամայն: Հաղ, իբր Ընգամ, կը գանուի յնսկերերանի Մեկնութեանն ծննդոց, զորոյ թարգմանութեան ժամանակն կ'անգլտանամ. «Եթէ տեսանէ զմեզ զգոյշս եւ զուարթունս, թէպէտ եւ մի հաղ եւ երկիցս ձեռն արկեալ ջանայ, . . . մեծաւ ամաւթով յետս դառնայ»: Կայ եւ ի Խրատս Սերեպիոնի եպիսկոպոսի Թմուացոց, Վարք Հարանց, Ջ. Բ. 517. «Մի հաղ կերիցես յաւուրն եւ տացես զպէտս մարմնոյ քում»: Ըստի է եւ Հաղ քան զհաղ առ Բիւզանդայ, նոյն ընդ Գամ քան զգամ, զգ. De plus en plus. «Ժրբի հաղ քան զհաղ յաւել լինել պատերազմ», Գ. ի. 130. — «Ժսկ նա հաղ քան զհաղ ճշէր, բազմացուցանէր զվայելին». խղ. 155. — «Թագաւորութիւնն հաղ քան զհաղ նորոգէր, եւ իբր ժամանակին հաղ քան զհաղ յառաջադէմաջողէին». Ե. ա. 188. (որ ի Մկր. կ'ըսուի Գամ քան զգամ. տես ի Բիւզ. — Մկր. թիւ 95.) Միւս Գասքն չգիտեն Հաղ եւ Միահաղոյն, այլ կ'ըսեն ամէնուրեք Ընգամ կամ նուազ, եւ Միանգամայն. համեմատէ զԲիւզանդայն «Միահաղոյն եկն սատակումն ի վերայ նոցա» ընդ յաջորդիւ. «Միանգամայն հասցէ սատակումն ի վերայ ամենայն քաղաքաց». Երեմ. ԽԸ. 8: նոր Հայկազեանն կը յիշատակէ Համահաղոյն իբր յնսկերերանի Մեկնութեանէն Նսայեայ. «Զի թէ համահաղոյն ածէր զպատիժան, վաղուց արդեօք բարձեալ էր զմարդիկ». բայց սխալ է. անշուշտ ի Գէորգայ Սկեւացոյ Մեկնութեանէն Նսայեայ է հատուածդ, ուր Ոսկերերանի թարգմանիչն կ'ըսէ. «Եւ թէ ըստ մեղացն անդէն վաղվաղակի հատուցանէր, ի վաղուց հետէ ջնջեալ լինէր ազգ մարդկութեան». ԼԵ. 217:

47

ԵԳՄԹ. «Զոր դու առ քում բարերարութիւնդ (2. խկ տպ.՝ առ քո բարերարութեանդ) շնորհնցեր մարդկան». 68:

ԲԻԻԶ. «Առ քում բարեսացութիւնդ տեսեր զիւրդ մեծարեցի զքեզ». Գ. ժ. 24: Ելլուր. «Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեալ լիցի զքեզ». Ե. լէ. 241:

— ԳԻՏ. Առ քում բարերարութիւնդ կամ բարեսացութիւնդ չիբ յայլ գիրս: Կայ միայն յԱռաջին Գասի՝ հանգոյն Բիւ-

զանդայ երկրորդ վկ. «Ան իւրում բարերարութեանն . . . ներեաց նմա ինն հարիւր եւ երեսուն ամ». Եփնիկ, 154.—«Ազգի ազգի յորջորջմունս (տպ. յորջորջմանս) յանձն առնու առ իւրում բարերարութեանն». Սեբեր. Բ. 9: Տես առ իւրում բարերարութեանն եւ յմսկ. Ա Տիմ. է. 60. Եփես. ԺԳ. 820:

48

ԱԳԱԹ. «Զի փայան (խաշին) ընդ դրաւշեայ փայտիցն, . . . եւ արիւնն իւր ընդ նուազացն ուրախութեան արեանցն». 74: Բիհ՝Զ. «Որպէս զառաջին ուրախութեանցն նուազն մատուցին՝ արքային Պապայ, եւ առ հասարակ թմրկահարք եւ սրընգահարք . . . պէսպէս ձայնիւք բարբառեցան». Ե. լր. 232:

ՄԿԲ. «Եւ ետ տանել նմա նուազս ոսկիս եւ սպաս տաճարին. եւ ետ նմա իշխանութիւն ըմպել ոսկի նուազաւք».՝ Ա. Ժա. 58.—«Քանզի բազում նուազս ոսկիս կորուսեալ ի միջոյ համարուէն». Բ. դ. 39.—«Ժրրիւ յերկարագոյն նուազաւք՝ զրանիւք անկանէին, կոչեաց զփղապետն». Գ. ե. 9:

—ԳԻՏ. Նուազ կը նշանակէ յօրինակսդ Մեծ բաժակ գինւոյ, գգ. Coupe, եւ է նոյն ընդ պարսկականին Նիֆաղ կամ Նիւֆաղ, զոր այսպէս կը մեկնէ Գէորգ Տէր Յովհաննէսեան յիւր

1. Յորմէ եւ Եղիշէ ի Պատմութեան Վարդանանց. «Եւ իրրիւ բոլորեցաւ աղուժք բազմականին, եւ հաղորդեցան ամենեքեան ի կերակուրն զուարթութեամբ, յոտն եկաց Սուրբն Յովսէփ, եւ սկսու զուրախութեան նուազս մատուցանել, եւ ասել այսպէս». Ը. 119—120. զոր նոր Հայկզ. թէպէտ կը գրէ ի նուազ—Բաժակ, այլ ոչ ուղիղ կը յաւելու երկրորդ մեկնութիւն ի փակագիծս. «ուր մարթ է իմանալ և բարբառ աւետաւոր, կամ զուշակութիւն աւետարեր ժամու»: Տես զարձեալ ի նմին մատենի. «Յերկարէր զնուազսն ուրախութեան». Գ. 48. աստ եւս նուազ է Բաժակ, կամ ընդարձակ առժամք Գինեբրուք, ինչպէս կը հասկանայ Հախճախեան, Բագ. Հայ.—Իտայ.:

2. «Տայ եւ առնն քաջին եւ պատուականին Երզամայ . . . տարզալ ունել ոսկի եւ պատառաքաղ, եւ ոսկեղինաւք ըմպել նուազաւք». Մ. Խոր. Պտմ. Բ. խէ. 267:

3. Ջայս վկայութիւն նոր Հայկզ. կը գրէ ի նուազ—Բաժակ. այլ Հախճախեան, անդ, բոլորովին այլազգ կը մեկնէ. «Նուազ. պահ, ժամ, ժամանակ. Tempo, ore. Յերկարագոյն նուազօք զրանիւք անկանիլ. ընդ երկուր դրուցել. Esser proliisso, prolungare il discorso».



Պարսկերէն—Հայերէն Բառարանին. «Մեծ կթղայ գինոյ, որով  
ի վախճան բաղմականի խրախճանութեան լի գինի ըմպեն. Պիւ-  
յիւր գառէն»։ Այլուր Բիւզանդ փոխանակ Ուրախութեանց  
նուազ՝ կըսէ. «Մինչդեռ թագաւորն Պապ զուրախութեան  
զինին ունէր ի մատունս իւր»։ Ե. լր. 232—233. կայ այս եւ  
յԱռաջին Գասի. «Մի դանդաղեցի աղախինդ գեղեցիկ գալ առ  
տէր իմ եւ փառաւորել ի նմանէն, եւ ըմպել ընդ նմա զզինի  
ուրախութեան մեք հանդերձ». Յուդիթ, ԺԲ. 12:

49

ԱԳԼԹ. «Եւ ոչ զբրածեծ դանին գրեաց ինչ զվիշտս. զի  
ջարդեալ էր ամենայն մարմինն յոգորածեծն առնելոյ». 90 (ըստ  
2.): Այլուր. «Զի մինչդեռ կայցէ գլխիվայր՝ ծխեսցեն ի ներքոյ  
նորա աղբ, եւ արբցէ զան սաստիկ քրաւք դալարովք»։ 65:

ԲԻԻԶ. Բրածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աս-  
տուծոյ, սուրբ Էրանելի (ապ. Աստուծոյ սուրբ, Էրանելի. տես  
աստէն թիւ 79) մանուկն Յուսիկ». Գ. Ժբ. 32:

[Ա Գաս]† «Երիցս քրածեծ եղէ». Ոսկ. Բ Կոր. (նոր Հայկզ.  
ի Բրածեծ. որ յԲ Կոր. ԺԱ. 25, գրեալ է. «Երիցս ճաղկեցայ».  
այսպէս եւ յՈսկ. Փիլիպ. Գ. 383. երբ. ԻԸ. 549. եւ այլն):

—ԳԻՏ. Նշանաւոր է նա եւ Բրածեծ (եւ Ոգորածեծ)  
բարգութեանց շղանուիլն ի գիրս միւս Գասուց: Եւսերեայ Եկե-  
ղեցականին թարգմանիչն ըսած է. «Եւ հրամայեաց եթէ որ մի-  
անգամ ոք աղաղակեցէ՛ քրաւք ծեծեսցեն զնոսա». Բ. դ. 90.  
գոր Կորինն պիտի ըսէր քրածեծ արասցեն: Տես անդ եւ «Չարդ-  
կաւ հարաւ ի մահ». Բ. իգ. 126:

50

ԱԳԼԹ. «Եւ այլ եւս քազում քան զայս խաւեցում  
մինչդեռ կայր կախեալ». 90:

ԲԻԻԶ. «Արդ՝ մինչդեռ կայր (ներսէս) ի վերայ լերինն,  
դայս եւ այսպիսի եւ որ ինչ նման է այս բանից՝ աւելի եւ քա-  
զում քան զայն խաւեցաւ». Ե. դ. 197:

51

ԱԳԱԹ. «Ետ պնդել զոտս նորա ի Նրապոյրս տկաց». 94—95:  
ՔԻԻՉ. «Հրամայեաց ի Նրապարակին իմն առնել Նրապոյրս մեքենայից». Գ. ծե. 173:

—ԳԻՏ. Հ. Արսէն Բաղրատունի զԱզաթանգեղի Հրապոյրը բառն կը մեկնէ «պրկոց, գելոց, ոլորը կաշեաց կամ փոկոց». և անտարակոյս նոյն նշանակութիւնն է նա և ի Քիւզանդայ հատուածին, կամ «պրկումն, ոլորումն, նուաճումն, առ արգելուլ զօր անշարժ անփախուստ», ըստ մեկնութեան նոյն հայագիտին: Ի Զեռագիրս ինչ Ազաթանգեղի գրեալ է «ի Նրապարս տկաց». յորմէ նոր Հայկզ. «Հրապար. պարան ի մորթոյ. փոկ»:

52

ԱԳԱԹ. «Իսկ զորս գտանէ յանարէնութեան և յամբարշտութեան, յաստուածատեցութեան, . . . դնոսին նովին ոգւով և նովին մարմնով արկանէ ի գեհնն». 99—100:

ՔԻԻՉ. «Այլ որդիքն Յուսկանն, Պապն և Աթանագենէս, յաստուածատեցութեանն զկեանս իւրեանց վարեցին. յանարէնութեան և յամբարշտութեան շրջէին». Գ. ժթ. 47:

53

ԱԳԱԹ. «Մինչդեռ խորհէր Տրդատիս խաւսել և այլ ողորով ընդ նմա». 101:

ՔԻԻՉ. «Մաւսէր ընդ նմա ողորով». Գ. իա. 57.—«Իսկ մինչդեռ նա գայս և զայսպիսի (2. իսկ տպ.՝ այսպիսի) բանս ողորով (տպ. և 2.՝ ողորոյ) ընդ թագաւորին խաւսէր». Գ. ծե. 119.—«Մաւսէր համակ ողորով». իա. 136:

[Ա Դաս]† «Եւ եթէ պարս ինչ իցէ յուզղութիւն ածել (գծերն) զի գործիցէ. իրբև Գհայր յանցաւոր՝ յորժամ մատուցեալ ոք ողորիցէ, նոյնպէս և ընդ նոցա (նոսա?), ասէ, ողորանաւր խաւսիցի». Ոսկ. Ա Տիմ. ժԳ. 107. (տպ. «Եւ եթէ պարս ինչ իցէ յուզղութիւն ածել. զի գործիցէ իրբև» և այլն. զոր ուղղեցի ըստ յաջորդիդ. «Եւ եթէ շինիցի ոք, ասէ, վրէժմանդիր, զի գործիցեմ». նոյն, Եփես. ժՉ. Յորդ. 843:

54

ԵԳԱԹ. «Երդ չէ պարտ կեալ դմա, զի որդի վրիժապարտի է դա»։ 102:

ԲԻԻԶ. «Ելլ արժան է մեռանել ի ձեռաց քոց, եւ չէ պարտ կեալ դմա»։ Ե. լե. 236:

==ԳԻՏ. Գայ այդ եւ յԱռաջին Գասի, այլ դոյզն ինչ տարրերը. «Աղաղակէին (Հրեայք)՝ թէ չէ պարտ դմա կեալը. Գործք Առաք. ԻԵ. 24: Այլուր. «Բարձ յերկրէ զայդպիսիդ, զի չէ պարտ այդպիստոյդ կեալը»։ անդ, ԻԲ. 22.—«Ի ձէնջ զիցապաշտից ապստամբի կամի. արդ չէ արէն նթէ կեցցէ»։ Մար. Պատմ. Արեւ. Վկ. 26:

55

ԵԳԱԹ. «Իբրեւ զայն եւս հասանէր թագաւորն ի վերայ իրացն, նթէ արդարեւ որդի Անակայ Պարթեի է»։ 102—103:

ԲԻԻԶ. «Իբրեւ ի վերայ հասանէր իրացն Աղոզիկ . . . նթէ Չապուհ . . . կամի տալ զգուտար իւր կուսեանն Արշակայ»։ Գ. ի. 133: Այլուր. «Զոր իբրեւ լուա թագաւորն Արշակ, եւ ե՛նաւ ի վերայ իրացն»։ Գ. ժե. 121:

Տես եւ «Ապա իբրեւ հասանէր թագաւորն իրացն հաստատութեան ի վերայ» ի Քիւղ. — Մկր. թիւ 54:

56

ԵԳԱԹ. «Զաշխարհն Ասորեստանի աւերէր, եւ հարկանէր ի հարուածս անճնարինս»։ 103: Այլուր. «Անճնարին հարուածս ի վերայ հասուցանէին»։ 33. կամ պարզապէս «Հարկանէր ի հարուածս զթշնամբսն»։ 104:

ԲԻԻԶ. «Եւ Մուշեղ սպարապետն Հայոց հարկանէր զգաւրսն Պարսից ի հարուածս անճնարինս»։ Ե. դ. 198.—«Անէր պատերազմ ընդ երկիրն Ադուանից. հարկանէր զնոսա ի հարուածս անճնարինս»։ ժգ. 210.—«Թէ սրպէս անկաւ (Մուշեղ) ի վերայ բանակին Չապհոյ . . . եւ ե՛նար զնա ի հարուածս անճնարինս»։ ք. վերնագիր. 189: Այլուր. «Հարկանէր զերկիրն (Աղճնեաց) ի մեծ ի հարուածս»։ Ե. ժգ. 211.—«Հասա-

նէր սատակէր ի մեծ հարուածս զգարան Պարսից Վասակ դաւրափարն»։ Գ. խգ. 154.—«Դարձան ի փախուստ անհնարին հարուածովք»։ Ե. լէ. 239:

(Մկր. «Հար զնոսս հարուածս մեծամեծս»։ Ա. ա. 32.—«Հարին զնոսս ի հարուածս մեծամեծս»։ Ը. 4.—«Ի մեծամեծ հարուածս հարկանէին զհեղիողորոս»։ Բ. գ. 26.—«Հարկանէր զնոսս ի հարուածս քազումս»։ Ա. Կ. 3.—«Եւ հարկանէր յաւուր յայնմիկ զնոսս ի հարուածս սաստիկս»։ անդ, 34.—«Մեծամեծ հարուածովք հարեալ»։ Բ. գ. 39.—«Հարկանէր զնա առաի անաի սաստիկ հարուածովք»։ Գ. բ. 10.—«Հարուածս մեծամեծս հասուցէր ի վերայ երկրին նոցա»։ Ա. ԺԵ. 29. (համեմատէ ընդ Ագաթ. երկրորդ վկ. «Անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին»)։—«Մեծամեծ սաստիկ հարուածս ի վերայ թշնամեացն հասուցանէր»։ Բ. ը. 6.—«Արարին հարուածս մեծամեծս ի վերայ Խորայեի»։ Ա. է. 22.—«Արար հարուածս (22. համարս, կամ համարարս) մեծամեծս յերկրի»։ Ժգ. 32):

—ԳԻՏ. Կայ լոկ Անհնարին հարուածք յԱռաջին Դասի. «Տեսանէին (զՅովրայ) զանհնարին հարուածսն եւ զմեծամեծս յոյժ»։ Յովր, Բ. 13.—«Սատակեաց զազգսն սրտմտութեամբ, անհնարին հարուածովք բարկութեամբ յանինայ»։ Ես. ԺԳ. 6. (տես եւ յԱգաթ. 183. «Զի սակաւիկ մի ոչ կարէին մեկնել ի նմանէ, վասն անհնարին հարուածոցն բարկութեանն»)։ Իսկ փոխանակ Հարկանեմ ի հարուածս անհնարինս (կամ ի հարուածս մեծամեծս, քազումս, սաստիկս)՝ սոյն Դասս կ'ըսէ. Հարկանեմ հարուածս մեծամեծս յոյժ (զժողովորդն, զթշնամիս կամ ի թշնամեաց). Թիւք, ԺԱ. 33. Դատ. ԺԱ. 33. Ա Թազ. ԺԹ. 8. Հարկանեմ հարուածս մեծամեծս (զթշնամիս կամ ի թշնամեաց). Դատ. ԺԵ. 8. Ա Թազ. ԻԳ. 5. Գ Թազ. Ի. 21. Հարկանեմ մեծամեծ հարուածովք (զթշնամիս). Ես. ԺԹ. 22. Մեծամեծ հարուածս առնեմ (ի թշնամիսն). Ա Թազ. ԺԳ. 30: Բայց նման Ագաթ. Բիւզ. Մկր. կայ յերկրորդ Դասի. «Եւ թէ ինչ առ ումեք գտանէին եւ որ ուրանային՝ հարկանէին ի հարուածս դառնութեան»։ Եւս. Եկեղ. Գ. գ. 156:—Նկատելի է որ Եսայեայն Հարկանեմ մեծամեծ հարուածովք՝



Թարգմաննալ է յմակ. ես. ԺԹ. 178. «Եւ հարցէ Տէր զԵգիպտացիս ի հարուածս մեծամեծս». հանգոյն Մկր. երկրորդ եւ երրորդ վկայութեանց:

57

ԱԳԱԹ. «Վասն զի սէպ իսկ էր (Տրդատ) առ հանդերձ, . . . քաջ եւ պատերազմող անհնարին». 104:

ԲԻԻԶ. «Ի գործ արութեան քաջ էր անհնարին (Քաղոս), քայց ի գործ իմաստութեան բախած էր». Գ. իր. 138:

58

ԱԳԱԹ. «Ըննոյր աւար բազում ի կողմանցն Ասորեստանի (2. իսկ ապ.՝ Ասորոց), եւ թափէր կողոպուտ սաստիկս անհնարին ի նոցանէն: Երկանէր ի սուր զգարս Պարսից, եւ թափէր զկողոպուտ անհնարին». 104:

ԲԻԻԶ. «Թափէր զկապուտ սաստիկ, զգարդ եւ զզէն զաւրացն». Ե. խ. 249.—«Եւ ինքն [ղառնայր] մեծաւ անուամբ, եւ բազում աւարաւ՝ զոր կապուտն թափէին ի զաւրաց թըշնամեացն». խգ. 254: Այլոր. «Թափէին աւար բազում» Գ. ը. 19.—«Թափեցին աւար բազում, եւ զփիզսն». Գ. իր. 138.—«Թափէին ի նոցանէ աւար բազում եւ անթիւ». իդ. 143.—«Թափէր աւար բազում». Ե. խա. 249.—«Հարկանէր սատակէր զնա եւ զգարս նորա, թափէր զգարդ նոցա». Գ. իէ. 146:

ՄԿՅ. «Թափեցին ի նոցանէ (ի Սպանիացւոց) զրոպսն՝ ուտաի ոսկին եւ արծաթն հատանի».՝ Ե. ը. 3:

==ԴԻՏ. Յօրինակող Թափեմ՝ կը նշ. Յափշտակել զայսոյ ինչ, գգ. S'emparer, Prendre. ուր ի գիրս միւս Դասուց՝ սովորական նշանակութիւն բայիս է Հանել կամ Անդրէն առնուլ զյափշտակեալն ուրուք, գգ. Reprendre, Recouvrer. օրինակ իմն. «Եւ թափեաց Դաւիթ զամենայն ինչ զոր առին Ամազեկացիքն, եւ զԵրկոսին կանայս իւր թափեաց Դաւիթ». Ե. Թագ. Լ. 18. եւ 22.—«Ի նմա կանգնեցաւ նշան խաչին Քրիստոսի, երեսկին եւ ամենապայծառ, աւար մերոյ բնութեանս, զոր թափեաց

1. Յորմէ եւ Մ. Պոր. Պատմ. Բ. ր. 156:

թագաւորն մեր»։ Ոսկ. Մատ. Ա. ր. 18.—«Ջրմբունեալսն յապրտամբէն թափիցէ... եւ դալսն թափեաց եւ ազատեաց»։ Սերեր. Գ. 40, 41: Սոյն մտօք կ'ըսէ եւ Բիւզանդ. «Եւ թափէր անշափ եւ անթիւ դամննայն դառեալ զերութիւնն»։ Գ. իդ. 141.—«Վամ զիւրդ զարաւարն Վասակ թափեաց զգերեալսն»։ իդ. վերնագիր. 141.—«Թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց... թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զշայստան աշխարհին»։ եւ զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին»։ անդ, 144.—«Թափեաց յինքն դամուր ամուր բերդիցն (Հայոց), զոր կալեալ էր Պարսկացն»։ Ե. ա. 187, Վերջին տեղոյս նշանակութեամբ այլուր կ'ըսէ Երնըն ունել (զաշխարհ իւր, գերկիրն Հայոց)։ Ե. ա. վերնագիր. 185. լէ. վերնագիր. 238. իսկ Ազաթ. 49, «Ջհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց»։

59

ԱԳԱԹ. «Արկանէր ի սուր զգաւրս Պարսից, եւ թափէր զգողալուտ անհնարին»։ 104:

ԲԻԻՁ. «Արկանէր ի սուր զգաւրսն Պարսից, եւ զԳումանդշապուհն սպանանէր»։ Ե. լթ. 248:

Տես եւ «Արկանել ի սուր սուսերի իւրեանց, իւրոյ» ի Բիւզ. Մկր. թիւ 66:

60

ԱԳԱԹ. «Գին ոմն այրի... հրաման առեալ յարհարաց՝ զի տուրն նկանակ մի արարեալ պատրաստեալան՝ ընկենուլ ի ներքս ի խոր վիրապին (վիրապն?)»։ 105.—«Հրաման ելեալ ի թագաւորէ անտի, զի զերանելին Հռիփսիմէ տանել յարբունիս, եւ զտուրրն Գայիանէ անդէն պարնել»։ 131. (համեմատէ ընդ ՅՃԻ. «Ոչ փակի դուռն կենաց ապաշխարութեան մինչեւ ի վախճան աշխարհի, զի զհանապազորդ սխալանսն հանապազորդ արտասուաւք աւազանին լուանալ եւ սրբել»։ ԺԹ. 179—180:) Այլուր. «Պատուիրակս հանեալ ընդ աշխարհ, զի ամենեքեան աւթտարեր ընծայատար լիցին մեծի հարսանեացն, եւ բազում ուրախութեամբ զալ կատարել առ հասարակ ամենեցուն զաւրէնս ար-

քայական փեսային». 114.—«Ճշմարիտ մշակաց զործ այն է, [զի] զպիտանի արդիւնսն զշայեկանսն ի շտեմարանսն ժողովեացնն, եւ զփուշն եւ զդժնիկն տալ ճարակ հրոյ». 474—475.—«Չի ձեռնադրեացնն զՍուրբն Գրիգորիոս, եւ աւանդել ի նա զպատիւ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի». 604.—«Չի անխորշ եւ անխէթ Աստուծոյ հրամանացն հնազանդեացին (տպ. հնազանդեացնն) առանց երկմտութեան, եւ արարչութեանցն հաւատալ յամենայն սրտէ». 638:

ԲԻԻԶ. «Եւ ետ հրաման՝ զի զեւսերիոս արկանել ի բանա, եւ ընդ նմա զբազումս». Գ. ք. :98 Այլուր. «Գեազան լեալ է յարքայէն Պարսից. . . . զի զքեզ կալցին կապեացնն. կամ աստէն սպանցնն, կամ օտիւք եւ ձեռաք եւ պարանոցաւ կապելով՝ մեծաւ զգուշութեամբ տանել առ Թագաւորն Պարսից». Ե. ԼԲ. 247:

ՄԿԲ. «Եւ անդ էր ողորմ տեսիլ տեսանել, զի առ հասարակ անկեալ մարդկանն՝ զաղաթս Թաւալելով յերկինս մատուցանել». Բ. գ. 21.—«Արձակեաց մեծաւ հանդերձաւ, բազում պատուիրանաւ զի զՅուդա ինքնին ի գլխովին զբռամբ արկանել, եւ զգունդն ամենայն յայտկոյս յայնկոյս ցրել. անդ կացուցանել զԱղկիմոս քահանայապետ մեծի տաճարին». Ժդ. 13.—«Զազգն ընտրեալ՝ ի քաղաքաց քաղաքաց ժողովեալ յուղարկէին ի ձեռն զաւրավարաց գաւառացն, զի արտաքոյ բնակութեան ի տար պայման հրամանին (ի տարապայման հրամանէն? տես Բիւզ.—Մկր. Թիւ 23) տարապարտուց մեռանել». Գ. դ. 4.—«Եւ զայն եւս հրաման տուաք, զի զամենեցուն զգոցա՝ զոյր ինչ ուրուք եւ սոռեալ իցէ՝ յիրաքանչիր տէր զարճուցանել». է. 5: Այլուր. «Չի լիցի նոցա (Չմաւոն) զաւրավար յառաջնորդութեան, եւ զի փոյթ լիցի նմա վասն սրբոցն, եւ կացուցանել ի նորա ձեռանէ ի վերայ գործոց նոցա». Ա. ժդ. 42:

ԵԻԹ. Չի առնել? տես Կոր.—Եւթ. Թիւ 6, ԳԻՏ.:

—ԳԻՏ. Ըստ Հ. Արսենի Բագրատունւոյ, Զրգ. Քեր. Ե. 477, յ. 1162, եւ ըստ Չալ.—Այտրն. Քեր. Ե. 460, Չի շաղկապդ անկազրութիւն է, փոխանակ պարզապէս ըսելու «հրաման առեալ՝ աւուրն նկանակ մի բնկենուլ», «հրաման ելեալ զերանելին Հոբիփոթմէ տանել», եւ այլն: Եթէ այս մեկնութիւն կը յարմարի

յիշեալ վկայութեանցդ, բայց կարծեմ անյարմար է Ազաթանդե-  
ղի վերջին շորս՝ և Բիւզանդայ ու Մակարայեցոց վերջին հա-  
տուածոց, «զի ամենեքեան ընծայատար լիցին և գալ կատա-  
րել ամենեցուն», փոխանակ «և եկեացեն կատարեսցեն ամ-  
ենեքեան» և այլն: Բագրատունին (անդ, Ե. 477, յ. 1162, և  
Ե. 533—534, յ. 1244,) ուրիշ մեկնութիւն մի ևս կու տայ. այս  
ինքն թէ կարելի է փոխադրութիւն համարել *Զի ընկենուլ, Զի  
տանել, փոխանակ զիմաւոր բայի Զի ընկեսցէ, Զի տարցեն*:  
Այս ճահողագոյն թուի ինձ. (համեմատէ աստէն, թիւ 95 և թիւ  
9, «Բանգի հրաման առեալ» փոխ. առի. «Թէպէտ ևս լրե-  
եալ» փոխ. լուս. տես և ի Կոր.—Ազաթ. զթիւն 54, «Իբրև  
ի վերայ նասեալ» փոխ. նասին: ) *Զի շողկապ ընդ անորիշ  
զերբայի կայ ուրեք ուրեք և ի զիրս Առաջին և երկրորդ Գա-  
սուց. «Մոյնպիսի միտս և առաքինութեանն պարտիս իմանալ.  
զի մի վասն այլոց, այլ վասն նորին իսկ ընթանալ (փ. ըն-  
թանայցես) զհետ նորս».* Ոսկ. Մտթ. Ա. ի. 324.—«*Զի ոչ  
զանձինս եւեթ փութացուցանել (փ. փութացուցանիցեն),  
այլ և ի վերուտ առնուլ (փ. առնուցուն) աւգնականութիւն  
ճգանցն».* անդ, Ա. իգ. 363.—«*Կամեցաւ (Պաղոս)՝ զի և թըդ-  
թովն իւրով նաճել և նաւանցուցանել (փ. նաճեսցէ և նա-  
ւանցուցէ) զհեռաստանեայն՝ որ բացագոյն էին ի տեսնել  
անտի նորս».* Եփր. Երբ. 197: Իսկ մի և նոյն նախադասու-  
թեան մէջ *Զի ընդ ապառնոյ (կամ ընդ ստորադասականի) և  
ընդ անորիշ զերբայի, (տես զվերջին շորս վկ. Ազաթ. և զվեր-  
ջին վկ. Բիւզանդայ և Մկր.)* Կորեան յատուկ է, և յայլ զիրս  
չգտնուիր: Կայ միայն յոսկեբերանի Մեկնութիւնս Պաղոսի (15).  
«*Ոչ վասն այնր որ ողջանայ, զի միտանգամ ընդ մահիճան ըն-  
ւեռիցի, այլ զի ուտեալք (ուտեալ?) յախտէն զչարիսն՝ մի ևս  
անդրէն թաւալել, այլ զգուշանալ առողջութեանն».* Բ Տիմ.  
Ա. Յորդ. 178, տող 5 ի ստորէ. (փ. *թաւալիցի, զգուշանայ-  
ցէ.*)—«*Նոյնպէս և Աստուած ոչ առ կարատութեան ինչ կայր  
յաղալթս, այլ զքեզ կամէր յորդորել, զի միշտ հպատակ կայցես  
յաղալթս, և անդադար կրթութեամբ և բազում դուարթու-  
թեամբ արթուն կալ (փ. կայցես)».* Երբ. Իէ. 543: Բայց ի  
Մեկնութեան Ա Տիմ. Ը. Յորդ. (առաջին տպ. Հատուածք, 317).



«Զի որ այնպիսիքն իցեն՝ ցածնուցուն, եւ որ չիցեն անպիսիք՝ զկտիսն ցածնուցանել», երկրորդ տալ. 71: Անի «զկտիսն ցածնուցան իցին»: Տե՛ս Երեմիայի վերջին գլխու վերջնայն թիւնս:

61

ԱԳԱԹ. «Եւ այնու (նկատեալան) կերակրեալ լինէր նա ի հրամանէն Աստուծոյ զայն ամս՝ որ եղիւ նա անդ», 105: Այլ ուր. «Կերակրէին (փ. Կերակրեալ լինէին) ընչիւք խրեանց ի վաճառաց քաղաքին». 123:

ԲԻԻԶ. «Յայնմ կղզոյ զայն արինակ կերակրեալ լինէին ի ծովէ անտի». 7. դ. 93:

—ԴԻՏ. Կերակրեալ լինիմ հանդիպած շեմ այլուր. կայ եւ իմ յերկրորդ Գասի Լինիմ կերակրեալ. «Թէպէտ եւ եզիա յազգաւուց անտի պղծոց լինէր կերակրեալ սրբապէս, սակայն ի սուրբ Աստուած սթե՛նէ անտի հողեպէս լինէր կերակրեալ», եփր. Համար. 76. Իսկ այլուր կ'ըսէ Կերակրիմ. «Այնքով որ ի ամն կոոց պործեն՝ ի ամնէ անտի կերակրին». Ա. Կոր. Թ. 67. եւ այլն: Միւս Գասուց միակ դործածականն է Կերակրիմ, «Տաս զու նոցա եւ կերակրին». Սդ. 4Գ. 28. 4Թ. 15.—«Որ ողորմի անանկին՝ ինքն կերակրեսցի», Առակք, ԻԲ. 9.—«Զի արդարք կերակրեսցին», Իմաստ. ԺԶ. 23.—«Ի նմանէ կերակրէր ամնայն մարմին», Գան. Գ. 9.—«Մեր նովաւ (Քրիստոսի) կերակրիմք», Սոկ. Մտթ. Գ. Խթ. Յորդ. 108.—«Եզիա յազգաւուց կերակրէր», նոյն, Տիտ. Գ. Յորդ. 309. (համեմատէ ընդ եփրեմայն. «Եզիա յազգաւուց անտի պղծոց լինէր կերակրեալ».)—«Կերակրէր որչափ կամէր», Վարք ՅԿԶ. Թեղր. 109. եւ այլն:

62

ԱԳԱԹ. «Հրաման ետ Տրդատ արքայ՝ հրովարտակ առնել ընդ ամենայն աշխարհս իշխանութեան իւրոյ, հրաման հանեալ արինակ զայս». 105—106:

ԲԻԻԶ. «Հրաման տայր ընդ ամենայն տեղիս իշխանութեան իւրոյ», Թէ որ միանգամ զանուն քրիստոնէութեան ունիցի՝... սատակեսցեն», Գ. Ժէ. 127: Այլուր. «Հրաման տայր

ամենայն աշխարհի իշխանութեանն իւրոյ. Ազատքն բայց  
եթէ ի մոյր էլցեն». Ե. լա. 229.—«Եւ բողմացոյց զկարգս պաշ-  
տանէից յամենայն տեղիս իշխանութեանն». իա. 214.

63

ԵԳԱԹ. «Հրովարտակ անել ընդ ամենայն աշխարհս իշխա-  
նութեան իւրոյ, հրաման հանեալ աւրինակ զայս». 105—106:

ՔԻԻԶ. «Հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի որ տացէ  
(գտասանորդսն յեկեղեցին)». Ե. լա. 229:

ՄԳԲ. «Հրաման հանէր ամենայն զաւրաց իւրոց հետեաց  
և հեծելոց». Գ. ա. 1:

64

ԵԳԱԹ. «Եւ զայն եւս տեսանէաք ի նոցանէ՝ ի նոցունց զից  
անտի զխաղաղատէր շինութիւն մարդաշատութեանն . . . շնոր-  
հել». 107:

ՔԻԻԶ. «Թաղազուիսն եւ շինութիւն, մարդաշատու-  
թիւն (շինութիւն մարդաշատութեան?) եւ առողջութիւն . . .  
յամս յաւուրս սոցա աճեալ (տպ. աճել) բազմացաւ». Գ. գ. 6—7:

(Մկր. «Աղաչէր, ուխտս զնէր առ այն որ չէր նմա ողոր-  
մելոց, վասն զսուրբ քաղաքն հարթյատակ եւ անմարդի կացու-  
ցանել, զայն մարդաշատ եւ ազատ ցուցանել». Բ. թ. 13—14:)

[Ա Դաս]† «Գրէ թէ քաղաք ուրեք [իցէ] մարդաշատ, եւ  
ամենայն բնակիչք շարագործք». Ոսկ. Ա Տիմ. Գ. 34:

==ԴԻՏ. Յայլ զիրս փոխ. Մարդաշատ՝ ըսուած է. «Ետես  
նա զերկիրն (տպ. զերկիրս)՝ զի էր մարդալից բնակչաւք իւ-  
րովք». Եփր. Արար. Ե. 60.—«Զբազմալից եւ զխառնիճաղանջ  
զնիւնուէացւոց զղարմանալի եւ զմեծ քաղաքն». Ոսկ. Վասն Պա-  
հոց եւ Աղաւթից, 30.—«Զիւրդ զատաւ նստաւ մենացեալ քա-  
ղաքն բազմաժողով». Ողբք Երեմ. Ա. 1:

65

ԵԳԱԹ. «Եւ էր մարտ սաստիկ խստութեան Տրդատայ  
ընդ Պարսից թագաւորին՝ զամենայն աւուրս կենաց իւրոց». 110:

ՔԻԻԶ. «Եւ յետ այսորիկ յաւել եւս լինել մարտ խստու-

[Թեան (տպ. իստուրթեամբ) պատերազմի ի մէջ Պարսից եւ Հայ-  
ոց ընդ միմեանս». Գ. ժա. 26:

66

ԱԳԱԹ. «Ապա թէ որ շայտնեսցէ դայնպիսին, . . . ի հրա-  
պարակ արքունի եկեալ մեռցի». 111:

ՔԻԻԶ. «Եւ անդէն ի վանսն պատմուճակացն փողոտեցին  
զնա, եւ հատին զգլուխ նորա, եւ հանին հարին ի նիզակի, եւ  
կանգնեցին ի հրապարակին արքունի». Ե. դ. 205.— «Իբրեւ  
մերձ եղեւ ի հրապարակն արքունի, եւ անդ ի (անդր?) յար-  
քունուստ հասանէին բազում սպասաւորք». Գ. ժա. 118:

⇒ԻԻՏ. Հրապարակ արքունի յԱզաթ. եւ ի Քիւզ. առա-  
ջին վկ.՝ թուի ինձ Հասարակաց հրապարակ. գղ. Place publique.  
Իսկ յերկրորդ վկ. Քիւզանդայ՝ Արքունիք, Դուռն արքայի: Վեր-  
ջին նշանակութեամբս կ'ըսուի եւ ի Մար. Պամ. Արևւ. Վկ.  
31. «Եւ մինչդեռ ձգէին հանէին զնա արտաքոյ (արտաքս?) քան  
զհրապարակն արքունի, նստէր անդ ներքինի մի մեծ՝ դայ-  
եակ որդոյ արքայի». զոր F. Lagrange այսպէս կը թարգմանէ.  
«Il y avait à la porte du palais par où devait passer Siméon  
un vieil eunuque qui avait élevé le roi.» *Les Actes des Mar-  
tyrs d'Orient*, Tours, Alfred Mame et fils, 1876, Կ. 47:

67

ԱԳԱԹ. «Մոյեկան (2. իսկ տպ.՝ մուլգնական) ցանկութեամբ  
տուփողաց. . . ժամ տուեալ հարսանեաց՝ ճեպով տաղնապաւ ճե-  
պէր զուրախութիւնս հարսանեացն կատարել». 114:

ՔԻԻԶ. «Ապա առ համբաւ ցանկութեան անուանն (նուանն?  
նուոյն?) տրփեալ լինէր միւս (2. իսկ տպ.՝ մին ես) հաւրեղ-  
բաւորողին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր. վասն որոյ ան-  
կանէր ի գաղտագողանս, մինչ զի գնուն իւր տեսանել կարաս-  
ցէ». Գ. ժա. 116.— «Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր  
զկինն սպանելոյն, տուփէր եւ ակն զնէր՝ աւնուլ զնա իւր կնու-  
թեան». անդ, 120—121.— «Տիրիթն սկսանէր ժոյժ շունելոյ  
տուփանացն». անդ, 121.— «Սկսան նուագել զիրսն տրփանացն  
Տիրիթայ». անդ:





որ ի 23 օրինակաց նոյն գրոց՝ միայն 3 օրինակոց մէջ կը գրա-  
նուի, որով անվաւերութեան բազիդ աստիակոյ շմար, Բայց  
եթէ նման Պատասխանեմ՝ բայի՝ Մեծ. Հ. Յոմնանեան անհա-  
բազաւ կը համարի եւ զԳեղջուկ (մի անգամ, Ոսկ. Երբ. ծԵ.  
514), զՏրոնեմ (մի անգամ, Ոսկ. Եփես. ժԶ. 838), ինձ թուի  
թէ Եզրթանգեղ եւ Բիւզանդ փոփոխակի կը հաստատեն զվաւե-  
րականութիւն Տոփանը, Տոփիմ եւ Տոփող բառից՝ որ հինգ  
անգամ կը պատահին ի նոցա գիրս: Փափագելի էր գիտել թէ  
Վիեննայի Մեծ. Մխիթարեանց կրկնագիր Եզրթանգեղի տրո-  
փող ունի թէ այլ ինչ:— Կայ եւ Տոփումս ի Քալիթա Ս. Եզ-  
նատիտի, 93. «Մէրն իմ խաչն է. իմ տոփումս խաչեցաւ, եւ  
չիք առ իս թոյլ ջերմութիւն սիրոյ»: (որ ի Վ. Իգն. 177, թարգ-  
մանեալ է. «Իմ ցանկութիւն ի հարէ է, եւ չիք լիս հոր սի-  
րելոյ»): Յանվաւեր ձառն Գիւնեսիտի Երեսօղագացոյ Յաղագս  
աստուածայնոցն անուանց, որ թարգմանեալ է ի Ստեփանոս-  
սէ Սիւնցեոյ յամին 712, կը յիշուի այս բան Ս. Եզնատիտի. «Եւ  
զի թուեցաւ ոմանց առ ի մէջ սրբազնաբանողաց՝ աստուածայ-  
նագոյն լինել զտաժմանն անուն քան զսիրոյն. քանզի զրէ եւ  
աստուածայինն Իզնատիտ, եթէ Իմ տոփումս խաչեցաւ»: տես  
ի Թուղթա Ս. Իզնատ. Բան առ ընթերցօղս, երեսք 8-9:

68

ԵՖԷԹ. «Ժամ սուեալ հարսանեաց՝ ճնպով տազնապաւ  
ճեպէր զուրախութիւնս հարսանեացն կատարել»: 114: Կարծար  
Բիւ. 2. «Ձմեացօրոյ աշխարհին գերեզմին գերեզմին (զարքն  
Պարսից), առին եւ փարսեան յաշխարհն իւրեանց ճնպով տազ-  
նապաւ»: Գ. իգ. 141: Եյտը. «Խաղայր գնայր ճնպով իշխանն  
արքային Պարսից հանդիմձ Տիրանաւ արքայիս. Գ. ի. 53: Կար  
Գե. 8. Կայ յերկրորդ Դասի. «Վազպազակի փութապէս  
տազնապաւ»: Եփր. Երար. Բ. 17:

69

ԵՖԷԹ. «Մի տն ի նոցանէ ունէր արուեստ ապակագործու-  
թեան՝ առնել ուլունս ապակեղէնս, եւ տալ զինս ընդ կերպ-  
կրոյ արուրն պարննի ոռնկին (2. իսկ տալ. քոճիկ): 123:

Քի՛հ. 2. «Այնչափ խորշիկ եւ մերժել յանպիտոյիցս (տալ. եւ մերժել եւ յանպիտոյիցս), մինչեւ զկերակուրս ւաւորն ոռճկին արհամարհել»։ Գ. Ե. 84:

==ԳԻՏ. Յայլ զիրս կըսուի Աւուրն կերակուր. Յակ. Բ. 15, Ոսկ. Մտթ. Բ. է. 494. նոյն, Հո. ԻԱ. Յորդ. 313 երկիցս. Աւուրն ոռճիկն. Բրս. Վեց. 2. 118. Ռոճիկն ւաւուր. Զգաւն, ժԹ. 350:

## 70

ԱԳԱԹ. շրթեւ եկին հասին հրամանք (2. իսկ տալ՝ հրաման) հրովարտակացն ի մեծ թագաւորէն Յունաց առ Տրդատ արքայն Հայոց»։ 129:

Քի՛հ. 2. «Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց»։ Ե. ա. 185.— «Ձայնու ժամանակաւ թագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խտորութեանն . . . Արիանոսաց էր ի հաւատս»։ Գ. Ե. 80:

Տես աստէն եւ «Մեծ թագաւորն Հայոց» թիւ 195:

## 71

ԱԳԱԹ. «Յետ երկից ւաւորց համբաւն հռչակեալ՝ պարկեշտութեան, զանազան զեղեցկութեանն Հախփսիմայ՝ ի մէջ բազմամբոյս հրապարակացն լինէր»։ 130:

Քի՛հ. 2. «Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն . . . եւ տեսանելով քան զայս զեղեցիկ զանազան, որ (տալ. զեղեցիկ, զանազան՝ որ) համեմատ նմա այլ ոչ գտանէր»։ Գ. Ե. 49:

==ԳԻՏ. Գեղեցիկ զանազան, Զանազան զեղեցկութիւն կը նշանակին յունարէն «ճոզ» Աննման կամ Անհամեմատ զեղեցիկ, զեղեցկութիւն, ըստ նոր Հայկազնինն ի բառն Զանազան՝ ուր միայն Ազաթանդեղի վկայութիւնն յիշատակեալ է. յունարէն *diáphoros*. բուն՝ Այլակերպ, Պէսպէս, զգ. Différent, Divers. եւս՝ Վերագոյն, Աննման, Գերագանց, զգ. Excellent, Supérieur, Prééminent. Կայ առ Ազաթանդեղի յոյն բառիս նա եւ առաջին նշանակութեամբ Զանազան, այս ինքն Պէսպէս, Ազգի ազգի. «Ձարդարել զթագաւորս ի գիւտ ծանրագին մարգարտին, եւ զանազան ակամբք պատուականաւք»։ Յոջր. 9: Սոպին մտօք Զանազան կը գտնուի եւ ի գիրս միւս Թարգմանչաց. «Բարկու-

թիւն եւ ցասումն ի նմա (յԱստուած) ոչ կայ, քանզի ոչ գոյ ի նմա կուրութիւն, այլ ամենեւինք բովանդակ մտաւոր է, եւ վազն այտորիկ զանազան սքանչելիքս եւ ամենայն բարութեամբք զարարածս հաստատեաց». Արիստ. Զատագ.— «Զորս միանդամ գտանէր հաւատացեալս ի Քրիստոս՝ զանազան տանջանաք վատնէր». Վարք Յոհ. Գր. 113. յորմէ եւ Զանազանութիւն. «Ենոյնպէս ամենայն հիւսն եւ ճարտարագետ, որ ի գիշերի իբրեւ ի տունջեան կայ, որք դրաշեն զդրաշս քանդակաց, եւ պարագութիւն նորա նորոզլ զանազանութիւն». Սիրաք. ԼԸ. 28. այս ինքն՝ նորա հոգն է պէսպէս քանդակներ հնարել. Տես Զանազանութիւն եւ յմտկ. Հո. ԺԲ. 119. ԺԳ. Յորդ. 190. ԻՄ. 305, 306.— Զանազան բառի արմատն նոյն է ընդ ասորակահին զէն, զնո, (zen, zno,) լատիներէն modus, ratio, methodus, Ազգ. Տեսակ. որոյ յոգնականն է զնին, լատ. modi, Ազգք. եւ կրրկնութեամբ զնին զնին (= Զանազան), Ազգի ազգի, Պէտպէս, յունարէն diaphoroi. Այս զնին զնին կայ ի Թղթին Երրայեցաց, Թ. 10, ուր մեր թարգմանութիւնն կ'ըսէ. «Կերակրովք եւ ըմպելիք եւ պէսպէս միբտութեամբք». տես P. Smith, *Thes. Syr.* Զայն, էջք 1138—1139: Ի սոյն զան արմատոյ ունինք եւ Զարմանազան. «Եւ առեալ զայս ամենայն քահանայիցն, մեծապէս եւ ամենայն վայելչութեամբ զարմանազան պատրաստեցին զգատիկն Բաղարջակերաց». Եզր, Ա. ա. 10: Անվաւեր են Հրաշազան եւ Սրբազան՝ զորս կը յիշէ նոր Հայկզ. յմտկերբերանի Մեկնութենէն Եսայեայ. (տես անդ Սրբազան ի բառն Պատիւ.) Երկրայական թուի եւ Աստուածազան, Սերեր. ԺԱ. 199:

72

ԱԳԱԹ. «Ճշեաց մեծածայն ուժով, եւ տարածեաց զբազուկս իւր ի նմանութիւն Խաչին». 133.— «Զգոչիւն բարձեալ լալով՝ մեծածայն ճշէին». 137.— «Եւ թագաւորն խոզացեալ՝ մեծածայն ճշել, դնչել, հնչել». 549—550: ԲԻԻԶ. «Իսկ կինն հասեալ առ արքայիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարազարտ կորուստն, ճշեալ մեծածայն». Գ. ԺԵ. 118:







իդ. 88. և յերկրորդ Գասի՝ «Ձի զարացաւ և մեծացաւ նա ի վերայ մարդկայնոցն»։ Եփր. Թիւր. Գ. 253. որ այլուր յոսկ. Մտթ. կրսուի Մարդկաւրէնք. Ա. ժդ. 189. ժը. Յորդ. 299. կամ Իրք մարդկաւրէնք. Ա. ր. Յորդ. 27. ժ. 146. Մարդկաւրէն իրք. է. 101. Իրք մարդկեղէնք. ք. 113. Մարդկեղէն իրք. իդ. 366. Իսկ ուր Ազաթ. և Բիւզ. կ'ըսեն Մարդկային ընութիւն, միւս Թարգմանչաց սովորականն է Մարդկեղէն ընութիւն. Յակ. Գ. 7. Ոսկ. Մտթ. Ա. 19, 210, 268. Բ. 715. Եփր. Համար. 25. նոյն, Ա Կոր. 82, և այլն. կամ Մարդկան ընութիւն. Ոսկ. Մտթ. Ա. 9, 144, և այլն. Այսպէս և Երկնային կը գտնուի յայլեւայլ տեղիս. Եղբ, Ա. ր. 27. Ոսկ. Մտթ. Բ. իդ. Յորդ. 711. նոյն, Ի Խաչել. Տեսան, 206. Սերեր. Գ. 29, 30. Լարուր. 28. Կիւր. Կոչ. ժԳ. 295. Կայ և Խաւարային. «Խաւարային ջուրք մինչև յամպու աղոց»։ Սդ. ժէ. 12. Ոսկ. Մտթ. Գ. գ. 9. (յորմէ և Թ. Արծր. 259. «Ընդ ջրոցն խաւարայնոց»։ այլ բան Սողմոսին թարգմանեալ է յ'Բ Թագ. ԻԲ. 12. «Խաւար ջրոց թանձրացոյց զամպու աղոց»)։— «Միով խաւարային՝ շղթայիւ ամենեքեան կապեցան»։ Իմաստ. ժէ. 17.— «Յորժամ սպառնալիս ինչ բարբառի (Ատուած), խաւարային ամպ երեւի»։ Ոսկ. Մտթ. Գ. գ. 9.— «Եթէ որ զարեգակն խաւարային համարիցի, զլուսաւոր անտղն արդիւք խոտեաց, թէ գանձն»։ անդ, լղ. Յորդ. 133.— «Խաւարային տունք, և ազգի ազգի դործք ժանտութեանց»։ նոյն, Տիտ. Ե. 328.— «Ոչ թէ իրբու ի մ,դ մառախուղ ճարտարութեան բանիքն խաւարային զվարդապետութիւնն ծածկէք»։ նոյն, Յոհ. 592.— «Խաւարային խորխորատ»։ Բիւզ. Գ. ժդ. 32։ Տես և Անդրնդային. Ազաթ. 184, 203. Առանձնային. անդ. 201. Դիշերային. Վարք Յոհ. Թեղբ. 107։ Աւելի յաճախ է Աստուածային յամենայն գիրս. Առաջին Գաս՝ Աստուածային երեսք. Ոսկ. Մտթ. Ա. ր. Յորդ. 122. Աստուածայինն Մովսէս. անդ, Բ. ժ. Յորդ. 541. Աստուածային խորհուրդ. նոյն, Ի Խաչել. Տեսան, 207. Աստուածային Առաքեալ. Սերեր. Գ. 27, (Յճխ. Գ. 32.

1. Թոռնեան, Հատ. ԱՅԹՅՅԳ. 397, ծան. 12, ուղղելի կը կարծէ խաւարին։

որ յեւ. ժմ. 77 և 83 կ'ըսուի Աստուածեղէն Աւարեան Պաղտս.) Աստուածային արդարութիւն. անդ, Բ. 12. Աստուածային արեւք, անդ, ժԱ. 200. Աստուածային բանք. անդ, է. 143. Թ. 164. Աստուածային պատգամք. անդ, Գ. 29, 37. Աստուածային սանձք. անդ, ժԱ. 200. Աստուածային աղ. Աթ. Անտ. 66: Երկրորդ Դաս՝ Աստուածային Գիրք. եւ. Եկեղ. Բ. Թ. 93: Երրորդ Դաս՝ Աստուածային գանձ. Պտմ. Հար. Եղիպտ. 208: Չորրորդ Դաս՝ Աստուածային Գիրք. Գործն, 19. (ՅՃԻ. ժԲ. 132.) Աստուածային գանձք. Ազատ. 608. Աստուածային խորհուրդք. անդ, 233. Աստուածային իմաստութիւն. Քիւզ. Դ. ժք. 106. Աստուածային ծնունդ. անդ, Գ. ժդ. 40: — Կը գրէ Թոմնեան ի Հաւա. Անթեղ. 266, ծան. 23. «Աստուածային, մարդկային, երկնային եւ այլն ամանցները հին ընտիր մատենագրութեան մէջ (իման՝ ի զիրս Առաջին Քարգմանչաց) խիստ ցանցաւ են. անոնց տեղ կ'ըսուի՝ աստուածեղէն, աստուածական, մարդկեղէն, մարդկորէն, երկնատուր, երկնատուրական, եւ այլն: Ային մասնիկն աւելի տեղական ամանց կը շինէ. Անոնային, դաշտային, ցամաքային, քաղաքային, նարաւային, նրսիսային, եւ այլն»: Ի վերջոյեղեալ օրինակաց կը տեսնուի որ Մարդկային, եւ մանաւանդ Աստուածային, շին այնչափ ցանցաւ. բայց թէ ամենայն վկայութիւնք եւս վաւերական են հաւատարմալէս, ոչ ունիմ տակ:

76

ԱԲԱԹ. «Իսկ ետտր խոտանարակ լինել խիստ եւ անաբէն թագաւորին Քարելացուց». 142.—«Եւ այնուհետեւ մտեալ յեղէզն՝ խոտանարակ լեալ անհնարին անզգայութեամբ». 164 — 165: Այլուր. «Քրջիալ ի տեսիլ նմանութեան անասուն խոտակեր գաղանաց». 549 (ըստ 2):

ԱԲԻԶ. «Շաղխալս, այր սուրբ, . . . ի սղայութենէ իւրմէ սնեալ էր համակ յանապատս, եւ ընդ անապատաւորս խոտանարակ լեալ էր». Ե. իդ. 219.—«Որք միանգամ վասն սիրոյն Աստուծոյ . . . ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամբացեալք՝ յայրս եւ ի քարածերպս երկրի, . . . խոտանարակք՝ ընդարուտք՝ արմատակերք՝ զաւրէն գաղանաց ի լերինս շրջին». 2. ժդ. 271:

ՄԿԲ. «Զի յուշ իրցի նոցա՝ նրպէս յանսջ դատենս՝ Տաղա-  
 ւարահարացն ի լիբինս պաշտէին՝ յայրս եւ ի քարածերպս, դա-  
 րէն երէցց խոտաճարակ շրջելն. Բ. ժ. 6. (համեմատէ ընդ  
 երկրորդ վկ. Քիւզանդայ. «յայրս եւ ի քարածերպս. . . խոտաճա-  
 րակք. . . դաւրէն գազանաց ի լիբինս շրջէին» Տես աստէն եւ ի  
 թիւն 189. «Յայրս եւ ի քարածերպս».) Գործքք 200. աճ. 93.  
 արժք = ԳԻՏ. Այն եւս խոտաճարակ լինիմ՝ անձանօթ է միւս  
 Գատուց, որ կ'ըլլեն ասկնուրեք խոտ ճարակիմ կամ ուտեմ,  
 եւ փոխանակ խոտաճարակ խոտակեր: «Գազանք իբրև գար-  
 ջառ խոտ ճարակիւն»: Յովր, Խ. 10. (Թարգմանելի էր «Բհնհ-  
 մովթ իմն՝ Զիազեթի իբրև գարջառ խոտ ճարակի».) — «Երանի  
 թէ ընդ վայրագուն ելանէին, եւ խոտ ճարակէին, եւ ոչ դմար-  
 մինս մարդկան քանցէին»: Ոսկ. Ես. Ծ. 2. 423. — «Ի մարդկանէ  
 հալածեցաւ (Նարուբդոնոսոր), եւ խոտ իբրև գարջառ ուտէր».  
 Գան. Կ. 30. — «Եւ այլք (Ի սովելոցն) խոտ ուտէին, եւ բանջար  
 խանարանջար». Եւս. Եկեղ. Թ. ր. 689. — «խոտ ուտէր (Նա-  
 րուբդոնոսոր) իբրև գարջառ, զի անանագոյն էր քան զամե-  
 նայն անասուն»: Գիւր. Կոչ. Բ. 26. — «Փոխելին զփառս իբրանց  
 ի նմանութիւն որթու խոտակերի»: Աղ. ձե. 20. — «Իբրև կամե-  
 ցաւ Տէր իւր ջնջել դնոսս վասն մեղաց իբրանց, զի երկիր սրագին  
 որթուն խոտակերի»: Զլուսն, Ժ. 193. — «Զի ի խոտակեր  
 անասնոցն աւցեն սկիզբն իրացն մեկնութեան»: Բրս. Վեց. 2. 120:

677

ՄԿԵ ԱԳԱԹ. «Զի մի կորիցէ աւանդն՝ որ պահեալ զգոռչացեալ  
 էր» 144. — «Զգոռչ լեր աւանդիդ՝ որ քեզ հաւատացաւ. 567:  
 181. «ԲիԻԶ» «Աւերել զկառասանանն. . . որ նորին ներսօխ էր  
 շինեալ վասն ամբողջս՝ աւանդոցն զգոռչութեան». Ե. լա.  
 228. (տղ. «աւանդոցն». եւ ի ծան. «Է չորս օրինակս աւան-  
 դոցն») «անօղիմ զխաղութիւն ի Կոր. = Բիւղ. թիւ 22, Ժան. 1.)  
 արտայ սղտասարսամս քնց ևս ստարսամայ բանոր 7) լաման  
 մրոզիս մասի կարճայն զղն. — 78. քր. մ. 107) լամայ լամայ  
 զլամբ ԱԳԱԹ. «Արն՝ զկամս գորն», եւ կեաց զու եւ մերս. 145.  
 զարտ ԲԻԻԶ. «[Վազիլ] ի սոյն ժամ եկեալ իր դուր եւ մերս. Գ.  
 Ժ. 102: 2. «Եվ յիջ սմկոյն զ քամարս քիչար ցլմխտանցս





[Ա Դաս] Կ ա. «Քանզի բաւական էր եւ ողջոյնն միայն երա-  
նելոյն եւ սրբոյ (Պապոսի) լցուցանել բազում շնորհաւք զայն  
որ զողջոյնն ընդունիցին». Ոսկ. Բ Տիմ. Ժ. 270. (այլտգգ յՈսկ.  
Մտթ. «Եւ եթէ չիցէ ուրուք յայն խորանս հասեալ (վանակա-  
նացն եզիպտոսի), զմտաւ ածցէ... զերանելին եւ զմեծն զԱն-  
տոնիոս». Ա. ք. Յորդ. 122. համեմատէ ընդ վերջին վկ. Ազաթ.):

==ԳԻՏ. Երկրորդ ասացուածդ սուրբ երանելի կը գանուի  
եւ յերրորդ Դասի. «Իսկ սուրբն երանելին (Յոհ. Թեղրացի)  
իրբեւ հասն զայրն, սխաւ աւետիս տալ, եւ առէ». Վարք Յոհ.  
Թեղր. 99.—«Բազումք ի նոցանէ... դարուիթիւնս առնէին որպէս  
սուրբ երանելի մարգարէքն եւ Առաքեալքն». Պամ. Հար-  
եզիպտ. 209.—«Սկիզբն արասցուք պատմութեան զսրբոց զե-  
րանելեաց զմեծաց միայնակեցաց զկարգ վարուցն». անդ, 210:  
Ելլուր. «Տեսաք... զմեծն զերանելին Յոհաննէս, այր սուրբ  
ճշմարիտ». Վարք Յոհ. Թեղր. 97. զոր համեմատէ ընդ Ոսկ. Մտթ.  
եւ ընդ վերջին վկ. Ազաթ.:

80

ԱԳԱԹ. «Եւ քարինս վարեցին ընդ զոգն նորա, եւ ի վայր  
վայթեցին (ի վայր թափեցին՝ ըստ 2) զաղիսն նորա». 155:  
Իսկ յերես 162—163, փոխանակ ի վայր վայթեցին զաղիսն՝  
կ'ըսէ. «Եւ վարեցին եւս քարինս ընդ զոգս նոցա, եւ ցրուեալ  
զաղիս նոցա յորովայնիցն ընդ զոգս նոցա»:

ԲԻԻԶ. «Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերքն, նա յիւր  
ծոցն ժողովէր բովանդակ զամենայն զոսկերս սանին». Գ. ծթ.  
179. (տպ. կը ծանուցանէ թէ 2 մի ունի ի վայր վարէին):  
Ելլուր. «Ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ՝ ի բաց իջնալ՝ թա-  
փեալ էր ընդ քիթս նորա». Ե. գ. 191. (համեմատէ «Ուղիղ զը-  
խոյն վայրեալ» = «Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վա-  
ղերը զզլուխն երուանդայ, եւ ցրուեաց զուղիղն ի յատակս  
տանն». Մ. Խոր. Պամ. Բ. խդ. 266):

==ԳԻՏ. Հին Չեռագրաց մէջ Թ եւ Բ նշանագրաց նմանու-  
թեան պատճառաւ՝ կարծեմ թէ ընդօրինակութեան սխալ մի կայ  
ի կրկնակ գրութիւնսդ ի վայր վայթեցին եւ ի վայր վայ-  
րէին. բայց զժուարին է որոշել թէ որ է ուղիղն, զի վայթիմ

եւ Վայրեմ, Վայրիմ կը գանուին եւ այուր ի գիրս Առաջին  
Աշակերտաց: Գարեղի է որ ուղիղ ընթերցուածն Ազաթանգեղին  
է՛ ի վայր վայթեցին, եւ ըստ այսմ ուղղելի Բիւզանդայն՝ ի  
վայր վայթէին, ինչպէս կ'ըստի յԲ. Քաղ. Ի. 10. «Վայթե-  
ցաւ որովայն նորա յիւրիւր»։ (==«Հեղաւ ամենայն փոր նորա».  
Գործք. Ընթ. Ա. 18.) եւ յետ Ասկեղտուն՝ «Յայնժամ քերեցին  
եղնգամբք, մինչեւ սկսան ներքին անդամք նոցա վայթել»։ Վկ.  
Գողբատիոսի, 711.—«Եւ իսկոյն ընդ աղբոյն՝ աղիքն (Արիոսի) ի  
վայր վայթեցան ի տեղումն»։ Սոկրատ Սքոլաստիկոս (Փոքր  
Սոկրատ), Պտմ. Եկեղ. Ա. 19.—«Կիտոց զաճիւն հնոցի հրախառն  
ի ծոցս եւ ի գլուխս վայթէին», Յոհ. կթ. Պտմ. 143.—«Խառն  
ընդ գարշելիսն ի վայր զփորտոին վայթեալ՝ սատակէր (Արիոս)».  
անդ, 24—25.—«Իսկ ուրումն որովայնն հաշեալ եւ հարեալ՝ ընդ  
հարկաւոր պիտոյան գարշութեան խառն ի վայր վայթի»։ անդ,  
87: Յայտնի է թէ Վայթեմ, Վայթիմ, այսինքն Հեղում, գղ.  
Répandre, Se répandre, որ կը գանուին բազում ուրեք եւ ի  
գիրս Ստորին Հայերէնի մատենապարսց՝ հանդերձ Ջրվաթ եւ  
Ջրվաթեմ (==Մէզ, Միզեմ) բառերով, ցայսօր կենդանի են  
նոյն իսկ մեր ժողովրդական լեզուին մէջ, Վաթել կամ Վոթել,  
Վաթիլ կամ Վոթիլ, Ջրվաթ:

Գարեղի է դարձեալ ուղիղ համարել զԲիւզանդայն ի վայր  
վայրէին, եւ ըստ այնմ ուղղել զԱզաթանգեղին՝ ի վայր վայ-  
րեցին, այս ինքն՝ ցրուեցին, ինչպէս կ'երաշխաւորեն երկրորդ  
վիշաւթիւնն Ազաթանգեղի՝ եւ Բիւզանդայ երկրորդ վիշաւթեան  
ու Մ. Խորենացոյ համեմատութիւնն. Վայրեմ, Վայրիմ, իբր  
Ցրուեմ, Ցրուիմ, կայ չորիցս ի թարգմանութիւնս Եփրեմի. «Խը-  
լեաց (Յովսիս) զմահեանս եւ զբազինս եւ զկուռս, եւ վայրեաց  
զմոխիր նոցա ի վերայ գերեզմանաց նոցուն մարդոց՝ որ զոհէին».  
Մնաց. Գ. 491. (==«Եւ զգրաւչեայսն եւ զձուլածոյսն փշրեաց  
եւ մանրեաց, եւ ընկէց յանդիման շիրմացն այնոցիկ որք զոհէ-  
ին նոցա»։ Բ Մնաց. 1Գ. 4.—«Արկ զմոխիր նոցա ի Բեթէլ . . .  
ցանեաց զմոխիրն նորա ի գերեզմանս որդուց ժողովրդեանն»։ Գ  
Քաղ. ԻԳ. 4, 6.)—«Ահաւասիկ (Ահաւանիկ?) սեղանն պատառի ի  
ներքոյ Յորորովամայ իբրեւ կայ, եւ վայրի (տպ. Յորորովամայ,  
իբրեւ կայ եւ վարի) մոխիրն՝ որ ի վերայ նորայն էր»։ Քաղ.





2ի) եւ Չէն՝ է Հեծանելի ձիոյ կաղմած, այս ինքն թամբ, ասպանդակք, սանձք, եւ այլն. զգ. Harnais.<sup>1</sup>

82

ԱԳԱԹ. «Մեծ աւագութեան բարձի եւ պատուոյ պարգևս խոստանայր, եթէ յանկարծ որ հնարեսցէ պատրել հաճել զմիտս աղջկանն գալ առ նա». 160:

ԲԻԻԶ. «Բագում ոսկի եւ բազում գանձս արծաթոյ . . . տայր (Արշակ) նմա (Խաղայ), պատրել հաճել զմիտս նորա, յինքն յանդուցանել». Գ. ժք. 108:

— ԴԻՏ. Միւս Դասքն ունին Հաճել զմիտս (ուրուք) շատ յաճախութեամբ. բայց Պատրել հաճել զմիտս (ուրուք)<sup>2</sup> ոչ բնաւ:

83

ԱԳԱԹ. «Իսկ դորին խրատոյ անշնորհ առնել (տպ. արաբեալ) զգլխն իշխեաց». 160:

ԲԻԻԶ. «Իսկ թագաւորն Արշակ . . . անշնորհ առնէր գտալիսն եւ զրեւելիսն կարասոյն». Գ. ժա. 104:

84

ԱԳԱԹ. ա. «Արդ ելեալ դահճապետն պարծելով չարաման առնել զնա». 161:

բ. «Իբրևս զթճնամիս չարամանը եղեալ ի վերայ երախտեացն, շար փոխանակ ընդ բարոյ ընդունէին հրաւիրակքն». 469:

ԲԻԻԶ. ա. «Ապա զայրացեալ ընդ բաննն թագաւորն, կա-

1. Մ. Խորենացի, որ ի Պատմութեան իւրում, Բ. հթ. 338, գեղաթանգեղի Ասպազէնն կը մեկնէ Կազմած ճիոյ բառիւք, (համեմատել ի վեր անդր ընդ երկրորդ վկայութեան Ռակեբերանի,) «Առեալ (Տրգատայ) զգէնն իւր եւ զկազմած ճիոյն, ի լիւղ ընդ լայնատարած եւ խորայտակն անցանէր ընդ եփրատ», ի զիրս Պիտոյից կը կոչէ զայն Չիւազէնք. «Քաջապինդ զաւրութիւն ձիոյս. զի ոչ գտող պատերազմողն տանելով հզարապէս ի մարտին ժամադրեալ տեղի, այլ հանդերձ նովա զիրն պատրաստական ճիւազէնս եւ զամրոցս, եւ զսպառազինութիւնն զինուորին զաւրուոր ուժով բառնալ զինքեամբ կարողացեալ». է. Ե. 501: Տես եւ Ասպազէն ի նորին Պատմ. Բ. ձե. 356:

մեցաւ զնա շարաման առնել»։ Գ. և. 87. — «Զվատակ սպարապետն Հայոց շարաման հրամայէր առնել»։ Ժդ. վերնագիր. 165. — «Եւ բազում բերդակալս բերդացն շարամանս առնէին»։ Ե. ա. 188:

բ. «Յաղագս... շարաման լինելոյ տիկնոջն Փառանձեմայ»։ Գ. ծե. վերնագիր. 169: Այլուր մակրայօրէն. «Յետոյ եւ ինքն շարաման ծակտեալ ելանէր մեծաւ տանջանաւք յաշխարհէ»։ Գ. ժ. 25. — «Չարաման սպանանէին զամենեսեան»։ Գ. ծթ. 178. — «Գրեալ էր... հրաման առ նա, զի շարաման սատակեցէ զճայր մարդպետն»։ Ե. գ. 191:

==ԳԻՏ. Կայ մի անգամ յերկրորդ Գասի Չարաման ածական. «Ասաց Տէր վասն նոցա, թէ զման շարաման մեցցին ի սոխու»։ Զդան, ժէ. 299:

85

ԱԳԱԹ. ա. «Որ միանգամ ի Հոռոմոց աշխարհէն) միաբանք եկին հասին յերկիր Հայաստան աշխարհին, աւելի էին քան զելթանասուն մարդ»։ 163:

բ. «Արդ զթան յարարածս քո, քոյով բարերարութեամբ շնորհարդ եւ առ երկիրս Հայոց աշխարհիս»։ 84:

ՔԻԻԶ. ա. «Յաղագս որ ինչ յետ քարոզութեանն Փաղէսի Առաքելոյ յերկիրն Հայաստան աշխարհին»։ Գ. ա. վերնագիր. 5: Այլուր. «Եւ եզին զնա առ եկեղեցեան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի՝ հաւուն Գրիգորիսի, քահանայապետին մեծի՝ աշխարհին Հայաստան երկրին»։ Գ. դ. 15. — «Ժողովեցան հասին կուտեցան տոնով զաշխարհն Հայաստան երկրին»։ ժա. 26. — «Ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին»։ իա. 54:

բ. «Եկն անց (Սանէսան) ըստ իւր գահմանն ըստ գեան մեծ ըստ Կուր, եւ եկն տարածեցաւ կլից զերկիրն Հայոց աշխարհին»։ Գ. է. 15. (տպ. ընդ գեան մեծ ընդ Կուր. զոր տես ի Քիւզ. = Մկր. թիւ 3.) Ըստ այսմ եւ այլուր. «Յերկրէն յաշխարհէն Ծննաց եմք լեալք թագաւորք ի բնութեանէ»։ Ե. լէ. 241:

Տես եւ «Հայաստան աշխարհ» ի Կոր. = Ագաթ. թիւ 1:

86

ԱԳԱԹ. «Երդ՝ աուրս վից ի իոր տխրութեան եւ յանհնարին տրտմութեան հղեալ (2. իսկ տպ.՝ կացեալ) թագաւորն՝ առ անձուկ սիրոյ զհղոյն Հախսիմնայ». 163—164:

ԲԻԻԶ. «Զանձուկ սիրոյ պատճառեալ, համարձակութիւն խնդրէր՝ զալ նմա առ նա». Գ. ի. 51:

[Ա. Դաս]† «Միշտ ի մտի ունի զանձուկ սիրոյն, եւ շտալ յաղթել ոչ նեղութեան եւ ոչ վշտաց՝ մտացի անձկոյ». Ոսկ. Փիլիպ. Ա. 353:

87

ԱԳԱԹ. «Ապտ յետ այտորիկ ժամ տունեալ որսոյ ամենայն զաւրացն, ածել կուտիլ զպառականն». 164. (տպ. որսոյ՝ ամենայն զօրաց ածել կուտել. իսկ 2.՝ զամենայն զօրացն ածեալ կուտեալ: Տես եւ յ՛Ագաթ. = Մկր. թիւք 41, 42:)

ԲԻԻԶ. «Սպարապետին Մանուէլի ամենայն Հայոց գնդին տունեալ էր ժամ յորս երթալոյ». Ե. իգ. 252:

88

ԱԳԱԹ. «Ժամ տունեալ որսոյ ամենայն զաւրացն, ածել կուտիլ զպառականն». 164. (տպ. այլազգ. տես ի նախընթաց թիւն.)

ԲԻԻԶ. «Եւ ոչ որ էր՝ որ մնացեալ էր առ թագաւորին, . . . բայց միայն սակաւ սպասաւորաւք հանդերձ, եւ որսոցն պառականաւք, եւ ուսիվիրայ մարդկան». Գ. ի. 52:

==ԴԻՏ. Պատական յոգնական բառ է եւ կը նշ. Որսոյ շունք, գգ. Meute. եղականն է Բարակ, որ կը գտնուի յեղիշէի Պոմ. Վարդանանց, Ը. 158. «Սպառեցան ըարակք որսականք, եւ խցեալ կուրացան արշաւանք որսորդաց»: Նոյն է եւ պարսկերէն Պարագ, Որսոյ շուն, (Հ. Յակոբոս Պօղածեան, Բոգ. Տաճկ. — Հայ.). հին բարձր գերմաներէն bracco, chien de chasse. եւ ի գերմանականէն՝ իտալերէն bracco, գաղղիերէն braque. (տես Braque ի Լիարէ, Dict. de la langue française, ուր չեն նշանակեալ ոչ պարսկերէնն Պարագ, եւ ոչ հայերէնն Բարակ:)

Առաջին անգամ է. Արսէն Բագրատունի տուած է գողիղ մեկ-նութիւն Պատական բառիս յիւր Զրգ. Քեր. Կ. 48, յ. 104. «Ան. դատ. դատան. . . : Այսպէս է եւ պատական, այսինքն բարակք որսականք, շարք կամ երամ բարակաց». յորմէ եւ Աւձնոն Բառարանի երկրորդ տպ. «Պատական. որսի շներ». մինչևս նոր Հայկազեանն սխալ հասկացած է «երագազ. ուռկան որսորդաց էրէոց՝ իրրեւ փարախ շրջափակ». — *reti*, այս ինքն՝ ցանցս, կ'ըսէ եւ իտալական թարգմանութիւնն Ազաթանգեղի հրատարակեալ ի Ս. Ղազար, 100. — «ուռկան» եւ Զախջ. ի Հայ. — Իտալ. Բառարանին. — նոյնպէս եւ Չագրճեան ի Բարբառարանին՝ թուրքերէն թօր, ցանց, ուռկան:՝ Իսկ է. Սրապիոն Էմինեան յիւրում Գաղղ. — Հայ. Բառագիրս՝ գյոզնակի Պատականն կ'առնու իրր կզակի բառ, Որսոյ շուն. «Levron. Ազգ ինչ փոքրիկ պատականի». «Limier. Հետախոյզ պատական». եւ այլն: — Բիւզանդ ունի եւ Պատակիմ՝ բայ, որ թուի նշանակել՝ որսական շներով հետազօտել կամ որոնել զանասունն. «Ատ. Արջ մի տեսի սպիտակ իրրեւ գձին: Եւ հրապուրեաց զմարդպետն ի ջանել ի կառաց անտի, եւ հեծանել ի նժուզի. եւ մտեալ պատակէին մայրեացն». Գ. Ժդ. 115: Թովմա Արժբունի, 66, առեալ ի Բիւզանդայ՝ այսչափ ինչ միայն կ'ըսէ. «Եւ առեալ զնա մտանն ի մէջ մայրեացն»:

89

ԱԳԱԹ. «Եւ զսո ուրեմն մոլեզնեցար. զեւ ուրեմն հարաւ ի քեզ». 166:

ՔԻԻԶ. «Մոյիս զու. զեւ ուրեմն հարաւ ի քեզ». Զ. ր. 267: [Ա Դաս]† շերեւ տարան ի ներքս (զնեքրինին), առէ արքայ. Դեւ հարաւ ի քեզ, զի զայդ եւս առնես թագաւորութեանս իմոյ». Մար. Պամ. Արեւ. Վկ. 33:

90

ԱԳԱԹ. «Արդ իրրեւ տեսանէին զնոսա ի բացէ՝ զի զային Գրիգորիոս Ատայիւն հանդերձ». 168:

1. Եթէ Պատական նշանակէր Ցանց, Ուռկան, Ազաթանգեղ շէր ըսեր «ածել կուտել», այլ «բերել կուտել». տես յԱզաթ. — Մկր. Թիւ 42, «բերել կուտել զգիակունս»:



ԲԻԻԶ. «Մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր»։ Զ. ք. 266:

—ԳԻՏ. Միւս Դասքն կըսեն Տեսանեմ՝ ի բացուստ, ի հեռուստ, ի հեռաստանէ. «Եւ տեսեալ զնա (զՅովբ) ի բացուստ՝ ոչ ծանեան»։ Յովբ, Բ. 12.—«Եւ ետես թղհնի մի ի բացուստ անբեւայից, եւ եկն թէ գտանիցէ ինչ ի նմա»։ Մրկ. ԺԸ. 13.—«Ի հեռուստ տեսին զնա, եւ ողջոյն ետուն»։ Ոսկ. Մտթ. Ա. Թ. 134.—«Ետես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ»։ Ղուկ. ԺԶ. 23.—«Աստուած է, ի հեռաստանէ տեսանէ»։ Ոսկ. Վճիռ Քանան. կնիչն, 373.—«Ես աստ կայի . . . այլ հոգին իմ . . . տեսանէր զգործս քո ի հեռաստանէ»։ Կիւր. Կոչ. ԺԶ. 351.—«Զի զլիբրինս բարձունս եւ զմեծամեծս, . . . յորժամ հայեցեալ տեսանիցեմք ի հեռաստանէ, այնպէս տեսանիցեմք՝ եթէ չըջանս առեալ գայցեն չուրջ զմեւք»։ Բրս. Վեց. Զ. 130.—«Եւ ետես նա զիւր զերէց զոգւոյ եղբայրն ի հեռաստանէ յանապատի անդ կատարեալ»։ Պոմ. Հար. Եզիպտ. 234:

91

ԷԳԸԹ. «Եւրհնեալ է Աստուած՝ որ արժանիս արար զմեզ հասանել ի մասն ժառանգութեան սրբոցն ի լոյս»։ 174 —175.—«Արժանի լինել . . . սրբոցդ մասին ժառանգութեան լուսոյն վիճակին հասանել»։ 543. (համեմատէ բնդ Յճխ. «Զի արժանիս արասցէ զմեզ մասին ժառանգութեան սրբոց աւետեացն ի լոյս»։ ԺԶ. 157:)

ԲԻԻԶ. «Զի եւ ես հուստարիցից հասանել ի մասն ժառանգութեան սրբոցն ի լոյս»։ Ե. իզ. 217:

—ԳԻՏ. Փոխանայ՝ «մասն ժառանգութեան սրբոցն ի լոյս», կը կարդանք ի Թղթին Կողոսացոց, Ա. 12. «Ուրախութեամբ գոհանալ զՀարէ, որ կոչեացն զմեզ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս»։ Այսպէս եւ յՈսկ. Կողոս. Բ. 541, 542. «Գոհանայցեմք զայնմանէ, որ բաւեականս արար զմեզ ի մասն վիճակի սրբոցն ի լոյս»։ Իսկ յԵփր. Կողոս. Ա. 166. «Ուրախութեամբ գոհասջիք զՀարէ, զի արժանիս արար զձեզ մասին հասելոյ»:

ԱԳԱԹ. «Զի պահնաց զնա զաւրութիւն Ամենատեառն Քրիստոսի»։ 175—176.—«Աստուածագէտս յարդարեաց բիւրապատիկ սքանչելիւքն Ամենատէրն Քրիստոս զսիրելի աշակերտսն իւր»։ 527: Այլուր. «Առաջնորդ աստեղն (աստեղըն?)՝ մոգուցն պատարագաւք յայտնի Ամենատեառնն տէրութիւն»։ 287: Տես Ամենատէրն եւ 172, 243, 263, 290, 304, 568, 573, 649. իսկ 176 եւ 495, Տէր կամ Տէրն ամենայնի:

ԲԻԻԶ. «Զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց եւ հաւր իւրոյ, եւ գործ քաջութեան զործեսցէ Ամենատեառնն Քրիստոսի»։ Գ. Ժա. 28. իսկ Գ. Ժգ. 111, Տէր ամենայնի Քրիստոս: Այլուր. «Զի... զԱմենատեառնն տէրութիւնն զիտասցուք»։ Գ. Ե. 83:

(Կոր. «Ոչ վասն անձին Ամենատէրն, այլ համաշխարհի յուսումն զայն գործէր»։ 24: Իսկ յերես 3, «Զորոց եւ Տէրն իսկ ամենայնի՝ բերանալիր գոչէր (նոր Հայկ. ի Բերանալիր՝ գոգէր) զագնուակնութիւնսն»։)

—ԴԻՏ. Ամենատէրն Քրիստոս եւ Ամենատեառնն տէրութիւն չկան ի զիրս միւս Դասուց, այլ լոկ Ամենատէրն. Սերբեր. ԺԱ. 200. Պամ. Թեկղի, 513. Բրս. Վեց. Բ. 37. Գ. 63. Գ. 72. իսկ զոր կը նշանակէ նոր Հայկ. «Գեղեցիկ արհնութիւնս Ամենատեառն մատուցանէր»։ Աթ. Անտ., ի տպագրին է շոսկ Անտոնիոս գեղեցիկ գոհութիւն Տեառն Աստուծոյ մատուցանէր»։ 22: Առաջին Դասուն սովորականն է Տէրն ամենայնի. Եղնիկ, 269, 270. կամ Ամենեցուն, ամենեցունց Տէրն. Իմաստ. Զ. 8. Ը. 3. Սերբեր. Ը. 146. Ոսկ. Մտթ. Ա. 158. Բ. 588. նոյն, Կողոս. Ա. 533. Ե. 575. եւ այլն:

ԱԳԱԹ. «Ապա եթէ ոչ կամիջիք լսել քարոզութեան քանին կենաց, աստէն հարեալ վրիժուքն չարաչար հարուածուք զձեզ սատակեսցէ»։ 181.—«Ապա ընթացան (Առաքեալքն) ընդ տինդերս ամենայն մինչև ի ծագս երկրի, լի առնել զքարոզութիւն քանին կենաց»։ 517.—«Մտնութեամբ հասեալք լի-

նէին աւգտակար խրատուն կենսաբեր քարոզութեանն բանին կենաց աւետեաց Աւետարանին». 548. զոր համեմատէ ընդ հատուածի Յառաջարանին, 24. «Ընթեք երցեալք զԹորոզմեայ ազգին զՀայաստան աշխարհին զաստուածապարզիւ աւետեաց Աւետարանին քարոզելոյ բանին կենաց» (ըստ 2):

ԲիԻԶ. «Եւ ընդ ամենայն տեղիս սահմանացն Հայոց Մեծաց, ընդ որ էր յառաջագոյն նորուն Հարցն սերմանեալ զքարոզութիւն բանին կենաց, զնոյն եւ սա ուղղեաց անձրեւովն». Գ. դ. 74:

— ԳԻՏ. *Բանն կենաց*, զգ. La parole de vie, տեալ է ի նոր Կտակարանէն. «Զբանն կենաց ունել յանձինս». Փիլիպ. Բ. 16.— «Ժառէր ընդ նոսա զբանն կենաց». Հանդիսա Յովհ. Զ. 1222.— «Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յախտեանականաց ունիս». Յովհ. Զ. 69:— Ազաթ. ունի եւ Սերմանեմ՝ զբանն կենաց. 588, 613. որ կայ եւ ի Գոր. 7, 14: Այս ասացուած կը գտնուի եւ ի Լարուրնա, 9. յորմէ եւ Եւս. Եկեղ. Ա. Ժգ. 66:

## 94

ԱԳԱԹ. «Ապա եթէ ոչ կամիջիք լսել քարոզութեան բանին կենաց, . . . ի ձեռս ատարար թշնամեաց զձեզ դատեսցի». 181. Այլուր. «Վասն որոյ անդրէն մատնեալ զնոսա ի ձեռս ատարար զզգաց . . . , խրատէր զնոսա». 240:

ԲիԻԶ. «Ո՞ ձեռս ատարար թշնամեաց մատնեալիք դուք ի գերութիւն եւ ի լուծ ծառայութեան». Գ. Ժդ. 41:

— ԳԻՏ. Կայ ի Մկր. Ա. ր. 8. «Սրբութիւնն՝ մատնեցաւ ի ձեռս ատարարաց»: Նման սմին եւ յԵղեկիէլ, ԺԱ. 9. «Հանից զձեզ ի միջոյ դորա, եւ մատնեցից զձեզ ի ձեռս ատարարաց»:

## 95

ԱԳԱԹ. «Իսկ արդ զո՞յր ինձ արդեւք հնար իշխանութեան՝ իշխել (ըստ 2) բան մի ի ձէնջ թարուցանել, թող թէ բանզի հրաման առեալ յԱստուծոյ». 186.— «Ըանզի՛ առ Արրահամու եւ առ Ղովտաւ (2. իսկ սպ.՝ առ Արրահամու եւ Ղովտայ) մարդկաւրէն իսկ դարմանեալ (Հրեշտակքն), եւ առ Գանիիլի՛ իբրեւ

զայր մի *երեսեալ*». 244—245.—«Եւ *քանզի* բազում անգամ *աւանդեալ* ի լսելիս արինականացն զշաքշարանն, եւ զերրորդ աւուրն զյարութիւնն, . . . յառաջագոյն ժամադիր առնէ ի յարութիւնն». 355.—«Եւ *քանզի* յառաջագոյն վկայութիւն *եղեալ* Հոգւոյն Սրբոյ տանն Իսրայելի, եւ ուխտ *եղեալ* քրիստոսամուտ գալտեանն, . . . *եկեալ* այնուհետեւ ի դատաստան կոչել զերկինս եւ զերկիր». 369—370.—«Եւ *քանզի* ոչ *կարացեալ* մարդկան բառնալ զլուծ պատուիրանաց արգարութեանն, վասն այսորիկ անկան ընդ կարեւր մահու մեղացն». 439—440: Այլուր. «*Չի* յորոյ երեսոց զկենդանութիւնն *ընկալեալ*, նախ քան դամնայն զնա ետես». 209.—«Ժողովեամբ ժողովեալ՝ զաւր տանին խրմբեսցեն. *զի* նախ անդ սկիզբն *արարեալ* շինել զեկեղեցիս». 611: Այլուր. «*Վասն զի* ոչ կանխեալ *գիտացեալ* ձեր զարժանն, վասն այսորիկ ամ զարժան գաւազանն ի վերայ». 615:

ԲԻԻԶ. «Ապա թագաւորն Պարսից, *քանզի* զայս լուեալ ի քաղէիցն, տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս զհոգոյ եւ զճրոյ». Գ. ծղ. 166:

ՄԿԲ. «Ժողովեցան զաւրքն ի վերայ Լիւսիմաքեայ, *քանզի* բազում նուագս ոսկիս *կորուսեալ* ի միջոյ համարուէն». Բ. դ. 39:

—ԴԻՏ. *Քանզի* առեալ, դարմանեալ, *Քանզի* ոչ *կարացեալ* մարդկան, *Վասն զի* ոչ *գիտացեալ* ձեր, փոխանակ դիմաւորին՝ որ սովորականն է. Քանզի *առի*, *դարմանեցան*, ոչ *կարացին* մարդիկ, ոչ *գիտացէք* զուր. (տես եւ ի Կոր. —Ագաթ. զթիւսն 61 եւ 54, ԴԻՏ. եւ աստէն զթիւսն 9:) *Քանզի* շողկապի հետ անցեալ զերբայ՝ կը գանուի ուրեք ուրեք եւ յԱռաջին Դասի. «Տուրնջեամբն յարդորէ ի նոյն (ի հաշտութիւն՝ Պաւղոս). *քանզի* *կասկածեալ* (փ. կասկածէ) իմն ի գիշերոյն, զուցէ առեալ զզայրացեալն՝ եւս բորբոքիցէ». Ոսկ. Մաթ. Ա. ժղ. 259. (նոյն բան կը գանուի անանց *քանզի* շողկապի յՈսկ. եփես. ԺԳ. 820, այսպէս. «*Կասկածէ* ի գիշերոյն երանելին Պաւղոս, թէ զուցէ առնուցու զզրկեալն . . . գիշերոյն պարապութիւն, եւս քան զեւ զհուրն (այլ. հուրն) բորբոքիցէ».)—«Ոչ այնպիսի ինչ շտայ ճանաչել զանձն՝ որպէս ընդ երկրաւորսս բեւեռել. եւ ոչ ինչ դարձեալ բեւեռեալ ընդ երկրաւորս կազմէ՝ որպէս շգիտել զանձն. *քանզի* միմեամբք մլսեալ (փ. մխին) երկոքեան».



անդ, Ա. ին. Յորդ. 399.—«Բանգի և զտոյն իսկ յայտ արարեալ (փ. արար) ասելովն, թէ. անդ, Բ. Ժն. 595: Իսկ ի Կիւր. Կոչ. Ժ. 171, «Քայց կրկին այս զգուշութիւն, և առակ արինակի մեծի խորհրդոյս, զի երդումն ևս ի վերայ եղեալ», թեբեա ուղղելի է զերդումս:

ԱԳԱԹ. «Արարեալ (զաշխարհս) Միասնական Երրորդութեանն». 195.—«Եւ յետ այտորիկ ասացեալ միասնական Երրորդութեանն զարութեան՝ լինել յուսաւորացոյց». 196—197.—«Տայ վճիռ և վասն միաւորութեան միասնական Երրորդութեանն». 530. (համեմատէ ընդ Յճխ. «Զի միասնական Երրորդութեանն միշտ հանցուք արհնութիւնս». Ի. 184.—«Վայելի . . . յանուշակ արքայութիւնն Հաւրն ամենակալի և Որդոյն բարեբարի՝ տուողի մեղ զկեանս, և Հոգւոյն Սրբոյ՝ նորոգողի զհաւատացեալս, միասնական սուրբ Երրորդութեանն». Ը. 75:) Այլուր. «Վկայիցին զմիասնական տէրութիւնն Երրորդական». 178: Գարձեալ. «Երեք անձինք . . . միասնական փառաւք». 285.—«Երեքանձնական միասնական զարութեանն . . . ծունր կրկնեցի». 464.—«Զի անքակութիւն արասցէ ի մի հաւատս միասնական պաշտամանն». 470.—«Զի երեւեցի միասնական միարունն զարութիւն». 496.—«Միասնական ընութեանն երկց անձանցն կատարելոց մերձաւորք և ծանալթք». 527.—Յայտ արարեալ (Որդւոյ) զմիասնական կամացն (Հար և Հոգւոյն). 529.—«Թէպէտ և առաքեալք անուանեցան (Որդի և Հոգի) յառաքիչն Հաւրէ, այլ ընդ նմին միարուն և առանց մեկնելոյ զմիասնական գործս կատարեցին» 530: Կրթէ նա և Միաբունն նոյն մտօք. Միաբունն երրորդական զարութիւն». 311.—«Միաբունն աստուածական զարութիւն». 530: Այլուր կ'ըսէ Միասնական զմարդկանէ, իբր Միարան, Միաբունական. «Առ ի ծանալթ առնելոյ աստուածամերձ գիտութեանն զմիասնական ազգսն բաժանեալս». 243.—«Արդ արարեալ զնոսա (զմարդիկ) միասնական միարանութեամբ՝ իբրեւ զմի տուն երեւեցուցեալ». 456.—«Յիւրում (2. իսկ տպ.՝ յորում) աստուածե-



տի», ճառընտրաց աղաւաղութիւն թուի ինձ թէ Համագոյ՝ եւ թէ Համապատիւ. (փոխանակ վերջնոյս՝ Մամթէի Մեկնութեան թարգմանիչն կ'ըսէ այլուր Հանգիտապատիւ. նոյնպէս այլ թարգմանիչք սոյն Դասուս) — Երկրորդ Դասն կ'ըսէ հանգոյն Առաջնոյն. «Ոչ է էակկից նորա, այլ յաւելուած իմն լինին». Եփր. Համար. 138. — «Սոյնպէս ոչ գոյ ասել Հոգւոյն Սրբոյ ոչ եթէ որդի նա, եւ ոչ եթէ քոյր, այլ ի նմանէն եւ ընակկից նորա». անդ, 207: Իսկ այլուր՝ «Ապա եթէ պատուաստի ի նա, լինի նա այնուհետեւ ի նմանէն գոյակկիցն նորա հանգերձ աւտարացեալ էութեան նորա» անդ, 138: — Երրորդ Դասն. «Հաւատամք... ի մի Տէր Յիսուս Քրիստոս, ... Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, ծնեալ եւ ոչ արարեալ, իսկակկից Հաւր». Սահակայ եւ Մաշտոցի Պատասխանի Թղթոյն Պրոկղի, 140. (առեալ յեւագրէ, ուր ասի « միազաւր Հաւր». տես Հ. Յ. Գաթրըճեան, Հանգանակ հաւատոյ եւ այլն, Կ. 22:) Սոյն Դասուս յատուկ է եւ Իսկութիւն (= Էութիւն)՝ որ կը գտնուի բազում ուրեք ի Գիւր. Կոչ., ի Բրս. Վեց., յԱսկ. Յոհ. (ստէպ եւ յԱզաթ. կայ եւ ի Բիւզ. եւ ի ՅՏիւ.): — Բնակկից եւ Իսկակկից կան եւ առ Բիւզանդայ, Գ. Կ. 84. «Ամենայն ազգք (ապ. ազգ) եւ ազինք խոստովանին զՏէր Յիսուս Քրիստոս ծնեալ ի Հաւրէ, ծնեալ եւ ոչ արարեալ, իսկակկից Հաւր եւ ընակկից ծնողին իւրում». (տես վերագոյն ի Թղթին Սահակայ եւ Մաշտոցի, ծնեալ եւ ոչ արարեալ, իսկակկից Հաւր:)

97

ԱԳԱԹ. «Եւ անդէն ընդ ասելն Հաւրն արարչութեան ցարարչակկից Որդին եւ ցհամագործ Հոգին». 196. — «Արդ՝ Հաւր Արարչի խորհուրդ ի մէջ առեալ ընդ արարչակկից Որդւոյ եւ

1. Համագոյ Երկրորդ Աշակերտաց բառ է. յորմէ եւ Համագոյակկից. «Ճորժում զհնազանդելն համագոյակկիցն առ Ամենահայրն՝ հասցէ իմանալ Որդւոյ մարդկութեանն մինչ ի քեզ հնազանդեցելոյ». Գ. Անյաղթ, Նեքր. ի Սուրբ Խաչն, 119: Զթերի պատասիկ մի Ոսկերիբա՛ ի Մեկնութեանն Բ Տիմ. Գ. 195, ծան. 1, սոյն բառի թարգմատւած է Հ. Նեքսէս Սարգսեան. «Եւ այս զհամագոյակկից բնութիւնսն յոյտ առնէ, և ոչ զայլեայլութիւն բնութեանց»: Տես զիմ զիտողութիւն ի Հայկ. Բառարնն, Կ. 46—47:

ընդ արարչակից Հոգւոյ». 210.— «Խառնեաց զմեզ յաստուածութիւնն իւր Միածին Աստուածորդին՝ արարչակիցն Հաւր» (բատ 2). 286:

ԲԻԻԶ. «Տէր Յիսուս Քրիստոս . . . գործակից արարչակից յամենայնի առ Հաւր ի սկզբանէ». Գ. Ե. 80.— «նոյն նման զուգակից (Հաւրն՝ Քրիստոս), եւ աթոռակից եւ արարչակից». անդ, 81:

— ԴԻՏ. Եզնիկ կ'անուանէ զԱրհմնն արարչակից Որմզդի ի ստեղծագործել զարեգակն. «Արարին (Որմիզդ եւ Արհմնն) զարեգակն, զի լիցի նոցա զատուոր: Անդ հնարագիւտ լինելոյ արեգական ասեն զԱրհմնն, եւ ասա յայտնի իսկ արարչակից լուսոյ». 141:

## 98

ԱԳԱԹ. «Աննել զբանատր զիմաստուն զխաւսուն արարածն». 197:

ԲԻԻԶ. «Որ արար իսկ զմարդն (2. իսկ տղ.՝ որ արար զմարդն իսկ) ի հոդոյ, եւ կարգեաց զբանատրս զխաւսունս իմաստունս». Գ. Ե. 80: Այլուր. «Ստեղծեք զմեզ ի հոդոյ, եւ զհոգեղէնս այսպէս իմաստունս բանատրս եւ կենդանիս արարեք». Գ. ԺԷ. 175:

— ԴԻՏ. Կայ յիսկ. Ես. ԽԵ. 317. «Արար զբեզ խաւսուն իմաստուն, . . . զի զնա փառատրիցես». եւ ի նորին Մեկն. Փիլիպ. Է. 418. «Մարդն՝ խաւսուն եւ իմաստուն է», նոյնպէս եւ յեզնիկ, 175, խաւսուն եւ իմաստուն:

## 99

ԱԳԱԹ. «Նախ ասաց բանս յառաջացոյց պատմութեան հանդերձելոցն, ապա անց յառաջակայսն». 199:

ԲԻԻԶ. «Դու իլեցեք այրեցնր զիս. զի ասացի եւ բանս, Մի յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս». Ե. Գ. 195:

— ԴԻՏ. Կայ ասեն բան յերկրորդ Գատի. «Ասեն բան, սղատելով ազատին արարածք». Եփր. Հո. Ը. 33.— «Ասեն բան, կին մի ի մարգարէից անտի ի ներքս յեկեղեցւոջն Կորնթացւոց խաւսէր». նոյն, Ա Կոր. ԺԳ. 79.— «Անեղիւզ համարձակ ձեռնա-



մութս եղին ի վիրս Սատուծոյ, և ասեն բան, Ուղղելով ուղղեմք  
զնոսս». Եւս. Եկեղ. Ե. իր. 410: Ըստ Գեր. Այտրենեանի՝ Բամ  
(այս ինքն՝ Ասեմ) պակասուոր բային յոգնակի կրքորդ գէմն է  
բան ի սահմանական ներկայի. «Բամ, բաս, բայ. բամք, —  
բան». տես Քնն. Քեր. Յաւելուած, Ե. 462. տես և Թոռնեան,  
Հատ. Ընթերց. Ե. 332, ծան. 1. զոր պիտի քննեմ այլուր:

100

ԱԳԱԹ. «Վասն որոյ մահ խորհեալ՝ սպան (Գայէն) զեղ-  
բայրն»: 222:

ԲԻԻԶ. «Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել  
զՏիրիթ եւս». Դ. ժե. 122:

(Մկր. «Զղջացեալ հմ թէ ընդէր ետու ես զզուտոր իմ նմա  
կնութեան. զի խորհեցաւ նա ի վերայ իմ մահ».) Ե. ժա. 10:

— ԴԻՏ. Ի հատուածին Բիւզանդայ բաւական էր պարզա-  
պէս ըսել, կամ «մահ խորհէր ի վերայ Տիրիթայ», հանգոյն Մա-  
կարայեցոց. կամ «սպանանել խորհէր զՏիրիթ»: Այսպէս միւս  
Թարգմանիչն. «Եղբարք նորա (Քրիստոսի) Խորայեցիք խոր-  
հեցան մահ ի վերայ նորա». Եփր. Եւտ. 300. — «Մահ խոր-  
հէին սրբոյն (Յովսեփայ՝ եղբարք նորա), և Ատուած դարու-  
թիւն նոցա զորք տեսչութեան կազմեաց». Սերեր. Ը. 150. —  
«Իսկ յորժամ զձեռնն զաւսացեալ պարզեաց (Քրիստոս), ապա  
իմն կարի դադանանային, և սպանանել խորհէին». Ոսկ. Մտթ.  
Բ. ժդ. 584. Իսկ յԵսթեր, ժԶ. 23, կ'ըսուի. «Որք ի մեր վերայ  
զխորհուրդ մահու խորհէին»:

101

ԱԳԱԹ. «Զոր և ասէր իսկ Նախավկայն, թէ Ատուած  
փառաց երեւեցաւ հաւր մերում Արրահամու». 250. (այսպէս 2.  
և նոր Հայկղ. ի Նախավկայ. իսկ տպ. ունի՝ «զոր և ասէն վկայն  
Ստեփանոս, թէ Ատուած». և այլն:)

ԲԻԻԶ. «Զմեծն և զՆախավկայն զյառաջարկաւագն Ստե-  
փանոս և զընկերս նորա, զորս ընտրեցին (Առաքեալքն ի պաշ-  
տան աղքատաց)». Դ. դ. 77: Այլուր Նախավկայք կը կոչուին  
Գայիանէ և Հոփսիմէ. «Սոյնպէս և ի գաւառն Այրարատեան

զնախավկայան Քրիստոսի, ուր Գայիանէն եւ Հուրիսիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցաբն»։ Գ. ժդ. 37:

ԵԻԹ. «Վասն օրոյ եւ այնոցիկ որ սպանանէինն զՍտեփանոս զԱռաքեալն եւ զնախավկայն՝ կամակից եւ հազորդ էր (Սաւզոս) սպանութեանն»։ Յոջր. Պաւղ. 1107 ա.

— ԴԻՏ. Ստեփանոս կը կոչուի Առաջին վկայ ի Մար. Ի Վկ. Արեւ. 135: Իսկ ի Գիւր. Գոչ. ժէ. 383, Անդրանիկ որդի Եկեղեցւոյ, Առաջին սլաւոյ մարտիրոսաց:

## 102

ԵԿԱԹ. «Որում եւ մեծն Մովսէս ցանկացեալ չայէր»։ 251:

ԲԻԻԶ. «Երկնակեաց կենացն ցանկացեալ չայէր»։ Գ. Ե. 11:

## 103

ԵԳԱԹ. «Գայր երեւել Որդին յաշխարհ, եւ բարձրացուցանել զմարդիկ ի փառս աւագութեան»։ 258:

ԲԻԻԶ. «Եւ Մերուժանն Արծրունի իրրեւ տեսանէր զայն ամենայն փառս աւագութեան, որովք շքեղացոյց զՄանուէլ արքայն Պարսից, . . . յոյժ նախանձէր նա ընդ փառսն Մանուէլի»։ Ե. ԼԲ. 246—247:

ՄԳԲ. «Ստացարուք փառս աւագութեան, եւ ժառանգեցէք զանուն յախտենից»։ Ե. ր. 51: Այլուր. «Փառաւորեցուք զքեզ եւ զազգի քո եւ զաաճարդ ի փառս մեծութեան»։ Ե. ժե. 9. — «Դու ժողովեցեր զսա ի փառս մեծութեան, եւ ի պատիւ անուան քոյ. զու սիրեցեր զաաճարս զայս»։ Գ. ր. 6:

## 104

ԵԳԱԹ. «Որպէս Տուր ինչ մոլեկան Տրդեհի՛, որ ապականիցէ զլիւրինս եւ զգաշաս»։ 260:

ԲԻԻԶ. «Եւ կամ մոլեկան գունդն Մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ Տուր բոց ի գնդէն ելանէր եւ ի նշանացն, իրրեւ ի Տուր Տրդեհի. այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց

1. Յորով եւ Ղեւոնդ երէց, Պատ. Իէ. 125, «Գարձեալ այլ մոլեկան Տուր Տրդեհի բորբոքէր ի կողմանց Արեւելից յերկրէն Խորասանայ աշխարհին»:

ընդ հղէգն»։ Ե. Ե. 202. (տպ. «Եյանիցէր»։ այլ 2աճ. Պտմ. Հայոց, չ. Ե. 720, և Եյարն. Քնն. Քեր Ե. 100, ծան. 83, ունին «Եյանէր») Միտ գիր «ժողեկան» բառին և ի կրկին վկայութիւնսդ։

### 105

ԵԳԸԹ. «Ամիտփեցաւ փորըկացաւ (Միածին Որդին), և ևզև զինչ և կամեցաւ»։ 272: Եյուր. «Վասն մեր էջ ի չափաորութիւն, և ամփոփեցաւ ի մարմին»։ 281:

ԲԻԻՁ. «Ամիտփեցաւ փորըկացաւ, և ի Կուսէն մարմնացաւ»։ Գ. Ե. 80:

—ԳԻՏ. Կայ այս յերկրորդ Գասի, բայց այլ զարձուածով. «Վասն փորըկութեան և խոնարհութեան նորա (Յիսուսի), եթէ սրպէս խոնարհեցաւ և անփոփեաց և փորըկացոյց զանձն իւր»։ Եւս. Եկեղ. Ե. Ժգ. 66. առեալ ի Լարուքնայէ, 10, ուր կ'ըսուի. «Թէ սրպէս և վասն էր փորըկացոյց զանձն իւր»։ Իսկ Եփրեմի թարգմանիչն. «Արդ փորըկացաւ (եղիշա) ըստ տղայոյն և կշռեցաւ ի վերայ նորա, զի նկարեացէ զխորհուրդն Անդրանկանն՝ որ փորըկացաւ և խոնարհեցաւ»։ Թագ. Գ. 454.—«Եւ եթէ ճշմարտութեամբ փորըկացաւ և փորըկութիւն զգեցաւ, չէր ինչ մարթ փորըկութեանն ոչ երկնչիւ և ոչ խոռովիչ»։ Համար. 211:

### 106

ԵԳԸԹ. «Արդ (Անդր?) եկն և մեծն Յովհաննէս, . . . տաճարակիցն, և ոչ աւտար որ»։ 317:

ԲԻԻՁ. «Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին, ուրախակիցք և բազմականակիցք»։ Գ. ԺԹ. 48:

ՄԿԲ. «Չարութիւնն ևս քան զիս յանձն իւր անեցուցանէր՝ տաճարակից ընկերովքն իւրովք»։ Գ. ք. 13:

—ԳԻՏ. Տաճարակից է Սեղանակից, ինչպէս կ'ըսեն միւս թարգմանիչք:

### 107

ԵԳԸԹ. «Ձի ի նա (ի Յովհ. Մկրտիչ) հասեալ էր (աւծու-

թիւնն) յառաջին նախնեացն» 320: Այլուր. «Վասն զի եւ զմեր զնախնին զառաջին հարսն զթագաւորսն դառնացուցեալս ձանձրացուցին»։ 124:

ԲիՒԶ. «Ամենայն նախնիքն մեր առաջինքն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր»։ Ե. լէ: 240:

### 108

ԱԳԱԹ. «Վասն որոյ եւ քահանայապետ ազգին տիրասպանաց՝ ակամայ մարդարէացաւ»։ 340: Այլուր. «Վամակոր ազգին խաչահանուացն»։ 358:

ԲիՒԶ. «Ըն ձերում անմտութեան՝ տիրասպան ազգին խորհրդոյն հաղորդեցայք չրէիցն»։ Գ. Ժդ. 39:

### 109

ԱԳԱԹ. «Ազգ առնէր բարձրաձայն, հանդերձ ահաւոր նշանաւքն տուելովք, թէ եւ ի հրաժարելն միական միագործ էրնդ Հաւր»։ 352:

ԲիՒԶ. «Յերկրին Տարսնոյ (տպ. Տարօնու), ուր նշանաւքն եղելովք կործանեցան բազինք մեհնիցն»։ Գ. դ. 7.— «Կամ զհարդ կայսրն Վաղէս սատակեցաւ նշանաւքն եղելովք յԱստուծոյ»։ Գ. Ժ. վերնագիր. 100:

### 110

ԱԳԱԹ. «Վասն որոյ եւ զիշերի արարեալ զլուսաւոր յարութիւնն, զի պահարկելոցն եւ զգուշացելոցն (տպ. եւ 2.՝ պահարկելոցն եւ գուշակելոցն) ծանուացէ զճշմարտութիւն իրացն կատարելոց»։ 356:

ԲիՒԶ. «Եւ ինքեանք զգուշացեալք դասմանաւք (տպ. սահմանօք) երկրին իւրեանց, պահարկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ»։ Գ. իե. 145:

— ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի Պահարկանեմ շուրջ (գրմամբ). «Ամենեքին եկեսցեն ի վերայ քո ի հիւսիսոյ, . . . եւ արկցեն շուրջ զքեւ պահ»։ Եղեկ. ԻԳ. 24.— «Զցայգ պահարկուք զմեր շուրջ, եւ զցերեկ գործեսցուք»։ Նեեմի, Գ.



22: Ըստ այսմ եւ ի Բիւզ. եւ ի Մկր. Պահ՝ արկանեմ շուրջ (զիւիք). «եւ գային պահ՝ արկանէին շուրջ զԱնդեղ գամուք բերդաւն . . . . 2օգան (տպ. 2ուան) պահ՝ արկին գրբրդաւն». Բիւզ. Գ. իգ. 142.— «Շուրջ գրբրդաւն նստէին պահ՝ արկանէին». անդ, ծե. 170.— «եւ շուրջ գրանակաւն պահ՝ արկանէին». Մկր. Բ. ք. 24:

### 111

ԱԳԱԹ. «Ի միտ առ եւ գաստուածահրաման գործոցն դարութիւն ի վերայ [Ժանձրախուռն ոսկերացն հնացելոց». 372:

ԲԻԻԶ. «Ապա գնայր մարգպեան հայր ի սուրբ տեղեացն, եւ էջ յափն գետոյն հոսանացն եփրատու, [ի] հովիտան [Ժանձրախուռն անտառին]. Գ. ժդ. 115:

### 112

ԱԳԱԹ. «Ահա . . . յարինեալ են ըաժակք ի մատունս, եւ յարինեալ բազմականք ի տաճարս». 376:

ԲԻԻԶ. «Յորժամ առնայր զինի ի մատունսն ըմպել». Ե. ք. 190.— «եւ մինչդեռ թագաւորն Պապ զուրախութեան զինին ունէր ի մատունս իւր». լք. 232—233.— «Ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր». անդ, 233:

—ԴԻՏ. Բաժակք (զինւոյ) ի մատունս, Գինի կամ Տաշտ (զինւոյ) ի մատունս՝ կը նշանակեն Ի ձեռս, ի ձեռն կամ ի ձեռին, ինչպէս կ'ըստի յմսկ. եփես. Ը. 763. «Սոյնպէս եւ ես ի ձեռն առեալ զգարմանալի ըաժակ բանտականացն վասն Քրիստոսի՝ չկամիմ թողուլ, չկարեմ դադարել»: Գայ յերկրորդ Դասի, ըայց ոչ բոյորովին նման Ագաթանգեղի եւ Բիւզանդայ, եւ ոչ զինւոյ բաժակի համար. «Ամենայն որ ընթեռնու զգիր դպրութեան իւրոյ, եւ զհամար գործոց իւրոց ի մատունս ձեռաց իւրոց ունի». Լարուք. 23:

### 113

ԱԳԱԹ. «Կոստպաշտութեանցն մոլորութիւնք (տպ. սովորութիւնք. զորմէ տես աստէն ի թիւն 119), որ ի նախնեացն հետէ մոլորեալ գանդաշեցին». 384:

ԲԻԻԶ. «Յազում գանձք մթերեալ մնացեալ կային (յԱնդեղ բերդի) ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ»։ Գ. իդ. 142. — «Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք»։ Ե. լէ. 240:

Տես լի հնոց ժամանակաց հետէ» ի Բիւզ. — Մկր. թիւ 28:

## 114

ԱԳԱԹ. «Այս իսկ ժամանակ է կշտամբութեան եւ յանդիմանութեան»։ 393:

ԲԻԻԶ. «Զի դեռ այժմիկ ժամանակ է կշտամբութեան եւ ժամանակ յանդիմանութեան եւ ժամանակ դատելոյ»։ Ե. դ. 196:

ՄԿԲ. «Ահա հասեալ է ժամանակ կշտամբութեան կործանման եւ հպարտութեան»։ Ա. ր. 48:

— ԳԻՏ. Այսուր կ'ըսուի. «Այսպէս առէ եղեկիա. Աւր նեղութեան եւ կշտամբանաց եւ զայրացուցանելոյ աւրս այս»։ Գ Թագ. ԺԹ. 3. — «Այսաւր է աւր նեղութեան եւ նախատանաց եւ կշտամբութեան եւ բարկութեան»։ Ես. Լէ. 3. — «Պահիցես ինձ զնոսս յաւուր նեղութեան եւ կշտամբանաց նոցա». Յուդիթ, Բ. 5:

## 115

ԱԳԱԹ. «Նոյն կարէ եւ հոգեւոր ցաւդի, բուսուցանել սերմն (2. իսկ ապ.՝ սերմ) հաճոյ կամաց Վերնոյն»։ 405. — «Այսուիկ հալածէր (Կոստանդիանոս) զզարս խաւարին, եւ ի վերայ ամենայնի՝ Վերնոյն զարութեամբն (2. իսկ ապ.՝ ամենայն վերնոցն զօրութեանց) գեր ի վերոյ լինէր»։ 648:

ԲԻԻԶ. «Սպանութիւնս . . . գործէին, եւ այլ մեզս բազումս, եւ ոչ հայէին ի հրամանս Վերնոյն»։ Գ. Ժր. 31:

— ԳԻՏ. Վերինն է Բարձրեալն, Աստուծ. Աստի եւ ի Վարս Մաշտոցի, 18. «Առնէր ապա նշանագիրս (Ազուանից), ըստ վերնապարզել կորովի սօվորութեան իւրում»։ որ է՝ Պարգեւեալ ի Վերնոյն, եւ ոչ՝ Ի վերուստ պարգեւեալ, ինչպէս կը մեկնէ՝ Նոր Հայկազեանն: Իսկ ուր կ'ըսէ Բիւզ. Գ. Ե. 11. «Զամենայն իսկ զերկրաւորս առ ոչ ինչ համարեալ, ոչ լաւ համար-

ընցաւ գանցաւորս՝ այլ զվերինն», իմա՝ զերկնատունն. համեմատէ. «Զվերինն խորհեցարուք, մի գայս որ յերկրի ասա է». Կողոս. Գ. 2:

### 116

ԱԳԱԹ. «Որպէս միանգամ մեկնեցաւ առական յաւուրս Նոյեան՝ դարին». 412:

ՔԻԻԶ. «Մեծաւ տենչանաւք աղաչէր (Յակոբ ՄԺբնայ) զԱստուած՝ տեսանել զփրկական տապանն Նոյեան շինուածոյն». Գ. Ժ. 22. — «Ապա իբրև գայր բերէր այրն Աստուծոյ . . . զինչանական հայրենի գործոցն զՆոյեան տապանին». անդ, 23. — «Որ մինչեւ ցայսուր նշանակ սքանչելութեանն կայ պահեալ առ նոսա, երևոյթ փայան հայրապետական Նոյեան տապանին». անդ:

### 117

ԱԳԱԹ. «Եւ դարձեալ զարդարութիւն յերկրի խոտտանայ զնիւ. . . եւ զիրաւունս ծաղկեցուցանելք». 413:

ՔԻԻԶ. «Որաւունք եւ արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ». Գ. գ. 7:

### 118

ԱԳԱԹ. «Նորոգեցան ի փառս անպատումս, եւ զերծան յանպիտոյիցս (2. իսկ տպ.՝ յանպիտոյիցն)». 418. — «Իսկ զանպիտոյան այրեսցէ». 435: Այլուր կ'ըսէ Պիտոյ եւ Անպիտան. «Զի լոյսն ի լուսաւորել զպիտոյսն, եւ հուրն՝ այրել զանպիտանսն բարկութեամբն». 408:

ՔԻԻԶ. «Եւ այնչափ խորշել եւ մերժել յանպիտոյիցս (տպ. եւ մերժել եւ յանպիտոյիցս), մինչեւ զկերակուրս աւուրն ոռոճկին արհամարհելք». Գ. Ե. 84:

— ԳԻՏ. Գայ յԱռաջին Գասի 2պիտոյ, 2պիտանի. «Եթէ վասն զոյզն ինչ եւ կարևոր իրաց շիցէ պարտ հոգալ, որնք ներելոյ եւ թողութեան լինիցին արժանի՝ որք վասն մեծամեծաց ինչ եւ չպիտոյից հոգայցեն». Ոսկ. Մտթ. Ա. իբ. 346. — «Կա-

րեւորքն յանփոյթութեան են, եւ չպիտոյքն ի բազում խնամակալութեան»։ անդ, Գ. դ. Յորդ. 26.—«Ի փառաց որ արկ (զքնդ) ոչ եթէ յԱստուծոյ փառացն, այլ ի չպիտանեացս»։ նոյն, Փիլիպ. ԺԴ. Յորդ. 506:

119

ԱԳԱԹ. «Առ հասարակ եւ զմոլորութիւն կոսպաշտութեան ջնջել եւ ի բաց կորուսանել»։ 421.—«Ջնախնական կարգս մոլորութեան ունայնութեան կոսպաշտութեանն հայրենեացն, զոր Աստուած ի ձեռն դորա խլեաց եւ երարձ ի միջոյ»։ 599—600: Ելլուր. «կոսպաշտութեանցն մոլորութիւնը, որ ի նախնեացն հետէ մոլորեալ դանդաշեցին»։ 384: (Ի վերջին երկու տեղիսդ՝ տպագիրն ունի սովորութեան, սովորութիւնը պատշաճ թուեցաւ ինձ փոխել մոլորութեան, մոլորութիւնը ըստ առաջին վկայութեանն յերես 421, եւ ըստ Քիւլանդայ: Համեմատէ եւ ընդ յաջորդիդ՝ որ է յեղնրկայ, 231. մոլորութիւն ղիւսպաշտութեանն: նա եւ յայլ գիրս նախնեաց Մոլորիմ, Մոլորութիւն, եւ Սովորիմ, Սովորութիւն, այլ ընդ այլոյ գրեալք են:)

Քի՛Ի.Ձ. «Եւ դուք դարձայք ի մոլորութիւն կոսպաշտութեան նախնեացն ձերոց . . . եւ ի մոլորութիւնս ձեր անծանաւթ եղբուք դուք ի նմանէ»։ Գ. ժդ. 38—39:

120

ԱԳԱԹ. «Կենդանոյն ի դժոխս յուզարկեաց զՂեւտացիան՝ որ իշխեցին յընչաց քերել եւ արհամարհել . . . զՄովսէս»։ 423:

Քի՛Ի.Ձ. «Եւ նշանակիր մի Մերութանայ (տպ. ի Մերութանայ) իբրեւ հտես զԱրտաւազդն, յընչաց քերեաց՝ զի տեսաւէր զնա պատանեակ մի կայտառ անմուրուս»։ Ե. խդ. 254:

1. Տպ. յընչացք նրաց. այսպէս եւ նոր Հայկզ. ի բռնն Ունշլթ], որք կը գրէ «Յընչացք բանալ», եւ ի շարի վկայութեանցն՝ «յընչացք (կամ ընչացք) նրաց»: Սոյն օրինակ եւ Գեր. Եյուրնեան, ԸՆՆ. ՔԵՐ. Ե. 78, ծան. 34, որ եւ կ'ըսէ. «Հայոց ընտանեկան ոճերէն եղած կ'երեւայ՝





նեալ՝ ի մէջգետինն անցեալ՝ անապակ մատուցանէր աննն Աստուծոյ ներսիսի»։ Ե. իդ. 216:

[Ա. Դաս]՝ «Մտիսր եւ ամուխ եւ աղ առեալ պառաւոյն, եւ անցեալ ի մէջգետինն,—արդարեւ ծաղր իսկ է եւ ամաթ,— Ակնհար է, սակ, մանուկդ»։ Ոսկ. Կողոս. Ը. Յորդ. 619: Յորմէ եւ Յոհ. Մանդակունի. «Աղէ տես զինչ գործէ շարագլուխն. ի մէջգետինն անցեալ՝ յուսթ], (տպ. յուսթ հլին)»։ Ճառք, Ի. 2. 191: —ԳԻՏ. Մէջգետինն առանձին կը գտնուի մի անգամ այլուր յԱռաջին Դասի. «Գլուխն Դագոնայ եւ երկոքին թաթք ոտից նորա խորտակեալք եւ ցրուեալք ընդ մէջգետինն»։ Ա. Թագ. Ե. 4: Այս բառ ամէնուրեք տպագրուած է մէջ գետինն, գատ գատ. այլ ուղիղ գրութիւնն է մէջգետինն: Ըստ այսմ եւ Մէջգիշեր, այս ինքն շատարակ գիշեր, Կդ. Minuit. «Մինչեւ ի մէջգիշեր»։ Յուդիթ, ԺԲ. 4. Ագաթ. 46.—«Յարեաւ զմէջգիշերաւն»։ Դաս. Ժ. 2. 3.—«Մէջգիշեր եղեալ ի վերայ դիականցն աթագանէին»։ Պատմ. Աղեքս. 58.—«Երբեւ մէջգիշեր եղեւ»։ անդ, 175.) տպագիրքն ամէնուրեք մէջ գիշեր, զմէջ գիշերաւն, որ սխալ է. բայց մարթի գրել ի մէջգիշերի, եւ ի մէջ գիշերի (Մտթ. ԻԵ. 6. եւ այլն), զՄէջգիշերն առնլով իբր մի բառ, կամ գատ գատ Մէջ գիշերի, որ եւ Մէջ գիշերոյ. «Ի մէջ գիշերոյն . . . արհնէին զԱստուած»։ Գործք Առաք. Ժ. 2. 25.—«Երկայնեաց զբանն մինչեւ ի մէջ գիշերոյն»։ անդ, Ի. 7. որ այլուր բռուած է «մինչեւ ի մէջգիշեր»։ տես վերագոյն.—«Եւ ննջեաց Սամփսոն մինչեւ ցմէջ գիշերոյն, եւ յարեաւ զմէջգիշերաւն»։ Դաս. Ժ. 2. 3. ուր լաւ կը տեսնուի երկու գրութեանց զանազանութիւնն: Իսկ երբ Մէջ գիշերի կը նշանակէ զօր եւ է ժամ գիշերոյ, գրելի է ի մէջ գիշերի, եւ ոչ ի մէջգիշերի:

122

ԱԲԷԹ. «Եւ ճարպոյ եկեալ զակամք»՝ յայլայլութիւն մտա-

1. Կայ եւ ի Ստորին Հայերէնի Մէջգետին, Գիրք Վաստակոց, ԼԵ. 30. Միջգետին. անդ, Մ. 2. 189. եւ բազմաբար Միջգետինք. անդ, Ժ. 2. 79. Մ. 2. 20:

2. «Իսկ նորա ծարպոյ զակամքն նկեալ, բոտ նմանութեանն կուրացելոյ Իսրայելի, . . . զթիկունս դարձուցանէ յիշխանէն»։ Անանուն Արժարու-

բերէին». 428. (համեմատէ ընդ ՅՃԽ. «Եւ ի մեղացն որպէս բիժ  
զակամբ եկեալ՝ ոչ թողացուցանել տայ զպատշաճն, այլ զխաւ-  
ար չարին». Ի. 186—187:)

Քի՛ԻԶ. ժակ յորժամ արբեցաւ, եւ զինին եկն զակամբ  
նորա». Ե. է. 208:

—ԳԻՏ. Ծարպ ական նոյն է ընդ Ստորին Հայերէնին  
Ծրագու, այս ինքն Սպիտակուցն, պղ. Le blanc de l'oeil. Եւ  
Ծարպոյ զալ զակամբ է խելայեղութեան կամ մոլեղնութեան  
ժամանակ՝ աչաց սեւուցը կորսուիլ, կամ աչքը դառնալ, ինչպէս  
կըսենք ռամկօրէն. այսպէս եւ Գինւոյ զալ զակամբ՝ գինիէն  
աչքը դառնալ. իսկ Բժոյ զակամբ զալ՝ ճպոտով աչքը միժ ազնիլ:

## 123

ԱԳԱԹ. «Զաստուած պաշտութիւն յանձն (2. իսկ տպ.՝ ի յանձն)  
տեսալ՝ ժողովորդ ձեռակաւն անուանեցան Աստուծոյ (Երբայե-  
ցիք)». 431: Այլուր. «Որոյ (Արբաճամու) դաւակն՝ ժողովորդ տա-  
ջին սեպհական անուանեալ». 191:

Քի՛ԻԶ. «Աշակերտ եղեալ էր սա (Գանիէլ) մեծին Գրիգորի,  
վերակացու եւ զլիսաւոր եկեղեցեաց նահանգին Տարաւնոյ, Գրի-  
գորի ձեռակաւն իշխանութեանն». Գ. ժղ. 36. (տպ. «և զլիսա-  
ւոր եկեղեցեաց նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռակաւն՝ իշխանու-  
թեանն». զՆկեղեցեաց ուղղելի կը համարի եկեղեցեաց նա եւ  
Ք. Պատկանեան յիւրում տպ. Բիւզանդայ, 31.)—Զայնու ժա-  
մանակաւ Սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռակաւն իշխանու-  
թիւնսն. զի հնգետասան դաւառ զայն ձեռակաւն իշխանութեան  
ունէին իրրեւ սեպհական ի բնմէ». Գ. ժղ. 114:

[Ա Դատ]՝ «Մարմնոյդ չիշխես, եւ զիրսդ ձեռակաւն կո-  
չես». Ոսկ. Եփես. Ի. Յորդ. 899.—«Եթէ ասիցէ (կինն), Այս իմ  
է. ասասջիր. Զոր ա՛րիցես քո, զի ես ոչ գիտեմ՝ որ ինչ իմ ձե-  
ռակաւն իցէ». անդ: Այլուր. «Հինգ հազար ոգի ի միում վայրի

նի (ժ գար), Պատմ. Գրիգորի Դերանկի եւ որդւոց նորա, 235. (տպա-  
գրեալ իբր մասն Պատմութեան Թովմայի Արժրուեսոյ, որ չէ ուղիղ, տես  
Մենասէր, Պրակ Բ. 63—64:

էին, եւ շատեր որ զիրարանշիր ընչից թէ իւր սեպհական իցէ». անդ, 887:

— ԳԻՏ. Ազաթանգեղին «ժողովուրդ ձեռական» ի Սուրբ Գիրս կըսուի ամէնուրեք «ժողովուրդ սեպհական». Բ Աւր. է. 6. ԺԳ. 2. Ա Պհար. Բ. 9. Տիտ. Բ. 14: Նոյնպէս եւ ի Պամ. Հար. Եգիպոս. 231. եւ այլն:

## 124

ԱԳԱԹ. «Զոր եւ յառաջավաստակ մշակացն մարգարէիցն՝ զկնի զալոցս դաւանեալ զայս զլինելոցս ամենայն ազգաց». 454:

ԲԻԻԶ. «Զի սիրելի էր աշխարհին պատուել . . . զյառաջեպիսկոպոսն զնախավաստակն Գրիգորիս». Գ. Ժդ. 36—37:

## 125

ԱԳԱԹ. «Որպէս եւ ինքն Տէրն խաւօի զհանդերձելոցն ըբրանովք մարգարէիցն». 455.— «Այլ Հոգին Աստուծոյ ի վեցերորդիս երեւեցաւ լիով զյառաջաձայն խոստմունս իւր՝ զասացեալս ըբրանովք մարգարէիցն (ապ. մարգարէին)». 500: Այլուր. «Ապա յիրաւի ուրեմն ասէ նոյն Հոգի ի ըբրանոյ մարգարէին յառաջագոյն». 495:

ԲԻԻԶ. «Գիտես, ո՞վ թագաւոր, վասն այսր ամենայնի ասացեալ է կանխասացութեանն Աստուծոյ ըբրանովք մարգարէիցն». Գ. Ժդ. 111.— «Բերանով մարգարէին». Ժե. 120:

— ԳԻՏ. Գայ ի Ղուկ. Ա. 70. «Որպէս խաւսեցաւ ըբրանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէքն նորա էին». որ ի ձառս Սերբերիանոսի թարգմանեալ է. «Որպէս խաւսեցաւ ի ըբրան սրբոց իւրոց մարգարէից». Գ. 45. Թ. 158. Գ. 33. տես անդ եւ «Աղբիւրն իմաստութեան» որ ի ըբրան Դաւթի ասէք. Թ. 159: Այլուր. «Պարտ էր կատարել զրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին Սուրբ ի ըբրանոյ Դաւթի վասն Յուդայի». Գործք Առաք. Ա. 16. եւ ի ըբրանոյ մարգարէից. անդ, Գ. 18, 21:

## 126

ԱԳԱԹ. «Ի խեցակոյտ եւ ի խեցակարկառ ի կարաշաղախ աշտարակն (Բարելոնի) ապաւինեալք». 462:



ԲԻԻԶ. «Ապա ետուն հրաման . . . անդէն ծածկել քարա-  
կարկառ վիմաք (զմեռեալսն)». Գ. է. 17:

127

ԱԳԱԹ. «Եւ ի մի ժողով (ապ. իսկ 2. եւ նոր Հայկզ.՝ Եւ  
միաժողով) եկեալ ամենեքեան, եւ ոչ եւս զգային միմեանց յղու-  
թեանն՝ որով եւ ծանրացեալն էին». 463:

ԲԻԻԶ. «Ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մար-  
դիկ աշխարհին Հայաստան երկրին». Գ. իա. 54.— «Ապա ի մի  
ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք  
ազգաց ազգաց». Գ. գ. 67:

128

ԱԳԱԹ. «Հնկալան . . . եւ գտարն, այս ինքն՝ զբանն Աստու-  
ծոյ, որ սուր է քան զամենայն սուր երկսայրի եւ պողովատիկ,  
եւ կարող է հասանել հատանել թափ անցանել մինչեւ յորո-  
շումն ուլոց եւ մարմնոց եւ շնչոց». 474. (որ ի Թղթին Եբր.  
Գ. 12, գրեալ է. «Զի կենդանի է բանն Աստուծոյ եւ ազգոյ եւ  
հասու քան զամենայն սուր երկսայրի, եւ անցանէ մինչեւ ցո-  
րոշումն շնչոյ եւ ուլոյ եւ յուրից եւ ուրջոյ». իսկ յԱսկ. Ես.  
ԺԱ. 134. «Գենդանի է բանն Աստուծոյ եւ զարաւոր եւ հասու  
քան զամենայն սուր երկսայրի, եւ հատանէ եւ անցանէ մին-  
չեւ ի բաժինն շնչոց եւ ուլոց». տես հատանել եւ յԱզաթ.)

ԲԻԻԶ. «Եւ ամենայն որ զարմանայր ընդ այն, զի նեան  
թափ կարանէ ի կարան անցեալ էր». Ե. խգ. 255: Այլուր ներ-  
գործարար. «Զաւաստն . . . յետոյ յառաջ նեախ հարկանէր զմէջ  
ներքինոյն Հայրի. անդէն թափ հանեալ զնեան». Գ. ժգ. 115.  
— «Հարկանէր գայրն նեախ, եւ կարանէ ի կարան թափ հանեալ  
զնեան՝ ցամաք ընկենոյր զնա». Ե. խգ. 254:

Տես եւ «Թափանցանց ելանեմ» յԱզաթ.—Մկր. թիւ 49:

[Լ Դաս]† «Զկիսոցն զորովայնս հարկանէին, եւ թափ ի  
մկանունն հանէին զուսերն». Մար. Ի Վկ. Արեւ. 138. (ապ.  
ի մանկունսն. տես Հայկ. Բատարնն. Ե. 56—57. համեմատէ.  
«Ռմանց զսուրն ի վերայ սրտին զնելով՝ ընդ թիկնամէջն հա-  
նէին». Յայսմաւուրք, Յունուար ժգ. տես Թիկնամէջ ի նոր Հայկզ.):

— ԳԻՏ. Փոխանակ Բիզանդայն *Թափ անցանել* (նետի)՝ կայ յԱռաջին Գասի. «Եւ ընդ զիրիս հմուտ, եւ եհար զՅովրամ ընդ մէջ թիկանց նորա, եւ ել նեան ընդ սիրտ նորա». Գ Թագ. Թ. 24:

129

ԱԳԱԹ. «Արդ ոչ զրադատ ինչ զայն զաւսութիւն ծառայն հասուցանէր». 488:

ԲԻԻԶ. «Զի մի բնաւ (տպ. դնա) բռնադատ զրադատ ինչ երեւեսցի յազթուլիւնն». Գ. Ը. 96:

130

ԱԳԱԹ. «Եւ խոնարհագոյն եւս ասէ, թէ Հեղից ի վերայ տանն Դաւթի եւ ի վերայ տանն Երուսաղեմի զոզի Հնորհաց». 496:

ԲԻԻԶ. «Եւ խոնարհագոյն՝ յայտնագոյն անելք զասացեալսն. Զի ինքն է անգրանիկ ի մեռելոց». Գ. Ե. 83:

— ԳԻՏ. *Խոնարհագոյն է Փոքր մի զկնի. գդ. Plus bas, Plus loin.* Առաջին Դասն կ'ըսէ *Խոնարհագոյն իջեալ, իջեալ ի խոնարհ.* «Որ ասացն, թէ Որ մեղանչէ՝ չէ յԱստուծոյ, խոնարհագոյն եւս իջեալ՝ ասէ նոյն. Եթէ ասեմք, եթէ ոչ մեղաք, ստեմք». Սերեր. Ե. 90. — «Այլ ես ոչ այսպէս ասեմ. զի եթէ այս այսպէս էք, զիմրդ իջեալ խոնարհագոյն՝ զկանայսն որ նման նմին էին՝ յիշէր». Ոսկ. Մտթ. Ա. Գ. 33. — «Զի եւս հաստատագոյնս յայտ արասցէ, իջեալ փոքր մի ի խոնարհ՝ [ասէ]. Մորա են աչք Տեառն որ հային ընդ ամենայն երկիր». Սերեր. է. 126—127. — «Եւ զի հաստատութեամբ ուսանիցիս, . . . սակաւիկ մի ի խոնարհ իջեալ՝ զնոյն աւրինակ ի կիր արկանէ». անդ, Թ. 160: Այլուր. «Զի թէպէտ *Եւս յառաջ կոյս ասիցէ, թէ Զինչ լսէք յունկանէ՝ քարոզեսցիք ի վերայ տանեաց, այլ եւ ոչ այս ընդդէմ ինչ իցէ առաջնայն*. Ոսկ. Մտթ. Ա. իգ. 361. — «Նա եւս յառաջ կոյս ասէ, եթէ Լուծ իմ քաղցր է». անդ, 367. — «Եւ եւս յառաջ ի սոյն գիրս [ասէ]. Զի թէպէտ եւ մոռանայցէ կին՝ ողորմել ծննդոց իւրոց, սակայն ես ոչ մոռացայց զբեզ». նոյն, Ես. ԽԵ. 319—320. — «Եւ *Եւս յառաջ մատուցեալ՝ ասէ. եւ ի տաճարն պղծութիւն աներածոյ*. Եւս. Քր.

144. — «Եւ զաչս՝ եւս յառաջագոյն մնա ուցեալ՝ առէ. եթէ ի գործս բարիս վկայեալ իցէ». Ոսկ. Ա Տիմ. Թ. Յորդ. 75: Թարգմանիչն Զգաւնի ըսած է ՚ի ներքոյ. ԺԸ. 318 կրկիցս:

131

ԱԳԱԹ. «Զեւթներսրդ աւար խորհուրդ ժամանակի՝ զառանց թնոյն եւ զառանց չափոյն». 499:

ԲԻԻԶ. «Ճարակ լինել նոցա անշէջ հրոյն . . . , յանսպառ յանսահման առանց թնոյ եւ առանց չափոյ ժամանակն տանջանաց զհեհնին». Գ. Ե. 85—86: Այլուր փոխանակ առանց թնոյ եւ առանց չափոյ՝ կ'ըսէ. «Ոչ գոյր չափ զլիսանոյն արտյենիցն . . . նոյնպէս լցան բազում աւարա . . . զի ոչ գոյր թիւ կամ չափ». Ե. դ. 198. — «Ոչ գոյր չափ եւ ոչ թիւ, զի անհամար գանձս առաքէր արքային Հայոց». Գ. Ե. 90, եւ այլուր լոկ Առանց թնոյ. «Եւ զառանց թնոյ զմատաղ մանկատոյն՝ զայն ի գերութիւն վարէին». Գ. իդ. 142: Տես եւ Անթիւ անչափ. Գ. դ. 93. Անթիւ եւ անչափ. Ի. 191. Անչափ եւ անթիւ Գ. իդ. 141. Ե. Ե. 201:

Տես եւ «Անթիւ անհամար» ի Բիւզ. = Մկր. թիւ 5:

— ԴԻՏ. Բիւզանդայն Առանց թնոյ եւ Անչափ եւ անթիւ կը գտնուին եւ յայլ զիրս. «Իբրև զաւագ առ արին ծովու առանց թնոյ». Երբ. ԺԸ. — «Եւ էր թիւ որդուցն Խորայիլի իբրև զաւագ ծովու անչափ եւ անթիւ». Ովս. Ա. 10:

132

ԱԳԱԹ. «Եւ ցաւդալից առստութեամբն բանաւոր անձրեւովն՝ պարարեցին (Առաքեալքն) զսրտից երկիրս մտեղէնս անապատացեալս մարդկան». 507:

ԲԻԻԶ. «Ազրիւրացեալ զամենայն լսելեացն ցնցուղս ախանջացն եւ սրտիցն երկրին». Գ. Ժք. 30. (տպ. «լսելեացն ցուղս». տես Հայկ. Բառարնն. Ե. 30—31: Իսկ 2. «լսելեացն ցողս». այսպէս եւ 2ամհան, Պտմ. Հայոց, Հ. Ա. 685, որոյ վերջին մասնն տարբեր է. «զամենայն լսելեացն ցողս ախանջացն եւ սրտիցն ցողէր»: Յուդ կը գրէ եւ նոր Հայկղ. եւ կ'ըսէ. «Բառ անյայտ՝ որպէս ճնցուղ կամ ծող»:

133

ԱԳԱԹ. «Իրբև զբաջ մշակս ընթացան լնուլ սերմամբ  
աստուածպաշտութեամբ զամենայն լեզուս». 508:

ԲԻԻՁ. «Եւ բաջ մշակն Բասիլիոս յիւրմէ գործոյն կայր (անլ  
2. կարի. տես բ տպ. Վենետիոյ, 104) խափանեալ». Դ. ժ. 101:

—ԴԻՏ. Յայլ գիրս. «Զի . . . ժրագլուխ մշակ առաքինու-  
թեանն լինիցիս». Ոսկ. Մտթ. Ա. ի. 323.—«Եղիցուք մշակք  
ժրագլուխք, զի խնդրեսցուք զվարձս մեր ընդ առաջինսն».   
Զգան, 2. 108.—«Մշակն ժիր ժողովեսցէ զարմախ յամա-  
բայնոյ». անդ, ժԹ. 340.—«Ընդ մշակս ժիրս եւ առաքինիս».   
անդ, 361.—«Լինիցիս . . . մշակ առաքինի». Ոսկ. Մտթ. Բ. ե.   
Յորդ. 468:

134

ԱԳԱԹ. «Նորին իսկ Առաքեալքն՝ ըուն սիւնքն (տպ. եւ  
2.՝ նորին իսկ բուն Առաքեալքն՝ սիւնքն) հաստատուիք, եւ բա.  
զումք ի հեթանոսաց, զնոցին աւրինակն յանձինս իւրեանց  
առեալ բարձեալ բերէին». 509.—«Արդ՝ ըուն սիւնք Առաքեալքն՝  
(2. իսկ տպ.՝ Արդ բուն Առաքեալքն՝ սիւնքն), ամուքն, որ  
խաւսեցան զամենայն լեզուս, ելին ընդ արեղերս». 510:

ԲԻԻՁ. «Յակորոս եւ Կեփաս եւ Յովհաննէս, որ ըուն սիւնքն  
էին». Դ. դ. 78. (վկայութիւն ի Դադատացւոց Թղթոյն, Բ. 9,  
ուր գրեալ է. «Յակորոս եւ Կեփաս եւ Յովհաննէս, որ կար-  
ծեալ սիւնքն էին»):

135

ԱԳԱԹ. «Որբու զպատերազմասէր նահատակս՝ զան-  
ձինս ի կիրթ առաքինութեան միտին». 512:

ԲԻԻՁ. «Որբու զպատերազմասէր նահատակ՝ միշտ  
զանձն ի կրթութիւն եւ ի պատրաստութեան ունէր ամենայն  
փորձութեանց եւ վշտաց». Դ. դ. 13—14:

—ԴԻՏ. Պատերազմասէր կը զանուի առանձին յԱռաջին  
Դասի. «Զի պատերազմասէրք, հեռասէրք եւ կուռղք էին».   
Ոսկ. Ծս. ժԴ. 152.—«Նինուաս, նինեայ եւ Չամիրամայ որդի,



... պատերազմասէր եւ աշխատասէր մարն մտաց շեղեւ ինչ երբեք նախանձաւոր»։ Եւս. ժմ. 41:

136

ԱԳԱԹ. «Զառաջնոցն վարսն իբրեւ կաղապար արկանէ-ին, թէ Աւրինակ առէք, եղբարք, զերկայնմտութիւն մարգարէ-իցն»։ 513:

ՔԻԻԶ. «Զառաջնոցն զվարսն լաւացն, եւ որ զնոցուն հակառակ ընդդիմակաց, այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան»։ Գ. ա. 5:

137

ԱԳԱԹ. «Վասն որոյ եւ սիւնհոդոսական հրամանաւ Եռաքե-լոցն՝ նախաձանաւթ մատուցելոցն հեթանոսացն՝ զթեթեւա-գոյնսն աւանդեալ (տպ. աւանդել)»։ 522:

ՔԻԻԶ. «Սոյնպէս եւ զյիշատակս թագաւորին Տրդատայ, թէ կամաւք թէ ակամայ որ արժանին լեալ էր նախաձանաւթ ի Քրիստոսն հաւատոց»։ Գ. ժգ. 36:

— ԴԻՏ. Նախաձանաւթ է Որ նախ ծանաւթ եղեւ կամ ծաննեաւ: Կայ յԵռաքին Գասի Յառաջաձանաւթ, այս ինքն Յառաջագոյն ծանուցեալ. «Այն գիշեր յառաջաձանաւթ եղեւ հարցն մերոց»։ Իմաստ. ԺԸ. 6.— «Փրկեցարուք... պատուական արեամբն Քրիստոսի, ... որ յառաջձանաւթն էր նախ քան զիսկզբանէ աշխարհի»։ Ա Պետր. Ա. 18—20: Իսկ «Վանխաձա-նաւթ գիտութիւն», Ոսկ. Մտթ. Բ. ք. 501, որ եւ «Վանխա-ձան գիտութիւն», նոյն, Բ Տիմ. Ը. Յորդ. 254, կամ «Յառա-ջաձան գիտութիւն», նոյն, Եփես. Բ. 683, է Կանխագիտու-թիւն, Յառաջագիտութիւն:

138

ԱԳԱԹ. «Զի կանոնք մշտնջենակարգք աշակերտելոցն պահիցին (տպ. պահիցեն. իսկ 2. լինիցին)»։ 524:

ՔԻԻԶ. «Բայց միայն զառաքելակարգ կանոնսն ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս»։ Գ. դ. 75:

139

ԱԳԱԹ. «Քանզի յառաջագոյն իսկ աստուածազէտս յարդարեաց ընդրապատիկ սրանչեւելքն Ամննատէրն Քրիստոս զփրկի աշակերտան իւր»։ 527։

ՔԻԻԶ. «Եւ այսպէս ընդրապատիկ եւ պէտպէս անէր զըսքանչեւիս (Զադիտա)»։ Ե. իզ. 220։

ՅԻԻՏ. Կայ յմսկ. Երբ. ԻԳ. Յորդ. 536. «Թէպէտ եւ ընդ նշանս եւ սրանչեւիս ցուցանիցեմք»։

140

ԱԳԱԹ. «Մատուցուք զզոնս ի հանգիստ, եւ շինեսցուք վկայարանս ի վերայ գոցա՝ տաճարս ազաւթից միաբանութեան»։ 542. — «Բայց փութացարուք շինեցէք զվկայարանսն, զի հանդուցուք զվկայոս Աստուծոյ»։ 551. տես եւ 562 երկիցս, 567, 568, 569, 569—570, 575, 576, 577 երկիցս, 578, 607, 608, 610, 627։ Այլուր. «Զսոսկին եւ զարծաթն եւ զպատուական կարասին՝ ի նուէրս սպասու եկեղեցեաց Աստուծոյ եւ ի տունս կատարեալս վկայիցն դնէին»։ 655 (ըստ 2). տունս վկայից թուի թարգմանութիւն ասորականին ընթ սոնդէ, beth sohde, որ է յունարէն մարտիրոսն, լատ, Martyrium, locus ubi martyrurum lipsana deponuntur. այս ինքն՝ Տեղի ուր դնին նշխարք վկայից, տես P. Smith, *Thes. Syr.* Աէմքաթ, 2536, ի բունս Սոնդոս = Վկայ։ Այլուր գարձեալ. «Մինչդեռ զշինուած մատրանն կազմէին»։ 608. Մատուան, մատրան, է վերոյնշանակեալ յոյն բունս մարտիրոսն։—Տես Վկայարան բառի կազմութեան նման եւ գլաջորդոց. «Զինէր զատարինարանսն վկայիցն»։ 647. — «Իսկ խորանն ի վերայ, ունի զաւրինակ վերնոյ քաղաքին՝ զժողովարանն միաբանութեան արքայութեանն երկնից»։ 563. — «Զերանկեացն վկայարանն հանգստարանացն հիմունս յաւրինեալ»։ 569. — «Ի ներքս ի տաճարն հանգստարանացն»։ 575. — «Ի ներքսագոյն խորանացն՝ ի վերայ հանգստարանացն կենդանադիք զերեզմանացն»։ 578 (ըստ 2). որ եւ Հանգստոց, 544, 590. — «Պաշտանարան տեղոյն յարկի տան Աստուծոյ»։ 579։ Բայց վերոյնդեալ բառերէդ կը տարբերին նշանակութեամբ՝ Բժշկա-

րան (=*բժշկութիւն*, *արուեստ բժշկութեան*). 331, 581. — *Երգարան* (=*գիրք երգոց*). 391. — *Զոհարան* (=*անուիթ զոհից*). 34. — *Խաւսարան* (=*գործի խաւսելոյ*). 551. — *Ծրագարան* (=*կազմած ճրագի*). 128. — *Չափարան* (=*չափ*). 575. — *Սաղմոսարան* (=*գիրք Սաղմոսաց*). 288, 302, 359—360, 366, 369, 434, 483: Իսկ *Առաքելարան*, 660, ուղղելի է *Առաքելարան*. (*Առաքելարան*, 24, ուղղելի է *Առաքելաբար*):

ՅիԻԶ. «*ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զուր տանին յիշատակի նոցա . . . խմբեայ՝ ցնծային*». Գ. գ. 7. — «*եկն եւ սուրբ կաթուղիկոսն ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր գեկեգեցին շինեալ ի Գրիգորէ, եւ զվկայարանսն սրբոցն զվկայիցն*». Գ. ժգ. 114. — «*ելանէք . . . ի վկայարանս սրբոցն*». անդ. — «*Մեռանել . . . ի վերայ վկայարանացն Քրիստոսի*». Ե. ի. 213: *Այլուր Վկայանոց*. 101 շորիցս, 102 շորիցս, 188, 221, 223 երկիցս, 225, 258: *Այլուր դարձեալ*. «*ի մեծի մարգարեարան մատրանն Յովաննու*». Գ. գ. 7: — *Վկայարան բառի կազմութեամբ կ'ըսէ եւ Առաքելարան*, 7. *Մարգարէարան*, անդ. որ եւ *Մարգարէանոց*. 36, 44:

ԿՈՐ. «*Եւ այնու խաշանշան լուսաւոր առաջախաղաց նշանան՝ յԵւշականն ելանէին. եւ անդ ի մարտիրոսարանն մատուցեալ (զմտրմին Սրբոյն Մաշտոցի), զուրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն անհրեւոյթ լինէր*». 27:

— ԳԻՏ. *Վկայարան եւ Մարտիրոսարան շունին միւս Դասքն, այլ կ'ըսեն յունարէն բառի Մատուռն (որ կայ եւ յԵգաթ. եւ ի Քիւզ.)*, կամ *Հանգրուան մարտիրոսաց, Ժողովուրդ վկայից, Տուն վկայութեան*. «*ննչէին՝ որպէս այժմ ի մատրունս, վասն ցաւոց ինչ, կամ վասն ուխտից*». Գիրք. Եզեքս. Թագ. (նոր Հայկզ. ի Մատուռն.) — «*Մաւտնաց ի հանգրուանս մարտիրոսացն (քնազիրն՝ սիկոս՝ մարտիրոն), ուր մարմնոց առողջութիւնք եւ ոգւոց շահք*». Ոսկ. Մտթ. Բ. ժք. Յորդ. 571. — «*Եւ նախ զառաջինն արգելուլ զմեզ պատճառանաւք ի ժողովրդդնէ անտի վկայից Զանայք*». Եւս. Եկեղ. Թ. ք. 675. (քնա-

1. Յոյն բառիս բուն նշանակութիւնն է Հանգրուան հաւաքից, գգ. Bercail. երկրորդական նշանակութիւնն՝ Տաճար, Մատուռն, գգ. Temple, É'diſſe sacré, Chapelle.

գիրն՝ *կիմիտիրիոն*՝. իսկ ասորի թարգմանութիւնն *բեթ սոհ-  
դէ*, այս ինքն՝ *Տուն վկայից*. տես P. Smith, *Theo. Syr. Մէմ-  
քաթ*, 2536, ի բառն *Սոհդո*.)—«Ապա թէ ոչ՝ ընդէր ոչ ըստ  
այլոց եկեղեցեաց եւ այս Գողգոթայս՝ տեղիս յարութեան՝ եկե-  
ղեցի կոչեցաւ, այլ տուն վկայութեանն». Կիւր. Կոչ. ԺԳ. 278.  
(բնագիրն՝ *մարտիրիոն*):

Գիտելի է որ ի գիրս Երիցագոյն թարգմանչաց ըան մաս-  
նրկաւ ածանցք՝ կը նշանակեն, 1. անուանս մատենից, Աւետարան,  
Բժշկարան (Ոսկ. Կողոս. Թ. 624), Կտակարան, Յիշատակարան  
(Եւս. Ժմ. 171), Սաղմոսարան (Կիւր. Կոչ. ԺԲ. 207, 208. ԺՁ.  
346, 359, եւ այլն). 2. անուանս գործեաց, նուագարան, Սաղ-  
մոսարան (Սղ. ԼԲ. 2, եւ այլն), Տանջանարան (Հանգիստ Յովհ.  
Թ. 1223 ա). 3. անուանս կահուց եւ անօթոց, Գանձարան  
(Առակը, Ա. 14), Կրակարան, Ճրագարան, Սարկարան. 4. անուն  
կազմածոյ՝ որով մարդ եւ անասուն կ'ընդունին զազդեցութիւն  
արտաքին առարկայից, Չգայարան (Ոսկ. Ա Տիմ. ԺԳ. Յորդ. 110.  
Բրս. Վեց. Թ. 190), որ սովորաբար կ'ըսուի Չգայութիւն, Չգայ-  
ունք. վերջապէս 5, Բժշկարան՝ դեղ կամ առիթ բժշկութեան  
(Ոսկ. Մովթ. Բ. է. 486. Ժբ. Յորդ. 635. Կողոս. Թ. 623. Եբբ.  
Իէ. 544): Ըինուածոց կամ տեղեաց համար ըան մասնկաւ ածանցք  
Կորեան, Ժողովարան, Հանգստարան, այլովքն հանդերձ, իբր  
Տուն կամ տեղի ժողովոյ, հանգստեան, չեն բոլորովին անձանօթ  
Երիցագունից, այլ եւ ոչ յոյժ սովորական. այսպէս կը գտնենք  
միայն *Բաստարան* յերկրորդ Գասի, եւ *Բնակարան* յերկրորդ  
եւ յերրորդ Գաստ. «Իսկ Ախար փոխանակ շնորհ ունելոյ Միքիայի,  
. . . առ մատնեաց զնա ի բանտ ըաստարանին». Եփր. Թագ.  
Բ. 446. (*Բաստարան* է Տեղի կապիւոյ, կամ Տուն կապանաց,  
ինչպէս կ'ըսուի սովորաբար, կամ Գապարան՝ ըստ այլ մատե-  
նագրաց, ի պարսիկ բառէն *Պէսթէն*, որ է Կապեմ. տես Գէորդ  
Տէր Յովհաննէսեան, Բոզ. Պրս.—Հայ.)—«Եւ իբրեւ շինի եւ վե-

1. Այս բառ կը նշ. Տեղի ննջիւոյ, Քնարան, եւ եկեղեցական լիցուսի՝  
Գերեզմանատուն, զգ. Cimetière. Թարգմանիչն՝ այլուր (Է. Ժա. 543. Ժգ.  
551) սոյն յունական բառի կ'ըսէ *Կենտորիայ, Կիմեաէր*, զոր եւ կը մեկ-  
նէ Տեղի մարտիրոսաց:



րանայ նա՛ ամենայն շինուածն պսակի եւ կատարի, եւ ապա լի-  
նի նա տուն եւ տաճար եւ ընակարան Քրիստոսի»։ Զգաւն, Ա.  
6.—«Ատեսջիր դու զնա, որ զամենայն շարեաց եւ զամենայն  
աղտեղութեան ընակարանն, եւ զամենայն հերետիկոսացն զխո-  
հերն յինքն ընկալաւ»։ Կիւր. Կոչ. 2. 106. սովորականն է Քա-  
կուիթիւն, Տուն բնակութեան: Քիչ մ'աւելի յաճախութեամբ կը  
գտնենք յԱռաջին Դասի Ժողովարան, Կապարան, Մրցա-  
րան, Տեսարան, յՈսկ. Հո. (15). «նա եւ պատերազմն իսկ շէ  
այնպիսի, այլ տեղի իմն եւ ժողովարան ցնծութեան»։ ԽԳ.  
342. (տես Ժողովարան յԱզատ.)—«Յորժամ ասէ նեղութիւնք,  
զկապարանն ասէ, եւ զկապանն եւ զըրպարտութիւնսն».  
ԺԵ. 203.—«Իսկ աստ ոչ ինչ այսպիսի էր, այլ ի մրցարանին  
իսկոյն եւ ջանն ի վերայ»։ ԲԹ. 72.—«Յերկինս ունիս թէաբոն,  
այս ինքն տեսարան»։ ԺԷ. Յորդ. 251.—«Այս է երկնից ասպա-  
րէզն, այս է Հրեշտակացն տեսարան»։ ԽԲ. Յորդ. 325. (այլուր  
Տեսարան=Տեսիլ. ԺԵ. Յորդ. 210. ԺԸ. Յորդ. 269.) Թերեւս  
Կորեան ազգեցութեան վերագրելի են եւ յաջորդ վկայութիւնքդ.  
«Զայս ընդ միա ածելով՝ եմուտ ի ներքս ի ժողովարանն».  
ԱԹ. Անտ. 19.—«Մէջ ամաթալիս լինել զձեզ հարկէին (դեւքն),  
մերկս մուծանել ի տեսարանն եւ զկանայս»։ ՎԿ. Իզն. 159.—  
«Փութայր այնուհետեւ մտանել ի տեսարանն, եւ եկեալ ի մէջ  
ամբոխին՝ ասէր այսպէս»։ անդ, 181: Այլուր ամէնուրեք սոյն  
Դասս կ'ըսէ նոց մասնկաւ. Արուեստանոց, Բժշկանոց (Ոսկ. Բ  
Տիմ. Բ. Յորդ. 189. Եփես. է. 735), Ժողովրդանոց (կամ Ետդ  
բառիւ՝ Ժողովեադ. տես եւ յերկրորդ Դասի՝ Ժողովրդանոց, Լա-  
բուր. 16, 30), Կուուանոց (Եղնիկ, 58. Ոսկ. Մտթ. Ա. Ժա. Յորդ.  
169, 170), Մարտանոց (Ոսկ. Կողոս. Ժ. 637), Վարդապետանոց  
(Ոսկ. Մտթ. Ա. է. Յորդ. 109. Բ. ի է. Յորդ. 748): Անստոյգ է Կա-  
պարան (=Քանտ), զոր կը յիշէ նոր Հայկդ. յՈսկերբերանի Մեկ-  
նութենէն Տիմոթեայ առանց վկայութեան. չիք այդպիսի բառ ի  
տպագրին: Իսկ յՈսկ. Մտթ. Բ. Ժ. 531, «Յորժամ զփուտն հանի-  
ցէք, եւ զկոռարանն ի միջոյ բառնայցէք», թուի գաղափարողաց  
կամ տպագրողաց սխալ, զի նոր Հայկդ. կը գրէ զկոռարարն՝:

1. Այսպէս եւ ի Կիւր. Կոչ. ԺԲ. 229, «Զի ի Կուտէ ծնաննոց էր

141

ԱԳԱԹ. «Մտերմութեամբ հասեալք լինէին աւզտակար խրատուն կենսաբեր քարոզութեանն բանին կենաց աւետեաց Աւետարանին». 548. (տես աստէն ի թխմ. 93 զերբորդ վկ. Ազաթ.):

ՔԻԻԶ. «Վասն բարւոյն շկամելոյ լսել զաւզտակարն խրատ ի նոցանէն». Գ. ժդ. 40.— «Զի իմաստութեամբ իմն կարէր սոցա զաւզտակար խրատն մատուցանել». Ե. ա. 186.— «Որք կարող էին զաւզտակար խրատն մատուցանել նմա». լե. 235:

142

ԱԳԱԹ. «Եւ եղնգունք ծայրից մատանցն ստիցն եւ ձեռացն՝ կճղակեալք էին իբրեւ զգետնարիւր արմատակեր կնճացն (տպ. եւ 2. կնճթացն)». 549:

ՔԻԻԶ. «Միահանդերձք, բոկագնացք, զգաստացեալք, խտածարակք ընդարուտք արմատակերք». 2. ժդ. 271: ճարտ. — ԳԻՏ. Նոր Հայկզ. կը յիշէ իբր յնսկեբերանի Մեկնութեանէն Փիլիպեցոց Թղթոյն. «Արմատակեր կնդանի (խոզ)». չիք այդպիսի ինչ ի տպագրին:

143

ԱԳԱԹ. «Այսամտեալք ամենեքին՝ ի տեղին հասեալք յայտնեցան». 549:

ՔԻԻԶ. «Քայց քան դամենեսին աւելի՛ այր մի անարէն եւ այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն զրդռէր զթագաւորն Տիրանն». Գ. ժը. 46:

144

ԱԳԱԹ. «Չորձապատեալ կայր պատատեալ (Տրդատ) ի մէջ բազմամբոխ աշխարհամտողով հրապարակացն կուտելոյ մարդկան ի միջի (2. իսկ տպ.՝ կուտելոյ ի մարդկան միջի)». 550:

կուտարարն հոգոց», սխալ գրեալ է կուտարանն ի Գ. Պոսի տպագրին. տես Կուտարար ի Նոր Հայկզ.:

ՔԻԻՁ. «Ապա յակտնէ յանուանէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զարքն բազմութեան՝ զայն որ անուանեալ կոչէր ներսէս». Գ. գ. 68.— «Ապա ժողով լինէր նախարարացն եւ իշխանացն, գործակալք եւ զարագլուխք, պետք եւ ամենայն աշխարհաժողովք բազմութեանն եկելոց կուտկոյն». Գ. ի. 53: Այլուր. «Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ . . . , զսորա զար տանին զխշտտակ քաջութեանն ցնծան». Գ. գ. 15:

145

ԱԳԱԹ. «Եւ իմ նայեցեալ տեսի զկերպարանս նորա, զարհուրեալ զողացեալ յերկիր կործանեցայ». 553:

ՔԻԻՁ. «Իսկ իրբեւ ետես զայս եղբայրն թերաճաւատ կրանաւորն, զարհուրեալ զողացեալ խոսովեալ տաղնապեալ յերկիր կործանեալ կայր». Ե. իր. 225:

— ԳԻՏ. Կան այլուր առանձին առանձին. «Եւ կինն զարհուրեալ եւ զողացեալ . . . եկն անկաւ առաջի նորա». Մրկ. Ե. 33.— «Եւ մնասջիր միայն եւ յերկիր կործանեսջիր». Ես. Գ. 26:

146

ԱԳԱԹ. «Ըստ նմանութեան մանրամաղ փռչոյ հիւղէի, որ . . . ըստ պատուհանացն կամ լոյսանցոյց երդոցն ի նշոյսն խաղացէ». 554:

ՔԻԻՁ. «Եւ էր փոզն ընդ երկար, բազում երդս լոյսիջոյցս էր թողեալ». Ե. գ. 204:

— ԳԻՏ. Կայ յԱռաջին Գասի Լուսանցոյց պատուհան, կամ զոյականօրէն Լուսանցոյցք. Եզեկ. ԽԱ. 16. ԽԲ. 11:

147

ԱԳԱԹ. «Եւ տեղին այն լիցի տաճար Աստուծոյ, եւ տուն աղաւթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց». 561:

ՔԻԻՁ. «Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓառէն ոմն հրէց, ի զաւառէն ճարաւնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովաննու, որ էր նախ շինեալ տուն աղաւթից եւ խնդրուածոց ի հանգիստ սրբոցն». Գ. ժգ. 44: Այլուր. «Յառաջ էին տեղիք պատկերաց կոռցն, եւ ապա յանուն Աստուածութեանն սրբեցան,

և եղեն տուն աղաւթից եւ տեղի ուխտից ամենայն ումք».  
Գ. գ. 7:

ՄԿԲ. «Դու ընտրեցեր զտաճարս քո զայս՝ կոչել զանուն սուրբ քո ի վերայ սորա, զի լիցի զա տուն ուխտից խնդրուածոց ժողովրդեան քոյ»։ Ա. է. 37:

—ԴԻՏ. Բիւզանդայն Տուն աղաւթից կայ եւ յԱռաջին դասի. «Գրեալ է, տուն իմ տուն աղաւթից կոչեսցի»։ Մտթ. ԽԱ. 13. Մրկ. ժԱ. 17. Դուկ. ժԹ. 46: Այլուր կ'ըսուի Աղաւթանոց. «Քրիստոս իբրեւ եկն՝ զամենայն երկիր սրբեաց, եւ ամենայն երկիր աղաւթանոց կոչու»։ Ոսկ. Ի Խաչեկ. Տեառն, 204: Իսկ յերկրորդ Դասի. «Եւ տունս աղաւթանոցս շինէին ի ծածուկ, վասն երկիւղի այնոցիկ՝ ոյք երկիր պագանէին կրակի»։ Լարուք. 34:

### 148

ԱԴԱԹ. «Ձի նա ինքն (Աստուածութիւնն) գլուխ է Եկեղեցւոյ սրբոյ եւ կատարիչ (2. իսկ տպ.՝ տաճար) ամենայն քարութեանց»։ 563:

ԲԻԻԶ. «Տէր, . . . ընկալ զհոգի ծառայիս քո, որ հանգուցիչդ ես ամենայն աշխատելոց, եւ կատարիչ ամենայն քարութեանց»։ Ե. իդ. 217:

### 149

ԱԴԱԹ. «Եւ յուխտէ քահանայիցն լինելոց են զայլք, եւ հանեն ճաղճախիս արեան ի գառանցն, այս ինքն ուխտին քահանայութեանն (տպ.՝ ուխտին եւ քահանայութեանն), եւ խոսվութիւն ժողովրդոցն»։ 566.—«Ամենայն ուխտ քահանայութեանդ սուրբ Եկեղեցւոյ որ այդք էք»։ 600.—«Ամենայն ուխտ Եկեղեցւոյ սրբոյ քահանայութեան»։ 614:

ԲԻԻԶ. «Ձանձինս . . . մատուցին ի վերայ Եկեղեցեաց, . . . եւ ի վերայ ուխտին քահանայութեան»։ Գ. ժա. 27.—«Եւ ամենայն ուխտ քահանայութեան, ժողովք միաբանական ժողովրդոցն, ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հաւտապետ զլիսաւորին»։ Գ. ժք. 106:

—ԴԻՏ. Ուխտ քահանայից կամ քահանայութեան է



նոյն ընդ Կղեր, Կղերիկոսք, Կղերակաւնք, ժառանգաւորք, զդ-  
Clergé. (տես Կոր.—Ազաթ. թիւ 56:) Միւս Դասքն ունին. «Գրեկ  
զթուղթս զայս աւ ամենայն եղբարս մեր մանկունս եկեղեցւոյ՝  
որք իցեն ընդ գաւառս, եպիսկոպոսունս, երիցունս եւ սարկա-  
ազունս, ամենայն ուխտս Եկեղեցւոյ Աստուծոյ»։ Զգաւն, ժԹ.  
321.—«Է ժողովս ժողովրդոց մի վեհերոտ լինիցիս, մի միայն  
այժմ՝ յորժամ ի հարկէ զքեզ ածեն ուխտի մանկունքս, այլ  
յորժամ ընկալիաւ իցէ քո զշնորհան»։ Կիւր. Կոչ. Ա. 6:

### 150

ԱԳՄԹ. «Արդ եւ զուր զասացեալսն Նրամանացն փու-  
թացարուք»։ 568:

ԲԻԻԶ. «Էւ կատարեալ հաւատարմացոյց (արքայն Պարսից)  
զասացեալսն Նրամանաց թագաւորին Յունաց»։ Գ. իա. 57:

### 151

ԱԳԷԹ. «Էւրաքանչիւր ընթացան պատրաստել զնիւթն ի  
տեղիսն Նրամայեալս»։ 569:

ԲԻԻԶ. «Ապա անցուցին զնա ի տեղին Նրամայեալ . . .  
ի հնգետասան ուր հասանէր (նաւն) ի Նրամայեալ տեղին»<sup>1</sup>.  
Գ. դ. 91:

ԵԻԹ. «Իբրեւ զյաւանակ մի անվարժ նորուստմն ընդ անա-  
պատ ընդ անկտիս ճանապարհ անցանել մտանել ի Նրահանգս  
Նրամայեալս»։ Յոջր. Գժ. 1047 ա.

### 152

ԱԳԷԹ. «Էւ ամենայն ըստ ասացելոց պատուիրանին արա-  
բեալ, . . . ըստ եղեալ Նրամանին տուելոյ»։ 570:

ԲԻԻԶ. «Յայնմ տեղոջ ծածկեցին զմարմին սրբոյն Դանի-  
ելի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեղեանն ըստ Նրամանի  
նոցա տուելոյ (տող. տուեալ)»։ Գ. ժդ. 43.—«Էւ բերդակալեանն

1. «Վասն որոյ վաղժողակի ոչ մարմնովք առաւել քան մտուք զկարճ  
ի կարճոյ ճանապարհն . . . ի Նրամայեալ տեղին հասանել»։ Փիլոն,  
Գեանք իմաստնոց. 78.—«Սոքա գայլ ժամանակն զՆրամայեալ զհարկս՝  
հատուցանէին հարկահանացն»։ անդ. 91:

յորժամ զայն նրաման ընկալան, ամենայն որ ո՞րք առ ումեք էին՝ նեղեցին զնոսա ըստ նրամանին տուելոյ»։ Գ. ծթ. 178.  
— «Ապա իջին փահանաւորքն եղեալք զփահանսն ի վերայ, եւ կային սլահէին ըստ նրամանի տուելոյն»։ Ե. լէ. 243:

153

ԱԳԸԹ. «Զմի մի իւրաքանչիւր ի սրբոցն իւրաքանչիւր արկեղ զնէր՝ իւրաքանչիւր հանդերձուլն եւ իւրեանց լոկ կազմութեամբն (2. իսկ տպ.՝ հանդերձով կազմութեամբ) պնդէր»։ 571:

ԲԻԻԶ. «Ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն: . . . Եւ ոչ ինչ իմացաւ Գրակ (տպ. Դրակ) թէ այն մեծութիւն հանդերձոյն շարոյ նորա իցէ այն»։ Ե. դ. 204.— «Յայց միայն վասն կրաւնիցն հանդերձոյն զեղեալ կարգն ըստ կրաւնիցն Զաւինայ զնային սօքո»։ 2. դ. 264:

— ԴԻՏ. Հանդերձ, հանդերձոյ, կայ մի անգամ լեռաջին Դասի. «Յամենայն փայտեղէն անաթոյ կամ ի հանդերձոյ կամ ի մաշիէ կամ ի քրձէ, ամենայն անաթ յորում գործ ինչ գործիցի ի նմա, ի ջուր թացցի»։ Ղեւտ. ԺԸ. 32: Այլուր ամենուրեք Հանդերձ, հանդերձի, ի հանդերձէ՛, — 2իք հանդերձոյ ի նոր հայկդ.՝

154

ԱԳԸԹ. «Իսկ թագաւորն Տրդատ յայնժամ դեռ եւս (2. իսկ տպ.՝ դեռ ես յայնժամ) էր յամենայն կերպարանս խոզի, բայց ի մարդկապէսն խաւսելոյ»։ 573.— «Յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց . . . զի յայնժամ դեռ եւս (2. իսկ տպ.՝ յայնժամ եւս դեռ) շէն կային երեք բազինքն ի նմա»։ 606:

ԲԻԻԶ. «Յայց յայնժամ դեռ եւս կենդանի էր ծերունի սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ»։ Գ. ծդ. 36:

1. Տես Ոսկեդարուն Ղազար Փարպեցի եւս ըսած է Հանդերձ, ոյ. «Այլ կարգեալքն ինձ ըստ տարւոյ . . . ի պէտս դարմանոյ, եւ հանդերձոյ եւ ձիոյ՝ յայտնի է»։ Քուղթ առ Վահ. Մամիկ. 591. (տպ. էմին, 55).

155

ԱԳԱԹ. «Կայր (Տրդատ) Երեւոյթ տեսլեամբն ի մէջ ժողովրդոցն». 573:

ԲԻԻԶ. «Կայր կախեալ (Համադասպուհի մերկ ի մաւրէ) յԵրեւոյթ տեսիլ նշանակի (նշաւակի?)». Գ. ծթ. 178:

—ԳԻՏ. Փոխանակ Երեւոյթ տեսիլ՝ Ագաթ. և Բիւզ. կըսեն այլուր Զաղաճանակ տեսիլ, Տեսիլ ծանականաց. «Թագաւորին զատեալ էր կիրպարանն ի մարդկային բնութենէ ճաղաճանակ տեսլեամբն». Ագաթ. 551.—«Հրամայէր զմորթն (Վարազայ) ի բաց հանել, և խոտով լնուլ, և ի հրապարակի իւրում ի տեսիլ ծանականաց կանգնել հրամայէր». Բիւզ. Գ. իա. 56:

156

ԱԳԱԹ. «Եւ դամենայն սուրբսն . . . յիւրաքանչիւր հանգիստս մարտիրոսական ընակութեան շինուածոցն (2. իսկ տպ.՝ շինուածոյ) փոխեցին». 577—578: և այլուր. «Ի ներքս ի մարտիրոսական յարկին հանգստեանն». 574. կամ Աբիւնք վկայականք. 575. «Վկայական անուն». 604:

ԲԻԻԶ. «Բայց մինչչեւ էր ծածկեալ զմարմին սրբոյն (Ներսիսի), ինքն թագաւորն Պապ երթեալ պատեաց և թաղեաց ի մարտիրոսական ի ընակութիւնն». Ե. իդ. 218:

ԿՈՐ. «Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեցօ (տպ. յարկեղ) սրբոցն, հանգերձ ամենայն անուշահոտ խնկովք եղեալ (զմարմին Սրբոյն Սահակայ)». 25:

[Ա Դաս]† «Իսկ եթէ որ քան դամենայն դառնազոյն թուիցի քեզ, այս ինքն է մահ, և մատնիցես զնա (զհաւատացեալն) նմա, մարտիրոսական պսակ նմա բոլորեցեր». Ոսկ. Հն. ԺԵ. 200:

—ԳԻՏ. Այլուր կըսուի մարտիրոսութեան պսակ, և ոչ մարտիրոսական. «Ոչ միայն վասն չղոհնոյ է առնուլ զմարտիրոսութեան պսակն». Ոսկ. Փիլիպ. Թ. 449—450.—«Զմարտիրոսութեան պսակն առեր ի գլուխ». նոյն, Ա ԹԵՍ. Գ. 439.—«Սպան զմարմինդ, ի խաչ հան, և առնուցուս և դու զմարտիրոսութեան պսակն». նոյն, Երբ. ԺԱ. 502.—«Առցէ զմարտիրոսութեան պսակն». Կիւր. Կոչ. ԺԳ. 297. (անվաւեր թուի

զմարտիրոսական ընթերցուած նոր Հայկազենին: Այսպէս եւ «Կրեօկէս փրիլսոփոս . . . Յոստինեայ փրիլսոփայի . . . խոր-  
դախեաց զմարտիրոսութեան մահն». Եւս. Քր. 160. — «Եւ ոչ  
մարտիրոսութեան, առէ, արիւն՝ կարէ գայնպիսի մեղս ջնջել».  
Ոսկ. Եփես. ԺԱ. Յորդ. 794. եւ այլն:

### 157

ԱԳԱԹ. «Եկայք, զնկատեալ տեղին տէրունական տանն . . .  
ի մէջ առեալ փակեցուք». 578:

ՔԻԻԶ. «Նոքա (ղաւթքն Հայոց) իբրեւ ի բերդ ամուր դիմէ-  
ին ի լեզէնն ի զաւրսն վահանաւորս (Յունաց), եւ նոցա բացեալ  
զվահանսն՝ զնոսս ի մէջ առեալ փակէին». Ե. և. 201:

### 158

ԱԳԱԹ. «Քանզի յԱյրարատեան զաւառին՝ ի թագաւորա-  
նիստ կայեանսն՝ բղխեցին Հայոց տանն Թորգոմայ շնորհք քա-  
րողութեան Աւետարանին». 582. (կարկատեալ ի բանից Վա-  
րուցն Մաշտոցի, 13:) Այլուր. «Գային հասանէին (Գայիանէ  
եւ ընկերք նորա) յերկիրն Հայոց, յԱյրարատ զաւառ ի Վաղար-  
շապատ քաղաք (ըստ 2.), . . . ի նիստս թագաւորացն Հայոց».  
122—123:

ՔԻԻԶ. «Քաղաքս . . . ամուր պարսպաւորս զաւրանիստս  
հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց». Ե. լդ. 235. — «Այժմ  
զՀայ երկիրս խորհի (Մուշեղ) լնուլ քաղաքաւք, եւ զաւրանիստ  
առնէ աստ բնակութեան զաւրացն Յունաց». լե. 236:

— ԳԻՏ. Թագաւորանիստ, Չաւրանիստ, կը նշ. Ուր  
նստի կամ բնակէ թագաւոր, Ուր նստին կամ բնակեն զաւրք:  
Ազաթանգեղ ունի եւ Ստուերանիստ, որ է նստեալ ի ստուե-  
րի. «Չուարճացուցանել զանձինս ստուերանստաց անկելոցն».  
420: Միւս Գասրն չունին այսպիսի բարդութիւնս: Իսկ «Լայ-  
նանիստ այլք», Ազաթ. Յոջր. 26, կը գանուի եւ յայլ գիրս.  
«Լայնանիստ մեծութեամբ տարածեալ կայ առաջի նոցա (ծովն)».  
Քրս. Վեց. է. 148. ըստ այսմ եւ «Մեծանիստ բնակութիւն  
երկրի». անդ, Ա. 16. — «Ձիցէ տեսեալ ի գլխոյ բարձրացեալ լե-  
բին (տպ. լերինն) զծով մեծ իւրով մեծանիստ լայնութեամբն».



անդ, Զ. 129. — «Երթայր մտանէր ի քաղաքն Մեծանիստ». Ոսկ. Վասն Պահոց եւ Աղաւթից, 39. այս երկու բառերս կը նշ. Որոյ լայն կամ մեծ է նիստն. Լայնատարած, Մեծատարած:

159

ԱԳԼԹ. «Քանզի յԱյրարատեան գաւառին՝ . . . բղխեցին Հայոց տանն Թորգոմայ՝ շնորհք քարոզութեան Աւետարանին». 582. (կարկատեալ ի բանից Վարուցն Մաշտոցի, 13.) — «Այս իշխանք են ընտիրք . . . ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ». 597: Այլուր. «Որք հարցեալ զհայրենական մատեանն՝ պատմեսցի նոցա, եւ զծրագիր կարգեալս ասացի նոցա, ընթերցեալք զԹորգոմեայ ազգին զՀայաստան աշխարհին գաստուածապարգեւ աւետեաց Աւետարանին». 24 (ըստ 2):

ՅԻԻԶ. «Եւ սգային (զնեբոէս) ամենայն ազաաք եւ շինականք, . . . ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, Հայ լեզուն առ հասարակ». Ե. 1. 227: Այլուր. «Եւ չորեքին միոյ իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք Պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին որդւոց Թորգոմայ». Խոստար. 1. — «Յաղագս որ ինչ յիս քարոզութեանն Թաղէսի Ըռաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին որդւոց (տպ. որդւոյ) Թորգոմեայ». Խոստումն Երբորդ, 2. — «Կանոնք ժամանակագիրք մատենից տան որդւոց Թորգոմայ աշխարհին Հայոց». վերնագիր Գ զպր. 65, եւ վերնագիր Ե զպր. 185. յերկրորդ տեղւոջս սխալ է «իշխանին Հայոց». փոխ. աշխարհին. (տես Գոր. — Բիւզ. թիւ 7, իշխանակիր փոխ. աշխարհակիր.) — «Զկնի թոպամաճն լինելոյ երանելոյն Յուսկան, անառաջնորդք եղեալ՝ իրբն զկոյրս մորեցեան երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին». Գ. ժգ. 32:

— ԴԻՏ. Ըստ մատենագրին ծննդոց զըոց (ժ. 2, 3. յորմէ եւ Ա Մնաց. Ա. 3. 5)՝ Յարեթի որդի է Գամեր, եւ Գամերայ որդիք՝ Աքանաղ, Բիբաթ եւ Թորգոմա՞ (ըստ երբայական բնագրին Թորգոմա): Եւ ի մարդարէութեան եզեկիսի երկիցս կը յիշատակուի Տուն Թորգոմայ իբր անուն աշխարհի կամ

1. Տես եւ ի Մ. Խոր. Պոմ. «Ազգ տանն Թորգոմայ». Ա. ժ. 50:

2. Մ. Խոր. Թորգոմ կը գրէ յուղղականն. Պոմ. Ա. Ե. 28. թ. 48:

ազգի. «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք եւ հեծելովք եւ չոր-  
տովք ցլին զվաճառս քո». Իէ. 14.—«Գոմեր եւ ամենեքին որ  
չուրջ են զնովա, եւ տունն Թորգոմայ ի ծագացն հիւսիսոյ».  
ԼԸ. 6: Սուրբն շիպողիտոս Գործուացի յԳ դարու՝ զԹորգոմայ  
նախահայր կը համարի Հայոց յիւրում Վասնանակազրութեանն.  
\*Thogorma, de quo Armenii... «Թորգոմայ, յրմէ Հայք». (տես  
ի *Chronicon Paschale*, տպ. Niebuhr եւ L. Dindorf, Bonn, 1832,  
չ. Բ. Կ. 98.) եւ յետ նորա այլ եկեղեցական մատենագիրք, Ե-  
սեբրոս, Թէոդորեոս, Իսիդորոս Հիսպալացի (այսինքն Սևիլիա-  
ցի), եւ այլն. (տես Ինճիճ. Հնախ. չ. Ե. 209—210, եւ ծան.  
1 յերես 210. եւ 298—300. Գաթրքճ. Տիեղ. Պամ. չ. Ե. 93—95.)  
Եղեկիկի ասորական թարգմանութիւնն եւս՝ հանդոյն երբայ-  
կան բնագրին կ'ըսէ բնիժ Թորգոմոն, beth Thougorma—Տուն  
Թորգոմայ, զոր P. Smith կը մեկնէ Armenia. (*Theo. Syr.*  
*Բեթ*, էջ 498:) Նկատողութեան արժանի է նա եւ Երեմիա մար-  
գարէի բռնին. ԾԸ. 27. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թա-  
գաւորութեանցն եւ Ասրանազեան գնդին». ուր Այրարատ ա-  
նուան կից կը յիշուի եւ Եսրանազ՝ եղբայրն Թորգոմայ. եւ բոս  
այսմ կը գրէ Կորիւն ի սկիզբն Վարուցն Մաշտոցի. «ՉԱս-  
րանազեան ազգին եւ Հայաստան աշխարհին դատուա-  
ծապարգեւ գրոյն, եթէ երբ եւ յորում ժամանակի մատակարա-  
րեցաւ»:

## 160

ԱԳԸԹ. «Եւ յամենայն տեղիս հասեալ ինքնին թագաւորն  
լինէր քարոզ՝ խոստովանելով զիւր զամպարչաութիւնսն». 592—  
593.—«Առեալ երանելոյն Գրիգորի զաշխարհարանակն զաւրացն,  
եւ զինքնին զթագաւորն... յափն եփրաա զետոյն մատու-  
ցանէր». 620:

ԲԻԻԶ. «Եւ յետ այտրիկ ինքնին թագաւորն ելանէր ի  
խնդիր հայրապետին Ներսեսի». Գ. Ժգ. 112.—«Եւ միում գնդին  
ինքնին թագաւորն լինէր զաւրագլուխ». Իր. 137.—«Ինքնին  
թագաւորն Հայոց Պապ վառեցաւ կաղմեցաւ պատրաստեցաւ».  
Ե. դ. 193.—«Ինքնին թագաւորն յոտն կացեալ... անապակ  
մատուցանէր աննն Աստուծոյ Ներսիսի». Իդ. 216.—«Մխիթա-

ըէր զամենեսեան (Վրթանէս), եւ զինքնին թագաւորն զԽոս-  
րով»։ Գ. ժա. 26.—«Հասանէր թագաւորն Արշակ, . . . գտանէր  
զինքնին թագաւորն Վապուհ»։ Գ. իր. 139: Ըստ այսմ եւ այլ-  
ուր. «Դէպ եղև ասարել անգր կազմութեամբ մեծաւ արքային  
Հայոց զինքնին մեծ կաթուղիկոսն Հայոց Ներսէս»։ Գ. Կ. 79.  
(տպ. «արքային Հայոց. զի ինքնին» եւ այլն):

ՄԿԲ. «Ի ժամանակի իբրև զիմաց ինքնին իշխանն  
(այս ինքն Անտիոքոս Մեծն) ի կողմանս Պարսից անթիւ անհա-  
մար զաւրարն հանդերձ»։ Բ. ա. 12—13:

### 161

ԱԳԱԹ. «Եւ կուտեցան զաւրքն ամենայն, . . . զաւրավարք,  
պետք եւ իշխանք»։ 594—595.—«Առ ինքն կոչէր. . . զզաւ-  
րավարս եւ զպետս եւ զիշխանս իւրոյ տէրութեանն»։ 35:

ԲԻԻԶ. «Ապա ի մի ժողով կուտեցան . . . պետք եւ իշ-  
խանք, զաւրավարք»։ Գ. գ. 67:

### 162

ԱԳԱԹ. «Եւ կուտեցան զաւրքն ամենայն, եւ մեծամեծք եւ  
կուսակալք, զաւառակալք»։ 594—595:

ԲԻԻԶ. «Նրկու զաւառակալք աշխարհատեարք անկանէին  
ընդ միմեանս մեծաւ սխալեամբ (յաշխարհին Հայոց)»։ Գ. գ.  
9.—«Ընդ առաջ երթային նմա (Ներսիսի) . . . նախարարք ամե-  
նայն եւ ամենայն զաւառակալք»։ Գ. ժգ. 109.—«Գային եւ ի  
մի վայր բովանդակէին . . . մեծամեծք զաւառակալք եւ զաւա-  
ռատեարք»։ Ե. ա. 186:

### 163

ԱԳԱԹ. «Իսկ նա հաւանեալ վաղվաղակի բարբառեալ  
ասէր, թէ Կոմք Աստուծոյ կատարեսցին»։ 596:

ԲԻԻԶ. «Իսկ նա ընդգէմ բարբառեալ ասէր. Չես ար-  
ժանի, հիմ գաս, մի գար ի ներքս»։ Գ. ժր. 32:

### 164

ԱԳԱԹ. շնակ թագաւորն . . . գումարեալ զգլխաւորսն նախա-

բարացն . . . երբորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն»։ 596 :

ԲԻԻԶ. «Եւ տան զնա (զճահակ) ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն իւր Հայր կոչէր . . . եւ յուղարկեցին զնա մեծաւք պատուով յերկիրն Գամբաց»։ Գ. ԺԷ. 45.— «ԶՀայր՝ մեծ իշխանն մարդպետութեանն»։ Գ. Գ. 71: Այլուր. «Այր մի անաւրէն եւ այսամուտ, . . . որ ունէր զպատին մեծի մարդպետութեանն, այր ներքինի, . . . որում Հայր կոչէին»։ Գ. ԺԸ. 46.— «Եւ փոխանակ նորա (Հայր մարդպետի) ի տեղի հայրութեան մարդպետութեանն [կացուցին] զԳրակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հաւր նորա գամու միտջ լեալ նոյն գործ մարդպետութեանն»։ Ե. Գ. 191—192. (տպ. «Եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն զԳրգրակ» եւ այլն.)— «Այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունւոց (տպ. արշակունոյ)»։ Է. 206. (այս է ուղիղ միտք բանին, ինչպէս ունի եւ նոր Հայկդ. ի Մարդպետութիւն: Տպագիրն սխալ կը կիտազրէ «որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր»։ նոյն սխալ է եւ յինճիճ. Հնախ. 2. Բ. 136:) Այլուր Մարդպետութիւն կը կոչէ զերկիր կամ զկալուած մարդպետին. «Ճրջէր ընդ մարդպետութիւնն իւր»։ Գ. ԺԳ. 114. (= Մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբն (2. իսկ տպ.՝ իշխանութեամբ) շըրջէր յերկիրն Տարանոյ»։ Ե. Գ. 191:) Տես եւ Հայր մարդպետ կամ լսկ Մարդպետ, Գ. ԺԸ. 46. Գ. ԺԳ. 113—115. ԺԵ. 171. Ե. Գ. 191. Գ. 203. իԳ. 217.

—ԳԻՏ. Մարդպետ եւ Մարդպետութիւն է ներքինապետ (Գան. Ա. 3—18) եւ ներքինապետութիւն, եւ կը ստուգաբանի Կանանց պետ. տես Մարդ—Կին, Յուդիթ, ԺԲ. 11. Բիւզ. Գ. խԳ. 155. Պամ. Աղեքս. 125. յորմէ եւ Մարդիկ—Կանայք, Եսթեր, Բ. 20:

165

ԱԳԱԹ. «2որբորդ՝ իշխանն թագակապ իշխանութեանն ասպետութեանն»։ 596—597: Այլուր. «Աննոյր ընդ իւր (Տրդատ)



... զմեծ իշխանն Անդեղ տան, եւ զԹագադիրն ասպեան» 650:  
ԲԻԻԶ. «Առնէր հարսանիս եւ եղբար նորին Վաղարշակայ,  
եւ տայր նմա զդուստր ասպեաին Բագրատունւոյ ի Սպեր գաւա-  
ռէ, որ Թագադիրքն՝ Թագակապըն լեալ էին ի բնմէ ազգին  
Թագաւորութեանն Արշակունւոց (տպ. արշակունոյ)» Ե. խդ. 256:  
— ԴԻՏ. Յօրինակեզ Թագակապ եւ Թագադիր Արշա-  
կունի հայ Թագաւորաց կը կոչուին Բագրատունեաց աւագ նա-  
խարարքն: Այսպէս եւ առ Մ. Խորենացւոյ. «Ենանոս (Բագրա-  
տունի) ասպեա Թագակապ». Բ. խդ. 212.— Թագակապ աս-  
պետութիւն (Բագրատունեաց)». Բ. ժդ. 195. խէ. 267. եւ Թա-  
գադիր. Բ. գ. 159. է. 167. ը. 177. լէ. 249.— Թագակապ  
կայ մի անգամ եւ յերկրորդ Դասի, այլ կը նշանակէ՝ Որ Թագ  
կապեալ է իւր, կամ Որ ունի Թագ ի գլուխ. «Ոչ հուր ընդ ջրոյ  
(միարանի), եւ ոչ մանկունք շինութեան ընդ խառվիշտ, ... եւ  
ոչ Թագակապը ընդ կապեալս բանտաւորս». Զգաւն, ԺԹ. 358:  
Կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի. «Եւ զսպասաւորս զայսպիսիս  
նշանաւորս պատուաւորս վարկանիմք՝ զորս տեսանեմք հուպ եւ  
չուրջ առ Թագակապս ձիւնագոյն սպիտակամազ կառածիւզ ջոր-  
ւոցն արքունականաց». Ոսկ. Ի Տեսիլ սերովրէիցն, 415:

166

ԱԳԱԹ. «Հնգետասաներորդ՝ իշխանն Մաղխազութեան  
տանն». 597.— «Առնոյր ընդ իւր (Տրդատ) ... եւ զիշխանն  
Մաղխազութեան տանն». 650. (Թէ յառաջին եւ Թէ յեր-  
կրորդ տպ. ի Ցանկին յատուկ անուանց Մաղխազունեան  
գրեալ է:)

ԲԻԻԶ. «Գումարեաց ընդ նմա Թագաւորն Տիրան ... եւ զՄա-  
նասպ զԽորխոռունեաց զիշխանն Մաղխազունեան տանն». Գ. ժր. 29. (իցէ արդեօք ուղղելի Մաղխազութեան ըստ Ագաթ.):  
Տես եւ «Գարշնյլ Մաղխազ, նահապետն Խորխոռունեաց». Գ.

---

1. Տպ. Թագաւորքն. իսկ 2.՝ Թագաւորացն. ուղիղ ընթերցումն  
Թուի ինձ Թագադիրքն, հանդոյն Ագաթանդեղի: Եւ յայս բան Թովմայի  
Արժրունւոյ, 48, «Ի նոյն պատիւ Թագաւորութեան կացուցանէ զԱնիանոս  
Բագրատունի», ուղղելի համարիմ Թագադրութեան:

ժա. 104.—«Գարջոյ *Մաղխագ*». Ե. լր. 245. խգ. 255.—«Եկին բերին . . . գմարմինն Գարջուրայ *Մախագու Բողոսուունոյ*». խգ. 255: (*ՉՄաղխագութեան կամ Մաղխագունեան տանէն տես Ինճիճ. Հնայս. Հ. Բ. 139—141, 172—173. և Ալիշան, Այրարատ, 420 ք—421 ք*):

167

ԱԳԱԹ. «Ըյս իշխանք են ընտիրք, կուտակալք կողմնակալք յազարատորք եւ բիրատորք (ըստ 2.) ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ». 597:

ԲԻԻԶ. «Նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիրատորքն եւ յազարատորքն». Գ. ք. 20:

—ԴԻՏ. Կողմնակալ յազարատր եւ բիրատր, Աշխարհակալ բիրատր եւ յազարատր, իմա՝ Սր ունի ընդ իւրեւ հազարս եւ բիրս, իշխան բիրուց եւ հազարաց, ինչպէս կ'ըսէ Մ. Խորենացի. «ի ծայրս հայերէն խաւսից՝ կողմնակալ իշխանն բիրուց եւ յազարաց յարեւմտից կուսէ». Բ. գ. 159.—«Ըյս Առան անուանի եւ քաջ՝ կարգեցաւ ի Պարթեւէն Վաղարշակայ կողմնակալ բիրատր (Աղուանից)». ք. 172: Իսկ ի Սուրբ Գիրս Հազարատրք եւ բիրատրք, Բիրատրք եւ յազարատրք, կամ առանձին առանձին Հազարատրք, Բիրատրք, կը նշանակեն պարզապէս Հազարք եւ Բիրք. «Եւ ի դաղարինն (տապանակին) ասէ (Մովսէս). Դարձիր, Տէր, ի յազարատրս եւ ի բիրատրս Իսրայելի». Թխք, Ժ. 36.—«Եթէ իցէ՛ ընկալցի Տէր ընդ յազարատրս խոյոց, կամ ընդ բիրատրս նոխազաց պարարտաց». Մխք. 2. 7.—«Ըյս են բիրատրք եփրեմի, եւ սորա յազարատրք Մանասէի». Բ Ար. 1Գ. 17.—«Հազարատրացն Իսրայելի». Թխք, 1Ա. 5.—«Ըստ յազարատրաց ձերոց». Ա Թագ. Ժ. 19.—«Ամենայն յազարատրաւք Յուդայ». անդ, ԻԳ. 23.—«Ի յազարատրս Յուդայ». Մխք. Ե. 2.—«Եւ եկաց արքայ (Դաւիթ) յից առ զբանն, եւ ամենայն զաւրն ելանէր ըստ հարիւրատրաց եւ ըստ յազարատրաց». Բ Թագ. ԺԸ. 4.—«Եւ ահա յազարատրն իմ խոնարհագոյն է ի մէջ Մանասէի». Դատ. 2. 15.—«Իրբեւ զբիրատրս զառանց պարարտաց». Դան. Գ. 40: Ըյս ասացուած կը զանուի եւ ի Մար. Պամ. Արեւ. Վկ. 14. «Կոտորեաց զհազարատրս հազարաւք ի լերինս, եւ տապաստ

արկ զքիւրատրս բիւրուք ընդ երեսս զաշտին»: Իսկ ուր կ'ըսէ նոյն Մարութա, Ի Վկ. Արեւ. 126. «Նորա են սպարապետք եւ զարագլուխք չազարատորք եւ քիւրատորք, պատենաղէնք, սաղաւարտեալք», իմն իշխանք չադարաց եւ բիւրուց, ըստ Ազաթ. եւ Բիւզ.: Թերևս սոյն նշանակութիւն է եւ յառաջին վկայութեան Ասորի մատենագրիս:

## 168

ԱԳԱԹ. «Ղևոնդիոս արքեպիսկոպոս Կեսարու, եւ ամենայն ուխտ քահանայութեանդ սուրբ եկեղեցւոյ որ այդր էք». 600. — «Ղևոնդէս արքեպիսկոպոս մետրապոլիտ մեզաղի Կեսարու». 614. — «Իսկ մեծ արքեպիսկոպոսն երանելին (ըստ 2.) Գրիգորիոս. . . զամենայն աշակերտելոյքն շրջէր». 645. — «Ասնոյր ընդ իւր (Տրդատ) զմեծ արքեպիսկոպոսն Գրիգոր». 650. — «Հայրապետն մեծ արքեպիսկոպոսն աշխարհամուտ զբանն, որում անուն կոչէր Եւսեբիոս (սպ. Սեղբեսարոս)». 651—652:

ԲԻԻԶ. «Ապա ժողովեցան ամենայն եպիսկոպոսք իշխանութեանն Կեսարու, եւ ընտրեցին զՍուրբն Բարսիլիոս աննկ արքեպիսկոպոս Կեսարու». Դ. թ. 99. (զիտելի է Կեսարիա անուան սեռականն Կեսարու թէ լԱզաթ. եւ թէ ի Բիւզ.) — «Ապա էառ զայն (արծաթն) արքեպիսկոպոսն (Բարսեղ), արար աւագանս միւրտութեան կնքոյ տալոյ». Ժ. 103: Յորմէ. «Եւսեբիոս արքեպիսկոպոսապետն (Կեսարու)». Դ. դ. 72. — «Իսկ կինն հասեալ առ արքեպիսկոպոսապետն (Ներսէս), զոյժ արկանէր». Ժե. 118. — «Եւ սուրբ արքեպիսկոպոսապետն Ներսէս արասցէ ազաւթս». Ե. դ. 193: Այլուր փոխ. Արքեպիսկոպոս կ'ըսէ Եպիսկոպոսապետ<sup>1</sup>. 7, 9, 16, 17, 26, 28, եւ այլն:

## 169

ԱԳԱԹ. «Եւ հանէին զԳրիգոր յոսկիապատ կառսն արքունականս». 602:

ԲԻԻԶ. «Զի նստուցեն զերանելին Յուսիկ յարքունական

1. «Երկրորդ դաս աստիճանի եկեղեցւոյ են Արքեպիսկոպոսք, որ Թարգմանիկ Եպիսկոպոսապետք կամ Առաջին եպիսկոպոսք». Ն. Լամբր. Մեկն. Պարզի. 82—83: Տես եւ Ստեփ. Առաք. Պատմ. Սիւննաց, Իէ. 79:

կառան». Գ. ժբ. 29—30.—«Չանթեղաւք եւ մոմեղինաւք, . . . արքունական կառաւք զՍուրբն Վրթանէս . . . յուղարկէին». ժա. 28—29:

—ԳԻՏ. Կայ յմսկ. երբ. Թ. 500. «Այլ թէ բնաւ իսկ յարքունի կառս նստիցիմք, հեծեծեսցուք դառնապէս»:

## 170

ԱԳԱԹ. «Եւ եղեալ ժողով բազում եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացուց՝ զի ծեռնադրեսցեն զՍուրբն Գրիգորիոս». 604:

ԲԻԻԶ. «Զի ծեռնադրեսցեն անդ [ի Կեսարիա] զՍուրբն Ներսէս [ի] կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց». Գ. դ. 72.— «Զի եկեսցեն ծեռնադրեսցեն զ2ոնական ի կաթուղիկոսութիւն (տպ. ի կաթողիկոսութեան) Հայոց». ժե. 123:

## 171

ԱԳԱԹ. «Մեծաւ պատուով եւ թղթով եւ ժողովով, զՍուրբն Գրիգորիոս անդուստ յուղարկեցին (տպ. յղարկեցին) ի շխանաւք հանդերձ». 604: Այլուր. «Զորս այնուհետեւ յուղարկեցին (տպ. յղարկեցին) զնոսս անտի». 641:

ԲԻԻԶ. «Եւ ի ձեռս սատրապացն Հայոց (զԳնեկ եւ զՏիրիթ), եւ զնոսս զայս արինակ անդուստ յուղարկէր». Գ. ե. 90:

## 172

ԱԳԱԹ. «Իսկ ընդ որ անցանէին՝ կուտէին ժողովուրդք ի վերայ ժողովրդոց, տեսանել զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս». 605: Այլուր. «Եւ ամենայն եկեղեցեացն առնէին պատրաստութիւն պատարագացն, ընդ որ էին անցանելոց». 602:

ԲԻԻԶ. «Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս թողուն յամենայն ճանապարհակիցս (չեղջս քարանց)». Գ. է. 16:

## 173

ԱԳԱԹ. «Առնայր ընդ իւր զբազմութիւն հաւանելոցն՝ նախարարակոյտ զաւրուն հանդերձ». 605: Ըստ այսմ եւ այլուր. «Իսկ իբրեւ զայն զիտացին նախարարք նայակոյտ զաւրացն». 39:



ԲԻԻԶ. «Ժողովէր . . . Վաչէ զագատախումբ բանակ նախա-  
րարակոյտ զաւրացն». Գ. Ժա. 26:

174

ԱԳԱԹ. «Եւ ընդ բանին՝ հողմ ուժգին բխեաց ի խաշանիշ  
փայտէն<sup>1</sup>, զոր ունէր ի ձեռին իւրում սուրբ եպիսկոպոսն (Գրի-  
գոր).» 609: Կայ եւ արմատն Նիշ. «Ուր նախ նշմարեացն եւ նշա-  
նակեալ կանգնեաց զՆիշ խաշին սրբոյ». 626. (համեմատ. «Որ  
ունի յաջմէ զՆիշ խաղաղութեան». Յճխ. ԺԱ. 119.— «Չնիշ հե-  
թանոսաց յանձին ռենելով՝ անկան ի պատերազմի». ԺԲ. 131:)

ԲԻԻԶ. «Լըծուէնշանք, վարժնականիշք, անհրկիւղք, քա-  
ջախրաք (Մամիկոնեանք)». Գ. ր. 67:

—ԳԻՏ. Կայ միայն Նիշ, որ է արմատ նշան բառի, ի զիրս  
Երկրորդ եւ Երրորդ Դասուց. տես Եփր. Արար. 73. Համար. 84.  
Աւետ. 337 կրկիցս. Կիւր. Կոչ. ԺԳ. 270: Կայ եւ յԱռաջին Դա-  
սի՝ Այս Նիշ, Այն Նիշ, սր է Այս ինչ, Այն ինչ. «Յայս Նիշ կե-  
րակրոց չճաշակել». Եղնիկ, 46.— «Այս Նիշ տուն յայսպիսի ինչ  
նենգութենէ կործանեցաւ, եւ այն Նիշ՝ յայնպիսի». Ոսկ. Փիլիպ.  
ԺԵ. Յորդ. 519. եւ այլն:

175

ԱԳԱԹ. «Որք տեսին՝ անթիւ մարդիկ հաւատացին». 609:  
Այլուր. «Ժնան զանթիւ ըազմութիւն մարդկան ի կարգս հրեշ-  
տակաց». 477.— «Ժսի նորա ժողովեալ կուտեալ անթիւ ըազմու-  
թիւնը (ըստ 2.) մարդկանն . . . խնճոյ կացուցանէին». 547:

ԲԻԻԶ. «Ձուր տարապարտ ի ցասմանէ դառնութեան սրտին  
իւրոյ կոտորէ (Մանածիհր) անթիւ մարդիկ». Գ. Ժ. 24.—  
«Ձանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց». Գ.  
իդ. 142: Այլուր. «Երկրպագուս Քրիստոսի անթիւս մարդկան  
կացուցանէք». Գ. Է. 95:

ԵՂԻ

1. «Չ խաշանիշ՝ փայտէն զղրկեցան դժսրք». Հարական Ցարու-  
թեան, ԳԶ.

176

ԱԳԱԹ. «Գանդնեաց սեղան ի վկայարան սրբոցն հանգստին՝ զոր շինեացն, եւ մատուցանէր զպատարագն փրկութեան».  
610: Այլուր. «Եւ անդ մատուցանէր զաւրհնութեան պատարագն».  
622:

ԲԻԻԶ. «Մա (Վրթանէս) երթեալ կատարէր անդ, ըստ հանապաղ սովորութեանն, զՏեառնն զխաշական զփրկութեանն զպատարագն զոհութեան».  
Գ. Կ. 7: Այլուր. «Մեծ քահանայապետն Վրթանէս երթեալ շրջէր առանձինն սակաւօք, կտտաբել զպատարագն աւրհնութեան».  
անդ.

177

ԱԳԱԹ. «Եւ հրամայեաց կատարել անդ (ի Յաշտիշատ) ամյամէ ի նմին տեղոջ (ըստ 2.)՝ ժողովել ամենեցուն ի յիշատակ սրբոցն, որ ար եւթն էր Սահմի ամսոյ».  
611: Այլուր. «Զի ժողովեալ ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու, եւ սուրբ վկային Աստուծոյ Աթանագինի, յայնմ աւուր խմբեսցեն ի նմին յաւանի (ի Բագուանի)».  
623:

ԲԻԻԶ. «Մանաւանդ յայն ի զլուաւոր տեղին եկեղեցին (Յաշտիշատու) ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ».  
Գ. Կ. 7. (վերջին բառը թուին ուղղելի ըստ Ազաթ. «կատարել անդ ամի ամի յեւթն Սահմի ամսոյ») Այլուր. «Յայնմ յիշատակ աշխարհարնակք մարդկան՝ որ ժողովեալն էին».  
Գ. ԺԵ. 117:

178

ԱԳԱԹ. «Եւ ինքն չու արարեալ անախ՝ մեծապարծ պարծանաւք զաւրութեամբ խաչին».  
611:

ԲԻԻԶ. «Եւ եկին հասին նորա մեծապարծ երեւելի հոգեորդագեաց փասաւք ի Հայաստան երկիրն».  
Գ. Կ. 73:

179

ԱԳԱԹ. «Վասն կենսատուր փրկութեանդ հասելոյդ ձեզ յԱստուծոյ . . . անպայման ուրախութեամբ զոհացաք զանդղա-

կան վառացն «Բրիստոսի»։ 614: Այլուր. «Բազմութիւնք անհունք . . . ժողովեալ . . . տեսանել եւ լսել զանապայման սքանչելիս Աստուածութեանն»։ 547:

ԲիԻԶ. «Ամենայն քաղաքն, եւ գաւառքն որ շուրջ էին ղնօվաւ, անապայման եւ անշափ խնդութեամբք եւ ցնծութեամբք ընդ առաջ կրանէին (Սրբոյն Յակորայ)»։ Գ. ժ. 23:

ԿՈՐ. «Յայնմ ժամանակի երանելի ցանկալի եւ անապայման սքանչելի լինէր աշխարհս Հայոց»։ 12. (տպ. խառնակ. ուղղեցի ըստ Ագաթ. 636:)

Տես եւ «Տարապայման» ի Բիւզ.—Մկր. թիւ 23:

—ԳԻՏ. Անապայման է Անշափ, ի պարսկականէն Փէյմա = 2ափեան, հրամայական Փէյմուտէն = 2ափեմ բայի: Կայ մի անգամ եւ յԱռաջին Գասի. «Զի որպէս արբեցուցիւնն ցնորեցուցանէ, նոյնպէս եւ երգք մեղկեն զմտացն հաստատութիւնն, զձիս ոգւոցն հարկանեն եւ յանապայման անառակութիւնս կործանեն»։ Ոսկ. ես. Ե. 54:

## 180

ԱԳԱԹ. «Զի Արարիչն ամենայնի . . . իւրով հաճոյակատար կամաւքն իրատէ զամենեւին»։ 615. (տպ. հաճոյական. 2. հաճոյկատար. իսկ նոր Հայկզ. հաճոյակատար. համեմատէ ընդ ՅՏԻ. «Ամենայն պտտարագաց է գլուխ (Արեւիին), միջնորդ եւ բարեխառս վերջնոցս՝ իւր մտերիմ եւ սուրբ հաճոյակատար կամաւք»։ ԺԳ. 136:)

ԲիԻԶ. «Եւ մեծն աստուածաւոր պաշտաւն ի հաճոյակատարն բարութիւն՝ յամս յաւուրս սոցա աճեալ (տպ. աճել) բազմացաւ»։ Գ. գ. 6—7:

Տես «Հրամանակատար» ի Կոր.—Ագաթ. թիւ 140:

## 181

ԱԳԱԹ. «Թագաւորն եւ գաւրականքն՝ ամենայն աշխարհախումբք բազմութեամբն յանձն առեալ զխնդրեալն կատարեք»։ 618—619. (կարկատեալ ի Վարուցն Մաշտոցի, 15:)

ԲիԻԶ. «Բանդի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորաւքն եւ մեծամեծաւքն, նախարա-

բաւքն եւ աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս». Գ. դ. 7:

182

ԱԳԱԹ. «Եսկ ի շնուլ կիտին (տպ. կեաին) եղելոյ պահոցն կատարելոյ». 620:

ԲԻԻԶ. «Եթէ ոչ ուղիղ եկեսցես ի հաւատան, . . . յետ շնոյ եղեալ կիտին՝ մեռցի մանուկն». Գ. և. 86—87:

183

ԱԳԱԹ. «Եւ անտի ելեալ մեծաւ ցնծութեամբ, . . . կանթեղաւք վառելովք եւ մոմեղինաւք լուցելովք». 621—622:

ԲԻԻԶ. «Յաւուրսն ներսիսի . . . լոկ արատաւաւք եւ բաւարժանի սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, կանթեղաւք եւ մոմեղինաւք լուցելովք զմեռեալսն յուղարկէին». Ե. լա. 229. Սյուր. «Կանթեղաւք եւ մոմեղինաւք . . . զմուրրն Վրթանէս . . . յուղարկէին». Գ. ժա. 28—29:

Տես «Կանթեղաւք վառելովք» ի Կոր. = Բիւղ. թիւ 43:

[Ը Գաս]† «Եւ արդ աղէ ասն, զինչ յայտ տանիցեն կանթեղքն եւ մոմեղէնք լուցեալք. ոչ ապաքէն իբրեւ զնահատակս յուղարկեմք (զմեռեալսն)». Ոսկ. Երբ. Գ. 478: Եւ այլուր Մոմեղէն, ածական. «Նոյնպէս եւ աստ զմոմեղէն պատկերն եղծանէ զաւրութիւն հրոյն, ցուցանէ ընդ այնք ոսկեղէն. Արդարեւ մոմեղէնք իսկ եւ կաւեղէնք էաք յառաջ քան զաւազանն, եւ յետոյ ոսկեղէնք». Կորոս. է. 598. զարձեալ. «Մոմեղէնք իսկ եւ կաւեղէնք էաք». անդ, Յորդ. 598:

—ԳԻՏ. Քնազիրն Ոսկերբանի Մեկնութեանն Երբայեցոց՝ փոխանակ կանթեղքն եւ մոմեղէնք լուցեալք՝ ունի պարզապէս լապտերքն մեծապայծառք, *ai lampades ai phaidrai*, ինչպէս զնոյն բառս այլուր կը թարգմանէ Հայ թարգմանն ի նմին Մեկնութեան. «Զի մեծապայծառ լապտերաւք երթայցեմք յառազասան». ԻԸ. 558.—«Այն է որ մեծապայծառ լուսաւորէ զլապտերան». անդ, 559: նոյն *phaidrai lampades* բառքն թարգմանեալք են եւ յՈսկ. Մտթ. «Զինչ իցէ վախճան սորա. երկիրք, եւ երկնից բարութիւնքն, փառքն անճառք, առազասան հոգեւոր,



լապտերըն մեծապայծառք». Բ. իդ. Յորդ. 705. — «Առազաստ հոգևոր է անդ, և լապտերը լուսաւորութեան». Բ. դ. Յորդ. 477. — «Լուսաւոր լապտերաւք հանդիպեցուք փնսային». Գ. իթ. Յորդ. 110:

184

ԱԳԱԹ. ա. «Մեծաւ լրջմտութեամբ և բազում դուար-  
թութեամբ լուսաւորեալք և հրեշտակացեալք». 622:

բ. «Աւիտ եղեալ միանգամայն վրէժ խնդրել մեծաւ քի-  
նութեամբ զանկաննն իւրեանց ի տէրութենէն . . . մեծաւ քի-  
նու նախանձարեկ լինելով». 31:

ԲԻԻԶ. ա. «Եւ անդ պատահեալ միմեանց մեծաւ լրջմը-  
տութեամբ, . . . անգուստ յաշխարհն զարձան». Գ. դ. 73:

բ. «Մ քաջն զաւրափարն . . . (Մուշեղ) լի էր քինիւ մե-  
ծաւ և բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց». Ե.  
ի. 213:

185

ԱԳԱԹ. «Եւ յայն աւուրս եւթեանցն՝ որ մկրտեցան յար-  
քունական բանակէ անտի, ընդ այր և ընդ կին և ընդ մա-  
նուկ, աւելի քան զտրեքարիւր բիւր». 623:

ԲԻԻԶ. «Եւ ինքն (Ներսէս) անդէն մնաց յարքունական  
բանակին . . . և մինչ Գննի արքունական բանակին լինէր  
միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նորա». Գ. ժե. 118. —  
«Յորժամ մերժեցաւ յարքունական բանակէն . . . Ներսէս, և  
ոչ որ զայր ընդդիմացեալ թագաւորին». Ժթ. 129: Այլուր Ար-  
քունի բանակ. 47. 117 երկիցս. 118. 186 երկցս:

186

ԱԳԱԹ. «Հրաման տայր նոցա (եպիսկոպոսացն՝ Գրիգոր)՝  
հաւատարիմ առաջնորդութեամբ վերակացու լինել լուսաւո-  
րապէս հաւտին Տեառն». 625:

ԲԻԻԶ. «Ահաքոն եպիսկոպոս . . . առաջնորդէր (տպ. առաջ-  
նորդ) իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զամենայն աւուրս կե-  
նաց իւրոց». «Զ. ժդ. 270: Այլուր. «Լուսաւորէր և առաջ-

նորդէր նոցա Սուրբն Վրթանէս իրրեւ զհայր իրրեւ զեզրայր իւր»։ Գ. գ. 7։

==ԴԻՏ. Կայ այլուր *Լուսաւորապէս* առանձինն. «Եւ յետ ստեղծու միոյ՝ մինչդեռ իջանէ զայ նա ի պատմութեան անդ (տպ. անտի) իւրում, եւ լուսաւորապէս այսպէս երկրորդեալ (տպ. երկրորդել) ասէ»։ Եւս. Եկեղ. Բ. Ժէ. 113։

### 187

ԱԳԱԹ. «Զգագանամիտ, զվայրենագոյն, զճիւղարարոյ զաշխարհաբնակսն (2. իսկ տպ.՝ գաշխարհականս), զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեան»։ 625. (կարկառեալ ի Վարրուցն *Մաշտոցի*, 14, 15.)—«Վայրենամիտքն եւ դատարկասունքն եւ անասնարարոյ աշխարհաբնակքն (2. իսկ տպ.՝ աշխարհքն)»։ 626. (ի Վարրուցն *Մաշտոցի*, 19։)

ԲԻԻԶ. «Յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, եւ բազում եպիսկոպոսք»։ Գ. ԺԵ. 117։

### 188

ԱԳԱԹ. «Եւ զոմանս յորդոց քրմացն առեալ՝ զառաջասունն ձերբասունս առնէր»։ 629։

ԲԻԻԶ. «Եւնասունն էր սա (Խաղ) եպիսկոպոսապետին ներսեօի. զառաջեալ իւրով զսա էր սնուցեալ»։ Գ. ԺԲ. 105.—«Գրիգորիս, եւ . . . Յուսիկ, որք սնան զառաջեալ թագաւորին չայոց»։ Գ. Ե. 10։

Տես եւ «Եւնասուն» ի Կոր.==Ագաթ. Թիւ 131։

### 189

ԱԳԱԹ. «Յայրս եւ ի քարածերպս երկրին բնակեալ լինէր (Գրիգոր), եւ ի կատարս լիւանց»։ 632.—«Զոր եւ մարգարէքն յառաջագոյն գործէին, որք ի լերինս, յանապատս, յայրս եւ ի քարածերպս վիմաց զաստուածեղէն կրանիցն ծառայութիւն հարկանէին»։ 636. (առեալ ի Վարրուցն *Մաշտոցի*, 24, ուր կ'ըսէ Կորիւն. «որք ի լերինս եւ յանապատս եւ ի փապարս վիմաց» եւ այլն։)

ԲԻԻԶ. «Որք միանգամ վասն սիրոյն Աստուծոյ յաշխարհէ

էին մեկնեալ, ի յանապատս բնակեալ, ի քարանձաւս ամբացեալք յայրս եւ ի քարածերպս երկրի»։ Զ. ժգ. 271:

ՄԿԲ. «Զի յուչ լիցի նոցա՝ սրպէս յառաջ դառնս ճաղա-  
արահարացն ի լերինս պաշտէին՝ յայրս եւ ի քարածերպս»։  
Բ. ժ. 6. (անս աստէն եւ ի թիւ 76 զհամեմատութիւն հատու-  
ծոցն Բիւզ. եւ Մկր.):

— ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի, ոչ բոլորովին նման. «Ե խոր-  
հուրդ մասնեն քուրմքն՝ յինչ այրս, կամ յոր ծակս, կամ յինչ  
քարածերպս մացեն թաքիցեն»։ Թուղթ Երեմ. 48: Դարձեալ-  
«Եւ եկեացեն հացեն ի ձորս ձեր եւ ի քարածերպս վիմաց  
(անս «ի քարածերպս վիմաց» եւ յեղաթ. երկրորդ վկ.) եւ յայրս  
եւ ի փապարս եւ յամենայն փայտս»։ Ոսկ. Ես. է. 92. որ յե-  
գայի, է. 19, գրեալ է. «Եւ եկեացեն . . . ի ծերպս վիմաց եւ  
յայրս», եւ այլն:

190

ԱԳԼԹ. «Իսկ թագուորն շատ աղաչեաց զԳրիգորն վասն  
հանապաղորդ առ նմա կալոյ, զի ընդ ինքեան չբնցուցէ որում՝  
ոչ հաւանեալ չառնոյր յանձն (2. իսկ տպ.՝ ի յանձն)»։  
638: Այլուր. «Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտաւնատար լինել  
գիցն երկրպագութեան»։ 50.— «Իսկ նա ոչ առնոյր յանձն (2.  
իսկ տպ.՝ ի յանձն) զնոցա ինչ առ նոսա մատուցանել»։ 572:

ԲԻԻԶ. «Գառնութեամբ մահուան կամէր վճարել զնա (Վա-  
ղէս զներսէս). որում մեծամեծքն . . . Հաւանեալք չառնուին  
յանձն»։ Դ. գ. 90.— «Ապա կամեցաւ տալ նմա երէցն ի սրբու-  
թենէն անտի աւրինացն. իսկ եղբայրն Հաւանեալ չառնոյր  
յանձն»։ Ե. իբ. 225.— «Եւ զմանուկն Արաւազդ, որդի Վաչէի,  
ընդ կանանին տալի հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հա-  
ւանէր, չառնոյր յանձն»։ խգ. 252: Այլուր. «Զբողոք բառնա-  
լով (ներսէս)՝ զանձն անարժան համարեալ՝ չկամէր, չառնոյր  
յանձն»։ Դ. գ. 69, Այլուր պարզապէս. չառնոյր յանձն, չառ-  
նուին յանձն. Զ. բ. 267. Ե. իգ. 215:

[Ա Գաս] Ի «Թէպէտ եւ բարեկամք եւ ազգականք . . . դրա-  
սուցանել մխիթարի կամիցին՝ չառնուն յանձն, Հաւանին»։  
Ոսկ. Փիլիպ. Բ. Յորդ. 367. (Մատթէի Մեկնութեան թարգմա-

նիչն կ'ըսէ լով. «Յաղաչել քահանայիցն զի տապանակ կտակարանացն ընդ նմա չըջիցի, շառնոյր յանձն (Քառիթ)». Ա. գ. Յորդ. 41.—«Քանզի խաղաղութիւն է խորհուրդն այն, եւ շառնու յանձն ումեք ընչլուք պատրի». Բ. իե. Յորդ. 718: Այսպէս եւ ի Պործս Առաք. Էջ. 26. «Եւսձ կել ի քէն իմիր ի սոցանէ՛ շառնում՝ յանձն»: Այլուր. «Չանսամ՝ շառնում՝ յանձն, զի ոչ եթէ բանն Աստուծոյ կապեալ կայցէ». Ք Տիմ. Գ. Յորդ. 269.— «Եթէ դարձեալ ի նմին կայցէք, շառնում՝ յանձն, չընդունիմ՝ շառնում՝ կոխի զսեմս զայս: . . . Եւ թէ այլ ազգ ինչ որ գործիցէ, շառնում՝ յանձն: . . . Որ կամի տրանջիլ՝ տրտնջեսցէ. շառնում՝ յանձն, շանսամ ումեք». Կողոս. Է. Յորդ. 605: Իսկ այլուր ի հաստատականն. «Յորժամ զաստուածսն իրեանց պոռնիկս անուանիցեն (հեթանոսք), շասեն թէ առասպելք են, այլ հասանին եւ յանձն առնուն». Եփես. ԺԲ. 804:

191

ԱԳԱԹ. «Որոյ առաջնոյն (յորդուցն Գրիգորի) անուն ճանաչի Վրթանէս, որ յաշխարհակեաց կեանս էր». 639: Ըստ այսմ եւ այլուր. «Զի զու ինքնին, Տէր, վկայես ինձ, զի վարուց երկրակեաց կենացս՝ ես ինչ ոչ ցանկացայ ի մանկութենէ իմմէ». 153.—«Որպէս եւ զենովք տեսանեմք յես վարուց երկրակեաց կենաց, . . . վերացուցեալ զնա կենդանւոյն յանմահութեան վիճակն». 225.—«Բարեկեաց շատակեաց կենաւր զձեզ յերկրի վայելեցուցէ». 181:

Քի՛ Զ. «Մա (եկրսէս) լիալ էր ամուսնուոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս մանկութեան». Գ. գ. 68: Այլուր. «Ոչ լու համարեցաւ (Յուսիկ) զանցաւորս, այլ զվերինն. երկնակեաց կենացն ցանկացեալ հայէր». Գ. և. 11:

ՊՈՐ. «Տեղեկացեալ եւ հմուտ եղեալ (Մաշտոց) աշխարհակեաց (տպ. աշխարհակաց) կարգաց». 6:

ՄԿԲ. (նովին ոճով.) «Յանապատ ելանէր (Յուդա Մակարէ), զազանակեաց կեանս ի լերինս անցուցանէր». Բ. և. 27.—«Եւ զայն եւս սակաւ՝ որ ի մեղ զթովնուածեցան՝ խտանն եւ անարգեն, եւ անկեաց կեանս շտապ տազնապաւ ի վերայ հասուցանին». Գ. գ. 15:



— ԳԻՏ. Կայ մի անգամ յԱռաջին Դասի, ոչ բողոքովին նման. «ձանաչել միանգամայն՝ թէ՛ սր են կեանք երկայնակեացք». Բարուք, Գ. 14. Իսկ Ոսկերիքսնի Մատթէի Մեկնութեան թարգմանիչն կ'ըսէ. «Ոչ կարեն ամաչեցուցանել (զպոռնիկն) իւր առաջին խառնակեցիկ կեանքն». Ա. դ. 34.— «Իսկ դժուարինսն ասելով, զխառնակեցիկ կեանսն (մաքսաւորաց եւ պոռնկաց) առակէ. Ժ. 144: նոյնպէս եւ յԵւ. Ժմ. 11. «Եւ ի մտանել արեգականն՝ Ովանն զազանի միւսանգամ անդրէն ի ծով մխել, . . . եւ այնպէս երկկեցիկ իմն կեանս կեայ. (տպ. երկեկից. «զուցէ՛ երկակեաց, երկկեցիկ». Թոռն. Հատ. Ընթերց. 334, ծան. 24:) Կայ եւ յԵւ. Եկեղ. Ա. ր. 12, փոխանակ Անկեաց կեանք ըստ Մկր. «Ըստ աւրինակի զազանաց՝ զկեանսն չկեանս ընտրեցին իւրեանց»:

192

ԱԳԱԹ. «Վաղվազակի լիութնով եւ անզբաղապէս արձակէք երիտ աւագս փառաւորս պատուականս . . . զի զերկուս որդիսն Գրիգորի վաղ առ նա հասուցեն». 640—641:

ԲԻԻԶ. «Ապա առաքեաց կայսրն առ նա մագնսորիանոսս, զի երթիցեն լիութնով եւ անզբաղապէս կայրն առ նա ածցեն». Գ. Ժ. 101:

ԿՈՐ. «Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ զորժակցաւք իջեալ ի թիկունս զիսպացն պատահելոց». 23:

193

ԱԳԱԹ. «Իսկ նօքա եկին հասին յերկիրն Հայոց, եւ յանդիման ունէին զածեալսն զերկոսին զորդիսն Գրիգորի առաջի թազաւորին». 641—642:

ԲԻԻԶ. «Ունէին եւ զանթիւ կարասի զանձուցն առաջի թազաւորին». Գ. Ժա. 104.— «Եւ զԶուրիթ երէց Արտաշատ քաղաքի ունէին կապանաւք առաջի թազաւորին Պարսից Շապհոյ». Ժդ. 174.— «Տային (կայսերն) զհրովարտակն, եւ ունէին զպատարագսն բերեալս (տպ. բերեալ) առաջի». Գ. իա. 54.— «Տային զհրովարտակն արքային Արշակայ նմա (հայրապետին Գեարու), եւ ունէին առաջի նորա զպատարագս բերեալս». Գ.

դ. 72.—«Եւ զայլ ամենայն զերութիւնն Հայոց եւ զգանձան կալանն առաջի թագաւորին (Պարսից)», ծե. 173.—«Այդմ ես լինիմ երաշխաւոր . . . զի զմանուկն ողջ անարատ առաջի քո կալայց». Կ. 81:

ՄԳԲ. «Ըծին կալան զպատանդոսն առաջի նորա, եւ ետ զնոսս ցընտանիս իւրեանց». Ե. ժ. 9.—«Եկն ամ կալաւ զԳեմեար առաջի Արշակայ. եւ հրամայեաց կապել զնա ի կապանս սասիկանս», ժդ. 3:

## 194

ԱԳԵԹ. «Գումարեաց (Կոստանդիանոս) զբազմութիւն զաւրաց առ ափն Ովկիանոս անագին ծովուն», 646:

ԲԻԻԶ. «Ապա ետ հրաման ընկենույ զնա (զներսէս) ի կղզի (սպ. ի կղզին) մի մեծ Ովկիանոս անագին ծովու». Գ. դ. 90—91:

—ԳԻՏ. Միւս Դասքն ունին լոկ Անագին ծով. «Անագին համատարած ծփեալ ծովն ունէր զտարի մի ողջոյն զաշխարհ (առ Նոյի)». Ոսկ. Մատթ. Ե. ժդ. 202.—«Վասն սկար թռչնոյն՝ մեծ եւ անագին ծովն անու հրաման զաղարիլ (սպ. զաղարիլ) ի խոսովութենէ ի մէջ ձմերան ժամանակի». Բրս. Վեց. Ը. 170: Կայ եւ Ովկիանոս մեծ յԵւս. Եկեղ. է. ի. 562:

## 195

ԱԳԵԹ. «Ապա իրրեւ լուա զայս ամենայն մեծ արքայն Հայոց (Տրդատ), խորհուրդ անոյր վասն ճանապարհացն այնոցիկ». 650.—«Լուա ապա եւ մեծ թագաւորն Տրդատ, եթէ Գրիգոր եկեալ հասեալ է յերկիրն Հայոց». 611.—«Յայնժամ մեծ արքայն Տրդատ եւ սուրբ կաթողիկոսն Գրիգորիոս հանդերձեցին եւ արձակեցին զՌոստակէս». 656.—«Արդ՝ հասեալ առ իս հրաման (սպ. հրամանի. տես ի Կոր.—Ազատթ. թիւ 151) ի մեծ արքայէն Տրդատայ». Յսջբ. 20:

ԲԻԻԶ. «Եւ կամ սրպէս յանդիմանէր (ներսէս) զմեծ թագաւորն Հայոց զԱրշակ», Խոստ. Գ զպր. զլ. ժդ. 60.—«Եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ եւ ընդ մեծ թագաւորն Հայոց», Գ. Կ. 87.—«Չայս ամենայն բազմութիւն Հրէից . . . ամեալ էր յերկրէն Պաղեստինացոյ մեծի թագաւորին

Հայոց Տիգրանայ . . . , եւ էած մեծ արքայն Տիգրան զամն-  
նայն զՏրէութիւնն զայն» . ձե. 173. — «Յընթրիս հրախրեալ կո-  
չեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ» . Ե. լր. 232: Տես եւ  
Մեծ թագաւորն Խոօրով. 20. Թագաւորն մեծ Արշակ. 103,  
105. Մեծ թագաւորն Պապ. 198—199, եւ այլն: Ըստ այսմ.  
Մեծ թագաւորն (Մաղքթաց). Գ. է. 17. Մեծ թագաւորն  
Քուշանաց (տպ. Քուշանայ). Ե. լէ. 293. բայց ոչ ուրեք կ'ըսէ  
մեծ թագաւորն Պարսից, այլ լսկ թագաւորն կամ արքայն  
Պարսից:

Տես աստէն եւ «Մեծ թագաւորն Յունաց» թիւ 70:

## 196

ԱԳԱԹ. «Աննոյր քնդ իւր (Տրդատ) . . . զառաջին սահմա-  
նակալն ի նոշիրական (տպ. ի նոր Չիրական) կողմանէն, եւ եր-  
կորդ սահմանակալն՝ յԱսորիստանեայց կողմանէն» . 650:

ԲԻԻԶ. «Յաղազտ Գղակայ (տպ. Դղակայ) մարդպետի՝ զոր  
կացուցին սահմանակալ» . Ե. գ. վերնագիր, 203, առա ասէ  
սահմանաւար:

## 197

ԱԳԱԹ. «Աննոյր քնդ իւր (Տրդատ) . . . զմեծ իշխանն Անգեղ  
տան, եւ զթագադիրն Ասպեան, եւ զՍպարապետն մեծ» . 650.  
«Չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեանն Ասպետութեան.  
հինգերորդ՝ իշխանն Սպարապետութեան» . 596—597:

ԲԻԻԶ. «Անէք (Մանուէլ) հարսանիս եւ եղբար նորին Վա-  
ղարշակայ, եւ տայր նմա զղուտար Ասպետին Բաղրատունոյ ի  
Սպեր գաւառէ, որ թագադիրքն (տպ. թագաւորքն. տես աստէն  
թիւ 165) թագակապն լեալ էին ի բնմէ ազգին թագաւորու-  
թեանն Արշակունոց (տպ. արշակունոյ)» . Ե. խղ. 256. — «Չչայր  
մեծ իշխանն Մարդպետութեանն, եւ զԲագարատ մեծ իշխանն  
Ասպետութեանն» . Գ. գ. 71. (տպ. ասպարապետութեանն.  
Ինճիճ. Հնախ. Ն. Բ. 98, սպարապետութեան, իսկ Քարազա-  
շեան, Բնն. Պոմճ. Հայոց, 173, ասպետութեանն):

— ԳԻՏ. Սիալ է յեւս. Եկեղ. է. Ժա. 547. «Աեալ կա-  
պիալս տանէին զմեզ հարիւր ասպետքն» . պիտի հարիւրա-

պետրն:—Իմ կարծեօք՝ Ասպետ նոյնանշանն է Թագակաղ եւ Թագաղիբ բառերու, ինչպէս յայտ է ի վերոյնդեակ վկայութեանցդ, եւ ի Մ. Խորենացոյ. (տես աստէն թիւ 165, ԳԻՏ.). զօրաւոր փաստ մի է նա եւ յաջորդդ ի նմին Խորենացոյ. «Ինձ Ասպետիս պարս է գրեղ պսակել, ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց». Գ. լէ. 479: Այլք այլպէս կը մեկնեն զայս բառ. Վիստոնեան եղբարք յիրեանց լատիներէն թարգմանութեան Խորենացոյ Պատմութեան (Բ. է. 167. ը. 177. իդ. 212. Գ. դ. 407. թ. 414. լէ. 479. խա. 487. խգ. 492)՝ Eques կը թարգմանեն զԱսպետ, եւ զԱսպետութիւն (Բ. ժդ. 195)՝ Equestris dignitas. այլուր (Բ. ձգ. 348. ձե. 357)՝ Imperator, որ է Հրամանատար. Սէն—Մարտէն (ի ծանօթութիւնս Lebeauի, չ. Ե. 505, եւ այլն) եւ Ինճիճեան (Հնախ. չ. Բ. 67), զԱսպետ նոյն կը դնեն ընդ զդ. Chevalier՝ եւ իա. Cavaliere. այսպէս եւ բազումք յարդեաց: Այլուր Ինճիճեան (Հնախ. չ. Բ. 98) կ'ըսէ թէ Բագարատ «Ասպետ անուանեցաւ վասն թագ կապելոյն ի պոլս արքայի»: Չամչեան (Պտմ. Հայոց, չ. Ա. 212) կը գրէ. «Ասպետ, այսինքն ազատանձն եւ առանձին սիրելի թագաւորի»: Բաւական խառնաշփոթ է նոր Հայկազեանի տուած մեկնութիւնն, ինչպէս եւ Ջալսֆախեանի՝ յիւր Հայ.—Խաղ. Բառագիրս. զորս անկորդ համարելով ի մէջ բերել՝ յիշեմ միայն զգրածն Սեբիոսի, 12—13. «Ձսա (գեագարատ) արար Արշակ արքայ Ասպետ Հայաստանն երկրին, որ էր իշխան եւ հրամանատար ամենայն թագաւորութեանն հրամանաց (=Imperator Վիստոնեանց), գլուխ եւ հայր արքայի, եւ եղբայր: Տես անդ, 8, եւ Ասպետ, որդի Բիւրատայ, որդւոյ Բագարատայ (տպ. Բիւրամ, Բագարամ):

198

ԱԳԱԹ. «Ձոր իբրև լուա աստուածակարդ թագաւորն պատուակալ աթոռոցն Կոստանդիանոս». 651. (կարկատեալ ի Վարուցն Մաշտոցի, 17:)

ԲԻԻԶ. «Ձոր իբրև լուա թագաւորն Արշակ, . . . զար-

1. Միջին դարու Հայ մատենագիրք Զիւտոր եւ Զիւտորութիւն ըսած են զգ. Chevalier եւ Chevalerie բառից նշանակութեամբ:



մացեալ լինէր». Գ. ժհ. 121.—«Չոր իբրեւ լուաւ կայսրն զիրան զայնսոսիկ». Գ. խա. 54.—«Չոր իբրեւ լուան բազմութիւնքն, . . . թալացեալ էին (լինէին?) ի ծաղուէ». Գ. գ. 69: Այլուր. Չոր իբրեւ լուեալ. տես ի Կոր. = Ազաթ. թիւ 54:

199

ԱԳԱԹ. «Եւ բազում վայելուչ մեծարանաւք պատիւ արարեալ նմա (Գրիգորի), իբրեւ Խոստովանողի Քրիստոսի, ըստ արժանաւորութեան նորա». 653:

ԲԻԻԶ. «Ապա զարաւարքն (տպ. զօրավարն) Յունաց հաց մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ թագաւորն հայոց զՊտալ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա». Ե. լր. 232:

= ԳԻՏ. Կայ յերրորդ Դասի այլով դասաւորութեամբ. «Որում ոչն բաւեմք եւ լինիմք բաւական տալ ըստ նորա արժանաւորութեանն զփասաւորութիւնն». Բրս. Վեց. 2. 108:

200

ԱԳԱԹ. ա. «Նա եւ զտուեալ զոսկի սպասս կայսերն ի նոյն հանգիստ սրբոցն դնլին». 655—656: Եւ փոքր ինչ տարբերութեամբ. «Պատմէր զամենայն արարեալսն Աստուծոյ զսրանչելիսն». 593. (փոխ. ըստ վերնոյն՝ զամենայն արարեալ զսրանչելիսն Աստուծոյ.)—«Իօկ նա եկաց պատմեաց առաջի կայսերն զամենայն արարեալսն Աստուծոյ առ նա զբարեբարութիւնսն». 652:

Ը. «Ինչոյս որախութեան կացուցանէին, իբրեւ լուէին զԱստուծոյ արարեալ զսրանչելիսն». 602.—«Մերկեաց զօճեր զգեցեալ զխաւարն հեթանոսութեան, եւ զճառագայթարձակ զգեցոյց զպատմութեանն». 616. (տպ. «Մերկեաց զօճ զգեցեալ զխաւարն». 2. «Մերկեաց ի ծէնջ զգեցեալ զխաւարն». իսկ 2ալ.—Այսրն. Քեր. 437, Ի. «Մերկեաց զօճեր զգեցեալ խաւարն».)

ԲԻԻԶ. ա. «Իօկ զարաւարն սպարապետն Վասակ՝ վազ-վազակի զտուեալ հրամանս նորա կատարէր». Գ. ժա. 105:

Ը. «Անձինն իւրում կարի զգոյշ կայր (Ողոմպին), մանաւանդ ի կերակրոց եւ յըմպեկաց. բայց զիւրոց նաժշտացն

կերակուրս արարեալ (արարեալ զկերակուրս?), եւ կամ զնոցին պարգեալ զգինի ճաշակէր». Գ. ԺԵ. 123, Ըստ այսմ եւ յուղականն. «Եւ առն[ն] Աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվազակի կատարեցաւ». Գ. ԺԳ. 115:

— ԳԻՏ. Ի վկայութիւնսդ ընդ ա նշանազրով՝ սովորականն է կրաւորական անցեալ եւ բացառական խնդիր սեռի, զոսկի սպասս զտուեալս ի կայսերէն (կամ յարարեալականս զորս ետ կայսրն). զհրամանսն զտուեալս ի նմանէ, ինչպէս կ'ըսէ այլուր Քիւզ. «Երբեւ լուա . . . եթէ կատարեաց ի պլուս հնան զայս ամենայն ի նմանէ զտուեալ հրամանն». Գ. Խա. 57. մինչդեռ զտուեալ զոսկի սպասս կայսերն եւ զտուեալ հրամանս նորա ըսելով՝ բայն ներպործական անցեալ դարձած է ընդ սեռական անուան բայի, գրեթէ մեր աշխարհարարին սճով, կայսեր տուած ոսկի սպասները, անոր տուած հրամանները: Իսկ ի վկայութիւնսդ ընդ ք նշանազրով՝ փոխանակ նոյնպէս կրաւորական անցեալ եւ բացառական խնդիր սեռի դնելու եւ ըսելու զսքանչելիսն արարեալս յԱստուծոյ, զգինին պարգեալ ի նոցանէ, ոչ միայն ներպործական անցեալ եւ սեռական անուն բայի դրուած է, այլ եւ անուն բային՝ անցելոյն նախագաս եղած, զԱստուծոյ արարեալ զսքանչելիսն, զնոցին պարգեալ զգինի, բոլորովն նման մեր աշխարհարարին, Աստուծոյ ըրած հրաշքները, անոնց զտուած գինին. (տես Չալ.—Այսրն. Քեր. 437—438, Ի). բայց յերկրորդ վկ. Ազաթմանգեղի՝ սովորականն է յարարեալականս ըսել «զխաւարն զոր զգեցեալ էիք», եւ ոչ թէ զգեցեալ ի ձէնջ: Ա.ս երկու ձեւերս կը գտնուին եւ ի դիրս միւս Դասուց. ա. «Գպիր սմն՝ Արդամոնս անուն՝ այր կորովի՝ (ասեն) զարկեալ ատասպելան Սողոմոնի լուծաներ». Ես. Ժմ. 86. (աշխարհարար՝ Սողոմոնի ստաջարկած առեղծուածները. փոխանակ՝ զատասպելան արկեալս ի Սողոմոնէ, կամ զորս էարկ Սողոմոն: ձղիւ այսպէս եւ ի ՅՃԻ. «Զարկեալ սահմանն Աստուծոյ՝ որպէս կամիմք շրջեմք ի բարի եւ ի չար». է. 64. փոխ. զսահմանն արկեալ կամ եղեալ յԱստուծոյ.) ք. «Զի զԱստուծոյ տրուեալ զկերակուրսն ոչ իշխիցէ խտան համարի». Եզնիկ, 287. — «Քանդի եւ չէ սակաւ ուղղութիւն՝ զԱստուծոյ պարգեւեալ

որդիան միասնեամբ Աստուծոյ նուիրիչ. «Ոսկ. Ա Տիմ. Թ. Յորդ. 75.—«Զմարդկան նաստատեալ կտակ՝ ոչ որ կարէ անարդել». Գաղատ. Գ. 15: Ըստ այսմ դարձեալ յԱռաջին Գաթի. «Ապա եթէ բռնագոյն քան զնա էք հիւզն, զի ետ ի ձեռս զիւր պատրեալան նմա շարչարել». Եղնիկ, 258.—«Նանցուք զնա յաշաց իւրոցն խաբեցելոց». անդ, 241.—«Ոմն եղիպտացի (սուս) մարգարէ՝ իբրեւ երիտ բիւրս յիւր պատրեւոցն զուսարեալ՝ ի մեծամեծ իրս մտարեւելք». Եւս. Քր. 152.—«Զինչ ասիցեն առ այս Պաւղոսի Սամոստացոյ խաբեալքն». Ոսկ. Կողոս. Գ. 554. փոխ. զպատրեալան յիւրմէ, խաբեցելոցն յիւրմէ կամ ի նմանէ, ի պատրեւոցն յիւրմէ, խաբեալքն ի Պաւղոսէ Սամոստացոյ, ինչպէս կ'ըսուի այլուր. «Զի կարասցեն խաբել, եւ այնուհետեւ զխաբեալան ի նոցանէ՝ ուր եւ կամ է իւրեանց յածեցուցանեն». Աթ. Անտ. 36. ըստ եզնքիայ եւ ըստ թարգմանչացն եւսերեայ եւ Ոսկեբերանի՝ զիւրեանց խաբեալքն:

201

ԱԳԱԹ. Եւ ի մեծն Գրիգորիսս էւստ շրջել ընդ աշակերտեալան յառաջագոյն, հաստատէր զնոսս ի ճշմարիտ քարոզութիւնն». 656. (իմա՝ սկսաւ շրջիլ տեսանել զաշակերտեալան իւր, եւ ոչ թէ՛ սկսաւ շրջիլ հանդերձ աշակերտելովքն: Բիւզանդ կ'ըսէ. «Ելիսոյ շրջէր (Ներսէս) ընդ գաւառս գաւառս աշակերտութեանն». Գ. Ժգ. 112:)

ԲԻԻԶ. «Եսկ նա (Թադ) առ շրջել ընդ աշխարհն». Գ. Ժբ. 108:

202

ԱԳԱԹ. «Մեծ կայսրն Կոստանդիանոս . . . զանուն յերկրի թողոյր, եւ զարդարութիւն յերկինս հաստատէր». 656—657 (ըստ 2): Եյլուր. «Զանուն եւ զաւգուս պողոց իւրեանց քաջութեան յաշխարհի թողին». Յոջբ. 15.—«Անձանց անուն մեհնաշէն կասիլ, առ իւրեանց որդիս թողուլ». 429:

ԲԻԻԶ. «Անուն քաջութեան յերկրի թողուր (տպ. թողցուք), եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք». Ե. խդ. 256. (համեմատել ընդ ՅՃԻ. Վաստի անուն քաջութեան եւ

պարծանաց յերկրի թողուլ, եւ յերկինս ամբարէ զյախտե-  
նականն»։ 2. 52—53:) Տես «Անուն քաջութեան» եւ ի Բիւզ. =  
Մկր. թիւք 31, 105:

==ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի. «Եթէ կեցցէ, անուն թողու-  
ցու քան թէ հաղար»։ Սիրար, ԼԹ. 15:

Զայլ նմանութիւնս Ազաթանգեղի եւ Բիւզանդայ՝ տես ի  
Կոր. = Ազաթ. թիւք 1, Հայաստան աշխարհ. 5, Պատուհասին եւ  
Թշուառութեանն հասելոյ. 6, Առանց յապաղանաց եւ Առանց յա-  
պաղութեան. 19, Սոյն արիւնակ, նոյն արիւնակ. 34, նիզակա-  
կից. 36, Բարեաց գործոց նախանձաւոր լինիմ. 40, Հիլլէն. 41,  
Դուռն արքայի. 42, Թագաւոր Հայոց Մեծաց, եւ այլն. 48, Կա-  
թոլիկոս. 49, Որոյ եւ Միռուն անուն ճանաչէք. 54, Իբրև  
զգացեալ եւ Իբրև լուեալ (փոխ. զգաց, լուան). 56, Կզերիկոս.  
58, Գումարեմ. 59, Խօտամբերութիւն. 60, Զասացեալան մար-  
դարէին եւ Զասացեալան աշքայի. 61, Փախուցեալ եւ Երեւեալ  
(փոխ. փախուցանէին, երեւէր). 63, Զանց առնեմ զբազում ա-  
թեպանաւք կամ զբազում բերդաւք. 64, Կողմանք Այրարտեան  
գաւառին. 66, Նպատական լեռնն. 71, Աւագանի, Կանանի. 75,  
Աստուածագործ. 79, Յառաջակարգ եւ Յառաջակարգութիւն. 82,  
Քահանայապետ (քրիստոնէից). 84, Առաքելականն (այս ինքն  
Թուղթ եւ Աթոռ Առաքելոյ). 85, Հայրարարոյ. 86, Փայթ ի վի-  
րայ ունիմ. 87, Տեսուչ եպիսկոպոս. 93, Կենաց ճանապարհ. 100,  
Փամպիր կողմանք. 105, Վերակացու թողում. 106, Որոյ անուն.  
114, Դամ երեւել կամ երեւեալ. 115, Զբերեալ պատասխանին  
եւ Զբերեալ պարգեացն զնորհս. 117, Աւտութիւնընկալու եւ  
Աւրհնութիւնընկալու, Ամուսնութիւնընկալ. 119, Միանձնական  
լեռնական եւ Միանձունք լեռնականք. 131, Զեռասուն. 133,  
Զաւր առնին խմբեմ. 134, Հրաժարեմ (=Մեռանիմ). 138, Համ-  
բարձեալ զբազուկան հանապազատարածս յերկինս. տես անդ ի  
ԴԻՏ. եւ Հանապազակիր, Մշտակիր. 140, Հրամանակատար եւ  
Պատուիրանակատար. 145, Կենդանարար մարմին եւ արիւն Քրիս-  
տոսի: Ի Կոր. = Բիւզ. թիւք 7, Յանկալի եղեալ. 17, Յաւանն եւ  
Յեկեղեցին դառնային. 19, Արքայազունդ եւ Ազատազունդ բա-  
նակ. 22, Յանդիման լինիմ թագաւորին. 38, Որոյ անուն զըլ-



խառնորին. 43, Սաղմոսիւք եւ արհնութեամբ, կանթեղաւք վառելովք: Ի Գոր.—Մկր. թիւ 5, Ընդակերք զդաստացեալք եւ Զդաստացեալք ընդտրուաք: ՅԱզաթ.—Մկր. թիւք 9, Զաւր բազում կուտեմ. 10, Գումարտակ. 19, Որ ընդ իւրով ձեռամբ էր կամ Լին: Ի Բիւզ.—Մկր. թիւք 7, Զանձինս փոխանակ աւլ ընդ ճշմարտութեանն Տեառն կամ փոխանակել ընդ Աստուծոյ ճշմարտութեանն. 12, Վահագն. 19, Որ ընդ իւրն էին. 40, Զաւրս եւ Գունդս բովանդակեմ. 63, Ժամակալութիւն եւ Ժամակալ լինիմ. 65, Իբրև զգացեալ եւ Իբրև զայն զգայր. 117, Կապեալ ստիւք եւ կապեալ ձեռաւք եւ կապեալ պարանոցաւ, Ոսիւք եւ ձեռաւք եւ պարանոցաւ կապելով. 122, Դառնամ բազում աւարաւ:

Ը. ԱԳԱԹԱՆԴԵՂ ԵՒ ՄԱԿԱՐԱՅԵՑԵՒՔ

1

ԱԳԱԹ. «Վասն Հաւրամոյն քաջութեանն Տրդատայ, եւ որ ինչ զործ գործեաց յամս յաւուրս (տպ. յաւուրց) իւրոց ժամանակաց». Յոջր. 20.

ՄԿԲ. «Էւ կացոյց Ախսիա» թագաւոր զորդի իւր (Անտիոքայ Երեւելոյ) Անտիոքոս, եւ եղ անուն նմա Հաւրամոյն Անտիոքոս». Ա. դ. 17.—«Վասն Հաւրամոյն Անտիոքայ անաւրէն զաւակի՛ ցուցցուք համառատ». Բ. ժ. 10:

ԳԻՏ. Հաւրամոյն ի գիրս Մակարայեցոց եղեալ է ի տեղի յոյն բառին Eupator, որ է ծնեալ ի քաջանուն հաւրէ. նոյն է եւ Քաջահայր, անդ, Բ. ր. 22. «Վասն ընդ Երեւեալ Անտիոքայ (Antiochus Épiphane) կամ ընդ Քաջահայր որդի նորա ճակատամարտս». զոր թարգմանիչն Եսեբեայ, ժմ. 166, եւ Քր. 136, կը կոչէ ըստ յունին Եւպատովր: Ուրեմն եւ առ Ազաթանգեղի Հաւրամոյն է Քաջանուն հաւր որդի, եւ թերեւս ուղղելի է «Վասն Հաւրամոյն Տրդատայ քաջութեանն»: Յառաջին տպ. Ազաթ. 16, գրեալ էր հօրամոյցն. այսպէս ունի եւ նոր Հայկզ. ի հօրամոյն, որ եւ կը գրէ. «Յոյնպէս (այս ինքն) հօրամոյն) թուի վերծանելի եւ ի բանն Ազաթ. յոջր. «Վասն հօ-

րամոյցն քաջութեանն Տրդատայ». իբրու նման հօրն: 2գիտեմ  
թէ հաւրամոյց ունի աղերս ընդ հարանցամաց անստոյգ բա-  
ռի Վարուցն Մաշտոցի. (տես Կոր.—Ազաթ. թիւ 73, ծան.  
1.) իսկ հաւրամոյն թուի ի Մոյն (Ռսկ. երբ. ԻԸ. 558) բառէ,  
յորմէ եւ Բարեմոյն (Առակք, ժէ. 22), 2արամոյն (Եփր. Սամ.  
378), Տմոյն (Ռսկ. երբ. ԻԸ. 558), Մուռաւոր (Ռսկ. Կորոս. Ա.  
Յորդ. 530):

2

ԱԳԱԹ. «Սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց . . . ասպա-  
տակ ղնել ի կողմանս Պարսից». 30:

ՄԿԲ. «Սորա ասպատակ եղին ի կողմն մի». Բ. ժբ. 13.  
— «Անտի ասպատակ ղնէին ի քաղաք մի Սկիւթացւոց». անդ, 29:

Տես եւ «Ասպատակ սփռեմ» յԱզաթ.—Բիւզ. թիւ 19. «Աս-  
պատակ տամ» ի Բիւզ.—Մկր. թիւ 74:

3

ԱԳԱԹ. «Ուխտ եղեալ միանգամայն վրէժ խնդրել մեծաւ  
քինութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն, սպառսպուռ  
Հանայր զվրէժ խնդրել». 31:

ՄԿԲ. «Եւ խնդրեցին սպառսպուռ զվրէժ արեան եղ-  
բարն իւրեանց». Ա. թ. 42:

4

ԱԳԱԹ. «Մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն զաւրացն  
ապաստան եղեալ». 31:

ՄԿԲ. «Բայց ինքն մեծամեծս փքայր ի հպարտութիւն  
ամբարտաւանութեան իւրոյ». Բ. թ. 4:

5

ԱԳԱԹ. «Անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց . . .  
ի քաջ ազգաց եւ ի մարտիկ զաւրացն». 32:

ՄԿԲ. «Ի նմին տեղուջ տապաստ արկանէին իբրեւ երիտ  
բիրս այր պատերազմի ի մարտիկ զաւրաց անտի». Բ. ժբ. 23.

(տպ. «ի մարտիկ զօրէ (զաւրուէ?)» . այլ նոր Հայկզ. ի բառն Մարտիկ, «ի մարտիկ զօրէ (կամ զօրաց)»):

==ԳԻՏ. Բիւզանդ կ'ըսէ. «Խրախոյս բառնային աղաղակելով ամենայն զաւրբն պատերազմիկը Հայոց» . Ե. Կ. 201: Այլուր. «Հանգերձ ամենայն պատերազմող զաւրարն Այրայրատեան գնդաւն ելանէր անկանէր (Վասակ) ի վերայ բանակին» . Գ. ի. 131: Յետինս կը գտնուի եւ յայլ գիրս. «Հզար ես բանիւք եւ սրանչելի ես ի մէջ պատերազմող զաւրացս» . Յուգիթ, ԺԱ. 6: Նոյնպէս եւ Մ'արտիկ առանձինն՝ կայ յայլեւայլ թարգմանութիւնս միւս Դասուց:

6

ԱԳԱԹ. «Նշանակապ պալարակապ մետաքսիւքն, եւ ոսկւովք (տպ. ոսկովք) պսակաւք . . . զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր» . 34:

ՄԿԲ. «Զարդարեցին զկոնքսն . . . ոսկի պսակաւք եւ ոսկւովք տապակաւք» . Ա. դ. 57:

7

ԱԳԱԹ. «Իսկ զաւրացն՝ որ զիրեան էին՝ ետ պարգեւս, եւ արձակեաց յիրմէ» . 34:

ՄԿԲ. «Ետ պատուէր զաւրացն՝ որ զիրեան էին» . Բ. Ժր. 5: Այլուր. «Զաւրաժողով լինէր Մակարէ որ զիրեան էին արամբք իրրեւ վեց հազարաւ» . Բ. ը. 16.—«Եղիազարոս . . . հազար ինչ զծերս քանի մի որ զիրեան էին՝ հանգարտեցուցանէր» . Գ. դ. 1: Այլուր դարձեալ. «Ածէին զԿալիսթենէս փախըտեայ եւ որ զնովաւն էին» . Բ. ը. 33.—«Որ զնէմեան էին» . Բ. ա. 33, 36.—«Որ շուրջ զմնեան էին» . Բ. դ. 30:

Տես եւ «Հանգերձ զաւրաւքն՝ որ ընդ իւրն էին» ի Բիւզ. ==Մկր. Թիւ 19:

8

ԱԳԱԹ. «Իսկ ի գալուստ ամին միւսոյ՝ զաւր բազում կուտէր յոյժ (Խոսրով)» . 34:

ՄԿԲ. «Ի գալուստ ամին միւսոյ՝ զար Կատանէր (Լիւսիա)»։ Ա. դ. 28:

9

ԱԳԱԹ. «Զար բազում կուտէր յոյժ (Խոսրոյ)»։ 34:

ՄԿԲ. «Զարածողով լինէր (Անտիոքոս) . . . զարս կուտէր բազում յոյժ»։ Ա. դ. 27—28:

ԲԻԻԶ. «Դունդ կազմեաց, եւ զար բազում առ ինքն կուտեաց զարաւարն Հայոց Մանուէլ»։ Ե. լր. 247.— «Ապա զարածողով լինէր Արշակ արքայ Հայոց, եւ կուտէր առ ինքն զարս բազումն»։ Գ. լե. 144:

10

ԱԳԱԹ. «Զար բազում կուտէր յոյժ, գումարտակ առնէր, զնոյն զար կոչէր»։ 34—35.— «Ի միտ արկ թագաւորն գումարտակ առնել, անդրէն արշաւել ի կողմանս Պարսից»։ 38—39. (տպ. այլադդ. տես յԱզաթ.—Բիւզ. թիւ 19):

ՄԿԲ. «Գունդ գործէին, մարտի պատրաստէին»։ Բ. ժ. 15: Ըստ այսմ եւ այլուր. «Եւ ինքեանք շաքաթուն պատրաստէին»։ Բ. ք. 27: Այլուր նախզրիւ. Պատրաստիմ ի մարտ

1. Մ. Խորենացի՝ որ ի Պատմութեան իւրում զՀայոց Վահագն նոյն կը համարի ընդ Յունացն Հերակլեայ (Ը. լա. 128. Բ. ժբ. 186), ի թարգմանութեան Փիլոնի երբայցեոյ ձառին Յաղագս Տասն քանիցն, 237, զընտզրին Ազոլոն՝ կը թարգմանէ Վահագն. «Քանզի կոչեն ոմանք . . . Արեգագան՝ զՎահագն, եւ Լուսինն՝ զԱրտեմիս, եւ Արուսեակ՝ զԱստղիկ, եւ Փայլածող՝ զՀերմէս»:



պատերազմի. Ա. դ. 3—4. ժբ. 27 երկիցս. ժգ. 14. Բ. ա. 11. ժդ. 6:

— ԳԻՏ. Յայլ գիրս հանդիպած շեմ *Կոռոյ կամ Մարտի պատրաստիմ* (=աշխարհարար *Կոռուելու, Պատերազմի պատրաստուիլ*), *Շաքաթուն պատրաստիմ*. գոր այլուր Բիւզ. եւ Մկր. կ'ըսեն նախդրի՝ որ է սովորականն. *Պատրաստիմ ի պատերազմ*, ի մարտ պատերազմի. տես *Պատրաստիմ ի պատերազմ եւ Յուդիթ*, Ե. 1. *Պատրաստիմ ի մարտ պատերազմի*, Ոսկ. Մտթ. Ա. ժգ. 182. Ժե. Յորդ. 229: Բայց Բիւզանդայն *Պատրաստ կամ գործոյ տրական խնդրառութիւնն կը գտնուի եւ յԵւս. Ժմ. 176. «Վազմ եւ պատրաստ կային միւսանգամ նաւարկելոյ».* (որ այլուր ի նոյն գիրս կ'ըսուի ըստ սովորականին. «Նաւ գործել եւ ի ներքս մտանել . . . եւ ամենայն կազմածովք պատրաստ լինել ի նաւարկել» . 16. կամ *Պատրաստել միւսանգամ առ զարունն նաւարկել».* 179:) Ըստ այսմ դարձեալ. «Եւ էին կութք պատրաստ *հնձելոյ*». Ա Թագ. ԺԳ. 21.—*«Պատրաստք լիցուք չունելոյ աստի».* Ոսկ. Մտթ. Ա. Ի. Յորդ. 333. փոխանակ ի *հնձել*, ի *չունել*:

14

ԲԻԻՁ. «Յանդիման եղեւ թագաւորին, . . . եւ մեծապէս մեծարեցաւ ի նմանէ». Գ. Ի. 51.—*«Գայր յանդիման լինէր թագաւորին. [եւ] մեծապէս մեծարեցաւ ի նմանէն».* Ե. դ. 204.—*«Վամ զհնրդ մեծարեցաւ ի նմանէն մեծապէս».* Գ. ժգ. վերնագիր, 124. Այլուր. «Եւ մեծարեցաւ ի նմանէ ըազում պատուով եւ մեծաւ փառաւք». անդ, 124: Եւ ներդործարար. «Եւ պատուէր զՍրշակ արքայ Հայոց մեծապէս, եւ զամենայն մեծամեծս Հայոց». Գ. Ի. 132.—*«Եւ յորժամ ետես զնոսա թագաւորն Պարսից, . . . մեծապէս մեծարանաւր պատուեաց զնոսա».* Ե. լր. 245.—*«Մեծապայծառ փառաւք մեծաւ շքով մեծարեաց զնոսա».* Գ. Ե. 80:

ՄԿԲ. «Եկն յերուսողէմ, եւ անդ մեծապէս մեծարեցաւ ի Յատնէ». Բ. դ. 22:

Տես եւ «Մեծապատիւ մեծարիմ» ի Կոր. = Ազատ. թիւ 62, որ նշանակած եմ զնոյնիմաստ ասացուածս միւս Դասուց.

15

ԲԻԻԶ. «Եւ առնէր սպաս զգան կատարել»։ Գ. ի. 52:

ՄԿԲ. «Սպաս արար մարթանաւք զհրամանն կատարել»։

Բ. ժդ. 29:

—ԴԻՏ. Սպաս առնեմ առանձինն՝ կայ ի Բիւզ. եւ Ե. դ.

198. եւ ի Մկր. Գ. և. 8: Կայ եւ յնսկ. Մտթ. Գ. ժդ. 56, եւ

ի ձառս Եւագրի:

16

ԲԻԻԶ. «Աղա խաւսել սկսան այր ընդ ընկերի, եւ ա-

սեն . . . քան սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն

թշնամիքն»։ Գ. իա. 54:

ՄԿԲ. «Սկսան խաւսել այր ընդ ընկերի, եւ ասեն . . .

քան սակաւ ինչ ժամանակ անցեալ իցէ՝ զմեզ արագադոյն եւս

ստատակեսցեն քան զառաջինսն»։ Ա. ք. 40.—«Սկսան խաւսել

այր ընդ ընկերի, եւ ասեն»։ դ. 42:

—ԴԻՏ. Ըան սակաւ ժամանակք են, Ըան սակաւ

ինչ ժամանակ անցեալ իցէ, իմա՛ Յառաջ քան զանցանել

սակաւ ժամանակի, Մինչ չեւ սակաւ ժամանակ անցեալ իցէ. զդ.

Avant peu. Սովին նշանակութեամբ Ըան կը գտնուի եւ յեր-

կրորդ Գասի. «Ըան ոչ մտեալ են մարդիկ յատեան դատա-

տանի, բացէ ի բաց վճարին զդատատանն եւ պարտուորեն»։

Զգան, ՓԹ. 328. որ է՝ Յառաջ քան զմտանել մարդկան, Մինչ

չեւ մտեալ են մարդիկ:

17

ԲԻԻԶ. «Եւ կամ զիւրոյ մահու պարտ եղեալ՝ ստատակե-

ցաւ (չայր մարդպետն) ի Չաւասոյայ Արծրունեայ»։ Խոտ. Գ Գպր.

ժդ. 60. որ ի կարգին, 113, գրեալ է մահուն պարտ:

ՄԿԲ. «Մինչեւ ոմանց՝ զոր ի գործ կացուցեալ էր Սիմոն՝

մահու պարտ առնէր նոցա զսուրբն (առնել նոցա զսուրբս?)»։

Բ. դ. 3:

18

ԲԻԻԶ. «Ապա ելանէր Վասակ՝ սպարապետն Հայոց, հասանէր սատակէր զնա եւ զգաւրս նորա». Թոստ. Գ դպր. իթ. 62.— «Հասանէր սատակէր զնոսա զաւրափարն Հայոց Վասակ». Գ. լր. վերնադիր, 149. եւ խղ. վերնադիր, 154.— «Եւ նիզակակիցք զաւրափարին Հայոց . . . հասանէին հարկանէին սատակէին զգաւրսն (տպ. գորսն) Այնացն». Գ. է. 17.— «Հասանէին, զմեծ եւ զփոքր առ հասարակ սատակէին». Ե. գ. 198: Այլուր. «Հասանէր Վասակ, կոտորէր սպանանէր հարկանէր ի նոցանէն». Գ. իթ. 147:

ՄԿԲ. «Աւասիկ ժողովեալ են հեթանոսքն ամենայն՝ հասանել սատակել զյիշատակս մեր յերկրէ». Ա. ժգ. 6.— «Համարէր հասանել ի վերայ Յուդայանց, հասանել սատակել եւ նշան յաղթութեան կանդնել». Բ. ժե. 6:

19

ԲԻԻԶ. «Եւ նա (Սուրէն Պարսիկ) ի բուռն անկեալ Վասակայ . . . հանդերձ զաւրաքն՝ որ ընդ իւրն էին՝ ստտակեցաւ». Թոստ. Գ դպր. լր. 63: (տպ. սատակեցան. այլ ի կարգին, 151, «հանդերձ իւրովք զաւրաքն սատակեցաւ». տոյնպէս եւ Թոստ. Գ դպր. է. 2. «Սատակեցաւ նա զաւրաքն իւրովք հանդերձ». եւ Ե. լթ. վերնադիր, 248. «Սատակեցաւ ի Մանուելէ զաւրաք իւրովք հանդերձ».)— «Հասանէր թագաւորն Արշակ հանդերձ զաւրաքն՝ որ ընդ իւրն էին». Գ. իր. 139: Այլուր. «Ապա հասեալ Վասակ հանդերձ զնդաւն՝ որ ընդ իւրն էին, անկանէր ի վերայ բանակին թագաւորին Պարսից». Գ. խղ. 143.— «Քաւտէր թագաւորն Աղուանից ընդ այնոսիկ՝ որ ընդ իւրն էին». Ե. գ. 193: Եւ այլուր. «Ժարակեցան նա եւ որք ընդ նմայն էին . . . եւ արբին նա եւ որ ընդ նմայն էին». Գ. ժ. 22. տես որ ընդ նմայն կամ նմա էին եւ 24, 52, 104, 245: Իսկ ուր գրեալ է. «Հասանէր թագոս հանդերձ զաւրաք՝ որ ընդ իւրն էին». Գ. իր. 138, ուղիղ ընթերցուածն թուի՝ կամ ընդ իւրն, ինչպէս կ'ըսէ շորիցս Բիւզանդ, կամ զիւրեւ. տես «Որ զիւրեան էին» յԱզաթ.— Մկր. թիւ 7.

ՄԿԲ. «Եւ ել Գորգի ի քաղաքէ անտի զաւրաւք հանդերձ  
որ ընդ իւրն էին՝ ի մարտ պատերազմի»։ Ա. Ե. 59: Այլուր.  
«Մխիթարէր զայնոսիկ որ ընդ իւրն էին»։ Բ. ԺԵ. 8: Եւ այլ-  
ուր. «Եւ այնպէս գնդաւն որ ընդ նմա էին՝ խոտարուտ կե-  
րակուր կերակրեալ՝ անցուցանէին զժամանակն»։ Բ. Ե. 27.  
տես որ ընդ նմա կամ նմայն էին եւ Ա. ԺԲ. 50. Բ. ա. 7.  
բ. 6. Ժ. 1:

ԱԳԱԹ. «Հրաման ետ Գրիգոր զաւրականին եւ իշխանացն  
որ ընդ իւրն էին, զի ելցեն՝ մրճովք տապալեսցեն զչինուածս  
բազանցն»։ 608.—«Նախ զայնոսիկ յուսաւորեաց մկրտութեամբն՝  
որ ընդ իւրն էին մեծամեծ նախարարքն»։ 610.—«Հանդերձ  
ամենայն սպասաւորաւք Աւետարանին՝ որ ընդ իւրն էին»։ 613.  
(կարկատեալ ի Վարուցն Մաշտոցի, 14:) Այլուր. «Ար ի բա-  
ժակէն յայնմանէ եւ Կուսնելիէ, . . . եւ ետ բազմաց որ ընդ  
նմայն էին»։ 375:

(Եւթ. «Խրատ Պաւղոսի առ այնոսիկ որ ընդ նմայն էին  
(ի նաւարկութեանն)՝ վասն յուսոյն փրկութեան»։ Գլուխք ԳԺ.  
ԼԸ. 1049.)

—ԳԻՏ. Միւս Գասուց սովորականն է Որ ընդ նմայն  
էին. «ԱՆ պատեաց զնա, եւ զամենեսեան որ ընդ նմայն էին».  
Ղուկ. Ե. 9.—«Զիցէ ընթերցեալ ձեր զոր արարն Գաւիթ, յոր-  
ժամ քաղցեաւն ինքն եւ որ ընդ նմայն էին»։ անդ, Զ. 3.  
(եւ Մտթ. ԺԲ. 3, 4. Մրկ. Բ. 25, 26. Ոսկ. Մտթ. Բ. Ժդ. 584.)  
—«Եւ սա ընդ նոսա էր որ ընդ նմայն էին»։ անդ, ԻԲ, 56.  
—«Միթէ չկարէր Քրիստոս . . . կերակրել զանձն եւ որ ընդ  
նմայն էին»։ Ոսկ. Տիտ. Զ. 336.—«Զայս ասացեալ ցբհա-  
նայսն, յարուցեալ զնաց տեսանել զտեղիսն զայնոսիկ, յանձնեալ  
Յակովբայ եւ որք ընդ նմայն էին»։ Լարուր. 13.—«Ամենայն  
իսկ Իսրայէլ զիտէ զՀափ հար քոյ, եւ զՀափ քաջամարտիկ արանցն՝  
որ էին ընդ նմա»։ Եփր. Սամ. Զ. 401.—«Եկն քահանայա-  
պետն՝ եւ որ ընդ նմա, կոչեցին միարան զատեանն»։ Գործք  
Առաք. Ե. 21: Կայ մի անգամ յԱթ. Անտ. 78. «Յետ սակաւ ամ-  
սոց հիւանդացաւ (Անտոն), եւ կոչեաց զնոսա որք ընդ իւրն  
էին»։ եւ ի Պամ. Հար. Եզիպտ. 244. «Սկսաւ տակ առ այնո-  
սիկ՝ որ ընդ իւր եղբարքն էին»։ Իսկ Հանդերձ զաւրաւքն՝



որ ընդ իւրն էին յատուկ է Բիզանդայ եւ Մակաբայեցւոց, Տես եւ «Ջարացն՝ որ զիրեան էին» յԱզաթ. — Մկր. Թիւ 7:

20

ԲԻԻԶ. «Ժողովեցան ամենայն թարուցեալքն՝ փախուցեալք՝ կորուսեալք երկրին Հայոց»։ Դ. ա. 66: Այլուր. «Եւ զային ի մի վայր ժողովէին ամենայն ցրուեալք՝ փախուցեալք՝ թարուցեալք որ էին յերկրին Հայոց»։ Ե. ա. 186: Եւ այլուր. «Եւ ժողովեցան առ զաւրափարն Մանուէլ ամենայն ցրուեալք երկրին»։ Ե. խր. 250:

ՄԳԲ. «Փախչէին՝ թարչէին՝ կորնչէին ամենայն Հարախաւքն»։ Ե. Ժ. 64:

ԱԳԱԹ. «Եւ նոցա փախուցեալ թարուցեալ՝ ծառախիթ (տպ. ծառախիտ. տես Կոր. — Ազաթ. Թիւ 122) տերեւապատ լինէին»։ 215:

— ԴԻՏ. Կորնչիմ՝ ի Բիւզ. եւ ի Մկր. է Տրուիլ, Անհետանալ, Անյայտանալ<sup>1</sup>. զգ. Disparaitre. Իսկ փախուցեալ թարուցեալ կայ եւ ի վերնագրի ԾԶ Սաղմոսին. «Ի ժամանակի զի փախուցեալ թարուցեալ էր (Դաւիթ) յերեսաց Սաւուղայ՝ յայրի անդ»:

21

ԲԻԻԶ. «Նահատակք քաջանունք (Մամիկոնեանք), ըարենշանք (տպ. բարենշանս) ըարենհամբարք, . . . յաջողակք ի գործ պատերազմաց»։ Դ. ք. 67:

ՄԳԲ. «Հոարս ոմն անուն, . . . այր ընկերասէք, մարդասէք յոյժ, ըարենշան ըարենհամբար»։ Բ. Ժգ. 37:

— ԴԻՏ. Միայն Բարենշան կայ բազում ուրեք ի զիրս Երեցազունից. Եղնիկ, 156. Ոսկ. Մաթ. Բ. 529, 530, 600. Գ. 71. Նոյն, Փիլիպ. Է. Յորդ. 429:

1. Ըստ այսմ եւ Եղիշէ, Պատմ. Վարդան . Է. 102. «Եւ միայնակեացք որք էլեալ եւ կորուսեալ էին, հրամայէր զալ եւ ունել զիրաբանչիւր տեղիսն»:

22

ԲԻԻԶ. «Ապա յաղթեաց կալաւ այս ըան խորհրդի ամենեցուն առ հասարակ որ անդ էին». Գ. դ. 68:

ՄԿԲ. «Էրբու այս խորհուրդք յաղթեցան, . . . եղ ի մտի իւրում հասանել ինքն ի վերայ քաղաքաց որ շորջ զիւրեւ էին». Գ. ա. 4:

23

ԲԻԻԶ. «Մի անարժանս եւ աւելի տարապայմանս հարկաւք նեղել քան դշափն (դժառայս եւ զկրտսերս)». Գ. դ. 76:

ՄԿԲ. «Զաղզն ընտրեալ . . . թուարկէին ի ձեռն զաւրափարաց զաւառացն, զի արտաքոյ ընկուիթեան ի տար պայման հրամանին տարապարտուց մեռանել». Գ. դ. 4. (Թերեւս ուղղագոյն՝ «ի տարապայման հրամանէն». այլ 22 ունին «ի տալ պայման հրամանին». տես ի նոր Հայկզ. ի բառն Պայման, եւ Զրգ. Քեր. ե. 477, յ. 1162. իսկ «զի . . . մեռանել», տես «Զի ընկենուլ» յԱզաթ. = Բիւզ. Թիւ 60:)

Տես եւ «Անպայման» յԱզաթ. = Բիւզ. Թիւ 179:

24

IS

ԲԻԻԶ. «Զի երթիցեն՝ ի մէջ (տպ. երթիցէ. ի մէջ) կայսերն եւ ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան եւ իսղաղութեան նորոգեցեն». Գ. ե. 79:

ՄԿԲ. «Առաքել նորոգել միտանգամ զնոյն հաւանութիւն հարազատութեան, զի մի ատարասցուք մեք ի ձէնջ. զի բազում են այն ժամանակք որ անցին ի վերայ հին հաւանութեանցն՝ զոր դուքն առ մեզ արարէք». Ա. ժր. 10. — «Առաքեցաք առ Հոռմայեցիս զի նորոգեցեն զառաջին հաշտութիւն հաւանութեանն». անդ, 16. — «Հրաման ետ թաղաւորն հրովարտակս տալ, յայտ առնել թէ չէ հաճեալ ընդ դաշինս հաւանութեանն». Բ. ժղ. 27: Այլուր. «Երթալ նորոգել զուխտ հաշտութեան ընդ նոսա». Ա. ժր. 1. — «Նորոպել զհաշտութիւնն առաջին». անդ, 3: = ԴԻՏ. Հաւանութիւն է զգ. Traité, եւ Նորոգեմ՝ զհաւ-

անութիւն կամ զուխտն հաւանութեան՝ գղ. Renouveler l'alliance.

25

Բիւձ. շուրով քնական իշխանութեամբն վարէ ուղղէ եւ առաջնորդէ ամենայն արարածոց». Գ. Կ. 80:

ՄԿԲ. «Քարձրեալ ամենակալ Աստուած, որ զամենայն վարես եւ ուղղես ի գթութիւն ողորմութեանց քոց». Գ. Գ. 2:

26

Բիւձ. «Այլ վասն որդւոյն քոյ, եթէ դու ի ճշմարիտ հաւատս ուղղութեան եկեցես, . . . քարեմիտ ողջանդամ յարիցէ նա առաջի քո». Գ. Կ. 86:

ՄԿԲ. «Մի ակն ունիցիս ողջանդամ քարեմիտ ապրել յաստուածամարտ մատուցեալ». Բ. է. 19. (յոյնն կ'ըսէ լոկ *athóos* որ է Անպատիժ, գղ. Impuni. եւս՝ Ողջ ամբողջ, գղ. Sain et sauf.)

27

Բիւձ. «Ապա մեծապէս ի ցատումս քրդեալ լինէր թագաւորն». Գ. Կ. 87:

ՄԿԲ. «Ո՛ր սրտմտութիւն քրդեցաւ թագաւորն». Բ. ԺԳ. 27.— «Իբրեւ ի վերայ հասանէր անաւրէնն խորհրդոց նոցա, յայնչափ սրտմտութիւն քարկութեան քրդէր». Գ. Գ. 1.— «Ո՛ր սրտմտութիւն քարկութեան քրդէր թագաւորն». Գ. 10: Այլուր. «Իբրեւ ետես Մատաթի, ի նախանձ քարկութեան քրդեցաւ». Ա. Բ. 24:

[Ա Դաս]† «Համարեաջիր եթէ Աստուած մատ է, . . . եւ զինչ գործ եւ գործիցես, ոչ երբեք ի ծաղր յանդակիցիս, ոչ երբեք ի ցատումս քրդիցիս». Ոսկ. Փիլիպ. Ը. 434:

— ԴԻՏ. Բովանդակ Առաջին Դասուն գրուածոց մէջ չիք այլուր ի ցատումս քրդիմ: Թարգմանիչն Մեկնութեանց Թղղ-

1. Եղիշէ, Պտմ. վարդան. Գ. 42, ըսած է ներդործարար. «Զի թէ մարդոյ փրկեալ էր զձեզ ի ծառայութենէ, եւ դուք անձամբ զանձիս այլում ի ծառայութիւն արկանէիք, ի մեծ քարկութիւն քրդեիք զառաջին տէրն ձերս». այլուր գտած չեմ զայս:

Թոցն Պաւղոսի ըսած է յայլ տեղիս. *Ո՛ր ցասումն գրգռիմ. Փիլիպ. Ե. Յորդ. 397. Եփես. Ի. Յորդ. 892. Ո՛ր ցասման լինիմ. Եփես. Թ. 770. Ո՛ր բարկութիւն դրդիմ. անդ, ԻԲ. Յորդ. 923. Բորբորիմ բարկութեամբ. անդ, Ի. Յորդ. 892. Իսկ այլ Թարգմանիչք՝ Ո՛ր ցասումն զամ. Ոսկ. Մտթ. Ա. Ժդ. 249. Ո՛ր ցասումն դրդիմ. անդ, Բ. Ժը. 624. Իե. Յորդ. 720. Ո՛ր ցասումն զառածանիմ. անդ, Բ. Ե. Յորդ. 467. Շարժիմ ի ցասումն. Սեբեր. Բ. 12. Ո՛ր ցասման լինիմ. Եւս. Ժմ. 167. Եւ ի Սուրբ Գիրս՝ Բարկանամ սրտմտութեամբ. Ելք, Գ. 14. ԱԲ. 19, 22. Թիւք, ԺԱ. 1, 10. Բ Թագ. ԺԲ. 5. Սղ. ձԵ. 40. Սրտմտիմ բարկութեամբ. Գ Թագ. Ա. 17. Լնում բարկութեամբ. Դուկ. Գ. 28. Լի լինիմ սրտմտութեամբ, բարկութեամբ. Դան. Գ. 19. Գործք Առաք. ԺԹ. 28. Ժանրացասումն լինիմ. Թիւք, ԺԶ. 15. Գ Թագ. ԺԱ. 25. Թող զսովորականսն՝ լոկ Բարկանամ, Չայրանամ, Սրտմտիմ, Ցասնում: Բայց կարելի է թէ յսկեբերանի Մեկնութեանն Փիլիպեցոց ի ցասումն բրդիցիս գրագրին կամայական փոփոխութիւնն կամ կամայ սխալն ըլլայ, փոխանակ ի ցասումն դրդիցիս, ինչպէս ըսած է երկիցս Մատթէի Մեկնութեանն Թարգմանիչն, եւ նոյն իսկ Պաւղոսի Մեկնութեանց Թարգմանիչն՝ Ո՛ր բարկութիւն դրդիմ. այնչափ մօտ են ձայնիւ դրդիմ եւ բրդիմ՝ որ զաղափարողք շատ դիրաւ կարեն սխալել, ինչպէս ոմն յայտնապէս սխալած է այլուր. Եղիշէ, Պտմ. Վարդան. Գ. 50, կ'ըսէ (առեալ ի Մակարայեցոց). «Ի նախանձ բարկութեան բրդեցան». զոր ժէ դարու Չեռագիր մի կը գրէ դրդեցան. իսկ անդ, է. 99, (եւ տպ. Թէոդոսիայ, 1861, Ե. 199,) «Ի նախանձ բրդեցան բարկութեամբ», նոյն Չեռագիրն ոչ միայն ուղիղ կը գրէ բրդեցան, այլ եւ լաւագոյն ընթերցողածով՝ «Ի նախանձ բարկութեան բրդեցան»:—Համեմատէ Բրդիմ (ի ցսումն, ի սրտմտութիւն, ի նախանձ բարկութեան) ընդ պարսկականին Պիրտէն, որ է Տանել. եւ ոճով կ'ըսուի Փէրման պիրտէն (Հրաման տանել), որ է Հնազանդիմ.—Մամ պիրտէն (Անուն տանել, կրել), որ է Յորճորջիմ.—Րուզկեար պիրտէն (Ժամանակ տանել), այս ինքն Անցուցանեմ զժամանակ.—Րէշկ պիրտէն (Նախանձ տանել), որ է նախանձաւոր լինիմ=Ո՛ր նախանձ բարկութեան բրդիմ.*



Մկր. (իրբ Ի նախանձ տարեալ լինիմ?): տես Պիւրտէն ի Գէորդ Տէր Յովհաննէսեան, Քոզ. Պրս.—Հայ.:

28

Քի՛ԻԶ. «Ոչ երբեք ուրեք ի Տնոց ժամանակաց հետէ (եղեալ է հրեշտակաց կալեւկապ, թող թէ մահ)». Գ. Ե. 88.— «Քաղում զանձք մթերեալ մնացեալ կային (յՆնդեղ բերդի) ի նախնեացն ի Տնոց ժամանակաց հետէ». իդ. 142.— «Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի Տնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ ենք». Ե. լէ. 240:

ՄԿԲ. «Ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ, յայն՝ որ ի Տնոց ժամանակաց հետէ ունէին, արգելին զմեզ ի ներքս (ի տաճարն) մտանելոյ». Գ. դ. 11:

Տես «Ի նախնեացն հետէ» յԱզաթ.—Քիւզ. թիւ 113:

29

Քի՛ԻԶ. «Ջնոսա (զիշխանսն) բազում զանձիւք լցեալ արձակէր, կաշառակուրծս կաշառաքեկս (տպ. կաշառաւեկս) առնէր առ հասարակ». Գ. Ե. 90:

ՄԿԲ. «Իրբեւ զայն լսէր թաղաւորն, պատուհասակոծ առնէր զզպիրսն իրբեւ զկաշառաքեկս». Գ. դ. 15:

Տես «Կաշառակուրծ» ի Քիւզ.—Եւթ. թիւ 1:

—ԳԻՏ. Փոխանակ Կաշառակուրծ կաշառաքեկ առնեմ՝ Քիւզանդ կ'ըսէ այլուր Կաշառեմ. Գ. ի. 133: Իսկ Կիւր. Կոչ. Ժ. 173. «Որ յառաջ հալածիչն էր (Պաւղոս), արդ եկեալ ահաւասիկ աւետարանէ: Ընդէր. ընչի՛ւր որ արդեւք հաճեաց զմիտս նորանա՛ ոչ որ էր որ կարողն էր զնա այնպէս հաճել կաշառաւք»: Կայ եւ Հաւանեցուցանեմ արծաթով. Եփր. Համար. 244. Եւս. Եկեղ. Ե. ա. 343:

30

Քի՛ԻԶ. «Եւ այլքն եւթանասունքն որ ընդ նոսա, զորս ուստեք ուստեք ընդ նոսա ամացեալ ի նաւն՝ ի կղզին խաղացուցին: Եւ զնաց մեկնեցաւ նաւն՝ որ զնոսայն տանէր, եւ ըստ

հողմոյն յաջողութեան ի հնգեասան ար հասանէր ի հրամայեալ տեղին»։ Գ. դ. 91:

ՄԿԲ. «Իրրեւ այնպէս դամենեսին զնոսա ի նաւ անդր ամացեալ տանէին, եւ ընդ (ըստ?) հողմոյն յաջողել ըստ հրամանի թագաւորին ի տեղի հասուցանէին»։ Գ. դ. 91:

31

ՔԻԻԶ. «Զի զմեզ պիտանիս արասցէ (Աստուած), եւ զանունն քաջութեան ժառանգեցուցէ մեզ»։ Գ. դ. 93, Տես Անուն քաջութեան եւ աստէն թիւ 105, եւ յԱզաթ. — Քիւղ. թիւ 202:

ՄԿԲ. «Եղին ի մտի այնուհետեւ . . . պնդել ի պատերազմի, ժառանգել զանուն քաջութեան»։ Բ. ժե. 17: Այլուր. «Ստացարուք փառս աւագութեան, եւ ժառանգեցէք զանուն յաւանսից»։ Ա. ր. 51. — «Իրրեւ մեծ իմն անուն փառաց ժառանգել խորհէին»։ Գ. ր. 16:

— ԴԻՏ. Այլուր ի Մկր. Ա. և. 61. «Ոչ անսացին նորա Յուդայի եւ եղրարց նորա. խորհեցան՝ թէ մեք իրրեւ զնա առցուք անուն քաջութեան»։ Կայ այս յԵրկրորդ Դասի. «Ամենայն իսկ Խորայէլ գիտէ զչափ հարքոյ, եւ զչափ քաջամարտիկ արանցն որ էին ընդ նմա, զի ի բազում պատերազմունս առեալ է նոցա զանուն քաջութեան»։ Եփր. Սամ. 2. 401:

32

ՔԻԻԶ. «Ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուցեն զերանելին Բարսիլիոս, զի եկեսցէ նա»։ Գ. ր. 96. — «Եւ ասպա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, եւ ասեն»։ Ե. լգ. 234:

ՄԿԲ. «Հաստատեցաւ բանս այս ի խորհրդի անդ, քակել զսեղանն»։ Ա. դ. 45:

33

ՔԻԻԶ. «Ապա ամենայն որ խնդութեամբ ըերէին տային ի դուրս (զարծաթն եւ զոսկին) վասն անուանն Քրիստոսի»։ Գ. թ. 99:

ՄԿԲ. «Ահիւ եւ զողութեամբ ամենեքին որ զինչ առ ումք

կայր՝ ընդէին տային ի դուրս վասն փրկութեան մեծին Աստուծոյ. Գ. է. 15:

==ԳԻՏ. Ի դուրս տամ՝ որ կ'ըսուի նա եւ ի ըաց տամ՝ կը գանուի առանձինն յայլեայլ զիրս: Ես. ԽԲ. 22. Ոսկ. Ես. ԽԲ. 289. Եւս. Եկեղ. Գ. Խգ. 190. Զգան, Բ. 37. Կիւր. Կոչ. ԺԳ. 244. Եւս եւ ի Մկր. Ա. Ժե. 30: Այլ է եւ ի դուրս տամ՝ զաղջիկ, այս ինքն Ամուսնացուցանեմ. Եփր. Ա Կոր. է. 65. Ոսկ. Կողոս. ԺԲ. Յորդ. 666. որ եւ Արտաքս տամ. Դաս. ԺԲ. 9. Սիրաք, է. 27:

34

ԲԻԻԶ. «Զայս զանձս ես տաց ձեզ դարձուցեալ ձեռն ի ձեռն ի հուպ ժամանակի: Գ. Թ. 100.—«Զի ասացի, թէ եւ (ես?) տաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձեր»: Ժ. 103: ՄԿԲ. «Եւ ձգէր զաջ ձեռն իւր Երեմիա, եւ տայր ձեռն ի ձեռն ցՅուզա սուսեր մի ոսկհանդերձ». Բ. Ժե. 15:

35

ԲԻԻԶ. «Ապա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն, եթէ Ռրալէս՝ յոր գործ երթեալ էիր՝ վճարեցէք». Գ. Ժ. 102. (ի համեմատութենէ Մակարայեցոց հատուածին՝ թերի թուի Բիւզանդայն):

ՄԿԲ. «Թաղաւորն իբրեւ սկսաւ հարցանել զՀեղիողորոս, թէ Ռրալէս, զիւրդ, յոր գործ երթեալն էիր՝ զինչ վճարեցեր». Բ. գ. 37:

36

ԲԻԻԶ. «Եւ գանձս բազումս եւ անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ . . . առաքէր». Գ. Ժա. 104.—«Թափէին ի նոցանէ աւար բազում եւ անթիւ, զի ոչ գայր նոցա շափ համարոյ». Խգ. 143: Այլուր. «Եհար սատակեաց ի Մերուսանեան գնդէ անտի անթիւ բազում սպառազէնս կոտորեաց». Ե. Խգ. 254: Եւ այլուր. «Տայր նմա Անդոյկ ոսկի բազում եւ անհամար». Գ. Խ. 133: Տես եւ Անթիւ անշափ, Անշափ եւ ան-

Թիւ յԱգաթ. = Բիւզ. Թիւ 131. և Անթիւ անհամար (զարք),  
աստէն Թիւ 5:

ՄԿԲ. «Բազումս և անթիւս յիւրմէ (յիւրեանց?) աշխարհէ  
աւտարացոյց, և ինքն աւտարացեալ ի մէջ աւտարաց կո-  
րեալ». Բ. Ե. 9:

37

ԲԻԻԶ. «Եւ գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հա-  
ճել թագաւորին Արշակայ . . . առաքէր». Դ. ժա. 104:

ՄԿԲ. «Եւ զթագաւորին միտս հաննաց, բարեկամ լինել  
ընդ նմա». Բ. ժա. 14:

38

ԲԻԻԶ. «Նկին հասին դեսպանքն երթեալք ի կայսերէն  
առ թագաւորն Հայոց Մեծաց Արշակ». Դ. ժա. 104.—«Յաղագս  
Ադանայոդայն, որ շորեքհարիւր բիւրաւ գայր հասանէր ի թա-  
գաւորէն Պարսից՝ տալ պատեհազմ ընդ արքային Հայոց». լը-  
վերնագիր, 152.—«Իսկ Վարդանն, . . . գայր հասանէր հրեշ-  
տակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ». ժբ. 127:

ՄԿԲ. «Նկին հասին ի թագաւորէ անտի՝ որ ստիպաւ  
տազնապէին զապստամբութիւնն . . . : Հապա խաւսել սկսան որ  
եկեալ էին ի թագաւորէ անտի, և ասնն ցՄատաթի». Ա.  
բ. 15, 17:

39

ԲԻԻԶ. «Արդ այդմ երախտեացդ ես դարձուցանեմ». Դ. ժա.  
104. (Թուի ուղղելի ըստ Մկբ. «Արդ այդմ երախտեացդ երախ-  
տիս դարձուցանեմ». կամ «Արդ այդմ երախտեացդ ես դար-  
ձուցանեմ երախտիս».)

ՄԿԲ. «Իբրևս զայն լուան գունդն Հռոմայեցոց, սկսան խոր-  
հել և ասել. Իսկ արդ զինչ երախտեաց երախտիս դար-  
ձուցուր ձմաւնի և որդոց նորա». Ա. ժդ. 25:

— ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի Արախտիս դարձուցանեմ  
լոկ. «Չառնուս յանձն գծառայն հեշտական՝ յորժամ մեռանիցիս՝



յանարդութեան թողուլ, այլ եւ ազատութեամբ դարձուցանես զերախտիսն՝ եւ ընչից վարգելաւք . . . եւ իւրաքանչիւր որ առ հասարակ իւրում հպատակի՝ որովք դիւրութեամբք կարող իցէ՝ դարձուցանէ (տպ. դարձուցանել) զերախտիս»։ Ոսկ. Մտթ. Ա. ժգ. Յորդ. 194.—«Փոխարէն երախտիս հաւր եւ մարն դարձուցանեմք»։ նոյն, Ա Տիմ. ժԳ. 118. տես անդ եւ «Լզգիտարէնսն դարձուցանել . . . բարիս ինչ դարձուցանել»։ ժԳ. 109:

40

Քի՛2. «Տայր հրաման Վասակայ իւրում զաւրավարին՝ զաւր ժողովել, զգունդս ըովանդակել (տպ. վանդակել)»։ Գ. ժա. 104—105:

ՄԿԲ. «Զաւր կազմեցին եւ գունդ ըովանդակեցին»։ Ա. բ. 44:

ԱԳԸԹ. «Սկսանէր Խոսրով . . . գունդ կազմել եւ զաւրս ըովանդակել»։ 30:

41

Քի՛2. «Լցան աւարաւ բազմաւ եւ պէսպէս մեծութեամբ»։ Գ. ժա. 105: Այլուր. «Լցան . . . բազում աւարաւ եւ անչափ մեծութեամբ»։ Գ. իբ. 139.—«Լցան բազում աւարաւ գանձուցն»։ Ե. դ. 198:

ՄԿԲ. «Լցան աւարաւ բազմաւ, կոտորեցին զբանակս նոցա»։ Ա. դ. 6:

Տես եւ «Գառնամ բազում աւարաւ» աստէն թիւ 122:

42

Քի՛2. «Իսկ սուրբն Խաղ . . . տայր հրաման ի պահս եւ յաղաթս մտանել եւ ի խնդրուածս»։ Գ. ժբ. 106:

ՄԿԲ. «Գարձեալ յիւրաքանչիւր ապարանիցն զաստգաս մտանէին ի համաշխարհի խնդրուածս»։ Բ. դ. 18:

43

Քի՛2. «Բազում նժոյզս (տպ. նժոյքս) զարբունական ձիոյ՝ արբունի աւճառովք՝ ոսկիվարաւանդ ապլըրդմովն՝ տայր նմա»։

Գ. ժր. 108. — «Հրատուրեաց զմարդպեան իջանել ի կառաց անտի, եւ հեծանել ի նժուզի». ժղ. 115. — «Աղաղակեաց Գարեգինն, եւ ասէ. Տէր Համազասպեան, եւ զիս տես. հրաման տուր նժոյգ մատուցանել, թող հեծայց». Ե. լէ. 243: ՄԿՔ. «Եւ պահապան զլուխ գնդիցն (կարգեցին) հինգ հազար հեծեալ՝ վառեալ՝ նժոյգ ի ձեռն՝ պաշտպան գնդիցն». Ա. գ. 35:

[Ա Դաս]† «Յորժամ այսբ անդր զմարդիկն ի փոզոցացն խուլիցեն, կերպասս զգեցեալ, անդրուարաւք եւ նժուզաւք կազմ». Ոսկ. Ա Տիմ. ԺԱ. Յորդ. 93. (ընազիրն լոկ *hippos*, որ է 2ի.) — «Եւ բազում սպասուք (տպ. սպասօք) ելանէր եւ մտանէր (նեւրովն), յոսկի եւ յակնս պատուականս համակէր, բազում սպասուորս, բազում աւժանդակս՝ եւ սպասիկս (տպ. սպասեկս) նժուզաւորս (այլ 2. նուագաւորս) եւ նժոյգս զկնի եւ առաջի յարիներ». նոյն, Բ Տիմ. Գ. 207. (ընազիրն չունի՝ ոչ նժուզաւոր եւ ոչ նժոյգ, այլ կըսէ. «Հանապաղ շուրջ կային գնուլաւ բազմութիւնք արբանեկաց (կամ սպասեկաց) եւ ծիրանաւորաց».) — «Եթէ ոչ բազում սպասաւորս ունիցիմք, եւ ստէպ հանգչել հասանիցէ, եւ նժոյգ ես, եւ կարճ աթիւխանս, եւ այլ ինչ բազում պէտս, չհարեմք երթալ». նոյն, Երբ. Բ. 471. (ընազիրն *hyposygion*, որ է Գրաստ, գգ. *Bête de somme*).

— ԴԻՏ. Կայ արարեբէն Նէզիճ, զոր է. Յակորոս Պօղանեան յիւր ծանկ. — Հայ. Բառարանին կը մեկնէ թուրքերէն Նէտէք, եւ հայերէն նժոյգ: Ըստ Ինճիճեանի (Հնախ. Հ. Ա. 197) Նէզիճ պարսիկ բառ է, նոյն ընդ հայոյն նժոյգ. բայց Գէորդ Տէր Յովհաննէսեանի Պրս. — Հայ. Բառագրոց մէջ չկայ Նէզիճ, այլ Ազիւխ, որ եւ կը մեկնուի թուրքերէն Նէտէք աթ, արարեբէն ժէնիյալ (=Ջնիբայ. Վարդան Արեւիկցի, Պատմ. 132). անս անդ եւ Տէսթիէզիյն, Տէսթրէշ: Թուրքաց Նէտէք աթն զաղղիեբէն կը ըսուի *Cheval de main*, այս ինքն *cheval qu'on mène à la main sans monter dessus*. Եթէ վերոյգրեալ օրինակաց մէջ ուրեք ուրեք նժոյգ իբրեւ *cheval de main* կարէ հասկացուիլ, այլ-

1. Թոռնեան, Հատ. Ընթերց. 134, կը գրէ «օժընդակս», եւ «օժանգակս» գրչի վրիպակ կը համարի:

ուր (զոր օրինակ ի Բիւզ. առաջին վկ.) թուի նշանակել՝ Ընտիր կամ ազնիւ երիվար, իբր զդ. Coursier, որ եւ կր յիշեցնէ զայն ազգ ձիոց՝ զոր *Միսեան* կր կոչին յայն եւ հստմմայեցի նախնի մատենագիրք, յանուանէ *Միսեան դաշտին Մարաստանի*։ Կաւանդէ Սարաբոն (Գիրք ԺԱ. դլ. ձգ. հած. է. եւ դլ. Ժդ. հած. Թ.) թէ նիսեան երիվարքն՝ իւրեանց մեծութեան եւ գեղեցկութեան համար սեպհականեալք էին ի պէտս Պարսից թագաւորաց. եւ այսպիսի ձիոյ համար է անշուշտ՝ զոր կ'ըսէ Սերիոս. «Եւ եղև իբրև մերձեցաւ (Սմբատ՝ Վրկան մարդպան) աւթ իւ միով ի դուռն արքունի, հրաման տայ արքայ (Խոսրով Բ Աղբուէզ) ամենայն նախարարացն եւ զաւրաց իւրոց ելանել ընդ առաջ նորա, եւ աւժանդակացն հրամայէ նժոյգ տանել ընդ առաջ նորա յախտոէ արքունի՝ արքունական կազմածով»։ 108—109։ *Միսեան* եւ *Սժոյգ* նոյն է ըստ Ինճիճեանի (Հնախ. Հ. Ա. 197—200)։

Յայլ գիրս Առաջին Թարգմանչաց կր գտնուի *Անդրուար*, *Անդրուվար*, *Անդրվար*, *Անդրավար*, որ մերթ կր նշանակէ 2ի, եւ մերթ Ազնիւ ձի. «Արս ի ներքոյ լծոյ զտրմուզ վիղզ (տպ. վիղզ), եւ լիւր անդրուար Բրիստոսի». Բրս. *Ի հրաւիրեալս ի մկրտութիւն*. 185.—«Ոչ սպասաւորս (ունէր Բրիստոս), ոչ առաջապահս կամ վերջապահս, ոչ երիւարս եւ ոչ անդրուվարս, եւ ոչ այլ ինչ այսպիսի՝ որ թագաւորաց սպասք եւ պատիւք իցեն»։ Ոսկ. Մտթ. Ա. դ. 79.—«2ար արինակ եւ թագաւորաց առաջին՝ որ մաւտ առ կառուքն կամ առ անդրվարաւք զայցեն, նմաքան զայսն են պատուականք». անդ, Բ. Ժբ. 559.—«Ոչ արէնք աշխարհականք եւ ոչ տէրութիւնք, ոչ վարիչք, ոչ անդրավարք ի սպաս, եւ ոչ ջորիք ի կառս լծեալ». նոյն, Ես. ԺԹ. 172.—«Ո՛չ տեսանես զայնոսիկ որ ի թագաւորութեանն իցեն, . . . ի կառս սպիտակ (տպ. սպիտակս) երիվարաց լծեալ, յերիվարս գեղեցիկս, յանդրուվարս ազնիւս». անդ, Խ. 254.—«Անդրուարաւք եւ նժուգաւք կազմ». նոյն, Ա Տիմ. ԺԱ. Յորդ. 93։ Կայ եւ յԱզաթ. 115. «Որպէս ի Դրախտի անդ դաւձն անդրուվար արարեալ (Թշնամոյն, այս ինքն Սատանայի)՝ առ ի զպատուիրանն մոռանալոյ, մտեալ յանդգամ ի յունկն կնոջն առաջնոյ»։

— Կր ի գիրքս Բրիստոսի մե. Կայն. Կայն. 244.—  
— Կր ի գիրքս Բրիստոսի մե. Կայն. 288.—

44

ԲԻԻԶ. «Եւ [որպէս?] համաշխարհի էին խնդրուածք, միւսանգամ աշխարհի շնորհեցաւ (Սուրբն ներսէս)». Գ. Ժգ. 109: ՄԿԲ. «Դասադաս մտանէին ի համաշխարհի խնդրուածս». Բ. գ. 18:

Տես եւ «Համաշխարհ» ի Գոր. — Բիւզ. Թիւ 35:

45

ԲԻԻԶ. «Ամենեքեան ի դժնեայ (տպ. ի դժնէ) արտաթեւնէն դուարթացեալք՝ յուրախութիւն դառնային». Գ. Ժգ. 110:

ՄԿԲ. «Եւ թագաւորն դայս հրաման տայր փղապեաին, եւ ինքն յուրախութիւն դառնայր». Գ. Ե. 2. — «Եւ անդէն վաղ-վաղակի թագաւորն հրաման տայր կսչնականացն յուրախութիւն դառնալ». անդ, 20:

— ԴԻՏ. Կայ եւ այլուր ի Մկբ. Ի զութ դառնամ. Բ. գ. 37. Գ. Ե. 28. Յողորմութիւն դառնամ. Բ. ք. 5: Եւ ի Վարս Մաշտոցի. «Բարձրագոյն բարբառով ի փառաւորութիւն դառնայ, եթէ Չնորճ Եստուծոյ». 4. — «Ձամենայն ընտրութիւնս նշանագրոյն . . . յարինեալ եւ յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային». 10: Տես եւ «Ի նոյն հոգս (կամ խնդրուածս) դառնամ» ի Գոր. — Մկբ. Թիւ 2: Ի գիրս միւս Դասուց կը գտնենք. «Յորժամ զխաղալիկս մանկուտոյն հարք եղծանիցեն, եւ նորա ի լալ դառնայցեն». Ոսկ. Մտթ. Ա. իգ. Յորդ. 375. — «Եւ դարձեալ յարնութիւնս եւ յաղալծս դառնայր». Վարք Յոհ. Թեկր. 108:

46

ԲԻԻԶ. «Ի վերայ հասանէր (ներսէս) իւրում ետեղապահին սրբոյն Խաղայ, զի . . . ոչ էր թիրեալ յաջ կամ յահեակ». Գ. Ժգ. 110:

ՄԿԲ. «Ոչ թողումք դպաշտան հարցն, ոչ թիրիմք յաջ կամ յահեակ». Ա. ք. 22:

— ԴԻՏ. Ագաթ. կ'ըսէ. «Եւ մի խոտորիք ի կարգաց իմաստութեան, մի յաջ եւ մի յահեակ». 288—289: Ըստ այսմ եւ



միւս Դասքն. «Մի խոտորիցիս յաջ եւ մի յահեակ». Բ Ար. Ե. 32. Ժէ. 11.—«Մի խոտորիցիս ի նոցանէ (յաւրինացն) յաջ կամ յահեակ». Յեսու, Ա. 7.—«Մի փոխիք ի նոցանէ եւ մի խոտորիք յաջ կամ յահեակ, . . . զոր աւրինակ վարեցայ ես ի միջի ձերում, եւ ոչ խոտորեցայ յաջ կամ յահեակ . . . եւ ոչ փոխեցայ ինչ ի նոցանէ յաջ կամ յահեակ». Լաւուր. 39: Այլուր. «Զի մի անցանիցէ զպատուիրանաւքս յաջ կամ յահեակ». Բ Ար. Ժէ. 20. եւ ԽԸ. 14:

47

ԲԻԻԶ. «Յրուեալ զմարդիկն զոր ժողովեցեր, զի երթիցեն ցրուեսցին սփռեսցին յիրաքանչիւր տեղիս». Դ. Ժգ. 111. —«Հնապա զնասցուք, ասեն, սփռեսցուք (տպ. սփռեցարուք) յիրաքանչիւր տեղիս». Ժա. 163.—«Սփռեցան յիրաքանչիւր տունս իւրեանց». անդ: Այլուր. «Եւ ինքեանք մեկնեցան յիրաքանչիւր տեղիս». Դ. Ժ. 102:

ՄԿԲ. «Մնացեալ էին սակաւք ի սուրբս անդ. զի սփռեալ էին ընդ իւրաքանչիւր տեղիս, . . . եւ ցրուեցան յիրաքանչիւր տեղիս». Ա. դ. 54.—«Ի հրամանէ թագաւորին յիրաքանչիւր տեղիս սփռեցան». Դ. է. 14: Այլուր. «Յիրաքանչիւր բանակս սփռեցան». Բ. Ժբ. 12.—«Յիրաքանչիւր վանս . . . մեկնէին». Դ. Ե. 11:

—ԴԻՏ. Կայ յԲ Թագ. Ի. 22. «Եւ փող եհար եղջերեալն, եւ սփռեցան ի քաղաքէն յայնմանէ այր իւրաքանչիւր ի ընակութիւնս իւրեանց»:

48

ԲԻԻԶ. «Եթէ տեղոյն ինչ կարի այդչափ ցանկացեալ ես, ես ինքն ինձէն զնա արդարութեամբ շինեցից, եւ շէն կալայց առաջի քս». Դ. Ժգ. 111:

ՄԿԲ. «Ի խորհուրդ մտանէին վասն զաւրաց՝ զի զաշխարհն շէն կալցին». Ա. Ը. 15:

49

ԲԻԻՉ. «Անկանէր ի գաղտագողանս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ». Գ. ժե. 116:

ՄԿԲ. «Քաղում գաղտագողունը լինէին զանձին ի ձեռն Լիւսիմաքեայ»: Բ. դ. 39:

50

ԲԻԻՉ. «Ապա առաքէր զՎարդան . . . , զի մեծաւ երդմամբ եւ նենդութեամբ կոչել կարասցէ (զԳնել), զի մի խորհուրդն յայտնեցի». Գ. ժե. 117:

ՄԿԲ. «Իբրեւ ետես նիկանովր եթէ յայտնեցաւ խորհուրդս նմա, խաղաց պատահել նմա պատերազմաւ». Ա. է. 31:

51

ԲԻԻՉ. «Յայնժամ թագաւորն զիւր սամոյրսն զգլխումն ածեալ, ի փոյրկնջանն մտեալ, զիւր գէմս երեսացն ծածկէր, քնոյ պատճառ եղեար». Գ. ժե. 118. (տպ. «ի փոյթ կնջանն», զոր ուղղելի կը համարիմ «ի փոյրկնջանն», եւ նոյն ընդ սանսկրիտ բառին *paryanka*, այս ինքն գղ. Bois de lit, եւս եւ Lit. տես Palanquin ի Լիւսթի *Dict. de la langue française*. Քիւզանդ կ'ըսէ յերես 119. «Ընկողմնեալ պատեալ ծածկեալ կայր (Երչակ) ի գահոյսն»:) Թ եւ Բ. նշանագրաց շփոթութեան ուրիշ օրինակ մի տես յԵղաթ. Բիւզ. Թիւ 80, ԳԻՏ. Վայ<sup>Ե</sup> եւ Վայրեմ:

ՄԿԲ. «Հրամայեաց զգլխով ածել զծիրանիսն Անդրոնիկեայ. եւ... զկառափն հարկանել զանաւրէն մահապարտին». Բ. դ. 38:

== ԳԻՏ. Կայ Ածել զգլխով իւրով ի գիրս Թուոց, Զ. 5:

52

ԲԻԻՉ. «Եսկ կիսն սպանելոյն Փառանձեմն զհանդերձսն պատառեալ, զգէսս արծակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր». Գ. ժե. 120.— «Ըստ կրանից Հայոց. . . գերծեալ էր զգլխիս մանկանն Արտաւազդայ, եւ ցցուես էր թողեալ եւ գէս արծակեալ». Ե. խգ. 252—253:

ՄԿԲ. «Յառնէր վաղվազակի Արտինոյէ, ի ձայն ողորմ լալոյ՝

զգէսս արծակեալ առաջի դաւրացն աղաչէր». Գ. ա. 3: Այլուր. «Եւ ամբածածուկ քաղածիդ ծնկասէր հարսունք, վարսս մերկացեալ, գոյժ առեալ, զիւզաթուրմ ցցունսն՝ յանդգնեալ հոլանեալ՝ հող ի գլուխ տանէին». Գ. դ. 6: Եւ սուղ ինչ զկնի. «Հերարծակ ցտեալք եւ կապեալք . . . բունութեամբ քարշեալք երթային»:

==ԳԻՏ. Զգէսս արծակեալ կայ մի անգամ եւ յԱռաջին Դասի. «Ո՛րպէս կարիցեմ տեսանել (զղուտորն իմ) զաչս շրջեալ, զծնոս թիւրեալ, զզգէսս արծակեալս, փրփրէ եւ կրճտէ». Ոսկ. Վճիռ Քանան. կնոջն, 374. որ յՈսկ. Մտթ. ըսուած է. «Հերս արծակեալ, եւ զսուրբ ոտս (Քրիստոսի) լուանայր իւրովք արտասուալք». Ա. դ. Յորդ. 90: Նոյնպէս եւ Մակարայեցւոցն Հերարծակ կայ ի գիրս սոյն Գասուս. «Յորժամ հասանէ զեւն ի մոլին, զգեանի զարիւցանէ, հերարծակ անէէ». Ոսկ. Ես. ԽԲ. 292.— «Ոչ կին հերարծակ առ սնարսն, եւ ոչ որդիք՝ որ չեւ եւս զիտիցեն զչափ որբութեան՝ լալ, առատանալ եւ որողանել». Նոյն, Ա Տիմ. ԺԳ. Յորդ. 128.— «Զկորանայցես զի այնպէս հերարծակ տեսանիցես զնա (զնաժիրչան)». Նոյն, Եփես. ԺԵ. 835: Նոր Հայկադեանն կը նշանակէ Հերարծակ եւ յՈսկ. Մատթէի Մեկնութենէն, առանց վկայութեան. չիք ի տպագրին ոչ հերարծակ եւ ոչ Արծակահեր՝ զոր կը յիշէ նոյն Բառգիրքն իբր ի նմին մատենէ. «Մարցն արծակահերացն ահագին կսկծմամբք սգացեալ որդային», վերջին վկայութիւնս որոնելի է՝ յերբորդ մատրնտրին Ս. Դադարու. «Կսկծմամբ սգացեալ (կամ զգածեալ) որդբային». տես Կսկծումն ի նոր Հայկղ.:

ԲԻՒՉ. «Ապա իբրեւ մեծ իրքն համարծակ յայտնեցան ի լսելիս ամենեկուն, . . . ձայնարկունքն ամենայն ի ձայն որդոցն սկսան նուագել զիրքն տրփանացն Տիրիթայ». Գ. ԺԵ. 121. Եւ սուղ ինչ զկնի. «Իբրն յայտնեալ հուշակ հարկանէր»: Սուղարուն զամ ՄԿԲ. «Եւ իբրեւ իբրն այն համարծակ յայտնեցան, եւ բանքն ի թագաւոր անդր հասին». Բ. ա. 33:

54

ԲԻԻԶ. «Ապա իբրեւ հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, . . . անսայր բանին առ ժամանակ մի». Գ. ժե. 122:

ՄԿԲ. «Ապա իբրեւ եհաս թագաւորն յիրացն հաստատութեան վերայ, հրամայեաց շուրջ փակել զտեղին». Բ. ա. 34:

Տես եւ «Իբրեւ հասանէր ի վերայ իրացն, եթէ» յԱզաթ, ==ԲԻԷԳ. ԹԻԷ 55:

==ԳԻՏ. *Իրացն հաստատութիւն տաւնձինն՝ կայ եւ ի Վարս Մաշտոցի*, 13. «Իսկ իբրեւ զչափ առեալ զիրացն հաստատութեան: Կայ եւ յԱւաջին Դասի. «Ջի որք կամիցին խնդրել՝ ցուցանիցէ նոցա զամենայն իրացն հաստատութիւն . . . ամենայնիւ բաւական էին տալ պատճառս մտադրացն զաւնկելոյ զիրացն հաստատութիւն». Ոսկ. Մտթ. Ա. է. 98.— «Ան է զնովիմբ եւ զիրացն զհաստատութիւն». անդ, ժա. 161.— «Առ ի զհաստատութիւն իրացն ցուցանելոյ՝ այսպիսի ինչ առէ Աստուած». Սեբեբ. Ե. 103:

55

ԲԻԻԶ. «Զանարժանս զանկատար զանջնջելի զարեացն մեղացն շմոռացական տանջանացն կատարեաց զգործան». Գ. ժե. 123:

ՄԿԲ. «Դարձեալ սաստկութեամբ երդնոյր զերդումն անկատար». Գ. Ե. 23:

==ԳԻՏ. Ըստ յոյն բնագրին Մկր. Անկատար է Սին, Մնոսի, Ընդունայն. իսկ ի ԲԻԷԳ. կը նշանակէ Ամբարիշտ, Անարէն: Ի ձառին Բարսղի *Ի Հրաւիրեալս ի մկրտութիւն*, ուր ոսկեղինիկ թարգմանութիւնն ունի, 187. «Ո՛վ զազիր եւ վատթար անպարապութեանն». միւս թարգմանն կը գրէ. «Ո՛վ զարչելի եւ անկատար անպարապութեանն». տես Անպարապութիւն ի նոր Հայկդ.:



56

ԲԻԻԶ. «Եսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, քա-  
զում շնորհ ունէր զաւրաւարին Վասակայ»։ Գ. ժդ. 125: Այլուր.  
«Շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զաւրաւարացն».  
Գ. ծե. 173.—Մեծ շնորհակալութիւն ունիմ փոխանակ զի  
ոչ սպաներ դու զիս»։ Ե. ե. 200.—«Թագաւորն Պարսից. մեծ  
շնորհակալութիւն առնէր ներքինոյն Իրաստամասայն վաս-  
տակոցն»։ է. 206:

ՄԿԲ. «Բազում շնորհս դու մնեայ քահանայապետի կալ-  
ջիւր»։ Բ. դ. 33: Այլուր. «Շնորհ յոյժ ունիմ վասն ձեր յԱս-  
տուծոյ (Աստուծոյ?)»։ Բ. թ. 20:

—ԴԻՏ. Շնորհ ունիմ առանձինն՝ կայ եւ յայլ զիրս. Դուկ.  
ժէ. 9. Ա Տիմ. Ա. 12. եւ այլն: Իսկ իբր Բազում շնորհ ունիմ՝  
կայ յնակ. Մտթ. Գ. իե. 80. «Յուցանենն եթէ ի նմանէ առին  
(զտաղանդան) եւ զպատճառս շահաւորութեանն, եւ կարի իսկ  
շնորհ ունին»:

57

ԲԻԻԶ. «Աւելի քան զեթանասուն այր, ի մի զուր զա-  
մենսեան զնոսա փողոտէին»։ Գ. ժդ. 126.—«Ետու հրաման եւ-  
թանասուն զնոսա ի մի զուր փողոտեւ»։ ծդ. 165:

ՄԿԲ. «Զնա եւ զԱպոստանէս ի նոյն զուր փողոտեցին».  
Բ. ժ. 37: Այլուր. «Առաքեաց կալաւ նա զբազումս ի նոցանէ, . . .  
եւ հրամայեաց փողոտեւ ի ջրհոր անդր ի ներքս»։ Ա. է. 19:

58

ԲԻԻԶ. «Եթէ ոչ աճապարեսցես վաղազոյն սպանցես  
զնա, դու կորնչիս եւ աշխարհո չայոց»։ Գ. ժը. 127—128:

ՄԿԲ. «Եւ եթէ ոչ վաղ աճապարեսջիւր, եւս մեծամեծ  
ինչ քան զայս զործիցեն»։ Ա. դ. 27:

59

ԲԻԻԶ. «Եւ մարդիկ զաւրացն Վասակայ էին ամենքեան  
ի ծածուկ վառեալք»։ Գ. ժը. 128:

ՄԿԲ. «Ուրբ ի մէջ առեալ զՅուդա Մակարէ՛ յառաջ խաղային, իւրեանց զինուքն ծածուկ վատեալ առաւել յառաջ տանէին քան իւրով զինուն»։ Բ. ժ. 30. — «Առնոյր զունդ մի՛ որ ընդ իւրով ձեռամբ էր, ծածուկ վատէր»։ Գ. ա. 2:

60

ԲԻԻԶ. «Եւ զգաւառն յուտեստի (տպ. յուտեստի՛ յաւտարաստութիւն համարարաց թողոյր բերդին»։ Գ. ժ թ. 129. — «Մինչդեռ թագաւորն Արշակ ի կողմանսն ստորին գաւառացն յԱնգեղ տան էր յուտեստ»։ Խգ. 140, (յօրինակող Ռատեստէ գգ. Ravitaillement, իսկ նոր շալկդ կը գրէ. «Կարծի լինել անզիւ արքունի ռոճկաց՝ իբր յատուկ անուն»։ Գ. զ. լ. 600)

ՄԿԲ. «Դէպ եղև Տարնացւոց եւ Մարտիացւոց ժամանակն ի գրգիռ վայրի գիպել վասն զի առեալ էր զնոսա յուտեստ Անտիոքիղեայ հարձի թագաւորին»։ Բ. դ. 30:

61

ԲԻԻԶ. «Համակ հեծելազարք՝ զրահաւոր պատեննազէնք»։ Գ. ի. 130. — «Կուռ վատեալք պատեննազէնք եւ զրահաւորք»։ Ե. գ. 203. (տպ. պատենզէնք. եւ ի ծան. «Յօրինակի՛ միում պատեննազէնք»։ Այսպէս եւ երկրորդ տպ. 208: Տես. Կոր. = Բիւզ. թիւ 22, ծան. 1:)

ՄԿԲ. «Աւ հառարակ ի զրահաւոր պատեննազէն պղընձապատ վահանացն՝ նշոյլքն զլեբամբքն փայլատակէին»։ Ե. գ. 39: Այլուր. «Առնազէն քաղում, զրահք եւ պատեննք՝ որ թողեալ էր Աղեքսանդրի կայսեր Մակեդոնացւոց»։ Ե. գ. 2:

— ԴԻՏ. Կայ Պատեննազէն առանձինն յերկրորդ Դասի. «Մերկացիք ընկեցէք զպատեննազէնս ձեր, եւ խորզով վառեցարուք ընդդէմ նորա»։ Եփր. Յապաշխ. նին. 116: Կայ եւ ի Մար. Ի. Վկ. Արև. «Ո՛վ նահատակք, . . . մտեալք ի պատերազմ պատեննազէն զինուն կազմութեան»։ 82. — «նոքա են սպարապետք եւ

62

1. Տորմէ Մ. Խոր. Պատ. Գ. լ. 477. «Իսկ ի ծաղել արեղակտնն ընդդէմ մերոց զարացն, ի աղնձապատ վահանացն (2. իսկ տպ. վահանաց)՝ նշոյլք զլեբամբքն փայլատակէին իբրեւ յամպոյ մեծէ»։

զաւրագլուխք, հազարաւորք եւ բիւրաւորք, պատենազէնք, սա-  
զաւարտեալք». 126: Իսկ յնսկ. Մտթ. Գ. ժե. 66, «Մորքնաւ-  
որքք եւ զբանապատք շողացեն», թուի զնոյն նշանաւու թիւն  
ունի՛ որ ինչ զբանաւոր պատենազէնք ի Բիւղ., եւ վա-  
ռեալք զբանապատք ի Զգան, ժթ. 341:

62

ԲԻԻԶ. «Եւ այլ ամենայն զաւրացն Հայոց ինքնակամք իւ-  
րարանչիւր արծակ արծակ խաղային». Գ. ի. 131:

ՄԿԲ. «Սկսաւ (Յուդա) խաւսել ընդ մնացեալսն, եւ աւէ.  
եկալք հարցուք ի դիմի, թերեւ կարասցուք կծանել ինչ ի նո-  
ցանէ: Եւ ինքն յարծակ յարծակ խաղայր». Ա. թ. 8—9:

63

ԲԻԻԶ. «Վարէր (Վառէր?) զինէր, ժամակալ լինէր Վա-  
սակ». Գ. ի. 31:

ՄԿԲ. «Գարձեալ ժամակալ լինէր՝ ի դորձին միւսանդամ  
առ հասարակ սատակել զազգն Յոզպայիցոց». Բ. ժք. 7:

ԱԳԱԹ. «Եղին փոզք Առաքեալքն ժամատուք տիեզերացն.  
զի գիցին ի սիրտս ամենայն երկրի անկեալութիւն ժամակա-  
լութեան, սպասել տեսողապալտոսս փողոյն». 477:

==ԴԻՏ. Փոխանակ ժամակալ լինիմ կայ ի նեմի, Բ. 6,  
Ունիմ ժամանակ:

64

ԲԻԻԶ. «Կազմէր զգաւրս իւր թողաւորն Պարսից Զապուհ,  
եւ խաղաց ի վերայ Արշակայ արքային Հայոց մարտի (տալ-  
մարտի) պատերազմաւ». Գ. իա. 136—137, Այլուր. «Դի-  
մեաց ի վերայ նոցա մարտի պատերազմաւ». Գ. լէ. 152:

ՄԿԲ. «Երկեաւ զանգիտեաց, թէ զուցէ . . . խաղայցէ ի  
վերայ նորա մարտի պատերազմաւ». Ա. ժք. 40: Այլուր.  
«Դիմեաց զալ ի վերայ նորա մարտի պատերազմաւ». Ա.

ժա. 15: եւ այլուր. «Սաղաց պատանել նմա պատերազ-  
մաւ ի կողմանս Փարսալայ». Ա. է. 31. (տես Ագաթ. = Բիւղ. թիւ  
35, ԴԻՏ.) — Եւ լուա Յովնաթան եթէ դարձան ի շխանք Դեմն-

տրեայ դուրաւք բազմաւք քան դառաջինն, զաւ ի վերայ նորա ի մարտ պատերազմի»։ Ժբ. 24:

== ԳԻՏ. Այլազգ յերկրորդ Գասի. «Իբրեւ եկնեհաս Խորայ էլ ի վերայ Մաղիանացոցն մարտիւ պատերազմաւ»։ Եփր. Թիւք. Գ. 252: Այլազգ եւ յԱռաջին Գասի. «Իսկ Ադեքսանդրոս . . . ի վերայ երթեալ կրտսերոյ եղբարն ի մարտ պատերազմի, դուրավիզն աւգնականութեան զԳիմետրիոս Անտիպատրեայ կոչէր»։ Եւս. ժմ. 155.— «Ի վերայ խաղայր նոցա որդի Գիզիկինեցոյն ի պատերազմ»։ անդ, 169: Տես եւ յերեմ. ԽԱ. 12, Մաղամ երթալ տալ պատերազմ ընդ . . . :

## 65

ԲԻԻԶ. «Ապա իբրեւ զայն զգայր . . . Արշակ, հրաման տայր Վասակայ . . . կազմել զամենայն զզուրս իւր»։ Գ. իա. 137: Այլուր. «Իբրեւ զգաց մայր նորա զարուագիտութիւնն»։ Գ. խգ. 155.— «Իսկ իբրեւ զգացին զուրավարքն . . . եթէ զուրածողով է ի վերայ նոցա . . . Վասակ»։ իգ. 141: Գարձեալ. «Ապա վաղ զգացին զուրքն Պարսից դհասանել Բագոսին»։ Գ. իբ. 138.— «Թէ զգայ, ասեն, մեծ պատերազմ առնէ»։ Ե. լե. 236:

ՄԿԲ. «Իբրեւ զայն զգայր Յուդա, պատուէր տայր ժողովրդոցն զցայգ եւ զցերեկ կարգալ առ Տէր»։ Բ. ժգ. 10: Այլուր. «Իբրեւ զգաց երեմիա՝ պատուհասել սկսաւ զնոսա»։ Բ. բ. 7.— «Իբրեւ զայն զգացին զուրք քաղաքին, առ հասարակ ի զէնս իւրեանց ընթացան»։ թ. 1.— «Տրմութէոս իբրեւ զգայր զարչաւանն Մակարէացոց ի վերայ նորա»։ Ժբ. 21:

ԱԳԱԹ. «Իսկ իբրեւ զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի՝ թէ քրիստոսական պաշտամանն հաղորդ է, սկսեալ այնուհետեւ պատուհասակոծ առնէր զնա»։ 43:

== ԳԻՏ. Յօրինակագ Չգամ է Լսել (կամ Տեղեկանալ), գղ. Apprendre, Savoir, ինչպէս կ'ըսուի այլուր ի Մկր. «Իբրեւ զայն լսէր»։ Ա. գ. 13. «Իբրեւ զայն լուաւ Յուդա»։ Ե. 28: Իսկ ի գիրս միւս Գասուց՝ Չգամ բայի նշանակութիւնն է գղ. S'apercevoir de quelque chose. «Կամ զանցանկն զՅեսուայ ի նորա աշխարհն՝ զիւրագ ոչ ինքն զգայր եւ ոչ որ ի դուրացն նորա»։ Եզնիկ, 264. թող Չգամ (ցաւոց, եւ այլն), որ է գղ. Sentir.



ԲԻԻԶ. «Առ հասարակ զգաւրսն զամենայն արկանէին (ապ. զօրսն զամենայն հարկանէին) ի սուր սուսերի իւրեանց». Դ. իա. 137.—«Զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց». իգ. 142.—«Եւ տա հասարակ արկանէին զնոսա ի սուր սուսերի իւրեանց». անդ, 143—144: Այլուր զմիոյ, «Սպանանէր Մուշեղ զգաւրազուխսն (ապ. զզօրազուխն) Պարսից զԿարէնն եւ Զիկն, եւ զամենայն զգաւրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ»: Ե. ա. 187:

ՄԿԲ. «Արկանէին ի սուր սուսերի իւրեանց իբրև արս ութ հազար սպառաղէն». Ա. Ե. 34.—«Ի սուր սուսերի իւրեանց արկանէին՝ մինչ ի սահմանս Գաղիրոնայ». դ. 15: Այլուր «Արկին ի նոցանէ ի սուր իւրեանց վիրաւորս բազումս». Ա ը. 10: Գարձնալ. «Անդ սատակեցին զամենայն արու մանուկ նոցա ի սուր սուսերի իւրեանց». Ա. Ե. 51.—«Զբազում թագաւորս ի սուր սուսերի իւրոյ սատակէր». ա. 2:

Տես եւ «Արկանեմ ի սուր» յԱղաթ. = Բիւզ. Թիւ 59, եւ «Արկանեմ ի սուր սուսերի», 11, 9:

==ԳԻՏ. Ի Սուրբ գիրս կ'ըսուի պէսպէս ասացուածովք. Արկանեմ ի բերան սրոյ. Յես. Զ. 21. Կոտորեմ ի բերան կամ բերանով սրոյ. Երեմ. ԻԱ. 7. Յես. Ժ. 32. Կոտորեմ սրով. Յովբ, Ա. 15, 17. Ամոխ, Դ. 10. Կոտորեմ սրով սուսերի. Յես. Ժ. 28, 30. Կոտորեմ կոտորմամբ սրոյ . . . ի բերան սրոյ. Բ Ար. ԺԳ. 15. Հարկանեմ բերանով սրոյ կամ սուսերի. Յես. Ժ. 39, 37. Հարկանեմ սատակեմ ի բերան սրոյ. Յուդիթ, Բ. 17. Հարկանեմ կոտորմամբ սրոյ. Ելք, ԺԷ. 13. Թիւք, ԻԱ. 24. Բ Ար. Ի. 13. Հարկանեմ սրով սուսերի. Յես. Ը. 24. Ժ. 33. Դատ. Ա. 8. ԺԸ. 27. Բ Թագ. ԺԵ. 14. Դ Թագ. Ժ. 25. Հարկանեմ սրով սուսերի . . . բերանով սրոյ. Ա Թագ. ԻԲ. 19. Սատակեմ սրով սուսերի. Յես. ԺԱ. 14. Սպանանեմ ի սուր սուսերի. Ծնն. ԼԳ. 26: Տես եւ Ի սուր սուսերի կոտորեմ. Եւս. Եկեղ. Բ. Ժա. 98. Եփր. Սամ. Ա. 361. եւ «Եհար կոտորեաց ճաւուղ զԱմադե-

կացիան ի սուր սուսերի իւրոյ»։ Զգան, Գ. 55. զոր համեմատէ ընդ վերջին վկայութիւնս Յիւզանդայ եւ Մակարայեցոց։

67

Բիւժ. «Եւ ինքեանք կային ունէին զճակատուն տեղի»։ Գ. իա. 137. (որ է գղ. Rester maître du champ de bataille.) — «Եւ ինքեանք դարձեալ ունէին զճակատուն տեղի»։ Իգ. 145. — «Եւ ինքն կայր քաջութեամբ ունելով զճակատուն տեղի»։ Իէ. 146։

ՄԿԲ. «Այլ հասեալ այսրէն՝ ունէին զճակատուն տեղի»։ Բ. ք. 27։ Տես եւ «Ժրբեւ հասանէին ի ճակատուն տեղի, գտանէին զիւրեանց եղբարց դիակունսն»։ Բ. ժբ. 40։

68

Բիւժ. «Ընդ երիս բաժանեալ զգաւրսն, երկուց գնդացն զԱնդրիկան եւ զՀաղարատիս գաւրազուխս կացուցանէր»։ Գ. իբ. 137. — «Ապա թագաւորն Արշակ եւ զիւր գաւրսն բաժանէր ընդ երիս»։ անդ, 138։

ՄԿԲ. «Զարահատոց արարին, ընդ երկու զգաւրսն բաժանեցին»։ Ա. և. 20։ Այլուր. «Եւ զգաւրսն ամենայն յերիս գունդս բաժանէր»։ անդ, 33. — «Եւ բաժանեաց յերկուս գունդս դհեճեղաբարն»։ Ա. ժգ. 7. — «Երիս գունդս զգաւրսն բաժանէր, երկացունց գնդացն զերկոսին զեղբարսն զԸմառն եւ զՅովսէպ գաւրավար կացուցանէր»։ Բ. ք. 22. (համեմատէ ընդ Քիւղ. առաջին վկ.)։ Եւ այլուր. «Իսկ Մակարէոս զգաւրն ամենայն ի գունդս գունդս բաժանէր»։ Բ. ժբ. 20։

— ԴԻՏ. Կայ յԱռաջին Դասի. «Եւ բաժանեաց զերկք հարիւր այրն յերիս առաջս»։ Դատ. Է. 16. — «Եւ առ զգաւրն՝ եւ բաժանեաց յերիս առաջս»։ անդ, Թ. 43. — «Եւ բաժանեաց Սաւուղ զժողովուրդն յերիս առաջս, եւ մահն ի մէջ բանակին»։ Ա. Թագ. ժԱ. 11։ Կայ եւ Ընդ երիս բաժանեմ՝ յԲ Ար. ժԹ. 3։

69

Բիւժ. «Առնուին կոտորէին զամենայն բնակիչսն վերնագաւառացն Հայոց»։ Գ. իգ. 140։ Տես անդ եւ Ստորին զաւառք։

ՄԿԲ. «Անց նա ըստ գետն մեծ ըստ եփրատ, և երթայր ընդ կողմն վերնազաւատացն»։ Ա. գ. 37.—«Եւ Անտիոքոս կայսր գնայր նա ընդ վերնազաւատսն»։ դ. 1.

—ԴԻՏ. Վերնազաւատք բառի նշանակութիամբ կը գտնենք յԱռաջին Դասի Վերին կողմանք, Վերին աշխարհք. «Եւ եղև մինչդեռ Ապողոսն ի Կորնթոս էր, Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբն՝ և իջանել յեփեսոս»։ Գործք Առաք. ԺԹ. 1.—«Այս աչն Արիստարքոս է որ յերուսաղէմն շոգաւ ընդ նմա (ընդ Պաւղոսի) ի վերին կողմանս»։ Ռսկ. Կողոս. ԺԱ. 645.—«Իսկ վերնոց կողմանցն և Ասորոց (Թագաւորեաց) Սելեւկոս . . . Թագաւոր զՍելեւկոս կացուցանէր Ասորոց և վերնոց կողմանցն»։ Եւս. Ժմ. 163.—«Դեմեալոս Պաշարիչն՝ վերնոց կողմանց և Ասորոց»։ անդ, 170.—«Ասորոց և Բաբելոնի և վերնոց կողմանցն թագաւորեաց Սելեւկոս նիկանովր»։ Նոյն, Քր. 128.—«Եւ ի միւս եւս՝ ամն դուսարէր դաւրս (Դեմեալոս) որդի Դեմեարի, և խաղայր ի վերայ Արշակայ (Պարթեի) ի Բաբելոն և ի վերին աշխարհսն»։ Նոյն, Ժմ. 166.

## 70

ԲԻԻ. 2. «Եւ որ հասին ի ժամանակի անդ ի ձեռս (տպ. ի ձեռն) նորա՝ տասն հազար հեծեալ»։ Դ. իդ. 140—141.—«Առնէր հանդէս ամենայն զաւրացն զնդին՝ որ հասին ի ձեռս նորա տասն հազար»։ Ե. ա. 186; Այլուր. «Գուսարէր զզաւրսն իւր ըստ բաշոպ ժամանակին որչափ և եկն ի ձեռն (ի ձեռս?) իւր՝ քսան հազար»։ Ե. լԺ. 248:

ՄԿԲ. «Վաղվաղակի զունդ մի յերկց հազարաց . . . արձակեաց (Յովնաթան) ի թիկունս թագաւորին . . . և ուրախ եղև թագաւորն ի հասանել նոցա ի ձեռս նորա»։ Ա. Ժա. 44:

## 71

ԲԻԻ. 2. «Իբրև զպցին զաւրավաբքն զաւրաց թագաւորին Պարսից՝ եթէ զաւրածողով է ի վերայ նոցա զաւրավարն հայոց Վասակ»։ Դ. իդ. 141:

ՄԿԲ. «Իբրև զայն լսէր նրէն (Սըէն?) ի խան զաւրացն Ասորեստանեայց, եթէ զաւրածողով է Յուդա»։ Ա. գ. 13.—

—«Արդ ես զաւրածողով եմ զաւրաւք բազմաւք». թե. 3.—  
«Ասիդացիքդ... զաւրածողով են, ի մարտ պատերազմի պա-  
տրաստեալ են». Բ. ժդ. 6:

==ԴԻՏ. *Չաւրածողով եմ, այս ինքն Չաւրս ժողովեալ  
եմ, չիք յայլ գիրսւ Կայ յԱւաջին Դասի Չաւրածողով լինիմ,  
զոր տես յԱզաթ.==Մկր. Թիւ 17, ԴԻՏ. Կայ եւ յԵրբորդ Դասի  
Չաւրածողով առնեմ. Կիւր. Կոչ. Ա. 3—4:*

72

ԲԻԻԶ. «Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արքայն Հայ-  
ոց հանդերձ իւրովք զաւրաւքն զԱտրպատական սահմանաւքն, զի  
անդ սպասէր զաւրացն Պարսից». Դ. իդ. 141. (2. ունի «Եւ նա  
մինչ դեռ». այլ ի համեմատութենէ հատուածին Մկր. կը ստու-  
գուի որ սելիդ ընթերցուածն է ըստ տպ. «Եւ մինչ նա դեռ»:)  
ՄԿԲ. «Յաւուր յայնմիկ անկան քահանայք ի պատերազմի  
անդ, մինչ նա դեռ կամէր քաջութիւն ինչ առնել». Ա. և. 67.  
(յայն բնագիրն այլազգ է:)

73

ԲԻԻԶ. «Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ... զԱտրպա-  
տական սահմանաւքն... նոցա (Պարսից) ընդ այլ կարթեալ  
ասպատակ յաշխարհն Հայոց առնէին». Դ. իդ. 141:

ՄԿԲ. «Եւ անտի կարթեցին իբրեւ քսան վտաւանաւ ի  
վերայ Տիմոթէի, եւ անկանել կամեցան». Բ. ժր. 10:

==ԴԻՏ. *Ինչպէս գրած եմ ի Հայկ. Բառարնն. և. 60,  
տպագիրն Բիւզանդոյ ունի «Ընդ այլ կարթել». (այսպէս եւ եր-  
կրորդ տպ. 145): նոր Հայկագեանն կը համարի թէ Կարթել զոյ-  
ական բառ է, նոյն ընդ թուրքերէն զաթ կամ զըթ, եւ Կողմ  
կը նշանակէ. եւ թէ յայս Կարթել բառէ կ'ելլէ Կատապան,  
իբր Կողմնապետ: Բայց սխալ է թէ կարթել ընթերցուածն, թէ  
կողմ նշանակութիւնն, եւ թէ Կատապանի ի Կարթել ստու-  
գարանութիւնն: Պէտք է կարգալ ի Բիւզանդ շինդ այլ կար-  
թեալ». զոր կը հաստատէ Մակարայեցոց կարթեցինն, եւ մա-  
նաւանդ Ղ. Փարպեցոյ յաջորդ տեղիդ. (յայտ է թէ Փարպեցի  
բազում ուրեք Բիւզանդոյ ռճոյն կը հետեւի.) Յայլ կողմն կար-*



[Թեալ՝ ըստ աներեւոյթ ձորոցն խորութեան՝ հասեալ կայր՝ զկնի ուխտապահ՝ զաւրացն հայոց ի կողմանէ»։ Պտմ. 217։ Արդ՝ Փարպեցւոյն յայլ կողմս կարթեալ՝ ճշդի նոյն է ընդ Բիզանդայն «ընդ այլ կարթեալ ասպատակ . . . առնէին»։ որ յերես 142 վերջնոյ մատենին՝ կ'ըսուի նա եւ «ընդ այլ դիմեալ՝ ասպատակօ կապէին»։ եւ այլուր. «հատին զարձուցին ընդ այլ շըրջեցին զգետն»։ Ե. իդ. 220. Կարթեմ՝ նոյն է ընդ զազդիականին Faire un crochet (Crochet = Կարթ), այս ինքն՝ Փոխել զճանապարհն կամ զուղին, ինչպէս կ'ըսուի ի Վարս հարանց, Հ. Ա. 579. «Միայնակեաց մի իջանէր ի լեռնէն, եւ ետես հաւատաւոր մի, եւ փոխեաց զուղին»։ Իսկ Կատապան, ստորին լատիներէն Catapanus, Catepanus, Catipanus, է ի յունականէն *katepáno* (*ton axiomáton*), գղ. préposé (aux dignités). տես Catapan ի Լիարէի *Dict. de la langue française*, ուր այս բառ կը մեկնուի Պաշտօնեայ յոյն կայսերաց յիտալիա՝:

74

ԲիՒԶ. «Ասպատակ տունեալ առնուին զամենայն Աւրպայական երկիրն»։ Դ. իե. 145:

ՄԿԲ. «Յաւժարէին այնուհետեւ ասպատակ տալ ի Տեթանոսս՝ որ շուրջ էին գնորաւք»։ Ա. դ. 25:

Տես եւ «Ասպատակ սփռեմ» յԱղաթ. — Բիւզ. Թիւ 19. եւ «Ասպատակ դնեմ» յԵգաթ. = Մկր. Թիւ 2:

75

ԲիՒԶ. «Ապա կրկնէր լինէր զաւրածողով Չապուն արքայ Պարսից»։ Դ. իդ. 149. — «Թագաւորն Պարսից կրկնէր լինէր զաւրածողով»։ Ե. դ. 192. (2. յերկսսին եւս տեղիսդ ունի

1. Սխալ թուի ի Lebeau, *Hist. du Bas-Empire*, Հ. ԺԳ. 169. *scatapan* signifie un homme chargé de tout. նոյնպէս եւ ի ծանօթութիւնս Վարդանայ Երեւելցւոյ, Պտմ. 104. Վենետիոյ, Կ. 99, ծան. 1. «Կատապան, թուի յոյն *kathapan*, իբր ամենազետ կամ համակար իշխան»։ Տունարէն *kathapan*, (որ հայերէն կը փոխուի Կաթապան, եւ ոչ Կատապան,) մակբայ է, եւ կը նշ. Բովանդակ, Ամենեւին Տիրչման ուսուցչապետն (Հանդէս ԱՄՏԵՐԵԱՅ, 1834, 156 ա) կը ստուգարանէ Կատապան = Capitano.

«կրկին լինէր զօրաժողով», տես տպ. Բ. Պատկ. 127, 161. բայց եւ աստ հաստածն Մկր. կը հաստատէ որ հարազատ ընթերցուածն է «կրկնէր լինէր».)

ՄԿԲ. «Գարձեալ կրկնէր լինէր զաւրաժողով (նրէն կամ Սրէն) . . . զալ հասանել խնդրել վրէժ յորդոցն Իսրայելի». Ա. գ. 15: — ԴԻՏ. Այլուր ի Մկր. Ա. թ. 1. «Գարձեալ անդրէն կըրկնեալ յղեաց զԲաքիդ եւ զՅակիմոս»: Այս ձեւս կը գտնուի ե յԵրկրորդ Գասի. «Կրկնեալ առաքեաց զնա անդրէն ընծայիք: եւ պատուով ըսա արժանի այնմ սրպէս յղեալն էր զնա». Լաբուր. 37: Կամ զոյդն տարբերութեամբ. «Կրկնեցաւ եկն նա անդրէն յԱղեքսանդրիա». Եւս. Եկեղ. 2. Ժգ. 462:

76

ԲԻԻ 2. «Բայց Մերուժանն ապրէր փախստեայ». Դ. լղ. 151: ՄԿԲ. «Եւ բազումք ի նոցանէ խոց վիրաւորք եւ ապիկար մերկանդամք փախստեայր ապրեցան». Բ. Ժա. 12:

77

ԲԻԻ 2. «Առաջնորդ ի ձեռին ունէր զՄերուժանն Երժրունի». Դ. խր. 154.— «Առաջնորդ ունէր ի ձեռին զՄերուժանն վատանշան». լա. 148:

ՄԿԲ. «Առաջնորդ ի ձեռն (ի ձեռին?) ունէր զՄենեղաոս, որ աւրինացն եւ աշխարհին եւ զնդին մտանիչ եւ զահիճ եղեալ էր». Բ. Ե. 15:

78

ԲԻԻ 2. «Եւ զակիչ ածեալ յամուր տեղւոջ միոջ, կամէր կուռել ընդ թագաւորին Հայոց ընդ Արշակայ». Դ. խր. 158: Այլուր. «Թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմս յերկրին Մարաց». իգ. 143:

ՄԿԲ. «Թողեալ էր պահապանս զաւրս ի տեղւոջ միոջ ուժգին ամբացեալ». Բ. Ժբ. 18:

— ԴԻՏ. Յայլ գիրս կ'ըսուի. «Եւ եղև ի տեղւոջ ուրեք կալ յաղաւթս». Դուկ. ԺԱ. 1.— «Եւ յաւուրս նորա իբրև ի յարութեանէ մեռելոց երեւեցաւ ի տեղւոջ ուրեք Նարկեսոս». Եւս. Եկեղ.



2ևուագրի մի կամայական գրութիւնն «տակայն եղ սիրտ՝ խոնարհութեամբ հրովարտակս առաքել առ Չապուհ . . . »: Իսկ Գեր. Այտընեան, *Քնն. Քեր.* և. 113, ծան. 107, կը գրէ. «Սակայն ետ սիրտ՝ . . . հրովարտակ տալ»: Այլուր. «Ուխտից նամակ գրեալ եւ կնքեալ՝ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից». Դ. իա. 136. եւ փոքր ինչ զկնի. «Ջայս ձեւ աւրինակի բանիցն կնքէր մուրհակ, եւ տայր թագաւորին Պարսից»:

ՄԿԲ. «Ետ հրովարտակս Աղեքսանդրոս առ Յովնաթան, զի եկեսցէ նա առ նա». Ա. ժ. 59.—«Ետ հրովարտակս առ Յովնաթան, զի մի եւս զբերդն շուրջ պաշարեալ պահիցէ». ժա. 22.—«Վասն այսր ամենայնի հրաման ետ հրովարտակս տալ առ Յովնաթան աւրինակաւս այսուիկ». անդ, 29.—«Հրաման ետ թագաւորն հրովարտակս տալ, յայտ առնել թէ չէ հաճեալ ընդ դաշինս հաւանութեանն». Բ. ժդ. 27. Այլուր. «Եւ որչափ միանգամ Մակարէ նամակ ետ ցլխտիսս վասն Հրէիցն, թողացոյց նոցա արքայն». Բ. ժա. 15:

ԳՊԹ. «Յիրաւի ճանաչելոյ վասն զմիաբանութիւնն՝ տայ թուղթս (Պարոս) եւ առ Երրայեցիսն». Գլուխք Երր. 1171 Բ. 26. Տես եւ «Հրովարտակ առնեմ» յԱզաթ. = Մկր. թիւ 27:

== ԳԻՏ. Տամ (հրովարտակ, նամակ, մուրհակ, թուղթ), է Առաքել, ինչպէս կ'ըսուի այլուր ի Մկր. «Եւ առաքեաց Անտիոքոս . . . հրովարտակս ի կղզեաց անտի առ Չմաւոն». Ա. ժե. 1. Այսպէս եւ ի Վարս Մաշտոցի, 26. «Եւ բազում թուղթս խրատագիրս եւ զգացուցիչս (զգաստացուցիչս? զգուշացուցիչս?) ընդ ամենայն դաւառս առաքէր»: Այս է եւ միակ գործածականն յԱռաջին Դասի. «Ես առաքեցից հրովարտակս առ արքայն Իսրայելի». Դ Թագ. և. 5.—«Եւ զրեաց Յէու հրովարտակ եւ առաքեաց ի Սամարիա առ իշխանսն». անդ, փ. 1.—«Գրեաց հրովարտակս եւ առաքեաց առ Սեթուս՝ զգացուցանել նմա զամենայն». Եւս. փմ. 112.—«Փոխանակ զի առաքեցեր դու յանուն իմ թուղթս առ ամենայն ժողովուրդն». Երմ. ԻԹ. 25.—«Եւ ընթերցչիք զթուղթդ զայդ զոր առաքեցաք առ ձեզ». Բարուք, Ա. 14: Թող Հրովարտակ եւ թուղթ գրեմ, որ հասարակ է ամենայն Դասուց»:

զամեկուրդամայ յոգնս քմ զամ յամբանայ զսո 781 յսո բոզոզն յմ զնո եւոզո աղ



81

ԲԻԻԶ. «Իսկ եթէ հաճեմք ես եւ դու ընդ միմեանս, եկ տեսցուք զմիմեանս». Դ. ծգ. 164:  
ՄԿԲ. «Ե՛կ յանդիման լիցուք միմեանց ի բարաքն Պողոսմէացւոց, զի տեսցուք զմիմեանս». Ա. ժ. 56:  
==ԴԻՏ. Կայ ի Դ Թադ. ժԴ. 8. «Ե՛կ յանդիման լիցուք միմեանց երեսուք»:

82

ԲԻԻԶ. «Եղի ընդ նմա ուխտ խաղաղութեան, եւ երդուաւ ինձ յիրեանց արեւնս քրիստոնէութեանն». Դ. ծգ. 165:  
Այլուր. «Սիրով հաշտ եւ միարան կալ ընդ նմա յուխտի խաղաղութեան». Դ. իա. 136:  
ՄԿԲ. «Աճապարեացուք, ասէ, ղնել ընդ նմա ուխտ խաղաղութեան, մինչ չեւ եղեալ իցէ ընդ նոսա ուխտ Ազեքսանդրեայ վասն մեր». Ա. ժ. 4:

83

ԲԻԻԶ. «Ես նմա բիր բարիս խորհեցայ՝ որպէս հայր որդւոյ՝ կատարել նմա». Դ. ծգ. 165:  
ՄԿԲ. «Ճճարտութեամբ այցելու եղիւ (Աստուած) Հրէիցն՝ որպէս հայր որդւոց լինիցի». Դ. է. 4:  
==ԴԻՏ. Կայ յայլ գիրս. «Նա սկսաւ նոցա իբրեւ հայր որդւոց խրատ մատուցանել». Վարք Յոհ. Թեղք. 110.—«Զիրաքանչիւր որ ի ձէնջ՝ իբրեւ հայր զորդիս՝ մխիթարէաք եւ սփոփէաք». Ա Թես. Բ. 11—12:

84

ԲԻԻԶ. «Նախ ամենեքեան իբրեւ բազմեցան յիրաքանչիւր չափու, յետոյ աժէին բազմեցուցանէին զարքայն Արշակ». Դ. ծգ. 168: Այլուր. «Սոյնպէս եւ զամենայն ազգսն՝ զարացն մեծամեծացն նահապետացն, որպէս առ առաջին թագաւորաքն (տպ. որպէս առաջին թագաւորքն) նուաճեալք յիրաքանչիւր չափու». Դ. ք. 66.—«Մեծամեծքն յիրաքանչիւր զահու, եւ

գործակալքն յիրաքանչիւր չափու»։ անդ, 67.—«Եկին ապա եւ մնացորդք ի տանէն Սիւնեաց պատանեակք (տպ. պատանեակ) երէք . . . եւ կացոյց տէր զԲարիկ ի վիրայ երկրին, եւ զերկուան եւս ըստ իւրաքանչիւր չափու»։ Ե. խր. 250: ՄԿՔ. «Երբիւ . . . սողոս տոճարին ամենայն պատրաստեալ էր, եւ կոշնականքն յիրաքանչիւր ի չափս յարինեալ կային»։ Գ. Ե. 8:

==ԳԻՏ. Բազմել կամ Յարինեալ կալ յիրաքանչիւր չափու է նսալ յիրաքանչիւր կարգի, իւրաքանչիւր որ յիւրում տեղոջ: Կայ այս եւ յսկ. Ես. Ժ. 125. «Զոր արինակ որ զարմանազորձ արուեստական, ոչ վայրապար մամնիցէ ի հանդիսական հրապարակն, եթէ ոչ նախ տեսանիցէ մտեալ զամենեսին նստեալ (տպ. նստել) յիրաքանչիւր չափս եւ ի կարգս, եւ ապա մտանիցէ ցուցանել զհանդէս արուեստին, նոյնպէս եւ Աստուած ի լեառն Սիոն եւ յԵրուսաղէմ, յորժամ կարգեալ նստիցին յիրաքանչիւր չափս՝ իբրեւ յատենին»: Իսկ ի միւս վկայութիւնս Բիզանդայ Չափ է յատկապէս Կարգ, Աստիճան, Պայման: Անդ, Ե. դ. 198, Ըստ իւրաքանչիւր չափու՝ է Ըստ իւրաքանչիւր կարի. ինչպէս եւ Ըստ իմում չափուս, Գ. դ. 70, է Ըստ իմում կարի. սովին մտօք Ըստ իմում չափու տես եւ ի Սերիք. Ա. 1:

85

ԲԻԻԶ. Էսկ նոքա ի ներքս ամրացեալք, յուսային ի տեղոյն ամրութիւնն»։ Գ. ԺԵ. 170: ՄԿՔ. «Էսկ այն որ ի ներքս անդ էին, յամրութիւն քաղաքին յուսացեալ էին»։ Բ. Ժ. 34.—«Էսկ որ ի ներքս անդ էին՝ ի պարսպացն ամրութիւն յուսացեալ էին»։ Ժք. 14:

(Ագաթ. նովին ոճով. «Մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն զաւրացն ապաստան եղեալ, եւ ի քաջութիւն զաւրացն յուսացեալ»։ 31:)

==ԳԻՏ. Այլազգ յՐ Ար. ԻԸ. 52. «Մինչեւ կործանեացին պարիսպք քո բարձրացեալք եւ ամօրք՝ յորս գուն յուսացեալ իցես»:

86

ԲԻԻԶ. «Եւ զամենայն շինուած քաղաքին՝ հրծիգ արարին զփայտակերտն, եւ զքարակերտն քանդեցին»։ Դ. ծԵ. 171:

ՄԿԲ. «Հրծիգ արարին զամենայն փայտակերտ զապարանից նորա»։ Ա. ժա. 48. — «Հրծիգ արար, զամենայն փայտակերտ զապարանից նորա»։ Ա. ա. 33. — «Եւ զամենայն փայտակերտ քաղաքին հրծիգ անէին»։ Բ. ժ. 36: Այլուր. «Զփայտակերտն հուրք դատել, եւ զկաւակերտն ջուրք լուանար»։ Գ. Ե. 23:

87

ԲԻԻԶ. «Անմարդի եւ թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին (զքաղաքն Արտաշատու)»։ Դ. ծԵ. 172:

ՄԿԲ. «Առէր անմարդի զԵրուտաղէմ [ի] հրէից կացուցանել»։ Բ. թ. 4. (տպ. հասուցանել. այլ նոր Հայկազեանն ունի կացուցանել ի բառն Անմարդի, համեմատ Բիւզանդայ եւ յաջորդ վկայութեանդ.) — «Վասն զտուրք քաղաքն հարթյատակ եւ անմարդի կացուցանել»։ անդ, 14:

88

ԲԻԻԶ. «Եւ տայր հրաման Չապուհ . . . զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել»։ Դ. ծԵ. 177: Այլուր. «Թափեաց յինքն զամուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր Պարսկացն»։ Ե. ա. 187:

ՄԿԲ. «Հրձիգ անէր զամուր ամուր տեղին թշնամեացն»։ Բ. Ը. 6: Այլուր. «Հասանել հարկանել խուղի զամուր ամուր կողմանսն»։ Բ. ժ. 14:

Տես եւ «Պատեհ պատեհ տեղիք» ի Կար. = Բիւդ. թիւ 33:

== ԴԻՏ. Կայ ի Դ Թագ. ԺԸ. 13. «Եւ յամին շորքտասաներորդի արքայի Եղեկիայ, եւ Աննքերթմ արքայ Ասորեստանեայց ի վերայ ամուր ամուր քաղաքացն Յուդայ»:

89

ԲԻԻԶ. «Վահանն Մամիկոնեան եւ Մերուժանն Արծրունի . . .

ապստամբեալք էին յուխտէ աստուած պաշտութեանն»։ Գ. ծթ. 177:

38

ՄԿԲ. Ապստամբ եղեն յուխտէ կտակարանացն սրբութեան»։ Ա. ա. 16: Այլուր. «Եւ ժողովեցան առ նոսա այր ամենայն՝ որ ապստամբ լեալ էր յարինաց անախ»։ Ա. ա. 55:

90

ԲԻԻԶ. «Ժակ գտիկինն Ռշաունեոց [տարան] ի միջնաբերդն Վան բերդի»։ Գ. ծթ. 178: (Միջնաբերդ է զդ. Citedelle.)

ՄԿԲ. «Զարահատոյց անէր ի վերայ միջնաբերդին պաշարել զնա»։ Ա. դ. 41.— «Որ ի միջնաբերդին էին արգելեալք»։ դ. 18.— «Փակեալ պաշարեալ պահեն զմիջնաբերդն Երուսաղեմի. անդ, 26.— «Զուեաց խաղաց զնաց Յուդա ի միջնաբերդ յամրոցէ անախ»։ անդ, 32. և ժա. 41. ժր. 36. ժգ. 21, 49, 50, 53. ժդ. 36. ժե. 28. Բ. ժե. 31:

91

ԲԻԻԶ. «Գլխովայր կախեցին զնա (զՀամագառոտուհի) զբարձուէն կուտէ . . . և փաղփաղէր մարմինն ի բարձուէն զոր արինակ ձին սպիտակութեամբն»։ Գ. ծթ. 178.— «Եւ ի բարձուէն նայեսցիս, և տեսչիր զջան վաստակոց պատերազմին մերոյ»։ Ե. դ. 194:

ՄԿԲ. «Եւ զաւրացն ընդ զրունսն խուժելոյ, կամէր ելանել ի վեր և զանձն ի բարձուէ ընդ պարիսպն հոսել»։ Բ. ժդ. 43: ԳՅԸ. Բարձր գոյական է յօրինակոց, և կը նշանակէ Բարձրութիւն, ինչպէս կ'ըսուի յՈսկ. Փիլիպ. Ը. 435. «Բաղում մեքենայք են այսոյն շարութեանց հնարել ընկենուլ գքեզ ի բարձրութենէն»։ Իսկ յԵբրոյրդ Գաթի. Ամանք . . . ի վեր իսկ ի ծայրս առաքինութեան հասին, և ի կատարածի ի վերուստ ի բարձանց անախ անկեալ կործանեցան»։ Վարք ՅՅ. Թեղք. 101—102: Փոխանակ ի բարձուէ քացառականիդ՝ թարգմանիչն Եւ. Եկեղ. ըսած է. «Եւ պատկերք՝ որ վասն նորա և որդոց իւրոց յամենայն ի քաղաքս հղեալ էին, էին՝ որ ի բարձու ի յերկիր ընկեցեալ լինէին և մանրեալ, և էին՝ որոց գերեւս ի-



րեանց մրով մրեալ լինէին»։ Թ. ժա. 711. — «Եսկ կէսք որ վախ-  
չէին ի փորձանաց անախ սոցա, մինչ չեւ ըմբռնեալ էին նոքա  
ևւ անկեալ ի ձեռս թշնամեացն՝ ի վերուստ բարձու եւ ի ա-  
նեաց զանձինս իւրեանց ի խոնարհ արկանէին»։ Ը. ժր. 644:—  
նման ի բարձուէն նայել եւ Ձանձն ի բարձուէ հոսել առ-  
ցուածոց՝ կ'ըսենք ցայսօր աշխարհաբար Բարձրէն նայիլ, Ինք-  
զինք բարձրէն վար նետել։

92

ԲԻԻԶ. «Յայս տեսիլ տիկնոջն Համազասպունհայ՝ էառ  
կին մի դայեակն նորին, ագառ նա պարեզաւտ մի . . . եւ կայր  
առ բարձր գահուն քարին»։ Գ. ծթ. 178: . . .  
ՄԿԲ. «Սիրան որակալ եւ ակն նախանձալից՝ . . . յայն  
ողորմ տեսիլ շարչարանաց մարդկանն՝ արտասուք (արտասուս?)  
քամէին»։ Գ. դ. 4:

93

ԲԻԻԶ. «Յաւուրց ժամանակին ի մահուանէն Գնելոյ մինչեւ  
յայն ժամանակն թագաւորութեանն Պարսոյ՝ ոչ էր երթեալ նա  
ի բանակն արքունի»։ Ե. ա. 186: Այլուր. «Վաղ աղղ առնէին նմա  
զիրսն մինչ չեւ հասեալ էր նա ի սահմանս Ատրպատականի»։  
Գ. իա. 137. — «Վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետ՝ մինչ չեւ  
եկեալ էր նա (այս ինքն՝ Մանուէլ. իսկ ասլ.՝ մինչ չեւ եկեալ  
էր ի նա)»։ Ե. լէ. 240. — «Եւ մինչ չեւ նա եկեալ էր, խորհէր  
արքայն ընդ իւր ծառայան»։ Գ. ի. 51:

ՄԿԲ. «Ընդ այն ժամանակս դէպ եղիւ դառնալ Անտիոքայ  
մեծաւ կորանալք ի կողմանցն Պարսից. քանզի էր երթեալ նա  
ի քաղաքն ի բուն նոցա»։ Բ. թ. 1:

— ԴԻԾ. Անցեալ գերբայն ընդ Եմ՝ Էական բայի՝ սովորա-  
բար սեռական անուն բայի կը պահանջէ, էր երթեալ նորա,  
որ ի Բիւզ. եւ ի Մկր. կ'ըսուի յուղղականն էր երթեալ նա:  
Մանաւանդ Մինչ չեւ մակրայի կ'ըսուի «Մինչ չեւ եկեալ էր  
նորա», Եղեկ. ԼԳ. 22. Եփր. Բ. Կոր. Է. 101. եւ ոչ ըստ Բիւ-  
զանդայ՝ «Մինչ չեւ եկեալ էր նա, Մինչ չեւ հասեալ էր նա».  
այլ կայ ի Յովհ. Գ. 31. «Եւ մինչ չեւ եկեալ էին նորա, աղա-

չէին դեա աշակերտքն եւ ասէին. Ռարբի, հաց կերս: Եւ իւրա-  
բուր. 3, «Մինչ չեւ երթեալ էին նորա անդր»:

94

Բի՛2. Եւ ամէր գամենայն հանդէսն (գարացն) . . . զըր-  
րաւշս փողփողեալս՝ եւ նշանս արձակեալս. Ե. ա. 186—187.  
— «Նշանս արձակեալս (սպ. արձակեալք), զրաւշս փողփողեալս,  
ըստ գեղն Աւան (սպ. ըստ Գեղն աւան) ի դուրս ելանէր (Մա-  
նուէլ գնդաւն)». իգ. 253:

ՄԳԲ. «Զայն անկ տեսիլ Յուդա հայեցեալ տեսանէր, զզըն-  
դացն զրաւշու զրաւշու պատրաստութիւն, . . . զնշանացն փող-  
փողելը».<sup>2</sup> Բ. Ժե. 21:

==ԴԻՏ. Նշանս արձակեալս է գգ. Enseignes déployées.  
Դրաւշս փողփողեալս, գգ. Drapeaux flottants, եւ Փողփողել  
(նշանաց), գգ. Flotter, Ondoyer, Voltiger en ondoyant. իսկ ի  
գիրս Ելից, ԼԹ. 15, 17. Եւ արարին ընդ տախտական վերջս  
փողփողեալս ի վերայ երկուց աւղոցն, գործ հիւսկէն յոսկոյ  
սրբոյ . . . եւ եզին զվերջսն փողփողեալս ի վերայ երկուց  
աւղոցն, յերկոսին կողմանս տախտակին, եւ յերկոսին խառ-  
նուածսն զերկուս վերջսն փողփողեալս». այս «վերջք փող-  
փողեալք» է ըստ յունին հիւսեալք, ինչպէս կը մեկնէ նոր  
հայկազեանն: Նոյն թուի եւ յԱգաթ. «Զթագաւորս չքեղացու-  
ցանն ի նմանութիւն արտախոյրն սլտակի՝ ի վերջաւորս (սպ.  
ի վերջաւորն) փողփողելոյ». Յռջր. 14. — «Սակեղէն եւ արծա-  
թեղէն զարդուք՝ ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ  
պալարակապ մետաքսիքն». 34:

95

Բի՛2. «Թագաւորութիւնն հող քան զհող նորոգէր, եւ իրք  
ժամանակին հող քան զհող յառաջադէմ՝ աջողէին». Ե. ա.  
188. (տես Հաղ յԱգաթ. = Բիւզ. թիւ 46, ԴԻՏ.):

1. «Ռագմ է բազում զարաց, եւ բազում զրաւշք երեւին փողփո-  
ղեալք». Զեհոր, Պատմ. Տարաւնոյ, 26:  
2. «Դրաւշքն տարածանէին, եւ նշանքն փողփողէին». Թ. Արծր. 121:

ՄԿԲ. «Իբրևի զայն տեսանէր Փիլիպպոս՝ զի դամ քան զդամ իբր տանն յառաջադէմ աջողէին»։ Բ. ք. 8:

96

ՔԻԻԶ. «Եկն եհաս մի զեսպան յարքայէն... և ունէր առ նա հրովարտակ...: Եւ նա իբրևի զայս հրամանս ընկալեալ ի ծնուն առնոյր, յղէր առ մարգպեան Հայր դառով»։ Ե. դ. 191: Այլուր պարզապէս. «Եւ բերդակալեանն յըժամ զայն հրաման ընկալան, ամենայն որ ո՛րք առ ումեր էին՝ նեղեցին զնոսա»։ Գ. ծ[Թ]. 178:

ՄԿԲ. «Հրաման տուաք՝ զաղվաղակի իբրևի ի ծնուն առնուցուր զայդ մեր առ ձեզ հրովարտակս, զմոլեկան չարագործսդ... աս մեզ արձակել»։ Գ. դ. 16:

— ԳԻՏ. Համեմատէ ընդ Մկր. հատուածին. «Իբրևի հասանիցէ առ ձեզ հրովարտակդ այդ»։ Գ Թագ. Ժ. 2.— «Իբրևի հասցէ առ քեզ հրովարտակդ այդ»։ անդ, Ե. 6: (Տես և ի Թ. Արժր. 169. «Արդ ի հասանել նամակիդ, փութով դժուրդէն... առ մեզ հասուցես»):

97

ՔԻԻԶ. «Իբրևի զաւրահատոյցն առնէր Ջապահ Պարսից թագաւորն զգաւրս իւր ի վերայ աշխարհին Հայոց»։ Ե. դ. 192:

ՄԿԲ. «Ջաւրահատոյց առնէր ի վերայ միջնաբերդին»։ Ա. դ. 41.— «Ջաւրահատոյց արարին, ընդ երկու զգաւրսն բաժանեցին»։ Ե. 20: Այլուր, «Ջաւրահատոյց լինէր, և զայր պաշարէր»։ Ա. Թ. 63:

— ԳԻՏ. Ջաւրահատոյց առնեմ կամ լինիմ, այս ինքն Առաքել մասն մի զօրաց, զդ. Détacher, է ի բառիցն Ջաւր հատուցանեմ, հատանեմ, ինչպէս կըսուի այլուր ի Մկր. «Հատոյց զաւր աւելի քան զհինգ հարիւր, երթալ ի բուն առնուլ զնոսա»։ Բ. ժդ. 39.— «Ի գալուստ ամին միւսոյ՝ զաւր հատանէր, այր և ձի առնէր»։ Ա. դ. 28:

98

ՔԻԻԶ. «Մինչդեռ խաղացեալ (տղ. խօսեցեալ) զային զաւրքն Պարսից ի վերայ Հայոց, և Ռունայր՝ արքայ Աղուանից՝ իւրով

զնդան ընդ նոսա». Ե. դ. 193.—«Եւ Մանուէլ սպարապետն հասանէր իւրով զնդանն ի նոյն տեղի»։ Լէ. 241.—«Ընդէն ընդ առաջ ելեալ նոցա Մերուժանայ իւրով զնդանն»։ Խդ. 253; Այլուր. «Եւ մինչդեռ գայր Մերուժանն ի ճանապարհի զնդանն իւրով, դիպեցան նմա ուղեւորք»։ անդ, 252; Եւ այլուր. «Հեծանէր իւրով զնդանն հանդերձ»։ Ե. դ. 195.—«Հանդերձ իւրով զնդանն . . . ի նոցա գունդն խառնեցաւ»։ Խդ. 253; Տես եւ իմով զնդանս (տպ. զնդովս)։ Ե. դ. 192. Եւ 193; ՄԿԲ. «Եկն եհաս Յուդա իւրով զնդանն. Ա. դ. 42.—«Եւ ինքն իւրով զնդանն ի վերայ Տիմոթէոսի հասանէր»։ Բ. Ժբ. 20; Այլուր. «Եթէ ոչ ի ձեռս իմ տաջիք զՅուդա զնդանն իւրով. . . . ի ձեռն զրէժ խնդրեցից»։ Ա. Է. 35.—«Եւ դարձաւ Յովնաթան յերուսաղէմ զնդանն իւրով»։ Ժ. 87:

99

ԲԻԷ. «Եւ հեծանէր (Մուշեղ) իւրով զնդանն հանդերձ, եւ զամենայն ճակատն Հայոց յարդարեալ յաջմէ գաւրացն Յունաց, յաջում թելի նա խաղայր յառաջ»։ Ե. դ. 195.

ՄԿԲ. «Բայց Բաքիդ յաջում թելի անդ ճեպէր զգաւրսն՝ ի ձայն փողոյ տաղնապաւ յառաջ մատուցանէր»։ Ա. Թ. 12. (զվերջին մասն հատուածիս բառ առ բառ տես յԱզաթ.—Մկր. Թիւ 20.)—«Իրբեւ ետես Յուդա՝ եթէ Բաքիդ ընտիր ընտիր դաւրաւք յաջում թելի անդ է»։ անդ, 14:

—ԴԻՏ. ԹԵԼ (զնդի կամ գաւրաց)՝ առանձինն՝ կայ այլուր ի Մկր. Ա. դ. 23. դ. 38. Թ. 1, 15, 16. Բ. Ժե. 20; նոյն թուի եւ ի Յուդիթ, ԺԳ. 2. «Իջանիցէր ի դաշտ անդր ի թել մի պարսկապանաց որդուցն Լուր»։—Հանգոյն հայոյս՝ ասորերէն ընէլի կամ ըէնիտ կը նշանակէ 1. ԹԵԼ (թուշնոց), եւ 2. ԹԵԼ (զնդի, բանակի). տես P. Smith, *Thes. Syr. Lուի*, 1767. նոյնպէս եւ լատիներէն Ala (exercitus), եւ զգ. Aile (d'une armée). մինչդեռ յոյնն կ'ըսէ keras, որ է եղջիւր: Ի Մկր. Ա. Թ. 12, Աջ թել ճշդիւ նոյն է ընդ ասորի թարգմանութեանն, ըէնիտ դ՝

1. Սովին նշանակութեամբ տես ԹԵԼ ի Զննոր, Պատմ. Տարաւնոյ, 47. յորմէ եւ ԹԵԼապետ, անդ:



յամին, kenpo d'yamino, այսինքն Թեւ աջոյ, ուր յոյնն ունի  
to dexion keras, Աջ եղջիր: տես P. Smith, անդ:

100

ԲԻԻ. 2. «Գարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան դաշ-  
տաց, լերանց բարձանց, խորոց, ձորոց»<sup>1</sup>. Ե. դ. 198:

ՄԿԲ. «Եւ երկայնէր ճակատն եւ զեղոյր՝ սր զբարձամբը  
լերանցն, սր զձորովք եւ զխորովք եւ զդաշտիրք». Ա. դ. 40:

==ԳԻՏ. Տպ. Բիւզանդայ ունի խորոց ձորոց, իբր՝ խոր  
ձորոց, խոր ձորերու. կիտաղրեցի ըստ հասունածին Մկր., եւ  
ըստ յաջորդ վկայութեանց. «Այսպէս ասէ Աղոյնայի Տէր Տէր  
ցլերինս եւ ցրուրս եւ ցխորս եւ ցձորս». Եզեկ. Ա. 4. —  
«ԼՍորք եւ ձորք եւ հովիտք եւ խոռձըք». Բրտ. Վեց. Գ. 72:  
Գարձեայ ի համեմատութենէ երկուց տեղեացդ Բիւզ. եւ Մկր.  
կը տեսնուի՝ որ առաջնոյն քով բարձանց ոչ է վերայիւր լե-  
րանց բառի, իբր՝ բարձր լերանց, այլ է սեռական Բարձունք  
դոյականի, եւ «լերանց բարձանց» նոյն է եթէ ընուէր «զաղա-  
թանց կամ կատարաց լերանց»:

101

ԲԻԻ. 2. «Եւ կամ մոլեկան զունդն Մուշեղեան. իբրեւ  
ի հուր հրդեհի՝ այնպէս անցանէր ընդ զունդն որպէս բոց ընդ  
եղէզն». Ե. Կ. 202:

ՄԿԲ. «Զեռն տաւր մեզ, եւ դադարեացէ զունդս մոլեկան  
(յոյնն՝ զունդս Հրեայ) ի կոտորածէ քաղաքիս». Ա. ժա. 50:

102

ԲԻԻ. 2. «Յաւուրց ժամանակաց՝ յորմէ թաղաւորութիւնս  
Պարսից կանգնեալ է». Ե. է. 207:

ՄԿԲ. «Յաւուրցն ժամանակաց հեաէ՝ յորմէ անջատար  
մեկնեցաք մեր ի նոցանէն». Ա. ա. 12:

1. Յորմէ եւ Եզ. Պատմ. Վարդան. Բ. 34. «Անդստին յանդնոց բար  
ձրանայ փրփրել կուտակել. . . որպէս զի (ըստ 2.) փլեալ տարածանիցի հա-  
մատարած ամենայն ի վերայ լերանց, խորոց, ձորոց»:

==ԳԻՏ. Յայլ գիրս. Յարե յորմէ. ելք, Թ. 18. Ղևտ. ԻԳ. 15. Թիւք, ԺԵ. 23. Ա Թագ. Ը. 8. և այլն. Յորմէ արեւ. ելք, Ժ. 56. Ես. Է. 17. Երեմ. ԼԲ. 31. Եփր. Թագ. Ա. 420. Յարե յորմէ հետէ. Ա Թագ. Է. 2. ԻԹ. 3, 6. Գ Թագ. ԻԱ. 15. Եղեկ. Ի. 5. Յարէն իսկ յորմէ հետէ. Ոսկ. Ես. Բ. 8. Յարէն յայնմանէ յորմէ հետէ. Եսթ. ԺԳ. 18. Յուդիթ, ԺԲ. 16. Կամ լսկ Յորմէ հետէ. ելք, Թ. 24. Թիւք, ԼԳ. 1. և այլն:

103

ԲԻԻԶ. ա. «Ի զխաւորացն բազումս սպանանէին, և զմնացորդսն ի հարկի կացուցանէին». Ե. Ժգ. 210.—«Զմնացորդսն նուաճէր և ի հարկի կացուցանէր». Ը. 209.—«Եւ զմնացորդսն ի հարկի կացուցանէր». Ժդ. 210—211: Ելլուր. «Եւ զմնացեալսն ի հարկի կացուցանէր». Ժբ. 210. Ժե. 211. Ժդ. 212: Եւ այլուր. «Եւ զաղզն ի հարկի կացուցանէր». Ժէ. 212: Գմանք. «Եւ զբնակիչս երկրին ի հարկի ծառայութեան կացուցանէր». Ե. Թ. 209.—«Ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան տա հասարակ կացուցանէր», ԺԹ. 212: Ելլուր չէզոքարար. «Եւ ինքեանք կային ի հարկի ծառայութեան». Ժբ. 212:

ՄԳԲ. ա. «Զնջեցին զնոսա, և զմնացորդսն ի հարկի կացուցին տալ նոցա հարկ ամ յամէ». Ա. Ը. 4: Ելլուր. «Զաշխարհս ամենայն ի հարկի կացուցանէր». Ա. 5. ս. 5.—«Զաւրացան ի վերայ նոցա և կացուցին զնոսա ի հարկի». Ը. 2: Ը. «Զամուրսն քակեցին, զաշխարհն ի հարկի ծառայութեան կացուցին մինչեւ յուրս յայտ». Ա. Ը. 10: Ելլուր. «Եւ զայլ թագաւորութիւնսն և զղղղիսն որ խլրաէին՝ սատակեցին և ի ծառայութեան կացուցին». անդ, 11.—«Կալան զերկիրն ի ծառայութեան». անդ, 10:

==ԳԻՏ. Փոխանակ Ի հարկի կացուցանեմ՝ Առաջին Դասն կ'ըսէ Դնեմ ընդ հարկաւ. Դատ. Ա. 28. Առնեմ՝ ընդ հարկաւր. Եւս. Ժմ. 94. Քբ. 136, 144. Ընդ հարկաւր նուաճեմ. նոյն, Ժմ. 165. Հարկատու առնեմ, անդ, 159. (Հարկատու լինիմ. Բ Ար. Ի. 11. Դատ. Ա. 30. Ողբք. Ա. 1. Ընդ հարկաւր լինիմ. Եւս. Ժմ. 160): Իսկ փոխանակ Ի հարկի ծա

նայութեան կացուցանեմ՝ կայ Արկանեմ ընդ հարկաւք ծառայութեան. Գ Թաղ. Թ. 21, (որ յ'Բ Մնաց. Ը. 8, բնուած է Ածեմ ի հարկատուս). Արկանեմ ի ծառայութիւն. Յուդիթ, Ե. 10: Տեսուի Արկանեմ ի հարկ ծառայութեան. Զդան, ԺԱ. 213:

104

ԲԻԻԶ. «Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ դեան Կուր, այնուհետեւ յինքն վտարեալ՝ դառնայր անտի»: Ե. ԺԵ. 211.— «Եւ եւ նորա յառաջու շատ լեալ ի միոջ վայրի»: Խղ. 253.— «Ուր յառաջու կայանքն էին մեծին Գրիգորի Առաջնոյ». Զ. Ժդ. 272:

ՄԿԲ. «Գարձոյց անդրէն զգերին՝ որ առեալ էր յառաջու յերկրէն Հրէաստանի». Ա. Թ. 72:

— ԳԻՏ. Ետաջու է Յառաջագոյն, մակրայ: Կայ Առաջու, ածական, յմտկ. Մտթ. Ա. Ժա. 156. «Զառաջու զչարիսն նոցա յայտ առնէ՝ թէ սրչափ բազումք եւ անհնարինքն էին»: ԶԳ. 110:

105

ԲԻԻԶ. «Ի վերայ աշխարհին [պատրաստ էր ի?] կեալ եւ ի մեռանել, ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց». Ե. Ի. 213: Տես «Անուն քաջութեան» աստէն Թիւ 31, եւ Ագաթ. — Բիւզ. Թիւ 202:

ՄԿԲ. «Իրբեւ ետես Լիւսիւս . . . զյաղթութիւն քաջալիրութեան զնդին Յուդայ, եւ որպէս զի պատրաստ էին ի կեալ եւ ի մեռանել ի վերայ անուան քաջի յաղթութեան, շուեաց խաղաց զնաց ի կողմանս Անտիոքացոց». Ա. դ. 35:

106

ԲԻԻԶ. «Այլ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս շինէր զամենայն աւերեալսն երկրին Հայոց. յանձանձէր (տպ. յանձն առնէր) եւ մխիթարէր, զարմանէր եւ տեսուչ լինէր ամենայն աղքատաց». Ե. Խա. 213:

ՄԿԲ. «Եւ անդ յանձանձէր զկաց մնաց ժողովրդեանն, մխիթարէր զամենեւին Յուդա». Ա. Ե. 53:

107

ԲԻԻՁ. «Եւ յետ այսորիկ սկսաւ զարիւնն զունդ զունդ ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իրբի զերկուս ժամս».  
Ե. իդ. 218:

ՄԿԲ. «Մինչեւ արիւնն զունդազունդ արտաքս հոսէր, եւ վէրքն չարաչար պատառեալ էին».  
Բ. Ժդ. 45:

— ԳԻՏ. «Այս զունդ զունդ արիւնն է՝ զոր ցայսօր պահած է մեր աամիկն».  
«Արիւնը կունտ կունտ քերէն զուրս կու գար».  
Քաղցիացիք կ'ըսեն. Il vomissait le sang à gros bouillons. Le sang sortait à gros bouillons կամ coulait à grands flots de sa blessure.

108

ԲԻԻՁ. «Ժողովիցան անչափ քազմութիւնք մարդկանն, ի մի վայր եկեալք կուտեցան, մինչեւ հատին զարձուցին ընդ սյլ շրջեցին զգեան».  
Ե. իդ. 220:

ՄԿԲ. «Սկսան պաղատել (աշխարհամար դպիրքն), եւ անհնար համարեցան անեկ զիր զաշխարհամար Հրէիցն. ասէ. Ոչ յաղթեմք վասն անչափ քազմութեանն».  
Գ. դ. 14:

(Ազաթ. «Անթիւ քազմութիւն մարդկան».  
477.— «Անթիւ քազմութիւնք մարդկանն».  
547, ըստ 2.)

109

ԲԻԻՁ. «Եթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս, հաւաքացեալս կրամուտորս».  
Ե. իր. 222:

ՄԿԲ. «Յայնմ ժամանակի՝ միաբանս միահաւանս վառեալ պատարաստեալ յառաջ մտաչէին».  
Բ. Ժա. 8:

— ԳԻՏ. Թարգմանիչն Ոսկերերանի Մեկնութեանցն Թղթոց Պաղոսի՝ թուի թէ միաբանս միահաւանս աստիճեանդ հեռեւ լով գրած է զյաջորդդ. «Ջնոյն խորհեցիք, զնոյն սէր ունիչիք».

1. Յորմէ եւ եղչ. Պամ. Վարդան. Բ. 22. «Այս ամենայն եղիսկոպոսք... միաբանք եւ միահաւանք, միահամուտ ժողովեալք ի թագաւորանիստ տեղին յԱրտաշատ».



*միասիրտք միահաւանք»*. Փիլիպ. Ե. 394. որ ի Թղթին Փիլիպեցոց, Բ. 2, է այսպէս. «Զնոյն խորհիջիք, զնոյն սէր յանձին ունիջիք, նամաշունչք, միախորհուրդք»: Եւ դարձեալ անդ, 396. «Միասիրտք, այս ինքն մի շունչ իցէ հասարակաց . . . : Զինչ իցէ միաշունչ. միահաւանք, առէ, լինիջիք»: Եւ ի Մեկն. Հո. Իէ. 383. «Զասաց լոկ թէ միով բերանով, այլ թէ միաշունչ հրամայեմ լինել»: Այս Միասիրտ եւ Միաշունչ թուին նոյնպէս առեալք յԱզաթանգեղէ եւ ի Բիւզանդայ. Վսկ սոցա զմիասիրտ ժողովն միասէրն խնդրել ի միմեանց». Ազաթ. 458—459.— «Որ միամիտք եւ միասիրտք էին». Բիւզ. Գ. իդ. 143.— «Այլ ինքն միակամ, միաշունչ, միախոհ ընդ չաւր եւ ընդ չողոյն». Ազաթ. 327: (Տես եւ ի Յճխ. ԺԹ. 182. «Միահաւան խնդութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց»):— «Նոր չայկզ. սխալ կը նշանակէ իբր յեփրեմի Թարգմանութենէն Աւետարանի. «Արրահամ էր միահաւանութիւն չաւր». այս վկայութիւն է ի ձառէն Վասն Երաշտի, որ թարգմանեալ է յետ Ոսկեդարուն, եւ կը գտնուի ի Հ. Գ. Մատենագրութեանց Եփրեմի, 202:

110

ԲԻԻԶ. «Արարեր զաւրութիւնս՝ ազգի ազգի նշանս՝ ի ձեռն սրբոց քոց, որք յազգս ազգս իւրեանց հաճոյ եղեն առաջի քո». Ե. իբ. 223:

ՄԿԲ. «Ամենեքին որ յուսացեալ են ի նա ըստ ազգս ազգս իւրեանց՝ ոչ տկարացին». Ա. Բ. 61:

111

ԲԻԻԶ. «Յետ եւթն ամին ապա դանձն արժանի ապաշխարութեան համարէր (թերահաւատ եղբայրն), ելանել առնուլ (գորբութիւն աւրինացն, այս ինքն՝ զհագորդութիւն), ընդ աւրէնան նաւատարել». Ե. իբ. 225:

ՄԿԲ. «Եւ ուր առ ումեք գտանէին զիրք Կոտակարանաց, կամ թէ ոք ուրեք ընդ աւրէնս նաւատարէր, հրաման թագաւորին զնա մահու սպանանէր». Ա. ա. 60:

112

ԲԻԻԶ. «Սկսաւ հրաման տալ (Պապ) . . . անբել զկուսաստանսն . . . քանզի յիւրում կենդանութեան երանելոյն ներսիսի էր շինեալ դայս (տպ. շինեալ. շինեաց դայս) կուսաստանս յամենայն գաւառս». Ե. լա. 228:

ՄԳԲ. «Արգելականք կուսանաց ի կուսաստանաց անտի ի դրունս եւ ի պարխսպս ընթանային». Բ. գ. 19. — «Վոյսք ի կուսաստանաց՝ մարբըն հանդերձ ի հրապարական հասանէին». Գ. ա. 10.

— ԳԻՏ. Կուսաստան առ Բիւզանդայ է Քրիստոնեայ կուսանաց վանք, զոր Ագաթ. 113, կը կոչէ Արգելավանք կուսանաց: Իսկ ի Մկր. նոյն Կուսաստան է Ո՛ եւ է կոյս աղջկանց ընտկարան: Առաջին Դասն երկու նշանակութեամբբող ալ ըսած է Կուսանոց, Կուսանաց տուն. «Չկարացին (զաւրականքն) անդրէն միսսանգամ ի բողանոց ածել (զպտունիկն զգաստացեալ), եւ ոչ ի կուսիցն կուսանոցաց՝ ուր ընկալան զնա՝ բռնադատել հաներ. Ոսկ. Մաթ. Գ. ժգ. Յորդ. 58. — «Խնդրեսցեն արքայի աղջկունս կոյսս՝ գեղեցիկս տեսանելով, . . . եւ տացին ածել ի Սուսէն քաղաք՝ ի կուսանոց մի». Եսթեր, Բ. 2-3. — «Սաստիկ հրայրեացք շինուածոց եղեն, եւ զպալատն (տպ. զպաղատան) եւ զկուսանաց տունն եւ զայլ ինչ բազում ապականեցին ի Հոսմ». Եւս. Բք. 164:

113

ԲԻԻԶ. «Խոտորեաց (Պապ) զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, . . . եւ յայտնեաց զթշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց». Ե. լր. 231:

ՄԳԲ. «Եւ խոտորեցաւ (Պաղոմէոս) յԱղեքսանդրէ, եւ յայտնեաց զթշնամութիւն իւր». Ա. ժա. 12. (միա զիւր նա եւ Խոտորեմ՝ եւ Խոտորիմ՝ բայից յերկոսին տեղիսգ):

114

ԲԻԻԶ. «Եւ կամեցեալ խնդացին զթագաւորելն նորա ի վերայ իւրեանց». Ե. լր. 234:

\* ՄԳԲ. «Նորա վեր ի վերոյ բանիւք խնդացին զվեր ի նոսա հասանել». Գ. գ. 11:

==ԳԻՏ. Նոր Հայկազեանն կը ծանուցանէ ի Խնդամ՝ Թէ հել-լինարանութիւն է հայցական խնդիր բայիդ: Նման հելլենական խնդրառութիւնք կը գտնուին բազում ուրեք եւ ի Թարգմանութիւնս յասորոյն, ինչպէս այլուր պիտի ցուցանեմ:

## 115

ԲԻԻԶ. «Եւ իրրեւ եղեն խառնորդք *երկոցունց գնդացն* ընդ միմեանս, ապա ի պարտութիւն մատնեցան զաւրջն Պարսից յերեսաց զաւրացն Քուշանաց». Ե. լէ. 239.— «Եւ ի դաշտին Կարնոյ լինէին խառնուրդք *երկոցունց գնդացն* ընդ միմեանս բախելոցն». անդ, 241: Այլուր. «Ընդ երիս բաժանեալ զզաւրսն, *երկուց գնդացն* զԱնդիկան եւ զՀազարաւուխա զաւրագլուխս կացուցանէր». Դ. իբ. 137: Տես եւ «Երբեւ եկին հասին մերձեցան ի միմեանս *գունդքն երկորեան Յունացն* եւ Պարսիցն». Ե. դ. 193:

ՄԿԲ. «Յերիս գունդս զզաւրսն բաժանէր, *երկոցունց գընդացն* զերկոսին զեղարսն զճմաւոն եւ զՅովսէպ զաւրավար կացուցանէր». Բ. ը. 22. (համեմատէ ընդ Բիւզ. երրորդ վկ.):

## 116

ԲԻԻԶ. ա. «Ոչ ինչ այնուհետեւ օտկաւ սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին, բազում խոցք եւ խեղք վիրաւորք». Ե. լէ. 242:

բ. «Եւ գայր հասանէր Համազասպեան, . . . անցանէր առ անկիւղք դիակամքն եւ առ խոց վիրաւորաւքն պատերազմին». անդ:

ՄԿԲ. ա. «Աւելի քան զինն հազար սպառազէն յառաջնում յարձակել անդ պակաս առնէին, եւ զայն՝ խոց եւ խեղս եւ վիրաւորս առնէին». Բ. ը. 24:

բ. «Եւ բազումք ի նոցանէ խոց վիրաւորք եւ ապիկար մերկանդամք փախստեալք ապրեցան». Բ. ժա. 12:

==ԳԻՏ. Խոց, ածական, այս ինքն՝ վիրաւոր, վիրաւորեալ, կը գտնուի այլուր առանձինն ի Բիւզ. եւ ի Մկր. «Ոչ խոց էր եւ ոչ վնասեալ ինչ». Բիւզ. Ե. լէ. 242.— «Յաւուր յայնմիկ

խոց մնայր Յուդա», Մկր. Ա. Ժդ. 9: Կայ նոյնպէս եւ յերեմ. 1է. 9. «Թէպէտ եւ զամենայն զարն Բաղդէացոց որ մարտնշէին ընդ ձեզ՝ կոտորիցէք, խոցքն որ մնայցեն ի նոցանէ՝ յիրաքանչիւր տեղոջէ յարիցեն եւ այրեսցեն հրով զքաղաքդ»:

117

Բիւժ. «Զի զքեզ կալցին կապեսցեն, կամ աստէն սպանցեն, կամ ոտիւր եւ ձեռուր եւ պարանոցաւ կապելով մեծաւ զգուշութեամբ տանել առ թագաւորն Պարսից». Ե. 1Լ. 247: ՄԿԲ. «Հրաման տուաք՝ . . . գմոյեկան շարագործող . . . ոտիւր ձեռուր պարանոցաւ կապելովք, . . . ահազին պատուհասիք առ մեզ արձակել». Գ. դ. 16:

ԱԳԱԹ. «Հրաման տայր կապեալ ոտիւր եւ կապեալ ձեռուր եւ կապեալ պարանոցաւ (տպ. իսկ 2.՝ կապեալ ոտիւր եւ ձեռոք եւ պարանոցօք, փոխանակ գրելոյ պարանոցաւ) խաղացուցանել զնա (զԳրիզոր) յԱյրարատ զաւառ». 103. — «Զայնպիսին կապեալ ոտիւր եւ կապեալ ձեռուր եւ կապեալ պարանոցաւ (աստ եւս 2. պարանոցօք) ի զուռն արքունի ածցեն». 109:

— ԴԻՏ. Կայ այլուր ի Մկր. կապեալ ոտիւր եւ կապեալ ձեռուր. Բ. Ժդ. 27. կապեալ ոտիւր եւ ձեռուր. անդ, 33: Այս երկօրին կը գտնուին եւ ի գիրս միւս Դասուց. առաջինն՝ յՈսկ. Մտթ. Ա. Ժբ. Յօրդ. 180. երկրորդն՝ յԵւս. Եկեղ. Ա. Ե. 33—34:

118

Բիւժ. «Կամէր յանպատրաստից գալ անկանել ի վերայ Մանուելի, միայն անձամբ անուռն առնուլ, ե ինքեամբ (տպ. ինքեան) միայն կատարել ջանայր, զի ի պարծանսն իւրոյ անձամբ վճարել զգործ պատերազմին». Ե. իպ. 251. — «Կամեցան (զաւրբն Հայոց) . . . անձամբք վճարել զգործ պատերազմին. . . զի միայն ինքեամբք վճարեսցեն զգործ պատերազմին». Գ. ի. 131: ՄԿԲ. «Թէոզոտոս ոմն անուռն՝ գործ ի միտ արկանէր . . . զնա անդէն սպանանել, եւ միայն անձամբ վճարել զգործ պատերազմին». Գ. ա. 2:

Տես «Դործ պատերազմի» յԱզաթ. — Բիւզ. Թիւ 10:



119

ԲԻԻԶ. «Աւտատար յինէին եւ խնդրէին յԱստուծոյ, զարդար դատարոն յազնականութիւն կոչէին, լինել նոցա այցելու աւզնական». Ե. խգ. 252:

ՄԿԲ. «Այսրէն ի խնդրուածն դարձան, դամնազարն աղա- շել զԱստուած, այցելու աւզնական լինել». Դ. ա. 14.—«Զի ինքն իսկ՝ որոյ գաւրութիւնն յերկնից երկինս է, այցելու եւ աւզնական է նմա». Բ. գ. 39:

120

ԲԻԻԶ. «Զտիկինն Արշակունի . . . յամուր յուղարկէին ի խառնն մեծ՝ որ անուանեալ կոչի Վարադ». Ե. խգ. 252.—«Յոր- ժամ գտիկինն ամնայն աղխին (2. իսկ տպ. աղախին) իւ- րեանց յուղարկեցին յամուրն». անդ, 253:

ՄԿԲ. «Տիմոթէոս իբրև զգայր զարշաւանն Մակարէացոց ի վերայ նորա, արձակեաց վաղվաղակի զկահ եւ զգանձ եւ զկին եւ զմանուկ զաւրացն որ ընդ իւր էին, յամուր անդը Կառնա- ցոց յուղարկէր». Բ. ժր. 21:

121

ԲԻԻԶ. «Սահայն Մանուէլ . . . առիծաբար վարազաւ- րէն յարծակեալ՝ ինոցա գունդն խառնեցաւ». Ե. խգ. 253: Այլուր. «Ապա եւ զաւրքն Հայոց . . . զազանաբար առիծաբար դէմ ընդ դէմ յարծակէին». Դ. խթ. 158:

ՄԿԲ. «Եւ այնպէս վարազախառն առիծաբար յար- ծակեցան ի վերայ գնդին թշնամեաց». Բ. ժա. 11:

—ԳԻՏ. Բիւզանդայն Գազանաբար յարծակիմ (երկրորդ վկ.) կայ եւ ի Մկր. Բ. ժ. 35. ժր. 15. կայ եւ յԱռաջին Դասի. «Գոչեսցեն եւ յարծակեսցին եւ հատցեն զազանաբար». Ես. Ե. 29.—«Իբրև ետես այրն եթէ զազանաբար գան ի վերայ յարծակեալ, երկեաւ յահէ բարկութեանն». Ոսկ. (Եփրեմ?), Յանդամալոյծն. 852. (Ազաթ. 144, ունի զազանաբար ոգո- րիմ.) Իսկ Առիծաբար մակրայ գատած շեմ յայլ գիրս Առա- ջին Դասն ունի՝ «Իբրև առիծ մոնչեսցէ». Ովո. ժԱ. 10.—

«Ճրբել զառիժ նազկացի»։ Թիբ, ԻԳ. 24.—«Ճրբել առիժունը գոչեցան»։ Սոփոն. Գ. 3.—«Ճրբել զառիժունս գոչէին»։ Եղեկ. ԻԲ. 25.—«Դիմեսցին իրբել զառիժունս»։ Ես. Ե. 29.—«Ճրբել զառիժունս ընդ ամենայն տեղիս ընթանային (Ասաքեալքն)»։ Ոսկ. Մտթ. Բ. Ժ. 536:

122

ԲԻԻ. 2. «Եւ ինքն [դառնայր] մեծաւ անուամբ, եւ բազում աւարաւ՝ զոր կապուան թափէին ի դարաց թշնամեացն»։ Ե. խգ. 254.—«Եւ ինքեանք առ իւրեանց թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ, եւ բարի աւարաւ, եւ հոյակապ շքեղութեամբ»։ Ե. 201:

ՄԿԲ. «Եւ դառնային անդրէն յերուսաղէմ անուամբ մեծաւ եւ բազում աւարաւ»։ Ա. ժա. 51.—«Եւ դարձաւ Յովնաթան յերուսաղէմ զնդան իւրով եւ բազում աւարաւ»։ Ժ. 87:

ԱԳԱԹ. «Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն, մեծաւ յաղթութեամբ եւ բազում աւարաւ, . . . մեծաւ ուրախութեամբ եւ բարի անուամբ՝ եւ բազում աւարաւ»։ 33: Տես եւ «Լնում աւարաւ բաղմաւ» աստէն թիւ 41:

123

ԲԻԻ. 2. «Այլ իրբել մեռաւ մեծ սպարապետն Մանուէլ, . . . ամենայն մարգ իրբել զհարէ կարի առնէին զնմանէ. Ե. խգ. 258. (տպ. «ի կարի առնէին». խսկ 2.՝ «և կարի առնէին»):

ՄԿԲ. «Վասն այսորիկ ոչ միայն չրեայք՝ այլ եւ հեթանոսք բարկացեալ էին, եւ կարի առնէին վասն առնն տարապարտուց մահուանն»։ Բ. դ. 35. (տպ. «եւ կարի առաւել՝ վասն». խսկ նոր Հայկզ. ի Կարիք՝ կը գրէ «կարիս առնէին»):

[Ա Դաս]† «Յորժամ չկայցէ ինչ կին այսրէն դառնալոյ (մեռելոյն), զի այնչափ կարի առնիցես»։ Ոսկ. Երբ. Գ. 479:

—ԴԻՏ. Կայ մի անգամ եւ յերրորդ Դասի. «Միւս եւս մյլ կըրայր հիւանդացեալ մերձ ի մահ, երթայր տեսանել: Իրբել կտես զնա թէ այնչափ [վասն] այսր իր[ի] կարի առնէ, եւ ընդ

1. «Եւ դարձեալ զունզն Հայոց բարի (տպ. Հայոց և բարի) անուամբ եւ բազում փառաւք, լաւ աւարաւ եւ սաստիկ ընչիւք առ պատուական կաթուղիկոսն Հայոց Յոհան ի բանակն»։ Ղ. Փրպ. Պում. 227:

մահն տաղտկացեալ վասն խղճին մտաց, ասէք ցնա. Զիսորդ այդ-  
պէս դեղժ անպատրաստ երթաս առ Աստուած, եւ ամբաստան  
ընդ քեզ տանիս զհնդգուծիւն վարուց քոց». Պատմ. Հար. Եզիպտ.  
252—253. (տպ. «Ժէ է այնչափ այսր իր կարի առնէ», եւ ի ծան.  
«Այդպէս ամենայն օրինակք. յորոց մինն յօտար գրչէ փոփոխեալ  
ւայս իրս կարի դառն է». որ է կամայական եւ ընդ վայր ուղ-  
ղուծիւն:—*Կարի առնեմ է Վշտանալ, Տրամել, Սգալ, Ազի-  
տանալ, Նոր Հայկազեննն՝ որ միայն զհաստուածն Մկր. նշանա-  
կած է եւ կը գրէ «կարիս առնէին», կը մեկնէ զայն՝ «կարեկից  
լինելով դժուարիլ ընդ եղեակսն». բայց մեկնուծիւնդ եթէ կը  
յարմարի առաջին, երկրորդ եւ երրորդ վկայութեանց՝ յորս բանն  
է դայլմէ մեռելոյ, բնաւ չպատշաճիր չորրորդին՝ յորում ինքն իսկ  
օրհասական եղբայրն է որ գանձնէ կարի առնէ: Թերեւս ուղիղ  
ընթեքցուածն ըլլայ ըստ Հայկազենին՝ կարիս առնէին, որով  
եւ կարիս առնիցես, կարիս առնէ, ի Կարիք=Սուգ բառէն.  
«Մերձեցցին աւուրք կարեաց հաւր իմոյ, զի սպանից զՅակոբ  
զեզրայր իմ», կը կարդանք ի գիրս Ծննդոց, Իէ. 41, ուր յոյնն  
կ'ըսէ սգոյ. եւ ճշգիւ ըստ այսմ կայ թարգմանեալ յմսկ. Եբր.  
1, Ա. 561. «Մերձեցցին աւուրք սգոյ հաւր իմոյ». (իսկ յնվիր.  
Աբար. Է. 90, «Մերձեցցին աւուրք կատարածի հաւր իմոյ»):*

## 124

ԲԻԻ. Զ. «Յազումք ի Հայոց նախարարացն անտի ելին զա-  
տեան գնացին առ թագաւորն Պարսից». Զ. ա. 261:  
ՄԿԲ. «Յաւուրս ժամանակացն այնոցիկ՝ ելին զատան  
յորդուցն Իսրայելի արք անաւրէնք». Ա. ա. 12:

## 125

ԲԻԻ. Զ. «Քայց եւ ի նոցանէ ըսզում զաւարք կրծեալք  
հատեալք այսր անդր». Զ. ա. 262:  
ՄԿԲ. «Տիրեցէք դուք կողմանց բազմաց, եւ զաւառս բա-  
զումս հատէք զիմոյ տէրութեան». Ա. ԺԵ. 29:

## 126

ԲԻԻ. Զ. «Այսպիսի էր այս Յոհանս՝ կապեալ յըռժղութեան

և յազահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց»։ 2. Ժ. 269. (ապ. յընթզութեան. նոյնպէս և 2.՝ յընթզութեանն.)

ՄԿԲ. «ՁՄեննեղառս վասն իշխանացն որժողութեան և անզահութեան հաստատեալ»։ Բ. դ. 50.

==ԴԻՏ. Արմատ Ռըժողութիւնն ամանցականին Ռիժդէ կայ յմսկ. Մաթ. «Պիտոյիւք և կարելուք պատճառանալ յՌիժդէ և ի տժդին վաճառականութիւնն հատեալ եմք»։ Գ. դ. Յորդ. 11.—«Ո՞ կարիցէ պատմել զշահան՝ որ ի նոցանէն շահիցին, և զՌիժդէ վաճառականութիւնսն զոր նորաւք ամենն (գործեն?) յաճախութեամբ»։ անդ, Ը. Յորդ. 31.

Ձայլ նմանութիւնս Բիւզանդայ և Մակարայեցոց տես ի Կոր.==Ազաթ. թիւք 5, Թշուառութեանն հասելոյ. 19, Սոյն աւրինակ. 34, Նիզակակից. 41, Գուռն թաղաւորի. 58, Գումարեմ. 61, Երեւեալ և Պատրաստեալ (փոխ. երեւէր, պատրաստի). 71, Աւազանի. 75, Աստուածազործ. 105, Թողում վերակացու կամ պահապան: Ի Կոր.==Բիւզ. թիւք 4, Խոստացեալքն. 22, Երթամ յանդիման լինիմ թաղաւորին. 31, Հարց և քնին առնեմ և Հարցանեմ և քննեմ. 41, Եռանդն ամեն: Ի Կոր.==Մկր. թիւ 5, Խոտարուա և Ընդարուա: ՅԱզաթ.==Բիւզ. թիւք 10, Գործ պատերազմի. 11, Գունդ կազմեմ. 12, Զնջեմ ի միջոյ. 13, Այր և ձի. 19, Սպաստակ սփռեմ. 22, Բնակութիւն. 23, Ըստ արինաց կամ Ըստ արէնս թաղաւորաց. 24, Յեղակարծում ժամու. 37, Հասանել ի միմեանս. 40, Միամտութեամբ վաստակիմ և Միամտութեան վաստակք. 48, Նուազ (==Մեծ բաժակ). 56, Հարկանեմ ի մեծ կամ ի մեծամեծ հարուածս. 58, Թափեմ. 60, Զի արկանել և Զի մատուցանել. 63, Հրաման հանեմ. 64, Մարդաշատութիւն և Մարդաշաա. 76, Խոտաճարակ. 95, Քանդի լուեալ և Քանդի կորուսեալ. 103, Փառք աւագութեան. 106, Տաճարակից. 114, Ժամանակ կշտամբութեան. 147, Տուն խընդրուածոց. 160, Ինքնին թաղաւորն և Ինքնին իշխանն. 189, Յայրս և ի քարածերպս. 191, Աշխարհակեաց և Գազանակեաց կեանք. 193, Ունիմ առաջի: ՅԱզաթ.==Մկր. թիւք 9, Զար բազում կուտեմ. 10, Գումարտակ. 19, Որ ընդ իւրով ձեռամբ էր կամ էին:



Ե. ԲԻԻՋԱՆԴ ԵՒ ԵԻԹԱՂ

1

ԲԻԻՋ. «Ջնոսա (գիշխանն) բաղում գանձիւք լցեալ արձա-  
կէր, կաշառակուրծս կաշառարեկս (տպ. կաշառաւեկս) առնէր  
առ հասարակ». Դ. և. 90:

ԵԻԹ. «Եղկութիւն նոցա վասն խարէութեան. . . եւ մտաց-  
ծնոյց կեղծաւորութեան ի պատրանս կաշառակրծութեան».   
Գլուխք Յուդայի, Բ. 1103:

Տես «Կաշառարեկ» ի Բիւղ. = Մկր. թիւ 29:

2

ԲԻԻՋ. «Վեցերորդ դպրութիւն. վերջ. [յ]առաջաբանու-  
թեան վճարումն. մնացուածք բանից ի ծայրէ». վերնագիր 2  
դպր. 261:

ԵԻԹ. «Զընթերցուածոցն հաւաստեալ որոշմունս. . . դի-  
ցուք դայն առնթիւր յետ իւրաքանչիւր միոյ միոյ յառաջաբա-  
նութեանցն». Յոջր. Պաւղ. 1109 ա. Այլուր. «Ընդ նեղ եւ ընդ  
նուրբ ծերպս պատմութեան գանձն ի ներքս արկի, զյառաջա-  
բան Պաւղոսի ի մատենիս գրել». անդ, 1107 ա. տես եւ ի վեր-  
նագիրսն, «Յառաջաբան գրոց Գործոց Առաքելոց». 1047. —  
«Յառաջաբան եւթանեցունց թղթոցն կաթողիկեայց». 1079.  
— «Յառաջաբան Պաւղոսի Առաքելոյ նախակարգեալ ի գլուխ  
գրոցս». 1107.

= ԴԻՏ. Յառաջաբանութիւն կամ Յառաջաբան բառի  
նշանակութեամբ ի Վարս Մաշտոցի ըսուած է Նախակարգ  
բան, 6: Կայ մի անգամ Յառաջաբան եւ յԱռաջին Դասի. այլ  
տես գԴԻՏ. ի Կոր. = Ազատ. թիւ 39: Իսկ յԱթ. Անտ. 41, «Նա-  
ալարք եւ մշակք. . . յառաջագոյն ասեն թէ պղտորելոց են  
(աւղք) յանխնայութիւն եւ կամ ի խաղաղութիւն. եւ ոչ վասն  
այսորիկ որ զնոսա (զնոցա?) յաստուածեղէն Հոգւոյն ասասցէ  
զյառաջաբանութիւնն, այլ ի տեղեակ փորձութենէն եւ ի սով-  
որութենէ». իմն Յառաջասացութիւն, Կանխասացութիւն, գղ-  
Prédiction.

Չայլ նմանութիւնս Բիւզանդայ եւ Եւթաղի՝ տես ի Կոր.  
== Ագաթ. թիւք 6, Առանց դանդաղանաց եւ Առանց դանդաղու-  
թեան. 19, Նոյն աւրինակ. 117, Ամուսնութիւնընկալ եւ Փրկու-  
թիւնագործ. 133, Չար տանին խմբեմ եւ Տանախմբեմ: Ի Կոր.  
== Բիւզ. թիւք 2, Աստուածեղէն կրօնք. 5, Բարիատուր եւ Առա-  
տատուր: ՅԱգաթ. == Բիւզ. թիւք 2, Չան վաստակոց. 60, Չի ար-  
կանել եւ Չի առնել? 101, Նախափկայ. 151, Ի տեղին հրամայ-  
եալ եւ Ի հրահանգս հրամայեալս: Ի Բիւզ. == Մկր. թիւ 80, Հրով-  
արտակա կամ Թուղթս տամ:

գ. ՄԵԿԵԲԵՏԵՑԻՔ ԵՒ ԵՒԹԱՂ

1

ՄԿԲ. «Այն ինչ լինէր նոցա մերձ ի կողմն քաղաքին  
Երուսաղեմացոց հասանել<sup>1</sup>, եկն էջ առաջի նոցա այր մի սպի-  
տակաձի». Բ. ժա. 8: Այլուր. «Այն ինչ լինէր նոցա զանա-  
շառ զանոգորմ ձեռն պատերազմի ի գործ արկանել, երեսե-  
ցան յերկնից արք հինգ հեծեալ սպառազէն». Բ. ժ. 29. — «Այն  
ինչ լինէր Եղիազարու զաղաւթսն առ Աստուած մատու-  
ցանել, եւ թագաւորն . . . ի տեղի հանդիսին . . . հասանէր». Գ.  
դ. 13: Եւ այլուր. «Այն ինչ լինէր զողբիսն ի գիրկս իւր թա-  
փել, եւ նա յետս կոյս կործանեցաւ». Ա. թ. 47:

ԵՒԹ. «Անազան ուրեմն երբեմն դարձեալ Պաւղոս ելանէր  
յերուսաղէմ . . . այն ինչ լինէր նմա անդր հասանել, եւ ամ-  
բոխ յուզէր ի քաղաքին». Յռջք. Պաւղ. 1108 ա.

== ԳԻՏ. Այն ինչ առանձինն՝ կայ եւ այլուր բազում ուրեք  
ի Մկր. Ա. ք. 23. դ. 23. և. 14, 30, 42. ժա. 45. Բ. թ. 5,  
8. ժք. 35. Գ. դ. 20. և Ագաթ. 164. և Բիւզ. 72, 214: Ցա-  
ճախ եւ ի գիրս միւս Դասուց. Իմաստ. ժԸ. 14. Դուկ. ժԹ. 37.  
Յովհ. ժԹ. 33. Գործք Առաք. ժԸ. 2. Իէ. 9. Ոսկ. Մտթ. Ա. դ.  
45. գ. 88. թ. 131. Բ. իե. Յորդ. 721. Կիւր. Աղեքս. Արար.

1. Ըստ այսմ եւ Եղչ. Պատմ. Ղարդան. Ը. 113. «Այն ինչ լինէր նո-  
ցա ի պաշտամանէն հանգընել»:

303 (Թոռնեան, Հատ. Ընթերց.), Պոմ. Հար. եզիպտ. 252, եւ այլն:

2

ՄԿԲ. «Ապա իբրեւ գայն (բժժանս) գտին, ստուգեցին ի միտս իւրեանց եթէ կոտորած նոցա յայնց պատճառաց լիալ իցէ»։ Բ. ժր. 40:

ԵՒԹ. «Եւ յայնց պատճառանաց մտոչի յառաջ ասել վասն Աստուծոյ շնորհացն եւ վասն բարւոք առաքինութեան»։ Գլուխք Բ Կոր. 1137 ա.

— ԴԻՏ. Միւս Դասքն կ'ըսեն. «Արդ իբրեւ առաքեցաւ նա (Սաւուր) ի հարէ անտի իւրմէ խնդրել զէշն որ կորեան. եւ հաս յայս պատճառս (ապ. պատճառ) մինչ առ Սամուէլ»։ Եփր. Սամ. Բ. 368. — «Զի յայս պատճառս յայտնի լիցի առաջի Աստուծոյ փոյթ հնազանդութեանդ ձերոյ»։ նոյն, Բ Կոր. է. 101. — «Վասն այնորիկ յայս պատճառս կամեցաւ (Համան) առնուլ զվրէժ յորդոց անտի ժողովրդեան ազգին Մուրթբէի»։ Զգան, Գ. 54—55. — «Եւ յայս պատճառս, ասեն, պատահեն միմեանց (աստեղքն)»։ Բրս. Վեց. 2. 117. — «Վասն այսր պատճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ խաւել»։ Գործք Առաք. ԻԸ. 20. — «Որպէս զի եւ ոչ ընդ նոսա հաղորդէր նա վասն այսր պատճառանաց»։ Եւս. Եկեղ. է. Կ. 529. — «Զի թէպէտ առ ժամանակ մի վասն այսց երկուց պատճառանաց ընդ մահուամբ անկանիցի, այլ ըստ իւրում կարողութեան յարուցէ միւս անգամ»։ Եզնիկ, 75:

3

ՄԿԲ. «Անդէն ի խորանի անդ արագ արագ շիջուցանէին (զՓտողամէոս), եւ այսպէս մարտն բորբոքէր»։ Գ. ա. 2:

ԵՒԹ. «Եւ զխաւոր ընդ խազմարարսն երեւեալ (Պաւղոս)՝ ամենայն ուրեք ջանայր զԱստուածութեանն պատգամաւորսն շիջուցանել»։ Յոջք. Պաւղ. 1107 ա.

— ԴԻՏ. Շիջուցանեմ զոր է փոխարեւարար Սպանանել: Կայ այլով փոխարեւարութեամբ յ'Բ Թագ. ԺԳ. 7. «Շիջուցանիցնն զկայծակն իմ՝ զմնացեալ, առ ի չթողոյ առն իմում

մնացորդ եւ անու՛ն ի վերայ երեսաց երկրի»: Նոյնպէս անդ, ԻԱ.  
 17. «Յայնժամ երզուան (զաւրագլուխքն) առ Դաւթի՛ եւ ասնն,  
 եթէ Ոչ եւս ելցես ընդ մեզ ի պատերազմ, եւ ոչ շիջուցես  
 զճրագդ Իսրայելի»: Կորին ի Վարս Մաշտոցի, 4, բսած է  
 Շիջուցանեմ՝ իբր Խափանել. «Իսկ Պաւղոս, որ ի մտի եղեալ  
 էր շիջուցանել (տպ. Իսկ Պաւղոս ի մտի եղեալ էր շրջեցուցա-  
 նել) զբրիստոսազիր կարգացն պայծառութիւնն, անաւթ ընա-  
 րութեան անուանեալ, անուանակիր յաշխարհի իւրոյ սքանչելի  
 անուանն առնէ». սմին նման եւ յՈսկ. Փիլիպ. Գ. 373, եւ Եբր.  
 ԻԱ. 520, Շիջուցանել զքարոզութիւն (Աւետարանին):

«Չայլ նմանութիւնս Մակարայեցւոց եւ Եւթաղի՛ տես յԱզաթ.  
 ==Քիւզ. թիւ 60, Ձի մատուցանել եւ Ձի առնել? ՅԱզաթ.==Մկր.  
 թիւք 31, Արինաւոր կրանք. 47, Աստուածակերպ, ՅԱզաթ.==  
 Եւթ. թիւ 2, Հանեմ կամ Կարճեմ յայսց կենաց: Ի Քիւզ.==Մկր.  
 թիւ 80, Հրովարտակս եւ Թուղթս տամ:

**ԿԱՏԱՐԱԾ ՀԱՍԵՄԱՏՈՒԹԵԱՆՑ**

Միջոցաբերութիւնն ի վերայ երեսաց երկրի: Նոյնպէս անդ, ԻԱ. 17. «Յայնժամ երզուան (զաւրագլուխքն) առ Դաւթի՛ եւ ասնն, եթէ Ոչ եւս ելցես ընդ մեզ ի պատերազմ, եւ ոչ շիջուցես զճրագդ Իսրայելի»: Կորին ի Վարս Մաշտոցի, 4, բսած է Շիջուցանեմ՝ իբր Խափանել. «Իսկ Պաւղոս, որ ի մտի եղեալ էր շիջուցանել (տպ. Իսկ Պաւղոս ի մտի եղեալ էր շրջեցուցանել) զբրիստոսազիր կարգացն պայծառութիւնն, անաւթ ընարութեան անուանեալ, անուանակիր յաշխարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ». սմին նման եւ յՈսկ. Փիլիպ. Գ. 373, եւ Եբր. ԻԱ. 520, Շիջուցանել զքարոզութիւն (Աւետարանին):



## Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

ԵԻ

## Լ Ո Ւ Ս Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

1. (յերես 2.) *Զթարգմանչաց հայերէն Աստուածաշունչ մատենին*.—Ջատ անորոշ եւ երբեմն իրարու բոլորովին հակառակ են՝ ինչ որ Գորիւն, Ղազար Փարպեցի եւ Մովսէս Խորենացի կ'աւանդեն զթարգմանչաց Հին եւ Նոր Կտակարանաց ի Հայ լեզու: Գորիւն կը գրէ (*Վարք Մաշտոցի*, 10) թէ իսկ եւ իսկ յետ դիւտի հայերէն նշանազրաց՝ Մաշտոց թարգմանեց (ի յունէ?) զԱռակս Սողոմոնի հանդերձ իւր աշակերտօքն՝ որ կը կոչուէին Յոհան յեկեղեցաց դաւառէ, եւ Յովսէփ ի Պաղանական տանէ: Այլուր կ'ըսէ (12—13) թէ «եբրկու հաւատարեալքն»—այս ինքն՝ Սահակ եւ Մաշտոց— թարգմանեցին (ի յունէ?) զՀնգամատեանն, զմարգարէութիւնս, զԱւետարանս, զԳործս Առաքելոց եւ զԱռաքելական թողութս. «Յայնմ ժամանակի երանելի, ցանկալի եւ անսոյցման սքանչելի լինէր աշխարհս Հայոց. յօրում յանկարծ ուրեմն Մովսէս արէնսուտոյց [հերբայական բանակին՝ ամենայն] մարգարէական դասուն, եւ յառաջագէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական զնդան, հանդերձ աշխարհակեցոյց Աւետարանան Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ՝ ի ձեռն երկուց հաւատարելոցն հայաբարբառք հայերէնախաւար գտան» (տպ. խառնակ եւ թերի. ուղղեցի ըստ 2. Ազգթ. 636—637): Յետ այնորիկ կը ծանուցանէ (21) թէ Սահակ կանխաւ ի

յունական բարբառոյն փութանակի ի հայերէն դարձուցած էր «գեկեղեցական գրոց գումարութիւնն», զոր հանդերձ եղնրկաւ հաստատեց—իմա՛ սրբագրեց—երբ ստացաւ ի Կոստանդնուպօլսէ իբր յամին 434 զճշմարիտ օրինակս (յունագիրս) Աստուածաշունչ մատենին:—Ըստ Փարպեցւոյ (*Պատմ.* 30)՝ ոչ Մաշտոց եւ ոչ այլ ոք ի Հայ քահանայից կարող էր թարգմանել զՍուրբ Գիրս ի յունէ ի հայ, բայց միայն Սահակ. եւ Սահակ է որ յանձն առաւ զայս մեծ գործ ի խնդրոյ Վասմշապուհ թագաւորին, Մաշտոցի եւ ամենայն աւագ քահանայից, եւ «անվհե՛ր ջանալով զցայգ եւ զցերեկ՝ թարգմանեաց (ի յոյն լեզուոյ) զԿտակարանս ամենայն զխաւսեցեալս ճշմարիտ մարգարէիւք ի Սուրբ Հոգւոյն, եւ հաստատեալ կնքեաց երջանիկ Աւաքելովքն զնորոց Կտակարանացն զլուսաւոր եւ զկենսատուր քարոզութիւնս նովին Հոգւով: եւ տարեալ ի գլուխ սուրբ հայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ հոգեւոր վաստակոյն, կարգեցան վողվողակի յայնմ հետէ զպրոցք»։ (անդ, 32):—Խորենացի կը գրէ (*Պատմ.* Գ. ծգ. 520) թէ Մեսրոպ (Մաշտոց) յիս զիւտի գրոյն «իսկայն ի թարգմանութիւն ձեռնարկեալ (ի յունէ?), խորհրդաբար սկսանելով յԱռակաց, ըովանդակ զըսան եւ երկու յայտնիսս՝ եւ զՆոր Կտակս յեղուլ ի հայ բան, նա (Մեսրոպ) եւ աշակերտք նորա՝ Յոհան եկեղեցային եւ Յովսէփ Պաղնայի»: Ապա կ'ըսէ (Գ. կա. 547) թէ երբ ստոյգ (յունարէն) օրինակք Գրոց հասան ի Կոստանդնուպօլսէ ի Հայս, զայնսսիկ շառեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ, դարձեալ թարգմանեցին (ի յունէ) զմիանգամ թարգմանեալն փութանակի՝ հանդերձ՝ նորաւք (այս

1. Ըսան եւ երկու յայտնիք են քսա երբոյական կանոնին, 1—5 Մովսեսի գիրք, 6 Յեսու, 7 Գոտաւորք եւ Հոսիթ, 8 Ա եւ Բ Թագաւորք, 9 Գ եւ Դ Թագաւորք, 10 Ա եւ Բ Մեացորդք, 11 Ա եւ Բ եզր, 12 եսթեր, 13 Սաղմոսք, 14 Յովք, 15 Առակք, 16 Փողովոզ, 17 երգ երգոց, 18 եսայի, 19 երեմիա, Ոգրովք եւ Բարութաւ հանդերձ, 20 եղեկիէլ, 21 երկոտասան մարգարէք, 22 Գանիէլ:

2. Հ. Միք. 2ամշեան (*Պատմ. Հայոց*, Հ. Ա. 773) կից կը գրէ «նա՛նչ աշակերտք նորա», իբր շագկապ. իսկ Վիտտոնեանք կը գրեն եւ կը հասկանան իբրեւ զիս:

3. Եյսպէս կը կիտաղրէ 2ամշեան (անդ), եւ յետ նորա Հ. Սուքիտա Վ. Պարոնեան. տես *Մննասէր*, Պրակ Ա. 13, ծան. 1, Սխալ է ի տպա-

ինքն՝ եզնրկաւ եւ ընկերաւք նորա) վերստին յաւրինեալ նորագ-  
մամբ: Խորենացոյ «միանգամ թարգմանեալն փութանակի» բա-  
ռերն կ'ակնարկեն անտարակոյս թէ այդ առաջին թարգմանու-  
թիւն Սուրբ Գրոց եղած էր յատորի լեզուէ, ըստ այնմ զոր կը  
գրէ այլուր (Գ. ծղ. 523), թէ երբ Մեսրոպ դարձաւ յԱղուանից  
ի Հայս՝ մեծն Սահակ էր «թարգմանութեան պարագեալ յասոր-  
ւոյն՝ յոչ լինելոյ յունի»<sup>1</sup>:

Որով եւ է օրինակաւ՝ քան զվկայութիւնս Փարպեցոյ եւ  
Խորենացոյ զօրատր է՝ վկայութիւն ժամանակակից պատմչին  
Կորեան. այս ինքն՝ թէ Սահակ եւ Մաշտոց ի միասին թարգմա-  
նեցին փութանակի զՀնգամատեանն, զմարգարէութիւնս եւ  
զՆոր Կտակարանս. եւ զայս ամենայն «եկեղեցական զրոց  
գումարութիւն» սրբազրեց յետոյ Սահակ՝ գործակցութեամբ եզ-  
նրկայ: Գլխաւոր արդիւնք թարգմանութեան վերոյիշեալ մատե-  
նից՝ կը պատկանին ուրեմն Սահակայ: Առակը՝ Մաշտոցի են,  
եւ իւր երկու աջակցաց՝ Յոհաննու եկեղեցայնոյ եւ Յովսեփայ  
Պահնացոյ, ըստ Կորեան եւ ըստ Խորենացոյ: Մակարայեցիք  
են Կորեան: Միւս զրոց, Յեսուայ, Դատաւորաց, Հոուծայ,  
Թազաւորաց, Մնացորդաց, Ա եւ Բ Նզրի, Նեեմեայ, Նս-  
թերայ, Յուդթայ, Տովբիթայ, Ժողովողին, Երզոց Եր-  
զոյն, Ոմաստութեան, Սիրաքայ, Յովբայ թարգմանիչք ան-  
յայտ են. բայց կարելի է թէ Կորեան «եկեղեցական զրոց գու-

զրին «դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի  
հանգերձ» եւ այլն. սովին սխալ կիտաղրութեամբ եւ յիտաւերէն թարգմա-  
նութեան Ս. Ղազարու, «ritradussero già tradotti, e co' discepoli fecero  
subito una composizione nuova». մինչդեռ Խորենացի ըսել կ'ուզէ թէ  
նախկին փութանակի թարգմանեալն՝ սրբազրեցաւ (պարագով), համաձայն  
Կորեան. «Ղյառաշագոյն գյանկարծագիրս զփութանակի զթարգմանու-  
թիւնս, հաստատէր (Սահակ) ճշմարիտ արիւնհայք բերելովք». Ղարք Մաշ-  
տոցի, 21:

1. Կը գրեն եւ Յայսմաւուրք, ի Մեհեկի ժգ. «Մեսրոպ խնդրեաց ի  
հայրապետն զճշմարտարան գիրս մեծի եկեղեցւոյն առ ի թարգմանել:  
Եւ հայրապետն Աթախիզոս ետ նմա զաստուածային գիրսն ի թարգմանու-  
թիւն եւ այնպիսի ճոխ կարգօք ել Մեսրոպ Ստըմալոյտ եւ դարձաւ ի  
Հայս առ սուրբ հայրապետն Իսահակ, եւ զնախաթարգմանեալ գիրսն յԱ-  
սորոց վերստին ուղղեցին». տես Բազմավէլս, 1851, երես 232 ա.

մարութիւնս անորոշ բացատրութեան ներքեւ բովանդակուին նա եւ Յեսու, Թագաւորը, Ժողովող, Երգ Երգոցն եւ Յովը՝ իրր թարգմանութիւնք Սահակայ:

Գիտելի է որ Առակաց, Ժողովողի եւ Երգոց Երգոյն ունինք կրկին թարգմանութիւնս, հանդոյն Իմաստութեանն Սիրարայ: Բազում ուրեք ի նոր Հայկազնին կը յիշատակուին այս գրոց մի եւ նոյն տեղիք այլակերպ լեզուաւ<sup>1</sup>. բայց կցկտուր պատառիկք բաւական չեն ընդարձակ դատաստանի համար, եւ կը շատանամ նշանակելով միայն զգոյութիւն երկուց թարգմանութեանցն:

2. (յերես 4.) Յորում ամի գնացած են Կորիւն եւ իւր հինգ ուսումնակիցք ի Կոստանդնուպոլիս, եւ յորում ամի դարձած են ի Հայս.—Չամչեան (Հ. Ա. 509—510) կը համարի թէ Եղնիկ եւ Յովսէփ Պաղնացի առաքեալ են յեղեսիա յամին 425, եւ յեղեսիոյ գնացած են ի Կոստանդնուպոլիս յամին 426, ուր կը ժամանեն ի նմին տարւոջ նա եւ Ղեւոնդ Վանանդեցի եւ Կորիւն, եւ ապա Յոհան եւ Արձան. թէ վեցերեան Թարգմանիչքդ յիտ մնալոյ ի Կոստանդնուպոլիս իրր եօթն տարի՝ առ պատրիարքութեամբ Միսիննիոսի, նեստորի եւ Մաքսիմիանոսի (անդ, 510), դարձած են ի Հայս յամին 431 (անդ, 521—522): Այս ամենայն հակառակ թուի ուղիղ ժամանակագրութեան. քանզի Խորենացի խօսելով զերթալոյ վերոյիշելոցդ ի Կոստանդնուպոլիս՝ կ'ըսէ (Գ. կ. 545). «Որոց ընդունելութիւն ամենեցուն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Քիւզանդացոց». եւ զի Մաքսիմիանոս պատրիարք կարգեցաւ Կոստանդնուպոլիս յամսեան Հոկտեմբերի 431 տարւոյն, վեց Թարգմանիչքն՝ զոյգ զոյգ մի զմիոյ կնի՝ հասած են ի թագաւորական քաղաքն կամ ի կատարած 431 տարւոյն կամ ի սկիզբն 432 ի նոյնպէս թէ յորում ժամանակի դարձած են անտի յիւրեանց հայրենիս՝ զայս եւս կը տեղեկանանք անուղղակի ի նմին Խորե-

1. Զոր օրինակ. «Զի ո՞վ է այն որ կարող լինիցի զարդարել՝ զոր Աստուածն խանգարիցէ»—«Վասն զի ո՞վ կարէ զարդարել՝ զոր Աստուածն ցոծցէ զայս». Տող. է 14. տես Խանգարեմ ի նոր Հայկզ. եւ Այաքն. ԸՍՍ. ԷԵԲ. 112, Ժան. 106:



նացույ, որ կ'ըսէ (Գ. կա. 546—547) թէ Քարգմանիչքն մեր եկեալք ի Հայս կը զաննն զՍահակ եւ զՄեսրոպ ի Յաշտիշատ Տարւանոյ, եւ կը մատուցանեն նոցա՝ բաց ի յունարէն 2 հռագրաց եւ ի Կանոնաց Եփեսոսի (եւ Նիկիոյ)՝ նա եւ զԹուղթս զորս Պրոկղ՝ Կոստանդնուպոլսի, Կիւրեղ՝ Աղեքսանդրիոյ, եւ Եկակ՝ Մելիտիոնոյ եպիսկոպոսք զրաժ էին առ Սահակ եւ Մեսրոպ: Պրոկղ յաջորդեց Մաքսիմիանոսի յամին 434. որով եւ դարձ Կորեան ի Հայս՝ հանդերձ իւր հինգ աշակերտակցօք՝ եղև յամին 434 կամ 435:

3. (երես 5.) Մխալ է Չամչեանի Վրաց եպիսկոպոս կոչելն զԿորիւն.— Չամչեան (Հ. Ա. 537) կը գրէ թէ Կորիւն «ձեռնադրեցաւ ի Սրբոյն Սահակայ յեպիսկոպոսութիւն միոյ կողման Վրաց աշխարհին ի վերայ Հայոց եղելոց անդ»: Յետ նորա Հ. Մկրտիչ Ազգերեան (Յուցակ մատենից եւ մատենագրաց Նոր Հայկազեան Բառարանին, յանունն Կորիւն) կ'ըսէ թէ Կորիւն կարգեցաւ «եպիսկոպոս ի սահմանակցութեան Վրաց եւ Աղուանից»: Նմանապէս եւ Մսեր Մտերեանց «Կորիւն եպիսկոպոս». (Ծոռաբաղ, 1859, երես 311).— «Սահակ հայրապետ զԿորիւն Վրաց եպիսկոպոս ձեռնադրեց, և անշուշտ այն պաշտաման մէջ իւր կեանքը կնքեց». Հ. Գար. Զ. (Հայկ. Հին Դպր. Պատմ. 291).— «Երօք Հայոց աւանդութիւն է, թէ Կորիւն կարգեալ էր եպիսկոպոս Վրաց, յետ Սամուէլի». Հ. Բարսեղ Սարգիսեան (Ազաթանգեղոս, 111): Այս կարծիք հաստատեալ են ի վերայ յաջորդ բանից Կորիւն Վարդապետի ի Վարս Մաշտոցի, 15—16. «Եւ արդ զնոսա (զՎիրո), որ յայնչափ ի մասնաւոր եւ ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամաւքն մի աղղ կապեալ (կամ՝ կատարեալ)՝ փառարանիչս (տպ. փառարանիչք) միոյ Աստուծոյ յարիւնէր. յորոց

1. «Բանի մը տարիներէ հետէ օւնինք Պրոկղի եւ Սահակայ Հայոց կաթողիկոսի թղթակցութիւնը (435 ին) որն որ հայերէն ըստ մասին ձեռագրաց մէջ է եւ ըստ մասին տպուած». Հ. Յ. Գաթրճեան, Հանգանակ հաւատոյ եւ այլն, 21: Գը գրէ եւ Ելիշան (Այրարատ, երես 93 ա. եւ ծան. 3), առանց զժամանակն որոշելոյ. «Դարձ Քարգմանչացս մերոց ի Հայս՝ եղև յաւուրս հայրապետութեան Պրոկղի, որ յետ երկուց եւ կիսոյ ամաց յաջորդեաց զՄաքսիմոս վախճանեալ յ'12 ապրիլի 434 ամի»:

եւ իմ՝ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ եւ բարեպաշտան՝ եպիսկոպոս կացեալ տանն արքունեականի»։ Այսպիսի հատուածը խանդարեալ է առանց իրիք երկրայութեան, եւ թուի աղղիլի. «*յորոց եւ զտան արժանիք ելաննել ի կարգ՝ եպիսկոպոսութեան վիճակի. որոց առաջինն Սամուէլ անուն*» եւ այլն։ Կորիւն կ'ըսէ թէ՛ հրամանաւ Քահուր թագաւորին՝ Վրաց՝ յայլեւայլ զաւտաց պատանիք կը յանձնուին ի խնամս Սրբոյն Մաշտոցի, եւ նա կը կրթէ զնոսա, եւ զոմանս—որոց առաջինն էր Սամուէլ—արժանի կը համարի եպիսկոպոսութեան. եւ անտարակոյն Սամուէլ եւ միւս եպիսկոպոսքն Վրաց ձեռնադրեալ են՝ ոչ ի Մաշտոցէ որ էր լոկ վարդապետ, այլ յեպիսկոպոսէ աշխարհին որ կը կոչուէր Մոփսէս։ Չամշեան՝ յանիմաստ հատուած մի վստահացեալ՝ զԿորիւն ձեռնադրել կու տայ Սրբոյն Սահակայ յեպիսկոպոսութիւն Վրաց աշխարհին «ի վերայ հայոց եղելոց անդ»(!), որ է առատղեւաց առասպել. եւ այսպէս ի Չամշեանէ ճարտարապետեալ Կորեան եպիսկոպոսութիւնն Վրաց՝ հետզհետէ կը զարդարուի ի ձեռն Ագեբեանի եւ Սարգիսեանի պէսպէս յաւելուածովք, թէ Կորիւն էր եպիսկոպոս ի սահմանակցութեան Վրաց եւ Աղուանից (!), յետ Սամուելի (!), ըստ աւանդութեան հայոց (!)։

4. (Երես 5.) Ստոյգ թուականը մահուան Սրբոյն Սահակայ եւ Սրբոյն Մաշտոցի.—Կորիւն կը գրէ (յերես 25)՝ թէ Սահակ վախճանեցաւ «*Եւտաջնումս ամի Յաղկերտի՝ որդւոյ Վռամայ (Հինգերորդի) . . . ի կատարել ամսեանն նաւասարդի*». (իմս ըստ Ղ. Փարպեցւոյ, Պատմ. 63, «*յամսեանն նաւասարդի, որ աւր երեսուն էր ամսոյն*»)։ Եկատմամբ Մաշտոցի՝ զինի ասելոյ (յերես 26) թէ «*Անդէն ի նմին ամի, յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ, . . . հասանէր Սրբոյն (Մաշտոցի) քրիստոսակոչ կատարումն . . . յերեքասաներորդում ամսեանն Մեհեկանի*», կը յաւելու (յերես 29) նշանակել Տշգրտիլ թէ քանի ամ տեւեց Մաշտոցի շահատքն, որ է կրօնաւորութիւնն. թէ որչափ տարի կը զումարուի ի զպրութենէն

1. Տես «Ի վանականաց կարգ ելաննել» աստէն, 15, թիւ 7.

Հայոց մինչև ցմահ երանելոյն, թէ ճիշդ որ տարին վախճանեցաւ Մաշտոց, եւ որ տարին սկսաւ Հայոց դպրութիւնն: Ասենք զիւր ժամանակագրութիւնն. «եւ արդ յինի համար հաւատոց երանելոյն ամբ քառասուն եւ եւթն (տպ. քառասուն եւ հինգ), եւ ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան Սրբոյն՝ ամբ երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Գրսմոնայ (իմա՛ Կրմանայ, այս ինքն՝ Վռամայ 2օրրորդի)՝ Գարսից արքայի՛ ամս տասն (տպ. վեց), եւ Յազկերտի (Առաջնոյ) ամս քսան եւ մի, [եւ Վռամայ Հինգերորդի ամս քսան]. եւ յառաջնումս ամի երկրորդ Յազկերտի, որդւոյ Վռամայ (Հինգերորդի), վախճանեցաւ երանելին: Եւ արդ [սկիզբն?] առնու համար ամաց Սրբոյն (տպ. սրբոց) հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի (= Վռամայ 2օրրորդի) մինչև ցառաջին ամս երկրորդ Յազկերտի, որդւոյ Վռամայ (Հինգերորդի), եւ դպրութեանն Հայոց՝ ի վեցերորդ (տպ. յութերորդ) ամէ Յազկերտի (Առաջնոյ) առեալ սկիզբն»:

Յազկերտ երկրորդ զահակալեց ի 4 Աւգոստոսի 438 տարւոյն, ըստ նորագոյն եւ ստուգագոյն հաշուոյ Թ. Նէօլդէքէի (Th. Nöldeke).—տես Ստեփանոս Ասողիկ, տպ. Պետրուրդի, 1885, էրես 358.— որով իւր թագաւորութեան առաջին ամս է 438 Աւգոստոս—439 Աւգոստոս. հետեւարար Սրբոյն Սահակայ վախճանին օրն՝ 7 Սեպտեմբեր (=30 նաւասարդի) 438, իսկ Սրբոյն Մաշտոցի՝ 17 Փետրուար (=13 Մեհեկանի) 439: Թէ որչափ հաւաստի է Մաշտոցի մահուան թուականն 17 Փետրուար 439, կը տեսնուի նա եւ ի յաջորդ կրկին հաշուոց Կորեան. Մաշտոց կրօնաւորեցաւ ի չորրորդ ամին Վռամայ 2օրրորդի, որ է յամին 392, եւ իւր կրօնաւորութիւնն տեւեց ընդ ամինայն 47 տարի. ուրեմն 392+47=439: Գարձեալ, դպրութիւնն Հայոց սկսաւ ի վեցերորդ ամին Յազկերտի Առաջնոյ, այս ինքն յամին 404, եւ ի դպրութենէն Հայոց մինչև ցվախճան Մաշտոցի՝ բովանդակեցաւ 35 տարի. ուրեմն 404+35=439:

2ամհետն (Հ. Ա. 532—533) զզահակալութիւն Յազկերտ երկրորդի կը դնէ յամին 439, զմահ Սահակայ յ'9 Սեպտեմբերի 440 (անդ, 533), եւ զմահ Մաշտոցի յ'19 Փետրուարի 441 (անդ, 534): նոյնպէս Հ. Յ. Գաթրըճեան զՍահակ կը դնէ մեռեալ յամին 440 (Տիեզ. Պատմ. Հ. Բ. 522), եւ զՄաշտոց ծնեալ յա-

մին 361 և մեռել ութսնամեայ ի 441 (անդ, 523)։ Խորենացոյ Պատմութիւնն՝ որ կ'ուարտի մահուամբ Մաշտոցի՝ կը հասնի, ըստ նոյն Գաթրճեանի, ցամ Տետուն 441. (Հանդէս Ամսօրեայ, 1887, երես 11 ա.)։ Յիսապերէն թարգմանութեան Խորենացոյ Պատմութեան (Ս. Ղազար, 1841, երես 394, ծան. 5) Մաշտոցի մահուան օրն կը նշանակուի 19 Փետրուար 441։ Հ. Ղ. Ալիշանի համար՝ Սահակայ մահուան օրն է 7 Սեպտեմբեր 439 (Յուշիկը հայրենեաց Հայոց, Հ. Ա. 347), իսկ Մաշտոցին՝ 17 Փետրուար 440 (Օրացոյց 1876 տարւոյ)։ Նէօլգէթի հաշուոյն կը սրբազրուին այս ամենայն սխալ թուակներ։

Քայց երկու տեղիք Փարպեցոյ և Խորենացոյ Պատմութեանց թուին հակառակել Կորեան բանից՝ որ զմահ Սահակայ կը զնէ յառաջնումս ամի երկրորդ Յազկերտի—438 (7 Սեպտեմբեր)։ Փարպեցի կ'ըսէ յերես 63. «Վախճանեցաւ Սուրբն Սահակ) . . . ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի». այսպէս և Խորենացի, Գ. կէ. 566—567. «Ուր ենա Վախճան (մեծին Սահակայ), կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի. սկսեալ յերրորդ ամէ Վերջնոյ Խոսրովայ՝ Հայոց արքայի, մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի։ Յազկերտ երկրորդի թագաւորութեան երկրորդ ամս լինելով 439 Ազոստոս—440 Աւգոստոս, վեր ի վերոյ ընթերցողն կարէ այնպէս իմն հասկանալ թէ Սահակ Վախճանած է՝ ըստ Փարպեցոյ և ըստ Խորենացոյ՝ յ'7 Սեպտեմբերի 439, («ի սկզբան ամին երկրորդի Յազկերտի», «Սահակ կեցեալ մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի»). և զի Մաշտոցի մահն հանդիպեցաւ յերեքտասանն Մեհնկանի՝ յետ վեց ամսոյ մահուան Սահակայ, ապա ուրեմն և Մաշտոց Վախճանած է յ'17 Փետրուարի 440, մինչդեռ Կորիւն կը գրէ որ թէ Սահակ և թէ Մաշտոց հանդեան յառաջնումս ամի երկրորդ Յազկերտի, 438—439։ Ես հաւանեալ եմ որ Փարպեցի և Խորենացի ուղիղ գրած են համաձայն Կորեան. «ի սկզբան ա (առաջնոյ) ամին՝ երկրորդի Յազկերտի», «մինչև ցսկիզբն ա (առաջնոյ) ամին՝ երկրորդի Յազկերտի»<sup>1</sup>, ինչ-

1. Միտ դիր որ Խորենացի սովին դասաւորութեամբ բանից կ'ըսէ ի նմին տեղով. «սկսեալ յերրորդ ամէ Վերջնոյ Խոսրովայ»։



պէս որոշ որոշ կը գրէ եւ Աղուանից Պատմին (Մ. Կաղանկ. տպ. էմին, 91. տպ. Չահնագար, շ. Ա. 218—219). «Եւ յԵրկրորդն Յազկերտի արքայի յառաջին ամին փոխի Սուրբն Սահակ յելս Նաւասարդի ամսոյ». իսկ Փարպեցոյ եւ Խորենացոյ անուշադիր գաղափարողք ի բաց թողլով զթուականն ա, եւ զՆրկրորդ բառն՝ որ Յազկերտ անուան կը պատկանի՝ Յազկերտի թագաւորութեան ժամանակին աւրով, մեծապէս այլայլած են գրանս երկոցուն պատմագրացդ: Եթէ Խորենացի իրօք զմահ Սահակայ հասեալ կը համարէր ի սկզբան երկրորդ ամին Յազկերտի Երկրորդի, չէր կրնար ինքն ինքեան հակառակարանելով գրել փոքր ինչ վերագոյն (անդ, 566). «Զքսան եւ զփի ամ թագաւորեալ Պարսից Վաստ Երկրորդ (իմա՝ շինգերսրդ)՝ մեռանի, թողլով զտէրութիւնն որդւոյ իւրում Յազկերտի: Որոյ մտացեալ զհաշտութիւնն, իսկ եւ իսկ ընդ թագաւորեչն զիմէ ի վերայ զաւրացն Յունաց . . . : Յայնժամ՝ մեծին Սահակայ հասեալ հիւանդութիւն մահու» եւ այլն. *Իսկ եւ իսկ ընդ թագաւորեչն ըսելով Խորենացի կ'ակնարկէ Յազկերտ Երկրորդի թագաւորութեան առաջին տարւոյն՝ որ սկսաւ ի 4 Ապոստոսի 438, եւ յայնժամ, այս ինքն՝ յ'7 Սեպտեմբերի 438, Սահակ փոխեցաւ յաշխարհէ:*

Արժան կը համարիմ ի մէջ բերել զհատուած Խորենացոյն (Գ. կէ. 566—567) նա եւ ըստ տպագրին Վիստոնեանց՝ որ փոքր ինչ կը տարբերի. «Աւր և՛ էհաս վախճան (մեծին Սահակայ), կեցեալ եպիսկոպոսութեամբ՝ ամս յիսուն՝ և մի, սկսեալ՝ յերրորդ ամի վերջնոյ Խոսրովայ՝ արքայի Հայոց, մինչև ց'սկիզբն երկրորդին ամի Յազկերտի՝ Պարսից եղևոյ թագաւորի» եւ այլն: Վիստոնեանք (յերես 395, ծան. 40) ուղիղ գուշակած են թէ աղաւաղութիւն կայ ի տեղւոջս, եւ կ'ուզեն կարգալ՝ ջնջելով գրառն ամի՝ «մինչև ց'սկիզբն Երկրորդին Յազկերտի». ուր ըստ իս ոչ ինչ կայ ջնջելի, այլ միայն ա՛ւտաջնոյ) յաւելի: Աւսիկ Վիստոնեանց գրածն. «Locutio Chorenensis Armeniaca ad verbum Latine expressa haec est: incipiens a tertio anno postremi Chosrois Regis Armeniorum usque ad initium, secundum anni Isdigerdis. Ex compluribus autem indiciis atque argumentis, quae non est tanti subtilius explicare atque

executere, conjecturam facimus, deletâ voce *anni*, legendum esse, *usque ad initium secundi Isdigerdis*».

5. (երես 6.) *Մեկնութիւն հատուածի իրիք Պատմութեան Թովմայ Արծրունւոյ, յորում եւ զՉորրորդ զբոց Պատմութեանն Մ. Խորենացոյ.*—Յերես 82 Պատմութեանն Թովմայ Արծրունւոյ կը կարդանք. «Եւ քանզի յետ մահուանն մեծին Սահակայ Բագրատունւոյ սպարապետի, սսպետի եւ զաւրավարի Հայոց, հաւատացեալ էր Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համադասպ Մամիկոնէի, եւ որդւոյ իւրում Վարդանայ, երկիստ Վարդան ի մարզպանէն բնակել յանդորրու, այլ այնր աղագու էանց զնաց յամուրսն Մոկաց . . . : Սահակս այս այն Սահակ է՝ որոյ հրամանաւ զրեաց մեծ վարդապետն Մովսէս, արեգերահռչակեալ քերթողն, զգիրս Պատմութեան Հայոց Մեծաց, հրաշաղան յաւրինուածով, սկսեալ յԱղամայ մինչ ի կայսր Զենոն. որոյ ժամանակ կենացն անեալ ձգեալ ամս հարիւր [եւ] քսան, լի եւ պարարտ ծերութեամբ. որպէս զբեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ դրուագի խոստաբանեալ Պատմութեանն Մովսեսի Խորենացոյ վերադարձութեան, ի վերայ երկեցունց՝ դրուագեալ հատուածին. զոր եւ երանելին Կորիւն, ուսումնակից Մովսեսի եւ աշակերտ Սրբբոյն Մեսրովպայ, յիւրումս ստուգաբանեալ Պատմութեան՝ զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ»:

Կան ի հատուածիս երկու մեծ սխալք՝ որ Պատմագրին են, եւ մի մեծ շփոթութիւն՝ որ նորա գրակազմին կամ ընդօրինակողին թուի վերադրելի: Պատմագրին սխալքն են՝ նախ զերիտասարդ իշխանն Սահակ Բագրատունի՝,— որոյ ինդրանօք Խորեն-

1. Տպագիրն Կոստանդնուպոլսի, 82, կը կիտաղրէ եւ կը զբէ «Մովսէսի Խորենացոյ, վերադարձութեան ի վերայ երկեցունց». սոյնպէս կը կիտաղրէ եւ տպ. Պետրուրդի, 76, այլ փոխանակ *երկեցունց՝* ունի *երկեցունց*: Տես *երկեցունց* եւ այլուր ի Պատմութեան Արծրունւոյն. «Վասն ապստամբութեան Տաճկացն՝ որ Կայսիկքն կոչին, եւ իշխանին Սիւնկաց ի Թագաւորէն (տպ. ի Թագաւորին) Սմբատայ, եւ դարձեալ *երկեցունց* հնազանդութիւն». տպ. Կ. Պոլսի, 276. տպ. Պետրբ. 245. Յայլ գիրս նախնաց հանգիպած չեմ *երկեցունց* հօլովոյդ:

2. «Ելլ տացուք զայսոսիկ մանկականի քոյոց տիոց եւ անհասու-

նացի գրեց *գՊատմութիւն իւր ի վախճան Հինգերորդ դարուն*, կամ *Թերեւս ի սկիզբն Աեցերորդին*,—նոյն համարել ընդ Բագրատունւոյն Սահակայ ասպետի՝ Խորրովայ Գ-ի սպարապետին՝ որ մեռաւ իբր յամին 388 (Խոր. Գ. ծա. 511)<sup>2</sup>. յետ այնորիկ՝ Կարիւն յԱռաջին Աշակերտաց, եւ Մ. Խորենացի յերկրորդ Աշակերտաց, շկարեն ուսումնակից կոչուիլ: Իսկ մեծ շփութիւնն որ քսի՝ է այս. յիս բանիցն «որոյ (այս ինքն՝ Մ. Խորենացւոյ)՝ ժա-

Յեան խաղութեանը լեալ տարփանք», կը գրէ Խորենացի առ Սահակ ի կատարածի Ա գրոց *Պատմութեան իւրոյ*, 133. յորմէ յայտ է թէ սա երկտասարդ էր երբ խնդրեց ի Խորենացւոյ *գՊատմութիւնն Հայոց*:

3. Ի 2ամչեանէ եւ այսր ուրիշ սխալ կարծիք մի տիրած է, որպէս թէ *գՊորենացւոյ Պատմութիւնն* խնդրող Բագրատունին Սահակ՝ նոյն է ընդ Բագրատունւոյն Սահակայ ասպետի՝ մտրգպանին Հայոց, որ մեռաւ ի պատերազմի յամին 483 (Փրպ. Պատմ. 235, 246). «Հայր . . . եղին իւրեանց մտրգպան զՍահակ ասպետ Բագրատունի, այն՝ յորոյ ի խնդրոյ արար երանելին Մովսէս Խորենացի *գՊատմութիւն իւր*» 2ամչեան, շ. Բ. 164.—«Ըստ նմին օրինակի տայ յիշատակել զսեմական ախլ Ազնուութեանդ՝ ե զկերպարանս քաջուսունս առաքիւնոյն՝ զպանծայի Ասպետին ասեմ Հայոց՝ Սահակայ Բագրատունւոյ արեամբ շափ մրցողի վասն ի Քրիստոս հաւատոց ընդդէմ կրակապաշտ Պարսից. այն՝ որ եան մեծ իմաստ Բերթողատօր մերոյ Մովսէսի Խորենացւոյ արձանագրել զհնախօսութիւն Պատմութեան Հայոց՝ յիշատակ անանց» Շ. Մ. Ազգերեան, յԼնծայականին առ Ազգբանագիր Արամեան, ի սկիզբն Փիլոսոփի ճառիցն Յդ. Յառաջխնամութեան, Ս. Ղազար, 1822.—«Սահակ ասպետ, Մեկեանս Մովսէսի Խորենացւոյ» Շ. Յ. Գաթրընճեան, *Տիւնգ. Պատմ. շ. Բ. 552*, որ եւ այլուր գնոյն կը կրկնէ (Հանդէս Ամսօրեայ, 1887, երես 11 ա—ը), եւ մեծ անուշադրութեամբ կը շփութէ զՍահակ ասպետ Բագրատունի ընդ Արժրունւոյն Սահակայ՝ որ կ'ըսուի թէ խնդրած է ի Խորենացւոյ *գՊատմութիւն Պատկերի Տիրամուրն* ի Հոգեաց վանս. Թէ *գՊոլմայ Արժրունւոյ* եւ թէ *գ2ամչեանի կարծեաց* սխալութիւնէ խօսած եմ արդէն ի *Ընծասիրի*, Պրակ Բ. 20—21:

4. 2օր կը յարարերէ որոյ. յայտնի է թէ ոչ զկայսրն Չենոն՝ որ մեռաւ 65 ամեայ (Lebeau, *Hist. du Bas-Empire*, շ. է. 217), այլ ըստ ամենայն հաւանականութեան զՄովսէս Խորենացի, ինչպէս հասկացած են նա եւ Մկրտիչ Էմին եւ այլք. բայց Խորէն Վ. Սեփանէի կարծեօք (Աշխարհաբար թրգմ. *Պատմութեան Մ. Խորենացւոյ*, Առաջարան, երես ԼԹ. ծան. 1. եւ երես Լ. ծան. 1)՝ կը սխալի Էմին, եւ որոյ կը յարարերէ զՍահակ. իմա՝ զասպետն Սահակ Բագրատունի՝ սպարապետ Խորրովայ Գ-ի, մեռեալ իբր յամին 388!!! Տես աստէն եւ զժառօթութիւնն 7:

մանակ կենացն տեւեալ ձգեալ ամս հարիւր [եւ] քսան, ի ի եւ պարարտ ծերութեամբ» անմիջապէս յաջորդելով այլազիր հատուածն «որպէս գրեալ ւաւանդեցաւ մեզ այս» եւ այն, այնպէս իմն թուի թէ Թովմա Արծրունի ըսել կ'ուզէ՝ որ ինքն իսկ Խորենացի (!) ի շորբորդ դրուագի իւր խոստաբանեալ վերադարձութեան Պատմութեանն կը վկայէ դանձնէ թէ ապրեցայ (!) 120 տարի, կամ որ նոյն է՝ թէ մեռայ (!) 120 ամեայ, եւ թէ Գորիւն եւս (!) կը հաւատարմացնէ յիւրում ստուգարան Պատմութեան թէ Խորենացի արդարեւ վախճանեցաւ ի հասակի 120 ամաց. եւ զի Գորիւն ի Վարս Մաշտոցի բնաւ չյիշատակեր զանուն Խորենացւոյ, Կիրակոս Գանձակեցի՝ որ յ'ԺԳ դարուն անշուշտ կը կարդար զՊատմութիւն Արծրունւոյն ըստ մեր այժմու օրինակաց՝ հետեւցուցած է ի վերոյգրեալ բանից Թովմայի թէ Գորիւն գրեց «զՊատմութիւն Արբոյն Մետրոպոլայ եւ այլ ժամանակաց»:

Ըստ իմում կարծեաց՝ Արծրունւոյ այլազիր հատուածն՝ բնագրին թղթոց յետեւյառաջութեամբ անցած է յիւր բնիկ տեղւոյն յ'81 երեսէ յերես 82, ուր ոչ միայն բան բանի շարմարիք, այլ եւ անլուծանելի առեղծուած մի կը կազմեն շորեքեան բառքն ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին: Ըս ի գտանել զուղիղ դասաւորութիւն բանից Պատմագրին՝ պէտք է 7—17 տողից 81 երեսին կցել զ'20—27 տողս 82 երեսին, այսպէս. «եւ այս ամենայն այսպէս եղեալ, կեցեալ Սուրբն Սահակ ամս հարիւր [եւ] քսան<sup>5</sup>, փոխի յաշխարհէս ի կարգս Հրեշտակաց, եւ տարեալ հանգուցանեն զնշխարս Արբոյն [ի] Յաշտիշտ Տարւնոյ, ի տեղոց վկայարանի Արբոյն Յոհաննու Մկրտչին եւ Աթանաղինի վկային: Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի եւ սուրբ վարդապետն Մաշտոց. եւ խաչանշան լուսով խաղացուցանեն բաղմութեամբ նախարարացն Հայոց ի ձեռն Վահանայ Ամատունւոյ, որ էր ի ժամանակին սպարապետ<sup>6</sup>

5. «Անտեղի է պատմաց սմանց ըսածն՝ թէ 110 կամ 120 տարի ապրած ըլլայ Ս. Սահակ. վասն զի այդ թուով՝ ծնունդն կ'ենէ յ'319 կամ 329 թիւն Քրիստոսի, յաւուրս Ս. Լուսաւորչի»: Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, 2, Ա. 314:

6. Ըստ Գորեան, Վարք Մաշտոցի, 27, Վահան Ամատունի ոչ էր



Հայոց. եւ տարեալ հանգուցանեն զնա իյԱւշական զիւր, ի գաւառին որ կոչի Ոսն Արագածոյ. \*որպէս՞ զրեալ աւանդեցաւ մեզ այս ի շորրորդ դրուագի խոստարանեալ Պատմութեանն Մովսեսի Խորենացւոյ վերագարձութեանն, ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին. զոր եւ երանելին Կորինն, ուսումնակից Մովսեսի եւ աշակերտ Սրբոյն Մեսրոպայ, յիւրումն ստուգարանեալ Պատմութեանն՝ զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ\*»: Գիանեք զի Խորենացի «ժերացեալ, հիւանդոտ, անպարապ ի թարգմանութեանց, եւ զերագելն միայն խոկալով» (Գ. կէ. 562—563) աւարտած է զերրորդ զիրս Պատմութեանն, յորում (կէ. 566—570) միարան Կորեան՝ կը նշանակէ համառօտիւ զմահ եւ զթաղումն Սահակայ եւ Մեսրոպայ, բայց կը խոստանայ (567) յայլում ժամանակի դրուատել արժանաւորապէս զիւր Հայրն զՍահակ. «Զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանել բանիւ ըստ արժանի Հաւրն դրուատից. այլ զի մի յերկարութիւն ճառիցս ինիցի ձանձրութիւն ընթերցողացն, այլում՝ տեղւոյ եւ ժամանակի զայսոսիկ թողցուք, արտաքոյ այսց զրոց՝ ուր սկըզբանն հրաւիրեցաք՝ առնել թելադրութիւն»: Նոյնպէս եւ զՄեսրոպայ կ'ըսէ յերես 569. «Այլ վասն զի զբոլոր ուղղութիւնս նորա ոչ քաւական եմ՝ ասել,՝ ի հանգիստ նորա նշխարացն դարձուցից զբանս»: Արդ՝ Թովմայ Արժրունոյ վերոյնդեալ բանիւք կը տեղեկանանք թէ ստուգիւ Խորենացի իւր խոստարա-

սպարապետ, այլ հազարապետ Հայոց Մեծաց, նոյնպէս և ըստ Խորենացւոյ (Գ. կէ. 570), «Ի ժամանակին յայնմիկ ի նա (ի Վահան Ամատունի) էր հաւատացեալ Պարսից զհազարապետութիւն Հայոց աշխարհիս»:

7. Նախընթաց 13 րոտքն, «որոյ ժամանակ կենացն տեսեալ ձգեալ ամս հարիւր [եւ] քսան, լի եւ պարարտ ծերութեամբ», յոյժ հաւանական է որ Մ. Խորենացւոյ համար են: Բայց քանզի Արժրունին՝ նոյն իսկ զՍրբոյն Սահակայ կ'ըսէ «կեցեալ ամս հարիւր [եւ] քսան», կարելի է թէ թուղթ ինկած է ի քնազրէն, եւ թերեւս Պատմագիրն՝ կրկին անգամ զառձալով ի Սուրբն Սահակ՝ վերստին զրած է «որոյ ժամանակ կենացն տեսեալ ձգեալ ամս հարիւր [եւ] քսան, լի եւ պարարտ ծերութեամբ, որպէս զրեալ աւանդեցաւ մեզ այս» եւ որ ի կարգին:

8. Երկու շնորհաբերք փէ դարու կը զրեն. «Այլ վասն զի զբոլոր նորա առաքինութիւնս ոչ քաւական ստացեալ»:

նեալ վերադարձութեան Պատմութեանն չորրորդ գրուագին (==գլխոյն) մէջ ընդարձակօրէն խօսած է զերկրցունց վարդապետաց իւրոց զՍահակայ եւ զՄեսրոպայ, «ի վերայ երկեցունց գրուագեալ հատուածին» (==ի հատուածին գրուագելոյ ի վերայ երկեցունց). եւ անշուշտ յայն հատուածէ կ'առնու Երժրունին՝ թէ Սահակ ապրեցաւ 120 (?) տարի, թէ իւր մարմինն ամփոփեցաւ ի վկայարանին Ս. Յովնանու Մկրտչի եւ Աթանագինեայ որ ի Յաշտիշատ, թէ Մեսրոպ թաղեցաւ յԱշական գեղջ՝ որ է ի գաւառին Ոտն Արագածոյ: Իսկ Խոստարանեալ Վերադարձութիւն Պատմութեանն Մովսէսի Խորենացոյ՝ է նորա Չորրորդ գիրքն, զոր այլուր Երժրունին կը կոչէ յայտնապէս Չորրորդ Դպրութիւն Մովսէսի, երես 5. կամ Երկրորդ Պատմագրութիւն Մովսէսի տիեզերահաշակեալ վարդապետի եւ քերթողի, երես 63:

Յետ այսպէս դատաւորելոյ եւ պարզարանելոյ զԵրժրունոյն բանս 81 եւ 82 երեսաց, ոչ աւելորդ թուի ինձ յիշատակել եւ գայլոց վարկածս եւ զմեկնութիւնս: Հ. Յոհաննէս Չոհրապետն (Յառաջարան Պիտոյից գրոց Մ. Խորենացոյ, Ս. Ղազար, 1796, երես Թ) ի մէջ կը բերէ զբովանդակ հատուած 82 երեսին, «Սահակս այս այն Սահակ է» մինչեւ «զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ», ճիշդ ինչպէս ունի տպագիրն, միայն երկու բառից տարբերութեամբ, «ի վերայ երեցունց գրուագեալ հատուածին . . . աշակերտ Սրբոյն Մաշտոցի», փոխանակ երկեցունց, Մեսրոպկայ:—Ալիշան (Բազմավէպ, 1851, երես 69 ը) կը գրէ նոյնպէս երեցունց, հանդերձ եւ այլ ժամը տարբերութեամբբ. «Որպէս աւանդեցաւ այս ի Դ գրուագի խոստարանեալ պատմութեան Մովսէսի Խորենացոյ՝ վերադարձութեան ի վերայ երեցունց գրուագեալ հատուածոյն». եւ կը մեկնէ՝ վերադարձութիւն ի վերայ երկցն կամ երրորդի հատուածեալ գրուագին. (անդ, երես 70 ա). ուր ըստ իս՝ վերադարձութեան բառի աղերսն խոստարանեալ եւ Պատմութեանն բառից հետ է, Խոստարանեալ վերադարձութիւն Պատմութեանն, այս ինքն՝ Վերադարձութիւն կամ Յաւելուած Պատմութեանն զոր խոստացեալ էր գրել Մ. Խորենացի:—Երեցունց ունի եւ Հ. Գար. Զ. (Հայկ. Հին Դպր. Պատմ. 356, տող 1)։—Տ. Գալուստ Մկրտչեան (Միա-

բան) Գ. և Գ. նշանագրաց շփոթութիւն մի ննթալընդով՝ կ'ուզէ կարգալ «Որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի Գ. (յերբորդ) դրուագի խոստարանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացոյ»։ (Արարատ, ամսագիր էջմիածնի, 1891, երես 94)։ Երբորդ դրուագաւ կը հասկանայ զերբորդ զիրս Խորենացոյ Պատմութեան (անդ, տող 1)։ և կ'ըսէ թէ Երծրունի կ'ակնարկէ ի կե գլուխ նոյն Երբորդ գրոց, յորում Խորենացի կը կոչէ զանձն «ձերացեալ»։ (անդ, երես 97)։ իսկ «վերադարձութեան ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին» կը նշանակեն ըստ Մկրտչեանի՝ թէ «Աւանդուցաւ այս մեզ Մովսիսի Խորենացոյ պատմութեան երբորդ դրուագում, որ վերադարձութիւն էր երկու դրուագեալ հատուածների վրայ։ Կամ աւելի պարզ ասած՝ երբորդ դրուագում, որ գրուեց երկու դրուագից յետոյ»։ Ուրեմն և Մովսիսի պատմութիւնն ունէր առաջին, երկրորդ և երրորդ դրուագ կամ զիրք. բայց ոչ բնաւ չորրորդ։ Երկու գրքից կամ դրուագից յետոյ գրուող զիրքը լինում է երրորդ զիրք և ոչ երբէք չորրորդ։ Երկեցունցը ամենադրական ապացոյց է, որ պէտք է մկրտչագրում լինէր անպատճառ Գ, որ յետոյ շատ սովորական սխալմամբ կարդացուել է Գ»։ (անդ, երես 94)։ Թող ընթիւնցողք կըշուսազանն զիմ մեկնութիւնս ի վերայ երկեցունց դրուագեալ հատուածին և չորրորդ դրուագ բառից ընդ մեկնութիւնս Ալիշանի և Մկրտչեանի, և վճռեն թէ ո՞ր կարծիք են ընդունելի։ Պէտք է նա և ըսեն որ Մկրտչեան հասու եղած չէ խոստարանեալ բառի գօրութեան, զորմէ բնաւ չխօսիր. նմանապէս երբ կը գրէ (անդ, 98) թէ «Թովման, Սահակ Բագրատունուն, հարկաւ սխալմամբ, աւելի շուտ մեռած է համարում, քան թէ Վարդան Մամիկոնեանին», կը ցուցանէ որ իմացած չէ թէ ո՞վ է այն Սահակ Բագրատունի՝ զորոյ մահն կը յիշէ Թովմա յերես 82. դարձեալ՝ մեծապէս կը սխալի համարելով թէ «այդ միակ շորշորդն է մեր ամբողջ գրականութեան մէջ, Խորենացոյ Զորբորդ գրքի գոյութեանը վկայող» (անդ, 91), և թէ «մինչև այժմս ոչ

9. Արդեօք այնչափ տխմար էր Թ. Երծրունի որ այսպիսի ծիծաղելի անլորդարանութիւն մի ընէ՝ թէ Խորենացի զերբորդ զիրս չարագրեց յետ Առաջին և երկրորդ գրոց։

մի տեղում չէ յայանուել Խորենացու 2որրորդ գիրք և ոչ մի ուրիշ տեղում էլ չէ յիշուած այդ մասին, բացի Երծրունու այս հատուածից» (անդ, 94)։ մինչդեռ Երծրունի որոշակի կ'ըսէ ևս այլուր. «2որրորդ դպրութիւն Մովսէսի», երես 5. «Երկրորդ պատմագրութիւն Մովսէսի», երես 63: «Խորենացու 2որրորդ գիրքը» վերնագրով յօդուածն՝ հրատարակեալ յԱրարատ ամսագրի, 1891, երեսք 87—106, սրով Տ. Մկրտչեան կը կարծէ թէ «յօդս է' ցնդում 2որրորդ գրքի գոյութեան խնդիրը» (անդ, 97), անընդունելի է ինձ յառաջին բառէն մինչև ի վերջինն. ոչ ինչ ընդհատ ևս Խորէն Վ. Սահփանէի գրածներն յ'Առաջարանի աշխարհարար թարգմանութեան Խորենացոյ Պատմութեան, երեսք 1Ը—ԽԳ<sup>10</sup>:

M. Brosset հրատարակած է ի Պարբերիկ յամին 1874 (ի մասնին *Collection d'historiens arméniens*, 2. Ե. երեսք 1—266) զգաղղիբէն թարգմանութիւն Պատմութեան Թ. Երծրունոյ, կարի անշահ: Աւասիկ թէ ինչպէս հասկացած է զհատուածն շարքէս գրեալ անդեցաւ մեզ այս . . . «ainsi qu'il est exposé et déclaré dans le IV<sup>e</sup> livre de l'Histoire (de Mosé Khorénatsi), en se référant à deux des divisions précédentes.» երես 68. Կամ ինչպէս կը թարգմանէ անդ ի ծանօթութեան, «dans la IV<sup>e</sup> section ou sommaire de l'Histoire annoncée, avec référence à deux sections indiquées sommairement.» ուր և կը յաւելու. «Si ce n'est pas là le sens exact, je ne sais quelle autre version est possible.» ս'ւր Թ. Երծրունի, և ս'ւր Բրոսէ:

10. Որչափ ստոյգ է թէ Խորենացի հապճեպով գրած է գերիս՝ գիրս Պատմութեան իւրոյ, նոյնչափ ստոյգ է թէ ունէր ի մտի գրել պարագով Յուելուած մի կամ 2որրորդ գիրս. «Անխորդ համարելով դարտաբնոցն երկրորդել յազգս իսկգրանն առասպելս, բայց եթէ զԸնիսն». Ե. գ. 18.— «Ջորս ոչ կարեւոր համարեցաք այժմ անուամբ թուել, բայց զԸնիսն». Բ. ծ. 276.— «Ոչ ինչ վասն այնց ազգաց . . . ճտեցցուք . . . այլ միայն գորս հուաստի գիտեմք զԸնիսն». Բ. կգ. 306.— «Վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այլու տեղոյ եւ ժամանակի զայստսիկ թողեալ». Ե. գ. 20.— «Ձայն վասն սորա (ենթոյսոյ) ի տեսութեանց՝ ի հրաւիրեալն մեք յուղարկեցցուք տեղի». անդ, 22. տես և գրանս իւր գորբոյն Մահակայ, Գ. կէ 576, գոր արդէն յիշեցի:



6. (երես 13.) *Քննութիւն Սուտ-Կորեանն, եւ նորին զաղղիբերէն թարգմանութեան հրատարակելոյ ի Վիկտոր Լանգլուայէ.*—Վենետից Մխիթարեանք յետ ի լոյս ընծայելոյ յամին 1833 զՊատմութիւն վարուց եւ մահուան Սրբոյն Մաշտոցի (տպ. Մեսրոպայ), որ է իսկական գործ Կորիւն Վարդապետի, յամին 1854 հրատարակեցին ի ժՄ հատորի Հայկական Սոփեբաց, երեսք 5—37, եւ այլ կենսագրութիւն մի Մաշտոցի՝ այսու մակագրաւ. Պատմութիւն վարուց Երանելոյ Սուրբ Վարդապետին Մեսրոպայ, զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան: Այս Վարդ Մաշտոցի, զոր ես կը կոչեմ «Սուտ-Կորիւն», (քանզի խառնուրդ է քանից Կորեան, Մ. Խորենացոյ եւ անանուն կարկատողի ի ժՄ կամ յ'ԺԲ դարու,) հանեալ է ի «Տնագոյն (?) եւ կէս երկաթագիր» Չեռագրէ Ազգային Մատենադարանի Գարիս քաղաքի, ըստ վկայութեան Հ. Բարդի Սարգիսեան (Ազգածանգեղոս, 109). բայց թէ յորում ժամանակի գրեալ է Չեռագիրդ կամ կարէ գրեալ լինել՝ զիտել փափագողն պարտի անձամբ երթալ ստուգել ի նոյն Մատենադարանն:

Հայերէն լեզուի տեղեկին՝ քանի մի սող միայն համեմատելով ի կրկին տպագրութեանցդ 1833 եւ 1854, իսկոյն կը ճանաչէ թէ սր է բուն Կորիւնն՝ արժանի Ռսկեզարու գրականութեան, եւ սր սուտն՝ անարժան վերագրուելոյ Մաշտոցի աշակերտի: Ոչ այսպէս Յոհաննէս Ռափայէլ էմին. սա՛ յուսահատեալ ի բազմախուռն դժուարութեանց բնագրին Կորեան՝ պատուական գիւտ մի բրած կը համարի պատահելով երկրորդ տպագրութեանն, զոր իրր հարազատ մատենագրութիւն Կորիւն Վարդապետի կը թարգմանէ ի զաղղիբերէն բարբառ, եւ Վիկտոր Լանգլուա եւս կը հրատարակէ յիւր *Collection* եւ այլն, Հ. Բ. երեսք 9—16, արձակ համարձակ կոչելով զայն “*préférable à la première édition.*” (անդ, *Introduction*, երես 4 ա): Չիս չզարմացնիր ոչ էմինի անգիրութիւնն եւ ոչ Լանգլուայի. բայց անշափ կը դարձանամ երբ Վենետից Մխիթարեան մի, առանց զանազանելոյ զբուն Կորիւնն եւ զսուտն, կը գրէ խառն ի խուռն. «Կորեան պատմութիւնն տպագրուած է ի Վենետիկ ի շարս գործոց նախնեաց (1833). դարձեալ ուրիշ հին (?) օրինակէ ի կար-

գի Սոփերաց (1854)՝ ընարեկագոյն ընթերցուածովք: (Հ. Գար. 2. Հայկ. Հին Գար. Պատմ. 295). երբ ուրիշ Մխիթարեան մի՛ նայնպէս անխաբարար իբր Կորեան երկասիրութիւնս կ'ընդունի զկրկին հրատարակութիւնս *Վարոց Մաշտոցի*, մերթ զիմեյով առ առաջինն (Ալիշան, *Այրարատ*, երես 92 ը, ծան. 2. [բուն Կորիւն, երես 16], մերթ առ երկրորդն (անդ, երես 93 ա, ծան. 2 եւ 5. երես 189 ա, ծան. 2. [սուա Կորիւն, երեսք 17, 33—34]). երբ այլ ոմն ի նմին դպրոցէ՝ որ թէպէտ կ'ընդունի թէ վաւերական Կորիւնն է հրատարակութիւնն 1833 ատուայ (Հ. Բարսեղ Սարգիսեան, *Ազաթմանզեղոս*, 109—113), սակայն տարապայման դրուատեօք կը դժուարանէ զհրատարակեալն ի 1854, թէ «Ոճը սեղմ է, աւելի ազդու, կոկ եւ հասկանալի». թէ Կորեան «ընդարձակ պատմութենէն ընտրանօք եղած ծաղկաբաղ մի է վարոց Ս. Մեսրոպրայ». եւ թէ «Կորեան յատուկ եւ այլոց անիմանալի խրթնարանութիւնքը, որոց ստէպ կը հանդիպի ընթերցողն ընդարձակին մէջ, սատ, ընդհակառակն, կոկուած եւ պարզուած են, ըստ մեծի մասին» (անդ, 110): Աշմարտութիւնն այս է՝ որ Սուա-Կորիւնն է անօճ անհամ գրութիւն, ուր շին պակասիր խառնաշփոթ եւ անիմանալի պարբերութիւնք, ուր յոռեգոյն ընթերցուածք կ'առաւելուն քան զընարեկագոյնս. թող զյայտնի կամակորութիւնս Կորեան բանից. զոր օրինակ երբ կ'ըստ՝ թէ եղնիկ եւ Յովսէփ առաքեցան յեղեսիա, «զի յասորի բարբառոյն զՍուրբ Գիրս նոր թարգմանեցեն ի հայ լեզու». երես 16. մինչդեռ ըստ Կորեան, «զի յասորական բարբառոյն զնոցին (այս ինքն՝ զՍուրբոց) Հարցն Սրբոց զաւանդութիւնս՝ հայերէն գրեալս դարձուցեն». երես 20:

Տեսցուք այժմ զթարգմանութիւնն էմինի, լի անճշդութեամբք, վրիպակօք եւ աղճատարանութեամբք (galimatias): Ընճշդութիւնք. «եւ զհանգիստ քնոյ զիշերոյ յտանաւոր արնութեամբ ի թաւթափել ական վճարէր բաղում անգամ». երես 7. *Souvent, sans y prendre garde, il veillait debout, sans profiter du repos de la nuit.* p. 9 a. միտ զիր նա եւ *sans մակրայի*

1. Տ. եմիլ Տէզա պիտի բոլր անտարակոյս. «Costava poca fatica il dire: nel volume XI, alle pagine 5—37.», տես Emilio Teza, *Delle sentenze morali di filosofi greci*, Roma, 1893, երես 5, ծան. 1:

անարուեստ կրկնութեան.— «Ժառայ Ըստուծոյ ըարծրելոյ» . 7. Serviteur du Dieu glorifié. p. 9 b.— «Յորոյ ի ծնոն մեծածեծ սրանչիկք երեւեալ» . 8. De grands miracles s'accomplirent par son entremise. p. 9 b.— «Զաւառնն եւ զմեհնն» . 20. Au printemps et en hiver. p. 12 b.— «Խոնարհութեամբ եւ հեղութեամբ եւ կուսութեամբ նահատակեալ» . 21. En pratiquant l'humilité, la douceur, la charité. p. 13 a.— «Ի ձեռքս քսյանն առնեմ զհոգի իմ» . 28. Je confie mon âme pure entre vos mains. p. 14 a. Թարգմանելի էր Je remets mon âme entre vos mains. (Սուտ-Կորիւնն՝ փոխանակ զայս բան վերագրելոյ մարգարէին—Սդ. Լ. 6. յարմէ եւ Դուկ. ԻԳ. 46—ինչպէս ունի Կորիւն յերես 25, կը վերագրէ նախավկային, որ չէ ուղիղ. սորա բանն է. «Տէր Յիսուս, ընկալ զհոգի իմ» . Գործք Առաք. է. 58. ինչպէս յառաջ կը բերէ եւ Կորիւն, անդ).— «Գպիր» . 28. Lecteur p. 14 a. ասելի էր Enfant de choeur.— «Ընդէն ի նմին ամի յետ վախճանի երանելոյն սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն, յելծնն եւ տասնն (տպ. ի տասնն ե յելծ) մեհնեանի» . 31. La même année, le dixième mois après la mort du bienheureux saint Sahag, le dix—huitième jour de méhégan. p. 14 b. եւ այլն եւ այլն:—Վրիպակք. «Յետ այսորիկ ի ծառայութիւն Ըստուծոյ մարդասիրի գարձեալ» . 6. Il embrassa ensuite le service de Dieu, resta l'ami des hommes. p. 9 a.— «Յովանդակեալ զքսանն եւ երկուս (տպ. երկուց) յայանիսն, զհին Կտակարանսն յեղուլ ի հոյս բանն» . 11. Et on traduisit complètement en arménien les vingt-deux livres authentiques et l'Ancien Testament. p. 10 b. զննելի էր de, եւ ոչ et.— «Եւ առարէ սուրբն Սահակ զՄեսրոպ առ կայսր Թէոդոս . . . թողամբն իւրով Վարդանա» . 13. Saint Sahag envoya vers l'empereur Théodose (le Jeune)... Mesrob et son neveu Vartan. p. 11 a. Սուտ-Կորիւնն կ'առնու զայս ի Խորենացոյ (Գ. ծէ. 530, 532, եւ այլն), որ թոռն, petit-fils, Ս. Սահակայ կը կոչէ զՎարդան, զի էր որդի զստեր նորա Սահականուշայ՝ «որ տուա յամուսնութիւն Համազասպայ Մամիկոնեանի» (նոյն, Գ. ծա. 510—511). Լանդուա եւս neveu կը թարգմանէ զԽորենացոյն թոռն (Collection եւ այլն, Հ. Բ. 164 p, 165 w), անշուշտ վասն զի Վենետկոյ Միսիթարեանք

յիտալերէն թարգմանութեան Պատմագրիս *nipote* գրած են. բայց  
 եթէ յիտալական լեզուի ներելի է զթոռն թարգմանել լատինա-  
 քանութեամբ *nipote*, գաղղիերէն լեզուն կը պահանջէ *petit-fils*,  
 եւ ոչ *neveu*, որ է եղբորորդի, Քեռորդի: Կը գտնուի *neveu* = թոռն  
 յայլ եւ այլ ողբերգութիւնս Կոսնէյի եւ Ռասինի. այլ այս նշանա-  
 կութիւն՝ վաղուց խափանեալ է, կ'ըսէ Լիարէ, *Dict. de la lan-*  
*gue française*, ի բառն *Neveu*, առաջին նշ.— «Ղեւոնդ», 17.  
*Léon*. p 12 a. *Ղեւոնդ* է *Léonce*, լատ. *Leontius*, իտ. *Leonzio*.  
*Ղեւոն* է *Léon*, լատ. *Leo*, իտ. *Leone*.— «Զգոյշ լինիջիր անձինդ».  
 19. *Veillez sur vos personnes*. p. 12 b. փոխանակ *vous-même*.  
 — «Ազէ ածէք զմտաւ որ այսպիսի համբերութիւն . . . կրեաց, զի  
 մի աշխատ լինիցիմք եւ լքանիցիմք». 24. *Réfléchissez . . . qu'il*  
*endura cette sorte de passion, pour que nous ne nous repo-*  
*sions pas et que nous ne nous délassions pas*. p. 13 b. շատ  
 այլանդակ թարգմանութիւն. Էմին շէ հասկացած թէ է բանն  
 Պաղոսի, եբբ. ԺԲ. 3, որ ի նոր Կտակարանին *de Genoudeh* է  
 այսպէս. «Pensez donc en vous mêmes à celui qui a souffert  
 de si grandes contradictions . . . afin que vous ne vous décou-  
 ragiez point, et que vous ne tombiez pas dans l'abattement».  
 — «Զորոյ եւ դտան յիշատակի սրբոյն տաւնախմբնն յերեսուն  
 նաւասարդի ամսեանն». 29. *On fêta l'anniversaire de la fête*  
*du saint, le 30 du mois de navassart*. p. 14 b. (*on fêta la*  
*fête!*). թարգմանելի էր. «Et [tous les ans] on célèbre la mé-  
 moire (*կամ* le jour de la mort) du Saint le 30 du mois de  
*Navaçard*».— «Եւ մինչդեռ այնպէս մերձատրացն առ իրեւ  
 (տպ. իր ե) զհոգեւոր եռանդն բորբոքէր յաստուածսիրութիւն».  
 31. *Tandis qu'il excitait ainsi l'ardeur spirituelle du prochain*  
*à l' amour de Dieu*. p. 14 b. թարգմանելի էր *de son entou-*  
*rage*.— «Իսկ բարեացապարտն Վահան յանկարծահաս կենաց,  
 ասանջական ցանկալի ամենայն սրբոց լինէր, որ աշխարհածը-  
 նունդ հայրենեացն սեպհական որդի գտեալ՝ շնորհաքն Քրիս-  
 տոսի մերձատր կենացն յաւիտենից լինէր». 35. *Le bienfaiteur*  
*Vahan mourut tout à coup et fut reçu avec joie par tous les*  
*saints. S'étant montré un vrai fils de sa patrie, d'où sortit*  
*l'humanité, il fut digne d'obtenir par la grâce du Christ*



la vie éternelle. p. 15 b. *և ի ծանօթութեան*, 4. On sait qu'après le déluge, l'arche de Noé s'arrêta, dit la tradition, sur le mont Ararat, en Arménie. Այս հաստուած Կորեան խանգարեալ է *և իմաստն անյայտ*. (տես Կոր. — Ագաթ. թիւ 151.) այսչափ միայն ստոյգ է որ Վահան ոչ կը մեռնի յանկարծակի, *և ոչ ընկալեալ լինի յամենայն սրբոց ուրախութեամբ*. (Ասպնջական է որ ընդունի դոր, *և ոչ՝ որ ընկալեալ լինի յուժեքէ.*) իսկ «այլարհածընունդ հայրենեացն» բառերով իմանալ զտապանն Նոյի՝ անհեղեղ ցնորք կն. Հայրենիք է Հայր. տես Կոր. — Ագաթ. թիւ 151, ԳԻՏ. — Մորր ոչ մեզ է շահս, այլ *և որք զմատենս ընթեանուն, յայտնեսցի արանցն քաջութիւն»*. 36. *Cela ne nous rapporte aucun profit; mais ceux qui liront ce livre connaîtront le mérite de ces hommes*. p. 16 a. *և այլն և այլն* — Աղճատարանութիւնք. «ծովացուցանէք զվարդապետութեանն խորութիւն» 15. Comblait les profondeurs de la doctrine. p. 11 b. — «*Եւ եւայր հոգևով յաստուածապաշտութեանն մրցարան վերին կոչմանն»*. 22—23. Il se transportait par l'esprit au milieu du paradis de l'adoration de Dieu. p. 13 a. — «*Եսկ արդ եթէ ի թեթեւագոյն արուեստուոր և հանճարեղ իմաստից սգիտանամք, որ ընդ աստուածախաւսն կատարէ զնորհացն ներգործութիւնն, որով երանելին Պաղոս ամենեցուն սգիտանալ ասէ»*. 24—25 Or pouvons-nous ignorer les connaissances les plus ordinaires et les plus simples, qui, selon les prophètes, attirent les grâces dont le bienheureux Paul a dit que tous les ignorent? p. 13. b. Յետինս կարէ գեղեցիկ օրինակ լինել այն տեսակ աղճատարանութեան դոր Գաղղիացիք կը կոչեն galimatias double, անիմանալի թէ գրողին և թէ ընթերցողին:

Սուս-Կորիւնն փորբադոյնն է յերկհատորեան թարգմանութեանց Հայ պատմագրաց դորս հրատարակած է Վ. Լանգլուս. եթէ այսչափ անհոգութեամբ և սգիտութեամբ թարգմանեալ է համառօտ գրուած մի, ապա մեծամեծ մատենագրութիւնքն Ագաթանգեղ, Քիւզանդ, Խորենացի, սրչափ ևս աւելի:

7. (իրես 17.) Աշակերտք Սրբոյն Սահակայ, և աշակերտք Սրբոյն Մաշտոցի. — Կաւանդէ զՍահակայ Խորենացի

(Գ. խթ. 507), թէ ունէր «աշակերտս վաթսուն . . ., արք  
կրանատրք, խարազնաղգեսաք, երկաթ ապատք, բեկագնացք, որ  
յար ընդ նմա շրջէին. որովք մշանջնետուր պաշտամբ կատարէր  
զկանոնն, որպէս դայն՝ որ յանապատսն էին»: Ի գիրս մեր կը  
յիշատակուին յանուանէ իրր աշակերտք անմահ կաթնզրիկսին,  
եզնիկ Կոզրացի (Կորին, Վարք Մաշտոցի, 21).—Երեմիա  
սարկուագապէտ (նոյնն, անդ, 25. Խորեն. Գ. կէ. 567).—  
Երբահամ կախկոպոս Մամիկանէից (Թ. Արծր. 90).—Անդրէաս  
(«Երեղայ մի Անդրէաս անուն ի Ղազարու վանացն՝ որ է Սուրբ  
Առաքեալքն Մշոյ . . . : եւ էր Անդրէասն այն յաշակերտաց Սրբոյն  
Սահակայ». Յայտատուրք, Երեղ իբ. տես Սոփ. Հայկ. Թ. 58—  
59, ծան. 10. տես եւ Վարդան Երեւելցի, Պտմ. 111):

Մաշտոցի աշակերտք կը ճանաչուին՝ Յովսէփ Վայոյձորեցի  
(Կորին, 1. Խորեն. Գ. կէ. 570. Սա. Ասողիկ, Պտմ. Բ. ք. 78).  
—Յովհան Եկեղեցային, եւ Յովսէփ Պաղնացի (Կորին, 10. Խո-  
րեն. Գ. ծգ. 520).—Տիրայր Խորձենացի, եւ Մուշէ Տարանեցի  
(Կորին, 14. Խորեն. Գ. ծգ. 522. Փրպ. Պտմ. 29. յետին եր-  
կու պատմիչքդ՝ Տէր կ'անուանեն զՏիրայր).—Ենովք, եւ Դանան  
(Կորին, 18. Խորեն. Գ. կ. 542).—Յովնաթան (Կորին, 19. Խո-  
րեն. Գ. ծգ. 523).—Թագիկ, որ թուի Բասենոյ կախկոպոսն,  
նահատակեալ յԱսորեստան (Կորին, 27).—Յովհան Խոստովանոց  
(նոյնն, 28).—Ղեւոնդ Վանանդեցի («Այրն Աստուծոյ Մաշտոց՝  
վարդապետն նորին», այս ինքն՝ Ղեւոնդի. Փրպ. Պտմ. 119 տես  
եւ Խորեն. Գ. կ. 542. Թ. Արծր. 81).—Կորին՝ որ «Հայր իմ» կը  
կոչէ զՄաշտոց յերես 28. (տես եւ Փրպ. Պտմ. 25, 119. Թ. Արծր.  
82). —Արձան (Փրպ. Պտմ. 119):

Թէ սմանք ի վերոյիշելոցդ կարեն աշակերտած լինել թէ  
Սահակայ եւ թէ Մաշտոցի, չէ ինչ անհաւանութեան. հաւատալի  
Յովսէփ Պաղնացի, աշակերտ Մաշտոցի. կը կոչուի եւ աշակերտ  
Սահակայ. «Յովսէփ եւ Եզնիկ, արքանեակեր Սահակայ», կը  
գրէ Սա. Ասողիկ, Պտմ. Բ. ա. 75, Կը գաննիք եւ այլուր (Սոփ.  
Հայկ. ԺԱ. 47) որ Թաթուր եւ Վարոս «աշակերտք էին սուրբ  
հարապետացն (իմա՝ վարդապետացն) Սահակայ եւ Մեսրո-  
պայ»:

8. (երևո 18.) Թէ ինչ կը նշանակէ Խորին Ատրի.— Կը գրէ Հ. Մկրտչ Ըպերեան ի Յուցակի մատենից եւ մատենագրաց Նոր Հայկազնին յանուն Նփր. «Սբոյն Երբայ եփրեմի Խորին կամ Խորին այսինքն վերձանդի Ատրեոյ: Դարձեալ ի Բառարանին ի բառն Խորի, Վտրի, կամ Խորի, կամ Խոր. որ յողի գրի ի մեզ Խորին. ըստ արար. բուրբա, քարբա, գառի, զըրայէթնի. այսինքն Քաջ վերձանոդ. ընթերցող եւ մակնիչ գրոց. (ըստ աճկ. ընթերցող կուրանի իւրեանց. զի եւ գուրան, կամ զըրայէթ, է ընթենունդ.) Սբոյն Երբայ եփրեմի Խորին (կամ Խորին, կամ Խորն) Ատրեոյ». ձառնախրք, եւ այլն: Ըպերեանն կարէր յաւելուլ նա եւ զարարականն Խորին, որ է Ընթերցող, նոյնպէս Հ. Գար. 2. կը գրէ Խորին Ատրի (ՅՂ. Բարեխօս. Սրբոց, Ս. Ղազար, 1852, էրեսք 90, 206), եւ Խորի Ատրի (Մտնդր. 443, եւ այլն): Բայց սխալ է թէ Խորին կամ Խորի գրութիւնն, եւ թէ արարական ստուգարանութիւնն Խորին Ատրիք, որ է թարգմանութիւն յունականին Կիլի Սիրիա, զգ. Coelézyrie կամ Syrie creuse, էր մասն ինչ Ատրեոց աշխարհին, երկիր հովաձա եւ ընդ մէջ գօտոյ Լիբանանու եւ Լիբանաների (զգ. Anti-Liban). «Եւ անտի զարձեալ հմուտ ի Բառար՝ քաղաք Խորին Ատրեոց». Վկ. Ս. Բարթուղիմէոսի, Սոփ. Հայկ. ԺԹ. 13. — «Խորին Ատրիք Միջագետաց, Դամասկոս եւ Հալապ». Միխ. Աս. 396—397. — «Վասն որ ինչ գործեցաւ ի կողմանս Միջագետաց եւ Խորին Ատրեոց» Կիր. Գանձակ. Պատմ. 227. յորմէ Խորին կամ Խոր Ատրի կը կոչուի ծնեալն ի նմին աշխարհի. «Տեսան եփրեմի Խորին Ատրեոյ տեսութիւն յաղագս մեկնութեան Երարածոց». վերնագիր Մեկն. Երար. 1. — «Զեփրեմ Խոր Ատրին եւ ըզնիզոս առաքինին». Գր. Մազիստրոս, ի տաղարանութեանն Մեծ են գործք. տող 900: Այլուր ի գիրս մեր Կիլի Սիրիա թարգմանեալ է Ստորին Ատրիք, Կողմանք Ատրեոց, կամ ըստ յունականին Կիլիսիա (Խորն. Աշխարհագր. Ս. Ղազար,

1. Քուի թէ Հ. Գար. 2. ուր ուրեք «Խորին Ատրի» կը գտնէ ի 24-ապրիլս՝ սոգար է սրբազրնի «Խորին Ատրի». տես ի նորին Մտնդր. 454, տեսանն եփրեմի Խորին ստրեոյ, զոր Ելիշան, Այրարաւ, 497, ծան. 1, կը գրէ Խորին.

1881, երես 36): Քաղաքը յարդեաց զնորին Խորենացոյ *Կղե-սուր* բառն (*Պատմ. Բ. ք. 176*) կ'իմանան *Կիլի Սիւրիա*<sup>2</sup>. այլ *Կղեսուր* է յունարէն *Կլիսուրիա* կամ *Կլիսուրա*, Գիրճ կամ Կապան լեռանց, եւ Լեռնային զաւառ, ինչպէս արդէն գրած եմ յիմ *Տեղեկութիւնս ի գիրս Պատմութեան Ստ. Տարաւնեցոյ Ասողիկ կոչեցելոյ*, երեսք 36—37:—Նորին *Նըրայեցի* (Գէ. Սկեւռ. Մեկն. Գծ. ԻԱ. 185) կը նշանակէ յունարէն *ոճով*<sup>3</sup> Բուն կամ ճշմարիտ *Նըրայեցի*:

9. (Երես 21.) Հ. Գար. Զ., եւ Գեր. Այտընեանի *Քըն-նական Բերականութիւնն*.—Ծանօթ է բանասիրաց թէ ըստ Հ. Գար. Զ. ի' ինքն իսկ Փաւստոս Բիւզանդ հայերէն գրած է զիւր Պատմութիւնն ի Չորրորդ դարու. տես *Պատմ. Հայերէն Դպրութեանց. Ա. Հին Մատենագրութիւն* (տպ. 1865), 140—142, եւ *Հայկ. Հին Դպր. Պատմ.* (տպ. 1886), 229—230, ուր կ'ըսէ մասնաւորապէս. «Թէպէտ ե եղած են ոմանք որ կարծեցին թէ սկզբնապիւրը յունարէն կամ ասորի լեզուով եղած ըլլայ, ու ետքը թարգմանուած ի հայ, բայց (տպ. բաց. այսպէս եւ տպ. 1865, 142) հայկական լեզուին քաջ տեղեակ ոմանց բանասիրաց անհաճօյ կը թուի այդ կարծիքը». իման՝ «հայկական լեզուի քաջ տեղեակ չեն անոնք» որ կը կարծեն թէ Բիւզանդայ սկզբնապիւրը յունարէն կամ ասորի լեզուով եղած ըլլայ: Եյուր կ'ընդօրինակէ ի *Քննական Բերականութենէ* շար մի վկայութեանց՝ զորս Գեր. Այտընեան անխտիր Բ (=Բիւզանդ) սկզբնատաւիւ նշանակած է, բայց չեն ամենեքին ի Բիւզանդայ, այլ ոմանք ի Վարուց Մաշտոցի Կորիւն Վարդապետի, կէսք ի զրոց Մակարայեցոց, եւ այլք ի Պատմութենէ Հարանցն եգիպտացոց, որ առ հասարակ Հինգերորդ դարու մատենագրութիւնք են: Հ. Գար. Զ. համարելով թէ ս եւ է վկայութիւն յիշատակելայ ընդ Բ զլիսագրով է ուղղակի ի Բիւզանդայ Պատմութենէն՝ որ է Չորրորդ դարու մատենագրութիւն ըստ իւր կարծեաց, կ'ըսէ յիւր գիրքն *Պատմ. Հայերէն Դպրութեան. Բ. Նոր Մատենագրութիւն* (տպ. 1878), 68—69. «Հետագայ օրինակ-

2. Եյսպէս եւ *Հանդէս Ամսօրեայ*, 1892, երես 291 ա:



ները *Չորրորդ դարու* (այս ինքն՝ *Փ. Բիզանդայ*, ինչպէս կը գրէ քանի մի աող վերագոյն) կը պատկանին. 1. *Չամէն մնացեալսն*. (*Քնն. Քեր.* 64, ծան. 1.) 2. *Ի տեղաց իշխանութեան իւրեանց*. (անդ, 65, ծան. 7.) 3. *Թէ կամիր և թէ ոչ կամիր*, բայց *թէ մտանեմ*. (անդ, 68, ծան. 11.) 4. *Չառ անգամ ըմբռնեալ է զիս*. (անդ, 64, ծան. 3.) 5. *Եյնդէս արարից քեզ որ ասես շատ է*. (անդ, 67, ծան. 10): Երգ՝ *վկայութիւնքն 1 և 2 են ի Վարուց Մաշտոցի*, կրեսք 26, 19, ուր տպուէնի *տեղեաց*, և ոչ *տեղաց*.—3 է յ՞ Գ կր. Ա. 9.—4 և 5 են ի Պատմութենէ *Հարանցն Եգիպտացուց*, կրեսք 220, 251: Եյնուր *Եյարնեան* (*Քնն. Քեր.* 99, ծան. 81) քանի մի վկայութիւնս կը յիշէ ի բարձրագոյն մատենադրութենէ (ատաղանշանիւ), յորոց մին է «Ե՛կ առքեմ զքեզ». Հ. Գար. 2. զայս ևս *Չորրորդ դարու* (*Բիզանդայ*) կը համարի, անդ, 69. մինչդեռ է *Հինգերորդ դարու*, և *Թագ. Ժ. 2.* 1:

10. (Երես 21.) *Քննութիւն թարգմանութեան գրոցն Մնացորդաց*.—Միակ անարուեստ թարգմանութիւն ի բովանդակ Աստուածաշունչ մատենին է ստուգիւ և ևս Բ Մնացորդացն, գործ՝ որպէս թուի՝ միոյ ուրուք յԱռաջին Աշակերտաց, զոր Ս. Սահակ ժամանած չէ յարդարել կամ օրրագրել: Եյս է կարծեմ պատշաճ մեկնութիւն խամութեանց թարգմանութեան գրոցս, խամութիւնք որ աւելի ևս կը զարմացնեն զմեզ երբ մտածենք թէ թարգմանիչն՝ առաջնորդեալ ի հոյակապ թարգմանութենէ *Թագաւորաց*<sup>1</sup> այնչափ յաճախ կը կազայ և կը գթէ, որպէս է տեսանել ի յաջորդ համեմատութեանց.

Մնաց.

Թագ.

Քաւիչ լիցի ինձ Աստուած առ  
նել զբանդ զայդ, և թէ զարիւն

Քաւ լիցի ինձ, Տէր, առնել զայդ,  
և թէ զարիւն արանց երթելոց

1. Յայլում վայրի Մնացորդաց, Ա. ժգ. 8—33, կը գտնենք զրեթէ բառ առ բառ ընդօրինակութիւն Սաղմոսարանին. տունքն 8—22—Սաղմոս ձԴ. 1—15. տունքն 23—33—Սաղմոս ՂԵ. 2—13. Գրեալի է թէ *Տարագր թարգմանիչն Բ Թագ. ԻԲ. 2—51* որպիսի գեղեցիկ լեզուու զարգարած է զՍաղմոսն ԺԷ. 2—51:

արանցդ այդոցիկ արբից յան- ոգւովք չափ՝ ըմպիցեմ. Բ. իդ.  
ձինս իւրեանց. վասն զի ողւովքն 17.  
Իւրեանց բերին զայդ. Ա. ժա. 19.

Հարիւր հազար արանց ու ձգվ- Հարիւր հազար արանց դուրու  
ին սուսերս. Ա. իա. 5. սուսերսամերկաց. Բ. իդ. 9.

Եւ արդ անս զինչ բան տաց Եւ արդ ծանիր եւ տես՝ զինչ  
պատասխանի որ առարեացն պատասխանի տաց առարչին  
զիս. Ա. իա. 12. իմոյ. Բ. իդ. 13.

Լսել զաղաթս՝. Բ. դ. 19. Լսել աղաթից. Գ. ք. 29.

Եւ թագուհին՝ Սարայ... եկն... Եւ տիկինն Սարայ... եկն...  
յոյժ ծանր զաւրուծեամք. զաւրու ծանուոյ յոյժ. Գ. ժ. 1.  
Բ. թ. 1. (տես զարձեալ թա-  
գուհի, անդ, 3. իսկ 12, տիկին.)

Միանգամ յերիս ամս. Բ. թ. 21. Յերեամ. Գ. ժ. 22.

Զինչ խորհիր պատասխանի առ- Զիւրդ խորհիր՝ եւ տացուր  
նել ժողովրդեանն այնմ բան ինչ. պատասխանի ժողովրդեանն. Գ.  
Բ. ժ. 6. ժք. 6.

2. Կայ այս եւ ի ճառս Զգանի, ԺԳ. 242. բայց սովորական խնդրա-  
նութիւնն է աղաթից:

3. Թագուհի կայ եւ յերգս Երզոց. «Վաթսուն են թագուհիք եւ  
ութսուն հարճք». 2. 7.—«Թագուհիքն եւ հարճք զովեցին զնա». անդ, 8:  
Կայ եւ ի Լարուրնա, 13, 15, 30: Զգան ունի Զանանուհի, Բ. 43: Ի  
Թուղթս Սրբոյն Իզնաթիստի կը գտնուին Երանուհի, 114. Իմաստուհի,  
110, 114. Հաւատուհի. 113: Ոչ ինչ կարեմ ասել զվաւերականութիւնէ բա-  
նիցդ. բայց Սարգիւսագուհի եւ Զանանուհի, զորս կը նշանակէ նոր Հայկդ.  
իբր յնկերերանի Ա Տիմոթեայ եւ Մատթէի Մեկնութեանց, անհարազատ  
են Բիզանդ ունի Համազասպուհի, անուն կնոջ. այսպիսի ինչ է արեօք  
եւ Ամուսեան, զուտար Աժգահակայ, յեւս. ԺԺ. 22: Խորենացոյն Զարուհի  
եւ Տիգրանուհի, կին եւ քոյր Հայկազն Տիգրանայ, կը մնան խնդրական:

Փորը մատնս իմ ստուարա- ծկոյթ իմ ստուար է քան  
դոյն է քան զմէջ հաւր իմոյ. զմէջ հաւր իմոյ. Գ. ժբ. 11.  
Բ. ժ. 10.

Պատասխանի արար արքայ Պատասխանի ետ արքայ խըս-  
տուածեամբ. Գ. ժբ. 13.

Զինեաց զհաւամա, ոչ տալով Զինեաց զհաւամա, զի մի լիցի  
ելա Ասայի արքայի Յուդայ. Բ. ելանել եւ մտանել Ասայի ար-  
ժգ. 1. քայի Յուդայ. Գ. ժե. 17.

Տես եւ զհետագայսդ. «Եւ այսոքիկ թագաւորք նոցա որք  
թագաւորեցին յեղոմ, յառաջ քան զթագաւորել թագաւոր  
արդւոցն Իսրայելի». Ա. ա. 43. (նոյն բան ի գիրս Ծննդոց, 1, 2.  
31, է այսպէս. «Եւ այս թագաւորք են որ թագաւորեցին յի-  
կրին եղովմայեցւոց, մինչ չեւ թագաւորեալ էր թագաւոր  
Իսրայելի».) — «Վասն զի նա եղև խիստ իշխան». Ա. դ. 54.  
— «Եւ ելանէին ի մարտ զունդք». Բ. իդ. 11. — «Քահանայքն ոչ  
սրբեցան բաւականք». Բ. յ. 3. — «Զինչ կայ իմ եւ քո, արքայ  
Յուդայ. ոչ եմ եկեալ ի վերայ քո այսաւր պատերազմ առնել».  
Բ. լե. 21. (համեմատէ. «Զի կայ իմ եւ քո, թագաւորդ հրէաս-  
տանի. ոչ եթէ առ քեզ ինչ առաքեաց զիս Տէր Աստուած. քան-  
զի ի կողմանս եփրատայ երթամ պատերազմել». Ա. եզր. Ա.  
26—27.) Կան ուրեք ուրեք եւ մթութիւնք. «Եւ յորդոցն Իսա-  
քարայ որք զիտէին զհանճար, ի ժամանակի ճանաչելով թէ զինչ  
առնիցեն Իսրայելի, յիշխանութեան իւրեանց՝ երկերիւր». Ա. ժբ.  
32. — «Եւ գործքն գործոյն արտաքնոյ ի վերայ Իսրայելի, զի  
զբիցեն եւ վճարիցեն ի Քերթոնիա». Ա. իդ. 29: Թող եւ զսխալս  
թարգմանութեան. «Ո՛ր եմ ես, եւ ո՛ր է ժողովուրդ քո». Ա. իթ.  
14. փոխանակ իմ, ինչպէս թարգմանեալ է յեփր. Մնաց. 480.  
«Ո՛վ եմ ես, եւ կամ զինչ է ժողովուրդն իմ». — «Եւ ստէ ցննը-  
քինին». Բ. ժբ. 33. փոխանակ ցկառապետն, ինչպէս է յՊ  
Թագ. ԻԲ. 34, գյոյնն heniochos, Կառապետ, կարգալով eunoú-  
chos, ներքինի:

11. (Երես 21.) Թարգմանութիւն գրոցն Ա եւ Բ  
Եզրի, եւ նեհմեայ. — Եզրի եւ նեհմեայ գրոցն՝ Երկրորդ եւ 2որ-

բորդ Դասուց թարգմանութեանց հետ նմանութիւնքն են հետեւեալքը.

1. *Ընդդիմանամ*. Եղբ, Ա. ա. 27. բ. 29. ը. 52. (այլուր *Ընդդիմադարծ լինիմ*. Բ. գ. 14. *Ընդդէմ կամ*. Բ. գ. 15. գ. 11. է. 23): Տես *Ընդդիմանամ*, Լարուրնա, 40. — «Իշխանաց մի ընդդիմանայք». Թուղթք Ս. Իգնատ. 104. Բիւզ. 31, 74, 105, 107, 129, 215 երկիցս. որ եւ *Դիմանամ*, անդ, 60: Կայ մի անգամ եւ այլուր յԱռաջին Դասի *Ընդդիմանամ*, Սերբեր. 2. 111. այս Դասուս սովորականքն են *Ընդդէմ կամ*, Եսթեր, ԺԳ. 4. *Ընդդէմ դառնամ*, Յեսու, Ժէ. 14. Եսթեր, Ա. 16. Թ. 2. Յուդիթ, ԺԲ. 13. Յովբ, ԽԱ. 1. *Հակառակ կամ*, Յովբ, ԽԱ. 1. *Չդէմ ունիմ*, Դ թագ. ԺԸ. 24. *Դիմադարծ լինիմ*, Եսթեր, Թ. 1. *Դիմակաց զտանիմ*, անդ, Ը. 8. *Դիմադարծիմ*, Ոսկ. Մտթ. Բ. իէ. 741. նոյն, Ես. ԽԲ. 290:

2. «*Չհետ ամի միոյ*». Եղբ, Ա. ա. 45. — «*Չհետ այսորիկ*». Ա. ա. 13. — «*Չհետ այսր ամենայնի*». Ա. Ե. 1. — «*Չհետ երկուց եւ երկից աուրց*». Ա. թ. 4: Տես «*Չհետ երկուց ամաց*». Մկր. Ա. ա. 30. — «*Չհետ որդուցն եւ մայրն երանելի ի նոյն արէնս կատարեցաւ*». Մկր. Բ. է. 41. — «*Չկնի փեց աուր*». Չգան, Բ. 36: Յօրինակսդ *Չհետ եւ Չկնի* են փոխանակ *Յետ նախադրութեան*, (այխարհարար՝ *ետքը*). Առաջին Աշակերտաց սովորականն է՝ *Երթամ*, *Արձակեմ*, *Աղաղակեմ զհետ կամ զկնի ուրուք*, (այխարհարար՝ *մէկուն ետելէն*):

3. *Երկրպագեմ*. «*Հռաթիմոս՝ որ երկրպագէ քեզ*». Եղբ, Ա. բ. 17. — «*Եւ խոնարհեալ երկրպագեցին Տեառն Աստուծոյ*». նեհմի, Ը. 6. — «*Քեզ երկրպագեն զաւրք երկնից*». անդ, Թ. 6: *Համեմատէ*. «*Երկրպագեալ, ասէ, քեզ երկրպագեցեն եղբարք քո*». Եփր. Աբար. 124. — «*Ձի մի երկրպագեցեն արարածք ընդ Աբարչին՝ արարածոց*». Լարուր. 25. — «*Որում եւ երկրպագեալ, եւ պատարագս մատուցեալ*». Ագաթ. 297. — «*Ձի . . . Աստուծոյ երկրպագեալ ծուր կրկնեցեն*». անդ, 579: *Երկրորդ Դասն ունի եւ Երկրպագիմ*, կրաւորական, շատ յաճախ. «*Փաղի[ան]ոս առ ոմանս ի նոցանէ իբրու այն թէ երկրպագելով երկրպագի*». Եւս. Եկեղ. Ե. իբ. 409. — «*Երկրպագի*



նա իբրև Աստուած». անդ, Ա. գ. 25. — «Եւ ահա երկրպագի-  
 յերկնաւորաց եւ յերկրաւորաց». Լարուր. 20. — «Փոխանակ զի  
 երկրպագիցի նա». Եփր. Աբար. 107. — «Որոշեաց զնոսա՛ ոչ  
 եթէ զի երկրպագիցին (կամ երկրպագեացին՝ իսկ տպ.՝ եր-  
 կրպագեցին). զի եթէ վասն երկրպագելոյ եղեն» եւ այլն.  
 նոյն, Բ Աւր. 266. — «Աստուած ոչ եթէ ի նշանաց անախ իւրոց  
 արժան է երկրպագել». նոյն, անդ, 271. — «Քանզի ոչ եթէ  
 երկրպագեացին արարածք՝ վասն այնր հաստատեցան». Լա-  
 բուր. 23: Յորմէ եւ Երկրպագեալ, ամական. «Անուն երկր-  
 պագեալ». Եփր. Ելք, 195. Ղեւտ. 226. Եւս. Եկեղ. Ա. գ. 18.  
 Լաբուր. 14. — «Արարիչ երկրպագեալ». Եփր. Հո. 11. — «Որդի  
 երկրպագեալ». Լարուր. 28. — «Քրիստոսոի երկրպագելոյ». անդ,  
 22. — «Երկրպագեալ թագաւորութիւնք». Եւս. Եկեղ. է. ժա.  
 543. — «Յիսու եւ ի մուտս ճանապարհաց . . . զերկրպագեալ ամե-  
 նեցուն զնոյն նշան կանգնէր». Ազաթ. 587. եւ գոյականաբար,  
 «Ձի եղիցի նա քարոզիչ յուրթեան երկրպագելոյն երկրպա-  
 գելոց (տպ. երկիր պագելոց)». Եփր. Համար. 19: Այս յաճախու-  
 թիւն Երկրպագեմ՝, Երկրպագիմ՝, Երկրպագեալ բառից ի  
 գիրս Երկրորդի Դասուն՝՝ յորս կը գտնուին եւ այլ բազում օրի-  
 նակք—թող զվկայութիւնս Եզրի, Նեհմեայ եւ Ագաթանդեղի՝—,  
 վրիպած է յաշաց Գեր. Այտընհանի, որ կը գրէ ի ԲՆՆ. Բեր.  
 66, ծան. 8. «Երկրպագել բարգ բայն մէկ կամ երկու տեղ  
 Զ (Զգանի) կարգին մէջ՝ կը հանդիպի». եւ յերես 95, ծան. 73.  
 «Հին գրաւոր լեզուաւ կ'ըսուի՝ երկրպագութիւն առնուլ, փխկ.  
 երկրպագիլ». իսկ Թոսնեան, ի Հատ. Ընթերց. 424, ծան.  
 11, չգիտեմ ինչո՞ւ «խորթ» կը կոչէ երկրպագեմ, երկրպա-  
 գեացն, երկրպագեալ:

Առաջին Դասուն միւս մատենապիրք, թէպէտ ունին Եր-  
 կրպագու (Յովհ. Գ. 23 երկիցս, 24), Երկրպագութիւն, այլ  
 ոչ ուրիք Երկրպագեմ, Երկրպագիմ<sup>3</sup>. սոքա կ'ըսեն ի ներ-

1. 2. և ի նոր Հայկազենին եւ ոչ մի ի կոչմանցդ:

2. Զգանի թարգմանիչն կ'ըսէ միշտ Երկիր պագանեմ: Տպագրին  
 Երկիրպագէին եւ պագէին Երկիր, թԳ. 241, 244, ուղղիլի է Երկիր պա-  
 գանէին, պագանէին Երկիր:

3. Անվանք թուր յոսկ. Մտթ. Ա. է. 101, «Ոչ լսի մարդ» ի տհաս

գործականն *Երկիր պազանեմ, Մատուցանեմ երկրպազուծին* (Եղնիկ, 11. Ոսկ. Մտթ. Ա. դ. Յորդ. 64), եւ ի կրաւորականն՝ *Երկրպազուծին առնում* (Եղնիկ, 12—13. Ոսկ. Մտթ. Ա. է. 104. Ժէ. 276. — «Որ ի քէն առան մարմինն՝ ի չրեշտակաց երկրպազուծին առնու, ի սրովբէից եւ ի քրովբէից»<sup>4</sup> նոյն, Եփես. Ա. 675)։—Յերրորդ Գասի կայ ուրեք. «Արդարութեամբն Աստուծոյ երկրպազէին»։ Պտմ. Հար. Եղիպա. 238. բայց ուղիղ ընթերցուածն թուի *Երկիր պազանէին*, ըստ այլոց տեղեաց. նոյնպէս եւ ի Կիւր. Գոշ. 2. 120, «Եթէ երկիրպազեսցես դու Հաւր», թուի *Երկիր պազցես*, զի այլուր ամէնուրեք ի սոյն զիրս կ'ըսուի *Երկիր պազանեմ*, մերթ տրական խնդրով՝ որ է սովորականն, եւ մերթ հայցական՝ զոր այլուր գտած Հեմ ի գիրս Առաջին Աշակերտաց. «Եթէ նորա (հեթանոսք) զերկնահարսն . . . պաշտել եւ երկիր պազանել ոչ ամաչին, դու . . . զԱստուծոյ Որդին . . . ամաչես երկիր պազանել»<sup>5</sup>. ԺԳ. 267. իսկ փոխանակ *Երկրպազիմ*<sup>6</sup> կ'ըսուի *Երկրպազուծին ընդունիմ*<sup>6</sup>. անդ, Գ. 55. 2. 97. ԺԱ. 193:

4. Այգորելի տեղի. «Եւ նստեալ ի տեղում յայգորելի, եւ կարգացին զգիրն առաջի ամենեցուն»։ Եզր, Ա. դ. 15—«Եւ իբրեւ եղեւ ժամ այգորելի առ թագաւորին (տպ. թագաւորն)

հասակի երկրպազէին»։ եւ ի Վկ. Իգն. 163, «Երկրպազեմ միայնոյ ճըմարտին Աստուծոյ», փոխ. *երկիր պազանէին, երկիր պազանեմ Իսկ յՈսկ. Եփես. Է. 740, «Է Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ երկրպազի Աստուծո», ոչ է թարգմանչին, այլ հրատարակչին, Հ. Ենրեսնի Սարգստան. տես անդ 739. Ժան. 1: Տես եւ զիմ գիտողութիւն ի Հայկ. Բառարան. Երեսք 46—47:*

4. Յորմէ Չարականն Յարութեան, Գ2. «Բռնզի մարմնն որ ի մէջն էառ՝ ի չրեշտակաց երկրպազուծին առնու, ի սրովբէից եւ ի քրովբէից»։ Գնյ արդեօք Չեռագիր առաւ ընթերցուածով՝ համեմատ Ոսկերեւոնի, փոխանակ էառ՝ որ չթուի ինձ հարագատ:

5. *Երկրպազեմ զոր բողոմ ուրեք կը գտնուի ի մասննագրութիւնս յետ Ոսկեդարուն: Այսպէս Խոր. Բ. ձգ. 360. «Եւ իսկոյն կործանեաց զամպրօպային պատկերն Երամագղայ. . . զոր սովոր էին երկրպազել այգուն այգուն»:*

6. Փոխանակ *Երկրպազուծին առնում կամ ընդունիմ, Խորենացի ըսած է Երկրպազուծին կրեմ. տես Սուտ—Կալլ. Պտմ. Աղեքս. 10, 120, 121:*

Պարսից, և ամենայն թագաւորք և իշխանք [իւր և] մեծամեծք իւր այգորել (տպ. այգորեայ) դաշին արքային Պարսից<sup>7</sup>,... յամեաց (Արշակ) գալ յայգորել թագաւորին Պարսից Չապհոյ»։ Բիւզ. Գ. Բ. 134—135.—«Յորժամ մարդիկ հանապազաւր յայգորել եկեալ (տպ. ելեալ) մտանէին (առ թագաւորն Պապ)»։ անդ, Ե. Իր. 214:—«Իւզանդայն Այգորեմ թուի Մասնել ընդ աւաւսան յողջոյն թագաւորի, զգ. Saluer le roi à son lever. և աստի է թերևս Ողջագորեմ<sup>8</sup>, որոյ բուն նշանակութիւնն ի մտտենագրութիւնս Առաջին Աշակիրտաց է Ողջունել. «Եւ այնուհետեւ զմիմեամբք փարեալ՝ իւրաքանչիւր ոք զմիմեանս յանուանէ կոչեալ ողջագորէին: Եւ յետ սրբոյ ողջունին նստեալ Պաւղոս հանդերձ Անտոնիս՝ ասէ այսպէս»։ Յերմն. Վարք Պաւղ. Անաղ. 10.—«Եւ յետ այնր երեւեալ (Մատանայի) յայրն ի կերպարանս ծառայի միոյ հաւսն Յոհաննու՝ ողջագորէ գՓարմութէս, և անկանի առաջի նստ լալով, և ասէ»։ Վարք Յոհ. Գր. 119.—«Եւ իբրև մերձեցայ ի դուրն, ողջագորեաց (բ. թրգ. ողջունեաց) զիս Յոհաննելս (ի դրոյն) և ասէ ցիս... Եւ իբրև արարի անդ աուրս երիս, բարձրացաւ երկիրն ի խորութենէն ի վեր, և տեսաք զմիմեանս և ողջոյն տուար (բ. թրգմ. ողջագորեցար)»։ անդ, 124—125: Կայ յունարէն prosagorévo, Ողջոյն տամ, Ողջունեմ:—Տեղի այգորելի յնզր՝ է Դահլիճ, զգ. Salle d'audience, Salle de conseil.

5. «Եւ ինքն արքայ զինչ և կամի գործէ, և ինքն ի հանգստեան կայ»։ Եզր, Ա. դ. 10:—«Եւ կայր արքայ ի հանգստի»։ Բիւզ. Գ. ը. 20:

6. Ոգեխառնիմ<sup>9</sup>. «Եւ այնպէս միացեալ ոգեխառնի ընդ նմա (ընդ կնոջ իւրում), մինչեւ ոչ լիչէ զճայր իւր և ոչ զմայր և ոչ զաշխարհ»։ Եզր, Ա. դ. 21:—«Յուչ լիցի քեզ, որդեակի, հոգեխառն սնունդն՝ որով զքեզ սնուցի»։ Եզրթ. 146.—«Աստուած զմարդն... հոգեխառն հրեշտակակիրս հաւասարագոյնս արար»։ անդ, 202:

7. «Իբրև եղև ժամ այգորելի թագաւորին Պարսից, և ամենայն թագաւորք և իշխանք իւր և մեծամեծք իւր այգորեալ կային արքային Պարսից»։ Նոր Հայկզ. Ի բուն Այգորեմ:—Ի 2ալ.—Այտըն. Քեր. 414, ուղիղ կը համարուի «այգորեալ կային»։

7. Գաղտոս. «Եւ հտուն զինս զաղատուաց եւ հիսանց». Եղբ, Ա. հ. 54.—«Եւ զաղատուք շինողք շինեցին գտունն Տեառն». անդ, 58:—«Եւ զաղատու ճարտար կորովամիտ փորեցէ զհիմն». Զգան, ԺԹ. 339.—«Դուք էք զաղատուք ճարտարք եւ հիմնափորք». անդ, 372.—«Զբազումս ինացանէն ասրեցուցիք, զի կալեալս կապեալս տարցուք... ի զործ կաւագործութեան, զաղատու (զաղատուս?) որմաչէնս պիտոյից մերոց քաղաքաց». Բիւզ. Ե. դ. 193:

8. Տալ գիտել. «Հարցեալ ցնոսա վասն զի տացուք գիտել քեզ». Եղբ, Ա. դ. 12.—«Տուար մեք քեզ գիտել, թագաւոր». Բ. դ. 16.—«Մինչեւ տացեն գիտել Դարեհի արքայի». Բ. հ. 5.—«Ետու ձեզ գիտել». Բ. է. 24:—«Տուր գիտել ինձ զամենայն ինչ որ միանգամ արարեալ է զորա ի քաղաքիդ քում». Լարուր. 34.—«Եղէ՛ տուր ինձ գիտել, սիկ են լիբիներն այնօքիկ՝ զորս զուն ընդ սնջ տանէիր». Բիւզ. Գ. ծդ. 169:—«Կայ մի անգամ յեզնիկ, 148, այլով զասուորութեամբ. «Եւ զայն եւս գիտել ետ մեզ, թէ որոց նա կամի՝ յաղթականք կարեմք լինել, եւ որոց ոչ կամի՝ չկարեմք յաղթել»:

9. Արկանեմ ի սուր սուսերի. «Եւ ամենայն թագաւորք երկրի արկեալ զմեզ ի սուր սուսերի՝ զերեցին զմեզ». Եղբ, Ա. ք. 78:—«Յատակեաց զԴարա, ի սուր սուսերի էարկ զքնակիչս նորա». Զգան, ԺԹ. 335: (Տես «Արկանեմ ի սուր» յԵգաթ. —Բիւզ. Թիւ 59, եւ «Արկանել ի սուր սուսերի իւրեանց» ի Բիւզ.—Մկր. Թիւ 66:)

10. Զոհարան. «Զոհարանք սակեղէնք՝ երեսուն, եւ զոհարանք սպասուն արծաթեղէնք՝ հազար քսան եւ ինն». Եղբ, Բ. ա. 9:—«Տեսկուք պտակաք եւ արծաթի զոհարանաք». Եգաթ. 34: Յօրինակոյ Զոհարան է Անաթ զոհից: Իսկ յեղբ, Ա. հ. 50. Բ. դ. 3, է Սեղան զոհից, ինչպէս կըսուի անդ, Բ. դ. 2, որ կը կոչուի Զոհանոց, Ելք, ԼԱ. 7. Թիւք, Գ. 31. է. 1. Գ թագ. է. 48:

11. Ժամանել հասանել. «Եւ ժամանեաց եհաս ամիսն եւթներորդ». Եղբ, Բ. դ. 1. Նեեմի, է. 73:—«Ժամանել եւ հասանել խոտացիոց բարեաց նորա». Լարուր. 44:

12. Գիտութիւն լիցի քեզ, թագաւոր, որ եթէ քաղաքն



այն շինեսցի... հարկս քեզ ոչ որ տայ». Եզր, Բ. Գ. 13.—«Գիտութիւն լիցի թագաւորիդ, զի... տեսաք դաժարն Տեառն Աստուծոյ մեծի». Բ. Կ. 8. (այլուր. «Գիտուն լիցի քեզ». Ը. Բ. 18. Գ. 8): «Գիտութիւն լիցի եղբայրութեանդ չում... զի յամենայնի դորովեալ լինի տէրութիւնս մեր». Ըզաթ. 124:

13. «Եւ ելանէի ի վեր ի պարխապն առ հեղեղատուն». Նեեմի, Բ. 15: «Ելանէին ի բերդն ի վեր զարավարքն (տպ. զօրավարն) Պարսից» Բիւզ. Գ. ծե. 171:

14. Ի ձեռանէ. «Եւ ի ձեռանէ նոցա ունէին Հոսամովթ եւ որդիք Ովրիայ». Նեեմի, Գ. 3. եւ 4 երկիցս, 5, 10 երկիցս, 12, 17. ԺԱ. 24. ԺԳ. 13. (այլուր. «Եւ զհետ նոցա ի կարդին կալաւ Ընանիտ». Գ. 8. եւ 9, 16—30): Համեմատէ. «Երդ ՚ի վերայ նոցա այր մի ընտիր, ի ձեռանէ Մովսեսի՝ հրամանաւ Աստուծոյ՝ զօրավար եւ առաջնորդ կացուցեալ, որոյ Յեսու անուն ճանաչէր». Ըզաթ. 239: Նովին օճով եւ ի Բիւզ. եւ ի Մկր. «Եւ ոսկի սպաս տաճարին առաքէր սպարապետին Մանուելի, եւ տայր նմա յիւրմէ ձեռանէ իշխանութիւն մեծ ի վերայ աշխարհին Հայոց». Բիւզ. Ե. լր. 246.—«Զի լիցի նոցա (Չմաւուն) զարավար յառաջնորդութեան, ... եւ կացուցանել ի նորա ձեռանէ ի վերայ գործոց նոցա». Մկր. Ը. ժդ. 42: Ի ձեռանէ ուրուք է Ընդ իշխանութեամբ ուրուք, Իբր երկրորդ ուրուք. եւ ճշդիւ նոյն է պարսկերէն Լ'զաէսթ բառին հետ, էզ—Ի կամ Յ նախդիր, տէսթ—Չեան. որոյ առաջին նշանակութիւնն է՝ Ի ձեռանէ, (աշխարհաբար ձեռքէն), իսկ երկրորդ նշանակութիւնն՝ Հնազանդ, հպատակ, ընդ իշխանութեամբ. տես Լ'զաէսթ ի Գէորդ Տէր-Յովհաննէսեանի Բագ. Պրս.—Հայ:

Տես եւ «Կալայ առ նմա ժամանակ» Նեեմի, Բ. 6, ի Բիւզ.—Մկր. թիւ 63.—«Ի թա ստաց ծառոց» Նեեմի, Ը. 15, յԸզաթ.—Մկր. թիւ 22:

12. (Երես 21.) Բնութիւն թարգմանութեան Յովհաննու Առաքելոյ Յայտնութեան գրոց.—Ըս մնօք հասա-

8. Համեմատէ ընդ վկայութեան Ըզաթանգեղի. «Զարմանայ Տիշով երկրորդն Մովսեսի, եւ մատուցեալ ասէ ցՄովսէս». Գիւր. Գոչ. ԺԶ. 357:

րակաց կարծիք են թէ Յայտնութեան զիրքն զոր ունինք այժմ ի ձեռին՝ ոչ է թարգմանութիւն Առաջին Աշակերտաց, Լստ շ. Արսենի Սուքրեան (Բազմավէպ, 1877, 208 ը), «Յայտնութեան գրոց յայտնի է որ շատ յետին է թարգմանիչն. և նոյն գրոց յիշատակարանն կ'ըսէ՝ թէ Լամբրոնացին ըլլայ թարգմանն կամ յերկրորդն. «ստուգարան արարաւ՝ վերստին երկրեալ ի հելլենացւոյն իմով նուաստ ներսխի թարգմանութեամբ. ընդ որ և զըննութեամբ մեկնութիւն սորին ամ ի յեկեղեցիս Հայոց»։ — Չնոյն կ'երկրորդէ և շ. Գար. Զ. ի Մ'տնդր. 221—222. «Յայտնի է դարձեալ յինքնագիր յիշատակարանէ, թէ Լամբրոնացին ներսէս եղած է թարգմանիչ Յայտնութեան գրոցն Յովհաննու, ինչպէս և մեկնութեան նորտ յԱնդրէէ Կրիտացւոյ. « . . Պատուեալ, կ'ըսէ, եկեղեցի՝ ըստ նոցին հաւանութեանն (հարցն սրբոց) դասեաց ի կարգ գրոց աստուածաշունչ աւետարանաց. սրոց եղեալ և մեք ընթացակից՝ ի սուրբ եկեղեցւոյ մանկունս աւանդեցաք զսոյն ի դասակարգութիւն առաքելական մատենիցս, որպէս արդարև դառաքելական յայտնութիւն. և ստուգարան արարաւ վերստին երկրեալ ի հելլենացւոցն (ըստ Սուքրեանի՝ ի հելլենացւոյն)՝ իմով նուաստ ներսխի թարգմանութեամբ (ըստ Սուքրեանի՝ թարգմանութեամբ). ընդ որ և զըննութեամբ մեկնութիւն սորին ամ ի յեկեղեցիս Հայոց»։ նոյն Լամբրոնացի կը գրէ առ Ռական՝. «Զինչ ասեմք և զերանելի աստուածարանին Յովհաննու սրտնչի Յայտնութիւնն ի վերայ թագաւորական քաղաքիդ . . . զոր ևս ինքն թարգմանեցի յօրինակէ Աթանասի քաղաքիդ (Անտիոքայ) հայրազնախ»։ Գարձեալ ի վարս Լամբրոնացւոյն ի յառաջարանի մեկնութեան Սաղմոսաց. «Յետ այսբ փութացաւ ի լեառն որ առընթեր մեծին Անտիոքու ի վանորեայսն որ ի լատինացւոցն և ի հելլենացւոցն պայծառանային անդ աստուածահաճոյ կարգօք և կրօնիք. և բնակեալ անդ աւուրս ինչ՝ թարգմանեաց զմեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու»։ Ապա կը յաւելու շ. Գ. Զ. «Ոմանք ի նախնեաց, և Վարդան պատմիչ աղօտ

1. Լամբրոնացւոյն Թուղթ առ Յուսիկ կամ Ռական Անտիոքացի հրատարակեալ է ի Մոսքաւա ամսագրին Մոսկուայի, 1859, հրեաք 3—11, 37—44. Ցառաջ բերեալ վրայութիւնդ կը գտնուի անդ յերես 39:

իմն կ'ականարկէ (sic) թէ Յայտնութեան զրոյն թարգմանիչն եղած ըլլայ Մանդակունի<sup>2</sup>. որով՝ հարկ կ'ըլլայ լսել թէ Լամբրոնացոյ ժամանակ արդէն թարգմանուած էր այն, և ինք պարզ սրբագրիչ մ'էր թերևս ի գրչաց և ի ժամանակէ ազաւորակալ օրինակին: Այս կարծիք կը հաւատարմանայ նաև անով որ քաց ի մեզի արդէն ծանօթ ու սովորական թարգմանութենէն՝ ուրիշ թարգմանութեան մ'այ հանդիպած ենք, որ խիբ կը տարբերի ի միւսմէն, և մ.դ.ի հաւանական կ'երևնայ կարծելը թէ ասիկայ ըլլայ հնազոյնն: Օրինակն գրչադրեալ է ի Ո՞Ը<sup>3</sup>, և կը գտնուի ի Մատենադարանի սրբոյ Երուսաղեմի Բանասիրաց հետաքննութեանն համար կը գնենք աստէն յառաջին զխոյ քանի մը սոդ միայն ի բաղդատութիւն. «ի Յովհաննէ՛ եւթն եկեղեցեաց որ յԱօիայ են, շնորհք ընդ ձեզ և խորագոթութիւն յէլէն, և որ էն, և որ դալոցն է. և յեւթն հոգւոն որ են առաջի ամսոոյն նորա, և ի Յիսուսէ Քրիստոսէ՛ որ վկայ է հաւատարիմ, նախժինն մեռելոց և իշխանն թագաւորաց երկրիս. սիրողին և յուծողին զմեզ ի մեղաց, արեամբն իւրով. և արար զմեզ արքայութեանն արժանիս. քահանայս Աստուծոյ և հաւր իւրոյ. նմա փառք: Ահաւասիկ գայ ամպօք, և տեսցեն զնա ամենայն ակն որ խոցեցին զնա, և կոծեսցին վասն նորա ամենայն ազգք երկրի: Այո, ամէն. ես

2. Վարդանայ Երեւելցոյ բա՛քն (Պատմ. 55) այս են. «Սա (Յոհան Մանդակունի) թարգմանեաց զԵրկրորդ Կորնթացոց թուղթն, զՅոհանն, եւ այլ բազում աղուսա զործեաց ի կեանս իւր: Բաւական մթին խօսք, որ աւելի մթնացած են ի Զեռագրի միւսմ փէ գարու. «Սա թարգմանեաց զԵրկրորդ Կորնթացի թղթոյն զՅոհանն» նոյն չ. Կար. 2. ի Հայկ. Հին Դպր. Պատմ. 309, այլազգ կը խրթնացնէ գրանս Վարդանայ՝ չզիտեմ յօք օրինակ առնով. «Սա թարգմանեաց զԵրկրորդ Կորնթացի թուղթն, զՅովհաննու: Ուղիղ ընթերցուածն թուի՝ «Սա թարգմանեաց զԵրկու Կորնթացոց թուղթն զՅովհաննու (Ուկեբերբանի?)» Զիբարդ և է՝ անհար է Վարդանայ զՅոհանն բառի իմանալ զՅայտնութիւն Յովհաննու: Փափագելի կը զիտել թէ այլք «ոմանք ի նախնեաց» ինչ ըսած են նկատմամբ Մանդակունոյ եւ Յայտնութեան զրոյ. բայց թաքնասէր հեղինակն՝ ինչպէս յայլ անհամար տեղիս իր մատենից՝ նոյնպէս եւ աստ անձին առանձին կը պահէ թէ զանուանս շմանց ի նախնեացոյ եւ թէ զնոցա բանս:

3. Այս ինքն յամի Տեառն 1199, մտաւ յետոյ քան վճարքոտացոյն մահ՝ որ հանգրիպեցաւ ի 14 Յուլիսի 1198:

եմ արին և տին, ա է տէր Աստուած էն, Է որ գալոցն է ամե-  
նակալն»<sup>4</sup>։—Պր գրէ եւ Հ. Բարսեղ Սարգիսեան (Ազաթանգե-  
ղոս, 339)։ «Յայտնութեան դրոց թարգմանիչն՝ յետոյ է ժամա-  
նակաւ քան զԹարգմանիչն յունարէն Ազաթանգեղոսի», որ կ'ա-  
պրէր ի վախճան Անցերորդ դարու կամ ի սկիզբն եւթներորդին  
(անդ, 348)։—Հ. Յ. Գաթրըճեան (Հանգիստ Երան. Յովհան-  
նու, 22) համարձակ կը կոչէ զՅայտնութիւնն «Հայոց անծա-  
նօթ եւ մինչեւ ԺԲ դար զեռ իրենց Կանոնին մէջ շմաճ զիրք՝  
որուն ծանօթութիւնը հազիւ 10 երորդ դարուն ունեցան, անանկ  
որ ցայն վայր ոչինչ նշմար այս ազգին մատենից մէջ կը  
գտնուի»։—Արջապէս կ'ըսէ եւ Հիւրշման գերմանացի հայադէան  
(Հանդէս Ամսօրեայ, 1893, երես 17 թ). «Յայտնութիւնն Է  
դարէն յառաջ թարգմանուած չէ»։

Ինձ թուի թէ այն նախնիք՝ որ փայթ ունեցած են թարգ-  
մանել զանվաւեր կամ զերկրայական մասունս անգամ Սուրբ  
Գրոց,—որպիսի են Երրորդ Մակաբայեցիք եւ Երրորդ Կո-  
րնթիւթացիք,—չկարէին անտես առնել զՅայտնութիւնն. քան-  
զի եթէ ոչ այլուստ, գոնէ յԵկեղեցական Պատմութենէն եւ-  
սեբեայ՝ որում կանուխ ծանօթացան՝ լաւ զիտէին զկանոնակա-  
նութիւն դրոցս եւ զյարգ<sup>5</sup>։ Բայց հետեւեալ սարագայն այնպէս  
իմն իմաստասիրել կու տայ ինձ՝ որ հայերէն Յայտնութիւնն  
վաղ իսկ հրատարակեալ էր յԱռաջին Աշակերտաց՝ երբ մի ոմն

4. «Ե Յովհաննէ առ եթն եկեղեցիս՝ որ են յԱսիա, շնորհք ընդ ձեզ  
եւ թաղադուրթին յԱստուծոյ՝ յէն՝ եւ որ էն՝ եւ որ գալոցն է, եւ յեթն  
գաւրութեանց Հողոյն՝ որ է առաջի յաթոռոյն իւրոյ. եւ ի Յիսուսէ Քրիս-  
տոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ի մեռուա<sup>6</sup>, եւ իշխան թա-  
գաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, եւ ելոյժ զկապանս մեզաց մերոց  
արեամբն իւրով. եւ արար զմեզ թաղաւորս եւ քահանայս Աստուծոյ եւ  
Հար իւրոյ, որում փառք . . . Ահաւասիկ զալոց է ընդ ամգոս, եւ տեսցեն  
զնա ամենայն աշք, եւ տեսցեն զնա ծագք երկրի, եւ որք խոցեցին զնա՝  
ամենեքեան յերկրի, եւ կոծեսցին ի վերայ նորա. այս՝ ամէն. ես եմ այր,  
եւ ես եմ քէ՝ առէ Տէր Աստուած, որ էն՝ եւ որ է՝ եւ որ գալոցն է՝ ամե-  
նակալ»։ Յայտն. Ա. 4—8։

<sup>6</sup>«Անդրանիկ ի մեռուոց»։ Կողոս. Ա. 18։

5. Տես Եւս. Եկեղ. Գ. ժը 182. Գ. ժը. 290. Ե. ը. 359. Ձ. իե.  
473. Է. իգ. 572—580։



ի նոցանէ հրամանաւ Մաշտոցի ձեռնարկեց յեղուլ ի հայ գՊատմութիւնն եւսերեայ. յայսմ մասննի ի մէջ կը բերուին այլեայլ պատառիկք Յայտնութեան. արդ՝ ի յաջորդ համեմատութեանց յոյժ հաւանական է թէ եւսերեայ թարգմանն ունէր առաջի աշաց զմեր այժմու օրինակին նախազադափարն.

Յայան. Յովհ.

յեւս. Պտմ. Եկեղ.

Յայան. Յովհ.

ըստ մեր այժմու օրինակին.

Յայտնութիւն Յիսուսի, այն որ ետ ցուցանել ծառայից իւրոց վաղվադակի, եւ առաքեաց ի ձեռն Հրեշտակի իւրոյ, եւ եցոյց ծառայի իւրոյ Յոհաննու, այն որ վկայեացն վասն բանին Աստուծոյ, եւ վկայեաց վասն ամենայնի զոր ետես. (է. իդ. 575.)

Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ ինչ լինելոց է վաղվադակի. եւ նշանակեաց առաքելով ի ձեռն Հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր Յովհաննէս: Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ, եւ զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի զոր ետես. Ա. 1—2.

Յոհաննէս եւթն եկեղեցեացն՝ որ են ի կողմանս Ասիացոց, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն. (անդ, 575.)

Ի Յովհաննէ առ եւթն եկեղեցիս՝ որ են յԱսիա, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն. Ա. 4.

Ես Յոհաննէս եղբայր ձեր եւ հաւասարորդ ձեր նեղութեան եւ արքայութեան եւ համբերութեան վասն Քրիստոսի, եղէ ի կղզուջ՝ որ անուանեալ կոչի Պատմոս՝, վասն բանին Աստուծոյ եւ վա-

Ես Յովհաննէս եղբայր ձեր եւ հաւասարակից նեղութեան եւ արքայութեան եւ համբերութեան որ ի Քրիստոս Յիսուս, եղէ հս ի կղզուջն՝ որ անուանեալ կոչի Պատմոս, վասն բանին եւ վասն

6. Պատմոս՝ անշուշտ զի թարգմանն եւսերեայ այսպէս կը կարգար ի հայերէն Յայտնութեանն: Ելլուր կը գրէ. «Ի կղզի մի՝ որ անուանեալ կոչի Պտմոս». Գ. ժը. 182:

սըն վկայութեանն Յիսուսի. վկայութեանն Յիսուսի Քրիստոսի. Ա. 9.  
(անդ, 576.)

Տուաւ նմա բերան՝ որ խա- Տուաւ նմա բերան խաւսել  
սի զմեծամեծս, եւ տուաւ զմեծամեծս\* եւ զհայհոյու-  
նմա իշխանութիւն տարի մի թիւն, եւ տուաւ նմա իշխա-  
եւ ամիսս երկուս: (Է. Ժ. 537.) նութիւն դամիսս քառասուն  
եւ երկու. ԺԳ. 5.

Երանի իցէ այնմիկ՝ որ պա- Երանի՛ որ պահէ զքան մար-  
հեցէ զքան մարգարէու- զարէութեանս զայս: Եւ ես  
թեան զգրոցս զայսոցիկ, եւ Յովհաննէս լուայ եւ տեսի  
ինձ Յոհաննու՝ որ լուայ եւ զայս ամենայն. ԻՔ. 7—8:  
տեսի զայս (Է. իդ. 574. եւ  
576, ուր կան մանր տարբերու-  
թիւնք:)

Եթէ ի բաց հաննք քանի մի ասորբանութիւնս եւսե-  
բնայ թարգմանչին, զոր օրինակ. Յայանութիւն Յիսուսի, այն  
որ ետ ցուցանել. այն որ վկայեացն. տուաւ նմա բերան որ  
խաւսի (=խաւսել) զմեծամեծս. երանի իցէ այնմիկ՝ որ պա-  
հեցէ (=երանի որ պահէ. տես եւ Երանի որ խորհի զպ-  
քանս եւ զտնանկն). Սդ. Խ. 2), մեր այժմու Յայտնութեան  
լեզուն գրեթէ կը նոյնանայ ընդ հասակոտորոցն եւսերեայ:

Անտարակոյս զայս հայաբարբառ Յայտնութիւն ընթեր-  
ցած է եւ Դաւիթ Անյաղթ յետ կիսոյ Հինգերորդ զարուն, երբ  
կ'ըսէ յիւր մառին Բարձրացուցեաց, 114. Աւրհնեալ ես, փայտ  
սուրբ, որ փոխանակ Յայելի՛ Որդի Կուսին ցիւց զքեզ ընդ ծա-  
մելիսն ծիախորոխտ Մահու վարեալ, ի գառնութիւն եւ ի մահ  
զճաշակն նմա գործէ, եւ ընդ ոտիք զգեանեալ մեռուցանէ՝.  
(=«Եւ տեսի, եւ ա՛հ ծի աշխէտ (տղ. շոռոս, զորմէ ի ստո-  
րել), եւ որ նստէրն ի վերայ նորա՝ ունէր զՄահ, եւ զժողք եր-  
թային զհեա նորա». Յայտն. Զ. 8.) եւ դարձեալ յերես 117.  
«Բեւ անարատ գառինք եկեղեցւոյ ընտրեալք որոշին՝ անկաս-

\* «Երան որ խաւսէր զմեծամեծս». Դան. Ե. 20:

կածք յապականողէ ամբացեալք ի զազանէն, որ արինա-  
կաւ ի ճակատն նշանակեալք յապագայն արե, եւ ի սա-  
տակմանէ աստուածային սրոյ բարկութեանն զերծեալք»։ (==Յայտն,  
ԺԳ. 11—17. ԺԳ. 1. ԻԲ. 4)։ Կարեւորագոյն է Մ. Խորենացոյ  
Հոռիփսիմեանց Ներքողենին մի տեղին՝ յորում գրեթէ բառ  
առ բառ առեալ է ի Յայտնութենէ. «Ահա զայ հարսն սուրբ  
ի Լիբանանէ, զարդարեալ ի լոյս վայելուչ, արկեալ զիրեաւ  
զարեզակն, եւ զլուսին ընդ ոտիւք»։ 306. (==«Եւ նշան մեծ  
երեսեցաւ յերկինս. կին մի արկեալ զիրեւ զարեզակն, եւ  
լուսին ի ներքոյ ոտից նորա»։ Յայտն. ԺԲ. 1)։ Անյազթի եւ  
Խորենացոյ վկայութեամբք կը չրի այն կարծիքն՝ թէ հազիւ  
Տասներորդ դարուն ծանօթացան Հայք զրօցն Յայտնութեան,  
որպէս կը համարի Քաթըրճեան<sup>5</sup> ակնարկելով ի Գր. Նարեկացի՝  
որ ի Մեկնութեան Երզոց Երզոյն, յօրինելոյ յամին 977 (նԻԶ),  
կը յիշէ զՏեղին Յալհաննու Առաքելոյ, (Երեսք 318, 334. վերջին

7. Ողղակի ի Խորենացոյ առեալ կ'երգէ եւ Վարդան Երեսելցի ի  
Չարականին Որ Նախիմաց. «Որ ի բարձրութիւնս երկնից բարձր բանիք  
բարբրանիս, Սրբուհի, ի Լիբանանէ զիմեալ հարսն, զգեցեալ այսաւք  
զարեզակն արկեալ զքեւ, եւ ընդ ոտիւք զլուսինն ստուերտեսեակ»։

8. Սա ինքն կը գրէ եւ յիւրում Հանգանակ հաւատոյ, 20. «Եւ-րդ  
դարուն հայերէն մատենագրութեանց շարքին մէջ՝ աս հանգանակին նետ-  
քը կամ անոր սեպհական քանի մը բառեր իսկ գտնուած չեն»։ եւ սա-  
կայն կը կարգանք առ Ազաթանգեղեայ, 187—188. «Ախորժ յաժարու-  
թեամբ սկիզբն արասցուք ձեզ պատմելոյ (տպ. պատմելով) . . . թէ զիւրդ  
(Որդին Աստուծոյ) գալոց է ի վախճանի Նովին մարմնով եւ փառաւք Հաւք»։  
(==Քալոց է Նովին մարմնով եւ փառաւք Հաւք ի դատել զկենդանին եւ  
զմեռեալոյ»։ Հատաժամք. անդ, 1)։ Հեղինակն (անդ, 13—14) գիտել կու տայ  
որ յոյն բնագիրն փոխանակ փառաւք Հաւք՝ ունի պարզապէս փառաւք,  
եւ «Ասանկ եղած է, կ'ըսէ, Նախնաբար հայ բնագիրն ալ», եւ այլն. բայց  
ի Գիր. Գոչ. ԺԵ. 303, կը կարգանք նոյնպէս. «Այն որ գալոցն է փառաւք  
Հաւք դատել զկենդանին եւ զմեռեալոյ»։—Գայ յԱզաթանգեղոս եւ տեղի մի՝  
որ կը յիշեցնէ զՅայտնութիւնն. «Զի եկն (Որդին Աստուծոյ) գնեաց զմեզ  
արեամբն իւրով . . . զի մեք ենք գինք արեան Որդոյ ԸՄԿ, փրկեալք եւ  
աղատեալք արեամբ եւ մարմնով նորա»։ 74—75. համեմատէ. «Արժանի ես  
առնուլ զգիրդ՝ եւ բանալ զկնիք դորա, զի զենար՝ եւ գնեցեք զմեզ Աստու-  
ծոյ արեամբդ քով»։ Յայտն. Ե. 9։ Այլ է ի Գործն Առաք. Ի. 28. «Հովուել  
զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով»։

տեղոյս համար տես Յայտն. է. 4—8.) նոյնպէս եւ ի Ներքաղեանսն Սրբոյ Խաչին եւ Սրբոյ Աստուածածնին՝ որ գրեալք են յամին 986 կամ 987. (երես 402, «Գառն հեծեալ ի ճերմակ երիվար»=Յայտն. ժԹ. 11. եւ երես 409=Յայտն. ժՁ. 20): Յետ Գր. նարեկացոյ՝ Յոհաննէս Սարկաւագ ի ժՄ դարու ընթերցած է զՅայտնութիւնն, զոր կը յիշէ յերկու տեղիս իւր գրութեանց, ի ձառին Յաղագս Քահանայութեան (Սոփ. Հայկ. Գ. 27—28=Յայտն. Ե. 8. Ը. 3), եւ ի ձառին Յաղագս մասանց պատուոյ եւ պատկերաց (Հ. Գար. 2. ի մատենին Եղ. Բարեխօս. Սրբոց, 353=Յայտն. ժԲ. 3—4): Կը սխալին ուրեմն Սուրբեան եւ Հ. Գար. 2. որ թարգմանիչ Յայտնութեան կը կոչեն զՆերսէս Լամբրոնացի յժԲ դարու, մինչդեռ վաղագոյն քան զնա ծանօթ էր յԱղգին հայ թարգմանութիւն գրոցս: Լամբրոնացոյ գործն եղած է յոկ վերստին երիւրեւ ի հեւլենացոյն, այս ինքն՝ սրբազրել ի յունականէն, զոսկեղինիկ թարգմանութիւն Առաջին Աշակերտաց, յոր հարկեցուցիչ պատճառաց բրոնադատեալ՝ չգիտեմ. այս միայն յայտնի է թէ «վերստին երիւրոյիդ պարտական ենք զաղաւաղութիւնսն «Բանալ զգիրքս, զգիրքն (Ե. 2—5). Ալոոս<sup>9</sup> (Ձ. 8). Գրկոյք, զԳրկոյսն (Ժ. 2, 8, 10). Կլայ<sup>10</sup> (Ժ. 10), փոխ. Կլի. Տուան (ժԲ. 4), փոխ. Տաուն.

9. Յունարէն *chloros* բառն, որ կը նշանակէ Դեղին, Դժգոյն, ըստ օրինի Ե գարու հայերէն տառադարձութեան՝ *Ըլորոս* կը փոխուի, եւ ոչ *Շլորոս*: Ի ժՄ կամ յժԲ դարու սկսած է շ տառադարձութիւնն փոխանակ ք. Արշիպիսկոպոս=Արքիպիսկոպոս. Արշիմանդրիտ (եւ Շամանդրիտ. Վրդ. Արեւելցի, Պատմ. 83)=Արքիմանդրիտ. Մօլոշ=Մօլոք, նոյն դարերուն մէջ սոփորական եղած է նա եւ խ. Խրօնիկոն=Ըրոնիկոն. Մոնոմարոս=Մոնոմարոս. Պախումէոս=Պարումէոս. (անմարթ է որ հայերէն թարգմանութիւն Պրորոբոսի Պատմութեանն Յովհ. Աւետ., յորում կը դոնուին Պրոխորոն եւ Խոռուսո գրութիւնքն, ելնէ մինչ ի 2 դար, ինչպէս սխալմամբ կը համարի անանուն ոմն «աղգային արդի ամենէն աւելի նշանաւոր բանասիրաց մին», տես Հ. Գար. 2. Մտնդք. 670—671): Գայ ուրեք ուրեք եւ 5. Արշիպիսկոպոս=Արքիպիսկոպոս. Քոինոզոսիկ=Քոինոզոսիկ (յն. *xenodocheion*, Հիւրանոց, Ատարանոց):

10. Լամբրոնացոյ ժամանակին թուի եւ «Զերկիր ամենայն կլայ, եւ այս մանկանս ոչ կարացի յաղթել». Վարք Հարանց, Հ. Ե. 124, մանրագիրն:



եղևի քաղաքն մեծ յերիս մասն (Փ. 2. 19). Լուսափայլ<sup>11</sup> (Փ. 2. 14. Փ. 8). Մառնատեսակ<sup>12</sup> (ԽԱ. 11. ԻԲ. 1), փոխ. Մառնակերպ (Իմաստ. Փ. 20). Սևա (ԻԲ. 16), այլովքն հանդերձ:

Իսկ թէ այն թարգմանութիւն Յայտնութեան՝ որ այժմ կը գտնուի ի Մատենադարանին Սուրբ Յակոբեանց յերուսաղէմ՝ ստուգիւ հնագոյն է քան զմեր արդի օրինակն, ինչպէս հաւանական կ'երեւնայ Հ. Գ. 2.-ի, ես կ'երկրայիմ, միտ զնելով ասացուածոցն «սիրողին եւ լուծողին զմեզ ի մեղաց», եւ «տեսցեն զնա տմնայն ակն որ խոցեցին զնա»: Ըսեմ միայն որ յամին 1871 տեսած եմ ի Կոստանդնուպոլիս առ Յովհաննու Տէրոյեանցի 2եռագիր մի 229 (=1324) թուականաւ, զրեալ ի Սաեփանոսէ յանապատին Սկեւոյ ի վաչելումն Երբահամու միայնակեցի<sup>13</sup>. բովանդակեալ են ի 2եռագրիս, Ա. Վարք Յոհաննու Ընտարանչի. Բ. Յայտնութիւն Յոհաննու. Գ. Վարք Յոհաննու Գրացոյ. Դ. Վարք երանելոյն Յոհաննիսի որդոյ Եւրոպիոսի. Ե. Պատմութիւն վարուց կամաւոր աղքատացելոյն Ելիքոսի. Զ. Վկայաբանութիւն Առաքելոյն Յակոբայ եղբար ԅոհ. Ընտ. Է. Յոհաննու վարդապետի Եղեղացոյ ասացեալ բանք չափաւորականք. «Ընդնեալ Աստուծոյ անունն ու միշտ կենդանւոյն». Ը. Տեան 2արքարայ Հայոց կաթողիկոսի ի 2արչարանս Քրիստոսի. Թ. Նորին ի Թագումն Տեան. Փ. Յողազս զարմից Սրբոյն Գրիգորի եւ բովանդակ Պատմութիւն Ներսիսի հայրապետին. ՓԱ. Երիստոսելի իմաստասիրի Յողազս Առաքինութեան, առ Եղեքսանդրոս թագաւոր: Ճեպ ի Տեպոյ համեմատելով զՅայտնութիւնն ընդ 2եռագրիս, գտած եմ զհետեւեալ նշանաւոր տարբերութիւնս. Եղբայրասիրաց եկեղեցւոյն, փոխ. Փիլաղելեփեաց (Գ. 7). աշխէտ, փոխ. տգեղ բառին շրտոս (Զ. 8).

11. Ի Պատմութեան վարուց Թեկղի, 527, պէտք է կարդալ «եւ ի վերայ նորտ եղև հոգա՛ի ամպ փայտատեանց», եւ ոչ «եւ ի վերայ նորտ հոգանի լուսափայլ ամպ», ինչպէս ունի տողագ'րն: Երկրայական են ի Թուղթս Ս, Իգնատ. «Ողջոյն տայ ձեզ լուսափայլ եպիսկոպոսն Պողիկարդոս». 105.— «Իգնատիոս . . . մարբափայլ քրիստոսագղեսց ճշմարիտ որդոյ մերոյ . . . Ուրիմ սարկաւազի». 129:

12. Տես զիմ զիտողութիւն Տեօսակ բառի համար յերես 23, եւ ծան 4:

13. Եյս 2եռագիր է յիշատակեան յԱլիշանէ, Միստան, երես 107 ա.

Իրրև զկսկծումն կարծի, փոխ. զխայթոցս (Ք. 5). կլի, փոխ. կլայ (Փ. 10). Ըն լանջաւք, փոխ. Ըն ստեամբք (ՓԵ. 6). գոնագմ, փոխ. պղնձագոյն (ԽԸ. 19). սուտակ, փոխ. ոսկեքար (անդ, 20). զսնանակ, փոխ. քրիւտպրուտաւ (անդ). կարկենան, փոխ. ամեթուկս (անդ): Եւ ուր օրինակք Ս. Դագարու սխալմամբ գրած են զաշտարակս (Բ. 5), Ձեռագիրս օւղիղ ունի զաշտանակս համեմատ յունին:

13. (Երես 22.) Նախադրութիւնք եւ Գլխակարգութիւնք Հին եւ Կոր Կտակարանաց.— Կը գրէ Հ. Գար. Ձ. (Մտնդր. 172—173). «Ըյս (Հին Կտակարանի) նախադրութեանց ու անոնցմէ ետքը անմիջապէս գրուած ցանկերուն յունական սկզբնագիրը դեռ գտնուած չէ: . . . Ուստի հաւանականաբար կըրնանք կարծել թէ ի մերոց յօրինուած ըլլան, և կամ նմանողութեամբ յոյն լեզուով շարագրուած նման գրուածի մը՝ որ կամ իսպառ անհետացած է, և կամ դեռ յայտնուած չէ: Յօրինման և շարագրութեան սճն թուին հաւատարմացընել թէ բուն ազգային ըլլան»:

Ոմանք յայս նախադրութեանց թուին արդարեւ գրեալք ի Հայ եկեղեցականէ, զոր օրինակ Յուդթայ գրոցն, ուր կը կարգանք. «Ըսէ Եւսերի ի Քրոնիկոնին, իբրև ի սուշութենէ զայս ինչ. ՉԿամբիւս որ յեա Կիւրոսի Պարսից՝ առ ի Հեբրայեցոց երկրորդ նարուքողոնոսոր կոչել, առ որով Հրէիցն պատմութիւն լինել ասէ. որ ստուգապէս կարծելի է գոյ այս». 467. (=«ՉԿամբիւս ասին առ ի յեբրայեցոց երկրորդ նարուքողոնոսոր կոչել, առ որով Հրէիցն պատմութեանց լինել». Եւս. Քր. 114:) Ըստ Հ. Մկ. Ագերեանի (ի թուականն 1487)՝ Յուդթայ պատմութեանց գրութիւն յոյն բնագրին՝ սխալ ընթեքցմամբ եղած է Հրէիցն պատմութեանց. եւ նախադրութեանո գրողին ըսեն «որ ստուգապէս կարծելի է գոյ այս», կը ցուցանէ ըստ իս՝ թէ նա զԵւսերեայ հայերէն Քրոնիկոնն միայն ունէր ազգիւր, որոյ Երկրորդ Նարուքողոնոսորն գուշակել տուած է իրեն՝ թէ Հրէիցն պատմութեանց բառերով զգիրս Յուդթայ պարտ է իմանալ: Նմանապէս Բ Մակարայեցոց նախադրութիւնն եւ Գլուխք՝

Թուին յօրինեալք ի Հայոյ, զի կան երկու փոխառութիւնք ի նմին  
Քրոնիկոնէ. «Պտղոմէոս Աագոսեանց զբազումս ի Հրէից  
խարդախութեամբ իջոյց յԵգիպտոս». նխդր. 527 ա. (= «Պտղո-  
մէոս Աագոսեայ՝ ննդութեամբ եւ խարանաւք կալեալ զԵրու-  
սաղեմացիս եւ զՀիւստան, եւ զբազումս ի նոցանէ ի իջու-  
ցեալ յԵգիպտոս բնակեցոյց». Եւս. Քր. 126.)— «Անդ որում ի  
սուտ համբառ զԱնաիորայ վստահացեալ Յասոն, ի մարտ եկեալ  
ընդ Մենեղեայ, մեծամեծ չարեաց պատճառք Հրէիցն լի-  
նէին». Գլուխք, Թ. 528. (= «Արք (Յասոն եւ Մենեղայոս) եւ  
ընդ միմեանս իսկ անկեալք՝ մեծաց չարեաց պատճառք Հրէ-  
ից լինէին». Եւս. Քր. 134:) Բայց կարելի է թէ սոյն տեղեաց  
համար Հայ եկեղեցականն առաջնորդ ունէր (ասորական) սկզբ-  
բնագիր մի՝ զոր ուզած է զարգարել Եւսեբեայ բանիւք. քանզի  
եւ այլուր կընդօրինակէ ասացուածս յայլեայլ հայերէն մատե-  
նագրութեանց եւ ի թարգմանութեանց. ի Կորնիւն՝ «Զբազում  
աւթեանաւք անցեալ». Գլուխք Թուոց, ԽԵ. 118. (տես Կոր. =  
Ազաթ. Թիւ 63.) «Ողջ ամեմ». նխդր. Մնաց. 355 ա. (տես  
Կոր. = Եւթ. Թիւ 8.)— ի Սուտ-Կալիսթենեայ (Պտմ. Աղեքս.  
15)՝ «Հնազէտ՝ պատմութիւնք». նխդր. Մնաց. 355 ա.— ի Քրի-  
զորէ՝ Նողիանդացւոյ (Մեկն. Ժողովողի)՝ «Աշխարհապահ Հրեշ-  
տակք». Գլուխք Ժողովողին, ԼԶ. 648.— ի Խորենացւոյ (Պտմ.  
Բ. ԺԵ. 286. Գ. կգ. 565)՝ «Զմեղանս յանձն առնում». Գլուխք  
Բ Թագ. ԼԱ. 271:

Կան բաւական դօրաւոր պատճառք՝ արտաքին եւ ներքին՝  
առ ի կարծել թէ Հին Կտակարանի բազում նախադրութեանց  
եւ Գլխոց սկզբնագիրն ասորական եղած է (եւ ոչ յունական, ըստ  
Հ. Գար. Զ. ի): Արտաքին պատճառքն են՝ նախ զի Ս. Եփրեմ  
անդատին ի Դ պարէ թողուցած է մեղ նախադրութիւնս Դա-

1. Տպագիրն Պտմ. Աղեքս. ունի «Հնարագէտ պատմութեանց». այս-  
պէս եւ Մեծ. Հ. Ե. Տաշեան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեայ,  
225: Տես եւ ի Թ. Արծր. երես Գ. «Ժ գրոց հնագէտ պատմութեանց մար-  
զարեականաց»: Ստուգելի է ի յայն բնագրէ Քրիզորի նխաացւոյ Մեկնու-  
թեանն Երզոց Երզոյն յաջորդ վկայութիւնդ զոր կը յիշատակէ նոր Հայ-  
կազանն ի բառն Հնարագէտ. «Իրս իմն հնարագէտ պատմութիւնս հա-  
սելով»:

տաւորաց (Հ. Ա. 325), Թաղաւորաց (անդ, 415—416), Մնացորդաց (անդ, 463—466), եւ Գլխակարգութիւնս Յեսուայ (անդ, 299—300) եւ Սամուելի (անդ, 351—354): Երկրորդ՝ կ'ըսուի թէ «Մեր թարգմանութեանց մէջ գտնուած Նախադրութեանց նման աշխատասիրութիւն մը կայ յասորի լեզու յԱմբրոսեան մատենագարանի ի Միլան», Հ. Գար. 2. Մտնդր. 757: Իսկ ներքին պատճառքն են՝ պէսպէս ասորարանութիւնք. զոր օրինակ. «Տանն Սեթայ՝ շխառնել ընդ տունն Կայննի, տանն Նոյի՝ չուտել զարիւն կենդանոյ»։ «Պահելով սերմն կրկին աճման մարդկան զտունն Նոյի»։ Նխդր. Ծնն. 3 ա, բ. (=«Ուխտ եղեալ էր տանն Սեթայ՝ զի մի խառնակիցին ընդ տունն Կայննի»<sup>2</sup>. Եփր. Արար. 47.—«Եսկ կանայք տան Նոյի զիտորդ ապրեցան»։ անդ, 44.—«Եկն բարկութիւն Աստուծոյ ի վերայ աղպին տանն Նոյի եւ Ղովթայ»։ նոյն, Եփես. Ե. 149.)—«Առաքեաց Դաւիթ մխիթարել զՀանան արքայ Ամոնայ»։ Գլուխք Բ Թագ. ԻԵ. 271.—«Առաքեաց Դաւիթ մխիթարել զՀանուն» Գլուխք Ա Մնաց. 1Գ. 356. (=«Առաքեաց դարձեալ Նրեշտակս մխիթարել զՀանան արքայն»։ Եփր. Մնաց. 471—472: Ամոնացւոց թագաւորն կը կոչուի Անուն յԲ Թագ. Ժ. 1—3. եւ Անան յԱ Մնաց. ԺԹ. 1—6. ասորական ուղղագրութիւն է Հանան կամ Հանուն.)—«Եսպան զնա (զՈրոզրիս) Յէու՝ այն որ ջնջեաց զտունն Աբամբու»։ Գլուխք Բ Մնաց. ԺԹ. 381. (=«Այն որ ետ ցուցանել. Այն որ վկայեացն»։ Եւս. տես վերագոյն յերես 418. եւ այլն.)—«Բարբէլ»։ Գլուխք Եսայեայ, ԻԵ. 730. Եղեկիելի, ԺԶ. 900. փոխանակ Բարբելոն, ինչպէս կ'ըսէ այլուր, Գլուխք Դ Թագ. ՀԳ. ՀԳ. Միքիայ՝ Ա. Յովելայ՝ Գ. Մողաբիայ՝ Ա. եւ այլն. (=«Բարբէլ» (ասորերէն Babel կամ Babel P. Smith, *Thes. Syr.* Բեթ, 443). Զգան, Ե. 91 երկիցս. ԺԸ. 318. Եւս. Եկեղ. Բ. ԺԵ. 106. Զ. ԻԵ. 472. Եփր. Հ. Բ. 412. Հ. Դ. 212. Ագաթ. 429): Մեծագոյն մտադրութեան արժանի են զանազան մեկնութիւնք եւ իմաստք՝ որ յատուկ են Ասորի եկեղեցական մատենագրաց.

1. «Յաւելու եւ զայս, զի յետ վեց ամի արձակեցնն զծա-

2. Թարգմանիչն Զգանի, ԺԲ. 221, կ'ըսէ. «Խառնեցաւ ազգն Սեթեան ընդ անիծեալ ազգին Կայննի»։



այ Երբայեցի. ի խորհուրդ ազատելոյն զմեզ Բրիստոսի զինի վեց դարուն»։ Գլուխք Ելից, ԽԸ. 48. (= «Եւ զի յիս վեց աւուր առ զնոսս (ղերիս աշակերտան՝ Քրիստոս) եւ հնան ի լեռանն, խորհուրդ վեցերորդ հազար ամացն»։ Եփր. Համար. 146. Այլոր. «Եւ զի յորանչեցաւ եւթն անգամ, խորհուրդ եւթներորդ հազարին, զի նովաւ կենդանանան ամենայն մեռեալք»։ նոյն, Թագ. 454. — «Վարդապետք մեր եւ իմաստունք այսպէս ասնն, թէ ի նմանութիւն վեց աւուր եղեալ է դաշխարհս Աստուծոյ, եւ ի կատարածի վեց հազար ամին լուծանի աշխարհս՝ եւ լինի շաքաթն Աստուծոյ»։ Զգան, Բ. 36: Տես եւ յևզաթ. «Վեցհազարեան դարք» եւ «Եւթներորդ դար», 274. «Վեցհազարեան ժամանակ», 498. «Վեցդարեան ժամանակ», 500. տես եւ 64, 499:)

2. «Գայլախագիւ թլփատեաց զիսրայէլ՝ զի դիւրաւ ողջանայ, եւ զի խստութիւն նոցա արիւնաւըն թլփատեցի»։ Գլուխք Յեսուայ, Ը. 187. (= «Եւ զի հրամայեաց նոցա թլփատել զայլախագիւն, վասն զի դիւրին է հարուած նորա, եւ արագագոյն էր առ ի բժշկել քան զվէրս երկաթոյ . . . զի սիրտք նոցա դայլախագիւ կակղացին, եւ արիւնաւըն Աստուծոյ անթլփատութիւնն նոցա թլփատէր»։ Եփր. Յես. 308: ) Գայլախագիւ թլփատութեան դիւրաբժշկելի լինելն՝ կը յիշուի եւ ի Կիւրդի Աղեքոսանգրացոյ Մեկնութեանն Յեսուայ. «Ընդէր քարեղէն սրովք հրամայէ թլփատել . . . ասնն՝ թէ անցաւ լինէր քարին թլփատութիւն»։ տես ի Հ. Գար 2. Մտնդր. 505: Ասնն բառը նշան է թէ Կիւրեղ յայլմէ առած է զկարծիսդ, թերեւս յեփրեմէ, զորոյ զերկու պատասիկս ի մէջ կը բերէ յայլում գրութեան. տես ի նմին Մտնդր. 518:

3. «Ապան Դաւիթ զԸզրիազար. վասն որոյ առաքեաց նմա արքայն Անտիոքու անաթս սոկեղէն»։ Գլուխք Բ Թագ. ԻԴ. 271. — «Սրբեաց (Դաւիթ) Տեսնն զանաթսն սոկեղէն՝ զոր առաքեաց նմա արքայն Անտիոքու»։ Գլուխք Ա Մնաց. 1Դ. 356. (= «Սրբեաց դարձեալ Դաւիթ զանաթս սոկեղի եւ արծաթոյ եւ պղինձոյ, զոր ետ տանել նմա Փուա (Թուա?)՝ արքայն Անտիոքացոց»։ Եփր. Մնաց. 471: ) «Թովու, արքայ Եմաթայ», կը սուի յԲ Թագ. Ը. 9—11. նոյնպէս եւ յԱ Մնաց. ԺԸ. 9—11:

4. «Յերեաներորդ ութերորդ ամին Ասայի՝ թագաւորէ Աքա-  
աք, որդի Ամրեայ, ամս քսան եւ երկուս. եւ շինեաց զԵրի-  
քով»։ Գլուխք Գ Թագ. ԽԶ. 297—298. (==Եւ թագաւորեցաւ  
դարձեալ Ախաք որդին իւր ըստ նմանէն: Եւ վասն զի փոքր  
թուէր յաշտ նորա երկիր պագանելն ձուլածոյ որթուցն Յորոտ-  
վամայ, յարեաւ նորոզեաց ինքն առանձինն զԲահադ, եւ շինեաց  
Բահադու բազին ի Ջամրին, եւ շինեաց զաւելի անխժիցն Յե-  
շովայ զԵրիքով: Բայց կարի վասն այսորիկ առաւել շի-  
նեաց զնա, զի ցուցցէ եթէ շիր ինչ շահ յանէծսն Յեշովայ»։  
Եփր. Թագ. 431.—«Կամեցաւ դարձեալ Ախաք շինել զԵրե-  
քով կործանեալ, կործանեցաւ արքայութիւն նորա»։ Նոյն, Հա-  
մար. 141.—«[Ընկեցին] տունք նոցա վայիւք եւ ազադակաւ ան-  
դրանկաց նոցա իբրեւ Ախաքուն Արիւամաւ (տպ. Արիւամու).  
եւ կանգնեցան զգրունսն գուժիւ եւ աշխարանաւք կրասերոյն  
(տպ. կարելոյն) իբրեւ զորդին Ամրեայ Սորորաւ»։ Մար. Ի Վկ.  
Արեւ. 133.—«Սա (Աքաաք) շինեաց զԵրիքով՝ զնորոգեալն Յե-  
սուայ որդոյ Նաւեայ՝ Արիւնաւ անդրանկաւ իւրով, եւ Ջերծե-  
լաւ կրտսերաւ կախեաց զգրունն, ըստ բանին Յեսուայ: Եւ այլք  
զԱզան (տպ. դանազան) ասնն շինիչ հրամանաւ Աքաարու, եւ զոր-  
դիսն սմա ասնն՝ Արիւոն եւ Ջերծել»<sup>3</sup>. Միխ. Ա. Ժմնկզր. 45:) Ըստ Գ Թագ. ԺԶ. 34, ոչ եթէ Աքաար, այլ «Յաւուրս նորա շի-  
նեաց Աքիէլ (կամ Ազան. Յես. 2. 26) Բեթելացի զԵրիքով-  
Արիւնաւ անդրանկաւ իւրով արկ նմա հիմունս, եւ Սեզուրաւ  
(կամ Ջերծելով. Յես. 2. 26) կրտսերաւ իւրով կանգնեաց զգր-  
ունս նորա, ըստ բանին Տեառն՝ զոր խաւսեցաւ ի ձեռն Յեսուայ  
որդոյ Նաւեայ»:

5. «Սպան Դաւիթ զարքայն Մժընայ, եւ տիրեաց մին-  
չեւ ցեփրատ զետ»։ Գլուխք Ա Մնաց. 18. 356. (==«Սպան (Դա-  
ւիթ) զԹագաւորսն Մժուինի, եւ եղ սահմանս ի գեան Աքա-  
ժանի»։ Եփր. Մնաց. 471:) Փոխանակ արքայ Մժընայ կամ  
Մժուինի՝ յԱ Մնաց. ԺԸ. 3, գրեալ է արքայ Սուբայ, ուր ստո-  
րական թարգմանութիւնն ունի արքայ Մժընայ (P. Smith,

3. Հասուածոյ զԵւ այլք զԱզան . . . Արիւոն եւ Ջերծել» թուի յաւ-  
ելեալ ի Հայ թարգմանչէն:

*Thes. Syr.* Նուն, 2440, յանունն Եծիբին=Մծբին), զի ըստ Եսորհաց՝ Սուրա եւ Մծբին մի եւ նոյն քաղաքն է. (տես P. Smith, անդ, Ժողէ, 3373, յանունն Ժուրտ կամ Ժաւրտ=Soba. Սուրա): Զայս Մծբին=Սուրա գլխակարգութեանցն Ա Մնացորդաց եւ եփրեմի Մեկնութեանն Մնացորդաց շիշեր Մեծ. Հ. Յ. Տաշեան յիւր ուսումնասիրութեանն Վարդապետութիւն Առաքելոց անվաւերական կանոնաց ճատեանը, Հանդէս Ամսօրեայ, 1893, երես 5 ա. ծան. 4: Տես «արքայ Սուրայ» եւ յՒ Թագ. Ը. 3, 5, 7, 12. տես անդ եւ «Ասորիք Սուրայ». Ժ. 6.—«Ասորեստան Սորդայ». Աղ. ԵՒ. 2:

6. «Ասէ Սուրբն Յակոբ Մծբնայ՝ ի գիրսն որ կոչի Ջզան, թէ էր համան Ամողեկացի յողգէ Ագագայ զոր ապրեցոյցն Սաուդ եւ սպան Սամուէլ». Նխդր. Եսթերայ, 455. (= «Յազգէ անտի Ագագեանց արքայի Ամողեկացոյցն էր նա (համան). այն՝ զոր Զաուդն էած, եւ սպտեաց զնոսա Զամուէլ մարգարէ առաջի Աստուծոյ». Ջզան, Գ. 55:) Որովհետեւ ի սմին Նախադրութեան կը յիշուի պատահիկ մի եւ յեւերեայ Բրոնիկոնէն՝ որ կը գտնուի յերես 118 սոյն զրոց, թերեւ եւ այս է շարագրած Հայ վարդապետի: Անստոյգ թուի Բագմավիպի զրածն, 1875, երես 15 ա. «Եւթաղ եսթերայ զրոց յառաջարանութեան մէջ անկէ (ի Ջզանէ) օրինակ մէջ կը բերէ»:

7. «Ասող աստուածոյն Ռեմիայ՝ զՂոռնոս կոչէ. քանզի հեթանոսք աստուածոյն իւրեանց Գոռնայ ասեն թէ ասող է յերկինս». Գլուխք Ամոլսայ, Ե. 774 ա. (=Եւ Ամոլս (կշտամբաց զնոսա), զի առին նորա զվրանն Մողորայ, եւ Քեւանայ՝ պատկեր գաստղն՝ զոր արարին իւրեանց աստուած». Եփր. Բ Ար.

5. Գայ զրեայ եւ Խեւտն. «ԶԽեւտն մարգարէիք, եւ զԲանն Հար անարգէիք». Եփր. ի Տաւնն Բարբերանութեան, Հ. Գ. 52: Գր. Նարեկացի (Ագաթամատոյց, ԾԱ) կ'ըսէ Մանասէի համար, թէ «Զայն վայր երկնաման ահաւոր սքանչելատես (այս ինքն՝ գտածարն)՝ Քեւանայ ումնմն քառաղմակի, նախանձարկու պատկերի, աւորածոյն անապատի, պաշտանետեղ (պաշտանետոյ?) զարշելի եւ զիւաճենճեր զհարան պատրաստեալ կազմեաց»:

266:) Զեմովայ մարգարէի (Ե. 26) Հոնմիա՞ աստուածն՝  
Եիրեմ կը մեկնէ Քեւան, որ է պարսկերէն Քէյվան, Երեւակ մո-  
լորակըն, լատ. Saturnus. (տես Քէյվան ի Քէորդ Տէր Յովհան-  
նէսեանի Բագ. Պրս.—Հայ. տես եւ Քեւոն ի P. Smith, *Thes.*  
*Syr.* Քոփ, էջք 1659—1660, ուր նշանակութիւն պարսիկ  
Քէյվան բառի կը դրուի «nomen dei, Saturnus», «անուն աս-  
տուծոյ, Կոննոս»:

8. «Տեսանէ (Դանիէլ) դոսեիլ դազանացն. առիծուլն՝ զթա-  
զաւորութիւնն Բարելացոց. արջուլն՝ զՄարաց եւ զՊարսից.  
ընծուն՝ զՄակեդոնացոցն, եւ չորրորդին՝ զՀոռ-  
մայեցոցն». Գլուխք Դանիէլի, Թ. 879. (==«Գազանն առաջին  
նման առիծու՝ . . . թագաւորութիւնն Բարելացոց է . . . :  
Գազանն երկրորդ նման արջոյ՝ . . . թագաւորութիւնն Մա-  
րաց եւ Պարսից է . . . : եւ գազանն երրորդ նման ընծու . . . :  
Աղեքսանդր Մակեդոնացի է . . . : եւ գազանէն չորրորդէ  
ատէ, Ահեղ եւ զարմանալի . . . սա թագաւորութիւն որդւոցն  
Եսաւայ է».՝ Զգուն, Ե. 95—97, որում գրեթէ համեմատ եւ  
Կիր. Կոչ. ԺԵ. 314—315, առաջին գազան՝ Պարթևք եւ Ասո-  
րեստանալք. երկրորդ՝ Պարսք. երրորդ՝ Մակեդոնացիք. չորրորդ՝  
Հսովմայեցիք<sup>7</sup>։)

9. «Մարգարէանայ վասն Քրիստոսի եւ վասն Նեոխնն եւ  
Անտիոքու ամպարշտի. զի նա է եղջիրն փորրիկ որ ըն-  
կէց զԵրեսն՝ որ յառաջ քան զնա էին». Գլուխք Դանիէլի, Թ.  
879. (==«Եւ ատէ (Դանիէլ). Եղջիր մի փորրիկ ելանէր ի մէջ

5. Նախովայն Ստեփանոս յատենախօսութեան իւրում (Գործք Առաք.  
է. 43) կը յիշէ զԶեմովայ Հոնմիայն, զորմէ կ'ըսէ Քէորդ Սիկեացի ի Մեկն.  
Գծ. ԺԷ. 144. «Հոնմիայն կուտք էին յանուն կնոջ միոյ բողի, եւ յորջոր  
Հումն պատկերին Ետղիկ, զոր աստուած նոցա ատէ»:

6. «Թագաւորութիւն որդւոցն Եսաւայ՝ անուամբ՝ Զգուն կ'իմանայ  
զՀսովմայեցոց ատերութիւնն, ինչպէս յայտ է եւ յայլ երկու տեղեաց նոյն  
ձառին, 92—93, 103:

7. Ի մեր առնմային մտանագրաց՝ Սերիոս (Պատմ. 176—177) կը մեկ-  
նէ զՀորո գազանս Դանիէլի, առիծ=Յոյնք. արջ=Սասանեանք. ինծ=Բող  
եւ Մողոզ. չորրորդ=Եսմայեցիք, որ է Երարացիքը Ըստ Պասմէին վա-  
րուց Ս. Ներսիսի (Սոփ. Հայկ. Հ. 2, 94), առիծ=Մարք. արջ=Բարելա-  
ցիք. ինծ=Պարսք. չորրորդ=Հոսոմք:



նոցա, եւ երեք [եղջիւրքն] ի բաց խլէին յերեսաց նորա: Իբրեւ  
եկաց հաստատեցաւ Անտիոքոս ի թագաւորութեան, հնա-  
զանդեաց ընդ իրեւ զերեքկին թագաւորութիւնս» եւ այլն. Զգաւն,  
Ե. 97.—«Գանիէլ մարգարէացաւ վասն փորձիկ եղջերն որ  
բուսաւ, . . . այս ինքն է Անտիոքոս անաւրէնս». Մար. Պատմ.  
Արեւ. Վկ. 8:)

10. «Եւ ի վերայ Փարաոնի ասացեալն՝ ձգի եւ յիմանա-  
լի Փարաւոնն. բայց նախառէ զարձեալ Բաբելոնցւոյն եւ Սա-  
տանայի որք անկան՝ զհոգարտութիւն եգիպտացւոցն որ զի անկ-  
ցի». Գլուխք եղեկիկի, ԻԶ. 900: Իմանալի Փարաւոն, որ է  
Սատանայ, գտած չեմ յեփրեմ եւ ի Զգաւն. բայց կայ նովին  
մտօք անմարմին Փարաւոն յայլ ասորական գրութիւնս<sup>8</sup>. «Աւա-  
տի եւ այժմ գեւ հայեցաւ ի դոսա Ատուած, եւ էջ փրկել զդո-  
սա ի ձեռաց անմարմին Փարաւոնի». Զենոբ, Պատմ. Տարաւ-  
նոյ, 16.—«Ազատածին որդիքն Սիւրիսի դարձան ի գործ հնոյն  
Խորայի ի մերոյն Փարաւոնէ (ի Սալահատնէ), զոր ետ մեզ  
չարչարի անմարմինն Փարաւոն, եւ հինգ հազարս եթող ան-  
գէն շինել զպարիսպն Երուսաղեմի». Միխայէլ Ասորի. (տպ. Ed.  
Dulaurier, *Recueil des Historiens des Croisades; Document  
Arméniens; Tome I-er, Paris, 1869, կրես 399.*)

Ժամանակ գրութեան նախադրութեանց եւ Գլխակարգու-  
թեանց թէ չին Կտակարանին եւ թէ նորոյն՝ թուի կատարած  
չինգերորդ դարուն կամ սկիզբն Վեցերորդին, յորում վաղուց  
խամրեալ էր Առաջին Աշակերտաց անման Հայ լեզուն, եւ կը  
սիրէր նորահար Հայերէնն Երկրորդ Աշակերտաց: Տես զբառսն  
Ապագայ. (Նխ. Ծնն.—Գլ. Թուոց, 1Բ.)

Ապացոյց. (Նխ. Բ Կոր.)

8. Տորոց թուի թէ առած են եւ Հայ մատենագիրք. «Եւ զայ ի Մկր-  
տութեան ընթերցուած, ընկզմել զանմարմին Փարաւոնն՝ որ ջրահեղ-  
ձոց զողայսն անէր». Գրիգորիս Երչարունի, Մեկն. Անթերցուածոց, Ը.  
—«Որ բաժանեաց զժով աշխարհի խաչին խորհրդով, եւ ազատեաց յան-  
մարմին Փարաւոնէ զնորս Խորայէլ», Ըարական, Աւագ աւրճնութիւն. ԳԳ.  
Այլուր կ'ըսուի. «Տանկայր լուսաւորութեան աւագանին, հնգձուցանել զան-  
եքեւոյթ Փարաւոն ի ջուրն մկրտութեան աւագանին». Վկ. Գաւթի Գու-  
նեցոյ, Սոփ. Հայկ. Հ. ԺԹ. 86.

- Աստանար. (Նխ. Ա. Յովհ.)  
Աստուածայնաբար. (Նխ. Երզ.)  
Բաղդասեմ. (Գլ. Իմաստ. Ի.)  
Բարեփառութիւն. (Գլ. Ա. Մկր. ԻԸ.) և 2 արափառութիւն. (Գլ. Ժող. ԺԱ.)  
Բացերես. (Գլ. Առակաց, Գ.)  
Գերազանցութիւն<sup>9</sup>. (Նխ. Երզ.)  
Եղանակաւոր. (Նխ. Երզ.)  
Եռանձնեայ. (Գլ. Ելից, 2Թ.) Եռանուն. (Նխ. Մնաց.)  
Ընդդիմաբնութիւն. (Գլ. Ժող. ԻԸ.)  
Իմանալապէս. (Գլ. Ելից, ԴԸ.)  
Ինքնազոյակ. (Գլ. Իմաստ. ԺԵ.)  
Խոհականութիւն. (Գլ. Իմաստ. Ժ.)  
Հնգեակ<sup>10</sup> (Գլ. Ղեւա. ԺԺԹ.—Գլ. Թուօց, Է.)—Տասնեակ<sup>11</sup> (Նխ. Ելից, և Գլ. ԺԾԱ.—Գլ. Ղեւա. ԺԻԳ.)—Քառասնեակ. (Գլ. Ելից, ԺԾԱ. Գլ. Բ Աւր. Ի. ԻԱ.)  
Նախազարափարեմ. (Նխ. Կողոս.)  
Ներբող. (Նխ. Գաղատ.) Ներբողական. (Նխ. Եփես.)  
Ներգործեմ. (Նխ. Երզ.) Ներգործութիւն. (Գլ. Իմաստ. ԺԱ. ԺԳ.—Նխ. Ա. Յովհ.)  
Ներկայ. (Նխ. ԺԲ Մարգարէից.)  
Ներհակ. (Գլ. Ժող. ԺԹ. ԼԱ.)  
Ողջախոհ. (Գլ. Իմաստ. Գ.)—Ողջախոհութիւն. (Գլ. Ելից, ԺԺԷ.—Գլ. Ժող. ԻԱ.)  
Որակութիւն. (Գլ. Ելից, Ժ.)  
Պատահք. (Գլ. Դատ. ԺԸ.)  
Տեսակ.<sup>12</sup> (Նխ. Ենն.—Նխ. Յայան.) յորմէ Անտեսակ. (Գլ. Իմաստ. ԺԵ.)

9. Տես զիմ զիտողութիւն Գերազանց բառի համար յերես 23, և ծան. 2:

10. Կայ յԱզաթ. 121. Եւնդ Նոգեկան կամարարն (ապ. կամարարն) կուսանաց: Տես և Զնոգեկին յ'Գ Քաղ. 2. 31:

11. Տես զիմ զիտողութիւն Տասնեակ բառի համար յերես 23, և ծան. 3:

12. Տես զիմ զիտողութիւն Տեսակ բառի համար յերես 23, և ծան. 4:

Տճեութիւն. (Գլ. Դեւտ. ԽԱ.)

Փարթամութիւն. (Նխ. Ա Տիմ.)

Ի մասին հոյսոց նշանաւոր են՝ յԱսիոյ (Նխ. Բ Տիմ.) յԻտալիոյ<sup>13</sup> (Նխ. եբր.) ի Մակեդոնիոյ (Նխ. Բ Կոր.), կամ ի Մակեդոնիոյ<sup>14</sup> (Նխ. Ա Տիմ.), Սամարոյ<sup>15</sup> (Գլ. Ես. Թ)։ Գարձեալ՝ գորտամբ (Գլ. Իմաստ. Ի), փոխանակ գորտի կամ գորտով<sup>16</sup>։ Իսկ զԱղախինսն (Նխ. Կողոս.) եւ ի Բուրզան (Գլ. Ա Մկր. ԼԲ) անճեղեղ հոյովքն, փոխ. զԱղախնայս եւ ի Բրզանսն, թուին յետին դարուց անճմուտ ընդօրինակողաց վերագրելի<sup>17</sup>։ այսպէս թերեւս եւ անարուեստ բարդութիւնն Անմեկն (Գլ. Իմաստ. ԺԱ), փոխ. Անմեկին։

Ասա եւ անդ կը գտնուի նա եւ իւր վերջաւորութիւն յերրորդ դիմի կրաւորական բայից եղակի անկատարին<sup>18</sup>։ Առաջնորդիւր (Գլ. Իմաստ. ԽԱ), Առաքիւր (Նխ. Ելից) Դաւիւր (Նխ.

13. Անվուեր է յԵս. եկեղ. Ը. ժա. 642. «Եւ էր այր մի պատուաւոր . . . յերեւելի մարդկանէ յտաւիւրոյ». ուղիղ ընթերցուման է Դաւախայ, ըստ Չեռագրի միում Թէ զարու։

14. Մակեդոնոյ ե Սամարոյ՝ ի գիրն է կարդացուելով. ինչպէս եւ առ Մամբրէի, Ի Յար. Ղազարու, 46, «ի Բեթանոյ», փոխ. «ի Բեթանիոյ»։ Եյսպէս եւ առ Խորենացոյ (Պատմ. Բ. 2թ. 373)՝ ուր տպագրին ունի «Եթաղ եղեսիայ», Չեռագիր մի Թէ զարու կը գրէ եղեսոյ, փոխ. եղեսիոյ։

15. Գործիականդ գորտամբ կ'ենթադրէ ուղղական Գորտն, զոր թէպէտ գտած չեմ ի գիրս, բայց կայ յ'ԹԳ զարու՝ սեռական գորտան. «Գորտան ձայն որ լսես (յերուզի), խնդութիւն է եւ զրուց. զայն Առաքիւ Ենեցի, Երազահանն Սորա յողանկի ուղղականն է Գորտունք (Մխ. Գոչ, Առակք, Հ.), հայցական գորտունս (Ն. Ընորհալի, Քուղթ ի Միջագետս Ասորաց՝ յԱմայք կոչեցեալ նահանգին. եւ Մխ. Գոչ, Առակք, ՀԳ. 2ԹԱ), Ըստ այսմ եւ Բոյթ, Ժուճկ, Մուլթ՝ փոխեալ են ի Ստորին Հայերէնի Բոյթն, Ժուճկն (յորմէ աշխարհաբար՝ ծնկան վրայ զայ), Մուլթն։

16. Համեմատէ. «Լայն եւ ընդարձակ պարիսպ պատեցին շուրջանակի, յօրինեալ քուրզս ութն ի նմաս». Առաքիւ Քարիթեցի, Պատմ. ԻԳ. 234։

17. Ձայս հնարս նորագրելոյ յերկդիմութենէ ներգործականին եւ կրաւորականին՝ գտած են նրկրորդ Աշակերտք, եւ անվուեր են ամենայն իւր վերջի կրաւորական անկատարներն ի գրութիւնս Առաջին Աշակերտաց, յորոց եւ ոմանք յայտնապէս սխալ. օրինակ իմն, «Ըն ինչ անարժան վարկանիւր որ միանգամ ի դէմս փրկութեան մերայ լինի». Ոսկ. Հա. Ը. Յորդ. 61. պէտք է կարգալ վարկանիւր իւր. տես անդ «իւր վարկանիւրի», Թէ. 245։

ծննդոց). Գնիւր (Գլ. Ելից, 35<sup>թ</sup>). Սատակիւր (Գլ. Բ Մկր. Թ): Երկրայական է «Սմին վասն փեսայացեալ քրմին՝ ծնանիւր որդիս». Գլ. Ելից, 2. զի բանն կը պահանջէ ծնանէր, ներգործական:

14. (Երես 22.) *Յանկը նրից զրոց Մատթէի Մեկնութեանն յՈսկեբերանէ.*—Եյս Յանկը ոչ թարգմանչին են, եւ ոչ այլոյ ուրուք յԱռաջին Աշակերտաց: Ոչ են թարգմանչին, կ'ըսեմ, քանզի օտար են ի նորին լեզուէ՝ «*Զանազանութիւնս հնոյն եւ նորոյս*». Ա. ա. 13.—«*Զկնի*<sup>2</sup> մկրտութեանն եւ գործով պարտ է պայծառանալ». անդ, դ, 13.—«*Որք ի լսելն ազատին, եւ ի դուրս*<sup>3</sup> ելեալ մոռանան». անդ, Ե, 13.—«*Փոփոխումն ախտից*<sup>4</sup> բնութեանս ըստ հասակացն». անդ, Ժ, 14.—«*Արժանաւորիլ*<sup>5</sup> ողջունին՝ զոր տայ քահանայն». Բ. է. 403.—«*Յաղպս սրբաց միայնակեցացն*<sup>6</sup>. Գ. Ժգ. Ժէ. 11: Իսկ «*Փորձին Տեառն ի Սատանայէ, եւ պատասխանեցին*<sup>7</sup>. Ա. Ժգ. 14. եւ «*Հաստատութիւն մարդեղութեանն Քրիստոսի*». Բ. իդ. 404, ոչ միայն Մատթէի Մեկնութեան թարգմանչին անծանօթ բառք են, այլ եւ միւս Առաջին Աշակերտաց առ հասարակ:

15. (Երես 23.) *Թարգմանութիւն Ոսկեբերանի Մեկնութեանցն Պաւղոսի յետոյ թուի ժամանակաւ քան զմա-*

1. Տես *Զանազան եւ Զանազանութիւն յԱզաթ.*—Բիւզ. թիւ 71:
2. Թարգմանիչն կ'ըսէ. «*Զբողոմս տեսանեմ յետ մկրտութեանն ծուրութեամբ զզածեալս*». Ա. դ. 66: *Զկնի փոխ. Յետ, տես սատէն 11, 2:*
3. Թարգմանիչն կ'ըսէ. «*Իրբեւ արտաքս ելանեմք*». Ա. ե. 67. *միշտ արտաքս, եւ ոչ երբեք ի դուրս:*
4. Թարգմանիչն կ'ըսէ. «*Ոչ հանապաղ յուզին ի մեզ կարիք*». Ա. Ժ. 139.—«*եւ ապա յետոյ գաւրանան ցանկութիւնքն*». 140:
5. Թարգմանիչն կ'ըսէ *ամէնուրեք Արժանի կամ Արժանաւոր լինիմ Գայ ներգործարար. «Արժանաւորեա Ըստուծոյ զոր աղաչէն»*. Բ. իդ. Յորդ. 733. այլ լատաղոյն թուի ըստ Պարխեան 2եռագրին՝ *արա արժանաւոր:*
6. Թարգմանիչն կ'ըսէ *ամէնուրեք Վանական, նոյն իսկ իբր զդ. Anachorète կամ Ermite. «Բանգի եւ ցանկալի իսկ տեսիլ է տեսանել զանապատն լի վանականաւք»*. Գ. Ժգ. 66.—«*Ոչ այնպիսի ինչ եւ ի խուցս վանականացն*». Ժէ. 72: (Թոռնեան, Հատ. Ընթերց. 108, ծան. 32, կը զրէ «*Ի տաղաւարս միայնակեցացն*». կարծեմ լաւ եւս էր վանականացն):
7. Տես *Պատասխանեմ յԱզաթ.*—Բիւզ. թիւ 67, ԴԻՏ.



տեննագրութիւնս Կորեանն.— Կարեւոր խնդիր մի է դիտել զժամանակագրութիւն թարգմանութեանց մեր Ռսկեպարուն թէ որ զկնի սրնյ եւ: Մինչեւ ցայսօր ոչ որ ի բանասիրաց զբազած է սոյն խնդրով, եւ ես կը ձեռնարկեմ յառաջին փորձն:

Ընդստին ի 404 տարւոյն՝ Սահակ եւ Մաշտոց սկսած են պարապել թարգմանութեամբ Աստուածաշունչ մատենին, որոյ վերջնական աշխատութիւնն (այս ինքն՝ սրբագրութիւն ի ստոյգ յունարէն օրինակաց) աւարտեալ է յամին 435 կամ 436: Այս 404—436 ամաց շրջանին կը պատկանին նա եւ թարգմանութիւնքն յասորականէ՝ Եփրեմ, Եսեբեայ Եկեղեցականն, Զգաւնի Շատք, ի թարգմանութեանց ի յոյն լեզուէ՝ Ռսկերբանի Մեկնութիւնն Մատթէի, եւ ի թարգմանութեանց Երբորզ Դասուն՝ Կիրղի Կոշումս Ընծայութեան, Բարսղի Վեցաւրեայն, Թուղթք Պրոկղի եւ Եկակայ առ Սահակ, եւ սորա Պատասխանիքն: Հաւանական է թէ Կորիւն թարգմանած է զԵթաղի Յառաջաբանս առ կենդանութեամբ Մաշտոցի, եւ սորա սրբագրութեամբ. զՄակարայեցիս թարգմանած է յեա մահուն Մաշտոցի. զՎարս Մաշտոցի յօրինած է իբր յամի 443—444. զԱզատանգեղ եւ զԲիզանդ թարգմանած է յամսն 444—449: Վարդանանց պատերազմին (2 Յունիս 451) նախընթաց եւ հետեւորդ շփոթութիւնք եւ յուզմունք Հայաստանի այն բաժնին՝ որ էր ընդ իշխանութեամբ Պարսից, հարկաւ ի փախուստ յորդորած են զայնոսիկ յԱռաջին Աշակերտաց՝ որ չէին ի պաշտամանէ պարտաորեալք—հանգոյն Յովսէփայ Վայոյձորեցւոյ եւ Աեոնդի Վանանդեցւոյ—կալ մնալ յԱյրարատ դաւառի. փախտականքն անցած են աներկբայ ի բաժինն Յունաց, որպէս զի յանդորբու եւ ի հանդարտութեան ի գլուխ տանին զիւրեանց զբարբ վաստակս: Յայս վաստակոց կարգէն են կարծեմ Ռսկերբանի Մեկնութիւնն Եսայեայ եւ Սերերիանոսի Շատք, որոց թարգմանիչն թուի նոյն որ թարգմանած է զՄատթէի Մեկնութիւնն Ռսկերբանի, բայց յիշեալ երկու թարգմանութեանց մէջ ծանօթ կ'երևի Կորեան մատենագրութեանց իսկ թարգմանիչն Ռսկերբանի Մեկնութեանցն Պաւղոսի.— որ եւ նա անտարակոյս մի էր ի պատսպարելոցն ի յուսական բաժնին,—բոտ ամենայն հաւանականութեան ընթերցած է զբովանդակ մատենագրութիւնս Կո-

րեան, եւ մեծ ազդեցութիւն կրած յայդ ընթերցմանէ, հիսսելով յիւր ուսումնակցաց (Առաջին Դասուն) հայկաբանութիւնն՝ այնպիսի բառս եւ ասացուածս զորս նորա բնաւ չէին գիտեր: Ի յաջորդ համեմատութիւնսդ կը նշանակեմ նախ զայն նմանութիւնս՝ որ միայն Պաղոսի Մեկնութեանց եւ Կորեան գրուածոց մէջ կը պատահին. *Ուղղակի ի Կորինէ*. եւ ապա զայնոսիկ՝ որ թէպէտ կը գտնուին եւ յայլ գրութիւնս Առաջին Աշակերտաց, բայց թերեւ Կորին եղած է յուշարարն թարգմանչին Պաղոսի Մեկնութեանց, *Մ'իջնորդաւ Կորեան*:

Ա

*ՈՒՂՂԱԿԻ Ի ԿՈՐԻՆՆԷ*

*ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՍՏԻՄՈՒԵԱՅ*

1. *Սաղմոսանուագն*. «Զոր *Սաղմոսանուագն* զհարէտսէ, թէ Յոյս ամենայն ծագաց երկրի». Ա. 4. տես եւ Կողոս. Բ. Յորդ. 550. Եփես. ԺԳ. 819, 823. Ե. 888. եւ Յորդ. 892:— «Քանզի զմանէ իսկ նշանակէ (ըստ 2.) *Սաղմոսանուագն*, թէ Աղբիւրն կենաց ի քէն է». Ազաթ. 300: (Այլուր կ'ըսէ թարգմանն. «*Մարգարէն տէ ի Սաղմոսին* . . . որպէս ի *Սաղմոսին տէ*». Եփես. ԺԱ. 787, 788: Ա՛յլ է *Սաղմոսասաց* յերբ. Գ. 479, 480:— Միւս թարգմանիչը. «*Զլսես Սաղմոսին որտէս*», Ոսկ. Մտթ. Բ. դ. Յորդ. 476.— «Գարձեալ տէ ի *Սաղմոսին*», Բրս. Վեց. Ա. 17.— *Սաղմոսերգն*. Կիւր. Գոչ. Թ. 132. Թ. 148 երկիցս. *Սաղմոսերգնացն*. անդ, Ժ. 160. *Սաղմոսերգիչն*. անդ, ԺԸ. 417. *Սաղմոսերգողն*. անդ, Ա. 7: Յաճախ եւ *մարգարէն*, կամ *Դաւիթ*:— *Սաղմոսանուագ* ի գիրս Մնացորդաց, Ա. դ. 33. Թ. 33, եւ այլն, է Ո՛ր եւ է երգիչ սաղմոսաց:)

2. *Բարեաց գործոց նախանձաւոր լինիմ*. Ա. Յորդ. 13: Տես ի Կոր. — Ազաթ. թիւ 36:

3. *Անդուստ ի վերուստ յերկնից*. «Եթէ կամիցիս՝ գոյ եւ այլ ինչ կարի անոյշ, որով կարես զոգիտդ անուշացուցանել. ոչ յԱրարացոց եւ յԵթովպացոց եւ ի Հնդկաց եւ ի Պարսից, այլ

անդուատ ի վերուստ յերկնից եկեալ. Բ. Յորդ. 26. ուր յոյնն կ'ըսէ « ի նմին իսկ յերկնից». տես Թօմնեան, Հատ. Ընթերց. 118, ծան. 9:—«Եւ ամենայն երկիր սկսան ի նա (ի Բասիլիոս) նախել, որպէս թէ անդուատ ի վերուստ յերկնից՝ իջեալ իցէ». Բիւզ. Դ. է. 95: (Թարգմանն կ'ըսէ յայլ տեղիս. «Որպէս թէ անդուատ իսկ յերկնից իջեալ». Եփես. Ը. 765. —«Ո վերուստ յերկնից իջանէ.» Կողոս. Ը. Յորդ. 527: —Միւս Թարգմանիչք. «Անդուատ յերկնից եւ յարքունի աթոռոցն յարեալ եկն յերկիր (Եստուած)». Ոսկ. Մտթ. Ա. Բ. 19. —Յերկնից ի վերուստ. Յովհ. Դ. 27.—Ո վերուստ յերկնից. Ոսկ. Ես. է. 84. Գիր. Կոչ. ԺԵ. 333:)

4. Մարդաշատ. Դ. 34: Տես յԱզաթ. — Բիւզ. թիւ 64:

5. Յուցք. Պարեմ. «Միթէ ի կարան իջանիցես, ի պտրանցանիցես. միթէ ի հարսանիս խնձղայցես, միթէ ի գեղան յառնիցես եւ ի ցոցս պարիցես»<sup>2</sup>. Ը. Յորդ. 66:—«Երգս առեալ բարբառեցան կայմիւք վաղելով՝ ցուց բարձեալ մարդկանն . . . համարէին հարսանեացն զպարսն պարել եւ զկարասն յարդարել (տպ. յորդորել)». Ազաթ. 143: («Յուցք պոռնկականք» յՈսկ. Մտթ. Բ. Ժբ. Յորդ. 566, ոչ է թարգմանչին, այլ Հ. Արսենի Բագրատունոյ:—Յուց թուի Հարսանեաց երգ. իսկ փոխ. Պարեմ՝ միւս Թարգմանիչք կ'ըսեն Կարասն:)

6. Կանանի. Թ. 72: Տես ի Կոր. — Ազաթ. թիւ 71:

1. Ազգ իսկ այսպէս ուղղած էի ես կտպագրին «անդուատ յերկնից ի վերուստ». եւ համեմատ իմ ուղղութեանս զտի ապա ի Չեռագրին Արրահամ երիցու:

2. Փոխանակ գեղան՝ մի 2. ունի գեղաւ, եւ միւս 2. գեղու այլ տես «Աղտեղութեան գեղանք» յեփես. Բ. Յորդ. 894: Փոխ. ի ցոցս պարիցես, տպ. ունի ի ցոցս պարիցես. եւ ի ծան. «Միւսն ի ցոցս չպարիցես». որ յ'ա տպ. Հատուածք. 312, գրեալ է ի ցոցս չպարիցես, ըստ որում եւ ի նոր Հայկ. ի բռոն Դեղօն. բայց նոյն Բառագիրքն ի Չպարիմ՝ կը գրէ. «Միթէ ի գեղ յորկնիցես, եւ ի ցոցս չպարիցես». ուղիղ ընթերցուածն թուի ի ցոցս պարիցես ըստ նմին Բառագրոց ի Յուց: Յուցք փոխ. Յուցք կը գտնուի եւ այլուր. «Եւ խաւսեցեալ տափելոյն հարսանիք էին, եւ երգք եւ ցոցք, եւ զամբար տաղաստաց». Ոլոմպիան, Առակք, Դ. 172. —«Կարասն կայմից եւ ցոցս վաղից . . . դիւաց . . . ծուլութեանքս իմմի շնորհեցի». Դր. Նարեկ, Ազաթ. ԻԱ:

7. *Ի վանականաց կարգ ելանեմ*. «Յաղուժք յանարգաց . . . ի վանականաց կարգ ելանեն»։ ԺԱ. Յորդ. 90—91: — «Յորոց եւ գասան արժանիք (ի մանկանցն Վրաց) ելանել ի կարգ Եպիսկոպոսութեան վիճակի»։ Գորիւն, 76. այսպէս թուի սուղիկի գրեալն ի տպագրին (տես ստեղծ. 3)՝ «յորոց եւ իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ»։ Բաց ի վկայութենէն Ոսկերիքանի՝ միտ դիր եւ յաջորդացդ. «Յորոց եւ գտեալ շնորհս . . . ի տիեզերական քաղաքին մեծարել զարմանովք»։ Գորիւն, 17. — «Ելին ի վիճակս երկնաւորու. Ազաթ. 401. — «Եւ անդ ի միայնակեցի կարգ ելեալ՝ լինէր ի խրճիթ»։ Յոհ. կթ. Պատմ. 62. որ սխալ գրեալ է ի Շիրակ Ալիշանի. երես 172 ը, «ի միայնակեցի կարգ եղեալ», ինչպէս եւ ի Գորիւն՝ եղեալ փոխ. ելանել: (Թարգմանն կ'ըսէ յայլում վայրի. «Թէ մինչչեւ ուտեալ ընդ իշխանութեամբ լինել՝ եւ յիշխանաց աստիճան ելանիցէ, յամբարհաւաճութիւն հատանի»։ անդ, Ժ. 81:)

8. *Նժոյգ*. ԺԱ. Յորդ. 93, եւ այլն. Տես ի Բիւզ. — Մկր. թիւ 43:

9. *Նախանկար ւարինակ*. «Այն իսկ է՝ եթէ նախանկար ւարինակ բարի վարուցն դու լինիցիս»։ ԺԳ. 106. — «Ըստ ւարինակի նկարչաց միանգամայն զրոշմեցի (տպ. զրոշմիցէ) քեզ, ասէ, զպատկեր առաքինութեան . . . , իբրեւ զկանոնս եւ զնախանկար ւարինակս եւ սահմանս արկի (տպ. արկ) ի միտս քո»։ Բ Տիմ. Գ. 192. — «Իբրեւ զնախանկար ինչ (տպ. զնախանկարիչ. տես Հայկ. Բառաքնն. երես 46) տիպս եւ ւարինակս»։ Փիլիպ. ԺԲ. Յորդ. 485: — «Նախանկար ւարինակու փութալ յառաջագոյն ի զուշակեալ հանգիստն»։ Եւթաղ, Գլուխք երբ. Ե. 1171: (Այլուր *Նախանկար տիպք*. Բ Տիմ. Ը. 245. Տիտ. Դ. 313. Փիլիպ. ԺԲ. 485. եւ Յորդ. անդ. Եփես. ԺԵ. 836:)

10. *Ողորանար խաւսիմ*. ԺԳ. 107: Տես յԱզաթ. — Բիւզ. թիւ 53:

11. *Հրածարեմ*. (մեռանել.) ԺԳ. 109: Տես ի Գոր. — Ազաթ. թիւ 134:

12. *Զկնի կրթիմ*. «Հետամուտ եղեայ, զկնի կրթեցայ,



զիւ դքեղ ըմբռնեցից» ժե. Յորդ. 143:—«Վաղմեցան, զունդ եղեն,  
պատրաստութեամբ զնետ կրթէին Վարդապա: Բիւզ. Գ. Ի. 53.  
—«Եպա զնետ կրթէր Վասակ Մամիկոնեան» Գ. Իզ. 141. որ  
Ի Գ. Ժե. 122 երկիցս կ'ըսէ Ջնետ լինիմ: (Միւս թարգմա-  
նիչք. Պնդիմ զկնի. Ծնն. ժԳ. 15. ԼԱ. 23, 37. Ա Թագ. Լ. 8.  
Բ Թագ. Բ. 24. Պնդիմ զնետ. Ծնն. ԽԳ. 4. Լք, ժԳ. 4, 8,  
9. Յետու, Բ. 5, 7. Ը. 17. Ժ. 19. Գատ. Ա. 6. Ի. 45. Ա Թագ.  
ԽԳ. 25, 28. Բ Թագ. ժէ. 1. Գ Թագ. Ե. 21. Բ. 27. ԻԵ. 5.  
Մտանեմ զկնի. Ելք, ժԳ. 17, 23. Յողիթ, ժԳ. 5. Ջնետ  
մտանեմ. Ղևա. ԻԶ. 37. Գատ. Գ. 16. Է. 23. Յողիթ, ժե.  
5. Սիրաք, ժԱ. 10. ժԳ. 23. Ողբք, Գ. 11. Եւս. Եկեղ. Գ. Իզ.  
192. Հետամուտ լինիմ. Ա Թագ. Լ. 22. Իմաստ. ժԹ. 3.  
Եւս. Եկեղ. Գ. Ժզ. 262. Ջնետ լինիմ. Երեմ. ԼԹ. 5. ԾԲ. 81)

Ս Ե Վ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Բ Տ Ի Մ Ո Թ Ե Ա Յ

13. Զի քնեոիցի, այլ մի թաւալել, այլ զգոշանալ.  
Ա. Յորդ. 178, սող 5 Ի ստորէ.—Զի հպատակ կայցես, եւ  
արթուն կալ. Եբր. Իէ. 543: Տես յԱզաթ.—Բիւզ. Թիւ  
60, ԳԻՏ.

14. Ասպազէն. Գ. 194: Տես յԱզաթ.—Բիւզ. Թիւ 81:

15. Փոխադարձ. «Զիք իսկ մարդ, եթէ նեթանոս իցէ  
եւ եթէ Հրեայ եւ եթէ հերետիկոս, որ Հերկնչիցի Ի փոխա-  
դարձ լինելայ. . . յաստէն Ի փոխարինացն կասկածէ եւ երկնչի,  
թէ գուցէ կամ յինչո լինիցի կրկին փոխադարձ, եւ կամ յոր-  
դիս կամ Ի տուն կամ Ի մարմին կամ յոգի» Ե. Յորդ. 219:—«Եւ  
զայն եւս տեսանէաք Ի նոցանէ՛ Ի նոցունց զից անտի զխաղա-  
ղասէք շինութիւն մարդաշատութեանն, . . . նոցա զայն փո-  
խադարձ փոխարինացն շինութիւն Հորհեալ (տպ. Հտորհել)».  
Ազաթ. 107:

16. Ընկերասէր. Է. 234: Տես յԱզաթ.—Մկր. Թիւ 54:

17. Շաշին եւ շառաշին. «Եյնպէս եւ Ի կերպարանսն.  
քանզի աստ արինակ եւ պատկեր եւ վարդապետութիւն է եւ  
նախանկար տիպք աստուածպաշտութեան. եւ յառաջնումն՝ ան-

շունչ եւ մեռեալ, եւ շաշին եւ շառաշին<sup>3</sup>, եւ ի կեղծ ստորութիւն»։ Ը. 245: «Ըտրժէին սա հասարակ ամենքին որ լսին դձայն բարբառոյ բազմութեանն, գշաշին զինու, գշառաշին, գերթարացն թնդին»։ Մկր. Ա. գ. 41. — «Անդ էր լսել . . . շաշին նշանաց, շառաշին նեախց»։ Բ. և. 3: (Տայլ գիրս կայ Շաշին սուանձինն. Գատ. Ե. 16. Մկր. Ա. 13. Նաւում, Գ. 2. կայ Շառաշումն, Եմասա. Ժ2. 16. Երեմ. ԺԱ. 16. կայ եւ Շաշել շառաշել, Երեմ. Խէ. 3:)

18. *Մարծեմ*. «2իբ որ որ մերկանայցէ եւ ամանիցի եթէ հանգիստ խնդրիցէ. քանզի յըմբշամարտ ի կուխն (յըմբշամարտիկ կուխն?) մերկանան ամանին, ապա ի մըցել եւ յոգորել մատչին: Եթէ հանգիստ խնդրիցես, ընդէր մերկացար, հիմ դրագուկս մարծիցես»։ Ը. 249. — «Որ զմարտուն երկայնս հանդերձ մանեալ պերեւելաիւք մարծէին»։ Տիտ. Ե. 330: «Առաջեալ դհերս իւր, ամեալ մարծեալ<sup>4</sup>, վարտակալ եղեալ ի գլուխ իւր»։ Քիւզ. 2. ր. 266: (*Մարծեմ* կամ *Մարզեմ* է Աւծանեմ, ինչպէս կ'ըսէ արդէն թարգմանն յառաջին վկայութեանն. նոյնպէս եւ այլուր. «Եւ եթէ անցանիցէ սք, ասէ, ի կուխն եւ ամանիցի»։ անդ, Գ. 203. — «Աւծանի իրրիս զմարտիկան որ ի կուխ մասանիոց իցեն»։ Կողոս. 2. 59): Ըստ այսմ եւ յնսկ. Մտթ. Ա. Ժա. Յորդ. 170. «Յայսմ արէ եւ անդր՝ ի բարուք կուանոցն մասանիցէ, ամեալ իւրով չոգույն պարգեաց»):

19. *Անուն անուամ*. «2թչնամիս վանեցար, անուն անար, նշան յաղթութեան կանգնեցար»։ Թ. 260: «Կամէր յանպարաստից գալ անկանել ի վերայ Մանուէլի, միայն անձամբ անուն անունուլ»։ Քիւզ. Ե. խգ. 251: (*Միւս* թարգմանիչք. *Անենմ*

արտաբ. կունս քիբ քնոցսմ զձարսմ զգոյնսմսս սմ մայր ույ վար սցոմ . . . մամկոտաշարոսմ մկկամէ: զյար . . . )

3. Ըստ այսմ եւ շաշին եւ շառաշիւմ. Կիսն, Ժն. Յորդ. 837:

4. Տգ. մերծեալ, գոր վաղ իսկ ուղղած եմ մարծեալ ի չայկ. Բաղարնն. Երեսք 60—61. Համեմատէ ընդ ամեալ մարծեալ. «Ենեալքն յաստուածս էր քողաքափարութեան, եւ սնեալք արիւնար, որ յամենայն առաքինութիւն ամեալ մարզն»։ Փիլոն, Տգ. Բազնին իրաց, 209. — «2իթոյն քնութիւն ամեալ մարզէ զըմբիւսն, աներկիւզս ի գալարսս ստեանիցն արեացուցանելով»։ Խորեն. Գիտ. Ե. գ. 507:

անուն. Բ Թագ. Ը. 12. (Մկր. Ա. գ. 14.) Առնել իւր անուն.  
ծնն. ԺԱ. 4. Ես. 47. 12, 14. Բարուք, Բ. 11. Գան. Թ. 15.  
(Մկր. Ա. Կ. 57. Ժգ. 29): Տես եւ Առնում կամ Ժառանգեմ  
զանունն քաջութեան ի Բիւզ. — Մկր. Թիւ 31.)

20. Համակ. ա. (մակբայ, Միշտ, Հանապազ.) «Նա եւ ի  
տունս իսկ մեծամեծս զնոսա իսկ տեսանեմք շնորհակալ ծառայ-  
իցն, որք համակ զտէրունեացն եւեթ հոգայցենն», եւ ոչ զան-  
ձանց». Ժ. 273—274. — «Զեռք նորա (Քրիստոսի) ի բարեբարու-  
թիւնս համակ ձգեալ (տպ. համարձակեալ. տես Հայկ. Բա-  
ռաքնն. Կրես 48), աւղուտս եւեթ գործէին», Եփես. Գ. Յորդ.  
699. — «Համակ ի հոսս անուշունս, եւ ի կեանս բարիս վայե-  
լեալ». անդ, ԺԳ. Յորդ. 814. — «Թերես իցեն աստ ոմանք՝ որ  
ասիցեն. Համակ զողոտց խաւսի, համակ զարատուաց: Չկա-  
մէի, հաւատացէք, չկամէի. այլ համակ ընդ զովութիւնս եւ ընդ  
յարգանս անցանելի. Եբր. ԻԳ. 528. — «Համակ ի քուն կամք,  
միշտ երագո տեսանեմք». անդ, ԻԳ. 530. (Նոր Հայկ. ի Հա-  
մակ՝ սիւալ կը նշանակէ Ոսկ. Մտթ.): — «Ելլ զայս արիւնակ  
համակ տայր նոցա զքաջալերութիւն (տպ. զքաջարութիւն)  
Սուրբն ներսէս». Բիւզ. Գ. դ. 94. — «Եւ զամենայն ժամանակս  
. . . համակ խնդրէին պահաւք ժողովուրդին». Ժբ. 106. — «Ելն-  
պէս տացուք նմա տուն, զի ի Հայոց միշեւ ի Տիգրոն մինչեւ առ  
մեզ՝ համակ յիւրում տան ազցի». ի. 132. — «Համակ սրով . . .  
զքրտունս երեսաց մերոց ջնջեցաք». Ժա. 161. — «Եւ համակ Տէր  
եա ձեզ յաղթութիւն [վասն] անուան իւրոյ». անդ, 162. — «Ես  
բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, եւ նա  
համակ անարգեաց զիս». Ժդ. 165. — «Զինն տիւ եւ զինն գիշեր՝  
համակ իջուցին զոր գտին յԱրատագերսն (տպ. յԱրատարագէրսն)

5. Համեմատէ. «Ո՛չ ամենայն կեանք նոցա (ծառայից) յայն հաս-  
տատեալ կան՝ . . . զի զտէրունիսն եւեթ հոգայցենն . . . Իսկ մեր զնո-  
րին հակառակն, զմեր հոգս հանապազ հոգամք, եւ զտէրունիսն ոչ սակաւ  
ինչ». Ա Տիմ. ԺԶ. 145:

6. Գեր. Այտրնեան չէ նկատած զայս յոճախութիւն Համակ մակ-  
բայիս ի Մեկնութիւն Պաւղոսի, եւ կը գրէ ի ԸՆԾ. ԸԵՐ. 116, Ժան. 114.  
«Համակ մակբային այս գործածութիւնն ալ մասնաւորապէս Բողոքանգայ եւ  
Փարպեցոյն սիրական բացատրութիւնն է»:

բերդին» . ծե . 171 . տես եւ Ն . դ . 199 . ե . 201 , 202 երկիցս .  
իդ . 219 . յե . 236 երկիցս . խդ . 257 երկիցս :

Համակ . բ . (ածական , Ամենայն , Բովանդակ . պարսկերէն  
Հէմէ , Ամենայն . Հէմէկի , Բովանդակ . տես ի Գէորդ Տէր Յով-  
հաննէսեանի Բող . Գրս .— Հայ .) «Եթէ Համակ իսկ մարմինն բո-  
րոտ իցէ՝ այնպիսին սուրբ է , եւ եթէ ի միում վայրի՝ շիցէ սուրբ» .  
Տիտ . Գ . 308 .— «Էիք ինչ բարութիւն որ ի դառնութենէ ոգւոյն  
գործիցին , եւ ոչ առողջութիւն եւ բժշկութիւն , այլ ամենայն  
վիշաք , բնաւ արտասուք , Համակ ողբք , ամենեւին հաշիւն եւ  
հառաշիւն» . Եփես . ժե . Յորդ . 837 :— «Վարդաւորք , սակրաւորք ,  
... Համակ հեծելազարք զրահաւոր պատենաղէնք» . Բիւզ . Գ .  
ի . 130 .— «Եւ գտան հեծելազար սպառազէնք . . . Համակ վաթ-  
սուն բիր» . իա . 137 :

Կայ բառս ի Մեկնութիւն Պաւղոսի եւ երրորդ նշանակու-  
թեամբ , իրր մակբայ , Ամենեւին , Բնաւին , Բոլորովին , Համաբնէն .  
«Երանելի , ասէ , զի չիք անդ արամութիւն , այլ Համակ երա-  
նութիւն . եւ ոչ տխրութիւն , այլ ամենեւին իսկ ուրախութիւն» .  
Ա Տիմ . ժԸ . 163 .— «Էիցէ տեսեալ զթագաւորս եւ զհրապառս  
կառաք եւ երիվարաք ելեալ ի ճեմելիս , . . . ոսկեհուն հան-  
դեծիւք , ոսկեսանձ երիվարաք՝ Համակ ոսկիվարաւանդաք (տպ .  
ոսկի վարաւանդօք) եւ ապարդմաք» . Եփես . Թ . 769 .— «Եթէ այ-  
լոց բաշխեսցուք զինչս , եթէ զոր ինչ ունիցիմք՝ Համակ իւր  
գործիցեմք , անդ աւգնեսցէ , յայնժամ շայեկան լինիցի մեզ» . Եբր .  
ԻԸ . 559 : Միայն սովին նշանակութեամբ կը գտնուի Համակ բա-  
զում ուրեք յայլ թարգմանութիւնս Առաջին Դասուն . «Գնդակք  
նոցա . . . Համակ ճախարակեայ» . Ելք , ԻԵ . 36 .— «Համակ կա-  
պուտակ» . անդ , ԻԸ . 31 . ԱԹ . 20 . Թիւք , Գ . 6 .— «Համակ ոսկի» .  
Ելք , ԼԵ . 17 .— «Համակ ծիրանի» . Թիւք , Գ . 7 , 13 .— «Չոյլ ոս-  
կի բուն նորա (աշտանակին) , եւ չուշանք նորա ձոյլ Համակ» .  
անդ , Ը . 4 .— «Բերանոյն՝ որ հոգեւոր հրովն լնուցու , եւ լեզուին՝  
որ Համակ ի կարմիրս յահագին յարենէն (Բրիտատոսի) ներկա-

7 . Համեմատէ . «Ոչ խոսմութիւն ոգւոց է անչ , եւ ոչ աշխատու-  
թիւն եւ ոչ բարկութիւն , այլ ամենեւին հանդարտութիւն եւ համաբնէն  
խաղաղութիւն» . Ոսկ . Մամ . Գ . ժէ . Յորդ . 72 :



նիցի»։ Ոսկ. Մտթ. Գ. իթ. Յորդ. 108.—«Ո՞ր քրտունք են հանդարտութեան. իսկ [որ] պոռնկին՝ համակ՞ ի քրտան է, ի ցանկութեան, եւ ի մաշել»։ Քրտ. Ի Հրաւ. ի մկրա. (Սեբեր. 194.) —«Խոզ մի մատակ՝ համակ սպիտակ»։ Եւս. Փմ. 184: Կայ մի անգամ եւ յերկրորդ Դասի. «Զարդարեցի զքեզ համակ յոսկի յարծաթ»։ Եփր. Աւետ. 306. (որ է բանն Եղեկիի, ԺՁ. 13. «Զարդարեցար ի զարդ ոսկւոյ եւ արծաթոյ»)։ Մի անգամ եւ յերրորդ Դասի. «Ես անկեցի զքեզ այլի պողարեր համակ ճըմարիտ»։ Կիւր. Կոչ. Բ. 9. Գ. 59. (որ է բանն Երեմիայի, Բ. 21. «Ես անկեցի զքեզ որթ պողարեր ամենեւին ճշմարիտ»)։ Աստի եւ Համակ եմ՝, Համակ լինիմ՝, Համակիմ՝, եւ ներգործաբար Համակեմ՝, ի բազում տեղիս Ոսկերբրանի ամենայն Մեկնութեանց, որ է Քոլորովին ծածկուիլ, ծածկելու — է եւ այլ Համակ, ածական, յԱռաջին Դասի, զոր նոր Հայկղ. կը մեկնէ. «Երբայեցերէն խում. համակեալն ի գոյն խառն ընդ սպիտակ եւ ընդ սեւաւ. գորշախայտ»։ Ծնն. 1. 32,35. եւ Կիւր. Աղեքս. Մեկն. Արարածոց:

21. *Կարաւան*. «Եթէ անցանիցես ըստ (տպ. ընդ) ամբոխն, ելանիցես ըստ կարաւանն, թողուցու զբազմամբոխ խառնութիւնն, — զկենաց աշխարհիս ասեմ»։ Փ. Յորդ. 277:—«Եւ առեալ զամենայն զարս իւր բնիւ տղխի եւ ամենայն մեծաւ կարաւանաւ, փղակոյտն բազմութեամբ հանդերձ, . . . եկն եհաս ի սահմանս Հայոց»։ Գ. իա. 55.—«Առնուին յաւարի զամենայն կարաւանն Պարսից»։ Գ. իե. 145.—«Եւ զամենայն կարեւան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զարաւքն Հայոց»։ Ե. ր. 189: (*Կարաւան* է բառ պարսիկ, *Քեարպան*, *Քեարպան*, Խումբ ճանապարհորդաց. իսկ առ Բիւզանդայ՝ Պարսից բանակին բեռնաբարձ կամ կարասէկիր մարդոց բազմութիւնն: Ի Պատմութիւնս Եղիշէի, Փարպեցոյ եւ Խորենացոյ՝ Արքունի բանակն Պարսից:)

22. *Ըստ ակն անկանիմ*. (աներեւութանալ. չիք յաշաց լինել.) «Յորժամ տեսանեմք եթէ արար ինչ ոք առնուցու եւ ըստ

8. Աստ համակ է թերեւ Միշտ, Հանապաղ. տես զիմ կարծիս զժամանակէ թարգմանութեան Սեբերիանոսի ժառիցն՝ ի վեր անգր յերես 433:

ական անկանխցի, գիտեմք եթէ շեմք ձեռնհաս հանելոյ, . . .  
թող տամք եւ գտեղի ունիմք»։ Ժ. Յորդ. 278:—«Եսկ գունդն  
Մուշեղեան յառաջեալ քան զայլ գունդսն՝ յառաջամուխ տագ-  
նապետի երթային, մինչ զի նայէր թագաւորն (Պապ) եւ տեսա-  
նէր զի ըստ ական անկանէին, մինչ զի ոչ երեւէին թագաւո-  
րին նշանքն Մուշեղի»։ Բիւզ. Ե. դ. 195:

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Տ Ի Տ Ո Ս Ի

23. *Չարեւն յաշացն հատանեմ*։ «Եւ եթէ ոչ այնպէս  
ինչ էր, վաղվաղակի իսկ սուր ի գործ արկանէր, եւ Չարեւն  
յաշացն հատանէր»։ Դ. Յորդ. 317:—«Եւ եթէ ոչ վասն դայ-  
եկատոճմ միասնունդ սիրոյն էր, զքաղցր արեւոյ յաշացոյ հա-  
տանէի, եւ զբեղ, նենգաւոր չարագործ, ի միջոյ պակաս առ-  
նէի»։ Մկր. Գ. Կ. 18:

24. *Երախտեաց ապախտիս հատուցանեմ*։ «Զժառայ  
մի առի եւ ամենայնի տէր արարի, . . . եւ ինձ ընդէր երախ-  
տեացն այսպիսի ապախտիս հատուց»։ Դ. Յորդ. 318.—«Են-  
քեանք չհատուցին երբեք երախտեացն երախտիս, մանաւանդ  
թէ ապախտիս իսկ»։ Եփես. Է. Յորդ. 742:—«Սակայն եւ դուք  
յայնմ՝ փոխանակ երախտեացն ապախտիս հատուցէր»։ Բիւզ.  
Գ. Ժդ. 39: Յերկրորդ վկայութեանն, «Ենքեանք չհատուցին եր-  
բեք երախտեացն երախտիս», կը յիշեցնէ զՄկր. Ա. Ժդ. 25.  
«Զինչ երախտեաց երախտիս դարձուցուք Չմաւանի»։ (տես  
Բիւզ.—Մկր. թիւ 39.) զոր թարգմանն այլուր կ'ըսէ. «Փոխա-  
րէնս երախտեաց հատուցանել»։ Ա Տիմ. ԺԳ. 109 երկիցս.  
«Փոխարէն երախտիս հատուցանել»։ անդ, եւ Եփես. ԺԶ. Յորդ.  
842: Այսպէս եւ յմսկ. Մտթ. Բ. Ժա. 551. «Երախտեացն փո-  
խարէնս հատուցանել»։ տես Փոխարէն երախտիք եւ յԵս.  
Եկեղ. 2. Կ. 432: Իսկ փոխ. Ապախտիք՝ թարգմանն կ'ըսէ այլ-  
ուր. «Այնպիսի ապախտաւորութիւն երախտաւորին հատուց»։  
Տիմ. Դ. Յորդ. 318: «Ապախտաւորութիւն» եւ յմսկ. Մտթ. Ա.  
ԻԵ. 395. Բ. Ժբ. 564, եւ այլն:

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Փ Ի Լ Ի Պ Ե Ց Ի Ո Ց

25. Ժառանգաւոր. (կղերական.) Ա. 349: Տես ի Կոր.— Ազաթ. Թիւ 56, ԴԻՏ.

26. Անձուկ սիրոյ. Ա. 353: Տես յԱզաթ.— Բիւզ. Թիւ 86:

27. Չառնում յանձն, չհաւանիմ. Բ. Յորդ. 367: Տես յԱզաթ.— Բիւզ. Թիւ 190:

28. Նահատակակից. «Նահատակակիցը հաւատոց Աւետարանին լինիջիք». Դ. 387. (որ ի Թղթին Փիլիպ. Ա. 27, գրեալ է, «Նահատակիցիք ի հաւատս Աւետարանին». իսկ Դ. 3, «Որք յԱւետարանին Նահատակեցան ընդ իս»):— Արդ ի քսան եւ ի վեց ամսոյն Հոսի կատարեցաւ Սուրբն Հոսիփսիմէ. . . Նահատակակից ընկերաւքն հանդերձ». Ազաթ. 163:

29. Միասիրտ միահաւան. Ե. 394. Միաշունչ. 396. եւ Հա. Ի՛՛. 383: Տես ի Բիւզ.— Մկր. Թիւ 109, ԴԻՏ.

30. Ըանալ հաւասար Ատուծոյ. «Որ ի կերպարանս Ատուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զԸանալն հաւասար Ատուծոյ». Զ. 402 երկիցս. եւ Եփես. Ժ. 778. (ի Թղթին Փիլիպ. Բ. 6, գրեալ է «զլինելն հաւասար Ատուծոյ». այսպէս եւ ի Մեկն. Փիլիպ. Զ. 404, 405. Է. 417. եւ Սերբ. Բ. 17. Զ. 122: Այսպէս եւ յԵւս. Եկեղ. Ը. Ժ. 638, «Զանձն իւր հաւասար լինել Ատուծոյ». իսկ անդ, Ե. ք. 345, եւ Եփր. Փիլիպ. 158, «Ունել զանձն իւր հաւասար Ատուծոյ»):— «Բերէ ի սոյն եւ Պաղոս, թէ Ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զԸանալն հաւասար Ատուծոյ». Ազաթ. 535:

31. Համապայծառ. «Քան զսիրամարդ գեղեցիկ շիցես, եւ ոչ այնպէս ծողկալից համապայծառ թեւս ունիցիս իբրիւ դայն թռչուն». Է. Յորդ. 429.— «Եւ այլ եւս համապայծառ գունակ գունալք երանգոցն». Թ. Յորդ. 465:— «Ոսկուլք ճրագարանաք. . . վառեալ զդոյն համապայծառ». Ազաթ. 128: (Կայ Մեծապայծառ բազում ուրեք ի գիրս Աաջին Աշակերտաց. կայ եւ Բազմապայծառ յՈսկ. Մտթ. Բ. ք. 504. եւ Փիլիպ. ԺԴ. Յորդ. 497:)

32. Ի ցասումն քրդիմ. Ը. 434: Տես ի Բիւզ.— Մկր. Թիւ 27:

33. Ուրուկ, յգ. Ուրկունք. «Քան զուրկունս արորեսալս՝  
ևւս յանհնարին հարուածս էր (Յովր)». Ը. 439:—«Ժողովիլ զալս-  
տաժէտս եւ զաւրկունս եւ զմարմնաւարս եւ զամենայն ցաւոտս».  
Քիւզ. Դ. դ. 75.—«Եւ զաւրկունս եւ զաղքատս հանգուցանէր  
(նեքսէս)». Ե. իա. 213: (Ի Մառն Սեբեր. Թ. 181, կը գանենք  
յգ. Ուրուկք, ուրկաց. «Քաշխեաց, ասէ, եւ ետ աւրկաց»: Թարգ-  
մանն ունի եւ յգ. Հաշմունք. «Տես սրչափ խեղք եւ հաշմունք  
իցենն». Փիլիպ. Դ. 391. զոր այլուր կ'ըսէ ըստ սովորականին.  
«Քանի մերկք, սրչափ հաշմք». Ա Թեա. Թ. 462:)

34. Աշխատութիւն երկայն ճանապարհաց. Ժ. Յորդ. 468: Տես յԱզաթ.—Քիւզ. Թիւ 3:

35. Գամ քան զգամ. «Նա (Պաղոս) հանապաղ մեռա-  
նէր, ցանկ առաքինանայր. չէր ժամանակ, չգոյր ժամ յորում ոչ  
յաւելոյր գամ քան զգամ յընթացսն». ԺՔ. 482:—«Երբեւ զայն  
տեսանէր Փիլիպոս՝ զի գամ քան զգամ իրք անն յառա-  
ջադէմ աջողէին». Մկր. Բ. ք. 8. որ ի Քիւզանդ, Ե. ա. 188,  
ըսուած է հաղ քան զհաղ. տես ի Քիւզ.—Մկր. Թիւ 95. տես եւ  
Հաղ յԱզաթ.—Քիւզ. Թիւ 46, ԴԻՏ. (Այլք յԱռաջին Աշակերտաց  
կ'ըսեն Տակաւ, Եւս քան զԵւս, ինչպէս ի Թղթին Փիլիպ. Ա.  
12. «Որ ինչ վասն իմ էր, Եւս քան զԵւս ի յառաջադիմութիւն  
Աւետարանին եկն»:)

36. Ասպարակիր. «Եթէ որդի առն թագաւորի . . . դառ-  
նայցէ, զարաւք բաղմաւք մեծաւ յաղթութեամբ, . . . դունդ զունդ  
ասպարակրաւք՝ որ շուրջ զնովաւ աստի եւ անտի յաւրինեալ  
մտանիցեն». ԺԳ. Յորդ. 497:—«Հասանէին բազում սպարակիրք  
հեռեակք». Քիւզ. Դ. ԺԵ. 118.—«Եւ էին կուռ վառեալք իննսուն  
հազարք . . . թող զսպարակիրս». Ե. Ե. 200.—«Յունաց զաւ-  
րացն սպարակիրն, սոյնպէս եւ Հայոց սպարակիրն». անդ,  
201.—«Ի լեզէոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակիրն  
Հայոց իբրեւ ի բերդ մտեալ հանգչէին». անդ.—«Կայր շուրջ սպա-  
րակիրն փակեալ սակրաւքն (տպ. սակրաւորքն) . . . : Ապա մը-  
տեալ շուրջ զնովաւ ի տեղւոջն ձգձգէին զնա սպարակիրքն . . .  
ասպարակիր մարդկանն պատեցին զնովաւ . . . զուրք սպա-  
րակրացն մուծին զնա ի ներքս ի սունն պատմուճակացն». դ.  
204—205.—«Լեզէոն սպարակիր հետեակն». յբ. 232: (Աս-



պարակիր կամ Սպարակիր է Վահանաւոր զինուոր, ինչպէս կ'ըսէ եւս Յիւզանդ: Կայ Վահանաւոր եւ յեղեկ. ԻԳ. 24. ԱԸ. 5. Իսկ Վահանակիր յԱ Թագ. ԺԷ. 41, է Զինակիր, զգ. Écuyer.)

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Կ Ո Ղ Ո Ս Ե Յ Ի Ո Յ

37. Անտաշ անկոփ. «Եւ սեղանն եւս աղքատացն մի ինչ զարդարուն կամ քանդակեալ կամ նկարուն, այլ անտաշ ինչ եւ անկոփ». Ա. Յորդ. 529—530:—«Եւ անտի ի զլիսոյ լեռնէն առեալ վէմս արաստոյս, անտաշս, անկոփս». Ագաթ. 576: (Անտաշ, Անկոփ, առանձին առանձին կը գտնուին յայլ գիրքս Առաջին Գատուն:)

38. Կարգաւ նստիմ. «Մի բազմական յարբինել, այլ զի շուրջ աստի անտի կարգաւ նստիցին». անդ, 530:—«Տուեալք միմեանց ողջոյն, արկեալք զիրաքանչիւր զաթոռսն՝ նստէին կարգաւ». Բիւզ. Գ. Ժ. 101. ապա կ'ըսէ. «Երկանէին զաթոռս իւրաքանչիւր՝ կարգաւ յարբինեալ բոլորէին կարգէին ի նըստեղ». 102. տեո եւ Բազմել յիրաքանչիւր չափու ի Բիւզ. Մկր. Թիւ 84:

39. Ապարահեղ. «Որպէս դայեակն ասիցէ ցմանուկն՝ յորժամ յապարահեղն երթիցէ, եթէ Ի վեր հար զհանդերձդ». Գ. Յորդ. 572.—«Ոմն յարծաթի անաւթս զապարահեղին պէտս վճարէ». Է. Յորդ. 606.—«Այնչափ մուկնալ պատուես զապարահեղան, մինչեւ յարծաթի ամանս ընդունել». անդ, 604. փոխ. «արծաթի անաւթ կամ աման (ապարահեղից)», թարգմանն կ'ըսէ ի նմին տեղոջ, 603, յատուկ բառի Միզաւառ. «Զինչ ընդհատ կանայք իցեն, —ամաչեմ ասել, եւ հարկ է ասել, —որք միզաւառս արծաթիս գործեն ձեզ»:—«Երբև գիտաց Վարազդատ՝ թէ արդ յարբեցութենէ՝ մտացն չզգան (22. «մտաց ինչ զգան». զոր տպ. ուղղած է «մտաց ինչ չզգան». այսպէս եւ 2ալ.-Այտըն. Բեր. 452), ինքն յարուցեալ իրբև յապարահեղ անցանկոյ պատճառաւ, եւ աւագանին ամենայն բազմականացն յոտն կացին առ հասարակ, իրբև նմա պատի ինչ առնել». Բիւզ. Ե. լե. 237. վերագոյն կ'ըսէ. «Ես յարուցեալ իրբև ի ճեմիշն երթալոյ պատճառաւ, եւ զուք պատեսչիք

գնտաւ»: (Յապարաճեղն երթալ կամ անցանել եւ ի ճնմիշն՝  
 երթալ է Միգելու երթալ. Ջապարաճեղին պէտս վճարել  
 է Միգել. Ապարաճեղը է Մէղ:— Բիզանդայ ապագիրն ունի «Ի-  
 բրբու յապարաճէ զանց առնելոյ պատճառաւ». այսպէս եւ նոր  
 Հայկ. յ'Ապարաճ, եւ Գեթ. Եյարնեան ի Բնն. Բեր. 109: Եյս  
 նորօրինակ առացուած՝ որ անմեկնելի մտացած էր ցարդ<sup>10</sup>,  
 օգնութեամբ Ռսկերերանի թարգմանչին յայտնի կը տեսնուի որ  
 ընդօրինակողաց աղաւաղութիւն է՝ փոխ. «Իբրբու յապարաճեղ  
 անցանելոյ պատճառաւ»: Մարթ էր նա եւ ուղղել յապարաճեղ  
 անց առնելոյ, եթէ այլուր յմեկեղարուն մտահնարութիւնս  
 գտնուէր. Անց առնեմ<sup>11</sup>:— Եյլ թարգմանիչը գիտեն միայն Մէղ

9. Գեթի է Մէղ. եւ նոյն ընդ պարսկականին Չամիլզ կամ Չէմիլզ,  
 որ եւ Կիմիլզ կամ Բիւմիլզ. (աես գրասոյք ի Ղէորզ Տէր Յովհաննէսեանի  
 Բող. Պրո.— Հայ.): Կիմիլզ կամ Բիւմիլզ կը գտնուի առ Եղիշէի (Պամ  
 Վարդանանց, Բ. 40)՝ Գումիլզ կամ Գումիլզ գրութեամբ. «Էեռք առանց  
 գումիլզ (ըստ 2.) մի լուսոցին», որ է Զրադաշտական մտանկից *gaomaēza*  
 բառն=Յլու մէղ. «Chaque jour, au lever du soleil, le Parsi se lave  
 les mains et la figure avec de l'urine de taureau, *gaomaēza*, qui pro-  
 tège le corps de l'atteinte des démons», Fr. Lenormant et E. Babelon,  
*Hist. anc. de l'Orient*, Paris, 1887, Tome V, pp. 406—407.) Եթէ ու-  
 ղիլ է Ղէորզայ գրածն՝ Կիմիլզ կամ Բիւմիլզ կորուսած է առ այժմու Պար-  
 սիկս գիր նախնական նշանակութիւնն Յլու մէղ, եւ նոյնացած ընդ Չա-  
 միլզ, Գեթի, Մէղ, նոր Հայկագեանն սխալ կը մեկնէ դձեմիշ. «Եսա. պրո-  
 չէմշէ. թուրքերէն չէմշէ, որ է Եզրիւր, և Տեղի թափելոյ զաւելորդս ընու-  
 թեան. ոտից ճամբայ. ըլնէ՞՞». նոյն սխալ է եւ յայլ ամենայն Բառարանս,  
 (Ջալալսախանի Հայ.— Իտալ., Ընձեռն, Չաղրճեանի Բարբառարան, Էմիւ-  
 եանի Գաղղ.— Հայ.՝ ի բառսն Aisance, Garde-robe, Privé, Selle, եւ նոր-  
 այրիս Գաղղ.— Հայ.՝ ի բառսն Aisance, Cabinet, եւ այլն):— Չաշմակեմ  
 Կիւրղի Եղեքտանդրացոյ Մեկնութեանն Գատաուրաց, զոր նոր Հայկ. կը  
 մեկնէ «Կործանել զտեղին, և կարգել ի լուսլիս. ճմիշ (պրո. չէմշէ, թուրք.  
 չէմշէ) կացուցանել», կարօտ է քննութեան:

10. Եյլ է Չանց առնեմ յումերէ. «Մի զանց առնեք ի ծառայէ  
 քումմէ». Ծնն. ԺԸ. 3.— «Չանց արարին ի նմանէ քահանայապետքն». Ոսկ?  
 (Եփր?) Յանդամալոյժն, 849:

11. Գայ ի Բարսղի Վեցարէին, 2. 124. «Յորժամ սկսանի արեգակն  
 աստիճանել եւ նշ առնել ի հարաւակողմն կողմանց». բայց Ըստոնեան  
 Հարց ընտիր օրինակն ունի Ելանել:

(Գ թագ. ժԸ. 27. ես 1,2. 12), եւ Միզեմ (Գ թագ. ժԳ. 10. ժԶ. 11. ԻԸ. 21. Գ թագ. Թ. 80):

40. Ամենաքարին Աստուած. «Ոչ զի արժանիք ինչ էին՝ եղեն յանկարծակի աթոռակիցք Աստուծոյ, այլ զի մարդասիրութեանն ամենաքարոյն Աստուծոյ եղեն արժանիք». Ե. 575: — «Ըպա ելանէր նոցա պարզեալան յամենաքարին Աստուծոյ». Գորին, 8: (Ամենաքարի կայ ասանձինն այլուր յԱռաջին Դասի, Ոսկ. վասն Պահոց եւ Ազաթից, 38: Գայ եւ յայլ Դաս. Զդան, ժԹ. 385. Գիւր Գոչ. ժԶ. 355: Տես եւ Ազաթ. 108. Բիւզ. 73, 74, 188. Եթագ. Յոջր. Գծ. 1047 Ը.)

41. Փոխելանամ. (անմտանալ.) «Գարտ ինչ էր, մինչդեռ Քրիստոս սովամահ լինի, քեզ այնչափ փափկանալ, մանաւանդ թէ փոխելանալ իսկ». Է. Յորդ. 603: — Փոխելութիւն. (անմտութիւն.) «Գամ թէ որ յանկարծ առ փոխելութեան իշխեսցէ արհամարհել զպաշտան զիցն». Ազաթ. 108. յորմէ եւ թարգմանին Մարութայի, Պամ. Արեւ. Վկ. 32. «Զինչ է այդ փոխելութիւնդ (ապ. փոխելութիւնդ), որ ես կենդանի եմ եւ թագ ի զլուստ հասատուն կայ, եւ դու սուգ առեալ եւ ի խոր խոցեալ նստիս»: — Այլուր ի Մեկն. Բ Տիմ. «Եւ եթէ յանդիմանել եւս կարող իցես, փախչիս, փոխելապատճառ լինիս թէ բնաւ չգիտիցես իսկ». Բ. Յորդ. 187. որ կը յիշեցնէ զԲիւզանդայն. «Եւ խալժապատճառս լինէր, եւ ոչ կարէր ի տեղւոյն խաղալ». Գ. ժ. 102. կամ «Զիւր զէմս երեսացն ծածկէր (թագաւորն), քնոյ պատճառ եղեալ՝ զի զնորա բանսն մի լուիցէ». Գ. ժե. 118:

42. Մարտի տեղի: «Մարտի տեղի ի խորհուրդսն զործիաց». Ը. 613: — «Հասցուք եկեսցուք ի մարտի տեղի». Ազաթ. 44:

43. Անցանեմ ի մէջգեալին. Ը. Յորդ. 619. Տես յԱզաթ. — Բիւզ. Թիւ 121:

44. Նորասէր. «Որչափ եւ սիրիցես զմանուկն, ոչ այնչափ սիրես՝ որչափ եւ նայն (Դաւիթ), զի դեռ երանելին Նորասէր էր ընդ մարն, թէպէտ եւ ի շնութենէ էր մանուկն». Ը. Յորդ. 621. — «Ե՛րբ զնիցես նմա (կնոջն) արէնս եւ յարդարիցես, . . . եթէ ոչ յառաջնումն նուազին զնորասէր ժամանա-

կան» Եփես. Ի. Յորդ. 895:—«Իսկ որ արգ հւս նորոզ ամուսնութիւնք ի միմեանս հասեալ թերալից ուրախութեամբ՝ նորասէր առազաօտիցն, շարաշար գուծիւ մերկացեալք՝ ուղոյ լինէին»։ Մկր. Գ. դ. 5:

45. *Երկեղուկս արկանեմ*, «Երկեղուկս ինչ արկանելոյ է բանս, նա եւ ամենայն իսկ ուրեք ահագին է»։ ԺԲ. 658:—«Թշնամիք իմ հրապուրեցին զիս, եւ արկին երկիրուկս ի քէն, եւ փախուցին ի քէն»։ Բիւզ. Գ. ծդ. 167: (Բիւզանդ ունի եւ Պատկառուկս արկանեմ ումեք. Գ. ծդ. 32; Կորեանն Սախանձուկս արկանեմ, 6, կը գանուի եւ յայլ զիրս. Թիւք, ԺԱ. 29. Ոսկ. Մաթ. Ա. ա. 11. նոյն, Եփես. ԺԵ. 829. Կայ եւ Ողորմուկս արկանեմ. Եփր. Մամ. Ե. 396. Յեղեղուկս արկանեմ. Եւս. Եփեդ. Գ. ը. 171:)

46. *Չուլամբ երթամ*. «Գուք աւաղիկ զուլամբ իմն երթայք եւ զեղևիք»։ ԺԲ. Յորդ. 669:—«Վաշէ, երկրորդն Մանուելի, ձին զուլամբ երթեալ»<sup>12</sup> սղանանէք»։ Բիւզ. Ե. խզ. 255:

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Փ Ե Ս Ը Յ Ի Ո Յ

47. *Շուրջ պսակիմ* (զիւիք, զոմամբ). «Որպէս զի ամենեցուն լիցի շուրջ զսրբոյ սեղանովս պսակել»։ Գ. Յորդ. 704. (տպ. «շուրջ զսեղանովս».— ա տպ. Հատուածք, 158, «շուրջ զսուրբ սեղանովն» —ն. Լմբ. Մեկն. Գարգ. 497, «շուրջ զսրբոյ սեղանոյն»): Այլուր ներգործարար. «Կորոյս որդիս. . . եւ աւասիկ այս ետ փոխանակ այնց, եւ զնոսա եւս ածեալ՝ շուրջ պսակիցէ զնովաւ (տպ. նովաւ) ի յարութեան»։ Բ Տիմ. Է. Յորդ. 242—243:—«Եւ լեզէոն սպարակիր հետեւակն՝. . . շուրջ ի ներքոյ զորմուլք խորանին սլասեալ պսակէին»։ Բիւզ.

12. Յորմէ *Չուլամբիմ առ Թովմայի Երծրունոյ*, 220. «Ոտն երկվարին շաղնայ ընդ փոքր թուփ մի, որպէս ասեն, եւ զուլամբեալ (տպ. զուլամբեալ. այսպէս եւ ը տպ. 195) ի վերայ զլսոյն՝. . . ի բաց ընկէց զհեծեալն»։ Այլուր կ'ըսէ. «Զիոյ խորխտացելոյ զանձամբ երթեալ (տպ. զանձն ամբերթեալ. այսպէս եւ ը տպ. 234)՝ ելոյծ ի կենաց զբաջ արանցըն»։ 264:



Ե. լր. 232.—«Սակրաւոր դարբն . . . պսակեալը կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ». անդ: (Կայ մի անգամ եւ ի Սերեր. Գ. 72. «Շուրջ զաթոռովս երկրպագութեան պսակին»:—Քարգմանն կ'ըսէ յայլ տեղիս. «Եթէ ի բարձանց դարութեանց որ անէր դիս՝ որ շուրջ զաթոռովս կան». Եփես. Ը. 747—748.—«Շուրջ անցեալ բակ առեալ կային բազմամբոյս խառնիճադանճ դարբն». Բ Տիմ. Գ. Յորդ. 210.—«Հրեշտակք . . . ի տանս Աստուծոյ շուրջ բակ առեալ զթագաւորանս». Եբր. ժԵ. 516: Ըստ այսմ եւ յնսկ. Մտթ. «Ոչ շուրջ դասպանակուն կալ եւ զտակի սեղանովս». Բ. ժդ. 588. զոր համեմատէ ընդ Եփես. Գ. Յորդ. 704.—«Իրեւ զսատանայական թատերը բակ առեալ կայար եւ հայէար». Ա. ժԵ. Յորդ. 231: Այլուր. «Զվերին աթոռովս շուրջ պատեալ են». Ոսկ. Ես. 2. 64:)

48. Սանդալ. «Եւ եթէ տագնապաւ կամէր փախել (Գետարոս), ոչ այնպէս յապահով դամենայն կազմէր մինչեւ սանդալս եւս առնուլ . . . վասն այնորիկ ասէր ցնա հրեշտակն՝ թէ Երկ դսանդալսդ յոտոս». Ը. 759. (յերես 758 կ'ըսէ. «Մ'ըկ հողաթափ յոտոս». ըստ որում եւ ի Գործս Առաք. ժԲ. 8):—Սանդալաւոր. «Միահանդերձ, մաշկանափորան, սանդալաւոր, եւ կերակուր իւր արմատք բանջարոց». Բիւզ. Գ. ժդ. 37:

49. Չոյզ հասարակ. (ի միասին, հաւասարապէս.) «Էլք ինչ նա քան զսա սլայծ առագոյն, այլ երկոքին զոյզ հասարակ (տպ. «հաւասար». եւ ի ծան. «Միսն հասարակ») աւգտեցան». Ը. 766—767:—«Այժմ յաշխարհիս յայսմիկ . . . արդարք եւ մեղաւորք զոյզ հասարակ խառն են . . . զի որումս սերմանեալ թըշնամոյն ի վերայ սուրբ բուսոյն սերմանն ցորենոյն, ընդ նմին զոյզ հասարակ բուսեալ են». Բիւզ. Գ. ժդ. 112.—«Քաջ թէ զոյզ հասարակ այսպիսի գործ ի միասին կարէար գործել». ի. 132.—«Արդ՝ եկ, զոյզ հասարակ այսմ նշանի ուշ դիցուք». Ե. խգ. 253: (Այլուր. «Քանդի հասարակ առին զժամանակն տիւն եւ գիշերն, եւ զոյզ բաժանեցին զկեանս աշխարհիս». Եբր. Թ. 500. որում նման եւ Եզնիկ, 256. «Հասարակ արարին զինչ եւ արարին, . . . եւ երկոքին զոյզ ուրախ լինէին ի նմա». որ եւ կ'ըսէ ապա, 257. «Որպէս ի միասինն արարաք զնա, առ հասարակ արժան է մեզ եւ վայելիլ ի նմա»: Իսկ յնսկ. Մտթ. Ա.

ժե. Յորդ. 234. «Եւ ոչ յերկնից ակնածեմք՝ յոր հասարակն ամենեքեան կոչեցաք, եւ ոչ յերկրէ՝ զոր հասարակ ամենեցուն կառ»:

50. *Ոսկիզմբէ վահան. Ոսկիվարաւանդ ապարդում.*  
«Ձիցն անեհալ զթագաւորս եւ զհիւպատս կոռաւք եւ երիվարաւք ելեալ ի ճեմնլիս, ոսկեով եւ մարգարաով զարդարեալ, եւ զսպասաւորսն եւս յոսկի համակեալս, ոսկեաէգ զեղարդամբք, ոսկեղաժ վահանաւք՝ կոռ ոսկիզմբէիւք (տպ. ոսկի գմբէիւք), ոսկեհուռ հանդերձիւք, ոսկեառնձ երիվարաւք՝ համակ ոսկիվարաւանդաւք (տպ. ոսկի վարաւանդօք) եւ ապարդումաւք. զինչ ինչ վայելուչ քան զայն տեսիլ կայցէ». Թ. 769:— «Եւ լեզէնն սակրաւորքն՝ երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիկմբէ վահանաւքն». Բիւդ. Ե. լր. 233.— «Եւ բազում նժոյգս (տպ. նժոյքս) զարքունական ձիոյ՝ արքունի աւճառովք, ոսկիվարաւանդ ապարդումօն, տայր նմա». Դ. ժր. 108: Ի Վարաւանդ արմատոյ Բիւզանդ ունի եւ Վարաւանդասպաս, որ թուի Չիապան. «Իսկ զսպարապետն Մանուէլ իւր վարաւանդասպասքն յերիվարն հանէին». Ե. խզ. 254: (*Ոսկիզմբէ կամ Ոսկիկմբէ վահան*<sup>13</sup> է Վահան՝ որոյ պորան ոսկի է: Արմատ *Ոսկիզմբէ* բառին է *Կմբեայ*<sup>14</sup>, զդ. La bosse d'un bouclier, որ եւ Ombon. «Ձրնիցն զեղարդեանցն զաղեղնակապարճս կակնիցեն, պղնձապատ զգլուխն առնիցեն, եւ մեծապայծառ իմն կմբեայք (տպ. կմբեայ) վահանացն փայլիցեն». Ոսկ. Մաթ. Գ. ժդ. Յորդ. 66. որ ի Մեկն. Երբ. Ձ. 490, գրեալ է *Կմբեթեայ*. «Յարժամ ի գաշտ ուրեք հլանիցեմք՝ ուր գաւրք արքունի բանակեալ իցեն, խորանս հարեալ տեսանիցեմք, . . . զեղարդունս շողացեալ, կմբեթեայ»<sup>15</sup> վահանացն շրջանակեալս, կարի իմն

13. Սովին նշանակութեամբ բնուած է յետ Հինգերորդ դարուն՝ *Ոսկեխմբոք վահան*. Մովս. Գաղանկ. տպ. Զահնագար. 2. Ե. 351:

14. Գայ յՈսկ. Հո. ժԴ. Յորդ. 193. «Փոխանակ ոսկի գմբեցին՝ եղիցին քեզ երկինք». հրատարակիչն ուղղած է *գմբէիցն*. այլ եւ կարծեմ թէ հարողատ ընթերցուածն է *գմբեթին* կամ *գմբեթիցն*, զի բանն գտանէ է: Համեմատէ. «Եթէ ձեզ միայն իցէ ժամանակ բնակել ի տունս *գմբեթեայս*». Անդէոս, Ա. 4:

15. Ի Պատաստանագիրս Մխիթարայ Գոշի, 264, կ'ըսուի. «Ունին վահանս *կմբբաւորս* (տպ. կմբբաւորս)». Եթէ ուղիղ է ընթերցուածդ՝ թե-

դարմանամք եւ սքանչանամք»։—Վարաւանդ, եւ Ապարդում կամ Ազրդում<sup>16</sup>, ձիոյ կազմածի մասունք են, դորոց ճիշդ նշանակութիւնն կ'անդրատանամ։

51. Գումարեմ. (առաքել.) Թ. 770: Տես ի Կոր.—Ազաթ. Թիս 58, ԳԻՏ.

52. Ողորմ տեսիլ. «Նա եւ է խնդ ողորմ տեսիլ. քանզի սիւնքն հանդերձ հաւեղազէս խոյակաւքն մանրիցին եւ ի յատակն կործանիցին». Ժ. 781:—«Եւ անդ էր ողորմ տեսիլ անսանկ». Մկր. Բ. դ. 21.—«Սիրան սիսակալ եւ ակն նախանձալից' . . . յայն ողորմ տեսիլ շարշարանաց մարդկանն արտասուք (արատասու?) քամէին». Գ. դ. 4:

53. Կաճառանոց. Կաճառորդ. «Ամենայն միանգամայն ի միոյ հրոյն գոհհիկ կաճառանոց լինիցի». Ժ. 782.—Ո՞ շատ տայ հայել ընդ ինքն կաճառորդացն, որ զազնիւ զհանդերձսն ազանի, եթէ որ զոյոյն հանդերձիկն». Երբ. ԻԸ. 552:—Կաճառ. «Եսկ ի տեսիլ զհոյ նորա կուտեալ եւ ելեալ զեղեալ խուռն կաճառացն կուտակէր». Ազաթ. 130: (Ի Քարսղի Վեցարէին, է. 154, «Ի ճառս կազմածոյ արարածոց» տպագրին՝ գրեալ է ի 2 հազարին Անտոնեան Հարց ի կաճառս. այլ տպագրին է կարծեմ հարագատ ընթերցուածն։)

54. Գոզցես թէ, փսխ. Գոզցես. «Եւ որ զոզցես թէ ի փոյթսն կարծեցուցանեն դանձինս, նոքա են որ զաղէտս դայս գործեն». ԺԱ. Յորդ. 798.—«Քանզի բազումք զոզցես եթէ միաբանիցեն ընդ Քրիստոսի, բայց սիրել չսիրիցեն դնա». ԻԲ. Յորդ. 921:—«Իբրեւ դիտաց Տէր եթէ ապիրատ մոլորութիւն՝ զոզցես թէ իբրեւ ի պատճառս արդարութեան կամաց՝ ստացեալ ունէր, զմիջոցաւ ճանապարհին երեւեալ, շրտոյց զնա յաշաց՝ սասակութեամբ յուսոյն որ երեւեցաւ. եւ թաղ, Յռչք. Պաւղ. 1107 ք. (Թարգմանն կ'ըսէ այլուր. «Նոքա այնպէս ակն ունէին թէ այնու որոգայթիւ զոզցես կարիցեն զՊաւղոս ըմբռնել»). Փիլիպ. Գ. 373.—«Մեռեալն զոհէ զոզցես զկենդանին». Եփես. ԺԸ. 860.

րեւ եւ Երբայեցոց Մեկնութեանն կմբեթեայս ուղղիկ է կմբեթայս, զի Թ եւ Բ կը շփոթին յաճախ ի 2 հառազիրս:

16. Նոր Հայկազեանն նոյն կը համարի զԱզրդում ընդ Ապրիշում, պարսկերէն Ազրիշում, որ է Մեռաքս. այլ ես կ'երկրայիմ:

—«Մի վայրասպար զամենայն բնդ միմեանս խառնեսցուք. թէ ձեռաւք (տպ. ձեռովք)՝ որով սպանանհմք, նոովին զոզցեսս եւ ողորմութիւնս աննիցեմք»։ Երբ. ԻՊ. Յորդ. 537: Այսպէս եւ յայլ գիրս Առաջին Դատուն<sup>17</sup>. «Իսկ որ զոզցեսս փոքր մի հանդարտագոյնք իցեն ի նոցանէն, արգար կոչեն զԱրարիչն, եւ բարի ոչ անուանեն»։ Ոսկ. Մտթ. Ա. ժդ. 249.—«Քո աւաղիկ զոզցեսս վասն այնորիկ առեալ իցէ»։ անդ, Բ. ժթ. Յորդ. 650.—«Քանզի ի ժամանակի գերութեան հրէից զոզցեսս կոսցն իմն յաթթութիւն համարէին»։ նոյն, Ես. ԽԱ. 282: Կ'ըսուի նաեւ Գո՛գ. Գաղատ. Բ. 11. Ոսկ. Մտթ. Բ. դ. Յորդ. 476. Գ. ժէ. Յորդ. 69. նոյն, Փիլիպ. ժ. 460:)

55. Արեգակնակէզ լինիմ. «Զի եթէ ոչ աղբերք եւ ճահիճք եւ գետք եւ ծովք... զովացուցանէին, չէր ինչ արգել ամենայնի եւ ընաւի հրայրեաց արեգակնակէզ լինել»։ ԺՔ. 803:—«Զի թէ ոչ քրանի մշակն ի տապ խորշակի ջերմոյն արեգակնակէզ (տպ. արեգնակէզ) լինելոյ, ոչ ըմբոնէ արդիւնս շայեկանս»։ Ազաթ. 93.—«Ի ժամանակս արեգակնակէզ զարնայնոյ»։ 554: (Ի գիրս Ծննդոց, ԼԱ. 40, գրեալ է. «Զցերեկ այրեալ լինէի ի տաւթոյ, եւ զցայգ ի ցրտոյ. զոր յերկրորդ Դասէ թարգմանիչն Չղանի դարձուցած է այսպէս. «Ի տուէ արեւակէզ լինէի ի խորշակէ, եւ զցայգ ի ցուրտ փայտանայի»։ ժ. 192: նման եւ յեփր. Սամ. Գ. 376. «Յրտահարեցան երեսք նորա (Դաւթի) յեղեմնախառն ցրտոյն, եղեւ եւ արեւակէզ ի տապոյ արեգականն»։ Յայլ գիրս. «Մերթ խորշակահար, մերթ ցրտակէզ խորովէր յանապատին»։ Ոսկ. Մտթ. Ա. ժ. 146.—«Առ ի չգոյէ հիւթոյ երկրին՝ ի ծագել արեւուն տապացաւ»։ Մտթ. ժԳ. 6. կամ ըստ Ոսկ. Մտթ. Բ. ժթ. 644, «ընդ ծագել արեգականն խորշակահար եղեւ»։)

56. Լեռանական. ժԳ. Յորդ. 813. Տես ի Կոր.—Ազաթ. Թիւ 119:

57. Բոկարզնաց. «Չայնպիսի փափուկ աղջկանցն այնպէս

17. «Գոզցեսս թէ, աւելի կանոնաւոր է, բայց սովորականն է առանց թէի»։ Թոռն. Հատ. Ընթերց. 408, ծան. 10:



լուայ, թէ . . . բոկազնաց զփափկասուն զարչապարսն սովորեցուցանէին. ԺԳ. Յորդ. 815:—«Միահանդերձք, բոկազնացք, զգաստացեալք, խոտածարակք. Բիւզ. 2. Ժդ. 271:

58. Հարցանեմք քննեմք. ԺԳ. 819. Ի հարց եւ ի քնին արկանեմք. ԺԹ. Յորդ. 872. Հարցարքնեմք(?) ԱԹես. է. 448: Տես ի Գոր. — Բիւզ. թիւ 31:

59. Ընդվայրահար. «Տեսանես զիւրդ կարէ զարմատ ցասմանն, զստուծիւն, զգողութիւն, զխաւսս ընդվայրահարս». ԺԳ. 823. (տպ. «ընդվայրահանս». եւ ի ծան. «Միւսն ընդվայրահարս».) — «Յորժամ ոչ նախանձել թոյլ տայ եւ ոչ ընդվայրահար տրտմել եւ վհասել». Հն. ԻԲ. Յորդ. 395:—«Եւ առեալ զՄարգարէ սուրբ անունն, կարդալ սուտ եւ ընդվայրահար քրմացն». Ագաթ. 255: (Գայ ի Վկ. Իգն. 173. «Ազաչեմ զձեզ մի ընդվայրահար խնամ ցուցանել յիս. թոյլ տուք ինձ զազանակուր լինել»<sup>18</sup>. բայց ի ծանօթութեան նշանակեալ է թէ այլ 2. ունի ընդվայրապար: Ի Սեկնութեան Ծննդոց Ոսկեբերանի խառն կ'ըսուի. «Թուի ինձ թէ երկայնեցաք զրանս եւ ընդվայրապար եւ ընդվայրահար զայս արարաք»:

60. Որպիսութիւն. «Զարիւն եւս զտեալ անդէն մերձաոր տեղեւքն, եւ քնասնի եւ յանկաւոր իւրոյ հլութոյն որպէսութեամբ, եւ զնորա եւս ջերմութիւնն զաժանագոյնս զորժէ». ԺԵ. 828—829:—«Անու զարձեալ (Ղուկաս) յառաքելանշան յերկրորդ մասնին զորպիսութիւն իրացն կարգել». Ագաթ. 367. —«Որով առժամայն յուսաւորեալ եւ թեւակուռ թեւամուխ եղեալ աստուածատուր հրամանացն որպիսութեանց (2. իսկ տպ. ի հանգամանս»<sup>19</sup>. 614: (Ըստ այսմ կ'ըսէ այլուր թարգմանն Այսպիսութիւն. «Որպէս զի ոչ այսպիսութեամբ առաւելութեանն, այլ եւ միջնորդան առաւել հմք քան զնոսա». անդ, Ա. 676:—Համեմատէ զԱգաթանգեղին «զորպիսութիւն իրացն կարգել»՝ ընդ Սեբերիանոսի, է. 138. «Ապա խնդրեսջիր զորպէսն»:

18. Զոր թարգմանիչն Թղթոց Ս. Իգն. 89, փոխած է այսպէս. «Թնդբեմ ի ձէնջ, մի առնէք առ իս սէր ի տարածմու. թոյլ տուք ինձ լինել զազանաց կերակուր»:

19. Գորիականայ ի Վարուց Մաշտոցի, 7. «Որով առժամայն յուսաւորեալ եւ թեւամուխ միջամուս յաստուածատուր հրամանացն հանգամանս»:

61. *Կալուկապ*. «Զի կայցէ իմ եւ այսպիսի իրաց կալուկապ (տպ. իրաց ե կալուկապ) լինելոյ». ժԵ. 829: «Ոչ երբևր ուրեք եղեալ է, եւ ոչ ի մէջ թշնամեաց ուրեք, եւ ոչ ի մէջ պատերազմի, թարամատար հրեշտակաց ինչ կալուկապ». Բիւզ. Գ. Ե. 88:

62. *Թաղնորդ*. «Քաղում անգամ յանձուկ ինչ տեղոջ ի մէջ բազում թաղնորդաց տունն իցէ շինեալ». ժԵ. 832: «Բերդնորդ «եւ եղև յիս շորեքասասներորդ ամսեանն՝ [պատուհասք] հարուածոց որ յՍասուծոյ հասին ի վերայ գաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա». Բիւզ. Գ. ժԵ. 170: (*Թաղնորդ է այն զոր այժմ մեր կը կոչենք Թաղեցի*. *Բերդնորդ է Բերդացի*, ըստ Մաթ. Ուռհայեցւոյ, 267, 395, 398: Անտարակոյս Բիւզանդայն *Բերդնորդ* օրինակ եղած է *Թաղնորդ*<sup>20</sup> ածանցման, զի այլուր ամէնուրեք կ'ըսուի առանց ն գրոյ, Կց—որդ, Հաղ—որդ, Նաւ—որդ, Որս—որդ, Ցանց—որդ, եւ զարձեալ՝ Անդէ—որդ, Բաժան—որդ, Ժառանգ—որդ, Պահան—որդ<sup>21</sup>:

63. *Դեր*. (մեծաձայն լալիւն.) «Ամեներեան որ շուրջն իցեն եւ որք ընդ կիրճան անցանիցեն, յսիցեն զնորա (զկնոջն) զաղաղակն եւ զնաժշտացն զգերն (տպ. զգէրն) եւ զկառաշն. զինչ քան զայն ծանականք կայցեն». ժԵ. 832—833: Յորմէ *Դեր*

20. Ստորին շայեր(նն եւս ի վար արմատոյ ունի վարճորդ, այս ինքն՝ շերհահար, որ եւ ցարդ կենդանի մնացած է ի բերանս հայ զիւղապանաց, զի Հ. Միքտիչ Անանեան յիւր Բառգիրքս յաշխարհարուէ ի գրարան՝ կը գրէ. *վարճորդ*. տես Մշակչւ Այս բառ կը գտնուի ի Մատթէոս վարդապետի Մեկնութեան Գործոց՝ յօրինելոյ յամին 1411, զորոյ զվկայութիւնն զժրախոտարար գրած Հեմ յիմ Բառարանի Ստորին շայերէնի. այլ կայ եւ ի Պատմութեան Առաքիլի Քաւրիժեցւոյ, ԻԳ. 234. «Սեւագուխք օմանք սնլիքորք (տպ. սնլիքորք) եւ զանհիկք, որպէս զգեղական հողագործս, որք վարճորդ մշակօք քնակէին յիջմիածին». (Ոսկանայ տպագիրն, 300, ունի *վարճորդիք մշակօք*. զոր Brosset յիւրում գղ. թարգմանութեան Քաւրիժեցւոյն, 416, ծան. 4. կ'ուղղէ *վարճորդի* (!), եւ նմին հետեւելով կը գրէ եւ Ալիշան. *«վարճորդիք մշակօք»*. Այրարատ, 217 ա.):

21. Նեհմի, Գ. 9: Այս բառ թուի հ Պահանք բառէ՝ որ կայ յՈսկ. Մաթ. Ա. ժգ. Յորդ. 207. «Վասն այսր ամենայնի գիրկիչ ուղեցն մերոց աղաչեսցուք, զի եւ զկապանս խղեսցէ, եւ զգժնդակ պահանսն մերժեցէ, եւ ի ծանրութենէ երկաթոյն զերծուցէ»:

գործեմ՝ «Որդեանկ, մի լար, մի գեր գործեր»։ Բ Տիմ. Թ. 260, — «Լայ, գեր գործէ Պաղոս վասն իրաց ինչ որով այլը ծիծաղին եւ գրգին»։ Փիլիպ. ԺԳ. 492.— «Արդ զի դողաս եւ զի խռովեալ ես, եւ զի լաս եւ գեր գործես»։ Եփես. Ը. 751: Դարձեալ Գերմիտ. «Մի ծոյլս, մի մեղիս, մի ի գերմտաց»։ Փիլիպ. ԺԲ. 482. (տպ. «ի դեր մտաց»։ այսպէս եւ Թոռն. Հատ. Ընթերց. ա տպ. 187, որ եւ ի ծան. 24, կը մեկնէ. «Թերեա՛ յողբացող մտաց»)։ «Եւ քաջացն սուգ անհնարին եւ գեր՛ արտաւարալից (տպ. գերարտասրալից)<sup>22</sup> գոչմամբ եռանդն ի վեր հասեալ՝ զօրբոս ճմէլք»։ Մկր. Գ. դ. 2: (Գեր է պարսկերէն Ղիրի, Լալիւն՝ որ լինի գոչմամբ եւ աղաղակաւ.— Գեր գործեմ է Ղիրի քէրտէն, Լալ գոչմամբ եւ աղաղակաւ. որ եւ Ղէրէն, Ի ձայն լալ եւ որբալ.— Գերմիտ է Ղէրմիյաէ, Հեկեկաւնօք լացող. տես դրառսդ ի Դէորդ Տէր Յովհաննէստանի Բագ. Պրս.— Հայ.):

64. Անաշխարհիկ. ԺԵ. 833: Տես յԱզգաթ.— Մկր. Թիւ 23:

65. Կծծի. (աղտեղի, պիղծ.) «Չայն ինչ խաւսեցուք՝ որ մեզ վայել իցէ, եւ մի սուրբ բերանքս զաղտեղի եւ զկծծի բանս խաւսեցին»։ Ժէ. Յորդ. 853.— «Անէ՛ ծք այնպիսի կծծի բանից, որ ի Սատանայէն բղխիցեն»։ Ի. Յորդ. 899:— Կծծութիւն. (աղտեղութիւն, պղծութիւն.) «Յանդիմանէր զնա Սուրբն վասն զաղտնի շուրթեան կծծութեան բարոյից պոռնկութեան»։ Բիւզ. Գ. դ. 8: (Յայլ գիրս Կծծի կը նշանակէ Գող, եւ ըստ այսմ կըքսէ այլուր Թարգմանն Մանրակծծի, որ է Գող մանուկց, մանր բաներ գողացող, զգ. Larronneau. «Կարի գող՝ մանրակծծին իսկ է»։ Բ Տիմ. Գ. Յորդ. 200: Աստի եւ Կծծութիւն, Գողութիւն. «Չի թէ չէր Քրիստոսի Թողացուցեալ (տպ. Թու-

---

22. Եղիշէ կ'ըսէ ի Պրմ. Վարդանա՛ց, Գ. 44. «Ոմանք զգծրարտաւարն իբր յաղբերականց հոսէին յաշաց իրեանց»։ որ ի տպ. Թէոդոսիայ, 87, է «զգծրարտասք արձակելով»։ Իսկ ի 2եռագրի միում ժէ դաբու՛ յորում է նոյնպէս զգծրարտասքն, քերկով փոխեալ է «Ոմանք զարտասքն արձակելով յաշացն՝ իբրեւ աղբերականց (sic) հոսէին»։ Արդեօք Եղիշէ՛ եւս Գծրարտաւարալից կարգալով ի Մակարայիցիս՝ հնարած է զիւր Գծրարտաւար, կամ այլուր գտած է զայն, չկարեմ ստելու— Համեմատէ Արտաւարալից գոչումս, Մկր. Գ. դ. 2.— Արտասուալից ողբք. անդ, գ. 23:

լացուցեալ) եւ Սատանայի՛ որ զբզգէրն, եւ Յուդայի՛ որ վասն կծծուծեան եկն յայն, ոչ իշխէր մտանել ի նա»։ Եղնիկ, 87.)

66. *Խանձիր*. «Եւ եթէ միա եղեալ հայիցիս, շեսասնիցես անդ թեւս թռչնոց խանձատեալս, եւ ոչ խանձիր եւ ճնճեր ծխեալ, այլ զմարդկան մարմինս խորովեալս խարչտեալս»։ ԺԼ. 859:—*Խանձրահոտ*. «Նոյն խանձրահոտ մուրն եւ ծուխն այրեցածոյն երեալ մածեալ զնորաբ»։ Աղաթ. 386:

67. *Խելացնոր լինիմ*. *Խելացնորութիւն*. «Նա եւ յայնմ իսկ կարի խելացնոր լինիցիս»։ ԺԹ. Յորդ. 873.— «Ձոր արինակ եւ որ զխելացնորութիւնն ունիցի, յորժամ զինքն չճանաչիցէ, ապա եւ ոչ որ առաջի աշացն եւ ոտիցն կայ՝ զիտիցէ»։ Հն. Ի. Յորդ. 302:—*Խելացնոր*. *Խելացնորեցուցանեմ*. «Ի ձեռաց մարդկան են ստեղծեալք (զիքն), եւ ի խելացնոր կարծեաց . . . հոտտեալք եւ եղեալք»։ Աղաթ. 59.— *Խելացնորեցուցեալ* (Սատանայի զթագաւորն)՝ պագանել երկիր ուրուականաց մեռելոտոց»։ 115:

68. *Որչափ ակն բաւիցէ, բաւեաց*. զզ. Aussi loin que la vue peut s'étendre. «Նոյնպէս եւ զլսելեացն է տեսանկլ. նա եւ ոչ աղաղակաւ որ կարէ այնպէս լնուլ զազս՝ որչափ ինչ ակն բաւիցէ, եւ ոչ լսել ինչ ի բացուտա նոյնչափ»։ ԺԹ. Յորդ. 875:— «Եւ բղխեաց ազբիր յորդարութի, եւ հոտեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտս ամենայն, եւ ելից առ հասարակ որչափ ակն բաւեաց»։ Աղաթ. 557. որ վերագոյն յերես 555 ըստած է. «Եւ ամենայն երկիր՝ յերեսելիս յական տեսանելեաց բաւականի՛ հարթ հաւասար դաշտածե յատակեցաւ»:

69. *Ծարեւ ի կին իւր*. «Անր Գրոյն իսկ որ ասէ, թէ Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր, եւ յարեացի ի կինն իւր»։ Ի. Յորդ. 897.— «*Ծարեացի ի կին իւր*»։ Հն. ԻԸ. 309.— «Փոխանակ այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ յարեացի ի կինն իւր»։ անդ, ԻԳ. 328.— «*Ձընողսն իւր թողու, եւ ի կինն երթայ յարի*»։ Եփես. Ի. 885.— «*Երթայ ի նա յարի*»։ անդ, 886.— «*Ընդէր եւ զինոջէ չարիցէ՛ թէ յարեացի (տղ. յարեաց ի) յայրն*»։ անդ, 888.— «*Ծարեացի մերձեացի այրն . . . շասաց թէ բնակեաց ընդ նմա, այլ թէ յարեացի մածցիւ*»։ անդ, 889.— «*Վասն այնորիկ թողցէ այր*



զհայր իւր եւ զմայր իւր, եւ յարեացի ի կին իւր<sup>23</sup> . . . : Ասե-  
լովն, եթէ Թողեալ զհայր եւ զմայր, եւ յարեալ ի կին».  
Ազաթ. 211: (Թարգմանն կ'ըսէ այլուր երթիցէ զհետ կնոջ  
իւրոյ. Եփես. Ի. 885, 888. ըստ որում գրեալ է ի գիրս Ծննդոց,  
Բ. 24. յԱ Եզր, Գ. 20. յԵզնիկ, 81, 288, այլովքն հանդերձ:  
Այլազգ ի Զգան, ԺԷ. 302. «Թողէ այր զհայր իւր եւ զմայր,  
եւ կցորդ եղիցի կնոջ իւրում»:

70. *Չեռական.* (սեպհական.) Ի. Յորդ. 899 երկիցս: Տես  
յԱզաթ.—Բիւզ. Թիւ 123:

Մ Ե Կ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ա Թ Ե Ս Ա Ղ Ո Ն Ի Կ Ե Ց Ի Ո Ց

71. *Առաքելականն.* (առաքելական բանն.) Է. 446: Տես  
ի Կոր.—Ազաթ. Թիւ 84:

72. *Թանձրամած քուն.* «Զթանձրամած քունն ի բաց  
թաւթափեսցուք». Թ. 461:—«Սուրբն Բարսիլիոս . . . մինչդեռ ի  
պաշտաման Տեառն կայր, անկաւ նմա քուն ծանր թանձրա-  
մած». Բիւզ. Գ. ք. 97. որ ի Մկր. Գ. Կ. 6, ըսուած է *Թանձր*  
*եւ խորին քուն:* (Թարգմանն կ'ըսէ այլուր *Թանձր քուն.* «Ի  
բաց ընկեսցուք զթանձր քունն». հս. ԻԳ. 341. եւ ԻԹ. Յորդ.  
407. *Խոր քուն.* Ա Տիմ. ԺԳ. Յորդ. 111. ԺԳ. Յարդ. 125. Եփես.  
Ը. 750. *Խորարթուն քուն.* Եփես. Ժ. 782: Միւս թարգմա-  
նիչք. *Խոր քուն.* Սիրաք, ԻԲ. 8. *Զգան, ԺԹ.* 324. *Խորար-*  
*թուն քուն.* Ոսկ. Ես. ԵԶ. 424. *Ժանրարթուն քուն.* անդ.  
*Քուն թանձրութեան.* Գործք Առաք. Ի. 9. *Քուն ծանրու-*  
*թեան.* Եփր. Համար. 199:)

73. *Ղլուելոյն առնեմ.* (սուտ խլանալ. զգ. Faire semblant  
de ne pas entendre.) «Քանի մերկք, սրչափ հաշմք. եւ չգիտմք,  
այլ Ղլուելոյն առնեմք<sup>24</sup> զպաղատանս նոցա». Թ. 462:—«Բայց

23. «Յաղագս այսորիկ լքցէ թողցէ մարդ զհայր եւ զմայր, եւ յա-  
րեացի ի կին իւր». Մ. Խորեն. ի Թրդմ. Փիլոնի, Այլար. 158:

24. Եոր հայկազեանն, որ միայն զայս վկայութիւն ի մէջ կը բերէ ի  
Լսեմ, վայրապար «անսովոր խոնարհումն» կը կոչէ: Եոյն Բառգիրքն ունի  
եւ *Ղլուելոց առնել:* յ'Առնեմ, 308 գ, առանց վկայութեան, որ չգիտեմ յոր  
գրոց է. բայց կայ *Ղլուելոյն առնեմ* ի Փիլոնի Մեկնութեանն Ելից, Բ. Ժզ.

թագաւորն Պապ ի չքմեղս լինելով՝ շլուեւոյն ւանէր, իրրեւ թէ իւր շիցէ գործեալ գայն»։ Բիւզ. Ե. իդ. 218։ (Քարգմանն կ'ըսէ այլուր. «Ննրեկ, ասէ, միմեանց. այս ինքն գոր ինչ լսիցէ սք՝ շլուեալ ւանիցէ»։ Կողոս. Ը. 611։)

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Բ Բ Ա Յ Ե Յ Ի Ո Յ

74. Կանթեղք եւ մոմեղէնք լուցեալք. Գ. 478: Տես յԱզաթ.— Բիւզ. թիւ 183:

75. Կոխեմ գսեամս եկեղեցոյ. «Հաւատացէք ինձ գոր ասեմս. եթէ ըստ իրաւանց ինչ գործ[ք] գործէին, բազում ժամանակս պարտ էր այնպիսեացն շկոխել գսեամս եկեղեցոյ»։ Գ. 479.— «Եթէ գարձեալ ի նմին կայցէք, շառնում յանձն, շընդունիմ, շտամ կոխել գսեամս զայս»։ Կողոս. Է. Յորդ. 605: — «Եւ վասն շարեաց նորա (Պապայ) բազմաց՝ ոչ համարձակէր նմա (Ներսէս) գսեամս եկեղեցոյն կոխել, եւ ոչ մտանել նմա ի ներքս»։ Բիւզ. Ե. իդ. 215. այլուր կ'ըսէ. «Արդիւրյր զթագաւորն եւ զմեծամեծսն շաալ թոյլ մտանել յեկեղեցին»։ Գ. Ժբ. 31: (Յալ զիրս Առաջին Դատուն կան միայն հեանեւարդ. «Վասն այնորիկ ոչ կոխեն քուրմք Դագոնայ... գսեամս տանն Դագոնայ... այլ քայլելով քայլեն եւ անցանն»։ Ա Թագ. Ե. 5.— «Կոխել զգաւիթս իմ մի յաճախէք»։ Եռ. Ա. 12.— «Զիւրդ կարիցես գոնէ զարտաքին հրապարակսն կոխել»։ Ոսկ. Մաթ. Ա. դ. Յորդ. 58.— «Երկինց թագաւորն հանապազաւր բողոքէ, թէ զժուարին է նորաք հանդերձ եւ զարտաքին հրապարակս սուրբ զրանցն կոխել»։ անդ, թ. Յորդ. 136.— «Ե՛րբ ժամանեցես գէթ զարտաքին անդաստակս պատուիրանացն կոխել»։ անդ, ԺԵ. Յորդ. 230.— «Մինչչեւ զդուրս կոխեալ իցէ զղատաստանի, մինչչեւ հասեալ կայցես ի մէջ տանինն»։ անդ, Ժզ. 261:)

76. Մշանս արծակեալ. «Յորժամ ի դաշտ ուրեք կլանիցեմք, ուր զաւրք արբունի բանակեալ իցին, խորանս հարեալ

480. «Վասն զի սմանք ոչ լուելով լսեն, տի նա տոաւել՝ շլուեոյն ւանեն, նշանակեաց զվարդ՝ եթէ լսելով լուիջիք զձայն Աստուծոյ»:

տեսանիցեմք, սրահակս ձգեալ, նիզակս կանգնեալ, . . . նշանս արձակեալ, դրաւս գործեալ, կարի իմն զարմանամք եւ սքանչանամք»։ Զ. 490:—«Եւ ամէր զամենայն հանդէսն (զարացն) . . . , զդրաւս փողփողեալս եւ նշանս արձակեալս (զգ. Enseignes déployées)»։ Բիւզ. Ե. ա. 186—187.—«Մշանս արձակեալս (տպ. արձակեալք), դրաւս փողփողեալս, ըստ զեղն Սւան (տպ. ըստ Քեղն աւան) ի դուրս ելանէր (Մանուէլ գնդաւն)»։ Խզ. 253: Տես եւ ի Բիւզ. — Մկր. Թիւ 94:

77. Աճառք, աւճառք. (Թուի՝ Զարդք ձիոյ.) «Զթագաւորն եւս ի միջի տեսանիցեմք, կամ թէ հետի ընթանայցէ ոսկեկուռ վահանաւք, եւ կամ թէ ձիավարիցէ ոսկուովք զինուք եւ տկանակապ աւճառաւք երիւարաւք»։ Զ. 490:—«Եւ բազում նժոյգս (տպ. նժոյքս) զարքունական ձիոյ՝ արքունի աւճառովք, ոսկիվարաւանդ ապրդմովն, տայր նմա»։ Բիւզ. Գ. ժբ. 108:

78. Հիւպատի. (հիւպատոսութիւն. զգ. Consulat.) «Քրեացուք թէ զմի տարի կայցէ հիւպատոս, կամ զերկուս կամ զերիս կամ զչորս. եւ ուր իցեն՝ որոց զաասն ամն կալեալ իցէ զհիւպատին. շիք որ, չէ ուրեք»։ Թ. 501:—«Մինչեւ ցարբորդ հիւպատին Արեւոյ, եւ ցարբորդ հիւպատին Ռոմեայ»։ Ե: Թաղ, Յոջր. Պաղ. 1110 բ. (տպ. սխալ կիտաղբած է. տես յերես 34 մատենիս, ծան. 2:) (Թարգմանն կ'ըսէ այլուր Բղեշխութիւն. Եփես. Ը. 746:)

79. Բարեալ յուղարկեմ. «Փարաւոզել զարմանել կամի (աղքատն). եթէ կամիս, տուր. եւ եթէ ոչ կամիս, բարեալ յուղարկէ»։ ԺԱ. 506:—«Եւ հանդերձեաց կաղմեաց թագաւորն Յունաց զկանայս թագաւորին Պարսից մեծաւ պատուով, եւ զամենայն զերութիւնս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից զարձուցանէր, եւ բարեալ առ թագաւորն յուղարկէր»։ Բիւզ. Գ. իա. 58: (Այլ թարգմանիչ յԱռաջին Դասէ ըսած է. «Զի որպէս զտանէ որ զթշնամի իւր ի նեղութեան, եւ արձակիցէ գնա բարեալ ընդ ճանապարհ, եւ Տէր հատուցէ նմա բարիս»։ Ա թաղ. ԻԳ. 20:)

80. Բիւր ազգի ազգի. ԺԵ. 514: Տես յԱզգութ. — Բիւզ. Թիւ 74:

81. *Ի ծառայութիւն մտանեմ*. ԻԱ. 520: *Տես յԱզատ*.  
==*Քիւզ. թիւ 14*:

82. *Ժողովակուլ*. ԻԳ. 527: *Տես Ի Կոր.*==*Ազատ. թիւ 15, ԳԻՏ.*

83. *Յանձնարարութիւն*: *Տես Ի Կոր.*==*Եւթ. թիւ 2*:

**Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Հ Ռ Ո Վ Մ Ա Յ Ե Ց Ի Ո Ց**

84. *Բոլորովին, Բոլորովիմք*. մակբայ. «*Բոլորովին իսկ դու ի մեզս ծնեալ ես, եւ դու զմեզ ուսուցանես*». 2. 9 (որ ի Յովհ. Թ. 34, գրեալ է. «Ի մեզս իսկ ծնեալ ես *ամենեւին*, եւ դու վարդապետ լինիս մերս».)—«*Ոչ ինչ նուազագոյն քան զնոսա կրէին զժնդակութիւնս բոլորովին իսկ զամբասն զայնոսիկ*». ԻԹ. Յորդ. 407.—«*Այնպէս անդորր էր սիրան Պաղոսի, մինչ զի եւ բոլորովիմք զբազարս անգամ եւ զամբիկս ազգաց տանէր*». ԼԲ. 421: Ածական. «*Եւ թուի ինձ թէ եւ աստ զբոլորովին զառաքինութիւնն կոչէ*». ԻԹ. 396:==*Մակբայ. «նորոգէ բոլորովին (ըստ 2.) զոր եւ զտանէ արժանացեալս*». Ազատ. 453. (տպ. *Հանի բոլորովին. իսկ նոր Հայկազեանն կը գրէ բոլորովին կամ բոլորովիմք*): Ածական. «*Զբոլորովին կարգս աշխարհիս եւ զկատարած զամենայն զիտացս. անդ, 212*:

85. *Ի համար բերեմ*. 2. 15: *Տես յԱզատ*.==*Մկր. թիւ 25*:

86. *Զիւ էր*. «*Զիւ էր մինչչեւ ի քաղաքէս ելեալ էր՝ մեռեալ էր, եւ ոչ հասանէր ի տեղի մահուանն*». Է. Յորդ. 39. (տպ. *զի էր . . . ի քաղաքս . . . հասանել*):==*Զիւ էր թէ*. «Ի վերայ աստուածապաշտ մարդկանս եւ ի վերայ եզրայութեան ընկերութեան եւ մտերիմ բարեկամութեանն *զիւ էր թէ հասեալ էր ինձ մեռանել*». Բիւզ. Ե. խղ. 257: (Աշխարհարար այժմ կ'ըսենք *Ո՛ւր էր թէ*.)

87. *Ընծեռեմ*. «*Զինչ մեզ ընչից խնայումնն ընծեռէ. հոգս եւ վարանս*». Է. Յորդ. 42.—«*Նմա ընծեռես զմուրհակն*». անդ, 45.—«*Նա է որ զամենայն ընծեռեալ ունի*». ԺԳ. 144.—«*Քիւր բարութիւնս հոգևոր խորհուրդք ընծեռնն*». անդ, 154. եւ այլ բազում ուրեք.—*Ընծեռիմ*. «*Մեծ տանջանաց արժանի ես դու, որ այսչափ ինչ քեզ ընծեռեցաւ, եւ ոչ ի լաւ անդր վարեցար*». 2. 9.—«*Նոցա ընծեռեցան աւրէնքն*». անդ, 17:



==*Ընծեռեմ*. «Երէցն՝ Մըջիւնիկ անուն՝ տալով յեկեղեցունջն Ողորմողիայ տիկնոջն (զգեղն սատակման)՝ *ընծեռէր* (տպ. *ընծեռել*) զմահուն գործ (գործի?) եւ սպանանէր». Բիւզ. Գ. ԺԵ. 123.

—*Ընծեռիմ*. «Քրիստոսական բանաւոր խաչանցն հովուելով, աւետարանական պատգամաւրն (տպ. պատգամաւորօքն) խրատելով *ընծեռեցաւ*». անդ, Գ. ԺԲ. 30:

88. *Ուժեղ*. «Զօր արինակ եթէ որ զջերմակալ որ ոչ միայն յախտէն ազատիցէ, այլ եւ գեղեցիկ եւ ուժեղ եւ պատուական արասցէ». Ժ. 89.—«Եթէ որ զքեզ ծերացեալ... յոյժ ուժեղ եւ գեղեցիկ քան զամենեսին կազմէր». ԺԳ. Յորդ. 190.—«Քան զվէճօ ուժեղ է (խոնարհութիւն) եւ քան զանգամանդ հաստատուն». Ի. Յորդ. 304.—«Յամս քաջի առաքինւոյ ուժեղ եւ պատերազմող Տրդատայ». Ագաթ. Յոջր. 19: (Կայ *Ուժաւոր* յերրորդ Գասի. «Իւրով ուժաւոր դուրութեամբն». Բրս. Վեց. Ե. 89.—«Քաղուժ գագանք՝ որք ուժաւորք ուժովք իցեն քան զնա (զառիւծ)». Թ. 185:)

89. *Սրտմտեցուցանեմ*. «Նորա ոչ ինչ ի քէն անիրաւեալ, եւ սրտմտեցոյց զքեզ». ԺԲ. Յորդ. 138.—«Եւ այնչափ զայրացոյց զբզուսաց յուղեսաց զբզեսաց սրտմտեցոյց բարկացոյց զթաղաւորն Պարսից ի վերայ արքային Հայոց, որ ապա առ հրաման ի նմանէ, . . . ըմբռնել զարքայն Հայոց». Բիւզ. Գ. Ի. 50—51:

90. *Մտտամբերութիւն*. ԺԳ. Յորդ. 162: Տես ի Կար.— Ագաթ. Թիւ 59:

91. *Ընթաղրեմ*. «Զամենայն ալէկոծութիւնս նուստացուցանէ եւ ցածուցանէ, եւ դախտսն *ընթաղրէ*, եւ ոչ ինչ է որ մեզ ի վերայ յառնիցէ». ԺԳ. 170:—«Տաղազս որդւոցն Յուսկանն, թէ սրպէս *ընթաղրեալ* ընդ ոտն (կամ՝ առ ոտն, ըստ երես 3, գլ. ԺԵ.) հարին զբահանայութեան Աստուծոյ զպատիւ». Բիւզ. Գ. ԺԵ. վերնագիր, 43: («*Ընթաղրեմ* է ենթաղրեմ, սրպէս եւ ենթակայ գրի եւ *Ընթակայ*, կ'ըսէ Հ. Արսէն Քաղբատունի ի *Զրգ. Լեր.* երես 638, յօդ. 1404: Քայց որովհետեւ *ենթ* արմատով բարդութիւնք Գաւթ Անյաղթի գիւտ թուին, արժան է զանազանել *զենթաղրեմ* եւ *զԸնթաղրեմ*. առաջինն է *ենթ-աղրեմ*. իսկ երկրորդն՝ սխալ զբութիւն է

կարծեմ, փոխանակ *Ընդաթրեմ*, *Ընդ-աթրեմ*<sup>25</sup>, յԱթուր բա-  
ռէ՝ որ է Ռան, նման *Ընդուտնեմ* բայի խոնարհագոյն մատենա-  
գրաց: *Ընդաթրեմ* գրութիւնն խնդրելի է ի Զեռագիրս. ես  
գտած եմ միայն *Ընթաթրեմ* ի Զեռագրի միում Խորենացոյ  
գրելոյ ի ժէ գարու, ուր ապ. (*Պտմ. Գ. գ. 403*) ունի *Ըն-  
թադրեմ* :)

92. *Մարդկային ընտթիւն*. ժե. 197, 199. Իե. 358:  
Տես յԱգաթ.—Յիւզ. թիւ 75:

93. *Մարտիրոսական*. ժե. 200: Տես յԱգաթ.—Յիւզ.  
թիւ 156:

94. *Սրտակիրիմ*. «Իրբեւ լսէր զայտոսիկ Պալաս՝ սրտա-  
կիրզեալ լինէր, զի ցաւէր նմա կարի՝ վասն Ատուծոյ փառացն».  
ժ2. 214:—*Սրտկէզ*. «Եւ զորբութիւն սրտառութեան անձանցն  
սրտկէզ ցաւոցն սրտաբնկութեանն, միւսանգամ սիրով զթով  
վարդապետութեամբ հոգեւոր հարբն մխիթարեաց զամենեանն».  
Իււզ. Գ. ժդ. 109—110.—*ապ.*՝ «զորբութիւն սրտառութեան ան-  
ձանցն սրտկեղ».—*բ ապ.*՝ «զսրբութիւն սրտառութեան ան-  
ձանցն սրտկեղ».—*նոր հայկ.* ի *Սրտկեղ՝ զորբութիւն օտարու-  
թեան անձանց սրտկեղ*: (*Սրտկէզ նոյն է ընդ պարսկականին  
Տիլաուզ, Սրտի այրիչ: Ըստ այսմ եւ Լեռդակէզ, Այրեալ լիր-  
դիւ, որոյ նման եւ պարսկերէն Արկէրսուզ, Լեռդի այրիչ. «Քրիս-  
տոս փառաւորի, աշխարհ լուսաւորի. եւ որոյ շարիք ի մտի կան,  
սրտառուչ՝ լեռդակէզ՝ ի խոր խոցեալ նստի».* Սեբեբ. Ե. 87—88.  
*ապ. լեռդակեղ. իսկ նոր հայկ.* ի *Սրտառուչ՝ «սրտառուչ լեռ-  
դակեղի (կամ լեռդակիրի)»*: Համեմատէ *Լեռդակէզ, Սըրտ-  
կէզ, Սրտակիրիմ՝ ընդ յեանադոյն մատենագրաց Աղէկէզ,  
Աղէկիրիմ, Աղէկիրզութիւն*. կայ եւ *Սրտակիրեմ*, ներգոր-  
ծական, յիդնատիրոսի Մեկնութեանն Ղուկայ:)

95. *Ջան վաստակոյ*. ժԹ. 283: Տես յԱգաթ.—Յիւզ. թիւ 2:

96. *Ընդ գետին տանիմ*. «Զկանգնես զգլորեալն, ընդէր  
եւս ընդ գետին տանիցես զնա».  
ԻԱ. Յորդ. 316:—«Յորժամ  
յաջ ոսնս յենուի, զաջ լիտոն ընդ գետին տանէի. եւ յորժամ

25. Գոյ Ընդ աթուր հարկանեմ ի Յուդիթ, ժ2. 6. եւ ի Փիլոն,  
Կեանք Իմաստնոց, 92, ուր մի 2. կը գրէ «ընդ առաթուր հարկանէին»,  
իսկ այլ 2. ընդ աթուր:

ի ձախ օտնս (ըստ 2.) յինուի, դձախ լեռան ընդ զետին տանէի: Ազա հարցանէր թագաւորն Պարսից Չապուհ եւ ասէր (ըստ 2.). Ազէ՛ տուր ինձ գիտել, ո՞վ են յերինքն այնտրիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր: . . . դքեզ ընդ զետին տանէի, եւ զթագաւորն Յունաց»: Բիւզ. Գ. Ժզ. 168—169: (Թարգմանն կ'ըսէ այլուր. «Պարս էր նոցա, ասէ, վերագոյն քան զմարմնաւորս գտանել. որովհետեւ ընդ զետին չոզան, գէթ յայնմ կայցեն (կացցեն?)»): Ա Տիմ. ԺԵ. 134:)

97. Ժողովարան. ԻԳ. 342. Կասպարան. ԺԵ. 203. Մըրցարան. Թ. 72. Տեսարան. ԺԷ. Յորդ. 251. ԻՔ. Յորդ. 325: Տես յԱզաթ. = Բիւզ. Թիւ 140, ԳԻՏ

98. Ուղեգնացուծիւն. ԻԳ. Յորդ. 349. ԻԹ. 400: Տես յԱզաթ. = Բիւզ. Թիւ 1:

Բ

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Ի Կ Ո Ր Ե Ա Ն

99. (1.) Խառնեմ՝ զոր ի զունդս (փիլիսոփայից). «Որպէս զի ասիցէ՛ եթէ որք բանտի եւ պատժոց արժանի իցեն, չէ արէն եթէ ի փիլիսոփայից զունդս խառնիցէ որ զնոսա»։ Ա Տիմ. Գ. 23:—Խառնեմ՝ զոր ի զունդ (Քրիստոսի, սրբոց վկայից). «Ահա խառնես զիս ի զունդն Քրիստոսի»։ Ազաթ. 53. — «Ընկալ եւ խառնես եւ զիմ սգիս ի զունդ քս սուրբ վկայիցն»։ 157: եւ այլուր Խառնիմ՝ ի զունդն Քրիստոսի. անդ, 452, 466—467. Կորին, 7, 26. Խառնիմ՝ ի զունդն աստուածական. Ազաթ. 452. Խառնիմ՝ ի զունդ Միածնին, թռչնոց. անդ, 153, 492: (Մի անգամ եւ յեփր. Փիլիպ. Ա. 157. «Լուծանել ի մարմնոյ աստի վասն Քրիստոսի ցանկացեալ եմ, զի խառնեցայց ես ի զունդն Քրիստոսի»։ որում հանգոյն եւ յերրորդ Դասի. «Եւ յայտնապէս տեսին զնա ծերքն ի զունդս Հրեշտակաց վերացեալ յերկինս խառնեալ»։ Պամ. Հար. Եզիպա. 223:—Այլուր թարգմանն փոխանակ Խառնիմ՝ ի զունդն Քրիստոսի՝ ըսած է Ընդ Քրիստոսի գնդակից լինել. Կոզոս. Գ. Յորդ. 562. ըստ այսմ եւ Ընդ Հրեշտակս գնդակից լինել:

անդ, Ե. 575. որ է սովորականն եւ ի թարգմանութիւնս Մատթէի եւ Եսայեայ Մեկնութեանց. «Արդիս Աստուծոյ լինել, ընդ Հրեշտակս զնդակից լինել». Մտթ. Ա. ա 12.—«Հրեշտակաց իսկ եղբր դասակից, եւ Հրեշտակապետաց զնդակից». անդ, Ա. ժթ. 306.—«Ար երկնից քաղաքացիքս եմք, եւ բերովբէիցն զնդակիցք եւ Հրեշտակաց հաղորդք». անդ, Բ. ժբ. Յորդ. 571.—«Գնդակիցք եղեն մարդիկ՝ վերին դարութեանցն». Ես. 2. 66: 100.(2.) Գաղտուկ. մակրայ. «Քանզի մեղացն երկու վկայք ի դէպ են, զի գաղտուկ եւ ի ծածուկ գործին». Ա Տիմ. ԺԵ. 137: —«Գնացին գաղտուկ». Բիւզ. Գ. ի. 134.—«Ել գաղտուկ, եւ փախեաւ». ԺԵ. 171.—«Եմուտ անդր գաղտուկ». Ե. դ. 191.—«Եւ գաղտուկ խորհրդով դայս դուշակութիւն Մերութանն . . առ Մուշեղ . . հասուցանէր». դ. 193.—«Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանան դաւրացն իւրոց». իր. 232: Եւ ի Մկր. «Կէսքն երթեալ գաղտուկ յայրսն մատաւորս». Բ. դ. 11.—«Լու լինէր՝ թէ ազգակիցքն գաղտուկ երանէին արտասուաց կցորդ լինել». Գ. դ. 10: (Ստէպ եւ յերկրորդ Դասի. «Յղեցին առ արքայն գաղտուկ». Եւս. Եկեղ. Բ. իգ. 132.—«Սողէին եւ կլանէին գաղտուկ ըստ պահակապանսն Հոռոմոց զիշերայն». Գ. դ. 158.—«Ուսուցանէր գաղտուկ». Գ. ժա. 257.—«Սէր բարեկամութեան գաղտուկ աւնէր». Ը. ժԵ. 656: Մի անգամ եւ յերրորդ Դասի. «Զգալստեանէ Աստուածութեանն ստես, եւ իրբու լուկեայն իմն խաւսիս. զգալուստ Աստուածութեանն աւետարանես, եւ գաղտուկ խաւսիս». Կիւր. Կոչ. ԺԲ. 207: Կայ եւ իրբու նախադրութիւն, Գաղտուկ (յումեթէ), յերկրորդ Դասի. «Քայց այնորիկ՝ որ երկեան ի փոքր գողունիցն զոր դողացան որդիքն քո՝ գաղտուկ ի քէն<sup>26</sup>, ցոյց նոցա զոր ինչ առնու յայտնապէս ի նոցանէ թագաւորն որ թագաւորէ ի վերայ նոցա». Եփր. Սամ. Բ. 367—368:—Փոխանակ գաղտուկ եւ ի ծածուկ՝ թարգմանն կ'ըսէ այլուր ըստ սովորականին իւր դա-

26. Առաջին Դասն կ'ըսէ Դաղտ (յումեթէ). «Այլ թէպէտ եւ հարկանիցէ (ծառայ գծառայ) գաղտ ի տեառնէն». Ոսկ. Ա Տիմ. ԺԶ. Յորդ. 150.—«Դաղտ ի մաւրէն երթայր յեկեղեցին». Չաբք Յոհ. Գր. 113:—Գեր. Ա յարնեան, ՔՆՆ. ՔԵր. 74, ծան. 27, միայն ի Բիւզանդայ կարդի գրուածոց կը յիշէ Դաղտուկ:



սակցաց. «Գաղտ եւ ի ծածուկ գործեն (զգործան յսուլթեանց)».  
Եբր. ԻԳ. 530.—«Ոչ գաղտ ինչ լուար, եւ ոչ ծածուկ ուրեք».  
Բ Տիմ. Գ. 202. համեմատէ. «Ոչ գաղտ ինչ կամ ծածուկ կո-  
տորէին զմարդիկն՝ որպէս աւագակք կամ գոզք. զի նորա ի ծա-  
ծուկ, եւ սորա յայտնի»։ Ոսկ. Ես. Գ. 43:

101. (3) *Նրանելին եւ սուրբ*. Բ Տիմ. Ժ. 270: Տես յԱ-  
գաթ. — Բիւզ. Թիւ 79:

102. (4) *Հեշտ պաշտաւն*. «Ջայնպիսի ծառայն . . . ոչ  
միայն Աստուած ընդունի . . . , այլ եւ իւր տէրն՝ որում զհեշտ  
պաշտաւնն մատուցանիցէ»։ Տիա. Գ. Յորդ. 317.—«Նոյնպէս եւ  
տեաքն թէ հեշտ պաշտաւն առնուցուն ի ձէնջ (ի ծառայից)».  
Եփես. ԻԲ. 914.—«Իբրեւ տեղեկացաւ (Գրիգոր) ի դայնկէն իւրմէ  
հայրենի գործոցն որ եղեալն էին, ել գնաց (բոս 2.) առ Տրդա-  
տիոս ըստ հեշտ պաշտամանն»։ Ագաթ. 43: (Աստի Հեշտա-  
պաշտաւնեայ յԵս. Ժմ. 165. Էսոկ Անտիգոնոս . . . արձակէր  
զաւրապարս ի վերայ Սելուկեայ. եւ մատնեցաւ յիւրոց հեշտա-  
պաշտաւնէից բարբարոսացն»։ յոր միտս Թարգմանիչն Ոսկ.  
Մտթ. Ա. Ժգ. Յորդ. 194, ըսած է Հեշտական ծառայ: «Չառ-  
նուս յանձն զժառայն հեշտական՝ յորժամ մեռանիցիս՝ յանար-  
գութեան թողուր»։)

103. (5.) *Նոյն արինակ*. Փիլիպ. Բ. 364.—*Չոր ար-  
ինակ . . . նոյն արինակ*. Ա. Տիմ. Ա. Յորդ. 12. Գ. 25: Տես  
ի Կոր.—Ագաթ. Թիւ 19, եւ ԳԻՏ.

104. (6.) *Առանց յամելոյ եւ յապաղելոյ*. Փիլիպ. Թ.  
448: Տես ի Կոր.—Ագաթ. Թիւ 6, եւ ԳԻՏ.

105. (7.) *Չարտուղի*. «Քանզի այնպէս իսկ միշտ Սատա-  
նայ ջանայ յամենայնի հնարս գտանել. ոչ ընդ ուղիղ ճանապարհն  
զայ եթէ զգուշանայցեմք, այլ զարտուղի (կամ զ'արտուղի)  
հետ արածի»։ Կողոս. Բ. Յորդ. 547. յորմէ եւ Յոհ. Մանդակու-  
նի. «Գոզ է (Սատանայ), եւ ոչ ընդ յայտնի ճանապարհն գնայ  
(զայ?) եթէ զգուշանայցեմք, այլ զաղտնի եւ դհետ արածէ»<sup>27</sup>.

27. Մանդակունի կ'ըսէ արածէ՝ ուր ի Մեկնութեան Կողոսացոց  
զրեալ է արածի Այսպէս եւ յեզնիկ, 99. «Ոչ երբեք ի մարդկանէ ելեալ  
պայն՝ եթէ առ երէս արածիցէ»։ (տես *Քննասէք*, Պրակ Ա. 9.) զոր Քոս-  
տանեան, Հատ. Չմթեքք. 32, ծան. 11, կ'ուզէ արածիցի. բայց կործան

ժէ. 135. Մանդակունին շրոնք զարտուղի, կամ զի չէր սիրեր զբառ, կամ զի չէր այն իւր սովորականն:—«Եւ որ յայտց հաւատոց վրիպեցան՝ դանկոխ եւ դանխուլ գնացին, եւ զարտուղի անկան»։ Ագաթ. 276. որ կ'ըսէ այլուր. «Տարածին (երկնաւոր գունդքն), եւ ոչ ըստ արտուղի անկանին»։ 204. տես *Զարտուղի* եւ ի Յճխ. Թ. 85. Ի. 193: (*Զարտուղի, Արտուղի*, եւ ըստ *Արտուղի* կը գանուին եւ յայլեւայլ թարգմանութիւնս Երկրորդ Դասուն. «Թողան լքան շաւիղքն հորդեալք, եւ գնացին զարտուղի յերկիւղէ կառացն Սիսարայ»։ Եփր. Դատ. Ա. 330. —«Վարէ տանի դնա ընդ շաւիղս մտլարս, զճանապարհս արտուղի»։ Զգան, ԺԹ. 382.—«Որ ընթանայ արտուղի մտաք, ոչ միաբանի շարչարանացն Քրիստոսի»։ Իգն. Թուղթ առ Փիլաղելի. 77.—«Եւ մինչդեռ երթայր (Յովսէփ) ի ճանապարհի, մոլորեցաւ նա ըստ արտուղի»։ Եփր. Արար. Թ. 106.—«Եւ որպէս ասաց յայլում բանի մարգարէութեան, եթէ էարկ շարիս ի վերայ իշխանաց, եւ մոլորեցոյց զնոսա ըստ արտուղի, եւ ոչ ի ճանապարհի»<sup>28</sup>. Եւս. Եկեղ. Ը. ք. 619: Ի *Զարտուղի* բառէ կայ *Զարտուղիմ*, բայ չէղոր յԵրրորդ Դասի. «Քանզի վրիպեալ զարտուղին խորհուրդք նոցա»։ Բրս. Վեց. 2. 119. տես եւ ի Յճխ. Ի. 188: Դիտելի է որ Մատթէի Մեկնութեան թարգմանիչն՝ յերկու տեղիս գրեթէ զնոյն կ'ըսէ զոր եւ Կողոսացոց Մեկնութեան թարգմանն, այլ առանց *Զարտուղի* բառի. «Եւ եթէ չկարիցէ (Սատանայ) մեծութեամբ յանտի հանգստենէն հա-

շատ աւելի դիրաւ անուշադիր զրիչ մի կարէր փոխել *գ'արածիցէ յ'արարած իցէ*, քան թէ *գ'արածիցի*, Թոռնեան կը յաւելու անդ, թէ «առ Երես արարած իցէ յայտնապէս զրչի սխալ է»։ այսպիսի «յայտնապէս զրչի սխալք» եռան գնական ի բոլոր մատենագրութիւնս նոխնեաց, եւ եղբրկայ հատուածն՝ զոր ես առաջին անգամ ուղղեցի յամին 1887՝ ոչ միայն յամենայն տղագրութիւնս ձառիցն *Ընդդէմ Աղանդոց* անիմաստ ազճատարանութիւն մի է, այլ եւ ի նոր Հայկազենին ի բուն Պայ,—ի *Զարգացելոց Ընդհանրութեան* Բազրատունոյն, երես 583 երկիցո, —եւ ի *Մենական Պատմութեան* Նոյոց Ա. Մ. Դարադաշեանի, երես 276:

28. Այն է բն Մաղմուսին, ձՁ. 40. Եկն անարգութիւն ի վերայ իշխանաց նոցա, մոլորեցոյց զնոսա *յանապատի* եւ ոչ ի ճանապարհի»։ որ Թուի առեալ ի գրոցն Յովբայ, ԺԲ. 21, 24. «Էհզու անարգութիւն ի վերայ իշխանաց . . . մոլորեցոյց զնոսա ի ճանապարհի զոր ոչ զիտէին»։

նել, ընդ այլ ճանապարհ զայ, ընդ աղքատութեանն, զոր եւ առ Յովրան արար»։ Ա. ժգ. Յորդ. 191.—«Ընդ այլ ճանապարհ զայ զաղտագողի (Սատանայ)»։ Բ. իա. 661: Նշանակութեան արժանի է եւ Արտահալած բառն Փիլիպեցոց Մեկնութեան. «Ո՞չ իրրեւ սարկի միւսմ բաղում անգամ սաստէր (Պաղսս) Սատանայի. ո՞չ իրրեւ զղոհելի մի արտահալած խուճապէր»։ Է. Յորդ. 427:—Ազաթանղեղի ազղեցութեան վերագրելի թուի Զարտուղի եւ ի Մարութայի ձառին ԻՎԿ. Արեւ. 96. «Անց ամաթ մեր զսահմանաւ, եւ ել զարտուղի լրբութիւնն մեր»։)

106. (8.) Աքսորք. «Եւ հրանելին Յովհաննէս Աւետարա: նիչ յաճախապէս անդ (յեփեսոս) պարապէր. քանզի անտի իսկ տուաւ յարտորս, եւ անդ վախճանեցաւ»։ Եփես. Պատճառք, 673—«Են որք ի կապանս են (ի սրբոց), են որք ի փիւղակէս են, են որք յարտորս»։ Բիւզ. Գ. ժ. 101.—«Ապա յետ այտորիկ արձակեցան ամենայն, որ միանգամ ոք կայր ի պատիժս կամ յարտորս»։ անդ, 103: Յարմէ Աքսորեմ. «Հրաման ետ (Վաղէս) արտորել զերանելին ներսէս»։ անդ, Գ. Է. 88.—«Ապա արտորեաց զնոսա, եւ ընկէց յաշխարհս աւտարս»։ 89.—«Իսկ թագաւորն Վաղէս արկել արտորեաց զմեծ քահանայապետն զներսէս»։ ժա. 104. եւ Աքսորիմ. «Եւ կամ զխնրդ կտպեցաւ (ներսէս) եւ արտորեցաւ»։ Գ. Է. վերնագիր, 79.—«Արկին յայն չափս զի արտորեցի միայն . . . զի . . . արտորելովն ազրեցիք»։ 88.—«Իրրեւ արտորեցաւ Սուրբն ներսէս»։ Գ. վերնագիր, 90.—«Եւ էին նորա՝ այն որք ընդ նմայն արտորեցան յիրոցն՝ երկու»։ 91.—«Դարձան ամենայն հովիւքն եպիսկոպոսքն՝ որք արտորեալք էին»։ ժգ. 109: (Պայ մի անգամ Աքսորք եւ յեւս. Եկեղ. Ա. ժա. 55. «Հալածեցաւ եւ մերժեցաւ (Հերովդէս) արտաքոյ (արտաքս?) քան զսահման յարտորս»։ Եյս բառ յունարէն է, *exoria*—Արտաքս քան զսահման, յորմէ ասորերէն արտորիա, էքսորիա, (P. Smith, *Thes. Syr. Ոլաի*, 185.) եւ միջնորդաւ ասորւոյն անցած է ի հայ լեզու Աքսորք<sup>29</sup> ձեւով, ինչ-

29. Նոր Հայկապեանն բաց ի Աքսորք յօղեականէն կը նշանակէ եւ Աքսոր. այլ ես ոչ ուրեք գտած եմ Աքսոր ի գիրս Նախնեաց, Ի ձառս Ոս-

պէս եւ Կաթուղիկոս, Սիւնհոդոս, Փիլիսոսփայ. (Կաթուղիկոս եւ Սիւնհոդոս բառից համար տես յերես 70—71 եւ 124 մատենիս:) Թարգմանն կ'ըսէ այլաբ. Արտաբոյ (Արտաբո?) քան զիմ սահմանսն հալածել եւ սահմանել. եփես. ժե. 829.— Արտաբոյ սահմանացն լինել. Հռ. ժե. 203: Միւս թարգմանիչք. Ըստ աշխարհ հանել (որ է Արտաբոյ). եւս. Քր. 112. Ի վտարանդիկս հանեալ սահմանիլ (որ է Արտաբոյ). անդ, 148. եւ «Առաքեալն Յովհաննէս ի Պատմոն կղզի տուաւ». անդ, 156, զոր եփեսացոց Մեկնութեան թարգմանն ըսած է տուաւ յարտաբոյ:

107. (9.) *Ջեղում հեղում.* «Մեծութիւն է եւ առաւելութիւն. այս ինքն է թէ (կամ՝ այս ինքն եթէ) այնչափ զեղաւ հեղաւ, եւ չէ հնար բանիւ յանդիման կացուցանել զայնս՝ զորոց արդեամբք զփորձ առաք». եփես. Ա. 681:— «Որ եւ զեղան հեղան (2. իսկ ապ.՝ որ հեղան) շնորհք չողոյն Սրբոյ յետին ժամանակիս». Ազաթ. 500: (Կայ այս եւ յԵրրորդ Գասի. «Եւ արդ հեղան զեղան զարմանագործ սքանչելիքն Աստուծոյ ի վերայ տկար բանիս իմոյ». Քրտ. Վեց. է. 154.— «Բազմապատիկ յԱստուծոյ ի քաղաքին Անտիոքացոց ի ձեռն չողոյն Սրբոյ շնորհք Աստուծոյ հեղան եւ զեղան». Կիւր. Կոչ. ժէ. 387.— «Զուրք բազումք յամենայն տեղիս հեղեալ զեղեալ (2. Անտոնեանց. իսկ ապ.՝ տեղիս զեղեալ) կային միապաղաղ». Քրտ. Վեց. Գ. 72: Գրեթի է որ թարգմանն ճշդիւ ըստ Ազաթանդեղի կ'ըսէ զեղաւ հեղաւ, եւ ոչ հեղաւ զեղաւ՝ հանգոյն Բարսղի եւ Կիւրղի թարգմանչաց: Ունի եւ Եղնիկ, 231. «Ձեկն Քրիստոս . . . յեռանդան երիտասարդութեանն, յորժամ հեղեալ զեղոյր մոլորութիւն դիւապաշտութեանն». (ապ. Ս. Ղազարու՝ ելեալ զեղոյր, բայց Չմիւռնիոյ տպագիրն, երես 212, հեղեալ զեղոյր:) Այլ է յԱսկ. Մաթ. Բ. իդ. Յորդ. 706, ներդործարար. «Բազում ծաղր զեղեալ հեղուցուն»:

108. (10.) *Քայլեմ.* «Եթէ նախ ձախտ ոտամբն քայլիցէ, եւ զայն՝ չար պատահարս իմն համարի». եփես. ժե. 805:— «Սա եւ կաշկաւք քայլելոյն զնայր ի վերայ ջուրց զետոց, եւ ոչ թա-



նային»։ Բիւզ. Գ. ժդ. 37. որ կ'ըսէ այլուր. «Պաշտօնքն անցանէր ի վերայ չուրցն գետոցն, եւ ոչ թանային կաշիկը նորա»։ Ե. իզ. 220: (Եւ յեփր. Թիւք, Բ. 239. «Յանկայր (Արրահամ) զի ի քայլել սոսից զաւակին իւրոյ հաստասեսցի ուխտն Աստուծոյն իւրոյ»։ Յօրինակսդ Զայլեմ է Գնալ, աշխարհաբար քաշել, զզ. Marcher, իսկ այլուր յԱռաջին Դասի է Առանց կոխելոյ անցանել, զզ. Enjamber. «Վասն այնորիկ ոչ կոխեն քուրմք Դագոնայ. . . զսեանս ասնն Դագոնայ յԱղովտոս մինչեւ ցայտար. այլ քայլելով քայլեն եւ անցանեն»։ Ա Թագ. Ե. 5:)

109. (11.) Կարի առնեմ. Երբ. Դ. 479: Տես ի Բիւզ. — Մկր. թիւ 123:

110. (12.) Պատեմ. Հս. Ժ. 84: Տես ի Կոր. — Բիւզ. թիւ 33, ԴԻՏ.

Ի դիւրութիւն ընթերցողաց՝ ուրոյն ուրոյն կը ցանկեմ զնոյնութիւնս Պաղտսի Մեկնութեանց ընդ միոյ միոյ ի մասենազրութեանց Կորիւն Վարդապետի: Ընդ Վարդուցն Մաշտոցի. Ամենաբարին Աստուած, թիւ 40. Առաքելականն, 71. Ժառանգաւոր, (կղերական,) 25. Ի վանականաց կարգ ելանեմ, 7: Ընդ Ազաթանզեղի. Ակն. որչափ ակն բաւիցէ, թիւ 68. Անտաշ անկոփ, 37. Արեզակնակէզ լինիմ, 55. Արինակ. զոր արինակ, նոյն արինակ, 103. Բոլորովին, 84. Զարտուղի, 105. Զեղում հեղում, 107. Էանալ հաւասար Աստուծոյ, 30. Ընդվայրահար, 59. Ժողովարան, 97. Խանձիր, 66. Խաւնեմ զք ի զունդս (փրիստփայից, Բրիստոսի), 99. Խելացնոր, 67. Կաճառանաց, Կաճառորդ, 53. Համապայծառ, 31. Հեշտ պաշտան, 102. Մարտի տեղի, 42. Յարել ի կին իւր, 69. Կահատակից, 28. Որպիսութիւն, 60. Ուժեղ, 88. Պարեմ, 5. Սաղմոսանուագն, 1. Յուցք, 5. Փոխադարձ, 15. Փոխելանամ, 41: Ընդ Բիզանդայ. Ակն. ըստ ակն անկանիմ, թիւ 22. Աճաք, 77. Անդուստ ի վերուստ յերկնից, 3. Անուս առնում, 19. Ապարահեղ, 39. Ապարակիր, 36. Աքսարք, 106. Բարեւոյ յուղարկեմ, 79. Բոկագնաց, 57. Գեաին. ընդ գեաին տանիմ, 96. Երախտեաց անախտիս հասուցանեմ, 24. Երկեղուկս արկանեմ, 45. Զի էր, 86. Զկնի կրթիմ, 12. Զոյգ հասարակ, 49. Ընթաղրեմ, 91. Ընձեռեմ, 87. Թագնորդ,

62. Թանձրամած քուն, 72. Լսեմ. շլուելոյն առնեմ, 73. Կալուկապ, 61. Կարաւան, 21. Կարգաւ նստիմ, 38. Կծծի, 65. Կոխեմ զսեամս եկեղեցւոյ, 75. Համակ, 20. Մարձեմ, 18. Նշանս արձակեալ, 76. Ոսկիգմբէ վահան, Ոսկիվարաւանդ ապարգում, 50. Ուն. զուլամը երթամ, 46. Ուղեգնացութիւն, 98. Ուրիունը, 33. Պատեհ, 110. Պտակիմ շուրջ զիւրք, զումամը, 47. Սանդալ, 48. Սրտակիղիմ, 94. Սրտմտեցուցանեմ, 89. Քայլեմ, 108: *Ընդ Մատիարայեցիս*. Երեւ. զարեւն յաշացն հատանեմ, թիւ 23. Գամ քան զգամ, 35. Գեր, (մեծածայն լալիւն,) 63. Երախտեաց երախտիս (հատուցանեմ), 24. Մարդաշատ, 4. Նորասէր, 44. Չաշինն եւ շառաշին, 17. Ողորմ տեսիլ, 52: *Ընդ Նւթաղի*. Գոգցես թէ, թիւ 54. Հիպատի, 78. Նախանկար արինակ, 9: *Ընդ Կոր*. Ազաթ. Բարեաց զործոց նախանձաւոր լինիմ, 2. Ծովակուլ, 82: *Ընդ Կոր*. Ազաթ. Բիւզ. Գումարեմ, (առաքեմ,) 51. Լեռունական, 56. Խստամբերութիւն, 90. Հրածարեմ, (մեռանիմ,) 11. Մարտիրոսական, 93: *Ընդ Կոր*. Ազաթ. Մկր. Առանց յապաղելոյ, 104: *Ընդ Կոր*. Բիւզ. Մկր. Հարցանեմ քննեմ, 58: *Ընդ Կոր*. Նւթ. Յանձնարարութիւն, 82: *Ընդ Ազաթ*. Բիւզ. Անձուկ սիրոյ, 26. Աշխատութիւն երկայն ճանապարհաց, 34. Ասպաղն, 14. Բիւր ազգի ազգի, 80. Երանելինն եւ սուրբ, 101. Ի ծառայութիւն մտանեմ, 81. Կանանի, 6. Կանթեղք եւ մոմեղէնք լուցեալք, 74. Չեռական, 70. Մարդկային բնութիւն, 92 Մէջգետին. անցանեմ ի մէջգետին, 43. Միաշունչ, Միասիրտ, 29. Ողորանաւք խաւսիմ, 10. Չառնում յանձն, չհաւանիմ, 27: *Ընդ Ազաթ*. Բիւզ. Մկր. 2ի բուեռոցի, այլ մի թաւալեւ, 13: *Ընդ Ազաթ*. Մկր. Անաշխարհիկ, 64. Ընկերասէր, 16. Ի համար բերեմ, 85: *Ընդ Ազաթ*. Բիւզ. Նւթ. նոյն արինակ, 103. Ջան վաստակոց, 95: *Ընդ Բիւզ*. Մկր. Գաղտուկ, 100. Կարի առնեմ, 109. Միահաւան, 29. Նժոյգ, 8. Ի ցառումն բրդիմ, 32:

16. (Երես 23.) Ցանկ Յորդորակաց Ոսկեքերանի ի Զեռազրի միում Սուրբ Յակոբեանց վանացն Նրուսաղեմի.— Կը գրէ Հ. Գար. 2. ի Մտնդը. 608. «Ի Մատենադարանին Նրուսաղեմի (թիւ 972) հետեեալ ցուցակը կը գտնենք ճա-

ուից Ոսկերերանի, զոր արժան համարիմք զնել ի գիտութիւն  
բանասիրաց: Այս ցանկ Ա—Չ գլխովք, զոր իրր նորութիւն իմն  
կը հրատարակէ Հ. Գար. Զ., վաղ ծանօթ էր ինձ մեծագոյն մա-  
սամբ՝ ի տպագրութենէ Հատուածոց Մեկնութեանցն Պաւղոսի  
(Հ. Գ. Մեկնութեանն Մատթէի), ուր կը գտնուի յերեսս 147—  
148 այսպիսի վերնադրաւ. «Յայտարարութիւն գլխոց ի Թուղթս  
Պաւղոսի Առաքելոյ»: Երուսաղեմեան Չեռագրին ժԲ—ԻԱ գլուխքն՝  
են Վենետիկեան տպագրին Ա—Ժ. ԻԲ—ԼԸ՝ ԺԱ—ԻԸ, յետևյա-  
ռաջութեամբ քանի մի գլխոց. ԼԹ—ԽԳ՝ ԻԹ—ԼԳ. ԽԴ—ԽԶ՝  
ԼԴ—ԼԶ. ԽԷ՝ ԼԷ. ԽԸ—Ծ՝ ԼԸ—Խ. ԾԱ, ԾԲ, ԾԳ, ԾԵ՝ ԽԱ—ԽԳ.  
Հ—ՀԸ՝ ԽԵ.—ԾԲ: Իսկ ԿԱ, ԿԲ, ԿԳ, ԿԵ, ԿԶ, ԿԷ, ԿԸ, ԿԹ գլուխք  
Երուսաղեմեան Չեռագրին՝ են Մատթէի Մեկնութեան երրորդ  
հատորոյ Յանկին Գ, Դ, Ե, Ը, Թ, ԺԱ, ԺԳ, ԺԶ գլուխքն: Զմնա-  
ցեալ քսան գլուխս նոյն Չեռագրին, Ա—ԺԱ, ԾԳ, ԾԶ—Կ, ԿԴ,  
ՀԹ, Զ, շկարացի ստուգել:

17. (Երես 26.) Սրբոյն Բարսղի Կեսարացոյ ճառն  
«Ի հրաւիրեալս ի մկրտութիւն» ըստ կրկին թարգմանու-  
թեանց Նախնեաց.—Գրած էի ի Հայկական Բառարանու-  
թեան, յերես 52. «Տառներորդ ճառին (Սեբեբրիանոսի) թուի  
«Թէ երկու թարգմանութիւնք կան Նախնեաց, մին յանուն Սե-  
«բերիանոսի, միւսն յանուն Սրբոյն Բարսղի Կեսարացոյ. առա-  
«ջինն՝ ընտիր հայկարանութիւն Ե դարու, երկրորդն՝ խառն հել-  
«լենտարանութեամբ, Պիտոյից գրոց եւ Փիլոնի ոճով. արդէն Տառ-  
«նեբրորդ ճառին սկիզբը զրուած ծանօթութիւն մը կը վկայէ  
«թէ «Այս ճառ կայ եւ ի կարգս մատենիցն սրբոյն Բարսղի, հա-  
««Բ. հրես 113»: Ահաւասիկ պատառիկ մի սոյն ճառիս՝ ըստ եր-  
««կուց թարգմանութեանց. Սեբեբրիանոսինն է ձախ կողմինը,  
««տպագրին 194 էջը. իսկ աջակողմեանն է Սրբոյն Բարսղի, զոր  
««եսս դատած եմ նոր Հայկազնին մէջ ի բառն Անդրանամ.

«Գիշերք առանց քնոյ են Գիշերք անքունք որք կանխենն  
«այնոցիկ՝ որ հսկեն յա- յարգութս ի գիշերին. այլ յոյժ  
««ղաւթս. այլ դժուարագոյն դժնդակագոյնք եւ տքնեցելոցն  
««եսս է այնոցիկ՝ որ հսկեն յանդրանալն:  
«Ի մեզս:

«Եղիւ թէ սոյն երկու թարգմանութիւնք դէմ առ դէմ հրա-  
«տարակուէին»:

Ո՞վ կարծէր թէ Հ. Գար. 2. յետ ընթեանոյ զիմ վերոյ-  
եգեալ բանս՝ յիւր *Մտնդր.* յերես 333 Բարսղի պիտի ընծայէր  
զայս ձառ (ըստ երկրորդ թարգմանութեան), եւ յերես 684՝ Սե-  
բերիանոսի (ըստ ոսկի թարգմանութեան): Ո՞վ կարծէր մանաւ-  
անդ թէ նոյն Հ. Գար. 2., որ ունի ի ձեռին զթարգմանու-  
թիւնն յանուն Բարսղի, փոխանակ քննելոյ եւ ստուգելոյ զիմ երկ-  
բայանօք գրածն՝ նոր Հայկազենի մի վկայութեան եւեթ  
վստահելով՝ թէ ձառիս «թուի թէ երկու թարգմանութիւնք կան  
Նախնեաց», ո՞վ կարծէր, կ'ըսեմ, որ պիտի ընդօրինակէր պար-  
զապէս յերես 684 զիմ բանս *Հայկական Բառարննութեան*<sup>1</sup>  
քանի մի բառ միայն փոփոխելով, առանց յիշելոյ զիմ անուն՝ եւ  
զմատեան: Եթէ այսպէս գիտեն օգտիլ Վենետիկոյ Մխիթարեանք  
յիւրեանց հազարաւոր հայերէն Ձեռագրաց, յուսահատական է մեր  
հին գրականութեան գիտութեան յառաջադիմութիւնն: Բարե-  
բախտաբար յետ *Բառարննութեան* հրատարակութեան գտած  
եմ ի նոր Հայկազենին քառասնիւ շափ վկայութիւնս երկրորդ  
թարգմանութեան Բարսղի ձառիս, որով այսօր շունիմ ընաւ երկ-  
բայութիւն զկրկին թարգմանութեանց գոյութենէն. այս էր կա-  
րեւոր խնդիրն, եւ ուրախ եմ որ իմ դոյզն միջոցներովս յաջողե-  
ցայ ստուգել:

18. (երես 29.) *Աքրահամ Ձենակացի, Խոստովանող,*  
*Թարգմանիչ Մարութայի.*—Աքրահամ ի Ձենակս գեղջէ Տայ-  
ոց գաւառին<sup>2</sup>, մի ի կրտսերագունից Առաջին Աշակերտաց, էր  
քահանայ, եւ գնդակից Արրոց Ղեւնդեանց: Յետ սոցա նահա-  
տակութեանն ի 26 Յուլիսի 454, Աքրահամ եւ իւր ընկերն՝ Խո-  
րէն երէց Արկովեցի, որ ի կապանս կային ի Նիշապուհ քաղա-  
քի, ընկալան ի պարսիկ դահճապետէ քարշանս եւ զանակոծու-  
թիւն, եւ կտրեալ ականջօք փտարեցան յԱսորեստան՝ ի գաւառն  
Չահուղ<sup>3</sup> կամ Չարուլ<sup>3</sup>, որպէս զի յարբունի մշակութեան աշխա-

1. Փրպ. Պտմ. 162:

2. Եղշ. Պտմ. Ը. 146:

3. Փրպ. Պտմ. 184:



տին, Խորէն վախճանեցաւ անդէն խորշակահար, բայց Երրահամ ութ տարի մնաց ի վտարմանն, մինչեւ որ յամին 462 հրամանաւ Պերոզի գարձաւ ի Հայս, ըստ Եղիշէի (*Պատմ.* Բ. 148)՝ յառանձնութեան<sup>4</sup> ապրելով ցմահ իւր, ըստ Փարսկեցոյ (*Պատմ.* 185)՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն աշխարհին Բդնունեաց եւ մնաւալ ի բարուք ծերութեան:

Երրահամու յԱսորեստան արսորանացն պարսական ենք զմին ի գեղեցկագոյն թարգմանութեանց մեր Ոսկեղարուն: Մարութա, Ծոփաց նփրկեբա քաղաքին եպիսկոպոս, որ կը պայծառանայր ընդ մէջ Գ եւ Ե դարուց, զրաժ է ասորի լեզուաւ զընդարձակ *Պատմութիւն Արեւելեան Վկայից*<sup>5</sup>, յորում կը խօսի զբառասնամեայ (340—379) հալածանացն Պարսկաստանի քրիստոնէից յաուրս Չապհայ երկրորդի: Զայս *Պատմութեան* թարգմանութիւն՝ իրր ի սփոփանս իւր դառն արգելանին՝ կատարած է Երրահամ յամն 454—462, ինչպէս կ'աւանդէ Յարութիւն Ըմուտեան յիւրում *Ազդարար* լրագրի (*Մաղրաս*, 1795), անտարակոյտ առեալ ի հին Յիշատակարանէ. «*Արեւելեան Վկայիցն՝ Պատմութիւնը*, զոր թարգմանեցաւ սրբոյն յԵրրահամու Խոստովանողէ մինչ րանդարկեալ կայր ի Պարսիկս սակս խոստովանութեանն սրբոյ հաւատոյ, ի Պարսից (*յԱսորեոց*) լեզուէ»<sup>6</sup>: Եղիւպէս եւ Թովմա Արծրունի, 69—70, կը վերագրէ Երրահամ Խոս-

4. Յայտաուորք կ'աւանդեն թէ Երրահամ Խոստովանողի տառննութեան տեղին էր ի Հայոց 2-րդ գաւառին Վասպուրականի, եւ թէ յետ մահուանն «Թողեցին զմարմինն Երրահամու յիւրում յանապատին, եւ կոչի տեղին Սուրբ Երրահամունք մինչեւ ցայսօր ժամանակի». տես Ընճիճ. *Ստորգր.* 199—200:

5. Զասորի բնագիրն հանդերձ լատին թարգմանութեամբ հրատարակեց ի Հոսմ Ստեփանոս Եւոզիոս Եստեմանի յամին 1748. եւ ի լատինականէն փոխելով զայն ի գաղղիերէն՝ ի լոյս բնծայեց քահանայն F. Lagrange ի մտտենին *Les Actes des Martyrs d'Orient* (Tours, Alfred Mame, 1852, եւ Nouvelle édition, 1876, էրեսք 35—151 վերջնոյ սպազրութեանս):

6. Տես Հ. Գ. Գալէմբերեան, *Պատմ. Հայ. Լրագր.* էրեսք 209: Տես եւ Հ. Գար. Զ. Հայկ. Հին Դպր. *Պատմ.* 278, ուր բանք Ըմուտեանի ի մէջ կը բերուին այսպիսի կանխարանութեամբ. «Կը գտնենք տեղ մը հեռեանալ համառօտ տեղեկութիւնն» եւ այլն:

առավանդի զ[Թարգմանութիւն Պատմութեանս. «Չապուն (Երկրորդ) . . . զբռնական [Թոյնս անբժշկականս ի ժից և քարբից Ենդ ի վերայ քրիստոնէից. յորմէ բազում սուրբք ի Քրիստոս վկայեցան . . . որպէս ընթեռնուք ի գիրս Պատմութեան վկայիւցն՝ որ Արեւելեայ ասի գրոցն վերագրութիւն, զոր շարագրեաց (Իմա՛ թարգմանեաց) Երանելի Խոստովանողն Քրիստոսի Աբրահամ ի գեղջէն Աբածոյ՞, որ էր աշակերտ և հետեւող Աբրոց Չեւոնդեանց, և զսակաւուց քան թէ յոյովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ, զՉահգոսո՞ որ թարգմանի Աբրայասէր, և զԴոնշ-թասո՞ . . . , և զՉմաւոն Կախիկոպոս վէմ Եկեղեցւոյ Քրիստոսի, ընդ նմին և այլ Կախիկոպոսք և քահանայք, արք հարիւր՝ որ կատարեցան միանգամայն սրով ի միում աւուր ի մեծի ուրբաթի Զատիկին»։ Չնորհիւ Արժբունոյն հաւաստեալ գիտենք թէ Աբրահամ Չեւոնդեացի ամբողջապէս թարգմանած է զասորի բնագիրն՞, քանզի վկայաբանութիւնն Չահգոսոյի՝ (Սղակայ և Տիսպոնի Կախիկոպոսին՝) մասն է Մարութայի Պատմութեանն՞. նմանապէս և յաջորդ վեց վկայաբանութիւնքդ. ա. Քերց Չմաւոնի՝ (Կախիկոպոսին Սղակայ և Տիսպոնի՝) Թերբուայ և քիոն իւրոյ, և ադախնոյն՞<sup>10</sup>,—բ. Մելի Կախիկոպոսի, Աբրոսիմայ քահանայի և Մինէ սարկաւազի<sup>11</sup>,—գ. Բարբաշեմինեայ՝ (Սղակայ և Տիսպոնի) Կախիկոպոսին, և վեշտասան այլոց վկայիցն սրք ընդ նմին վկայեցին<sup>12</sup>,—դ. Վկայիցն որ սպանան ուրեք ուրեք ի ձեռաց

7. Թ. Արժբունի կը շփոթէ զթարգմանիչն Մարութայի գերբահամ Խոստովանող - որ էր ի Չեւոնդեացի գեղջէ Տայոց զաւառին—ընդ Աբրահամ քահանայի կամ սարկաւազի՝ որ էր յԱբած գեղջէ Այրաբատայ և մարտիրոսացաւ իւր գիւղակից Սոմուէլ քահանայի հետ ի Վատղէս յամին 454. տես Եղշ. Պատմ. Ը. 110, 111, 139. Փրոպ. Պատմ. 129, 133, 150:

8. Տես և Վանասէր, Պրակ Ե. 52, ծան. 1:

9. Տես ի գգ. Թրոպ. F. Lagrangeի, տղ. 1876, Երեսք 71—77:

10. Տես Մայր Յուցակ Չեւոնդեաց Էջմիածնի, Երեսք 101—102, գա. և F. Lagrange, 51—61:

11. Մայր Յուցակ, Երես 101, դ. և F. Lagrange, 65—73. տես և Վկայաբանութիւն Աբրոյն Մելեոսի Կախիկոպոսի, հրատ. ի Վարք և Վկայաբանութիւնը Աբրոց, 2. Բ. 33—37:

12. Մայր Յուցակ, Երես 102, զր. և F. Lagrange, 88—93:

մոզպետացն, թնղ որ ի դրան արքունի կատարեցան<sup>13</sup>,—*Ե*. Սրբոց կուսանացն Թեկղի, Մարիամու, Մարթայի եւ Եմէի<sup>14</sup>,—*զ*. Ակիփսիմիայ եպիսկոպոսի, Յովսեփայ քահանայի եւ Այթիլահա սարկաւաղի<sup>15</sup>. այս ամենայն թուի առեալ ի թարգմանութիւնէն Արբահամու, բայց հաւաքողք ձառնութեաց ըստ կամի փոխած փոփոխած են, զսնէ զհրատարակեալսն ի Միսիթարեանց Վննեակոյ, զի զԷջմիածնի Զեռազրաց շունիմ տեղեկութիւն: Պատմութեանս սկզբնաւորութիւնն միայն, Վկայութիւն Շմաւոնի՝ եպիսկոպոսին Սղակայ եւ Տիսպոնի, հրատարակեալ է ի Սոփ. Հայկ. Հ. Ի. 7—54<sup>16</sup>:

Մարութայի է կարծեմ եւ ձառն ի Վկայսն Արեւելից<sup>17</sup> (Սոփ. Հայկ. Հ. Ի. 55—155), զոր թարգմանած է նոյն ինքն Արբահամ Զննակոցի, ինչպէս յայտնի կը նշանակուի ի «հրաշափառ Տաւնական»ի մատենադարանին Էջմիածնի (Մայր Յուցակ, թիւ 2. 920, երես 108, ձթ). «Երանելոյն Արբահամու Խոստովանողի ասացեալ (իմա՝ թարգմանեալ) ի Վկայսն Արեւելից. Սկսայց այսուհետեւ պատմել զողալով» եւ ալն. (տես Սոփ. Հայկ. Ի. 73): Ի Պարիսեան Զեռազրին այսպէս կը սկսի ձառս. «Զիւրդ ժանցայց մերձենալ տկարս զաւրութեամբ եւ տգէտս զիտութեամբ առ ի պատմել զսրանչելի վկայութիւն վկայիցն սրբոց եւ նահատակացն երանելեաց, զի ոչ ունի տղքատութիւնս իմ կազմութիւն պատմութեան եւ ոչ համբար բազմամթերս այլովքն հանդերձ:

Արբահամ թուի թէ զրած է նա եւ Համառօտ Պատմութիւն մի Վարդանանց պատերազմին, յորմէ կ'առնու Թովմա Ար-

13. Մայր Յուցակ, երես 102, զգ. եւ F. Lagrange 94—96:

14. Մայր Յուցակ, երեսք 100—101, ծա. եւ երես 70. ծգ. եւ F. Lagrange, 97—101:

15. Հրատարակեալ մասամբ ի Վարք եւ Վկայարանութիւնը Սրբոց, Հ. Ա. 89—102. եւ F. Lagrange, 127—137:

16. F. Lagrange, 35—60:

17. Մասն ինչ հրատարակեալ է յանուն Սրբոյն Եփրեմի ի Գ հատորի Մատենազրութեանց նորտ, երեսք 150—152 (—Սոփ. Հայկ. Ի. 73—83): Նոյնպէս Հ. Գար. 2. Մտնդր. 461, յանուն Եփրեմի կը նշանակէ. բայց չթուի ուղիղ: Բնաղիր ձառիս հասնծ է առ մեզ թէ ոչ՝ չղիտեմ:

ծրունի, 87—88, դրաջօրէն մահ վարդանայ Մամիկոնենի և վահանայ Արծրունւոյ, և կ'ըսէ. «Եւ պատմի այս ի Համառատութեան Արրահամու Խոտոտվանայի»:

19. (Երես 30.) Յակոբ Մժընայ՝ Ջգաւն Պարսիկ, յիշատակեալ ի Փաւստեայ Բիւզանդայ.— Կը կարդանք ի Հանդէս Ամսօրեայ, 1889, երես 50 թ. «Յակոբ Մժընացի Ջգօն չի կոչուիր ոչ ի Հայոց և ոչ յԱսորոց շորրորդ և ՚հինգերորդ դարերուն մէջ. այս անունն այն ատեն իրեն տրուած է՝ երբ Յակոբ՝ Ջգօն չրահատ (Ափրահատ) Պարսկին հետ շիտթուելով անոր գրութիւնն ասոր բնծայուեցաւ: . . . Բուզանդ կը յիշէ (Գիրք Գ. դ. Ժ.) Մժընայոյ վարքն ու հրաշքները մի առ մի. բայց գիրք գրած ըլլալն և Ջգօն կոչուիլն դեռ չի գիտեր: . . . Առաջին անգամ 495էն ետքը Գիննագրոս շիտթած է այս երկու անձինքն (այս ինքն զՅակոբ Մժընացի և զչրահատ Ջգօն). բայց ի մեզ և յԱսորիս դեռ չի տեսնուիր շիտթութիւն»: Եւ սակայն Յակոբայ Մժընացոյ Ջգաւն Պարսիկ (ասորերէն Սքիմն Փորսոյո, Sapiens Persa,) կոչուիլն կը գտնուի ի Պատմութեան Բիւզանդայ, Գ. Ժ. 22, թէպէտ ծածկեալ ընդ վարագուրաւ. «Չայնու ժամոնսկաւ խողաց զնաց մեծ եպիսկոպոսն Մժընացոց, այլ սքանչելի ծերունի, վաստակասէր ի դործս ճշմարտութեան, որում անուն Յակոբ, փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր»: Թէ Յակոբ՝ Պարսիկ էր ըստ Բիւզանդայ՝, դայն հասկացած էի. բայց զդօրութիւն «փոխանակ ազգ» բառիցն անկարացած էի իմանալ, երբ կարդացի զհատուածդ ի մատենկանն Փաւստոս Բիւզանդ, Ե. Մ. (Վիեննա, Միտթարեան Տպարան, 1890, երես 30) հ-

1. Գր. Նարեկացի կ'ըսէ թէ Յակոբ էր «ի խոտոտին պարսկական ազանց», «ի տօհմէն Արշակունեաց», «որդի սեպհական քեռ սերմանողի (=հաւրաքեւորդի) Լուսաւորչի մերոյ Սրբոյն Գրիգորի», «կոչեցաւ Ջգաւն». տես ի Ներք. Մ. Յակ. Մժըն. 442, 443, 449, 450: Եյս ամենայն թուի տեսալ ի Չենորայ Ասորոյ Պատմութիւնէն Տարանոյ, 22: Նարեկացի գտնունն Ջգաւն (անդ, 450) կը մեկնէ «Հանդարա, իբր թէ Հեզ, որ է Հաստատուն, այս է Անփոփոխ». այլ Յակոբ Ջգաւն կը'նշ. Յակոբ Իմաստուն. տես Ջգաւնութիւն=Իմաստութիւն, Նես. Եկեղ. Գ. իդ. 307. Ե. թ. 360. իդ. 403. Զ. ժդ. 448. Գիրք. Գոշ. Բ. 145, և այլն:



տեւեալ փոփոխութեամբբ. «որում անուն Յակոբ որդի ընտ Անա-  
կայ զգօն պարսիկ կոչէր.» զգօն պարսիկն հաճեց զիս, բայց  
ոչ Անակայ. իսկ զ'փոխ շրջել յ'որդի ընտ՝ քնազիր ուղղել շե-  
այլ նոր քնազիր ստեղծանել. թող զհաղութիւն բանիցն: Ես կ'ա,  
առջարկեմ ընթեռնուլ. «որում անուն Յակոբ՝ փոխանակաւ[ւ]  
Զգաւն Պարսիկ՝ կոչէր». այս ինքն՝ որոյ Յակոբ անունն՝ եր-  
կրորդարար Զգօն Պարսիկ կը կոչուէր. սովին ընթերցուածով կ'ու-  
նենանք պատուական վկայութիւն մի ի վերջին ամաց Զորորդ  
դարուն կամ յառաջին կիսոյ Հինգերորդին՝ թէ Յակոբ Մծրնացի  
եւ Զդան Պարսիկ մի եւ նոյն անձն է:

20. (երես 35.) *Եւթաղի Աղերանդրացոյ Յիշատա-  
կարան.*—Յիշատակարանս, որ շգանուիր յԱտուածաշունչ մա-  
տենին Ս. Ղազարու տպագրելոյ յամին 1860, հրատարակեալ է  
ի *Բազմավիպի*, 1877, երես 206 ա.—ի *Թորոս Աղբար*  
Գարեգին եպիսկոպոսի Սրուանձտեանց (Գ. Պոլիս, 1884) շ. Բ.  
264.—ի *Մտնդր.* շ. Գար. Զ.ի, 139.—եւ մասամբ ի *Հան-  
դէս Ամօրեայ*, 1892, երես 214 ք.

«Գրեցի եւ կարգեցի ըստ կարի ստիքերոսն զգիրս Պաղո-

2. Զայս ընթերցուած հաղորդեցի նամակաւ (14 Փետրուար 1890)  
առ ոմն ի Մեծ. Մխթարեան Հարց Վիեննայ, փափագելով լսել զկարծիս  
նորա, եւ ընկալոյ պատասխանի. «նկատմամբ ազգանն=զգան բառին  
կարծիք մեր բանասիրաց այն է առ հասարակ թէ շատ զեղեցիկ է խոր-  
հըրդածութիւնդ, որով կը ցուցուի թէ ի մէջ փոխանակ եւ զգան բառիցն  
կայ խառնակութիւն. բայց թէ ինչպիսի՞ գայն ոչ որ կարող եղաւ զուշա-  
կել. իսկ թէ արդեօք նմար է զ'փոխանակ ա(զգան) փոխել ի փոխա-  
նակաւ (զգան), այնքան այնչափ համաձայն է նմին տարւոջ Մեծ. Հ.  
Յակոբոս Տաշեան յիւր զերմանական զբօթեանն *Zur Abgar-Sage*, երես  
24, ծան. 1, ծանօթացոյց երոսպացի գիտնոց զիմ ուղղութիւն՝ առանց զա-  
նունս յիշելոյ. «Aber die Hindeutung des Faustus (III. cap. 10)... Յակոբ  
փոխանակ ազգան պարսիկ կոչէր (Lauer übersetzt: welcher Jacob und  
anstatt nach seiner Familie der Perser hiess) ist immer wichtig: denn  
Einige lesen diesen übrigens nicht ganz guten Text so: Յակոբ փոխա-  
նակաւ զգօն պարսիկ կոչէր, welcher Jacob mit dem Beinamen(?) Sa-  
piens Persa hiess»<sup>14</sup>.

«սի Առաքելոյ՝ յաւրինեայ եւ զիւրահաս՝ ընթերցուածովք՝ եղ-  
«բարցդ մերոց, յորոց յամենեցունց շմեղադրութիւն յանդգնու-  
«թեանս իմոյ հայցեմ, զի աղաթիւք որ վասն մեր լինիցին, զզի-  
«ջանեիդ ձեր ըստ իս ընդունիցիմ:

«Ընդաւրինակեցան զիրքս այս ըստ Կեսարացոց արինա-  
«կաց՝ որ կան յարկեղս զրոց Սրբոյն Պամփիլեայ<sup>2</sup>, իւրովք ձե-  
«ուար գրեալ:

«Թելադրութիւն. Գլխաւոր եմ, եւ աստուածեղէն կրաւ-  
«նիցն վարդապետ: Եթէ ումեք զիս յանաթ տայցես<sup>3</sup>, ազնիւ  
«աւրինակ փոխանակ ընդ իմ անուցուս, զի հատուցանողքն շարք են:

«Պատասխանի. Գանձ ունիմ զքեզ հոգեւոր բարութեանց,  
«եւ ամենայն մարդկան ցանկալի յաւրինուածովք եւ պէսպէս զար-  
«դուք զարդարեալ: Այն, ասեմ ճշմարտութեամբ. ոչ տաց զքեզ  
«վայրապար ումեք յանաթ, եւ ոչ դարձեալ նախանձեցայց ընդ  
«աւզուտ ուրուք. այլ յորժամ տաց զքեզ յանաթ սիրելեաց իմոց,  
«ազնիւ արինակ քո փոխանակ առից»:

21. (Երես 56.) Մխալ մեկնութիւն Ագաթանգեղի մի  
հատուածին ի Հ. Բարսեղ Սարգիսեանէ.— Կը կարդանք յե-  
րես 424 Ագաթանգեղի. «Արդ՝ թէպէտ երէկ սպանէք դուք զնո-  
սա (զՀռիփսիմեանս), Աստուծոյ (տպ. Աստուծոյն) նորա կենդա-  
նի են, եւ յաւիտեան նորա կենդանի են լինելոց: Արդ նոցին  
բարեխաւսութեամբ հաճեցարուք ընդ Աստուծոյ, ըստ խրատու  
սոցին առաքելակցին ձերոց առաքելոցս՝ մեծին Պաղոսի»<sup>1</sup>. այս  
ինքն՝ ըստ խրատու մեծին Պաղոսի որ առաքելակիցն էր սոցին  
ձերոց առաքելոցս: Բանքն սոցին ձերոց առաքելոցս կ'աղին-

1. Յորմէ եւ զրիչ Վարուցն Եւզգրի Պոնտացոյ, Վարք Հարանց, Հ.  
Ե. 322. «Գրեցի եւ կարգեցի ըստ կարի իմում երիս գիրս յաւրիննաւս  
զհրահաս եւ վայելուչ ճառիւք»:

2. Տես զՍրբոյն Պամփիլեայ ի Մտնդր. Հ. Գար. Զ. ի, 97:

3. Յորմէ եւ մերս Սիմեան Վարդապետ, ընգորինակիչ Մեկնու-  
թեանց Պաղոսի Թղթոցն ի Սրբոյն եփրեմէ եւ յոսկերբերանէ, ի Յիշատա-  
կարանի մատենին՝ զոր զրած է ի թուին ՆԽԸ (=999). «Թէ տայցես յա-  
նաթ այլում ումեք (զաշխատութիւնս իմ), սորա փոխան ուժդին առցես. զի  
չէ բաւական գանձք որ արժեն գոտոս». տես ի Մտնդր. Հ. Գար. Զ. ի, 455:

արկին ի չնսխմանս, ինչպէս ամենայայտնի է եւ յայլ տեղոյ մասննին. «Բարերար է ուրախարարն՝ որ առաքեաց առ ձեզ զայս զառաքեալս, որ եկին ձեզ յուրախութիւն . . . զի այն որ առաքեաց զԵրկոտասանսն իւր ընդ ամենայն երկիր մատուակս, նոյն (տղ. սոյն) առաքեաց զայս զիւր վկայս ի մէջ ձեր» . 378. եւ դարձեալ. «Զիւր վկայն սիրելիսն առաքեաց առ ձեզ» . 178. տես եւ «Երանելին Պաւղոս՝ առաքելակից ձերոց առաքելոցս (2. իսկ ապ՝ Առաքելոցն)» . 451: Հ. Բարսեղ Սարգիսեան (Ազաթանգեղոս, 389,) սխալ կը հասկանայ թէ «սոցին ձերոց առաքելոցս» կը նշանակեն զԱռաքեալն Քաղէոս եւ Բարթողիմէոս. «Յէջ 424 (Ազաթանգեղի), կ'ըսուի. «Ըստ խրատու առաքելակցին, ձերոց առաքելոց, Պաւղոսի», եւ այլն. զի տելու է որ, ձերոց առաքելոց բացատրութեամբ՝ զԱռաքեալն Հայոց զՔաղէոս եւ զԲարդողիմէոս կ'ակնարկէ, որ քրիստոնեայ Հայաստանի համար միայն կարելի է հասկանալ եւ ոչ հեթանոս Հայոց, որոնք յընթացս երեք դարուց շարունակ հեթանոսութեան մէջ ապրելով, չկարէին հասու լինել այնպիսի հնաւանդ ակնարկութեան մի ի կողմանէ Գրիգորի»:

22. (Երես 63.) Արշակունւոց, փոխանակ Արշակունեաց, ուղի՞ղ է թէ ոչ.—Յամին 1888 զրեցի առ բանասէր ոմն՝ թէ Ազաթանգեղին «դուռն Արշակունւոյ», 19, 649, ուղղելի է Արշակունւոց: Պատասխանեց. «Արշակունւոց անհար է. ոչ ապաքէն Արշակունեաց»: Յայնժամ անպարապ էի ըսելու համար զիմ պատճառս, բայց այժմիկ կը գրեմ մանրամասնարար:

Արշակունւոց այնչափ ուղիղ է որչափ Արշակունեաց, քանզի եւթներորդ հոլովման (Ո եւ Ա) բառք անխաիր կը հոլովին եայ, եաւ, եաց, եւ տոյ, տով, տոց: Քողովով զեզականսն՝ խօսիմ միայն զյոյնականն: Բիւզանդ՝ որ բազում ուրեք կ'ըսէ Արշակունեաց, կ'ըսէ եւս Արշակունւոց. «Հասանել մարտնչել . . . փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց». Գ. իդ. 143.—«Զաւրավարն Մուշեղ . . . զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն Արշակունւոց՝ վաստակէր». Ե. ի.

1. Իսկ Գ. գ. 14, «Եհաս նա մինչեւ ի համար բանակին Արշա-

213: Յայս կրկին վկայութիւնս յեցեալ՝ ոչ միայն ղԱզաթանզեղին Արշակունւոյ ուղղկի կը համարիմ Արշակունւոց, այլ եւ զհետագայ Բիւզանդեայտն՝ ուր ապագիրն ունի Արշակունւոյ. «Եւ բանային զղերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց, զարանց քաջաց զԱրշակունւոց»<sup>2</sup>. Գ. իդ. 142.— «Ամենեքեան դուք կեցեալ էք յաղպէզ Արշակունւոց». ծա. 162. ուր ապա կ'ըսէ «ազգն Արշակունեաց». — «Եյս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ (տպ. որում հայրն կոչէին ներքինեաց՝ գործ) լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունւոց». Ե. է. 206. որ յետոյ կ'ըսուի «Ապստամբ եղին ի թագաւորութենէն Արշակունեաց». Ը. 208. «Ապստամբեցին ի թագաւորութենէն Արշակունեաց». ԺԺ. 212. — «Տայր նմա զդուսար ասպետին Քաղքատունոյ ի Սպեր գաւառէ, որ. . . թագակապքն լեալ էին ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունւոց». իդ. 256. — «Համարձակութեամբ մեռարուք. . . ի վերայ Արշակունւոց բնակ տերանց աշխարհիս». անդ. (տպ. «ի վերայ բնակ տերանց աշխարհիս արշակունւոյ. զոր ուղղեցի ըստ գրելոյն յերես 257. «ի վերայ Արշակունեաց բնիկ տերանց աշխարհիս. . . զի էր թէ հասեալ էր ինձ մեռանել») Կան եւս առ Բիւզանդայ Չահունւոց, Գ. իդ. 141. Որդունւոց, Գ. դ. 9; 10, փոխանակ Չահունեաց, Որդունեաց:

Եյսպէս եւ յայլ ամենայն գիրս Առաջին Աշակերտաց կը գտնենք հաւասարապէս. Ասորիք, *ւոց եւ եաց* («Կողմանցն Ասորեաց». Եւս. Եկեղ. է. ծա. 549.— «Եկն նա ի կողմանս Ասորեաց». անդ, Ը. 597.— «Իսկ Պտղոմէոս, որ եւ Տրիփոն, առ զկողմանս Ասորեաց». նոյն, Ժմ. 165):— Աւրիք, *ւոց* (Ոսկ. Մտթ. Գ. դ. Յորդ. 13, տող 1) եւ *եաց* (Ծնն. Լ. 32, 33, 35).— Ատարտաիք, *ւոց* (Դատ. ԺԺ. 12) եւ *եաց* (Սիրաք, ԻՆ. 28. ԼԺ. 5):—

Կունւոց արքային Մաղքիթաց, ուղիղ ընթերցուածն է Արշակունւոյ արքային: Համեմատէ. «Արշակունին թագաւորն Քուշանաց». Ե. է. 205.— «Բանզի զայն ժամանակաւ թագաւորին Պարսից Սասանականին տունալ էր պատկերազմ ընդ մեծ թագաւորին Քուշանաց (տպ. Քուշանայ) ընդ Արշակունւոյն». լէ. 239:

2. Եյսպէս ուղղած է եւ Հ. Արսէն Քաղքատունի յիւրում օրինակին Բիւզանդայ:



Հոգիք, *ուց* *և* *եաց* (եւս եմ՝ որ եղէ պարս ամենայն հոգեաց՝ տան հաւր ջոս). Եփր. Սամ. է. 411)։— 2որրտանիք, *ուց* (Եփր. Հն. Ա. 11) *և* *եաց* (Հն. Ա. 23)։— Մնտաիք, *ուց* (Դատ. Ե. 8. Ոսկ. Ա Տիմ. ԺԳ. 106) *և* *եաց* (Ելք. Ի. 7. Ղեւտ. Ժէ. 7. Գ Թագ. Ժէ. 15. Առակք, ԻԱ. 6. Ոսկ. Ա Տիմ. ԺԵ. Յորդ. 140. Եփես. ԺԲ. 800)։— Քաղաքացիք, *ուց* (Ղուկ. ԺԵ. 15, որ յԱւետարանին Մոսկուայի Լազարեանց ձեմարանին՝ զրեւոյ ի թուին ՅԼԶ (=887)՝ է Քաղաքացեաց. տես Զարմայր Մտերեանց, Փարոս, Ե. Մոսկուա, 1876. էրես 32.— այլ կայ Քաղաքացուց *և* յՈսկ. Մտթ. Ա. ա. 16. ը. Յորդ. 121. նոյն, Փիլիպ. ԺԵ. 516. Եւս. Քր. 152. Մկր. Ա. գ. 3. Բ. դ. 50. Թ. 3. ԺԵ. 18, 19. Ազաթ. 603) *և* *եաց* (Ոսկ. Մտթ. Բ. Ժ. 532. Մկր. Բ. Ե. 6. Ժր. 30)։

23. (Երես 70.) *Բիւզանդայ սխալ ընթերցուած, յորմէ սխալ հետեւութիւն չ. Բարսեղ Սարգիսեանի.*— Յառաջնում վննեակեան տպագրութեանն Բիւզանդայ, Գ. դ. 72, զրեւալ է. «Զնոսա զամենեանին կազմեցին *և* արձակեցին բազում ընծայիք *և* մեծամեծ պատարագօք *և* հաւատարիմ հրովարտակօք կաթողիկոսաց առ կաթողիկոսն Եւսերիոս յերկիրն Գամրաց». բայց Պատկանեան յիւրում տպագրին, 61, ուղղած է ըստ 2եռագրին (Թէպէտ չյիշեր գայն)՝ «... հրովարտակօք առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եւսերիոս». ըստ որում *և* Վննեակոյ երկրորդ տպագրութիւնն, 73, (որ *և* սա չյիշեր զՊատկանեան)։ չ. Բարսեղ Սարգիսեան (Ազաթանզեղոս, 172—173)՝ փոխանակ հետեւելոյ Պատկանեանի հրատարակութեանն կամ Վննեակոյ երկրորդ տպագրին, *և* առանց միտ զնկոյ որ խոնարհագոյն կ'ըսէ Բիւզանդ. «Տեսին անդ զկաթողիկոսն կաթողիկոսացն . . . զքրանչելին Եւսերիոս», ի սխալ ընթերցուածոյ պատմական սխալ մի կը գործէ, թէ Բիւզանդ *ե*կը յիշէ *և* զհաւատարիմ հրովարտակա թագաւորաց մերոց *և* կաթողիկո-

1. Տես Հոգեաց *և* 65խ. ԺԲ. 128. ԻԳ. 218. Եղիշէ, Պտմ. Բ. 33, ունի Որգեաց, *և* զայս միայն կը յիշէ Գեր. Եյտըն. ի ՋՆՆ. Զեր. Երես 125, ծան. 7:

սացն (յայտ է թէ, կ'ըսէ ի փոկադիծս, վախճանելոց և կամ  
եպիսկոպոսացն) առ կաթողիկոսն եւսերիոս: Ընծայքն, պա-  
տարաքն եւ հրովարտաքն՝ զորոց կը խօսի Բիզանդ, Հայոց  
Թագաւորին էին—համեմատէ Գ. ժգ. 44—, եւ ոչ թէ վախ-  
ճանեալ կաթողիկոսաց կամ եպիսկոպոսաց: 51 36 քա9

24. (Երես 137.) Հ. Բարսեղ Սարգիսեան սխալ կը  
հասկանայ զԱզաթանզեղի Յատաջարանին «Հայրենիք»  
ընուն. — «Արդ՝ հասեալ առ իս (Ազաթանզեղոս) հրաման (տպ-  
հրամանի) ի մեծ արքայէն Տրդատայ . . . պատմել նախ զՎայ-  
րենեացն գործս քաջութեան՝ քաջին Խոսրովու». Ազաթ. Յոջր.  
20. որ ըսել է՝ պատմել նախ զգործս քաջութեան հաւր իւրոյ  
քաջին Խոսրովու: Ո՛րչափ շարաշար կը սխալի Հ. Բարսեղ Սար-  
գիսեան (Ազաթանզեղոս, 11), որ անգիտանալով թէ Հայրե-  
նիք է Հայր ի տեղալոյդ, արձակ համարձակ կը գրէ. «Յէջ 20,  
զՀայաստանն իրենն հայրենիք կ'անուանէ (Ազաթանզեղոս),  
որով ամենայն տարակոյս կը վերնայ (թէ չէր նա Հոռվ-  
մայ քաղաքացի)»: Վճիռ հատանելո՛ շտա գիւրիին է. բայց ու-  
ղիղ վճիռ հատանելո՛ տհա զժուարութիւնն: 6666666 և զայլաքն  
[Սարգիսեան ի նմին գիրս իւր, 10, դիտել կ'ու տայ որ  
Ազաթանզեղ յերես 19 յետ ասելոյ զանձնէ՝ «ի քաղաքէ ի մեծն  
Հոռմայ, . . . հաստարէն եւ յունաբէն ուսեալ դպրութիւն», կը  
դառնայ կ'ըսէ յերես 24. «Ընթերցեալ զԹորգոմնայ ազգիս զՀայ-  
աստան աշխարհիս» եւ այլն. եւ կը յաւելու. «Զինչ քան զայս  
հակատական, լինել աղգաւ և հայրենեօք Հոռվմայ քաղաքացի և  
միանգամայն Թորգոմնացի և Հայ»: Յորչափ բանասէրք ժամանա-  
կիս շատանան մեր նախնեաց անխմուտ եւ անգիտակամ  
հրատարակութեամբք, ներեն ինձ կ'ի՞ն մի անգամ ես յայտ-  
արարեմ որ ընդունայն են իւրեանց ամէն քննապատութիւնք:  
Ազաթանզեղի հատուածն յերես 24 ուղղելի է. «Յիւր հարցեալ  
զհայրենական (կամ զհայրական) մատանան՝ պատմեսցի նոցա,  
եւ զժրագիր կարգեալս ասացի նոցա, ընթերցեալք զԹորգոմայ  
ազգին զՀայաստան աշխարհին զատուածապարզեւ աւետեաց  
Աւետարանին». տես յԱզաթ. — Բիւզ. թիւ 159: Սովին ընթեր-  
ցուածով տեղի չի մնար նա եւ Ամսօրեայ Հանդիսի (1890, 147

ա, եւ 148 ա) դիտողութեանցն՝ նկատմամբ «ընթերցիալ» եւ «Թորդոմայ աղգիս» բառից։

25. (Երես 171.) Միւս եւս սխալ մեկնութիւն Հ. Բարսեղ Սարգիսեանի.— Կը գրէ Կորիւն ի Վարս Մաշտոցի, 28. «Եւ գլխաւորս վերակացուս տեղապահս յայտարարեալ Հարցն կատարելոց. որոց առաջինն Յովսէփ՝ գլխաւոր ժողովոյն, եւ երկրորդն՝ այլ աշակերտ, Յովհանն անուն, այր իսկ սուրբ, վարդապետատէր եւ ճշմարտապատում. որում զէպ լինէր յետ վախճանի Սրբոյն, բազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց. . . տարեալ համբերեալ (կամ համբերել. իսկ ապ.՝ համբերեաց). վասն որոյ եւ զԽոստովանողական անուն ժառանգեաց (ժառանգեալ?), ի նոյն վերակացութիւնն զառնայր յերկիրն Հայոց: Սրբոյն բառը Մաշտոց Վարդապետի համար է, ինչպէս կը հասկանայ եւ 2ամչեան (Հ. Ա. 784). այս ինքն թէ Յովհանն Խոստովանող յետ մահուան Մաշտոցի ազգի ազգի փորձութիւնս եւ վիշտս կրեց ի Պարսից: Հ. Բարսեղ Սարգիսեան (Բազմավէպ, 1890, երես 242) փոխանակ Մաշտոցի՝ կ'իմանայ զՅովսէփ (!) Վայոյձորեցի կաթողիկոսական տեղապահն՝ նահատակեալ յամին 454, որով եւ յանտղի կարծիս կը դառածանի. իբր թէ Վարքն Մաշտոցի, զոր կը համարի յօրինեալ յաման 445—450, կամ այս թուականէս շատ տարիներ վերջ գրուած է, եւ կամ հատուածն «որում զէպ լինէր յետ վախճանի Սրբոյն . . .» յետոյ ուրեմն Կորեան երկասիրութեանը մէջ ներմուծուած է. (Բազմավէպ, անդ, երես 243, ծան. 1):

Նկատմամբ Յովհանն Խոստովանողի, 2ամչեան (Հ. Ա. 785) կը կարծէ թէ է Յովհանն Եկեղեցացի, կամ թերեւս Յովհանն Մանդակունի, կամ այլ ոք Յովհանն: Սարգիսեան (Ազատականագեղոս, 112) որոշակի կ'ըսէ թէ է Յովհանն Մանդակունեցի. բայց այս անհնար է. քանզի ժառոք Մանդակունւոյն քաջայայտ կը ցուցանեն թէ չէր նա յԱռաջին Աշակերտաց: [Ղ. Փարսեցի յիւրում Թղթին առ Վահան Մամիկոնեան (տպ. Էմին, 51) կը յիշէ զօմն «երանելի Յովհանն, Գիւտայ կաթողիկոսի եղբարորդի», զոր եւ ապա երկիցս կը կոչէ տէր Յովհանն, եւ թէ

ինչպէս սա առաջի վահանայ պատգամաւոր եղած է ոմանց ան-  
արժան մարդոց՝ որ արծաթով կ'ուղէին գնել զվերակացութիւն  
Վաղարշապատու եկեղեցւոյն եւ վանացն, եւ վահան «կը դայ-  
րանայ» Յովհաննու եւ կ'ըսէ. «Քնաւ իբրեւ քեզ առն լսել իսկ  
էր արժան զայգպիսի բանս, թող թէ առ իս բերել»: Մկրտիչ  
Էմին (անդ, ծան. 17) կ'ըսէ թէ Յովհանն էր Մանդակունին.  
յորմէ կ'առնուն եւ չ. Գար. 2. (Հայկ. Հին Դպր. Պտմ. 373,  
374), եւ Սարգիսեան (Բազմավէպ, 1890, երես 244). «Ղազ.  
Փարպեցին՝ առ վահան Մամիկոնեան զրած թղթոյն մէջ՝ կը  
ծանուցանէ մեզ, թէ Յովհ. Մանդակունի էր *եղբօրորդի մեծ-  
անուն կաթողիկոսին Գիւտի կամ Գայայ, որուն և արժանաւոր  
յաջորդ լինելու համանման բարեմասնութեամբք իսկ ձոխացած  
էր*: Ենտեղեաց անտեղի է զՅովհանն՝ զոր վահան Մամիկոնեան  
խտաիւ կշտամբած է՝ նոյն համարել ընդ Մանդակունի կաթու-  
ղիկոսին: ]

**ՎԱՏԱՐԱԾ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԼՈՒՍԱՐԱՆՈՒԹԵԱՆՑ**





# ԳՈՒՄԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԻՑ ԵՒ ԱՍՇՅՈՒՆՔՈՑ

## ՊՐԲԻՆ ՊԵՐՎԱԳՅԵՐ

### ՅԻՂԵՏԵԿԵԼՈՑ Ի ՄԱՍԵՆՈՍ

Ա—Կորին եւ Ազաթանգեղ.

Բ—Կորին եւ Քիւզանդ.

Գ—Կորին եւ Մակարայեցիք.

Դ—Կորին եւ Եւթաղ.

Ե—Ազաթանգեղ եւ Քիւզանդ.

Զ—Ազաթանգեղ եւ Մակարայեցիք.

Է—Ազաթանգեղ եւ Եւթաղ.

Ը—Քիւզանդ եւ Մակարայեցիք.

Թ—Քիւզանդ եւ Եւթաղ.

Ժ—Մակարայեցիք եւ Եւթաղ.

Բանքն ժիով աստղանշանաւ (\*) գտանին եւ յայլ մատենագրութիւնս Առաջին Աշակերտացւոց Գրկին աստղանշանաւքն (\*\*) թերեւս սոնալք իցեն ի գրոց Կորեան: Իսկ խաշանշանաւք (†) գրոշմեալքն աներկբայ սոնալք են ի Կորեան մատենագրութեանց:

Ազատագունդ բանակ. Կոր. Քիւզ. Արքայագունդ բանակ. Ազաթ. Բաղմագունդ բանակ. Քիւզ. Բ. թիւ 19:

Ազատանի. տես Աւագանի:

Ազգ. Յազգս ազգս իւրեանց. Քիւզ. Ըստ ազգս ազգս իւրեանց. Մկր. Ը. 110:—Տես եւ Ազգ երկրածնաց յերկրածին, Կէս ազգն Հայոց ի Հայք, Հոգեկան ազգ, Տիրտսպան ազգ:

Ազգի ազգի. տես Բազում եւ ազգի ազգի, Քիւզ. ազգի ազգի:

- Աթոռ եպիսկոպոսական. Ազաթ. Աթոռ հայրապետական. Բիւզ.  
Ե. 7, 8:
- Ախոյեանն ելանեմ ումեք. Ազաթ. Բիւզ. Ե. 32:
- Ածեմ կուտեմ. Ազաթ. Մկր. Զ. 42:—Տես եւ Զգլխով ամեկ  
ի Գլուխ:—Յաւարացն ամեկոց. տես Աւար:
- Ակն. Գալ դակամբ (ճարպոյ, գինւոյ). Ազաթ. Բիւզ. Ե. 122:
- Աղաւթք. Աղաւթիւք մեծաւք. Կոր. Մեծաւ աղաւթիւք. Ազաթ.  
Ա. 50:—Աղաւթիւք եւ ուժղին խնդրուածովք. նոյնք, անդ.  
135:—Տուն աղաւթից խնդրուածոց. Ազաթ. Բիւզ. Տուն  
խնդրուածոց. Մկր. Ե. 147:
- Աղտ. Ի բոց քերեկ (կամ Քերեկ) զաղտ. Կոր. Ազաթ. Ա. 91:  
Ըճապարեմ. Եթէ ոչ աճապարեսցես վաղագոյն. Բիւզ. Եթէ ոչ  
վաղ աճապարեսջիք. Մկր. Ը. 58:
- Ամ. տես Գալուստ ամի:
- Ամամ. Ամացեալ ի նան՝ ըստ հողմոյն յաջողութեան (հասանէր  
ի տեղին). Բիւզ. Ի նաւ անգր ամացեալ՝ ընդ (ըստ?) հող-  
մոյն յաջողել (ի տեղի հասուցանէին). Մկր. Ը. 30:
- Ամենազար ամենակալ (Տէր, Աստուած). Ազաթ. Մկր. Զ. 34:
- Ամենակեցոյց. Կոր. Ազաթ. Աշխարհակեցոյց. Կոր. Քրիստոսա-  
կեցոյց. Ազաթ. Ա. 45:
- Ամենակուլ մահ. Կոր. Աշխարհակուլ մահ. Խաւարակուլ. Մահա-  
կուլ. Ազաթ. Ա. 15:
- Ամենահեշտ լուծ. տես Հնազանդ լինիմ:
- Ամենապահ շնորհք. Կոր. Ազաթ. Ա. 114:
- Ամենազարգեաղն կամ Ամենապարգեւն Աստուած. Կոր. Ազաթ.  
Ամենաշնորհոյն Աստուած. Կոր. Ա. 17:
- Ամենատէրն Քրիստոս. Ազաթ. Բիւզ. Ամենատեսանն տէրութիւն.  
նոյնք. Ե. 92:
- Ամենափրկիչն Քրիստոս. Կոր. Ազաթ. Ա. 77:
- Ամուր. (ամբոց.) Յամուր յուզարկեմ. Բիւզ. Մկր. Ը. 120:
- Ամուր ամուր տեղիք. Բիւզ. Մկր. Ը. 88:
- Ամբախիթ. տես Ծակախիթ:
- Ամբութիւն. տես Յուսամ:
- Ամփոփեցաւ փոքրկացաւ. Ազաթ. Բիւզ. Ե. 105:
- Այն. (Հրեշտակքն կամ աստուածք) այնք են՝ որ. Ազաթ. Բիւզ.

- Ե. 42:—Ձայն որում կոչէին (Ղեւոնդէոս): Կոր. Ձայն որ կոչէր (Ներսէս): Բիւզ. Բ. 27:—Տես եւ Խոկ յորժամ այնու հետ:—Յայնց պատճառաց. տես Գառնաք: Կրկնով  
Այն ինչ լինէր նմա (Կամ նոցա) հասանելի (անդր, ի կողմն քաղաքին). Եւթ. Մկր. Ժ. 1:  
Այրամուտ. Բիւզ. Այրամտեայ. Ազաթ. Ե. 143:  
Այր. (քարայր.) Յայրս եւ ի քարածերպս երկրին. Ազաթ. Բիւզ. Յայրս եւ ի քարածերպս. Մկր. Ե. 189:  
Այրարատեան զանաւ. տես Կողմն:  
Այր եւ ձի. տես Քաջ այր եւ ձի:  
Այցելու եւ աւզնական լինիմ. Բիւզ. Մկր. Լ. 119:  
Անհատական զիք. Ազաթ. Որմզդական զիք. Մկր. Ա. 66:  
† Անաշխարհիկ. Ազաթ. Մկր. Զ. 23:  
Անարգամեծար. Կոր. Ազաթ. Ա. 28:  
Անաւրէնութիւն եւ ամբարշտութիւն եւ աստուածատեցութիւն. Ազաթ. Բիւզ. Ե. 52:  
Անդ. Անդ էր յիշելի. Կոր. Անդ էր քննելի. Ազաթ. Ա. 83:—Անդ ցուցեայ. Կոր. Ազաթ. Եւթ. Ա. 118:  
Անդ. (անտի.) Ի սկզբանց անդ. Ազաթ. Ի հարատեկողմն կուտէ անդ. Մկր. Զ. 45:  
Անդէն մատալուտ. Ազաթ. Մկր. Զ. 46:—Անդէն գոր զնեմ ի վերայ. Բիւզ. Մկր. Լ. 8:  
Անդուտ յուղարկեմ. Ազաթ. Բիւզ. Ե. 171:  
Անդրէն արշաւել ի կողմանս (Պարսից, Հրէստանի). Ազաթ. Մկր. Զ. 13:  
Անդրազապէս. Ազաթ. Բիւզ. Առանց դրողելոյ. Կոր. Ե. 192:  
Անթիւ անհամար գաւրուքն հանդերձ. Բիւզ. Մկր. Լ. 5:—Անթիւ մարդիկ. Ազաթ. Բիւզ. Ե. 175:—Տես եւ Բազում եւ անթիւ:  
Անկանիմ ի բանս հրապուրանաց ի ծուփս խորհրդոց. տես Հրապուրանք. ծուփք:—Անկեայ թաւալիմ. տես Գոշին լալոյ:  
Անկատար. (անաւրէն, ամբարիշտ.) Բիւզ. Մկր. Լ. 55:  
Անհարին հարուածք. տես Հարկանեմ: Տես եւ Քաջ անհարին. Անձն. Անձամբ յճարեմ զգործ պատերազմին. Բիւզ. Մկր. Լ. 118:—Տես եւ Ողբայլ, Վարանել յանձն իւր:

- † Անձուկ սիրոյ. Ազաթ. Բիւզ. Ե. 86:—  
Անմահութեան վիճակ. Ազաթ. Բիւզ. Ե. 45:—  
Անմարդի կացուցանեմ. Բիւզ. Մկր. Ը. 87:—  
Անշնորհ անեմ. Ազաթ. Բիւզ. Ե. 83:—  
Անուանակիր. Կոր. Ազաթ. Եթ. Ա. 29:—  
Անուն. Չանուն յերկրի թողում, եւ զարդարութիւն յերկինս  
(հաստատեմ, ընծայեցուցանեմ). Ազաթ. Բիւզ. Ե. 202:—  
Չանուն քաջութեան ժառանգեցուցանեմ, ժառանգեմ. Բիւզ.  
Մկր. Ը. 31:—(Զխոստովանողական, Զհայրապետական)  
անուն ժառանգեմ. Կոր. Ազաթ. Ա. 150:—Որում անուն  
(Արսվադէն, եւ այլն). Կոր. Ազաթ. Բիւզ. Ա. 106:—Որոյ  
անունն ճանաչէր (Մահակ, եւ այլն). Կոր. Ազաթ. Բիւզ. Ա.  
49:—Որոյ զլիսաւորին անուն (ճանաչէր կամ էր երեմիա,  
եւ այլն). Կոր. Բիւզ. Ազաթ. Բ. 38:—Որոյ անուն կոչէին  
(Հարէլ, եւ այլն). Կոր. Բիւզ. Բ. 13:—(Գանիէլ, Լիկիանէս)  
անուն կոչեցիր. Կոր. Ազաթ. Ա. 52:—Տես եւ Առաջին  
— եւ երկրորդ, Դառնամ, Կեալ եւ մեռանել:  
Անշափ բազմութիւն. Բիւզ. Մկր. Ը. 108:  
\*\* Անպայման. Կոր. Անպայման ուրախութեամբ. Ազաթ. Անպայ-  
ման խնդրութեամբ եւ ցնծութեամբ. Բիւզ. Ե. 179: Տես  
եւ Տարապայման:  
Անպիտոյ. Ազաթ. Բիւզ. Ե. 118:  
Անտեղեակ. տես Ոչ իւր անտեղեակ:  
Անցանեմ. Անց ըստ գեան մեծ ըստ (Կոր կամ Եփրատ). Բիւզ.  
Մկր. Ը. 3:—Ընդ որ անցանէին. Ազաթ. Բիւզ. Ե. 172:—  
Տես եւ Բազում, Գնայր անցանել, Թափ անցանեմ.  
Աշխատանք կամ † Աշխատութիւն երկայն ճանապարհաց. Ազաթ.  
Բիւզ. Ե. 3:  
Աշխարհ. Աշխարհի եւ զնդի (զուսման, մատնիչ եւ դահիճ.) Բիւզ.  
Մկր. Ը. 9:—Տես եւ Գրաւեմ, Հայտատան, Հայր:  
Աշխարհարնակ. Ազաթ. Բիւզ. Ե. 187:  
Աշխարհաժողով. Ազաթ. Բիւզ. Ե. 144:  
Աշխարհախումբ բազմութեամբ. Ազաթ. Բիւզ. Ե. 181:  
Աշխարհակեաց. Կոր. Աշխարհակեաց կեանք. Ազաթ. Բիւզ. Ե. 191:  
Տես եւ Երկնակեաց կեանք:



- Աշխարհակեցոյց. տես Ամենակեցոյց: Գոր. Ազաթ. Ըստ աշխարհակիրկարգաց. նոյնք. Ա. 21:
- Աշխարհակոյտ. Ազաթ. Մկր. Դաւառակոյտ. Մկր. Զ. 63:
- Աշխարհակուլ մահ. տես Ամենակուլ մահ:
- Ապոստամբիմ կամ Ապոստամբ լինիմ յուխաէ. Բիւզ. Մկր. Ը. 89:
- Ապրիմ փախտտեայ. Բիւզ. Մկր. Ը. 76:
- Աջ. տես Թեւ, Թիւրիմ:
- Ազանց դանդաղանաց, դանդաղութեան. Բիւզ. Եւթ. Ա. 6:—  
Առանց զբարեւոյ. տես Անզբարապէս:—Առանց թուոյ եւ  
առանց շափոյ. տես Ժամանակ.—\*† Առանց յապաղելոյ.  
Կոր. Ազաթ. Մկր. Առանց յապաղանաց, յապաղութեան.  
Ազաթ. Բիւզ. Ա. 6:
- Առաջի դնեմ. Առաջի եղեալ (փոխ. դնէր). Կոր. Ազաթ. նովին  
ոճով եւ Բիւզ. Մկր. Ա. 61:—Զառաջի եղեալն (մատե-  
նազբել, գործել). Կոր. Ազաթ. Ա. 7:
- Առաջին. Առաջին նախնիք. Ազաթ. Բիւզ. Ե. 107:—Զառաջնոցն  
վարսն. նոյնք, անդ. 136:
- Առաջին եւ երկրորդ. Որ առաջնոյն (ենովք) անուն էր, եւ եր-  
կրորդին (Դանան). Կոր. Որ առաջնոյն (Ազրիանոս) անուն,  
երկրորդին (Եւտադիոս). Ազաթ. Ա. 55:—Յորոց առաջինն  
. . . եւ երկրորդն . . . Կոր. Եւթ. Դ. 12:
- Առաջնորդ ի ձեռին ունէր (զՄերութան, զՄենեգաւոս). Բիւզ.  
Մկր. Ը. 77:
- Առաջնորդեմ յուստորապէս. Բիւզ. Առաջնորդութեամբ (վերա-  
կացու լինիմ) յուստորապէս. Ազաթ. Ե. 186:
- Առատատուր. տես Քաղցրատուր:
- Առաքելագործ. Ազաթ. Առաքելագործ մատեան. Կոր. Ազաթ. Ա. 37:
- Առաքելածանալի. Կոր. Հրեշտակածանալի. Ազաթ. Ա. 107:
- Առաքելականն. (Վրան Առաքելոյն.) Կոր. (Թուղթ Առաքելոյ.)  
Ազաթ. (աթոռ Առաքելոյ.) Բիւզ. Ա. 84: Տես եւ Մարդա-  
բէականն.
- Առաքելակարգ, Մշտնջենակարգ. տես Կանոն:
- Առաքելակից. Կոր. Ազաթ. Ա. 33:
- Արիծարար վարազարէն (կամ վարազախառն) յարձակիմ.  
Բիւզ. Մկր. Ը. 121:

- Աննազէն. Ազաթ. Մկր. Զ. 39: Աննու՛մ. Աննու՛մ վէ՛մս անկոփս. Ազաթ. Մկր. Զ. 57: — Էառ շըր-  
ջել ընդ (աշակերտեալսն, աշխարհն). Ազաթ. Քիւզ. Ե.  
201: — Առեալ կամ՝ Աննոյր զգունդն՝ որ ընդ իւրով ձե-  
ռամքն էր, Ազաթ. Մկր. որ ընդ իւրով ձեռամք էին. Քիւզ.  
Զ. 19: — Տես եւ Երգս առեալ, ի Զեռն ստնում, Մեկուսի,  
ի Մէջ առնում:
- Ասեմ. Ասեմ բանս. Ազաթ. Քիւզ. Ե. 99: — \*Ասացեալքն մարգա-  
րէին. Կոր. Ազաթ. Ասացեալքն արքայի՛ Քիւզ. Ա. 60. տես  
եւ Մարդարէականն: — Զասացեալսն հրամանացն. Ազաթ.  
Քիւզ. Ե. 150:
- † Ասպազէն. Ազաթ. Քիւզ. Ե. 81:
- Ասպատակ դնեմ. Ազաթ. Մկր. Զ. 2: — Ասպատակ սիսեմ. Ազաթ.  
Քիւզ. Մկր. Ե. 19: — Ասպատակ տամ. Քիւզ. Մկր. Ը. 74:
- Ասպետ. Ազաթ. Քիւզ. Ասպետութիւն. նոյնք. Ե. 197:
- Աստուած ամենապարզեւոր, բարեբար, մարդասէր. տես Ամենա-  
պարզեւոր, Քանդի, Դառնամ:
- Աստուածաբեր. Կոր. Ազաթ. Ա. 129:
- \*\* Աստուածազօրծ. Կոր. Ազաթ. Քիւզ. Մկր. Ա. 75:
- Աստուածազիր. Կոր. Ազաթ. Ա. 136:
- Աստուածազրոշմ. տես Քրիստոսազրոշմ:
- Աստուածակարգ թագաւոր, թագաւորութիւն. Կոր. Ազաթ. Ա.  
97: — Աստուածակարգ (կամ՝ Աստուածութեանն) պատգա-  
մաւոր. Կոր. Եւթ. Դ. 11:
- Աստուածակիրպ. Ազաթ. Մկր. Եւթ. Զ. 47:
- Աստուածամերձ. Կոր. Ազաթ. Եւթ. \*\* Աստուածամուխ. Կոր.  
Ազաթ. Աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչու-  
թիւն. Կոր. Աստուածամերձ կենացն վայելչութիւն. Աս-  
տուածամուխ կենանք. Հոգեմուխ. Ազաթ. Աստուածամուխ  
կենանք. Եւթ. Ա. 14:
- \* Աստուածամուխ. տես Աստուածամերձ:
- Աստուածայաղթ. Ազաթ. Եւթ. Է. 4:
- Աստուածատեցութիւն. տես Անաւրէնութիւն.
- Աստուածատուր իմաստութիւն. Կոր. Ազաթ. Ա. 73:
- Աստուածեղէն կրանք. Կոր. Քիւզ. Եւթ. Բ. 2:

Ասքանագեան օղոյ, Կոր. Թորոզմայ օղոյ. Ազաթ. (այս ինքն՝  
Հայր.) տես Թորոզմայ:

Ասորւշան. Ազաթ. Բիւզ. Ե. 26:

Արարչակից. Ազաթ. Բիւզ. Ե. 97:

Արդինակատար. Կոր. Եւթ. Գ. 10:

Արժանաւորութիւն. Ըստ արժանաւորութեան նորաւ. Ազաթ. Բիւզ.  
Ե. 199:

Արկանեմ. Արկանէր ի սուր զգարս Պարսից. Ազաթ. Բիւզ. Ե.  
59: — Արկանէին ի սուր սուսերի իւրեանց. Բիւզ. Մկր. Ը.  
66: — Տես եւ Բովք, Հրապուրանք, Միտ.

Արձակ արձակ կամ Յարձակ յարձակ խաղամ. Բիւզ. Մկր. Ը. 62:

Արձակեմ յիւրական (կամ յիւր) աշխարհն Հայոց. Ազաթ. Բիւզ.  
Ե. 39: — Տես եւ զԳէսս արձակեալ:

Արմատակեր. Ազաթ. Բիւզ. Ե. 142:

Արուեստ դպրութեան. Կոր. Բիւզ. Բ. 32: — Զինուորական կամ  
Զինուորութեան արուեստ. նոյնք, անդ. 7:

Արուեստախաւսեմ. Կոր. Ազաթ. Եւթ. Ա. 8:

Արտաքոյ իւրեանց սահմանացն. Կոր. Բիւզ. Բ. 37:

Արքայազունդ բանակ. տես. Ազատազունդ բանակ:

Արքայատուր հրաման. Կոր. Ազաթ. Ա. 43:

Արքեպիսկոպոս. Ազաթ. Բիւզ. Արքեպիսկոպոսապետ. Բիւզ. Ե. 168:

Արքունական. տես Բանակ, Կառք:

Արքունատուր. Կոր. Տէրունատուր. Բիւզ. Բ. 30:

Աւազանի. Կոր. Ազաթ. Բիւզ. Մկր. Ազատանի, Գլխանի. Բիւզ.  
Ա. 71: Տես եւ Կանանի:

Աւազութիւն. Փառք աւազութեան. Ազաթ. Բիւզ. Մկր. Փառք  
մեծութեան. Մկր. Ե. 103:

Աւանդ. տես Զգուշանամ:

Աւար. Ի մեծամեծ աւարացն ածելոց. Ազաթ. Բիւզ. Ե. 18: —

Տես եւ Դառնամ, Լնում:

Աւանական. տես Այցելու աւանական:

Աւանականութիւն. տես Դիցն աւանականութեամբ ի Դիք:

Աւգոստական. Կոր. Ազաթ. Ա. 39:

Աւգտակար խրատ. Ազաթ. Բիւզ. Ե. 141:

Աւետարանական հրամանք. Կոր. Բիւզ. Բ. 45:

- Աթեական. Զբաղում աթեականուք (անցանեմ կամ՝ գանց առնեմ). Կոր. Ագաթ. Զբաղում բերդաք (գանց առնեմ). Բիւզ. Ա. 63:
- Ածութիւնընկալու. Ագաթ. Աւրհնութիւնսընկալու, Ամուսնութիւնընկալ. Բիւզ. Ա. 117:
- Ածիք. Զաւձիս (արկեալ կամ՝ պատառեալ) եւ զճակատ հարեալ. Ագաթ. Մկր. 2. 60:
- Ատարթշնամիք. տես Չեռն:
- Աւր, աւուրք. Զաւուրս ուրախութեամբ անցուցանեմ. Կոր. Ագաթ. Ա. 72:—Տես եւ Ժամանակ:
- Աւրէնք. Աւրինաւք յարդարեմ. Կոր. Ագաթ. Ա. 89:—Ընդ աւրէնսն հաւասարիմ. Բիւզ. Մկր. Ը. 111:—Ըստ արինաց թաղաւորաց. Ագաթ. Բիւզ. Ըստ արէնս թաղաւորաց. Մկր. Ե. 23:
- Աւրինակ. Աւրինակաւս այսուիկ. Ագաթ. Մկր. 2. 18:—Տարինակացն տուելոց. Կոր. Աւրինակաւքն տուելովք. Ագաթ. Ա. 9:—Սոյն արինակ. Կոր. Ագաթ. Բիւզ. Մկր. \*Նոյն արինակ. Ագաթ. Բիւզ. Եւթ. Ա. 19:
- Աւրինաւոր կրանք. Ագաթ. Մկր. Եւթ. 2. 31:
- Աւրհնութիւն. Աւրհնութեան պատարազ. Ագաթ. Բիւզ. Ե. 176:—Աւրհնութեամբ պսակեմ, պսակիմ. Կոր. Ագաթ. Երանութեամբ պսակեմ. Կոր. Ա. 143:
- Աւրհնութիւնսընկալու. տես Ածութիւնընկալու:
- Բազիւնք մեհենից. Ագաթ. Բիւզ. Ե. 17: Տես եւ Մեհեան:
- Բազնասէր կամ՝ Անձնասէր բարոյք. Ագաթ. Մկր. 2. 55:
- Բազմագունիք բանակ. տես Ազատագունիք բանակ:
- Բազմախումբ. Կոր. Բազմախումբն զուսմարութիւն. Կոր. Ագաթ. Ա. 18: Տես եւ Քանձրախումբ:
- Բազմանամ. Բազմացեալ կառաւքն եւ երկվարաւքն. Ագաթ. Մկր. 2. 53:
- Բազմել յիւրաքանչիւր շափու. տես Խիւրաքանչիւր:
- Բազում. Բազում էր այն՝ որ ի նմանէ անցանէր ընդ Եկեղեցիս. Ագաթ. Բազում այն էր՝ որ ի նմանէ ընդ Եկեղեցիսն անցանէին. Եւթ. Է. 3:—Բազում եւ ազգի ազգի վշտաց տա-



